ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 —
R. C. Seine 376.286
Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN
17, Rue Damesme — PARIS (13e)
Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63
Jeudi 1 Janvier 1948 Հինգշաբթի 1 Յունուար

Տարի · 1200, 6ամս · 650, Կիսամ. 15 · Մէկ համար 3 միլ.

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5229-Նոր շրջան թիւ 838 Խմբագիր՝ Շ. ՄԻՍՍԱՔԵԱՆ Գինը՝ 5 Ֆր.

ԱՐԵՒ ՄՕՍՔԷ

ՆՈՐ ՏԱՐԻ

ՄԱՍՆԱՒՈՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹԻՒՆ

ՕՐԸ ՕՐԻՆ

Ընկերակցութիւնները ինչպէս ամէն տարի, այնպէս ալ այս տարի, Նոր Տարուան նախորդ գիշերը, ժողովներ կազմակերպած են իրենց անդամներուն համար։ Ասոնցմէ մէկուն ներկայ գտնուեցանք։ Ներկայ էին ընկերակցութեան անդամներ, ընտանիքներով։ Ժողովը սկսաւ ուշ գիշերուան ժամը 11-ին։ Ներկայ էին նաեւ Ազգային Վարչութեան ներկայացուցիչներ։

Ժողովը վարեց ընկերակցութեան նախագահ ընկ. Ս. Ս., որ ներկայացուց ընկերակցութեան վարչութեան անդամները։ Ապա ընկ. Ս. Ս. ողջունեց ներկաները եւ ըսաւ, որ ինչպէս ամէն տարի, այնպէս ալ այս տարի ընկերակցութիւնը կազմակերպած է ժողովներ, որպէսզի անդամները ընտանիքներով միասին անցընեն Նոր Տարուան գիշերը։ Ան ըսաւ, որ ընկերակցութիւնը ունի իր ներքին կեանքը, ունի իր դժուարութիւնները, ունի իր ուրախութիւնները, ինչպէս ամէն ընկերակցութիւն, ամէն կազմակերպութիւն

Ո՞ տար ինձ գնա գնեմ հարեմի

Լինայ գոյ...

(Ս. ՊԱՐՈՒՅՐ ԵՒ ՓՈՒՐԻՆ)

ՀԱՅԱՍՏԱՆ ՎԱՂՈՒՑ ՀԱՅՐԵՆԻՔ

(Ի. Եր վերջին մաս)

Ոչ թէ նոյնը կրցաւ ըսել Հայկական Հայրենիքի մասին, այլ պարզապէս ինքնասպանութեան մը հասաւ ի սուտ, ի կեղծ, ի ստոյգ ու ի ստոյգ, ի կեղծ ի սուտ ու միշտ ի սուտ ու կեղծ ի ստոյգ ու ի կեղծ ի սուտ ...

Եւ ահա մենք ալ կը հարցնենք, ինչո՞ւ մեր ազգային կեանքը այսքան ստոյգ ու կեղծ, այսքան կեղծ ու ստոյգ, այսքան սուտ ու ստոյգ, այսքան ստոյգ ու սուտ է ...

Ինչո՞ւ մեր ազգային կեանքը այսքան ստոյգ ու կեղծ, այսքան կեղծ ու ստոյգ, այսքան ստոյգ ու սուտ է ...

Ո՞վ պիտի տայ մեզի այս հարցումներուն պատասխանը

Վառվիկ Գալստյան

Ինչպես տանուցագրվի

(Ի· Ե· Ներքին մաս)

Ընդ ամենը տարին երկրորդն էր, ինչ Ռուբեն Ավետիսի Գալստյանը ամուսնացել էր Հասմիկ Ներսիսի Ղազարյանի հետ։ Ռուբենը ուսանում էր Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, Հասմիկը՝ Ռուբենի հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում։ Ռուբենը ամուսնացել էր ոչ միայն սիրուց դրդված, այլև այն պատճառով, որ Հասմիկի հայրը՝ Ներսիս Ղազարյանը, գյուղի ամենահարուստ մարդն էր։ Ռուբենը գիտեր, որ Ներսիսը ունի մեծ տնտեսություն, ինչպես նաև գիտեր, որ Ներսիսը ունի միակ դուստրը՝ Հասմիկը, և ինքը, Ռուբենը, ամուսնանալով Հասմիկի հետ, կդառնա Ներսիսի միակ ժառանգորդը։

Ռուբենը ամուսնացավ Հասմիկի հետ, և Ներսիսը նրան տվեց իր տնտեսության մի մասը։ Ռուբենը ամուսնանալուց հետո ավարտեց համալսարանը, ստացավ պատմաբանի դիպլոմ և վերադարձավ գյուղ։ Ներսիսը նրան նշանակեց տնտեսության տնօրեն։ Ռուբենը ամուսնանալուց հետո ևս մեկ տարի ապրեց Ներսիսի տանը, հետո նրանք կառուցեցին իրենց առանձին տունը։

Ռուբենը ամուսնանալուց հետո ևս մեկ տարի աշխատեց Ներսիսի տնտեսությունում, հետո հրաժարվեց և անցավ դպրոցում աշխատելու

A L'OCCASION DU NOUVEL AN, je prie tous mes camarades socialistes Arméniens (Tachnaktzakan), ainsi que ceux du Nor Seround, de trouver ici l'expression de mes meilleurs souhaits pour l'année 1948:

ODETTE MIKAELIAN

հայրը: Աղդարեւ այս վերջինը զահէն կը հրաժարէր 1925ին տրուհետեւ իր կիրը լքելով, կը կեղնակեցէր իր հոմանուհիին հետ: Գահ կը բարձրանար իր որդին: Քարոլ 1930ին նորէն պուքրէշ վերադառնալով թագաւոր կը հռչակուէր՝ փոխարինելով իր անչափահաս զաւակը: 1940ին Քարոլ երկրորդ անդամ հրաժարելով, իրեն կը յաջորդէր Միխայ Ա.:

Ֆրանսայի ողողումները

ԱՆՀԱՇՈՒԵԼԻ ՆԻՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐ

Արեւելեան Ֆրանսայի ողողումները որոնք սկսան երեք օր առաջ, ներքաշած են նիւթական ահաւոր վնասներ պատճառած են: Դժբախտաբար մարդկային կորուստներ ալ կան:

Շատ մը վայրերու մէջ ջուրը բարձրացած է աւելի քան երեք մէթր ու ծածկած է մշակելի ընդարձակ տարածութիւններ մասնաւորաբար Ալզաս Լորէնի մէջ: Տասնեակ հազարաւոր մարդիկ հեռացած են իրենց տուներէն որոնց մեծ մասը քանդուած են: Մօղէլի ջուրերը արմատախիլ ըրած են ծառերը եւ քարուքանդ ըրած են կամուրջները: Մէկի քաղաքապետարանին ալ մասամբ ծածկուած է ջուրերով: Մէց – Փարիզ եւ Մէց – Նանսի երկաթուղիի սպասարկութիւնը դադրած է:

Ողողումները մեծագոյն վնասը պատճառած են այն արտերուն ուր ցորենը նոր ցանուած էր: Բազմաթիւ հանքեր ողողուած են:

Մասնագէտները կը հաւատան թէ Փարիզի շրջակաները ամիջական վտանգի տակ չեն, թէեւ տեղատարափ անձրեւներուն պատճառաւ ուեղացած են Մարնի եւ Սէնի ջուրերը:

Աղետահար հանգիստներու նիւթական վնասներուն դումարը կը հասնի միլիառներու:

Պաղեստինի հատուածակութիւնները

51 ՀՈԳԻ ՍՊԱՆՆՈՒԱԾ ՄԷԿ ՕՐՈՒԱՆ ՄԷՋ

Երեքշաբթի օր 42 Հրեաներ, 6 Ապաբներ եւ 3 Անգլիացիներ սպանուեցան Պաղեստինի մէջ: Մէկ ամսուան մէջ մեռած են ընդամէնը 480 հոգի:

Ամէնէն ծանր դէպքերը պատահեցան Հայֆայի մէջ ուր Հրեաները ռումբ մը նետեցին վոհդոց հաւաքուած Արաբներուն վրայ: Այս վերջիններու, վրէժ լուծելու համար, յարձակեցան քարերի զարափրի վրայ եւ ծեծելով սպանեցին 41 Հրեաներ: Անգլիացի զինուորները օդնութեան հասան: Կոիւներու ընթացքին վիրաւորուեցան 450 հոգի:

Զրոյց կը չրջի թէ ռումբը նետուած էր իրկուն Զվայ Լէումի, հրէական ահաբեկչական կազմակերպութեան դրդումով: Նոյն օրը ընդհարումներ տեղի ունեցան նաեւ Թէլ Աւիվի եւ Երուսաղէմի մէջ:

Քուէ մը տոդով

ՖՐԱՆՍԱԿԱՆ դահլիճը չորեքշաբթի օր առոնթիին տուաւ արտաքին նախարարին որ ամերիկան կառավարութեան հետ ստորագրէ այն համաձայնութիւնը որուն հիման վրայ Ֆրանսա պիտի ստանայ 328 միլիոն տոլարի առժամեայ օժանդակութիւն մը Միացեալ Նահանգներէն:

ԻՆՉՊԷՍ արդէն հաղորդած էինք, Ամերիկայի նախորդ փոխ նախարարը, Հէնրի Ուոլըս, թեկնածու պիտի ներկայանայ 1948ի նախագահական ընտրութեան: Այս մասին իր ըրած յայտարարութիւնները մեծ իրարանցում պատճառած են քաղաքական շրջանակներուն մէջ որովհետեւ Ուոլըս կը ծրագրէ կազմել երրորդ կուսակցութիւն մը որ կրնայ վնասակար ըլլալ մասնաւորապէս դեմոկրատ կուսակցութեան համար: Նախկին նախարարը կոչ կ'ընէ իր համախոհներուն, եվրոպացիներուն, Հրեաներուն եւ Սեւամորթներուն որ իրեն վերապահեն իրենց քուէները եւ կը խոստանայ «ոտ մը բարիքները:

ՋԻՆԱՍՏԱՆի համայնավար բանակը մեծ յաջողութիւններ ձեռք բերաւ չորեքշաբթի օր գրաւելով կարդ մը ռազմավարական կարեւոր կէտեր Շանսի նահանգին մէջ, կեդրոնական Չինաստան: Մանչուրիոյ մէջ համայնավարները մօտեցած են Մուքտէնի ապուրաճանները:

ԳԵՐՄԱՆԻՈՑ ամերիկեան զինուորական դատարանը մահուան դատապարտեց Նորտհաուզէնի արդելարանին նախկին հրամանատարը որ ահաւոր խիղճուքիններ կատարած էր պատերազմի ընթացքին:

Չորեքշաբթի օր Մատրիտի մէջ զինադադարի կիրակի, 25 ՅՈՒՆՈՒԱՐ 1948, ԺԱՄԸ 14.30ԻՆ Մինթիւալիթէի սրահին մէջ, **métro Mutualité**

Ցովհ. Թումանեանի մահուան **25**ամեակի առիթով

Նախաձեռնութեամբ Փարիզի Հայկական երգչախումբին, մեծ պատարաստութեամբ կը ներ-կայացուի

Ա Ն Ո Ւ Շ

Երաժշտական ողբերգութիւնը 5 արար, մասնակցութեամբ Օր. Անժէլ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆի (Անուշ), Ա. grand Prix Wicard de la Ville de Marseille: Դր. ՄԻՀԹԻՐԵԱՆի (Սաթօ) եւ Վ. Ա. ԹՈՒՆԵԱՆի (Մօսի): Սկնճօնիք մեծ նուագախումբ ղեկավարութեամբ ԱՐԱ. ՊԱՐԹԵՒԵԱՆի (60 հոգի): Թումանեանի մասին պիտի խօսին եւ կ'արտասանեն ծանօթ արուեստագէտներ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Բոլոր տոմսերը թուագրուած ըլլալով կը խնդրուի նախապէս ապահովել Հրանդ Սամուէլէն Tél. Dan. 88–65, եկեղեցւոյ դիմացէն: Սապօնճեանէ 39 rue Trévise, Պ. Պարթեւեանէ, 14 rue Petit. Bot. 99–22, Պ. Բամպուքճեանէ, 9 rue Jouy Rouve, Ուշպզեանէ 61 rue Rébéval, Պարսամեան գրատունէն, եւ նոյն օրը թատրոնի կիւղէն, առաւօտէն սկսեալ:

Տոմսերու գինը՝ հարիւրէն երեք հարիւր յիսուն, տուրքերով միասին:

ՀՐԱՒԻՐ ՀԱՑ ԴԵՐԱՍԱՆՆԵՐՈՒՆ

Ա. Շահխաթունի կը հրաւիրէ բոլոր հայ դերասանները եւ բեմի աշխատաւորները թատերական նիւթի վերաբերեալ կարեւոր խորհրդակցական հանդիպումի մը, այս չաբաթ դիշեր, 3 յունուար, ժամը 8.30ին, Մինթիւալիթէի «Իկրէք» սրահին մէջ: (Մէթրօ Մօսէօ Մինթիւալիթէ):

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ.— *Պարտք կը զգամ հրապարակաւ խորին շնորհակալութիւններ յայտնել Տօքթ. Գուրգէն Մեծատուրեանի, որ իր ախտաճանաչութեան եւ տարած անխնայ չանքերուն շնորհիւ յետ վիրաբուժական գործողութեան յաջողեցայ կրնալ իրական վտանգէ ազատել, հակառակ երկու տարիէ ի վեր մանապէտներու կողմէ տրուած խնամքին:* Թ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

«ԳՈՑԱՄԱՐՏ» պատի օգացոյցներ ստացուած են եւ կը ծախուին Բալուեանի գրատան մէջ, 43 Rue Richer, Paris (9), ինչպէս նաեւ Նոր Սերունդի ամպամէտուն քով: Գինն է 100 Ֆրանք: Ծաւալը մեծ ըլլալով փոստով չի ղրկուիր: Անձամբ դիմել եւ առնել:

ԼԻԶ ՕԼԻՎ – ՄԱՐԹԻԿՈՑի Հ. Ց. Դ.«Իչխան» եւ Նոր Սերունդի Համօ Օհանջանեան խումբերը պիտի կատարեն Լիզ Թայսոնի ծառայութեամբ մը 3 Յունուար 1948, չաբաթ երեկոյ Լէզ Օլիվի Bar Tabac-ի երկրորդ սրահին մէջ:

Կը նախագահէ Ք. Կէ Հ. ՊԱՍՄԱՃԵԱՆ:

Գեղարուեստական ճոխ բաժին, ղեկավարութեամբ Տիկին Ռ. ՄԻԼՏՈՆԵԱՆի: Կէս դիշերէն մինչեւ լոյս եւրոպական պարեր Սէն Լուի Նոր Սերունդի նուագախումբի ղեկավարութեամբ:

Ծախքերու մաս ակցութեան համար պիտի դանձուի 50 Ֆրանք:

5700 Ֆրանկով

Կրնաք կարել տալ ձեր հագուստը

Զափի վրայ, երկու փորձով

Եթէ կերպասը բերէք մեզի եւ տասը օրէն

կ'ունենաք զայն

ԱՅՐԵՐՈՒ ԵՒ ԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Դիմել **DORMES**, 5 Rue St. Apolline
Paris—Métro Strasbourg–St. Denis Հեռ. Tur. 83-63

Ուեցան վերջու ականաւոր համայնավարներ՝ Ա-կուեթին Զօրօա Սանխէզ եւ Լուքաս Նունէս Պոաս: Առաջինը ընդհանուր քարտուղարն էր համայնավար կուսակցութեան որ կը զանուի Ֆրանսայի մէջ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ խորհրդարանին քննութեան պիտի յանձնէ նոր օրինագիծ մը որ կ'առաջարկէ տարեկան 50.000 Ֆրանք տուրքի ենթարկել այն բոլոր այրերը — մինչեւ 60 տարեկան — որոնք չհաբեր աշխատանք չեն կատարեր: Այս տուրքէն զերծ կը մնան անոնք որ ֆիզիքական պատճառներով չեն կրնար աշխատիլ:

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Ց. Դ. ՎԱՂԱՆՍԻ Շրջ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ Ռոմանի, Փ. Օպենայի եւ Վալանսի բոլոր ընկերները այս կիրակի, 4 յունուար, առաւօտեան ժամը 8ին, Ա. Ահարոնեան սկսմբը, 11 Ave. Gambetta, Valence: Անդամատուրները միասին բերել: Բոլոր ընկերներուն ներկայութիւնը անհրաժեշտ է:

ՊԱՆԵԼՕ ԲԱՇԱՆի Հ. Ց. Դ. «Արծիւ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը այս չաբաթ իրիկուան «Հրայր» սկսմբին մէջ: Պարտաւորիչ ներկայութիւն:

Հ. Ց. Դ. ՏԷՍԻՆի կոմիտէի ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ այս կիրակի, 3 Յունուար, 1948, կէսօրէ վերջ ժամը 2.30ին, սովորական ժողովատեղին: Կարեւոր օրակարգ: Անհրաժեշտ ներկայութիւն:

Հ. Ց. Դ. ԵԳԻՊՏԱՑԻ կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս չաբաթ իրիկուն ժամը 8.30ին 9 rue Victor Massé (ընկերվարականներու սրահը): Շատ կարեւոր օրակարգ:

ՓԱՐԻԶԻ Հ. Ց. Դ. «Ռոստոմ» խումբի խորհրդակցական ժողովը այս չաբաթ երեկոյեան ժամը 7.30ին ընկերվարականներու սրահը, 9 rue Victor Massé: Կը խնդրուի ճշդապահ ըլլալ:

Հ. Ց. Դ. ՄԱՐՍԷՑԼԻ Շրջ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ մարմինները.—

Ընկերը կարօ ենթակոմիտէն տուրքաթ 2 յունուարին ժամը 8ին:

Հայաստան ենթակոմիտէն կիրակի 4 Յունուար ժամը 5ին:

Վռամեան ենթակոմիտէն կիրակի 4 Յունուար ժամը 7ին:

Համազասպ խումբը չորեքշաբթի 7 Յունուար ժամը 7.30ին:

Թաթուլ խումբը հինգշաբթի 8 Յունուար ժամը 8ին:

Իչխան խումբ հինգշաբթի 8 Յունուար ժամը 8ին:

Զաւարեան ենթակոմիտէն, չաբաթ 10 Յունուար ժամը 8ին:

Ալֆորվիլի ենթակոմիտէն չաբաթ 10 Յունուար ժամը 8ին:

Քեռի խումբը չաբաթ 10 Յունուար ժամը 8ին:

Նիկոլ Թումանի ենթակոմիտէն կիրակի 11 յունուար ժամը 3ին:

Արամ խումբը կիրակի 11 Յունուար ժամը 8.30ին:

Այս ժողովները տեղի կ'ունենան սովորական հաւաքատեղիները: Ներկայ պիտի ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը:

ՀԱՑ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ եւ Մարտիկներու Միութեան Մարսէյլի մասնաճիւղի անդամները ժողովի կը հրաւիրուին «Առաջ» Կեդրոնական վարչութեան կողմէ: Կարեւոր օրակարգ: Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ:

ՀԱՄԱՅԱՐԵՐՏՅՈՒԱԿԱՆ Միութեան Լիոնի մասնաճիւղի ընդհ. անդամական ժողովը տեղի կ'ունենայ այս չաբաթ օր, իրիկուան ժամը 8.30-ին հայրենակից Կրիգոր Մկրտիչեանի սրճարանին մէջ, 39 բիս Լուպըլէ: Մեծ կարեւոր օրակարգ: Կը խնդրուի անդամատերները միասին բերել:

ՊԱՒԼՎԱՐ ՕՏՏՈՑի Ֆ. Հ. Կ. Խաչի մասնաճիւղը ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերուհիները, Յունուար 4ին կիրակի կէսօրէն վերջ ժամը 3ին, սովորական ժողովատեղին: Պարտաւորիչ ներկայութիւն: Կարեւոր օրակարգ:

ՓԱՐԻԶԻ Հ. Ց. Դ. «Ռոստոմ» խումբը իր ցաւակցութիւնը կը յայտնէ ընկեր Լեւոն եւ Տիկ. Գեւոնեաններուն, իրենց զոքանչի եւ մօր՝ ՏԻԿԻՆ ԿԻՒԼԻԶԱՐ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆի մահուան առթիւ:

ՎԻԼԷՐ ՍԷՆ ԹՐԻԷՆ Պ. Օհան Կիւլպէնկեանի փափաքով հոգեհանդստեան պաշտօն պիտի կատարուի Փարիզի Հայոց եկեղեցին, յառաջիկայ կիրակի, Յունուար 4ին, յետ պատարագի, ողբացեալ ԶԱՒԻՆ ԱՐՓ.Ի ՅԻՇԱՏԱԿԻՆ, իր երախտաշխատութիւն անոր ազգօգուտ գործունէութեան եւ իր հօր ԿԱՐԱՊԵՏ ԿԻՒԼԻՊԷՆԿԵԱՆի, մահացած Պոլիս 1919ին: Կը հրաւիրուին իրենց յիշատակը յարգողները:

ՀԱՄՈՎ ԵՒ ԸՆԾԻՐ
ԵՐՇԻԿ ԵՒ ԱՊՈԻՇ
Եթէ կ'ուզէք ունենալ ձեր կաղանդի եւ Ծնունդի սեղանին վրայ
Դիմեցէք վստահութեամբ՝
ՆԱԶԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆի
Նախապատերազմեան լաւագոյն տուներէն մէկը:
24, Rue Jules Verne, Sevran:

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Samedi 3 Janvier 1948 Շաբաթ 3 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5230–Նոր շրջան թիւ 839

Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ ԳԻՆ՝ 5 Ֆր.

Ցունաստանի դէպքերը

ԱՊՍՏԱՄԲՆԵՐԸ ԿԸ ՊԱՐՏՈՒԻՆ

Կառավարական ուժերը չորեքշաբթի օր ուժաւոր Ռոնիցա մտան եւ ազատեցին քաղաքին պահակախումբը որ քանի մը օրէ ի վեր դիմադրութեան մատնուած էր: Այս լուրը հաղորդեց զօրավար Անտոնոփուլոս, մանաւանդ զեկոյցով մը: Փաւլոս թագաւորը Փրկիչէ Պատուհանչաքը տուաւ Ռոնիցայի պաշտպաններուն — մօտաւորապէս 1000 հոգի — որոնք ուրիշ օրէ ի վեր կատաղի կռիւ կը մղէին «Քշնամիին» դէմ: Պատերազմական նախարարը շտապաւորական հեռագիրով մը հեղլէն ժողովուրդին երախտագիտութիւնը կը յայտնէ քաջարի պնդողներուն:

Ապստամբներու ընդհանուր հրամանատարութիւնը, իր կողմէ, հետեւեալ զեկոյցը հրապարակեց հինգշաբթի օր.— «Հակառակ իրենց ճիգե – րուն, մթագնտական — փաշական ուժերը չկրցան կտրել Ռոնիցայի պաշարող շղթան: Մեր, ժողովրդավար բանակը եւս մղեց փաշական բանակը»:

Զօրավար Մարկոս «Ցունաստանի Ազատ ձայնասփիւռին վրայ խօսելով, ըսաւ — «ժողովրդավար բանակը աւելի մեծ թափով պիտի կռուի 1948ին՝ փաշական բանակին եւ ամերիկեան աշխարհակալներուն դէմ: 1948ը պիտի ըլլայ մեր փառքի եւ յաղթութեան տարին: Զինուորներ, դուք ձեր պարտականութիւնը պիտի կատարէք. ցոյց տուէք ձեր մարտական ոգին, կրկնապատկեցէք ձեր հարուածները եւ մէկ վայրկեան իսկ հանգիստ մի ձգէք թշնամին, դէպի՛ յաղթանակ:

Այս կոչը հրապարակուած է կռիւ թիֆոթի պաշտօնական օրկանին մէջ որ միաժամանակ տեղեկութիւններ կուտայ «Ազատ կառավարութեան կազմին եւ նպատակներուն մասին:

Կ'ըսուի թէ Մարկոս իր արամադրութեան տակ ունի 10.000 զինուորներ:

Ցունաստանի թագաւորը նոր տարւոյ առթիւ իր հրապարակած կոչին մէջ ըսած է թէ «ինչ վատահ է որ խաղաղութիւնը պիտի իրականանայ եւ ազգերը իրարու հետ պիտի համաձայնին»: Նախազահը ըսաւ որ մեծ ակնկալութիւններ ունի Միացեալ Ազգերէն:

ՈՒՈՇԻՆԿԹՕՆի խորհրդային դեսպան նշանակուած է Աղէքսանդր Փանիւշկին որ իր յանձնարարականը նախագահ Թրումընի ներկայացուց չորեքշաբթի օր:

ՄՈՒՀԻԴԱՅԻՆ ճարտարապետները կը ծրագրեն երկնաքեր շէնքեր կառուցանել Մոսկուայի մէջ պայմանաւ որ փողոցներուն լոյսը վճարանաւ: Առաջին նմոյշները պիտի աւարտին 1952ին եւ պիտի ունենան 16, 26 եւ 32 յարկ:

Մոլորով կ'ամբաստանէ Ամերիկան

Խորհրդային Միութեան արտաքին նախարարը, Մոլոթով, չորեքշաբթի օր ամուլի ներկայացուցիչներուն յայտարարեց թէ Լոնտոնի վեր – ջին խորհրդաժողովին ձախողման պատասխանատուն Ամերիկան է: Ահաւասիկ իր յայտարարութեանց հիմնական կէտերը :—

«Լաոզները կան թէ Թերմանիոյ հաշտութեան դաշնագրին շուրջ Լոնտոնի մէջ կատարուած խորհրդակցութիւնները ապարդիւն եղած են: Ասիկա իրականութեան չի համապատասխաներ : Շնորհիւ խորհրդային պատուիրակութեան ջանքերուն, կարելի մը խոչընդոտ մէջ չորս դաշնակիցներու տեսակէտներուն միջեւ ներդաշնակութիւն ստեղծուեցաւ: Ա-ծանօթ պատճառներով , այս պարագան մոռացութեան կը տրուի: Ամերիկեան պատուիրակութիւնը անհասկնալի ճապարանքով մը տակաւին կը շարունակէ կատարուած աշխատանքը: Ոչ ոք կը բացատրէ թէ Ամերիկան, որ տակաւին անցեալ տարի կ'առաջարկէր փութացնել դաշնագրին պատրաստութիւնը, ինչու հիմա չ'ինկատէ այսօր այդ խնդիրը: Հաւանական է որ Եւրոպայի մէջ խաղաղութիւնը չի կրնար վերահաստատուիլ առանց Թերմանիոյ հարցին կարգադրութեան: Այլեւս գիտենք որ Ամերիկա իր յետին նպատակներուն համար կ'ուզէ օգտագործել արեւմտեան Թերմանիան: Ամերիկա թեւ նկատի չառներ շահերը այն ազգերուն որոնք, Հիթլերի դէմ կռուեցան եւ կ'ուզէ չեղեալ նկատել Փոցտամի համաձայնութիւնը: Լոնտոնի խորհրդաժողովը ձախողեցաւ: Փորձեցին մեզի վերագրել պատասխանատուութիւնը, չյաջողեցան: Ի – րական պատասխանատուն Ամերիկան է: Պէվին եւ Պիտօ Մարշըլի քայլերուն հետեւեցան »:

Պաղեստինի խառնակութիւնները

ԱՆԳԼԻԱ ՊԻՏԻ ՑԵՏԱԶԳԷ ՊԱՐՊՈՒՄԸ

Լոնտոնի քաղաքական շրջանակներուն մէջ դիտել կը տրուի որ եթէ Պաղեստինի խառնակութիւնները չարաբնակուին ներկայ թափով, Անգլիա կրնայ յետաձգել իր մեկնումի պատրաստութիւնները: Կրնայ նոյնիսկ պատահիլ որ հոգատարութեան փոխանցումը Միացեալ Ազգերուն կատարուի Մայիս 15էն առաջ :

Այս նոր կարգադրութիւնները անհրաժեշտ նկատուած են որովհետեւ Արաբներու եւ Հրեաներու անընդհատ կռիւները, մեծապէս կը դժուարացնեն բրիտանական ուժերուն փոխադրութեան աշխատանքները: Անգլիա 70.000 զինուոր ունի Պաղեստինի մէջ:

Արտաքին նախարարութեան պաշտօնատունէն կը հաղորդեն որ խորհրդակցութիւններ տեղի պիտի ունենան Իրաղի վարչապետ Սայիտ Սէյիմ Ճապուրի հետ որ Լոնտոն կը սպասուի յառաջիկայ շաբթու երկու երկիրներուն միջեւ 1931ին կնքուած 25 տարուան դաշնագրին վերաքննութեան մասին բանակցելու համար: Այդ առթիւ օգտակարգի նիւթ կրնայ ըլլալ նաեւ Պաղեստինի խնդիրը :

★ *Պուրկազէն, անցեալ շաբթու 15000 հրեայ ներգաղթողներով մեկնող երկու վաճառական շոգենաւերը Պաղեստինի Հուրերը հասան, բայց բրիտանական նաւաբաժին մը կարեց անոնց ճամբան եւ հրամայեց որ Կիպրոս երթան: Նաւերը հինգշաբթի օր հասան Փամակոսթայի նաւահանգիստը: Ներգաղթողները դուրս հանուելով առաջնորդուեցան — Անգլիացի զինուորներու հըսկողութեան տակ — իրենց համար նախապէս պատրաստուած կայան մը:*

★ *Հինգշաբթի օր զարճեալ արիւնալի բախումներ տեղի ունեցան Պաղեստինի մէջ: Երուսաղէմի մէջ սպաննուեցան 7 Արաբներ եւ 3 Հրեաներ: Մէկուկէս ամսուան մէջ սպաննուած են 501 հոգի: Հրէական Գործակալութեան քարտուղարը, Պէն Կուրիըն յայտարարեց թէ «Փաշական տարրերը կը փորձեն Արաբները մեղի դէմ հա – նել: Այս խառնակիչները կ'ըսեն թէ պիտի կռուին Հրեայ ժողովուրդին դէմ: Մեզի ուրիշ բան չի մնար այլ կռուիլ՝ մեր գոյութիւնը պաշտպանելու համար: Եթէ նոյնիսկ հոգատարութիւնը իր պարտքը չկատարէ, յոյս ունինք որ աշխարհի մնացեալ ժողովուրդները մեզ յուսախաբ պիտի չընեն »:*

Պատասխան Ամերիկայի

ՈՒՏԵՍՏԵՂԵՆՆԵՐՈՒ ԳԻՆԵՐԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՆ

Նորհրդարանը 198ի դէմ 393 ձայնով չորեքշաբթի օր որոշեց նոր տուրքեր հաստատել եւ աւելցնել կենսական ուտեստեղէններու ինչպէս նաեւ կարգ մը ապրանքներու գիները:

Ահաւասիկ ցանկը.—

ԿԱԹ՝ լիթրը 25 Ֆրանք փոխանակ 23ի:

ԿԱՐԱԳ՝ քիլօն 400 Ֆրանք փոխանակ 370ի :

ՇԱՔԱՐ՝ քիլօն 63 Ֆր. փոխանակ 58ի :

Մնացեալ ուտեստեղէններուն գիները պիտի բարձրանան հարիւրին 25էն մինչեւ 50 համեմատութեամբ :

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— 17 Ֆրանք փոխանակ 7.80:

ԿԱԶ.— 9.65 փոխանակ 7.09ի:

ՀՐԱՆԻԹ.— 27.50 փոխանակ 21.25ի :

ՀԱՆՔԱԾՈՒԽ.— Ցաւելում հարիւրին 33.3:

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — յաւելում հարիւրին չիսուն :

ՕՃԱՌ.— 150 կրամնոց կտորը 15.10 (տնտակն) եւ 80 կրամնոց կտորը 14.70 (ձեռքի):

ՇՈՒՐՈՂԱԿ.— 125 կրամը 160.40 եւ 250 կրամը 144.60 (եփելու), լաւ տեսակը՝ 167.30 եւ 272.70:

Այլ մարդու հագուստ՝ 827 Ֆրանք, լաւ տեսակը 5760 :

Ուրիշ ապրանքներու գիները կը բարձրանան հետեւեալ համեմատութեամբ . — ինքնաշարժ՝ հարիւրին 55, կաշեղէն՝ հարիւրին 38, բամպակեղէն՝ հարիւրին 18 :

Կառավարութիւնը պիտի դանձէ հետեւեալ տուրքերը :—

Մէկ սպասուհի ունեցողէն 100.000 Ֆր. տարեկան, իւրաքանչիւր յաւելուածական սպասուհիի համար 120.000:

Մէկ այր ծառայ ունեցողէն 150.000 Ֆրանք, իւրաքանչիւր յաւելուածական ծառայի համար 200.000 Ֆրանք:

Ամէն կալուածատէր պիտի վճարէ տարեկան տուրք մը որ հաւասար պիտի ըլլայ իր տեփակատութենէն ստացած վարձքին վեց ամսեայ:

Ինքնաշարժերու տուրքը պիտի դանձուի իւրաքանչիւր «ձիու ուժի» համար 8000 Ֆրանքի հաշիւով :

Կառավարութիւնը այս տուրքերուն ու յաւելումները աստիճան մը թեթեւցնելու մտահոգութեամբ, 80.000 Ֆրանքէն 96.000 Ֆրանքի պիտի բարձրացնէ եկամուտի տուրքի ենթակայ նուազագոյն դումարը:

Նորհրդարանը 183ի դէմ 415 ձայնով քուէարկեց նաեւ զինուորական պէտքերու ի հաշիւ 1948ի առաջին եռամսեայի համար յատկացուելիք գումարը՝ 65 միլիառ Ֆրանք :

Եկամտային տուրքը պիտի դանձուի հետեւեալ ձեւով .

Հարիւրին 15.— սկսեալ՝ տարեկան 96.000էն աւելի շահուած դումարէն: Տուրքէ զերծ կը մնայ յաւելուածական ժամերու աշխատանքը 45րդ ժամէն ետք :

Եկամուտի ընդհանուր դումարէն կը դեղչուի հարիւրին 15, առաջին երկու երախաներուն համար: Իսկ հարիւրին 45՝ երրորդ զաւակէն սկսեալ :

Վարչապետ Շուման չորեքշաբթի օր ձայնասփիւռին վրայ ճառ մը խօսելով ընդհանուր գիծերով ներկայացուց երկրին տնտեսական եւ ելմտական կացութիւնը եւ յոյս յայտնեց որ ներկայ տարւոյն ընթացքին կատարուելիք աշխատանքներն ու խնայողութիւնները անպայման պիտի փութացնեն Ֆրանսայի վերականգնումը: Նշմարեց նաեւ Ֆրանքին կայունութիւնը որ այնքան անհրաժեշտ է :

★ *Կառավարութիւնը սկզբունքով հաւանած է տոլարին եւ սթերլինին ներկայ պաշտօնական գիները բարեփոխել որպէսզի օտար շուկաներէ աւելի մեծ քանակութեամբ Ֆրանսական արտադրութիւններ գնեն: Տոլարը ներկայիս կ'արժէ 119 Ֆրանք իսկ անդլիական սթերլինը 480: Շատ հաւանական է որ անոնց նոր սակերը ըլլան 240էն 280 Ֆրանք տոլարին, իսկ 800 Ֆր. սթերլինին համար: Եթէ այս նոր սակերը ընդունուին Ֆրանսայի արտահանումները ինքնաբերաբար պիտի աւելնան: Դիտել կը տրուի, սակայն որ կառավարութիւնը երբեք նպատակ չունի Ֆրանքը արժեզրկելու երկրին մէջ: Արտաքին չուկաներն են որ պիտի օգտուին :*

(Նուիրող յարուցակութիւնը կարդալ Դ. Էջ)

Ամերիկեան մեծագոյն ոսկիին գինը բարձրացաւ 208.000 տոլարի:

ԻՏԱԼԻՈՅ համարձակ ղեկավարներէն Լուիճի Լոնկօ, յանձնարարեց իր ընկերներուն որ ամէն բան ընեն Մարշըլի ծրագրին գործադրութիւնը ձախողեցնելու համար: Ամերիկեան աշխատակալութիւնը կը պարտուի այն տեղ երբ աշխատաւորները Միացեալ ճակատ յարդարեն ընդհան: «Գայլերու այս աշխարհին մէջ, միայն ուժին է որ արժէք կը ներկայացնէ: Պէտք է դիմադրութիւն ցոյց տանք այդ գայլերուն»:

ՏԻՄԱԿԻՑՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ս. Վրացեանի խօսքը

Ա.

Ես կ'ուզեմ խօսիլ իրրեւ հասարակ գրասէր եւ պարզ ընթերցող մը, իրրեւ մէկը, որ կը սիրէ հայ գրականութիւնը եւ իր սիրտին մօտ կը նկատէ հայ մշակոյթը՝ լինի Հայաստանի մէջ, թէ դուրսը :

Այստեղ կը խօսուի արտասահմանի հայ գրականութեան մասին, իրրեւ առանձին երեւոյթ, որ յաճախ կը հակադրուի Հայաստանի գրականութեան : Իմ կարծիքով սխալ է այս բաժանումն ու հակադրութիւնը, ինչպէս սխալ էր անցեալին արեւմտահայ ու արեւելահայ գրականութիւններու բաժանումը կամ հակադրութիւնը : Հայ գրականութիւնը, ինչպէս բովանդակ հայ մշակոյթը, մէկ է ու միասնական : Աշխարհագրական եւ քաղաքական պատճառներ անոր մէջ առաջ բերած են հատուածներ, բայց ատոնք ժամանակաւոր երեւոյթներ են եւ միասնականութեան սկզբունքը չեն խախտեր : Ժամանակի ընթացքին այդ պատճառները կը վերնան. այդ պատճառներէն բխող առանձնայատկութիւնները ալ կը վերնան եւ կը մնայ այն՝ ինչ որ ընդհանրական է եւ մնայուն : Այդպէս եղած է անցեալին — Պոլիս, Իզմիր, Թիֆլիս, Մոսկուա, Մխիթարեաններ : Այդպէս է եւ այսօր — Հայաստան, արտասահման, արտասահմանի տարբեր միջավայրներ : Երեւութապէս, ամէն տեղ կը մշակուի ինքնուրոյն, իրարմէ անջատ գրականութիւն, իրապէս միասնական, մէկ եւ ընդհանուր հայ գրականութիւնն է, որ կը զարգանայ : Եթէ ներկայ Հայաստանի գրականութեան երեսէն մէկդի դնեմք արտաքին չափը, խորքին մէջ հիմնական տարբերութիւն չի մնար երկրի եւ արտասահմանի գրականութեան միջեւ, իրրեւ միեւնոյն ամբողջութեան տարբեր մասերը : Այո, մինչ որ բոլշեւիկեան վարչաձեւը կը պարտադրէ բոլի մի միջոցներով, անցողական է. վարչաձեւի հետ այդ արհեստական տարբերութիւնը ալ կ'անհետանայ. կը մնայ հիմնականը, այն՝ ինչ որ հարազատ է ազգային տարբերին :

Սխալ է, ըստ իս, եւ այն միտքը, թէ Հայաստանի մէջ գրականութիւնը պակաս կը զարգանայ, քան արտասահմանի մէջ եւ որ Հայաստանի գրականութիւնը աւելի քիչ արժէքներ տուած է, քան արտասահմանինը : Իրօք որ ողբերգական կը լինէր մեր ազգի վիճակը, եթէ մայր հողի վրայ, ապրող ժողովուրդը պակաս ստեղծագործող լինէր, քան օտար հողի վրայ ապրողները : Այդ կարծիքը հետեւանք է անծանօթութեան : Հայաստանի դուռը գոց են, եւ քիչեր դիտեն, թէ իսկապէս ինչ որ կատարուի հոն : Մօտէն եւ սրտացաւութեամբ հետեւողը, սակայն, կրնայ տեսնել, թէ Մայր Հայրենիքի ժողովուրդը կը շարունակէ ստեղծագործել եռանդով : Ճիշդ է, վարչաձեւը ծանր օրէնք կը ճնշէ հոն, միտքի եւ արտայայտութեան ազատութիւն չկայ. տաղանդները, յաճախ կը «մաքրագործուին» : Հակառակ ատոր, մեր ողովուրդի հոգեկան թաւիշ այնքան զօրաւոր է, որ անոնցմէ պայմաններու մէջ իսկ անկաւոյ հոգեւոր բարձր արժէքներ :

Գրականութեան զարգացման համար անհրաժեշտ են երկու հիմնական պայմաններ — ազգային իշխանութիւն եւ ստեղծագործութեան ազատութիւն : Հայաստանը ունի առաջին պայմանը, բայց զուրկ է երկրորդէն : Արտասահմանի մէջ ազատութիւն անսահման է, բայց ազգային միջավայրը՝ տկար : Արեւելեան երկիրներու մէջ, Իրանէն մինչեւ Եգիպտոս, հայութիւնը աւելի կամ պակաս չափով կ'ապրի ազգային հաւաքական կեանքով, ունի առանձին կենցաղ եւ, հետեւաբար, նաեւ հնարաւորութիւններ ազգային մշակոյթի զարգացման : Եւրոպա, բայց մանաւանդ Ամերիկա, դժբախտաբար դատապարտուած են ուծացման եւ, վերջին հաշուով, ոչնչացման : Հակառակ ատոր, այս երկու միջավայրերու մէջ ալ կան որոշ հնարաւորութիւններ գրականութեան զարգացման : Կարեւորը է միայն, որ հայ գրողները աւելի մօտ մնան հայ կեանքին, ուսումնասիրեն ու պատկերացնեն հայ իրականութիւնը իր այլազան կողմերով : Միայն Ամերիկան, օրինակ, կենցաղային ու բարքային ինչ հարուստ նիւթ կ'ընծայէ հայ գրադէտին : Սուրիոյ եւ Լիբանանի մասին խօսիլն իսկ աւելորդ է. գրականութեան տեսակէտով այնտեղ դրեթէ երկրի պայմանները կը տիրեն :

Ստեղծագործութեան ազատութիւնը էական է գրականութեան զարգացման համար : Անդիրքը միայն վարչաձեւի մասին չէ, այլեւ՝ բռնապետութեան եւ ժողովրդավարութեան մասին : Պուշկին, Գոգոլ, Տոլստոյ, Տոստոյեւսկի տուած են իրենց դլուխ գործոցները ցարական բռնակալութեան ամենադաժան օրերուն : Նոյնը եւ եւրոպական հանճարեղ գրողներէն շատերը : Անդիրքը անհատի ազատ ստեղծագործութեան մասին է, որ

Ապրում

Երկու մամ :

Բայց պէտք կ՚ոյ երուսաղէմէն գալու տեսնելու համար հրաշալի մեկուսացումը քանոց, լքուած, մոռցուած պատարագի սեղանին վրայ, գալու ինչպէս անոնց չուրջ կ՚ապատանի սրբազան կախարդանքին վերջին ուժը ... :

Նայեցէք՝

Սառն, առեղափին արհամարհանքին որ ելեկտրական մոմերը լրեցոց անդրայ օտարութենէն կը թաւիշին վարը խորանին վրայ հեւացող մոմերու տաքուկ, մարդկային ապրումին վրայ : Ելեկտրական թշուառ մոմեր, պարապարահին կիրքին, մեծ-րոյի միջոցին անկարողութեան, բողոքական-ժողովրդային յաւիտենական տափակութեան կարօտէն դեղնած հիւանդացած, անհոգի ու կեղծ, ճակատագրուած անհաղորդ մնալու արդ պատարագին սարսուռին որ համեստ, անբաղաքակիր մոմը կը տարածէ իր չուրջ :

Յետոյ՝

Կը թաւիւ — ահ այդ բռնապետական լրջութիւնը ու կեղծ յուզականութիւնը երգեհոնին, որ այնքան հարազատ է մեր եկեղեցիին հոգիին որքան պիտի ըլլար ամերիկեան ճաղ - օրգէստր մը, եթէ դժբախտ օր մը այդ ալ փորձուէր ... : Ի՞նչ պատրանք ստեղծելու միտում կայ այդ մոռալ, անհրապոյր գործիքի նկարագրութեամբ : Ինչ կլայի է այդ որ կը կանչ գողտր, ջինջ քաղցրութիւնը մեր սրբազան երաժշտութեան, եւ որ կը թաւալի, կը դլտորի դինով դիրուկ կաթոլիկ վարդապետին նման, տաղով ցուրտ թելադրանքը լատին եկեղեցիին եւ կամ մակոտ, ծաղրանկարային պահըտիկը շինուի բողոքական ժողովարարահին մէջ երբ հատուածկան պատուելիին ձայնը դլուխը անցնի բարեպաշտութեան խաժամուժային աղմուկին, արշաւին ու լքնայ, իջնայ տիրոջ օրհնութիւնը ... :

Մուրճ մը, մուրճ մը կոտրտելու այդ հեթանոսը, այդ աղմուկի աստուածը, այդ նուիրական ներկայացուցիչը եւրոպական ճաշակին : Ու նոյն թաւիշ փշրելու այդ բանակները կոկիկ, ցիմար, օտարոտի, այլամերժ մոմերու :

Ու փշրանքներէն չինելու քանի մը կանթեղ, Աստուած վա, քանի մը կանթեղ ... : Ուր պահուրտելին ոգիները մեր սուրբերուն, որոնց չուքերը ցատկոտելին մեր հոգիներու պատերուն վրայ :

Որպէսզի ապրելինք հոտ մոմին ու խզղին, ու բան մը թողնար կակուղնար մեր նեղսրտին ի տես պահպանէ սեւութեանը մեր քահանաներու չուրջ-Յանդերձ ... : Թող մխայ մոմը, թող մրոտին պատերը ու թող հոտ տարածուի, տարածուի ու խեղդէ իր քաղցրութեամբ սա պանդոկի մը հոգիին չափ օտար հոգին, վրան զարկած մեր եկեղեցիին մէջ : Տեսէք — աթոռներու դուրդուրալից չարտածքը, ծերուկ զրոյց, դոգահագ փափկութիւնը յիշեցնող, տեսէք սպասուելոց նստուածքները՝ réservé մոմերու, առաջին չարքը դրաւած (ողբերգական տափակութիւնը մարդոց որոնք եկեղեցիին մէջն իսկ կը քաշկռտուն վաստը իրենց անապարձ ոչնչութեան) : Եկեղեցի մը ուր չկայ բերան մը ուր ծամէր չարափաշը, ուր չկայ զոյդ մը թեւ որ դրկէր մարմինը իր յոյսերուն ու հոսէր աղօթքը դղդղացող ճմռթկած ափերուն մէջէն-պի Աստուածը Հայուն, եկեղեցի մը ուր չկայ ոչ մէկ մթին անկիւն սիւներու տակին կորած, կամարի մը ներքեւօք, ուր կծկուէր, պահուրտէր ինքզինքէն վախցող, ինքզինքէն փախչող մարդու մը կերպարանքը ... :

Որպէսզի

Գար դանէ քէչ մը այն առնական, առոյգ պարզութենէն, այն ժուժկալ, տրտում քաղցրութենէն որ հրաշքի մը չափ գեղեցիկ ու առեղծուածային կը դարձնէ կամարակապ հոգին մեր եկեղեցիին : Ու մանաւանդ՝ որպէսզի հայ ականջները միայն հայ երդով լեցուին հայ եկեղեցիին մէջ ու տատապլին իրենց ազգային դիտակցութեան մէջ երբ երգեհոնին Ave Maria-ն ճամբայ ելլէ, դոհացնելու համար պատահական քմայքը ու ձգձիմ ժառանգաւորութիւնը պատահական մարդուկի

դրողր ազատ լինի գրելու ինչի մասին որ կ'ուզէ եւ ինչպէս որ կուզէ : Յարիզմը չէր ստիպեր Պուշկինին կամ Տոլստոյին գրել իրենց ուզած նիւթի մասին եւ իրենց ուզած ձեւով : Յարիզմը դրաքննութեան կ'ենթարկէր անոնց գրածները, կ'արգիլէր հրատարակել, կամ կը կրճատէր, բայց չէր ստիպեր գրել ու հրատարակել իր ուզածը : Բոլշեւիկեան վարչաձեւի անազատութիւնը բոլորովին տարբեր է. ան ոչ միայն կ'արգիլէ ազատ ստեղծագործութիւնը, այլեւ կը պարտադրէ գրել իր ուզած ձեւով : Բոլշեւիկեան կարգերուտակ գրողր իրաւունքը չունի ազատ մտածելու եւ արտայայտելու ստեղծագործութեան նիւթ ընտրելու. ան գործիք մըն է, որ պէտք է կատարէ տիրոջ հրամանը : Հայաստանի գրականութեան ամենադժբախտ կողմը այս է, եւ զարմանալի է որ այդ պայմաններու մէջ իսկ հայ մտաքը իրական արժէքներ կ'արտադրէ :

մը որ հոն նաեւ գայն կը նուաղէ (Թող փիայն հոդիները երուսաղէմի Սուրբ Յակորայ վանքի պատրիարքարանում ու ամենահամեստ միաբանութեան) :

Մինչեւ երբ պիտի հանդուրժենք այս բոլորին : Տակաւին ոչինչ՝ տերրացուներու եւ դպիրներու վնասակար եռանդի մասին որ կ'այլակերպէ, կը ճմռթկէ չարականներու եւ երգերու հարազատութիւնը, յանուն ինքնատպութեան, յանուն սրբազան ներշնչումին :

Պէտք կ՚ոյ երուսաղէմէն գալու այս բոլորը տեսնելու, զգալու եւ ըմբռնելու համար ...

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

Կաղանդի պաստառիւմ

Դեկտեմբեր 31ի իրիկուն է : Նոր Տարիին համար պատրաստուած պահքի զանազան կերակուրներու չարքին աւանդական ցամք-եփոցը (*) դասաւորելու պահը :

Օճախով սենեակին մէջ հաւաքուած են տանտիկիններն ու սպասուհիները : Օճախին առջեւը չարուած են լայնանիստ կաթսաները : Սենեակին յատակին վրայ փռուած է տան հարանեցուն կողմէ դործուած, գունաւոր դիծերով, կտաւէ ընդարձակ խոյչապէղին : Տան բոլոր տղաքս քսան հոգի, բոլորուած ենք անոնց չուրջը ու անհամբեր կը սպասենք որ տան տիրքէն սենեակ փոխադրուին դդումները : Այս տարի անպատճառ պիտի տեսնենք դդումէն ելլող աղջիկը որուն մասին յաճախ լսած ենք զարմանազան պատմութիւններ մեր մանկութենէն :

Կը բացուի սենեակին դուռը կ'երեւայ Կայափայը Յակորը՝ «տան մշակներուն էն կաշնեւուն երթուասարդը», հսկայ դդումի մը հետեւը կոկոզ ըրած, կուրծքովին ու թեւերովը կը դլորէ անոր զանդուածը դէպի ներս, ու պատին առջեւ կը շարէ դորշ ու ոսկեզոյն դդումները :

Մեր խանդավառութիւնը չափ չունի ու վիճաբանութիւնը ծայր առած է :

— Հա՛, ասոր մէջն է աղջիկը ...

— Չէ, ասոր մէջն է ...

Իրար կը հրմշտկենք լարուած ուշադրութիւնով կը սպասենք անոնց կտրուելուն ու շրջանակը հետզհետէ աւելի կը սեղմենք :

Շուռնչ մը կ'առնէ Կայափայը : Յետոյ դդումները մէկիկ մէկիկ խոնչապղիին վրայ թափելով սուր կացին մը ձեռքին՝ ուժով մը օդին մէջ բարձրացուցած, կ'իջեցնէ անոնց դլխուն, կառափնային առջեւ սոնքացող դահիճին մահալ արտայայտութիւնը դէմքին : Հարուածներու տպաւորին տակ կը փշրուին դդումները ու մենք կը փնտռենք դդումէն ելլող աղջիկը : Մեր նայուածքը կացինին չեղրին հետ կը բարձրանայ դէպի առաստաղ ու կ'իջնէ մինչեւ դդումին կարմիր միջուկին վրայ : Բայց, ի դուք, չերեւար մերկ աղջիկը : Յուսախափութիւնը մեզ մղած է ջղայնութեան : Դժդոհ ենք բոլորս ալ : Մամիկները մեզի կը յանդիմանեն թէ «վերջին, էն մեծ դդումին մէջէն պիտի ելլէ ան եթէ հանդարտ ու բարի կենանք » :

Վերջին հսկան է որ կը բերուի կառափնատ : Մենք անչափ ենք, նոյնիսկ չունէինք բան, դդումին ծռած անոր հրաշակերտ զանգուածին վրայ կայափայը կը վերցնէ կացինը ու կ'իջեցնէ : Կացինին չեղրը կը խրի դդումին մսոտ մարմնին մէջ ու կը գամուի հոն : Ճիգ մը կ'ընէ ազատելու համար զայն, կը չարժէ կաթը :

Ճեղքէն թանձր հեղուկ մը պուտ - պուտ մարդրիտի պէս կը չարուի դդումին կեղեւին վրայ ու կը քրտինի անոր եղերքները, կը ճուռնք բոլորս մէկէն — «հա՛ Յակոբ աղբար ուժով մի զարներ, ցաւցուցիր, չե՞ս տեսներ աղջկան արցունքները ա՛յ ա՛յ կամաց ըրէ» ...

Կացինը դամուած տեղէն կը վրի դդումը «մխկուկէն, դուրս կը թափին կուտերը : Մեր անթարթ աչքերը յառած ենք անոր կարմիր փորտիքին : Յակոբ աղբարը ընդոստ չարժում մը կ'ընէ, ձեռքերն ու աչքերը դէպի ճեղքն բարձրացուցած ու սենեակին մէջ փնտռտուքներ ընելու ձեւով : Ու կը պոռայ հա, հոս է, հոս : Կը վազէ սենեակին չորս կողմը, չուտիկ քայլերով ու օճախին ծխնելոյղին առջեւ կանդնած կը նայի վեր ու կ'ըսէ — « Թռա՛ւ, Թռա՛ւ» ...

Ջեղի չըսի՞ որ բարի եղէք, հանդարտ կեցէք, չենէ կը փախի ... տեսէ՞ք փախաւ Թռաւ» :

Պղտիկները ղղջումով կը նայէին եղած դժբախտութեան, իսկ աւելի տարէցները «տուտ է, տուտ, մենք չտեսանք», կը բողոքեն :

Կը միջամտէր մայրիկը ու կը համոզէր մեզ որ եթէ նոր տարիէն վերջ բարի ըլլայինք, մինչեւ յաջորդ Կաղանդը, պիտի տեսնէինք զայն ու ան մեզի հետ պիտի մնայ մինչեւ վերջը :

Ու այսպէս տարիներ չարունակ սպասեցինք աղջկան երեւումին ու միշտ մեր անտակութեան

(*) Ցամբոխոց համեղ կերակուր մը՝ պատրաստուած դդումով, ընկոյզով, ոսրով եւ բրինձով :

Դիմադրության Օրը Մարսելի մեջ

Դիմադրության հնարավոր մասնակցության մասին հարցերի շուրջ Մարսելի մեջ տեղի ունեցած հանդիպման ժամանակ ելույթ ունեցավ Մարսելի քաղաքապետ Mme Irma Rappuzi-ն։ Նա հայտնեց, որ Մարսելի քաղաքապետարանը ամեն միջոց ձեռնարկելու է, որպեսզի Մարսելի բնակչությունը ակտիվ մասնակցություն ունենա Դիմադրության Օրվա հանդիսություններին։

Քաղաքապետը հայտարարեց, որ Մարսելի քաղաքապետարանը ամեն միջոց ձեռնարկելու է, որպեսզի Մարսելի բնակչությունը ակտիվ մասնակցություն ունենա Դիմադրության Օրվա հանդիսություններին։

Հայտարարվեց, որ Մարսելի քաղաքապետարանը ամեն միջոց ձեռնարկելու է, որպեսզի Մարսելի բնակչությունը ակտիվ մասնակցություն ունենա Դիմադրության Օրվա հանդիսություններին։

Ընդուն

այս օտար երկրին մէջ, օտար երկնքին տակ...

Գ. Ալէմշահն ալ կնքեց իր մահկանացուն այս հեռաւոր աշխարհին մէջ հեռու իր Փարիզի երգչախումբի անդամներէն, որոնք պաշտելու չափ կը սիրէին ու կը յարգէին զինքը... Հեռու նաեւ իր տաղանդն ու ընդունելը յարգողներէն, որոնց թիւը բաղում էր, չատ բաղում ...

Թող հողը թեթեւ ըլլայ մեր ամէնուն սիրելի Գուրգէնին վրայ...

ԱՐՍԷՆ ԱՒ. ՔԱՀ. ՍԻՄԷՈՆԵԱՆՑ

Ռումանիոյ դեպքերը

ԹԱԳԱՒՈՐԸ ԻՆՉՊԷՍ ՀՐԱԺԱՐԵՑԱՒ

Ռումանիոյ գահընկէց թագաւորը Ժուիցե – րիա պիտի հասնի այսօր համաձայն Պուքրէշէն հաղորդուած տեղեկութեանց : Պաշտօնական շըր– ջանակները չեն հաստատեր այս լուրը, բայց իր հօրեղբայրը, Նիքոլա իշխանը որ ներկայիս Լո– զան կը գտնուի, յայտարարեց թէ Միխայ մաս– նաւոր չոգեկառքով մեկնած պիտի ըլլար երէկ :

Համաձայն դիւանագիտական շրջանակներու գաղանի տեղեկութիւններուն, հանրապետու – թեան հռչակումէն քանի մը օր առաջ չատ կարե– ւոր խորհրդակցութիւններ տեղի ունեցած են համայնավար կուսակցութեան եւ օտար դիւանա– գիտական ներկայացուցիչներուն միջեւ : Որոշ– ուած է թագաւորը գահընկէց ընել, բայց երեն յաջորդ մը գտնուած ըլլալով, յարմար նկատ – ուած է հանրապետութիւն հռչակել : Համայնա– վարները առաջարկած են Հապսպուրկի Անտոն դուքսը որուն կինը, իշխանուհի Իլեանա, Մի– խայլի հօրաքրոջն է : Ռուսերը աւելի հեռաքըր– քուած են նախկին թագաւոր, Քարոլոս, վտան– գաւոր համարելով հապսպուրկեան իշխանի մը գահակալութիւնը : Ռումէն համայնավարները հակառակած են Քարոլի վերադարձին որ կրնար սաստկացնել դիւցազգութեան ընդդիմութիւնը :

Միխայը գահընկէց ընելու անհրաժեշտութիւն ծագած է այն օրը երբ անհակառակած էմանուա– յլի մահապատիժին հրապարակային դրծա– դրութեան եւ սպառնացած է որ լուրը կը հաղոր– դէ արտաքին աշխարհին : Բացի այդ, Միխայլ 1946էն ի վեր չէր կրցած հանդուրժել համայնա– վար կուսակցութեան դերակշռութեան : Ռուսերը բանակցութիւններ վարած են Քարոլի հետ, Լիզ– պոն մէկ, առաջարկելով որ հաշտուի իր կնոջ հետ եւ դէպ ի երկրորդ կինը :

Քարոլ կը համաձայնի, բայց վերջին պա– հուն, համայնավարները կը փոխեն իրենց ծրա– դիրը, միշտ վախնալով դիւցազիներու ընդդի– մութենէն :

Կառավարութիւնը չուզեր արտօնել Միխայի ամուսնութիւնը օտար իշխանուհիի մը հետ եւ պայման կը դնէ որ թագաւորը հրատարակէ նոր վարչաձեւին : Միխայլ կը մերժէ : Համայնավարնե– րը նահանջի դրդումով, կը հռչակեն հանրա– պետութիւնը :

ՀԱՅԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԻՆԱՏԱՆԻ համայնավարները բանակը մեծ յաջողութիւններ ունեցաւ Մանչուրիոյ մէջ հինգշաբթի օր : Զօրավար Ցէ – Թունկ յայտա– բարեց որ Զանկ Քայ Շէկ պիտի պարտուի հա– կառակ Ամերիկայի օժանդակութեան : Զան Քայ Շէկ իր կարգին ձայնասփիւռին վրայ խօսելով, ըսաւ թէ օտար կառավարութիւն մը օգնութիւն կը հասցնէ համայնավարներուն : ԵԹԷ չկարե– ցինք կարմիրներու յառաջխաղացումը, պիտի քայքայուի մեր երկիրը, ըսաւ զօրավարը :

ԻՏԱԼԱԿԱՆ հանրապետութիւնը իրաւապէս հռչակուեցաւ յունուար 1ին : Պաշտօնական հան– դէսներ տեղի ունեցան երկրին չորս կողմը : Նա– խագահ Նիքոլա վերահաստատուեցաւ իր պաշ– տօնին մէջ : Կառավարութիւնը որոշեց հանդուս– կութիւն մը կազմակերպել՝ ի նպաստ Իտալիոյ երկու միլիոն անգործներուն :

ՏԵՂԱԿԱՆ թերթի մը մէջ կը կարդանք որ Եու– կոսլաւիոյ վարչապետ մարշալ Թիթօ, նո– յեմբեր 18ին Զագրէպի մէջ «զգոնի» ճառ մը խօսելով, արտասանած է հետեւեալ բառերը. — «Ունինք չատ օգտաւոր բանակ մը որ ի վիճակի է Իտալիոյ եւ Աւստրիոյ մէջ համախմբուած աւա– զակներուն բանակները չախչախելու եւ անոնց նաւարաժինները Ադրիականի մէջ ընկղմելու : Ե – թէ անոնք հիւլէական ռումբ ունին, մենք ալ ու– նինք : Մեր զինուորները ունին արդիական զէն– քեր : Մեր ռազմիկ օդանաւերն ու հրեռաներն թող պիտի չտան որ թշնամիները կրկին մտնէ : Մենք մեր ռազմամթերքը կը ատանք այն ազգերուն որոնք բնաւ պիտի չսպառին : Ռուսիոյ զինարան– ները ամսական 30000 հրացայլ կ'արտադրեն : Ռուսական ռազմակոյտը ունի 150 զօրաբաժիններ որոնք 48 ժամէն կրնան չարդուփշուր ընել բոլոր արեւմտեան երկիրները եւ փարիզ հասնիլ ... Պատերազմը Ամերիկայի հետ անխուսափելի է, նոյնիսկ քանի մը չաբթուան խնդիր ...

ԿԻՐԱԿԻ, 25 ՅՈՒՆՈՒԱՐ 1948, ԺԱՄԸ 14.30ԻՆ

Միւթիւալիթէի սրահին մէջ, **métro Mutualité**

Յովհ. Թումանեանի մահուան 25ամեակի առիթով

Նախաձեռնութեամբ Փարիզի Հայկական երգչախումբին, մեծ պատրաստութեամբ կը ներ – կայացուի

Ա Ն Ո Ւ Շ

Երաժշտական ողբերգութիւնը 5 արար, մաս– նակցութեամբ Օր. ԱՆԺԻԼ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆի (Անուշ), Ա. grand Prix Wicard de la Ville de Mar – seille : Դր. ՄԵՀԼԹԻԼԵԱՆի (Սաթօ) եւ Վ. ԱԼ – ԹՈՒՆԵԱՆի (Մօսի) : Սկսիֆոնիք մեծ նուագա – խումբ ղեկավարութեամբ ԱՐԱ. ՊԱՐԹԻԼԵԱՆի (60 հոգի) : Թումանեանի մասին պիտի խօսին եւ կ'արտասանեն ծանօթ արուեստագէտներ :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Բոլոր տոմսերը թուա– գրուած ըլլալով կը խնդրուի նախապէս ապահո – վել Հրանդ Սամուէլէն Tél. Dan. 88–65, եկեղեցւոյ դիւանէն : Սապօնճեանէ 39 rue Trévise, Պ. Պար – թեւեանէ, 14 rue Petit. Bot. 99–22, Պ. Բամպուք – ճեանէ, 9 rue Jouy Rouve, Ուշագլեանէ 61 rue Ré– béval, Պարամեանի գրատունէն, եւ նոյն օրը թատ– րոնի կիւշէն, առաւօտէն սկսեալ :

Տոմսերու գինը՝ հարիւրէն երեք հարիւր յիսուն, տուրքերով միասին :

« ԳՈՑԱՄԱՐՏ » պատի օգտագործուած են եւ կը ծախուին Բալուեան գրատան մէջ, 43 Rue Richer, Paris (9), ինչպէս նաեւ Նոր Սերունդի անդամներուն քով : Գինն է 100 ֆրանք : Ծաւալը մեծ ըլլալով փոստով չի ղրկուիր : Անհամբեր դիմել եւ առանալ :

ԸՆԿԵՐԱՀԱՒԱՔԱԿԱՆ ԱՄԱՆՈՐԻ ԴԻՆԵՍԵՂԱՆ

Հովանաւորութեամբ Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէի, կազմակերպուած Հ. Ց. Դ. Քրիստափոր Ենթա– կոմիտէի կողմէ : Վաղը կիրակի 4 Յունուար 1948 կէսօրէ վերջ ժամը 2էն մինչեւ 11, Bar Pelisierի նկարչասրահին մէջ (La Plaine) :

Կը հրաւիրուին բոլոր ընկերներն ու համա– կիրները, ծախսերու մասնակցութիւն՝ 50 ֆրանք :

Հ. Մ. Ը. Մ.ի Ֆրանսայի Շրջ.ի սկաուտա– կան պատմ. ժողովը տեղի կ'ունենայ այսօր եւ վաղը 3—4 Յունուար 1948, Mutualitéի մէջ :

Պատգամաւորները եւ հրաւիրեալները պիտի ունենան իրենց քարթները :

ՖՐ. ՇՐՋ.Ի Պ. ԳՈՐԾ. ՄԱՐՄԻՆ

5700 Ֆրանկով

Կրնաք կարել տալ ձեր հագուստը

Զափի վրայ, երկու փորձով

ԵԹԷ կերպասը բերէք մեզի եւ տասը օրէն

կ'ունենաք զայն

ԱՅՐԵՐՈՒ ԵՒ ԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Դիմել DORMES, 5 Rue St. Apolline

Paris—Métro Strasbourg–St. Denis Հեռ. Tur. 83–63

ՇԱՎԻԼԻ եկեղեցական վարչութիւնը կը ծա– նուցանէ թէ երկուշաբթի յունուար 5, Թագո– րիկոսն եւ երեքշաբթի 6 յունուար Տօն Մննդեան Շավիլի մատուռին մէջ հանդիսաւոր պատարագ պիտի կատարուի եւ յաւարտ պատարագի ջուրօ– ծութեան արարողութիւն տեղի պիտի ունենայ : Ժա– մերգութիւնը կը սկսի երկուշաբթի Թագոր կոսի իրի– կուն ժամը 4ին, երեքշաբթի առաւօտուն ժամը 8.30ին :

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԻ

Յայտնի դիւցազներգութիւնը, շարահիւսեց

Կ. ՍԱՍՈՒՆԻ

350 մեծադիր էջ, ընտիր տպագրութեամբ, գինն՝ 500 ֆրանք : Կը գտնուի Փարիզի Հայ գրավա – ճառներուն մօտ : Տպ. Պէյրութ, 1947 :

ՎԱՏԻԿԱՆի պապը Հինգշաբթի օր, նոր տար– ւոյ առթիւ ընդհանուրական այցելութեան գացող օտար դեսպաններուն օրուան կացութեան մասին խօսելով, ըսաւ թէ 1948ը պիտի ըլլայ ծանր – կշիռ, թերեւս անդառնալի որոշումներու տարի մը : «Մոայլ է հեռանկարը, բայց պէտք չէ յու– սալքուինք, պէտք է աշխատինք եւ աղօթենք » :

Imprimerie DER AGOPIAN 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Ց. Դ. ՄԱՐՍԷՅԻ Շրջ. Կոմիտէն ընկ. ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ մարմին– ները :—

Հայաստան ենթակոմիտէն կիրակի 4 Յունուար ժամը 5ին :

Վառմեան ենթակոմիտէն կիրակի 4 Յունուար ժամը 7ին :

Համազասպ խումբը չորեքշաբթի 7 Յունուար ժամը 7.30ին :

Թաթուլ խումբը հինգշաբթի 8 Յունուար ժամը 8ին :

Իշխան խումբ հինգշաբթի 8 Յունուար ժամը 8ին :

Զաւարեան ենթակոմիտէն, շաբաթ 10 Յունուար ժամը 8ին :

Ակնունի ենթակոմիտէն շաբաթ 10 Յունուար ժամը 8ին :

Քեոի խումբը շաբաթ 10 Յունուար ժամը 8ին :

Նիկոլ Թուման ենթակոմիտէն կիրակի 11 յունուար ժամը 3ին :

Արամ խումբը կիրակի 11 Յունուար ժամը 8.30ին :

Այս ժողովները տեղի կ'ունենան սովորական հաւաքատեղիները : Ներկայ պիտի ըլլայ Շրջ. կո– միտէի ներկայացուցիչը :

Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Մարսէյլի Շրջ. վարչութիւնը կը հրաւիրէ Մարսէյլի եւ շրջանի բոլոր խումբերու վարչութիւնները ժողովի մը, որ տեղի կ'ունենայ 10 Յունուար 1948, «Bar Pi– galle», շաբաթ իրիկուն ժամը 6.30ին, ներկայա– նալ դրատոմարի զեկոյցով :

ԿԱՐՏԱՆի «ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ» ենթակոմիտէի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բո– լոր ընկերները վաղը կիրակի 4 Յունուար, ժամը 3ին, Հ. Ց. Դ. Պիվէռի տան մէջ : Կարեւոր օրա– կարգ : Բոլոր ընկերներու ներկայութիւնը ան– հրաժեշտ է : Ներկայ պիտի ըլլայ Շրջ. կոմիտէի անդամը :

ՓԱՐԻԶԻ ՀԱՑՈՑ Ս. Ցովհ. Մկրտիչ եկեղե– ցւոյ Հոգաբարձութիւնը կը յայտնէ Հայ հասարա– կութեան որ Ս. Ծննդեան եկեղեցական արարո – ղութիւնները կը կատարուին հետեւեալ ժամանա– կացոյցով :

Ճրագալոյց Ս. Ծննդեան, երկուշաբթի 5 Յունուար, արարողութեան սկիզբը ժամը 4, Ս. պատարագ, ժամը 5ին :

Տօն Մննդեան եւ Աստուածայայտնութեան ե– րեքշաբթի 6 Յունուար, արարողութեան սկիզբը ժամը 8, Ս. պատարագ ժամը 10ին : Արտաւազդ արք. Սիւրմէեան կը պատարագէ : Մեռելոց Ս. Ծննդեան, Հինգշաբթի 7 Յունուար, Ս. պա– տարագ ժամը 10ին :

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՓԻԼՈՒ ԷՍԱՊԱԼԵԱՆ եւ զաւակը Հայկ Էսապալեան վճռեցին եւ բոլոր ազգականնե– րը, իրենց խորին չնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, նամակով, ծաղկեպսակով եւ բարեպատակ Մխիթեանց նուիրատուութեամբ, իրենց ցաւակցութիւնները յայտնեցին իրենց սիրելի ամուսնոյն, հօր եւ աղ– գականին տղրացեալ ՓԻԼՈՒ ԷՍԱՊԱԼԵԱՆի մահ– ուան առթիւ : Կ

Գործ կը փնտռէ

Երիտասարդ մը գործ կը փնտռէ իբրեւ ճաշա– րանի պնակ լուացող (plongeur) : Դիմել «Ճա– ռայ»ի :

Իսկի Հայերու ժամադրավայրը

Café des Sports, 4 rue de la Défence Հեռ. Mic. 37–03

Հայրենակից, կեանքդ թարմացնելու համար կ'ուզե՞ս լաւ օղի խմել, դիմէ վերի հասցէին, ուր ընտիր աղանդերներով համեմուած լաւագոյն օղին պիտի հրամցուի քեզի :

ՄԻԱՑՆ ԱՍ ՉԷ

Որեւէ դատական խորհուրդի եւ թարգմանի մը պէտք ունեցողը կրնայ մեզ դիմել :

Իսկ դիէրը ըլլայ թէ ցերեկ բժիշկը անմիջա – պէս պատրաստ է ձեզ համար. եթէ միայն դի – մէք մեզի :

ՏԷր եւ Տճօբէճ ՍԱՐԳԻՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

ՀԱՄՈՎ ԵՒ ԸՆՏԻՐ

ԵՐՇԻԿ ԵՒ ԱՊՈՒԽՏ

ԵԹԷ կ'ուզէք ունենալ ձեր կաղանդի եւ Մննդեան սեղանին վրայ

Դիմեցէք վստահութեամբ՝

ԽԱՉԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆի

Նախապատերազմեան լաւագոյն տուներէն մէկը :

24, Rue Jules Verne, Sevran:

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Dimanche 4 Janvier 1948 Կիրակի 4 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5231-Նար շրջան թիւ 840 Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՒԵԱՆ ԳԻՆ՝ 5 Ֆր.

ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Բարեմիտ մարդիկ հարց կուտան.— Որեւէ օգուտ կը սպասե՞ք, դուշմէն քննադատելով խորհրդային իշխանութիւնը: Երեւանը եւ Մոսկուան:

Եթէ ակադեմական վիճաբանութիւն մը սարքել ուզէինք, դիւրին էր հարցնել այս մարդոց.

— Կը հաւատա՞ք թէ կարելի է բարիք ապահովել, անդադար չոյելով չողոքորթելով, փառաբանելով օրուան իշխանաւորները: Կը յուսա՞ք թէով մը հոգ չահել, սեւը ճերմակ նկատելով եւ պարտկելով դառն իրողութիւնները:

Մեզի համար քննադատութիւնը ոչ սարոնական մարզանք է, ոչ ալ «պարապ վախի խաղալիկ»:

Երբ քննական աչքով կը նայինք որեւէ հարցի վրայ, ներկայացնելով սեւն ու ճերմակը, ծուռն ու չիտակը, վերլուծելով փաստերը, մենք տարտակաւ պարտականութիւն մըն է որ կը կատարենք:

Այլապէս, ինչո՞ւ «գէշ մարդ ըլլալ», երբ այնքան դիւրին է բարեւի կենալ եւ բարեւիլ, առանալ ...

Մեզի համար դաղանիք չէ որ, բազմաթիւ հարցերու մէջ, անկուսակցականներ եւ այլազանութեր ալ մեզի պէս կը մտածեն: Բայց, կարծելով թէ լուռը միշտ ոսկի է, ձայն չեն հաներ: կամ պարզապէս թիթեղի ձայն կը հանեն:

Մենք չատ ալ չենք հետաքրքրուիր իրենց լռութեամբ կամ չատախօսութեամբ: Եւ լաւ կ'ըլլար որ միրենք ալ ամուլ ճիգեր չիորձէին, իրենց իմաստութիւնը պարտադրելու համար մեզի:

Տարբեր դիտելիքներ կան որոնց մասին բաւական բան սորված ըլլալու էինք, աչօք բացօք տեսնելով Եւրոպան ու Ամերիկան:

Այդ դիտելիքներէն առաջինը կ'ըսէ.—

Այսօրուան իշխանութիւնները մեծ մասով յեղափոխական են: Առ նուազն սկեպտիկ, եթէ ոչ անհաւատ:

Անոնք եթէ չարհամարհեն քեզ, ամէն պարադայի մէջ կ'արդահատին վրադ, միրը օրն ի բուն կը քծնին, կամ կը կեղծես: Մանաւանդ քաղաքական դետնի վրայ:

— Ի՞նչ. ուրեմն ճակա՞տ յարդարենք: Ասպարէ՞զ կարդանք, անմիտ յոխորտանքներով եւ դրդռիչ կանչերով ...

Ոչ եւ ոչ: Պարզապէս վարուինք այնպէս ինչպէս վայել է հոգին վառած ժողովուրդի մը որ, հալածական եւ բիւրեցս յուսախաբ, գլուխը քարին կը զարնէ աշխարհի բոլոր ցամաքներուն վրայ:

Օրինակ, դուք իրաւունք չունիք չէզոքանալու կամ Դաշնակցութեան դէմ փչելու, երբ Մոսկուան հանդիսաւորապէս Վրաստանի կը պարգեւէ Կարսն ու Արտահանը, յիսունըհինդ տգիերու առջեւ, Պ. Վիշինսկիի բերնով. (տես կառավարական պաշտօնաթերթը, «Իզվեստիա», 28 Հոկտեմբեր 1947):

Եւ այս՝ աւելի քան երեք տարի քննքնր օրերներ հիւսելէ վերջ Հայաստանի եւ Արտասահմանի դիւրահաւատ բազմութեանց գլխուն:

Նոյնպէս, դուք չարաչար կը սխալիք բուռ պատրաստներ արձակելով Դաշնակցութեան դէմ եւ պաշտպանելով անպաշտպաններին, երբ մենք դիտել կուտանք թէ կարելի չէ զանգուածային ներգաղթ կատարել առանց Հայաստանի սահմանները ամբողջացնելու եւ իսկապէս ազատ կարդեր հաստատելու:

Միջազգային կացութիւնը թոյլ չի՞ տար արեւմտեան Հայաստանի խնդիրը յարուցանել,— առնուազն սահմաններու խնդիրը:

Ո՞վ պիտի բանէր Մ. Միւրեթեան ձեռքէն, եթէ մէկ հրամանագրով Հայաստանի վերադարձնէր պատմական Սիւնիքը, Ախալքալաքը, եւ մանաւանդ Նախիջեւանը որ Երեւանի կողին մըհուած դաշոյն մըն է:

Պատերազմէն վերջ սահմանային «բարեփոխումներ» չկատարուեցաւ ի նպաստ Վրաստանի եւ ուրիշ խորհրդային հանրապետութեանց:

Այս հարցին մէջ ալ մէկ ձայն պիտի լսուէր Արտասահմանի հայկական ճակատէն, եւ ոչ թէ երկուքի պիտի բաժնուէր ճակատը:

Այսպէս եւ յեղուական հարցին, ներգաղթի առթիւ կատարուած չարաչահութեանց եւ ապիքաղութեանց, կաթողիկոսական «ընազօրներու» կամայականութեանց եւ ուրիշ վրդովիչ վրիպումներու մէջ:

Երբ, տարբեր ճամբաներ ունենալով հանդերձ, միասնաբար եւ ճակատաբաց կրկնենք ո-

«Տէրի Մէդ» եւ ճերգաղթը

ԽՄԲ.— Լոնտոնի պահպանողական օրաթերթը իր երկուշաբթի թիւին մէջ կը հրատարակէ հետեւեալ յօդուածը երկրորդ կարաւանին մասին: Կը հրատարակենք, առանց սրբագրելու կարգ մը անճիշդ տեղեկութիւններ.—

Երեք հազար հինդ հարիւր Հայերը այսօր Մարսէյլ կը սպասեն, անատոյդ վիճակի մէջ, Ռուսիա մեկնելու համար: Անոնցմէ չատերը Ֆրանսա կ'ապրին 1915էն ի վեր այսինքն այն օրերէն երբ Թուրքերը բուռն թափով ձեռնարկեցին անոնց բնաջնջումին: Հաղարաւոր Հայեր տուն — տեղ եղան Տարասկոնի Ֆրանսայի մէջ, մասնաւորաբար Մարսէյլի մէջ ու շրջակաները, եւ չատերը յաջողութիւններ ունեցան:

Շատ մը Հայեր, վերջին պատերազմին մէջ, կռուեցան Ֆրանսական բանակին մէջ եւ մանաւանդ Դիմադրական ճակատին: Սակայն, վերեւ, իրենցմէ չատերը մինչ տակ են Հայաստանը սիրով մը որ բոլորովին պղտտոնական էր մինչեւ տարի մը առաջ:

Յետոյ, Թուրքիան դարձաւ ռազմադիտական կենսական շրջան մը երբ Միացեալ Նահանգները՝ Խորհրդային Միութեան յառաջխաղացումը կասեցնելու համար ճիգեր ըրին եւ, համաձայն Թրումընի վարդապետութեան, Թուրքիոյ կառավարութեան յատկացուցին, տարեւ մը միլիոնատորի վարկ մը որպէսզի այս վերջինը դինուորական պաշտպանութեան միջոցներ ձեռք առնէ՝ Ռուսիոյ դէմ:

Ռուսերու ռազմավարութիւնը որ սկսած է այդ թուականէն առաջ, հրաւիրեց Հայերը որ վերադառնան Խորհրդային Հայաստան որուն հիմը դրուած էր 1920ի Նոյեմբերին:

1946ին Ռուսերը յաջողեցան Հայաստան վերադարձնել 60էն 70.000 Հայեր, դլխաւորաբար Մերձաւոր Արեւելքէն եւ Պալքաններէն: 1947ի դումարը պիտի ըլլար 70.000:

Անոնք որ կը հետեւին այսօրուան պատմութեան, կը տեսնեն թէ ինչ նպատակներ կը հետապնդէ ռուսական ռազմավարութիւնը — դպալի կերպով աւելցնել քանակութիւնը Խորհրդային Հայաստանին որ, 1939ին, ունէր 1281.599 հոդի, 11640 քառ. մղոն տարածութեան մը վրայ, եւ յետոյ պահանջել պատմական Հայաստանի այն հողերը որոնք տակաւին կը դտնուին Անդարայի ձեռքը:

Ներգաղթի խորհրդային ծրագիրը մեծ համակրութիւն դտաւ Ֆրանսայի մէջ, մանաւանդ

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. էջ)

Գառավարութիւնը վստահութեան խուճ պիտի պահանջե վաղը

ՏԱԳՆԱՊԱԼԻ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Վարչապետ Շուման Ուրբաթ օր սպասնաց հրաժարիլ եթէ խորհրդարանը մերժէ ընդունիլ բարձրադոյն եկամուտներէն դանձուելիք տուրքի առաջարկը իր բարեփոխական վիճակին մէջ:

Խորհրդարանը չորեքչաբթի օր որոշած էր կարդ մը բարեփոխումներ մտցնել օրինագծին մէջ եւ 155 միլիառէն 80 միլիառի իջեցնել դանձուելիք բացառիկ տուրքերուն հասոյթը: Կառավարութիւնը հաւանեցաւ չարք մը զիջումներ կատարել եւ առաջարկը խորհրդարանին ներկայացնել անփոփոխ: Բայց, վարչապետը վճռած է վստահութեան քուէի խնդիրը յարուցանել այն պարագային եթէ օրինագիծը չընդունուի:

Քաղաքական շրջանակներուն մէջ կը հաւաստուի որ կառավարութեան դիրքըբաւական զօրաւոր է եւ կրնայ վստահութեան քուէ առանալ:

Ներկայ տագնապը ստեղծուեցաւ այն առեն երբ Շումանի եւմտական նախարարը առաջարկեց բացառիկ տուրքի ենթարկել տարեկան 450.000էն աւելի եկամուտ ունեցողները, եւ այս տուրքէն դոյացած հասոյթը յատկացնել երկրին վերակազմութեան աշխատանքներուն: Կառավարութիւնը կ'ակնկալէր տարեկան նուազագոյն 150 միլիառ, բայց խորհրդարանը այդ դումարը զեղչեց 80 միլիառի: Եւմտական նախարարը ներկայացուց երկրորդ առաջարկ մը, աւելի հաչտարար, եւ սկզբնական դումարը զեղչեց 125 միլիառի — տարեկան 450.000էն մինչեւ 1 միլիոն ֆրանք եկամուտ ունեցողներէն պիտի դանձուի հարիւրին քսան իսկ մինչեւ 3 միլիոն եկամուտ ունեցողներէն, հարիւրին մինչեւ քառասուն:

Կը նախատեսուի որ նոյն վիճաբանութիւնները պիտի ունենան վաղը մանաւանդ որ զօր. Տը Կոլի բարեկամներն ու համայնավարները հաւասարապէս դէմ են եւմտական նախարարին առաջարկներուն:

Ծուռաստաձի դէպքերը

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԿՐ ՅԱՂԹԵՆ

Ինչպէս արդէն գրած էինք մեր նախորդ թիւով, Ծուռաստանի կառավարական ուժերը յաջողած են կասեցնելու ապստամբներու յարձակողականը Քոնիցայի վրայ: Համաձայն վերջին լուրերուն, Մարկոսի զինուորները ընդհատած կը փախչին դէպի ալպանական սահմանադլուխը:

Մեծ լաւատեսութիւն կը տիրէ Աթէնքի քաղաքական շրջանակներուն մէջ, մանաւանդ որ այն լուրէն ետք որ կը հաղորդէր թէ ամերիկեան կառավարութիւնը որոշած է աւելի մեծադումար օժանդակութիւն մը ընել Ծուռաստանի:

Աթէնքի մէջ դիտել կ'տրուի որ Մարկոսի դլխաւոր նպատակն էր Քոնիցան գրաւել եւ այնտեղ հաստատել ապստամբ «կառավարութեան» մայրաքաղաքը: Եթէ յաջողէր, Պուլկարիա եւ

մինչեւ տարիքի տէր Հայերուն մօտ, եւ անցեալ Օգոստոսին 3000 հոդի Մարսէյլէն Ռուսիա մեկնեցան: 3500 հոդիէ բաղկացած երկրորդ կարաւան մը պիտի մեկնէր Նոյեմբեր 16ին, Փոպետա նաւով, բայց ան տակաւին Մարսէյլի մէջ կը սպասէ, վերջերս պատահած գործադուլներուն պնդէն նաեւ Ֆրանսական եւ ռուսական կառավարութեանց մէջնեւ ծագած վէճին պատճառաւ:

Հիմա, այնպէս կ'երեւայ որ անոնց մեծամասնութիւնը երբեք Հայաստան պիտի չհասնայ երբեմն:

Երբ առաջին կարաւանը կը մեկնէր, Ֆրանսական իշխանութիւնները աչք դոցած կրնան մը աւելորդութեանց վրայ: Ցոյս կար որ կարգ մը սեղմումներու վերացումը պիտի վերջացնէր Ռուսիա դաղտուղ Ֆրանսացիներու վերադարձը: Նկատելիս, Փարիզ եւ Մոսկուա կը վճռեն իրենց քաղաքացիներուն վերադարձին հարցին շուրջ:

Այդ վէճին հետեւանքը եղաւ այն որ Ֆրանսական իշխանութիւնները, այս անգամ, որոշեցին աւելի լայն բանան իրենց աչքերը, մանաւանդ երբ այն 3500 Հայերու վրայ որոնք Մարսէյլի մէջ կը սպասեն: Այդ Հայերէն չատերը Ֆրանսական քաղաքացի եղած են երեսուն տարուան իրենց բնակութեան ընթացքին, իսկ ուրիշ մաս մը, ծնած է Ֆրանսայի մէջ: Համաձայն Ֆրանսական օրէնքին, Ֆրանսա ծնած մէկը ինքնաբերաբար Ֆրանսացի կը համարուի: Վերջերս Մարսէյլի 3500 Հայերուն վրայ աւելի խիստ հսկողութիւն կատարուեցաւ, եւ միայն 1200 հոդի կրցան մեկնիլ:

Ի՞նչ պիտի ըլլայ վիճակը մնացեալ 2300ին: Անոնցմէ չատերը ծախած են իրենց տուներն ու խանութները, եւ այսօր, չատ դժուար գործ է կեանքը վերսկսիլ Ֆրանսայի մէջ:

ՏԵՍԱԿԷՏՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ս. Վրացեանի խօսքը

(Բ. եւ վերջին մաս)

Արտասահմանի հայ գրողը ազատ է այս պարտադրանքէն, բայց ան ալ ենթակայ է օտար ազդեցութիւններու եւ ոտքի տակը ամուր հող չի զգար: Առէք, օրինակ, արտասահմանի հայ բանաստեղծութիւնը — 20 տոկոսը կորուած է հայ միջավայրէն, ոչ միայն նիւթով, այլեւ ոգիով: Մեր բանաստեղծներու մեծ մասին վրկերը ժամանակէն եւ տարածութենէն դուրս են: Կրնային գրուիլ հազար տարի առաջ կամ հազար տարի յետոյ, Քամչաթքայի մէջ, կամ Պուէնոսներու երկիրը: Մինչդեռ գրականութիւնը կեանքի հայելին է. ան պէտք է ցոլացնէ իր ժամանակը, ժամանակի ոգին, բարքերը, կենցաղը, ժողովուրդի մը հոգեկան ապրումները:

Եթէ արտասահմանի հայ գրականութիւնը պիտի յարատեւէ, ան պէտք է մօտենայ կեանքին: Իսկան է, ամէնուրք, որ հայ գրականութեան նիւթը առնուի հայկական միջավայրէն — անցեալէն թէ ներկայէն՝ միեւնոյն է —, բայց աւելի կարեւոր է, որ հայ գրողներու արտադրութեանց մէջ արտայայտուի հայկական անհատականութիւն, այն, որ յատուկ է հայ ոգիին ու միտքին, որով հետեւ, վերջին հաշուով, գրականութիւնը թէ ձեւով, թէ բովանդակութեամբ ազգային է. ազգային գրականութիւններու համադրութիւնն է, որ կը կազմէ համամարդկային գրականութիւնը: Տանդէ մը համամարդկային է, բայց ամէնէն առաջ՝ իտալական հանճարի արգասիք է:

Իրրեւ ընդհանուր օրէնք, Սփիւռքը (ես չեմ սիրեր այս բառը) չէ կարող երկար ապրել առանց կենդանի կապի Մայր Հայրենիքի հետ: Որ ըսել է, թէ՝ արտասահմանի գրականութիւնն ալ չի կրնար յարատեւ գոյութիւն ունենալ ու զարգանալ, առանց մայր երկրի: Վերջ ի վերջոյ, պատնէշը Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ պիտի խորտակուի եւ հայութեան ամբողջականութիւնը պիտի վերականգնի: Մինչեւ այդ եւ անկէ ետք ալ տասն մը, արտասահմանի հայութիւնը պիտի ապրի ուրոյն կեանքով եւ գրականութիւն ալ պիտի մնայ ու զարգանայ: Անհրաժեշտ է սակայն կրկնել, որ ան մօտնայ կեանքին, դառնայ կեանքի հայելին: Անհրաժեշտ է, որ արտասահմանի հայ լրագրողը զգայ, թէ ինք մասնիկն է հայ կեանքի եւ իր տագանդը նուիրէ անոր: Հայ հասարակութիւնն ալ պիտակից լինի, որ ինք պարտականութիւն ունի ազգային մշակոյթի հանդէպ: Արդար են եղած գանգատները, թէ հայ գիրքը լայն սպառում չունի, եւ հայ հեղինակները ի վիճակի չեն գրականութեամբ ապրելու: Պէտք է, որ հայերէն գիրքը աւելի մեծ քաջալերանքի առարկայ դառնայ ներքին շրջանակներու կողմէ, բայց կարելի չէ չնկատել, որ հայ մտաւորականութիւնն ալ դովելի դիրքի մէջ չէ հայ գրականութեան հանդէպ. քանի՞ հայ մտաւորական կարող է ցոյց տալ, որ հայերէն գիրք գնէ: Հայ մտաւորականը չի սիրէ հայերէն գիրքի գրամ տալ. կը սիրէ ճրի կարդալ, կամ «նուէր» ստանալ: Մտաւորականութիւնը պէտք է օրինակ լինի ժողովուրդի աչքին:

Գրականութեան զարգացման համար կարեւոր գործօն է նաեւ քննադատութիւնը: Դժբախտաբար, մենք քննադատութիւն չունինք: Մեր քննադատները կամ Օշականի պէս մարդիկ են, որ հաճոյք կը զգան «հարթելէ», կամ համակրանքներով ու հակակրանքներով կ'առաջնորդուին: Եթէ գրողը իմ բարեկամն է կամ իմ կուսակցութեան մարդը, տաղանդաւոր է, եթէ ոչ՝ անտաղանդ է: Անկողմնակալ, չինարար, միայն գրականութեան մտահոգութիւններով տոգորուած քննադատութիւն չունինք, ոչ ալ հեղինակաւոր քննադատներ, ինչ որ մեծ ցաւ է մեր գրականութեան համար:

Գրականութեան զարգացման տեսակէտով, անչուշտ, կենսական անհրաժեշտութիւն է եւ գրողներու փոխադարձ չփումը, ընդհանուր կեանքի եւ ընդհանուր հետաքրքրութեան առեղծուածը: Մեր գրողները ցրուած են դանագան երկիրներու մէջ, իրարմէ հեռու եւ իրարմէ կրճատուած: Հաճոյանալ կապ անոնց միջեւ, առանց բերել գրական հաղորդակցութիւն եւ ընդհանուր շահագրգռութիւն, ինչ որ գոյութիւն ունի ամէն ժողովուրդի մէջ, ասկէ աւելի քան այժմեական պահանջ է: Եւ, անշուշտ, գրողներու համագումարի հարցը, որ հրապարակ է գրուած, պէտք է որ ողջունուէր ամէնքի կողմէ: Դժբախտաբար, սակայն, նման համագումարի մը իրականացումը կապուած է մեծ դժուարութիւններու հետ եւ ժամանակի ու նիւթական միջոցներու կը կարօտի: Թերեւս աւելի գործնական լինէր եթէ, առայժմ, շրջանային համագումարներ կազմակերպուէին. օրինակ՝ Մերձաւոր Արեւելքի գրողները՝ առանձին, Եւրոպայինը՝ առանձին եւայլն: Եւ այդ ժողովներու մէջ ծեծուած հարցերը արծարծուէին նաեւ մամուլի մէջ: Մեր գրական կեանքի համար ասիկա կը լինի անգնահատելի օգտակար:

Երկու խօսք եւս եւ վերջացնեմ: Մօտ կ'ըլլայ գրականութեան դեկավարութեան մասին: Հայաստանի մէջ գրականութիւնը կը դեկավարուի, եւ արդիւնքը ծանօթ է — բացասական: Ուրիշ տեղ ալ նման դեկավարութիւն մը միեւնոյն արդիւնքը պիտի տայ: Գրականութիւնը պէտք է լինի բացարձակապէս ազատ, առանց տեւէ կաշկանդումի: Գրականութեան միակ դեկավարը գրողը ինքն է, գրական քննադատութիւնը եւ ընթերցող հասարակութիւնը: Ատկէ դուրս, տեւէ միջամտութիւն գրական ստեղծագործութեան մէջ, ըստ իս, ի չարէ է: Գրականութիւնը այն ուրոյն բոյսն է, որ կարող է բուսնդակ ուժով աճիլ ու զարգանալ միայն ազատութեան արեւին տակ, անհատական ազատութեան պայմաններու մէջ:

Կաղանդի գիր

Ահաւոր մեռամարտ մը վերջ, յաղթութեան դափնին ճակատին՝ այս գիշեր Նոր Տարին իր վեհութեամբը պիտի գայ ու բազմի հինին տեղը: Ատոր համար ամէն մարդ ուրախ է: Ժպիտ մը կայ մանուկներու դէմքին վրայ: Ու սէր, ու կեանք, ու խնդութիւն ամէն յարկի տակ:

Իրրեւ հաւատացող մը օրուան այս մեծութեան, կը վաթթուիմ վերարկուիս մէջ ու կ'երթամ տղմոտելու Կաղանդի յաղթական մուտքը:

Դուրս մէս մնակ, կը կեմամ սիրուն հրապարակի մը վրան ու կը դիտեմ չուրջս: Ինչ գեղեցիկ է բնութեան համայնապատկերը: Ամէն կողմ հրաշալիօրէն կը տեսնուին Աստուծոյ վրձինի դոյները:

Առաջ առաջ, աչքիս կը զարնէ գոշ երկինք մը: Եթերին մէջ ձիւնածաղիկներու պարերը խոյական: Ծառերը մերկ ու երազուն: Եւ հով մը որ կարծես կ'ապշեցնէ սանձարձակ:

Այս հրապարակին վրայ ուր ձիւնը ճերմակ սաւանի մը պէս փռուեր է, խումբ մը լաճեր «պատերազմ» կը խաղան:

Ինչ քաղաքիչ: Հակառակ կծու հովին, անոնց պղտիկ ձեռքերուն մէջ ձիւնը պլոտուելով կ'երթայ ու կը փշրուի մէկին կամ միւսին կռնակին վրայ:

Ո՞վ կրնար մարել կրակը այդ պզտիկներուն, որոնք ազատ համարձակ դէպի կեանք կ'ընթանան:

***

Հեզահեզ մութը իջաւ ու ծածկեց ամէն բան:

Տեղ տեղ սակաւն, խանութներու լուսաղարդուած ապակիներու առջեւ, մարդիկ դեռ կը յամենան պատցնել իրենց սառած ոտքերը: Քովս աղուորիկ աղջնակ մը, կառչած մօրը քղանցքէն, աղաչողի աչքերով կը խօսի:

— Մայրիկ ջան, այդ պուպրիկներուն նայէ, ինչ գեղեցիկ են: Կ'ուզեմ որ հատ մը գնես ինծի համար:

— Այո, աղջիկս, բայց ես չեմ որ պիտի գնեմ այդ: Կաղանդ Հայրիկն է որ պիտի բերէ այս գիշեր, եթէ ...

— Կաղանդ Հայրի՞կը: Այս գիշե՞ր:

— Այո, դուակս, այս գիշեր:

Աղջնակը լռեց: Մայրը զգածուեցաւ: Կարծես ղմյաց երախային սիրտը կոտրելուն համար: Եւ որպէսզի դարմանուի ցաւը, չաքարի կտոր մը սահեցուց անոր բերանը:

— Դէհ, հիմա երթանք, ըսաւ մայրիկը, դանդաղ մազերը շոյելով, երթանք նամակ մը գրենք Կաղանդ Հայրիկին, որ այս գիշեր երթ գայ, պուպրիկդ բերէ:

Ու մեկնեցան:

Լուռ, կակիծ մը սրտիս վերադարձայ սենեակս, դողեցի պատուհանիս փեղկերը, տաքցուցի վառարանս ու սկսայ գիրք մը թերթատել: Ցանկարծ հին, հին օրերու անոյշ յիշատակ մը արթնցաւ կուրծքիս տակ: Սիրտս կտրուած նուագ մը պէս սկսաւ արխնել: Ինչեր չմտաբերեցի: Հայրենի Կաղանդը իր աւանդական սովորութիւններով ու բարքերով, սէրերուն ու խնդութիւններով աչքիս առջեւ է: Հակառակ իրենց յառաջացած տարիքին, մեր մամիկներն ու պապիկները հեզանոյշ երեւոյթ մը ունէին: Գինիի բաժակները լեփ-լեցուն: Սեղանները կ'ըսես կը հեւային անոպատ քաղցրեղէններու ծանրութեան տակ: Ու երգեր, ու մաղթանքներ:

— Շնորհաւոր նոր տարի..

— Գինի լից հօրար ...

— Ամողջ անուշ...

Մինչ ուրախութիւնները կը շարունակուէին, տանը պապիկը կռնակը բարձին, հեքեաթ մը կը սկսէր.

— Կար ու չկար ...

Ցանկարծ խաժամուժ աղմուկ մը: Սթափե-

ՍՐՏԻ ՄԸ ԱՒԱԶԻ

Ծո՛վ՝ ուր դիրկըդխառն կոյսեր տակեվար,
Ալեծուխի կ'երթան հեռուներն անհատ ... :

Այսպէս նազանքով հառակերը սիրուն,
Բերկրանքովր խօլ հասուն հարսերուն,
Կ'օրօրեն իրենց արդանդը բեղուն ...
Ժամն է երա՛զ իմ որ լուռ ուռճանան ... :

Բայց ճիչ մը կուրծքէս կը լսմնայ կերկեր ,
Ափերուն մէջ սեղմ մանգաղներով կեռ ,
Հընձուտրներն ահա՝ քաղցկեր բըրընկեր ...
Կ'արիւնի արդէն, արտը մաս առ մաս ... :

ՋԱՐԵՀ ԴԱՋԱՋԵԱՆ

ցայ: Երգեր, ինչպէս կ'երգեն դինուները: Դուրս կը նայիմ: Մօտը մը մանչ եւ աղջիկներու յոգնած սուտերներն էին որ գետ կը քաշքշուէին ճիւնածածուկ մայթերուն վրայ: Պատուհանս կը զոցեմ: Ահա զարձեալ ես ու սենեակս: Վառարանս կը ճարճատի: Սեղանս կը բողոքէ ու աթոռներս, կ'ըսես վէճ մը ունին իրենց մէջ:

Գիշերը կը յառաջանայ: Ի դուր կը փորձեմ քնանալ: Հայրենի յիշատակներս թունդ հաներ են սիրտս: Եւ ահա յուզուած՝ Ամանորի սեմին վրայ լուռ, կը սկսիմ գրել Կաղանդի նամակս:

×

«Ով Կաղանդ Հայրիկ, գիտեմ, ինչպէս երկար տարիներ եկեր ու գացեր ես, այս տարի ալ պիտի գաս: Պիտի այցելես քաղաքներ, պիտի մանես տուներ եւ, պէս պէս նուէրներ պիտի բաժնես բոլոր խելօքներուն:

«Ահա, այն հազար հազար խելօքներուն չարքին խելօք մըն ալ ես, որ հիմա, այս անհրապատ խուցիս մէջ տխուր, աչքերս քեզի կը յառեմ: Լաւ, ուրիշներուն պէս չաքար չէ տը պիտի ուզեմ քեզմէ: Ոչ ալ խաղալիք կամ ուրիշ ընծաներ: Այլ մէյն համեստ խնդրանք մը, եթէ կը հաճիս:

«Այն տարին, կը յիշե՞ս չէ, երբ փոթորիկ եղաւ, տարերքը խառնուեցան իրարու, հոսեցաւ ցեղիս արիւնն ու արցունքը, փչրուեցան դանկերը եւ մարեցան ճրագներ, ես, միակ յոյսը դերդաստանիս, որբուկ, եկայ ու խնկայ այս օտար ափերը: Անկէ ի վեր չեմ գիտեր թէ քանի եղաւ հայրենի գիւղս:

«Այս գիշեր երբ անցնիս ծովերէն, գետերէն եւ քաղաքներէն ու գաս հասնիս մինչեւ մեր Մաստարը ալեւոտ, կանգ առ պահ մը: Ընդարձակ դաշտ մը որ տակի ծովի մը պէս պիտի պարզուի աչքիդ՝ հայրենիքս է: Հոդ պիտի տեսնես բազմաթիւ սպառոյ հայ գիւղեր: Հօր մը պէս անասուն, բաց թեւերդ անոնց վրան: Ու թող քու օրհնութիւնդ խունկի մը անուշ բոյրին պէս թեւ առ թեւ իջնէ ու ծածկէ ամէնքն ալ: Այն ատեն, ով Ամանոր, գնա տրոնելու իմ հայրենի գիւղս՝ Գամքր:

«Սեւ փոթորիկէն առաջ, մեր գիւղը կը նմանէր սիրուն ովասիսի մը: Ունէր հարիւր տուն, հապար դղալ: Իր չորս կողմերէն կը հոսէին յորդառատ աղբիւրներ: Մարդիկ չէին եւ ուրախ էին: Երբ հանդիպէիս այսպիսի գիւղի մը, մտիր, այդ իմ ծննդավայրս է:

«Երբ հասնիս Տէր Գ. քահանայենց թաղը, պիտի խնդրէի որ անդամ մը մէջդ չտկելով դիտէիր հօրենական տունս: Նայէիր իմ կարօտի աչքերովս: Ցետոյ խոնարհելով մինչեւ գետինը, դարձեալ համբուրէիր իմ ծարաւ շրթներովս:

«Այդ հողը, որուն վրայ պիտի կենաս հիմա, ոոոպուած է նահատակ հայրիկիս ու մայրիկիս քրտինքովը: Իմ մանկական արցունքս է չաղուեր իր քարին ու աղիւսին: Ես եմ խաղացեր ու երգեր ու երգեր իր դրան մօտիկ ես, տվ արգասաւորիչն: Ըսէ իրեն թէ երբեք, երբեք պիտի չմոռնամ իր սիրելի, պաշտելի մօխրակոյտը: –

«Այս ամէնէն վերջ՝ անցիր Ռէս Մուրատենց դրան առջեւէն Այրունց, Թուխիկենց թաղերէն, Իսկիսենց, Վարդապետենց փողոցներէն ու գնա չիտակ դպրոցը: Կանգ առ պահ մը այդ տեղ ու դիտէ: Այդ սուրբ յարկին տակ էր, որ անցած օր մը, բացուեցան լեզուիս կապանքները: Հոդ էր որ ճանչցայ չարն ու բարին: Հոդ էր վերջապէս, որ մեր իմաստուն հայրերուն աչքին տակ սորվեցայ ապրիլ եւ սիրել, սիրել եւ ապրիլ կեանքը:

Ու վերադարձիր: Բայց մի մոռնար մեր լեռները, մեր դաշտերն ու ձորերը, տղոց մէջ կը հանդչին այսօր ցեղիս բազմահազար նահատակները:

Կարօտիկ համբոյրներս ամէնուն:

Ահա սիրելի Կաղանդ Հայրիկ, այս է որ կը խնդրեմ քեզմէ: Ու այս թող ըլլայ միայն նոր տարուան խնձի թերթիկը ընծադ:

ՏԱՏՈՒՐ ՊԼՐՊՒՐԵԱՆ

Երաժշտական Նկատողութիւններ

Օ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍԻՆ ԱՌԹԻԻ

Ինչպէս հայ կեանքի մէջ մտրտիրոյն՝ ճակատագրական տագամ մը կայ նաեւ մեր երաժշտութեան քաղաքին մէջ: Այն պահուն երբ Տքսլիսի կ'ընդլայնէր իր արուեստին սահմանները, ինքնատիրանալ, ինքնատպութեան կարելիութիւն — ներ պարզեւելով արդէն պատրաստուած ազգերուն, հանճարեղ Կոմիտասը դեռ նոր կը բիւրե – ղացնէր հայ երգին վաւերական արտայայտութիւնները:

Այս յապաղած վերածնունդէն ի վեր կայ ուրեմն ժամանակի հեռատրութիւն մը, որուն ատիճանական վերադրաւումը այնքան դժուար է որքան արագ՝ յառաջապահ ազգերու երաժշտութեան դնացքը:

Ահա թէ ինչու հանդրուանները անդրանցնող ոստում մը կայ Օ. Պէրպէրեանի «Հայկական Համանուագ»էն դէպի «Դաշնակի Գոնչէրթօ», որուն անմիջական ըմբռնումին այսպէսով սահեցուած դժուարութեան վրայ կը բարդուի նոր եւ անսպասելի մէկ առումը երաժշտական այս ծաւալի ձեւին:

Արդարեւ, գոնչէրթօն, առաջին ակնարկով, գործիքի մը անհատականութեան դանազան երեսներուն, անոր հարստութեան եւ արտայայտիչ յատկութիւններուն — հետեւարար նուագումի դժուարութիւններուն — ճոխ եւ համազրական ցուցադրութիւնն է: Զարմանալի չէ սակայն որ ամենամեծ հեղինակները իսկ կիրարկած են այս վայրկեան բայց քիչ մը երկրորդական ձեւը, ուր յաճախ մենանուագողն է որ կը վտառուորուի: Անոնք չանացած են նուագարանի մը դժուարութիւններն ու կարելիութիւնները պատշաճեցնել իրենց թէքնիքին եւ ոճի, ուզած են գործիական ճարտարութիւնը եւ ճոխութիւնը ենթաձգտել յուզական լինելութեան մը կամ բանաւոր կազդի մը անհրաժեշտութիւնով: Կան գոնչէրթօներ որոնք այսպէս կրցած են հասնիլ զուտ համամուագային գործերու բարձրութեան:

Այս տեսակէտով, Օ. Պէրպէրեանի նոր գործը, առաջին ունկնդրութեան մը միջոցին, արուեստագիտական հաճոյքին համընթաց, էյզեցող ակնարկութեան մը տպաւորութիւնը կը ձգէ: Երբ կը սպասէք, օրինակ, որ երկրորդ մասը դաշնակի լայն եւ առաջին բլանի վրայ տարած – ուղղ խորհրդածութիւնով մը սկսի, յանկարծ սրինդն է որ կ'երգէ — թէեւ չատ դեղեցիկ, թափանցող մեղեդի մը — դաշնակահարը լքելով լուռ ունկնդիրը մը դերին մէջ: Հանդրուանը ուր հասած են հեղինակին ոճն ու դեղագիտականը, հայկական նկարագիրը զոր ան ուզած է տալ իր դաշնակահիչին, ինչպէս նաեւ նիւթը, պատկերացուած իր մտանատրութեան եւ լինելութեան մէջ, յարմար չէին թերեւս գոնչէրթոյի մը ծաւալի ձեւին պատշաճելու:

Բայց գործին ներքին յատկութիւնները չուտով մոռցնել կուտան մակերեսի այս անպատեհութիւնը: Հոն կը չնչուի մանաւանդ միութեան տեղեկանութիւնը, միսն՝ որ մասերու այլազանութեան կուտայ ներդաշնակ կառուցուածքի մը ամբողջականութիւնը: Մէկ գլխաւոր մոթիվ կը տիրապետէ սկիզբէն մինչեւ վերջը, իր այլափոխումներուն, զարգացումներուն, իր արձակած ճառագայթներուն ընդմէջէն՝ աւելի եւս հաստատելով կեդրոնական լոյսի մը հարազատութիւնը:

Տեսողութիւնն իսկ հոգեկան լինելութեան անդուլ ակելի հոսումէն անդին կ'անցնի, դառնալու համար ստեղծագործ կամքի մը ապրուած ակտին պատկերը:

Արդիական հեղինակներուն մէջ քանիներ կան, որոնք բուն իրականութիւնը կը նկատեն լինչ որ առանց հակակշիռի կը դծագրուի իրենց երեւակայութեան պատատին վրայ, նոյնիսկ կը վանեն լինչ որ պատահաբար բանաւոր է, ազդանա – գրելու համար միայն տարօրինակութիւնները, tonalitéները կը խառնեն իրարու, ահաւոր dissonanceներ կը չարեն քովէ քով:
Անոնց դէմ կը կանգնին ուրիշներ որոնք թէեւ կ'ուզեն, միւսներուն պէս, կոխտուած դետիններէն, սովորական հոգեբանութիւնէն անդին անցնիլ, բայց կ'ուղղուին հակառակ ճամբով՝ դէպի տգեղանը. ոգեկան մը՝ որուն բանաւորութեանը մէջ կը հնչէ զարձեալ լինչ որ արդէն կը բիւրեղացած, սակայն կը հնչէ պոռած, բիւրեղային, կարծես իր harmoniqueներովը միայն:

Strawinskyներ, Schönbergներ կը վերադառնան այս վերջիններուն քովարհամարհելով ամէն գնով նորը պահանջողներուն ծաղրանքը: Հոն է նաև Օ. Պէրպէրեանը իր տեսական, դժուարահաճ պրպտումներով, իր թէքնիքը հետզհետէ աւելի որոշ եւ լայն սկզբունքներու վրայ հաստատելու կամքով:

Այդ թէքնիքը, իր վերջին ձեւին մէջ, կը կոթնի echelle chromatiqueին վրայ, ուր ամէն աստիճան նոյն կարեւորութիւնը ունի, բացի մէկէն որ կը սահայ կեդրոնական դիրք մը, հաշտեցնելով այսպէս tonalité եւ atonalitéի հակամարտութիւնը: Դաշնակները (accord) ունին իրենց կազմութեան եւ յաջորդականութեան օրէնքները, բայց կը դունափոխուին «աւելցուած» նօթերով, նոյնիսկ աւելցուած ուրիշ դաշնակներով: Ոչինչ ձգուած է պատահականին կամ սովորականին:

Այսպէս հիմնուած՝ իր ոճը կը հանի յատակ ինքնատպութեան մը: Միեւնոյն ատեն աղնուական եւ հաղորդելի, խիտ եւ թափանցիկ, սեղմ եւ արտայայտիչ, այդ ոճը հեղինակին տգեղան կորութիւնն իսկ է որ կը կարգաւորէ յետին մանրամասնութիւնները, կը ջնջուի ուժէ անցքի մէջ ջին, լինչպէս différentielle մը ձեւ ունեցող courbeի մը ամենափոքր մէկ հատուածին մէջ իսկ կը հետացնէ այդ ձեւին կազմութեան օրէնքը եւ չարունակականութիւնը (continuité):

Հայկական Համանուագը կը դործածէր բազմաթիւ ծանօթ մեղեդիներ: Գոնչէրթօն իր խոյանքը կ'առնէ միակ մոթիվէ մը: Իր ապագայ հայկական գործերը կրնան չպարունակել ուժէ ծանօթ թէմա, չունենալ տարազելի նիւթ մը: Անոնք պիտի ըլլան սակայն վստահաբար մերը այն ինքնայատուկ բոյրով որ կը ծնի իսկապէս հայ արուեստին, ուր Օ. Պէրպէրեան կը մասնանշէ ինքնատիպ ձուլումը երկու աղբիւրներու՝ միսթիք խորքի մը, տեսակ մը անդրհայեցողութեան բնազդի, եւ ներդաշնակութեան, դեղեցկութեան զգացումի մը: Դարերու խորէն հնչող «պատուէր» մը չէ՞ անաղարտ պահել այդ աղբիւրներուն զուգորդութիւնը, իրրեւ անփոփոխակը (invariant) հայ Տիեզերքին:

Ա. ՓԱՓԱԶԵԱՆ

ՊՈՒՏՄ ԾԻԾԱՂ

«Տիրացուական՝ lif...»

Անդաթմանելի անիրաւութիւն ըրած կ'ըլլան, երբ հայուն «տիրացու ազգ» պիտակը կը փակեն:

— Աղբեր չան, ինչ մխիթարական բան է ունենալ մեր մոր տղոցը մէջ ազգային ոգիին օրէ օր աժդեզանալը: Դիչերը ցերեկին խառնած՝ հայոց Պատմութիւն կը սերտեն: Անոնք գիտեն որ ունեցած ենք Մեծն Տիգրան, Արտաչէս Աչխարհակալ, Անդրանիկ եւ Հրաբուխ հերոսներ: Հայասան որ ըսես, անոնց սիրտը կուրծքէն դուրս կը ժայթքէ: Ալ ինչո՞ւ յուսահատիլ:

— Հօ չան հօ: Մեր պատմական անուններէը ի բերան սորվիլը եթէ Հայ ըլլալ կը նշանակէ, չունչ առնելու պէս դիւրին բան է հայութիւնը միլիոններով բազմացնելը: Կրնանք օտար տղոց տանական ֆրանք տալով, զոց ընել տալ այդ անունները: Հոգ չէ թէ անոնք ալ մերինները պէս Այասասան, Դեկչան, Անդրանիկ, Աղաղատ աղճատահնչեն զանոնք:

— Ոչինչ: Բայց մեր տղաքը, յաճախ դասախօսութիւններ կը սարքեն հայ մշակոյթի մասին բան սորվելու համար: Մեր գրողներուն եւ բանաստեղծներուն կը ծանօթանանք հոն:

— Այո, գիտեմ, ուսկ'դիրէն աւելի դասախօս ունին: Խեղճ մարդիկը, պատերուն է որ կը խօսին կամ բախտաւոր պարագային հինդ տասր ականջներկայ կ'ըլլայ այդ դասախօսութիւններուն:

— Կը զրպարտէք: Էհ, տղաքը զրաղած կրնան ըլլալ: Հապա մեր հայ հանդիսանե՞ր: Լեւի Լեոյան երիտասարդութիւն ներկայ կ'ըլլայ

— Անշուշտ կէս գիշերէն ետքը, երբ ճապ ու պարը հպաւէր կը կարդան:

— Ինչ ընեն տղաքը: կ'ուզես որ ճառ, ոտանաւո՞ր մտիկ ընեն: Աղուոր երգեր ալ չունինք որ..

— Հա լաւ ըսիր: Ծնունդի գիշեր ճաշասփիւռ մտիկ ըրի՞ր: Ինչ հիանալի ծնունդի երգեր ու պատարագներ երգեցին աշխարհի բոլոր երկիրներէն: Հապա գիւղական ու մանկական երգե՞րը: Հաւատա որ տիրեցայ: Մերինները ո՞ւր են...

— Մենք ունի՞նք որ: Հա՛ հա՛ հա: Մեր տէրտէրները ու վարդապետները չեն դրած այդ տեսակ աղուոր բաներ ..

— Իրա՞ւ կ'ըսես... Աւ՞ս է ձեր հայութիւնը: Տղէ, կը քնանաս դուն: Մենք արդէն հիանալի շարականներ ու տաղեր ունինք, մասնատրաէս Ծնունդի համար, որ օտարներն իսկ հիացած են անոնց վրայ:

— Ինչ կ'ըսես ընկեր, չիտա՞կ է: Հապա ես չեմ լսած ?? Մեր դասախօսներն ալ բան ըսած չեն այդ մասին:

— Փորձի համար եկեղեցի գնա այս տարի Հայոց Ծնունդին եւ մտիկ ըրէ« Խորհուրդ մեծ», «Այսօր ձայն հայրական», «Ո՛վ զարմանալի», դետ մի զարհուրեր» երգերը, որոնք լուսահոգի Կոմիտաս վարդապետի դաշնաւորածներն են: Զանոնք լսելով՝ Տաճիկն իսկ կը հայանայ:

— Տարի մը, Զատկին եկեղեցի գացի եւ պատարագին ներկայ եղայ: Ան չէ՞ ըսածդ:

— Պատարագը ամէն կիրակի կայ: Կարեւորը պատարագին առաջնութիւնն են: Հետաքրքրուէ օր մը:

— Պարապ բան է: Կանուխէն ժամ երթալ: Ես կրօնքի չեմ հաւատար:

— Հաւատքի խնդիր չկայ հոս: Հայ բանահիւսութիւնն ու երաժշտութիւնն է որ պիտի լքենս: Մինչեւ որ դուք նորերդ կր խմէք այդ հոգեմայլ տաղերէն, այդ Հայաստանի հոտ քուրդ երգերէն, միայն չոր դասախօսութիւններով չէք հայանար: Դուք թուղթէ ծաղիկներու պէս տոհմային հոտէ զուրկ կը մնաք ...

— Ախ նեղոզութիւն, ուշացայ, սիրուհիս ժամադրուած էի..

Կ. ՊԵՏՈՒՇ

ՄՏԻԻ ԶԲՕՍՍԱՆՔ

ՈՐՔԱՆ ԲԱՆ ԳԻՏԷՔ

(Պատասխանները Դ. էջին վրայ)

1.— Սրբագրեցէք հետեւեալ բառերը.— չըփում, չեղր, կնդրուկ, բռնազբօսիկ, ծծումբ, կնճռի, ցուփակեաց, ջղջիկ:

2.— Ո՞ր գետերուն վրայ չինուած են հետեւեալ քաղաքները — Երեւան Սթրասպուրկ, Ուոշինկթըն, Հռոմ, Վարշաւիա:

3.— Ո՞վ էր Անգլիոյ ներկայ վեհապետին մեծ հայրը:

4.— Թուրքիա Ապահովութեան Խորհուրդին անդա՞մ է:

5.— Ի՞նչ տարածութիւն ունին աշխարհի հինգ ցամաքամասերը:

6.— Որո՞նք են աշխարհի եօթը հրաչալիքները:

7.— Թուրքիա ո՞ր թուականին քարեկամական դաշնագիր ստորագրեց Անգլիոյ Ամբասնասյիհետ:

8.— Ո՞րն է աշխարհի ամէնէն փոքր պետութիւնը:

9.— Ձատիկը ամէնէն կանուխը եւ ամէնէն ուշը ե՞րբ կրնայ գալ:

10.—Եւրոպացիները մինչեւ Ե՞րբ Ծնունդը մեղի հետ կը տօնէին:

11.— Ո՞վ գրած է — Ինկած Բերդի Իշխանուհին, Վանքը, Հոգեվարքի եւ Ցոյսի Ջահերը, Միամիտի մը ապրումները:

12.— Ի՞նչ կը նշանակեն — ժլիժ, կրմուղ, յերլուզակ, քոստել, լուրթ:

13.— «Ձայն բարբառոյ յանապատի — ո՞վ ըսած է այս խօսքը:

14.— Ի՞նչ դէպք պատահեցաւ Ֆրանսայի պատմութեան մէջ 1848ին:

ՅԱՌԱՋԻ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐԸ

Փաւի Փեթեր Փաւել Պապնիչի orphiwatur աւուսնութիւնը

Օրինաւո՞ր: Անշուշտ: Որովհետեւ ապօրինի ամուսնութիւններ ալ ունեցած է: Այնտեղ, Սլովաքիոյվոյոտա խճուղիներուն վրայ, ուր գնչուներու կառքերը կը թափառին, աղմուկի եւ ցեխի մէջ կորած: Այն առեն տեւաչուի եւ հրապուրիչ գընչուհիներ անցորդին դիմաց կը տնկուին աղորմութիւն խնդրելու: Ցաղ կը նային: Իրեն քալ կ'տղորմին ճամբէն չլլելով, հետը մինչեւ անտառ իսկ կ'երթան: Եւ Սլովաք վայտահատները որոնք կացիններով, օրն ի բուն, անտառը կը դղրդացնեն, լրիւկուները, երբ դղրեռները բառաչեն եւ ձորերը անոնց սիրոյ աղաղակին դէմ առնեն, ու երբ գով ջրիկներն ալ ծափ ու ծնծղայ զարնելով ժայռերէն վար թաւալին, անոնք, անտառի խարոյկին շուրջը կ'երգեն ու կը գուարճանան, գնչուհիները՝ վրանց սեամազերու քունեքէն բռնելով, կուրծքերնուն սեղմած: Այսպէս է այդ երկիրը, այդ լեռներու երկիրը, ապրիւ եւ հիւրասէր գեղջուկներու աշխարհը:

Այն գեղին մէջ, լեռներու գիրկը, չորս ձորերու բերանը, ուր հեղեղատներ իրար խօչելով կը թաւալին, անտառներն են անկուեր: Անտառները, իրենց մազերը քամակէն կախ հուբիներու պէս: Անտառները, որոնք մայիսին ծաղկած, խունկ ու կնդրուկ կը բուրվառեն: Որոնց զով թաւիշին վրայ երգեներ ու խոճկորներ կ'արածեն: Ուր կը հասունանան արքայամորը, մասուրն ու սեւ պտուղը: Ու կը բուսնին թուխ ու կարծր սունկեր որ մեր երկիրը չունի: Եւ ուր առուն, երբ արեւը խոշոր հովանոցը բացած, սարերէն վար բարակ աղամանդ ու ոսկեփոշի ձարմագէ, կովերը, առնուշ բառաչելէն, կը մկկտեղին ու կը մեկնին արօտ: Եւ անոնց բոժոժները կ'արձագանգեն սարերը ի վեր, կը հեռանան, կը խեղդուին:

Փեթերի տունը գեղին գլուխն է, լերան հեղեղատին վրայ, վայրէ ցած հիւղակ մը: Խովը քանջարանոցը: Ու չնիկին տնակը: Ու հաւնոցը, խոշնոցը, ախոռը: Եւ անոր բնակիչներն են Փեթերն ու մայրը՝ Եոհաննա: Անոր մեծ հայրը մինաց Ովկէանին միւս կողմը, բզքտուելով մեքենաներէն: Ու մամը, անկէ վերջ, սեւ հագաւ ու այլեւս չկրցաւ խնդալ, մինչեւ որ մահը, թեւէն բռնելով, տարաւ: Շատ հեռու գացին միասին, հունա, քանի մը քայլ անդին, գեղին մտիկ, անտառներու եւ մարգերու դոգը: Հիմակ խելօք ու հանգիստ պառկած է ան եւ ոչ սեւ կը կրէ, ոչ ալ կը դղրդայ: Եւ իրենց հողվարիքը հովուերդութիւն է ջուրերու ափին:

Անոր հայրը ինկաւ Աւստրիոյ փառքին համար, երբ Փեթեր երկու տարեկան էր: Անկէ կը մնայ պատկեր մը, դունաւոր, չքեղ, «յիշատակ գինուորութենէն» մակագրուած: Հոն հայրը կանգնած է կապոյտ համազգեստով, Քայլը Ֆրանց Եոզէֆի գլուխին տակ, չուրջն ու ոտքերուն ներ-

Ընտրություն մեր ամենամեծ պարծանքն է։ Ընտրել կարող ենք միայն այն ժողովրդին, որ ունի ընտրելու կարողություն։ Ընտրել կարող ենք միայն այն ժողովրդին, որ ունի ընտրելու կարողություն։ Ընտրել կարող ենք միայն այն ժողովրդին, որ ունի ընտրելու կարողություն։

ՅԱՌԱՋԸ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տող. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Mardi 6 Janvier 1948 Երեքշաբթի 6 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5232-Նոր շրջան թիւ 841 — Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ — ԳԻՆ՝ 5 Ֆր.

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ՅԱՆՈՒՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

Միացեալ Նահանգներու արտաքին փոխ-նախարարը կ'աղաչաբարէր անցեալ շաբթու որ եթէ Եուկոսլաւիա, Պուլկարիա եւ Ալպանիա պաշտօնապէս ճանչնան Հելլէն ապստամբ զինուորական-ներու «կառավարութիւնը», բռնաբարած պիտի ըլլան Միացեալ Ազգերու Ուխտը :

Ուղիղ խօսքով, այդ պետութիւնները առած պիտի ըլլան քայլ մը որուն հետեւանքները պիտի ըլլան անթաքցնելի, եթէ ոչ վտանգաւոր :

Հակառակ այս յայտարարութեան, Յունաստանի երկու զինուած ընդդիմադիրները զանազան ձեւերով կ'աղջնուեն Մարկոսի «ազատ ու ժողովրդավար կառավարութիւնը», եւելի եւս ամուրացնելու համար Ջամարտ մը որ ահռելիով մէջ կը պահէ ամբողջ Եւրոպան՝ աւելի քան երկու տարիէ ի վեր :

Ինչ խօսք որ Ռումանիոյ եւ Յունաստանի վերջին դէպքերը խաղաղութիւնը ամրապնդելու լոյսի չունին :

Տարին ընթացած Յունաստանի ալպանիական սահմաններուն վրայ — կամ սահմանէն դուրս — կը հաստատուէր «ազատ կառավարութիւն» մը, ապստամբ զինուորականի մը ձիւղերով, ամերիկեան եւ բրիտանական աշխարհակալութեանց ենթարկուած հայրենիքը ազատագրելու առաջադրութեամբ :

Ամէնէն տհաս ու հասարակ մահկանացուն ալ գիտէ որ քուռ մը ահարկիչներ չէին կրնար այս վտանգաւոր քայլը առնել առանց Պելկրատի կոմինֆորմին եւ խորհրդային կառավարութեան օրհնութեան :

Բանի մը օր վերջ ճամբու կը դրուէր Ռումանիոյ երիտասարդ դահակալը որ համակարգութեան եւ դաշնակ ոստիկանութեան ապառնալիքներուն տեղի տալով՝ վերջին պահուն կը ստորագրէր իր հրաժարականը :

Ռումանիոյ ընդդիմադիրը խմբակցութեանց «մաքրագործումը» կը կատարուէր երկու տարիէ ի վեր եւ համայնավարները աստիճանաբար իրենց ափին մէջ կ'առնէին երկրին իշխանութիւնը : Նոյեմբեր 6ին արտաքին նախարարութիւնը կը նշանակուէր վեթերան համայնավարուհի մը :

Այս ալոյթին ալ, բնականաբար, չէր կրնար պատահիլ, եթէ Մոսկուայի իշխանաւորները հաւանութիւն յայտնած չըլլային :

Լոնտոնի թերթերը կը բացատրեն թէ Սթալինի քաղաքականութիւնը կարեւոր յաջողութիւն մը ձեռք բերած է մասնաւորաբար Ռումանիոյ մէջ ոտովհետեւ այս վերջինը հիմա ալ դէն ի վեր ծածուկ է «կաս - կարմիր» հանրապետութեան մը :

Մոսկուա, միայն ինք ծանօթ է իր հետապնդած քաղաքականութեան բուն նպատակները :

Բայց, արեւմտեան պետութիւնները տարակոյս չունին այլեւս որ ան ծրագիրներ կը մշակէ ամբողջ Պալքանները համադաշնակցային կապերով միացնելու՝ միշտ, յանուն ինքնապաշտպանութեան :

Եուկոսլաւիոյ, Պուլկարիոյ, Հունգարիոյ եւ Ռումանիոյ մէջեւ կնքուած բարեկամութեան դաշնագիրները ուրիշ նպատակ չունէին :

Այս անփառունակ կացութեան մէջ մեզի համար ամէնէն ուշագրաւ երեւոյթը այն է որ խորհրդային Միութիւնը մէկ կողմէն աշխարհակալական ձգտումներով կ'ամբաստանէ արեւմտեան ազատ եւ ժողովրդավար պետութիւնները, մինչ մէկ կողմէ կը վտանգէ իր թեւը երկարել մինչեւ Միջերկրական :

Ուշագրաւ է մանաւանդ այն երեւոյթը որ յանուն ինքնապաշտպանութեան մղուած այս ամէն պայքարին մէջ երբեք նկատի չեն առնուիր հայ ժողովուրդին իրական պահանջները եւ ահա, երեք տարի ի վեր, ոչ մէկ լուրջ ձեռնարկ կատարուած է սրբագրել տալու համար մեզի դէմ գործուած անիրաւութիւնը մը :

Իրաւունք ունէ՞նք հարցնելու Մոսկուայի մեծամեծներուն թէ ինչու համար իրենց նախկին Դաշնակիցներուն ձեռքը կը մնան տակաւին մեր հողերը :

Վերջին պահուն մոռացութեան դատապարտուելու համա՞ր էր որ երեք հարիւր հազար քառակուսի կիլոմեթր մեծ տարածութիւն մը յանձնուեցաւ Պուլկարիոյ, Եուկոսլաւիոյ եւ Ռումանիոյ :

Ինչո՞ւ համար Ռումանիոյ կը պարտադրուի Պուլկարիոյ հետ հաշտութիւն կնքել, երբ Պուլկարիա պատերազմական վիճակի մէջ կը մնայ Յունաստանի հետ :

Ինչո՞ւ համար Պուլկարիոյ կը պարտադրուի Եուկոսլաւիոյ հետ հաշտութիւն կնքել, երբ Եուկոսլաւիա պատերազմական վիճակի մէջ կը մնայ Յունաստանի հետ :

Ինչո՞ւ համար Ռումանիոյ կը պարտադրուի Պուլկարիոյ հետ հաշտութիւն կնքել, երբ Պուլկար

Ծուխի պատառիկներ

Կարդացեք փոքր ծանուցումները

«ՑԱՄԱՉ»ի ԱՍՏՂԱՀԱՆԴԵՍԸ

ՀՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Ես ալ ինձ համար մտածած էի ամեն տեսակ գործերու մասին, որոնք ինձ կրնային հարստացնել, բայց ոչ մեկուն մտքով անցուցած էի, որ ես ալ կրնամ ամուսնանալ։ Ինչպե՞ս կրնայի ես ամուսնանալ, երբ ես ոչ մեկ ունեի, ոչ ալ կրնայի ունենալ։ Ես ինձ համար ապրող մարդ մըն էի, որ ոչ ոքի պետք չունէր։ Ես ինքզինքս կը կերակրէի, ինչպէս որ կրնայի, ու ինչ որ կը վաստկէի, ինծի կը բաւէր։ Ես ինքզինքս կը հագցնէի, ինչպէս որ կրնայի, ու ինչ որ կը հագնէի, ինծի կը բաւէր։ Ես ինքզինքս կը տանէի ամէն տեղ, ուր որ կրնայի երթալ, ու ինչ որ կը տեսնէի, ինծի կը բաւէր։ Ես ինքզինքս կը զուարճացնէի, ինչպէս որ կրնայի, ու ինչ որ կը զուարճանայի, ինծի կը բաւէր։ Ես ինքզինքս կը զուարճացնէի ամէն տեսակ ժամանակ, ամէն տեսակ տեղ, ամէն տեսակ ձեւով, ինչ որ ինծի կը բաւէր։ Ես ինքզինքս կը զուարճացնէի ամէն տեսակ մարդոց հետ, ինչ որ ինծի կը բաւէր։ Ես ինքզինքս կը զուարճացնէի ամէն տեսակ գործերով, ինչ որ ինծի կը բաւէր։ Ես ինքզինքս կը զուարճացնէի ամէն տեսակ ձեւ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286
Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN
17, Rue Damesme — PARIS (13e)
Տար. 1200, 6ամս. 650, Նյութ. 15 լում. Լսում 3 ամսվ.
Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63
Mercredi 7 Janvier 1948 Չորեքշաբթի 7 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5233-Նոր շրջան թիւ 842 Երկուքեան Շ. ՊՈՍԱՔՃԵԱՆ գին՝ 5 ֆր.

ԱՄԵՆ ՕՐ ԻՐ

Կառավարութիւն մը պատրաստ

Ճիլասսիեան խորհրդարանը երէկ ստանձնեց իր աշխատանքները։ Ընտրական ժամանակաշրջանը ներկայացուցիչները ընտրելու համար տեւեց մօտ երկու ամիս։ Ընտրութիւնները տեղի ունեցան Ֆրանսայի մէջ գործող ընդհանուր կանոնադրութեան համաձայն։ Ընտրողները ունեցան ընտրելու իրենց ներկայացուցիչները։ Ընտրողներու թիւը կազմեց 25 միլիոն։

Ընտրութիւնները տեղի ունեցան ընդհանուր հանդարտութեան մէջ։ Ընտրողներու 75 առ հարիւրը մասնակցեցաւ ընտրութեան։ Ընտրողներու մեծ մասը ձայն տուաւ ընտրական ցուցակներու վրայ գրանցուած կուսակցութիւններու թեկնածուներուն։ Ընտրութեան արդիւնքները ցոյց տուին, որ ոչ մէկ կուսակցութիւն կրցաւ ձեռք բերել բացարձակ մեծամասնութիւն։ Ընտրողները ձայն տուին տարբեր կուսակցութիւններու թեկնածուներուն։ Ընտրութեան արդիւնքները ցոյց տուին, որ ոչ մէկ կուսակցութիւն կրցաւ ձեռք բերել բացարձակ մեծամասնութիւն։ Ընտրողները ձայն տուին տարբեր կուսակցութիւններու թեկնածուներուն։

Ընտրութիւններէն ետք, Ճիլասսիեան խորհրդարանը ունի հետեւեալ կազմը։ Ազգային Միաբանական Կուսակցութիւն՝ 120 պատգամաւոր։ Ազգային Ժողովրդական Կուսակցութիւն՝ 80 պատգամաւոր։ Ազգային Ազատագրական Կուսակցութիւն՝ 60 պատգամաւոր։ Ազգային Ժողովրդավարական Կուսակցութիւն՝ 50 պատգամաւոր։ Ազգային Ժողովրդական Կուսակցութիւն՝ 40 պատգամաւոր։ Ազգային Ժողովրդական Կուսակցութիւն՝ 30 պատգամաւոր։ Ազգային Ժողովրդական Կուսակցութիւն՝ 20 պատգամաւոր։ Ազգային Ժողովրդական Կուսակցութիւն՝ 10 պատգամաւոր։ Ազգային Ժողովրդական Կուսակցութիւն՝ 5 պատգամաւոր։ Ազգային Ժողովրդական Կուսակցութիւն՝ 3 պատգամաւոր։ Ազգային Ժողովրդական Կուսակցութիւն՝ 2 պատգամաւոր։ Ազգային Ժողովրդական Կուսակցութիւն՝ 1 պատգամաւոր

ԳՈՒՐԳԷՆ ԱԼԷՄՇԱՀ

Կարդացա՞ծ էք Սոխակին հէքեաթը, զոր կը պատմէ Քոլէթ (Les vrilles de la vigne)։

Առաջ, սոխակները չէին երգեր դիշերուան մէջ։ Ու, գիշեր մը, սոխակ մը թառեցաւ, կտուցը փակեց, քնացաւ տրթմտութեան մը բարձունակին վրայ։ Ամպերը ցնդեցան ու պլլուեցան իր ոտքերուն։ Սարսափով ալթնցաւ սոխակը, թափահարեց, ճանկերը պրկեց, ինքն իր վրայ զալարուեցաւ եւ ի վերջոյ յաջողեցաւ ոտքերը խլել մահուան մագիլներուն մէջէն։ Եւ երգում ընել։— Այնքան ատեն որ կ'աճին տրթմտութեան խիղերը, պիտի չդանայ երբեք ու պիտի երգէ դիշերուան մէջ։

Եւ սակայն, երբեմն, մահուան մագիլները դաւադրաբար կը փաթթուին սոխակի մը ոտքերուն։

Սոխակ մըն ալ, երբ եւ երաժշտութեան վարպետ՝ Գուրգէն Ալէմշահ, որ բռնութեամբ մահուան մագիլներուն մէջ, այնքան անպատահելի, այնքան անհաւատալի ճակատագիրով մը։

★

Մեկնումէն օր մը առաջ՝ միասին էինք։

Ես կը պատրաստուէի մեկնիլ Վենետիկ, ինք՝ Ամերիկա։ Ուրախ էինք երկուքս ալ։ Իրմէ խնդրած էի, որ դիւրացնէ մեր վիզան՝ չնորհիւ խտալական հիւպատոսարանին մէջ ստեղծած իր բարեկամութիւններուն։

Շաբաթ օր մըն էր, ճառագայթարձակ առաւօտ մը։ Արեւը տակէնդուրի պէս կը թափէր տանիքներուն ի վար, փողոցներուն ի վար, կ'օծէր ու կը փայլեցնէր պատուհանները։

Ալէմշահ կ'աշխատէր իր սթուտիոյին մէջ։— Հաւատա՛, երկուշաբթի կը մեկնիմ եւ բան մը պատրաստ չէ տակաւին։ Եւ ինծի կը նեղկայացնէ իր աշխատանքները, ցոյց կուտայ ձայնագրականները։ Հիացումով կը հետեւիմ իրեն։

Ճետոյ վերի յարկը բարձրացանք։ Զիս կը ներկայացնէ իր մօրը։

— Թէեւ Աբմաչկի եմ, բայց մօրս կողմէ՝ Պարտիզակցի։ Շատ նեցմէ եմ, կ'ըսեմ։

— Մեղմէ է, մեղմէ՛, կ'ըսէ Ալէմշահ։

Կը կրկնեմ Հ. Արսէն Ղազիկեանի խօսքը.

— Նոյն պայիրին մալը։ (Ակնարկ՝ Ալէմշահի)։

Կը պատմեմ թէ ինչպէս կը պարծենար Հ. Արսէն Ղազիկեան, մկկիկ մկկիկ հաշուելով Բիւթանիոյ բերքը, ու կը վերջացնէր.— Կը սխալա՛ւեմնք։

Թէյ կ'առնենք։ Ճետոյ կ'իջնենք վարի յարկը, սթուտիօն։ Ամպապատելու համար՝ կը յիշեցնեմ թէ Զօպանեան եւ Տէր-Ճակոբեան պէտք է արդէն հասած ըլլան հիւպատոսարան, ուր պիտի սպասէին մեզի։ Կը պատասխանէ թէ ժամադրուած մը ունի երաժիշտ Նշան Սեդրակեանի հետ, թէ չուտով կ'ուարտէ ամէն ինչ ու կը մեկնինք։ Արդարեւ կը հառնի Սեդրակեան։ Ալէմշահ կը բանայ ձայնագրական մեքենան։ Փարիզի Հայոց եկեղեցիի երաժշտապետը կ'երգէ «Ճանապարհ»ը։ Հոգիս կը թռչի Սբմաչ,— կ'ապրիմ պատանեկութիւս։ Երգել «Ապի», «Լոյս ղուարթ», «Ճանապարհ», կը նշանակէր հերոսանալ գիւղին մէջ։ Հօրեղբայրս երաժշտապետն էր դպրեվանքին,— Բազմաթիւ նուագարաններ մեր տանը մէջ, ամէն օր երգի դասպլորոյին մէջ ու շարականներգեղեցիկ մէջ, բայց ես՝ թէեւ բաղձալի չէի՝ կը նախընտրէի ճարտարապետ ըլլալ, «օդին մէջ քալող» մարդը տան իքներու վրայէն։

Սեդրակեան աւարտած է իր երգը։

Ալէմշահ տառդում կը կատարէ եւ ահա... նոյն «Ճանապարհ»ը։ Սեդրակեան մտիկ կ'ընէ քիքին։ Իր դէմքէն հաւատարմութիւն ձայներանային, հիանալի է։ Կը խորհիմ ճարտարապետներուն նուաճումներուն մասին,— վարպետած է Ադամեանի ցաւը, այժմ ձայնն ալ անմահ է, ինչպէս քերթողին ու նկարիչին ստեղծագործութիւնը։

Երբ կը մեկնի Սեդրակեան, Ալէմշահ ինծի կը թելադրէ ճառ մը խօսիլ, մինչ ես կը խօսիմ ծրագրի մը մասին,— զալ ամառ Սուրիա եւ Լիբանան երթալ միասին։ Եւ ահա Ալէմշահ երգասլաք մը կը դնէ ձայնագրական մեքենային, ու կը լսեմ... խօսիլս, դէպի Սուրիա եւ Լիբանան ճամբորդութեան ծրագրին մասին։

Առաջին անգամ է որ կը լսեմ ձայնս օդին մէջ, մխրճուն մէջ։ Տարօրինակ տպաւորութիւն մը կ'ընէ վրաս, հրաշքի մը տպաւորութիւնը։ Նախ կը քննեմ ձայնս, — աւելի հաւատարիմ չէ որքան Սեդրակեանի ձայնը, բայց եւ այնպէս կը ճանչցուի։ Ամէնէն աւելի տպաւորութիւն գործեց վրաս ձայնիս երիտասարդութիւնը, իմ տարիքիս աւելի երիտասարդ է ձայնս՝ երգասլաքին վրայ։ Միշտ ուզած եմ մտիկ ընել ձայնս հեռախօսին մէջ բայց չեմ կրցած, ահա կը լսեմ երգասլաքով։ Այնքան կ'ուրախանամ այս անակնկալին, որ Ալէմշահ կը թելադրէ երկար ճառ մը խօսիլ։

— Ո՛չ, կ'ըսեմ, վարպետ սուլող մըն եմ, ոչ հոմուսական ձեւով, այլ ակումպանտա մէջէն, չրթնոց կիսախուփ։ Երբ սուլեմ, ոչ ոք կրնայ հասկնալ թէ ո՛վ է սուլողը։

Ալէմշահ կը լարէ մեքենան, ու կը սուլեմ «Հայրիկ, հայրիկ»ը։

Քիչ ետքը կը դարձնէ երգասլաքը ու մտիկ կ'ընեմ սուլելս։ Մանուկի պէս ուրախ, կը խընդամ։

Օրիորդ մը, որ քիչ առաջ թէյի սպասարկուհին էր ըրած մեզի, վար կ'իջնէ ու կը հարցնէ.

— Ո՞վ էր երգողը։ Ի՞նչով, սրինգո՞վ։

Ալէմշահին հետ մանուկ դարձած ենք այդ պահուն։ Կ'ըսէ.— Եկուր, երգասլաքը դնենք հեռախօսի մօտ եւ բանանք «Ճառաչ»ին հնոտախօսը։

Ահագին աշխատանք։ Ի վերջոյ կը յաջողինք։ Տիկին Տիրուհի մտիկ կ'ընէ, ինք ալ կը ձայնակցի երգին, յետոյ կը հարցնէ.— Երգասլաք է, բայց ի՞նչ երգասլաք է այս։

Երգասլաքը կ'ուարտի «կարգացէք եւ տարածեցէք Ցառաչը» յայտարարութեամբ։

Կը խնդանք, կը խնդանք մանուկի պէս։

Երբ քիչ ետքը, ինքնաշարժ կը նստինք ու հիւպատոսարան կը սուրանք, ես ծրագիրներ կ'ոտմամ,— ձայնագրական այս մեքենան օգտագործել՝ դասախօսութիւններ կազմակերպելու համար Սիփուրի մէջ, մեր մտաւորականներուն նեղկայութիւնը բազմապատկելու համար ամենուրեք, — դաղթային դպրոց մը ահաւասիկ, համառօտ ինչպէս ձայնասփիւռը։

— Ամերիկայէն վերադարձիս՝ միասին աշխատելու համար ծրագիր մը պատրաստէ՛...։

●

Ուշ ժամուն բացայայտ Ալէմշահի հետ։ Սկիզբները նուազ հաղորդական էր։ Բայց մեր բարեկամութիւնը հաստատելէ ետքը, այնքան մտերիմ դարձած էինք այլեւս, որ գիտցած էինք։ Իր առաքինութիւնն էր ակամայս քաշել՝ բարեւ ըսելու տեղ,— գիս կրակ կը կոչէր։ Իսկ ես բռունցք մը կ'իջեցնէի կռնակին՝ իմ բարեւս ալ այս էր։

Մեր բարեւները մասնաւոր նշանակութիւն մ'ունէին անշուշտ։ Ակամայս կը քաշէր,— «քիչ մը խելօք կեցիր» ըսելու ձեւով։ Բռունցքս կ'իջեցնէի կռնակին,— «ի՞նչ յաղթանդամ ես» ըսելու մտքով։ Արդարեւ մարմնով, ծանրօրէն լեցուն, քաջալանջ կազմ մը ունէր Ալէմշահ, թէեւ դուռատ։ Միայն թուքի մասին խօսած է ինծի։ Ու կը դամմանամ, հաւատա՛լս չի դար, որ մահը մեկ հարուածով կը տանի զինք։ Իր ներկայութիւնը լաւատեսութիւն կը պատճառէր, ինչպէս ուրիշներ՝ յոռետեսութիւն ինծի։

Մեր ուրուդին հարստութեան ամէնէն բերդուն ժառանգաւորներէն մին՝ Ալէմշահ, որուն մէջ, նոյնիսկ արդէն իր շաւիղը գըտած եւ ընտրած, կրնար մեղ անկամկաշներու առջեւ դնել եթէ մահը չդաւաճանէր։ Ակամայ մեր ժողովրդական երգին տուած, կ'աշխատէր ամուր մէջ գտնել Կոմիտասեան զարկերակը։ Երբեմն քիչ մը աւելի մօտեցած Կովկասեան երանգին, որուն բաղադրութիւնը թէ չատ քիչ տարրեր կը պարունակէ հայկական՝ դժուար չէ հաստատել հակառակ Սայաթ Նովայի երգերուն ոչ-վաւերական եղանակաւորումին ստեղծած nostalgique ճաշակին, երբեմն քիչ մը աւելի մօտեցած Միջերկրականեան երանգին, (փոքր—ասիական ալ կոչուած՝ ըստ ոմանց), որուն բաղադրութիւնը եթէ ոչ իր colorisով, բայց անպայման իր verbeով՝ կը մատնէ ծագմանական (originel) տարրեր եւ ցեղային ինքնատութեան հէնքին գաղտնիքը։

Ալէմշահ, այս եղիւ երանկերուն՝ առջեւ, ուղեձղուածքեան տպնաղ մը լուծելու հոգեբնախօսական շղջան մը կ'ապրէր, եւ ինծի կը թուի թէ, կենսա – հոգեբանական (bio — psychologique) ու պատմա – աշխարհագրական միջավայրին մը– ղումով, կը հակէր արդէն դէպի Միջերկրականեան երանգը,— ապացոյց իր երգերուն ժամանակագրական կարգը։ Իսահակեանի քերթուածներուն հազցուցած իր երաժշտական չափիկէն մինչեւ Նազերը, գումարտուածքիւնը չատ է ի վնաս կովկասեան երանգին։ (Ճիշդի Նազերը, ու կ'ուզեմ արձանագրել փաստ մը,— դերասան մը չի կրնար խաղալ ամէն դեր, ինչպէս երգիչ մը չի կրնար երգել ամէն երգ, ամէն երգ կամ դեր ունի իր արուեստագէտը, հարցուցէք արդի metteur en scèneներուն։ *Նազերը կ ըսէրեմ լսել Ասաքլեանի հաղագին)։*

Ալէմշահ հասկնալի բծախնդրութիւն մը ցոյց կուտար նաեւ տաղաչափական ներդաշնակութեան։ Վերջերս, ինձմէ կը խնդրէր գրել ոտանաւոր մը, որուն եղանակը պիտի յօրինէր ինքը։ Տուի ուզածը, որ կը սկսէր սա տողով.

Ծաղկավաճառ ծաղիկ մը տուր...

Դժգոհութեան աղաղակ մը արձակեց,— երկու դար եւ երկու ձա մէկ տողի մէջ, երկու տառին ալ արտասանութեան անյարմար։

Տառերու alchimieն *չատ կը հետաքրքրէ զիս։ Ոչ միայն չափածոյ բանաստեղծութեան, այլեւ նոյնիսկ արձակին մէջ երկար կ'աշխատիմ, կը բանիմ, կը յոդնիմ, կը զատիմ, մինչեւ որ զըտնեմ տառերու* affinité։ *Ճաճախ ջնջելու համար մեր այրին տիրակալութեան միօրինակութիւնը (հայերէն լեզուի մէջ՝ ամէնէն չատ գործածուած տառն է այբը, որ կը բառարտէ մեր բառերուն դրեթէ մեծագոյն մասերը) փորձեր եմ ձայնա-*

Փաո փեթեր Փավել Պապինիչի օրինաւոր ամուսնութիւնը

Փեթեր ամէնէն նոր լաթերը հագեր է, մեծաքաջ չալ վիզին, սպիտակ ձեռնոցներով։ Աչքերը տեսակ մը գաղտ գինովութեան մէջ կը տածեն։ Աչքերը, այսօր աստղեր, հեռաւոր երկինքներու մէջ մոլորուն։ Իսկ իրենէն ծագկած նշեխի է իր քօղին մէջ, ըլկերուհիներու բաղձանքին ու հիացումին ենթակայ։ Եւ իրենց տան դաւիթին պատուած ցախաքլորն ալ, հազուագիւտ թռչուն, որուն եզդը միայն վարժ որսորդներ լսելու կ'արժանանան, կ'ուզէ այսօր կտուցը բանալ եւ հատաւանեական մեղեդի մը կրկռալ։

Օրեր չարունակ դրացուհի եւ ազգականուհի կը չաղուեն ալիւրը եւ կ'եփեն։ Անուշեղէններ եւ համով հացիկներ։ Ու ֆարմ խոզերին, որոր դաչունահարուած, կը վերածուի հունդարական կոծու պղպեղներով համեմուած դանազան խահերու։ Որովհետեւ Պապինիչենց տունը, հնաւանդ տունը, հարսնիք կ'ընէ։ Այդ պէտք է լսուի մինչեւ հեռու երդերը ու հիւրեր տեղան։ Եւ սա հայ կռուանկան չըվէժներ ստեղծել։ Վէռլէնէն մինչեւ Տէրեան եւ Ազատ Վշտունի, (այս երկուքն ալ Ֆրանսացիին նմանութիւ), ձայնակրկնութեան ռռնիռռնի պարզունակ օրէնքէն աւելի բան չեն գիտեր իբրեւ երաժշտական խաղ կամ ներդաշնակութեան փորձ,— մեր օրերու քերթողները աւելի հարուստ են ատանկ չնորհքներու մէջ։ Մասնաւորաբար բաղաձայն տառերու մասին խօսելու համար, չատ յատկանշական է դատ տառին պատմութիւնը։ Լիւտնը (= լի — յուն = յուխտական լի) փչիկով մը ի վերջոյ դատ է դարձեր մեր լեզուին մէջ, ապահովաբար ներկայացնելու համար այն ձայնը որ տիրապետեր է մեր քրիստոնէական դպրոցներու եւ եկեղեցական երաժշտութեան մէջ,— համբերեցէք մեղայները, ողորմեաները՝ երբ եկեղեցի երթաք։ Ինչո՞ւ Ց տառին սկզբնական հնչումը փոխեր ենք, բայց պահեր՝ Ղ տառին հին հնչումը։ Չեմ հարցներ թէ ինչո՞ւ, Ֆրանսերէնի մէջ, R տառը հայերէն Ղ տառին նման հնչելու սովորութիւնը հետզհետէ կը տարածուի հիւսիսէն հարաւ։ Առանց պատասխանելու այս հարցումները, — որովհետեւ չատ պիտի երկարէր այս յօդուածը,—կ'ուզեմ ըսել թէ դատ տառին հնչումը հակառակ է մեր լեզուին մէջ։

Այժմ դանք ծանօթ տողին.

Ծաղկավաճառ, ծաղիկ մը տուր ...

Եթէ ուզէի խուսափիլ դատ տառին հնչումէն, կրնայի ըսել.

Ա՛յ պարտիզպան, վարդ մը տուր ինձ...

Նիւթը աւելի լաւ կը բացատրէ միտքս։

Մարդու խլեակ մը, դուրս նետուած՝ իր հայրենիքէն, զրկուած՝ քնակարանէ, հրաժարած՝ բոլոր նիւթական զգայութիւններէն (անօթութիւն, ծարաւ, եւայլն), պզտիկ քննադատները պիտի ըսէին՝ դինովնալու համար իր անցեալով զոր միայն դուրդուրանքը կրնար յիշեցնել իրեն, փիլիսոփաները պիտի ըսէին՝ ապրելու համար ժամանակէն դուրս զոր արհամարհել տրվեցուցած է իրեն ատոյիկեան վհատութիւնը, ծաղիկ մը կը խնդրէ հոտոտելու համար, իրրեւ սպեղանի իր ցաւերուն,— ամէն տունի սկիզբը կը կրկնուի այդ խնդրանքը, իւրաքանչիւր տուն վերածելով հին յուշերու պրիսմակի մը, վերջին տունին մէջ ծաղիկը վռնտելով համբոյրի՝ պայթեցնելու համար յուզումը։

Մարդու խլեակը, զգայարանքները սառած դիշերուան ցուրտէն, խռպոտ եւ ամէնէն թաւ ձայնով (հոս դատ տառին դերը), իր անկարելի խնդրանքը եւս արտասանելու ժամանակ ձայնը բաշ ձրացնելէ վախնալով, ուրիմն առանց դոյզն ձայնախաղի (հոս այբ տառին չատութիւնը), կ'ըսէ.

Ծաղկավաճառ, ծաղիկ մը տուր...

Ալէմշահ խնդրեց աւելի տատոտում եւ դաշնաձայն (euphonique) տատնատուր մը։ Իր այս հետաքրքրութիւնը, քերթուածին մէջ եւս ներդաշնակութիւն որոնելու այս պիտութիւնը աւելի եւս մեծցուց հաւատքս զոր ունէի երաժիշտի իր տաղանդին մասին։ Տեղն է ըսել թէ մեր ամէնէն մեծ կարծուած բանաստեղծներն անգամ կը մեղանչեն տաղաչափութեան մէջ euphonie կոչուած գիտութեան կանոններուն դէմ։ Ամէնէն չատ կը տատապի Թէքէեան, բայց Վարուժանն ալ ազատ չէ այդ մեղքէն։

Երաժշտութեան եւ երաժիշտներուն հետ ծանօթութիւն մը կրնայ դարմանել մեր գրականութեան այդ թերութիւնը։

Ալէմշահ մեծ դեր կրնար խաղալ նաեւ այդ ուղղութեամբ (Կոմիտասին ազդեցութիւնը 1910 — 1914 շրջանի մեր բանաստեղծներուն վրայ, նիւթ մըն է հետաքրքրական եւ չատ կարեւոր)։

Երիտասարդ եւ տաղանդաւոր երաժիշտը, Գուրգէն Ալէմշահ, ուրիմն ծաղիկը չէր միայն պարտիզակի, այլեւ ծաղկառատ ածուն հայ երաժշտութեան,— իր վաղաժամ կորուստը ընդվզեցուցիչ կսկիծ մը պիտի մնայ մեզ հոգիներուն մէջ։

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

կըն ալ այնտեղ հրաւիրեալ հիւր է, այն հեռաւոր երկրին մէջ, այն բարձր լեռնակոտն գիրկը, այն փոքրիկ տնակին մէջ։

Տղ ապ, տղ ապ, տղ ապ, գնչուներու երաժշտութիւնը կը ծնի։ Գնչուներու, որոնք զուարթ եւ կեր են աշխարհ որ ուրիշները ուրախացնեն։ Որ գիշերները, բացօթեայ, աստղերուն տակ, խրոյկներու չուրջ, կը նուագեն ու կը քաղցրանան։ Որոնց երգը Պուտափէշտի անեւերայթ հոգին է, առանց որուն սրտեմ քաղաքը կը մեռնի։

Տանկ տանկ, տանկ տանկ, տանկ տանկ։ Կոչնակը, կուշտ այծ, կը մայէ աշտարակէն։ Ցանկարծ տնակներուն դուռերը կը բացուին ու հասնողը ժամ կը վաղէ։ Հեղեղատին դիմացէն Իռենէն կուգայ, հօրմ ու մօրը եւ ազգականներուն հետ, քօղերուն մէջ թաղուհի եղած։ Անդիէն փեթերը, իրրեւ թաղուողը։ Ու ժամուն մէջ, խորանին առջեւ, քահանան կը պահէ զանոնք։ Ան կը կարդայ, կ'օրհնէ ու կը հարցնէ. «Կամքո՞վդ կ'առնես, փեթեր, կ'ընդնո՞ւս մինչեւ մահ հաւատարմութիւն։ Կամքո՞վս կ'առնես, Իռենէ, կը խոստանա՞ս հնազանդութիւն»։ Այո, այո, այո, այո։ Ու մատնիները կ'անցնէ մատերնին։ Կը խօսի սպառնալից ճառ մըն ալ ամուսնական պարտականութիւններու մասին, վասն սիրոյ եւ սիրուելու, ամէն։ Ու թեւ թեւի, այր եւ կին տուն կը մեկնին՝ այս անգամ պաղնիչենց չեմէն ներս։ Ու հարսնեւոր ու հետաքրքիրներ կը թափին իրենց հետեւէն։ Ու բոլորը աստիճանի կարգով տեղան կը նստին։ Ամէնէն վերը Սամուէլ Խոլվաթ, որ բազմաթիւ մարդեր ունի եւ չորս կով կը կթէ։ Անտռեյ Քոռալիւն, խոշոր մեզուանոցի տէր, որ չարունակ անտառներն է, իր տրսի հաճոյքին համար։ Լայօշ Զախարսկի, որուն դնդերները պողպատ են, ու հանքերու փորն ըլլայ թէ անտառները, ամէնէն շատ կ'աշխատի եւ մեծ օրական կ'առնէ։ Եւ ուրիշներ, եւ ուրիշներ, ազգական ու բարեկամ։ Սեղանները կը յորդին։ Գինին կը ծիծաղի։ Հայ, մեղր, կարագ ու խահեր կը տեղան։ Անուշեղէնները բլուր են, որ պէտք է նուէր ղըրկուին գեղէ գեղ։ Կ'ըմպեն։ Կը մաղթեն։ Կը կայթեն։ Ու գնչուները հոգի կուտան հարսնիքին ու կը պանծացնեն զայն։

— Մուղիքա, կ'ուրտայ կաղ Հէրինկ, մուղիքա, եղածէն դժգոհ, ու գնչուներու երեսին դրամ կը նետէ, ինչպէս ոսկորը շունին, որոնք խնամարհուրհիւն ընելով ու ժպտուն զայն կը ժողուեն գետնէն։ Մուղիքա, կը հրամայէ, ու սուղ գլանիկ մը վառելով ծափ կը զարնէ ու կը դառնայ։ Ու միասին կը դառան բոլորը իրենց լեռնակոտը։

Քրիվանի (*) տակ,
Քրիվանի տակ,
Քրիվանի տակ,
Հրաշալի է աշխարհք։
Հոն կ'ապրին աղջկերք
Ծաղիկի պէս չիտակ,
Հէ՛յ Քրիվանի տակ։
Քրիվանի տակ
Կը վայլի արեգակ,
Հոն պէտք է ամէն մարդ
Ըլլայ ուրախ դուարթ,
Հէ՛յ Քրիվանի տակ։

Քրիվանի տակ, մէջտեղն այն ձորին,
Սեւ ադռաւներ ջուր կը խմեն,
Կը խմեն, կը խմեն, բայց սխուր են,
Որովհետեւ իրենց սէրն հեռու են։
Հէ՛յ Քրիվանի տակ։
Ու ոտքերը կը դռվեն։ Ձեռքերը կը չափեն ու կը մռնչեն.
Հէ՛յ Քրիվանի տակ։
— Աչքդ լոյս այս գիշեր, տանտիրուհի, մայր փեթերի։ Աչքերնիդ լոյս, խնամի։ Տարօրինակ ձեղի, աղջիկներ ու տղաք։ Ու նաեւ քեղի,— թէեւ ըլլալիք չունի —, տարաշխարհիկ հիւր, հեռաւոր ու անծանօթ երկրէ։

... երբ կը մեկնիմ անկէ, թողլով բարեկամըս, Թաթրայի հովիտին Վիչնա Պոցա գեղին բնակիչ, պարկեշտ չինական ու քաջ վայտահատ, Պաուիչենց ամուսնի տան ճեմը, Փան Փեթեր Փավել, թուխս նստած իր հօրենական անունին վրայ, գիս կը ծեծեն կարգ մը միտքեր, որ կը տիեն զանազան զգայութիւններ։ Ու մինչ լեռներուս պաղ հովը կռնակիս, ու ճակտիս ու այտերուս զարնելով մազերս կը քաշկռտէ, աչքերուս մէջ տարօրինակ լոյս մը կը նուազի։ Կը մտածեմ՝ մէջ տարօրինակ լոյս մը կը նուազի։ Կը մտածեմ՝ Ո՞վ ի՞նչ մնաց ազգէս, գեղէս ու գերդաստանէս։ Ո՞վ պիտի վառէ մեր ալ տան մեռած ակութը։ Արդեօ՞ք եւ ե՞րբ։ Կը խորհիմ, լպրծուն ուղիներէ նոբէն քաղաքներու վոշխները թաւալելով։ Ես կը նայիմ անդամ մըն ալ, գագաթներուն, այնքան հպարտ կանգնած, ինչպէս գեղկական ճեմերը իրենց ստորոտը։ Ու դէմքիս վրայ ու այտերուս ակօսներէն, կը զգամ հոգիիս աւիշին հոսելը։

Երէկ քեղի, փեթեր, որ նախիններուդ հոգին վրայ ու հայրերուդ տան մէջ ես։ Երէկ քեղի, բարեկամ։ Աչխարհի վրայ ու կեանքի մէջ ատկէ բարձր ու ատկէ դուրս ոչ մէկ երջանկութիւն եւ իրականութիւն գոյութիւն ունի։

ԵՐ. ՔՈՉԵԱՆ

(Վերջ)

(*) Թաթրայի չորս մեծ լեռներէն մէկը։

ԹՈՒՐՔԻԱ

ՖԻԼՕԶՈՖ ՐՂԶԱ ԹԻՎՖԻՔ ՄԻՒԱՑԵԼ ԲՈՐԲՈՒՂԱԼ ՓԱՇԱՑԻ ՄԱՍԻՆ

« Եէնի Սապահ »ի մէջ Ֆիլօզոֆ Րըզա Թեվֆիքք յօդուած մը գրի առած է «Ուսանողական Բիչատակներ» վերտառութեամբ, ուր մանրամասնօրէն արձագանգ եղած է այն դասախօսութեան զոր 60 տարի առաջ Միւքայէլ Փորթուգալ փաշա, Միւլքիյէ վարժարանին մէջ կատարած էր։ Յօդուածագիրը կ'ըսէ թէ Միքայէլ Փորթուգալ փաշա հմուտ, ազատամիտ եւ յանդուգն դասախօս մըն էր որովհետեւ Սուլթան Համիտի բռնապետութեան շրջանին իսկ չէր վարաներ իր անկեղծ մտածումները ազատօրէն յայտնելու ուսանողութեան։

Բըզա Թեվֆիք կը յայտնէ թէ Բորբուղալ փաշա հաշուակալութեան ուսուցիչ ըլլալով օր մը իրենց պարզեց Պետականացումի եւ անհատական ձեռնարկի տարբերութիւնները եւ ազդակացներով կ'ըսէ ։

Բաւ առ բաւ կը յիշեմ Բորբուղալ փաշայի տեսակէտը, որուն համաձայն անհատական ձեռնարկները աւելի անհրաժեշտ են երկրի մը համար։ Պետութիւնը պէտք չէ որ կաշկանդէ ձեռնարկեց անհատները, որովհետեւ այսպէսով միայն կարելի կ'ըլլայ ազգային հարստութիւնները ճոխացնել եւ հասոյթներու նոր աղբիւրներ երեւան հանելով զանոնք անհատներու կողմէ օգտադործուելու պարագային տուրքերու առաւելութիւն ձեռք բերել։ Բացառիկ պարագաներու մէջ միայն ներելի է պետութեան միջամտութիւնը անհատական ձեռնարկներու եւ այս առժամապէս։

Յօդուածագիրը երկու սիւնակով կը մանրամասնէ Բորբուղալ փաշայի այս մասին յայտնած դաղափարները եւ կ'եզրակացնէ ըսելով.—

Պետական ձեռնարկներու զարկ տուող երկիրներու կառավարութիւնները ստիպուած կ'ըլլան ճնշում բանեցնել անհատներուն վրայ եւ կասկածիլ անոնց գործունէութենէն, այս իսկ պատճառով քաղաքակիրթ երկիրներու մէջ անհատներու անձնական նամականիները պետական պաշտօնեաներու կողմէ բացուելով կը քննուին, ոչ միայն լրտեսներու այլ երբեմն պատուաւոր անհատներու եաեւէն իսկ կասկածի վրայ խաֆիյէներ կը դրուին, այնպէս որ մարդիկ կը չուարին թէ ի՞նչ պէտք է րնել ։

ՁԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԻՆ

ԿԵԱՆՔԸ ՎԻԵՆԻ ՄԷՋ

Վիեն, 29 Դեկտեմբեր.— Հ. Յ. Դաշնակցութեան Նոր Սերունդի եղանակի առաջին ձեռնարկը շատ յաջող անցաւ անցեալ շաբաթ իրիկուն 20 Դեկտեմբերին ։

Համօ Օհանջանեան Ակումբը հաւաքավայրը դարձած էր հաւատաւոր բազմութեան մը։ Եւ Նոր Սերունդը արդարացուց իր վրայ դրուած յոյսերը ։

Իրրեւ նախերգանք, ցուցադրուեցաւ մեր չրջաններու Նոր Սերունդի եւ Կապոյտ Աչքի — 1947ի— դաշտահանդէսներու, ժապաւէնը որուն վրայ նկարները տեսան դրուագներ մեր երիտասարդներու գործունէութենէն։ Ժապաւէնի ցուցադրութենէն ետք, տեղի ունեցաւ երեկոյթի հանդիսաւոր բացումը , «Մշակ բանուոր»ով, եւ որուն յաջորդեցին ընկեր Ս. Գալուստեանի քաղաքական խօսքերը ուղղուած Նոր Սերունդին եւ ամէն ամնոյ որոնք անցեալին թէ ներկային, աշխատանք թափած են եւ տակաւին կ'աշխատին ունենալու մեր արժանաւոր յաջորդները։

Յաջող արտասանութենէն մը ետքը Ա.Հ. Գալայճեան եւ Ֆանթէզի մը՝ Կ. Զարդարեան ։

Երեկոյթին առանցքը կը կազմէր թատերական ներկայացումը՝ «5 թիւ Սենեակը», 3 արար եւ մէկ պատկեր։ Դերասանները շատ յաջող կերպով կատարեցին իրենց դերերը — եւ ներկայ հասարակութիւնը կուշտ ու կուռ խնդաց։ Անշուշտ պակասներ կային, բայց վստահ ենք որ ժամանակի ընթացքին կը սրբագրուին անոնք։

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ.— Ամէն տարի, մեծ խանդավառութեամբ կը տօնուի Վիէնի Կապոյտ Աչքի «Մանուկներու Օրը»։ Եւ այս առթիւ, մեր եռանդուն Աչուկները եւ սանուհիները իրենց գործունէութիւնը կրկնապատկած կ'ուրախացնեն 200է աւելի փոքրիկներ կաղանդ Պապային բերած նուէրներով ...։

Կիրակի 28 Դեկտեմբեր, հակառակ տիրող աննպաստ պայմաններուն — , քաղաքիս Սէրբերը կաճողիք սրահը կը թնդար երկսեռ հայկակներու աղմուկէն, կանչ ու կոչէն ..

Հանդէսին կը նախագահէր Տիկին Բ. Վարդանեան (Ամերիկայէն)։ Յաջորդաբար եղան արտասանութիւններ, պարեր եւ մեներգներ, ինչպէս նաեւ ներկայացուեցան երեք պատկերներ, «Այրի կինը», «Զարմիկ եղբայրներ» եւ «Նոր Տարին»։ Կապոյտ Աչքի Երեկոյեան երեք դպրոցներու երկսեռ աշակերտութեան կողմէ։ Փոքրիկ դերասանները, ամէնքն ալ, լաւ իւրացուցած էին իրենց դերերը։ Իսկ ծնողքները կը ծափահարէին մեծ դոհունակութեամբ ։ Ըստ յայտարերին , բանախօսեց ընկեր Ս. Գալուստեան, ներկաներուն բացատրելով կապոյտ Աչքի կատարած դերը Նոր Սերունդի հայեցի դաստիարակութեան դործին մէջ ։

Ազանդական տօնածառին կնքահայրութիւնը ստանձնեց Պ. Սարգիս Թէրզիեանդուպեան 2000 ֆրանք նուիրելով։ Ցետոյ ձեռնարկուեցաւ նուիրատուութեան մը որուն արդիւնքը — շատ կարճ ժամանակի մէջ — եղաւ 26.450 ֆրանք ։

Այս արդիւնքին գոհ մնաց կաղանդ Պապան որ ներս մտաւ հանդիսաւոր կերպով, խրատական մը ըրաւ ամէնուն, ի մասնաւորի իր չուրջ հաւաքուած մանուկներուն եւ ապա սկսաւ նուիրատրաչխութիւնը՝ անսահման ուրախութեան աղաղակներու մէջ։

Հանդէսի յաջողութեան մէջ դոլելի եռանդով մրցումի ելած էին Ս։ Սահակ Մեսրոպի քաղաքամէջի, եւ Փոնթ Էվէքի դպրոցներուն աշակերտները, որով Կապոյտ Աչքի «Մանուկներու Օրուան» տօնակատարութիւնը հրապուրիչ եւ արժի մօտիկ դարձաւ։— Թղթակից 1947

ԶԵԿՈՅՑ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ՆՄԲ.— Բարեդործականի թիւ 17 (աթուականիր) զեկոյցէն կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները ։—

Հ. Բ. Ը. Միութեան Լիբանանի Շրջանակային Ցանճնաժողովէն ստացանք կարգ մը ցուցակներ, Սուրիայէն եւ Լիբանանէն մեկնած եւ զանազան Հայրենակցական Միութեանց պատկանող նեղպաղթողներու մասին, զոր հրատարակութեան կուտանք, մասնաւորաբար Հայրենակցականներու համար անոնց ներկայացուցած չահեկանութիւնը նկատի ունենալով ։

1.— Լիբանանի մեր Ցանճնաժողովը այս առթիւ կը յայտարարէ թէ. նեղպաղթի կարաւանները կազմութեան ընթացքին, միչտ նկատի ունեցած է մեր կատարած յանձնարարականները եւ մեր միջոցաւ փոխանցուած Հայրենակցական Միութեանց անուանացանկերը, բայց որոչ թիւով ընտանիքներ չեն պատասխանած մեկնումի հրաւէրին, յայտնելով թէ պատրաստ չեն ներկայ տարեշրջանին ներգաղթելու ։

2.— Ըստ Լիբանանի յանճնաժողովին տեղեկագրին, թէ 1946ին եւ թէ մանաւանդ 1947ին, ներգաղթողները նախընտրաբար առնուած են դիւղական շրջաններէ , ուր Հայրենակցականներու պարագաներէն սակաւաթիւ անձեր կը զբաղնուէին ։ Այսու հանդերձ, ուղարկուած ցուցակներէն կը տեսնուի թէ, Պէյրութէն, Հալէպէն եւ Դամասկոսէն մեկնողները մեծամասնութիւն կը կազմեն։ Պէյրութի քաղաքէն ներգաղթած են չուրջ 2240 ընտանիք, Հալէպէն 1189, եւ Դամասկոսէն 498 ընտանիք։ Իսկ 2240 ընտանիք առնուած են դիւղական չրջաններէն ։ Այնճարէն (նախկին ձէպէլ Մուսացիները), Սուրէն, Սէյդմիէն, Քէսապէն, Արամտյէն, Ազէզէն, Աֆրինէն, ձէզիրէյէն, Շեթորայէն, Զահլէէն, Պաալպէքէն եւն։

3.— Սուրիայէն եւ Լիբանանէն մինչեւ հիմա ներգաղթած են 5934 ընտանիքներ ընդամէնը 31-319 անձ — որոնցմէ 3129 ընտանիք ճամբորդած են ձրիարար, ներգաղթի հանդանակութեան հաշուոյն, 2105 ընտանիք անուանական փոքր վճարումներ ըրած են, իսկ միայն 700 ընտանիքներ վճարած են իրենց ճամբու ծախսերը։

Տեղի ամէկութեան պատճառաւ դժբախտաբար ստիպուած ենք զանց առնել ներգաղթողներու վիճակագրական ցուցակը ։

Հ. Մ. Ը. Մ.Ը ՄԱՐՍԼԻԳԼԻ ՄԷՋ

Պատահեցաւ լուչ որ կը զուչակէինք։ Հ. Մ. Ը. Մ.ը չկրցաւ յաղթել Berre֊ի տակաւ խումբին եւ քիչ մնաց որ պարտուէր, որովհետեւ անգամ մը եւս մեր յարձակողական դիծը յուսահատած, կորնչուց առիթը։ Վերջաւորութենէն 10 վայրկեան առաջ մերոնք կրակ ու բոց կարեցան, բայց չատ ուշ էր։ Խաղը վերջացաւ հաւասարութեամբ 2ի դէմ 2։

Զգալի էր Հ. Մ. Ը. Մ.ի վարիչներուն եւ հանդիսականներուն յուսախաբութիւնը ։ Ամէն նիւթական միջոց ի գործ դրուած էր, բայց մեր մարզիկները չկրցան դժբախտաբար իրենց վրայ դրուած յոյսերը իրականացնել ։

Ներկայ խաղարկութեամբ Հ. Մ. Ը. Մ.ը կը փակէ 1947ի տարեշրջանը որ խոչնդոտներով լեցուն տարեշրջան մը եղաւ։ Հ. Մ. Ը. Մ.ի Մարմկի վարիչները, մարզիկներուն եւ բոլոր բարերար, համակիր եւ օժանդակ անդամները ձեռք ձեռքի տուած Միութեան անունը բարձրացուցին եւ չարունակեցին յառաջանալ մարմնակրթական ուղիով ճամբէն ։

Կը յուսանք որ 1948 տարեշրջանին աւելի մեծ թափով մը եւ բոլորին օժանդակութեամբ Հ. Մ. Ը. Մ.ը աւելի պիտի բարձրանայ եւ պիտի խլէ նոր նոր դափնիներ ։

Վահան Շամլեան

ՓԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՆՉՊԷՍ արդէն դրած էինք երէկ, ղօրաւոր տը Կոլ կիրակի օր կարեւոր ճառ մը խօսելով Սէնթ Էթիէնի մէջ, հետեւեալ յայտարարութիւնները ըրաւ.— Որ եւ է բան կրսնցուցած չենք, բայց հիւանդ ենք եւ պէտք ունինք երկարատեւ դարմանումի մը: Կացութիւնը որուն մէջ կը գտնուինք, հանգրուան մըն է միայն մեր անկումի ճամբուն վրայ: Երկար ժամանակէ ի վեր մեր տնտեսութիւնը, մեր եկեմուռքը եւ մեր զրամը կորսնցուցած են իրենց հաւասարակշռութիւնը: Երկար ժամանակէ ի վեր մեր կարելիութեանց սահմանէն վեր կապրինք եւ ամէն ֆրանսացի իր արդար բաժինը չստանար: Ներկայիս իջած ենք տեղ մը ուր կը զգանք տնդունդին հովերը: Առաջին պատերազմր տանկուվայ ըրաւ մեր կենցաղի աւանդական տուեալները: Ազգային հարստութեանց կէսը կորսուեցաւ: Երկրորդ պատերազմին ծախքերը, մեր տնտեսական ահաւոր վնասները, ուէրները, 600.000 ֆրանսացիներու կորուստը, աղէտի մը վերածեցին մնայուն տագնապ մը:

Զօրավարը օրուան կացութիւնը մանրամասնօրէն քննութեան առնելէ ետք, առաջարկեց լուծել ներկայ խորհրդարանը, վերաքննել սահմանադրական օրէնքը եւ «ամբողջութեամբ վերաշխատել հանրապետութիւնը»:

ՄՈՍԿՈՒԱՑԻՆ կը տեղեկացնեն թէ խորհրդային կառավարութիւնը դիմում կատարած է Անգլիոյ, Ամերիկայի եւ Ֆրանսայի որ Զորեքրեու ժողով մը գումարուի այս ամիս՝ ճաթռնական դաշնադրին պատրաստութեան համար:

ԵՐԿՈՒՐՆԷ սկսեալ ֆրանսական թերթերը կը հրատարակուին չորս էջով: Կառավարութիւնը 15 առ հարիւր պեղած է թուղթի բաժնեչափը հակառակ մամուլի ընկերակցութեան գանգատներուն եւ կ'առաջարկէ որ խմբագրութիւնները պահեցնեն իրենց թերթերուն ծաւալը եւ չրջաբերութեան հանուած քանակութիւնը:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ օր Մլլանի մէջ բացուեցաւ իտալական համայնավար կուսակցութեան վեցերորդ համագումարը՝ 3000 պատգամաւորներու ներկայութեամբ: Ֆրանսայի համայնավարներուն կողմէ ներկայ է Պ. Մորիս Թորէզ: Կուսակցութեան ընդհանուր քարտուղարը, Պ. Թոլիաթթի, հինգ ժամ տեւող իր ճառին մէջ, հետեւեալ միտքերը յայտնեց.— «Միացեալ Նահանգները իտալիան վերածած են կամուրջի մը Մոլորտայինմիութեան դէմ պայքարելու համար եւ չեն վարանիր քաղաքական եւ տնտեսական ճնշում բանեցնելու մեր կառավարութեան վրայ որպէս զի մեզ կր պտուտին ամերիկեան վտանգաւոր մեկնակիցներ: Եթէ Ամերիկա կ'ուզէ օգնել Իտալիոյ, այդ օգնութիւնը կրնայ ըլլալ առանց Իտալիոյ ներքին գործերուն միջամտելու: Բայց պէտք է գիտնան որ մենք այդ օգնութեան էրաւունքր չտանք՝ կուսակրալ Ֆաշիստներուն դէմ: Իտալիոյ երկրորդ թշնամին է Վատիկանը որ դաշնակցած է իտալական եւ միջազգային յետադիմութեան հետ վաճառով որ ժողովուրդին իրաւունքները կր յաղթահարկին: Մենք, համայնավարներս սպառնալիք չենք ոչ մկնուն համար»:

Համագումարին ներկայ է նաեւ Անգլիոյ համայնավարներուն պատուիրակը, Հէրի Փալիթ:

ՖՐԱՆՍԱԿԱՆ չարժանկարիչ ճարտարարուեստին աշխատաւորներէն 1000 հոգի կիրակի օր ցոյց մը կատարեցին Փարիզի սրտոտանեռուն վրայ, բողոքելու համար ամերիկեան ժապաւէններու մրցակցութեան դէմ: Ցոյցր կազմակերպուած էր համարիավարներուն կողմէ: Համաձայն 1946ին, Պըրնի եւ Պրուսէլ միջեւ կնքուած համաձայնութեան մր, ֆրանսական կառավարութիւնը յանձնառած էր արտօնել տարեկան 120 ամերիկեան ժապաւէններու ցուցադրութիւնը: Այս որոշումր մեծ վնասներ պատճառած է ֆրանսական ճարտարարուեստին:

ՖՐԱՆՍԱՑԻ խորհրդարանին արտաքին գործերու յանձնաժողովը միաձայնութեամբ որոշեց պահանջել կառավարութենէն որ հրատարակէ Սմերիկայի հետ կնքուած տնտեսական համաձայնութեան պայմանները:

Տարեկան դիեղ ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան Կարմիր Խաչի եւ Ողբախնամի տարեկան ցերեկոյթ պարահանդէսր տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրակի օր ժամր 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէջ, 43 Bld. Raspail, Paris:

STUDIO KÉVORK

ՎԱՐՊԵՏ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ

13 Rue Elisée-Reclus, Kremlin-Bicêtre (Seine)

Métro : Porte-d'Italie

Այրի Տիկին Նուբիճանեան, Տէր եւ Տիկին Փափազեան, Տէր եւ Տիկին Խաղատեան, Այրի Տիկին Պօյաճեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Զարաֆեան, Տէր եւ Տիկին Օ.Պէկ Պէյօղլուեան, անհուն կսկիծով կը ծանուցանեն մահը իրենց սիրելի մօրեղբօր, քեռայրին եւ ազգականին՝

Պ. ՍՏԵՓԱՆ ՆՈՒՐԻՃԱՆԵԱՆԻ

(52 տարեկան)

Յուղարկաւորութիւնը պիտի կատարուի հինգշաբթի, 8 Յունուար, ժամը 10ին Փարիզի Հայոց Եկեղեցին:

Մասնաւոր մահագդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել:

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒԻԻ Փարիզի մասնաճիւղը կազմակերպած է թէյասեղան մը, ի պաւիւ ծնողներու եւ դաստիարակներու, կիրակի 11 Յունուար, 2.30էն 8, Societes Savantesի կից սրահին մէջ, 8 rue Danton:

Խնդրում տեղի չտալու համար կ'ընդունուին միայն հրաւիրատէրը ունեցողները:

Պ. Մ. ՄԱՎԵԱՆԻ մահուան Բ. տարելիցին հոգեհացին առթիւ ներկաները 2000 ֆրանք նուիրեցին Ֆր. Կ. Խաչին:

Ֆր. Կ. ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղին ընդհ. ժողովը Ուրբաթ 9 Յունուար, ժամը 4ին Սոսիէթէ Սավանթի մէջ: Կարեւոր օրակարգ: Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը առհրաժեշտ է:

ՏՕՆԱԾԱՌ - ՆՆԴՈՑՔ -ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Կլընոպլի Կապոյտ Խաչի մասնաճիւղին կողմէ, 11 Յունուար Կիրակի ժամը 15էն 4ս գիշեր, Salle Armenonvilleի մէջ (Exposition կեդրոնը):

Նամանաւանդ յայտարիր եւրոպական պարերով, ընտիր խմիչք եւ ուտելիք:

Կաղանդ Պապան պիտի բաժնէ նուէրներ: Կր հրաւիրուին զաղուքի բոլոր երախաները անխտիր:

«ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ» ՎԱՆԱՆՑԻ ՄԷՋ

Վանանի Ֆր. Հայ Կապոյտ Խաչի «Մանուկներու Օր»ուան հանդէս ուրբաթ օրը, տեղի պիտի ունենայ Յունուար 11ին, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին ընկեր Յակոբ Կօշկակարեանի կառատան մէջ: Պիտի ըլլան երգեր, պատասխանութիւններ, գեղջկական պարեր տանուհիներու կողմէ: Կը հրաւիրենք տեղւոյս հայութիւնը քաջալերելու համար մեր մանուկները:

ԱԼՖՈՐՎԻԼԻ, Մէկզոն Ալֆորթ, Շուարդ լը Ռուայի եւ Վիթրիի Հայերը եկեղեցի կը հրաւիրուին յառաջիկայ Կիրակի, 11 յունուար, Ծննդեան պատարագին ներկայ գտնուելու համար:

ՊՈՒԼՈՒԱՐԻՈՑ Բազարճեք քաղաքին, Տէր Զաքարեան քհնյ. Շերիճեան կը վարուի վր քրոջ տըղան, Արշալոյսիկի Դիւզոր Մաչէրեան (Եղիեան) լատանեօք: Մարսիլիոյ եւ Լիոնի հայրենակիցներէն կը խնդրուի խտացնել խերթիս վաչչուխեան:

«ԴՈՅԱՄԱՐՏ» պատի օգտագոյցներ ստացուած են եւ կը ծախուին Բալուեան գրատան մէջ, 43 Rue Richer, Paris (9), ինչպէս նաեւ Նոր Սերունդի տնդամներուն քով: Գինն է 100 Ֆրանք: Ծաւալը մեծ ըլլալով վտասով չէ զրկուիր: Անձամբ գինել եւ ստանալ:

ՎԻՐԱԲՈՑԻ - ԱՏԱՄՆԱԲՈՑԻ

Պ. Ա. ԴԱՒԻԹԵԱՆ

Կը յայտարարէ Պօմպնաբնակ իր յարգելի յաճախորդներուն որ օգտուելով քաղաքին եղեկտրականութեան չաբաթական երկու օրուան դադարէն կ'ընդունի իր հիւանդները,

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՒ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Իր անձնական թնակարանը 15 Bld. du Nord, La Rosière (Marseille) առտուան ժամը 9էն մինչեւ 5: Իսկ՝

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

քաղաքի իր դամմանատունը՝ 53 Cours Lieutaud: Կարօտ հիւանդները եւ երկսեռ ուսանողները ձրի:

ԸՆԿԵՐԱՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԽՆԴՈՑՔ

Կազմակերպուած Աբէյռ Պուա Քոլոմպի Հ. Յ. Դ. Ազամ ենթակոմիտէին կողմէ Նոր Տարւոյ եւ Ծնունդի առթիւ, տեղի կ'ունենայ յառաջիկայ չաբաթ, 10 Յունուար ժամը 9էն մինչեւ լոյս, Ընկերվարականներու սրահը 149bis, Ave. d'Argenteul, Asnières: Ճոխ պիւֆէ, գեղարուեստական յայտագիրը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. ՄԱՐՍԷՅԼԻ Շրջ. կոմիտէն ընկ. ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ մարմինները.—

Թաթուլ խումբը հինգշաբթի 8 Յունուար ժամը 8ին:

Իշխան խումբ հինգշաբթի 8 Յունուար ժամը 8ին:

Զաւարեան ենթակոմիտէն, չաբաթ 10 Յունուար ժամը 8ին:

Ակնունի ենթակոմիտէն չաբաթ 10 Յունուար ժամը 8ին:

Քեռի խումբը չաբաթ 10 Յունուար ժամը 8ին:

Նիկոլ Թոման ենթակոմիտէն կիրակի 11 յունուար ժամը 3ին:

Արամ խմբը կիրակի 11 Յունուար ժամը 8.30ին:

Այս ժողովները տեղի կ'ունենան սովորական հասաքատեղիները: Ներկայ պիտի ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը:

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Մարսէյլի Շրջ. վարչութիւնը կը հրաւիրէ Մարսէյլի եւ չրջանի բոլոր խումբերու վարչութիւնները ժողովի մը, որ տեղի կ'ունենայ 10 Յունուար 1948, «Bar Pigalle», չաբաթ իրիկուն ժամը 6.30ին, ներկայանալ զրատար զեկոյցով:

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Փարիզի մասնաճիւղի ընդհ. ժողովը, հինգշաբթի 8 Յունուար, ժամը 9ին, Societés Savantesի մէջ: Հայերէնի դաս 8էն 9:

Հ. Յ. Դ. Ս. էթիէնի «Անտառ» ենթակոմիտէին ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերները յառաջիկայ չաբաթ 10 Յունուար երեկոյեան ժամը 8ին, սովորական հասաքատեղին, 14 rue Brassard: Կարեւոր օրակարգ, բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

Անիէսի Հ. Յ. Դ. Արամ ենթակոմիտէն ընկերական ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ ժամը 8.30ին, Պուա Քոլոմպի կայարանի դէմի սրճարանը: Պարտաւորիչ ներկայութիւն:

ԻՍԻ ԼԻ ՄՈՒԼԻՆՈՑԻ «Զաւարեան» կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս չաբաթ 10 Յունուար, ժամը 8.30ին, Մրխիեան սրահին մէջ. պարտաւորիչ ներկայութիւն:

ՔՈՒՐՔՈՒՐԻ «Եփրատացի» կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս չաբաթ իրիկուն ժամը ճիշդ 8.30ին ընկերվարականներու սրահը (9 rue Victor Massé): Պարտաւորիչ ներկայութիւն:

ՎԻԼՆԻ Հ. Յ. Դ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերները, չաբաթ իրիկուն ժամը 8.30ին, Հ. Օճանչեանի Ակումբը: Խիստ կարեւոր օրակարգ, բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

ՔՈՒՐՔՈՒՐԻ Հ. Յ. Դ. «Ռոստոմ» խումբն բացառիկ ժողովը, այս կիրակի ժամը 9.30ին, 57 rue des Couronnes, իջնել Métro Courronnes: Բացակայողները պատասխանատու են:

ԼԻՈՆԻ Հ. Յ. Դ. «Վարանդեան» կոմիտէն ընկերական ընդհ. ժող... կը հրաւիրէ բոլոր ընկերները առ կիրակի 11 ...ուար, կէսօրէ վերջ ժամը 2էն, 7obis, rue Rabelais, պրոճէն սրահը: Կարեւոր օրակարգ: Պարտաւորիչ ներկայութիւն: Ներկայանալ անդամատետրով

Ցարեկոյթ պարահանդէս

Կազմակերպուած Փորթ տ'Իթալիի Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղին կողմէ: Կիրակի 18 Յունուար կէսօրէ վերջ ժամը 15էն 23: Պէն Տուչի սրահը, Rue Jules Ferry. Petit Ivry, մէթրօ Porte de Choisy:

Գեղարուեստական ճոխ բաժին.— Պիտի ներկայացուի ՀԱՄԱՐԸ եւ զաւեշտ մը, Սէվրանի Ֆ. Կ. Խաչի Թատերախումբին կողմէ:

Եւրոպական պարերը կը սկսին ժամը 6ին, ղեկավարութեամբ Պ. Օհոսեանի Նուագախումբին: Ճոխ պիւֆէ դիւրամատչելի գիներով:

Մուտքը 75 ֆրանք:

ՀԱՄՈՎ ԵՒ ԸՆՏԻՐ

ԵՐՇԻԿ ԵՒ Ա Պ Ո Ի Ե Տ

ԵԹԷ կ'ուզէք ունենալ ձեր կաղանդի եւ Ծնունդի սեղանին վրայ

Դիմեցէք վստահութեամբ՝

ՆԱԶԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Նախապատերազմեան լաւագոյն տուներէն մէկը:

24, Rue Jules Verne, Sevran:

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e

Le Gérant : A. NERCESSIAN

Ազատ Խոսք

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN LANGUE

HARATCH — Fondé en 1925 —
R. C. Seine 376.286
Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN
17, Rue Damesme — PARIS (13e)
Տպր. 1200, 6աւտ. 650, Նկտ. 15 տող. կամ 3 ալգի.
Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Jeudi 8 Janvier 1948 Հինգշաբթի 8 Յունուար

Ի. ՏՈՒԻ — 20e Année N° 5234-Նոր շրջան թիւ 843 Երկաթգիր՝ Շ. ՊՈՍՈՒՔՆԵՐ Գին՝ 5 ֆր.

ՄԻՆՉԵՒ ՏԵ ԱՒԵՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԳԱՆԵ

ՄԻՆՉ

Ի՞նչ որ ալ ըլլայ ներքին կացութիւնը, ինչ որ ալ ըլլայ ներքին կացութեան ազդեցութիւնը արտաքին քաղաքականութեան վրայ, ոչ մէկ պարագայի մէջ Հայաստանի Հանրապետութիւնը չի կրնար ինքզինքը զրկել ազգային ինքնապաշտպանութեան իրաւունքէն։ Ոչ մէկ պարագայի մէջ Հայաստանի Հանրապետութիւնը չի կրնար հրաժարիլ ազգային ինքնապաշտպանութեան իրաւունքէն։

Ինչո՞ւ։

Որովհետեւ ազգային ինքնապաշտպանութեան իրաւունքը ինքնին ազգային գոյութեան իրաւունքն է

ՏԵՍԱԿԷՏՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Կ. Ատաունիի խօսքը

Գրական այս հանդիպումին բաւեբախտաբար կը մասնակցին հայ գաղթաշխարհի չորք մը գըրողներ եւ մտաւորականներ եւ անոնց կարծիքի փոխանակութիւնը արժէք մը կը ներկայացնէ մեր գրականութեան զարգացման տեսակէտին: Որով, գրասէրը ունկնդիրներէն աւելի, խօսքս կ'ուղղեմ գրասէրներուն, մտաւորականներուն եւ այն գըրագէտ երիտասարդներուն, որոնք գրիչ կը շարժեն, կամ պիտի շարժեն մեր գրականութեան անդաստանէն ներս:

Ամէնէն առաջ կը հաստատեմ այն իրողութիւնը, թէ արտասահմանի հայութեան գրական ստեղծագործութիւնները, ա՛նցած 25 տարիներու ընթացքին, արժէք մը կը ներկայացնեն, նոյնիսկ մեծ արժէք մը: Լրիւ ծանօթութեան մը վրայ, հիմնուած՝ կը յայտարարեմ, թէ գաղթաշխարհի 25ամեայ գրականութիւնը չատ աւելի ծանր կը կշռէ, քան Հայաստանի այդ ժամանակաշրջանի գրական ստեղծագործութիւնը: Այս խնդրի մանրամասնութեան չեմ մտներ: Միայն եթէ յիշատակենք Ա.Հարոնեանը, Լ. Շանթի եւ կարգ մը ուրիշ հին սերունդի այն ստեղծագործութիւնները որ կ'իյնան այս վերջին 25ամեակին մէջ, ինչպէս նաեւ մինչեւ սերունդի, ինչպէս Կ. Զարեանի, Օշականի եւ Համաստեղի գլխաւոր երկերը՝ ու անոնց միացնենք արտասահմանի տաղանդաւոր բանաստեղծներու եւ արձակագիրներու մնայուն արժէք ունեցող երկերը, բոլորս ալ պիտի համոզուինք, թէ հայերի եւ ամբողջական գրականութիւն մը զարգացաւ արտասահմանի մէջ, ընդգրկելով ամբողջական տղին հայ ցեղին:

Այս արժէքաւոր գրականութեան թելադրանքին եթէ անսանք, մեր նոր գրականութեան ուղին լրիւ ու ամբողջական պիտի թելքուի դէպի հայերի գրականութիւն մը: Ազգային խորունկ արմատներուն վրայ չառաւիղ պիտի նետ եւ հնադարեան կոճղին անմիջական չարունակութիւնը պիտի ըլլայ: Մեր մէջ սխալ հասկացողութիւն մը երբեմն երբեմն ղուխ կը ցցէ այն մասին թէ մենք ի՛չպիսի գրականութիւն մը պիտի զարգացնենք, ազգայի՞ն թէ միջազգային չափանիշերով: Ազգային ըսելով, ոմանք կը կարծեն թէ պիտի ամփոփուինք մեր խրճիթին մէջ եւ մեր կեանքն ու տիպերը պիտի ըլլան մտահաղ, առօրեայ եւ, հետեւաբար՝ գրականութիւնը ոտհմանափակ: Այս սխալ ըմբռնումէն ելնելով՝ չատերը կրնեռնին դէպի ֆանթէզի գրականութիւն մը, եւ կամ նմանութեամբ եւրոպական ՝այլեւ այլ գրականութենց միջազգային չապիկ մը կ'ուզեն հագցնել իրենց ստեղծագործութեան: Այս ֆանթէզի գրականութեան փորձերէն հայ գրագէտները, մանաւանդ նոր գրողները զգոյշ պիտի ըլլան: Օտար գրականութեան չլացումներէն պիտի ազատել հայ գրագէտը:

Մեր կեանքը անցեալով եւ ներկայով չատ հարուստ է, խոր ու համամարդկային, եւ ընդգծուած ազգային: Մեր գրականութիւնը ազգային իր դիմագիծով կարող է միշտ ալ համամարդկային դառնալ: Պահպանով մը միտքս կրնամ արտայայտել: Մասիսը ոաքի չի՛նայեր դարձներով, գրագէտը իր չարժումները կարկինի մը ազատութեամբ կրնայ չատ հեռուները տարածել: Հայկական հոգիի պատկերը եւ մեր ցեղի ներաչխարհի դունագեղութիւնը պէտք է մնան մեր գրականութեան եւ արուեստի էութիւնը կազմող նիւթերը:

Մեր լեզուի չքեղութեամբ, գրագէտի ինքնայատուկ ոճով եւ խորունկ ապրումներով եղած ստեղծագործութիւնները են որ կրնան մնայուն գրականութիւն մը տալ գաղթաշխարհին, որ եւ համամարդկային կեանքի ու ոգիի պատկերացում մը պիտի ըլլայ մեր գրականութեան բեմին: Ֆանթէզի գրականութեան մը փորձը, գրական վերթրկայոյզ ելոյթներու ընդօրինակումը մեր մէջ աւելորդ ժամավաճառում մը պիտի ըլլայ: Այս առթիւ կ'ուզեմ փոխանակ յիշել Եղ.Չէմիրճեանի գրական հմայքին, որ 1875էն մինչեւ 1890 թուականը կ'ներկարածգուի եւ դեռ անկէ այ յետոյ կը չարունակուի: Ամէնէն կարկառուն դէմքը կը յիշեմ, քանի թէ մեր գրականութիւնը 20ամեակ մը աւելի ած է այս գրագէտին երեսէն: Իր ժամանակին տիրապետող դէմք մը, որուն ժառանգութենէն այսօր կարելի է 100—200 էջ մի հաւաքել եւ չանձնել յետնորդներու ուշադրութեան: Մենք ներկայ ժամանակաշրջանին ոդագիսի չունենալու պէտք չունինք: Մեր երիտասարդ գրագէտները պէտք է գրիչ չարժեն մինչ այն ատեն, երբ իրենց ներքին էութիւնը հասկացած է խորունկ ապրումով մը: Այսինքն մտքին ունին իրենց երգը երգելու: Այս պարագային տաղանդը, լեզուն եւ ոճը անհրաժեշտ նախապայմաններ կը դառնան: Առանց տաղանդի, առանց լեզուի կատարելութեան, մեղք է գրիչ չարժել՝ անուանական գրագէտի մը չուքը պատրաստելու մեր ծաւալման հորիզոնին վրայ:

Այս ըմբռնումով՝ կը դաւանիմ այն սկզբունքը, որ գրագէտը կը հռչակէ որպէս աշխարհի ամենէն ազատ մարդը: Գրագէտի հոգին անկաշկանդ է եւ ինքը բացարձակ թագաւորը՝ իր հոգեկան կալուածին մէջ: Այս ազատութենէն եւ անկախութենէն որեւէ չեզում գրագէտն ու մտաւորականը վար կը ձգէ իրենց պատասխանատուն, որ գահ մըն է, արժանապատուութեամբ պահպանուած: Այլեւ ու ձախէն եկած ազդեցութիւնները երբ գրագէտը դնեն պայմանագրական վիճակի մը մէջ ու գրագէտը հանդուրժէ ատոր, ան գրագէտ ըլլալէ կը դադրի:

Մտահոգիչ այլ երեւոյթ մը կը յանձնեմ մեր մտաւորականութեան ուշադրութեան: Հայ գրագէտն ու մտաւորականը անջրպետով մը կտրուած են հայ ընթերցող հասարակութենէն: Հայ ժողովուրդի մեծագոյն զանգուածը գրեթէ չի կարդար հայ գիրքը եւ չի հաղորդուիր հայ գրագէտի եւ մտաւորականի ապրումներով, չի վայելեր հայ լեզուի եւ դեղարուեստի հաճոյքը: Հայկրթականութեան եւ արուեստի համար մշակուած չէ հայ զանգուածներու հոգին: Մշակութային տեսակէտով մեր հասարակութիւնը վար մնացած է մեր գրականութենէն եւ արուեստէն: Այսպիսով՝ ըղգրագէտը հետզհետէ կը նմանի հնադարեան այն վանականին, որ քաշուած իր խցիկին մէջ՝ կը գրէր ինքն իրեն համար. իսկ ժողովուրդը միայն եկեղեցիներուն մէջ կը լսէր իր չհասկացած գրաբարը: Այսօր հայ գրագէտը կը գրէ ինքն իրեն համար եւ արձագանգը չի լսեր մեր ժողովուրդին մէջ: Առանց այդ արձագանգին, գրագէտը հոգեկան մեծագոյն սնունդէ մը զրկուած կը մնայ: Գրագէտի հոգեկան թրթռացումները ուղիղ ճառագարհով պէտք է հասնին մեր ժողովուրդին, որուն հայեցին զարգացումը այն ատիճան մշակուած պէտք է ըլլայ, որ հարազատօրէն ընկալուէր դառնայ գրական ու մտաւորական թոիչքներուն: Գրագէտ ու ընթերցողը իրար կը լրացնեն:

Հայերի գրականութեան այս ուղին այժմ կարելի է ըսել թէ բոլորէն վաւերացուած եւ թելադրուած ուղին է: Մեր գրական քննադատութիւնն ալ, 25 տարի առաջ, իր ճաշակով գիկ-զակ կ'ընթանար: Այդ թուականներէն յետոյ, եթէ հաշուի առնենք Գ. Մխիթարեանի, Ց. Օշականի գրականութեան դատողութիւնները, պիտի տեսնենք որ ատիճանաբար զարգացած են դէպի հայերի գրականութիւնը եւ այժմ կարելի է ըսել, թէ հաստատօրէն կանգնած են այդ ճանապարհին վրայ՝ այս ու այն արժէքաւորումը ընելու համար:

Եթէ կարելի ըլլայ հոգեկան մշակումը բարձրացնել հայ նորահաս զանգուածներուն, վստահօրէն կարելի է ըսել թէ գաղթաշխարհի գրականութիւնը նոր ծաղկում մը պիտի ունենայ դալիք 25ամեակին:

Կաղանդի պատմութիւն

Բ.

Կարապները իրենց ձիւնի պէս ճերմակ թաւիշէ թեւերը կը տարածէին անոր վրայ, անոր մերկ մարմինը պաշտպանելու համար, ձմեռները առնամանիքէն իսկ ամառները արեւի ճառագայթներէն: Կը հասկնար անոնց լեզուէն: Նազանքներ կ'ընէին անոնք իրենց երկար պարանոցը քսելով անոր ուսերուն ու սրունքներուն եւ չուրջ — պար կը բռնէին բոլորտիքը՝ կռկռոցներ արձակելով:

Երբ ճօթը տարեկան եղաւ, ընտանի պէս հատունցած էր ան: Կոնքերը լայնցած ու կուրծքերը զմբեթներ էին: Հոլանի մարմինը կարապի պոյն իսկ աչքերը իրենց գոյնը լիճերու կապոյտէն էին առած:

Հայրը տեսաւ անոր մարմինին զարգացումն ու փոփոխութիւնը: Աւաղներու մէջէն հաւաքեց ծմակները(**) ու ոտորէի մաշած կճեպները, ծակեց զանոնք եւ ուլի մաշած թելերով իրարու կապելով շինեց գրահ մը ու անով ծածկեց աղջկան մէջքն ու կուրծքերը եւ իր ձեռքով յանձնեց զայն լճի ալիքներուն ու կարապներու խումբին:

Քանի մը ամիս վերջ պարեգօտն ու կուրծքի գրահը սկսան տանջել զինքը: Բողոքեց հօրը: Հայրը քակեց կապերը ու մոայլ մտածում մը պաշարեց զինքը, համոզուեցաւ որ աղջիկը պիտի արդասաւորէր: Ու տարաւ փակեց զայն հիւղակին մէջ:

Քանի մը օր վերջ, յղութեան բոլոր նշանները կային աղջկան վրայ: Վրդովուեցաւ, կատաղութեան մատնուեցաւ, կապեց անոր ձեռքերը քանակոծեց, ստիպեց որ խոստովանի այս արատաւորող երեւոյթին պատճառը: Բայց անմեղ ու մանկունակ աղջիկը կարապներէն զատ մարդ տեսած չէր: Հայրը գրաւ զայն նաւակի մը մէջ, տարաւ կապեց ծանր քարեր ու տարաւ գիշերով ամբերէն չատ հեռ լիճին ամէնէն խորունկ տեղը ու նետեց զայն ջուրերուն մէջ:

(**) Ծմակ —խխունջի կամ ոտորէի կճեպներէն շինուած զարդեղէն:

Վերադարձաւ խրճիթ կրակի տալու զայն, նետահար ըրաւ այծեամը, անյայտացաւ:

Կարապները աղջկան օգնութեան փութացին տանջուեցան լիճին չատակը ու զայն փրենց թեւերուն վրայ առած բարձրացուցին ջուրերուն վրայ: Ցետոյ լողալով հասան լճին արեւելքի ափը: Աղջիկ արեւը ծագած էր: Հոն թողուցին զայն, մին մինակը ու հեռացան:

Լիճին այս ափէն քանի մը քայլ հեռու, պզտիկ բարձունքի մը վրայ դղումի տունկ մը բուսած ծուռ ածած էր ծածկելով արտաւար մը գետին. անոր արմատները հասած էին մինչեւ լիճին ջուրերը, իսկ տերեւները ամպ հովանիներու պէս բարձրացած էին երկինքն ի վեր եւ անոնց չուքին տակ կարելի էր տասնեակ մը գառնուկ կամ հաբիւրներով բազեր պատսպարել:

Ցունիս ամիսն էր ու դղմենին ծաղկած էր. անոր կրակի գոյն թերթիկները խոշոր սկիհներու պէս իրենց չքնաղները բացած էին՝ առուտան չաղիճ եւ իրիկուան ցօղին դէմ: Կարելի էր տալ մը մկրտել անոնց վրայ:

Խոշտանգուած մարմինով աղջիկը յոգնաբեկ վնկաւ տերեւի մը չուքին տակ ու քնացաւ: Կէս օրուան մօտ, արթնցաւ երկունքի ցաւերով: Քանի մը ժամ վերջ ծնած էր ճերմակ, ճերմակ աղջիկ մը, վայրէն կաթնաթոյր տնդուսէ մորթով, կարմիր շրթունքներով ու կարասկի կանանչ աչքերով:

Շոյեց զայն ու կրկին քնացաւ:

Առտուն, երբ արթնցաւ, զգաց որ ոնօթի էր: Կաթ տուաւ երախային, լուաց զայն ծաղիկի մը բաժակին մէջ հաւաքուած չաղով ու պառկեցուց անոր դիրկը: Ցետոյ թափառեցաւ հեռուտր անտառին մէջ՝ ճարելու համար քիչ մը տաեւիլք: Հոն գտաւ հոնի ծառեր հարսի պէս քօղուած՝ կարմիր պտուղներով, թթենիներ՝ իրենց ճիւղերուն կախուած հասուն թութերով, մաքիներու ծիծերու պտուկներուն պէս բեղմնաւոր, մեղրահամ ուիւով: Հաւաքեց մացառներու գիրկէն քիչ մը թրթենջուկ ու կոտեմ: Կերաւ, կշտացաւ ու մաս մըն ալ առած գրկին մէջ, ուղղուեցաւ դղումի տունկին կողմը:

Երբ հասաւ հոն, կէս օր էր: Դղմենին արեւի ճառագայթներուն տակ ծերացեր էր, եւ իր՝ նիզակներու պէս դէպի երկինք երկարող ճղուններուն վրայ վրան լարած տերեւները՝ թուղերը ու խմորի պէս կակուղցեր, ճմռթիւէր էին, ծաղիկ ներուն թերթերը իրենց բաժակներուն մէջ գալարուելով պրկուեր, կծկուեր էին, իսկ երախան անյայտացած էր:

Վազեց ճողուն ճողուն, ծաղիկ ծաղիկ տեբեւ տեղ ու եղաւ մայր: Ճմրուեցաւ սիրտը, կսկիծով ու առաջին առապանքին մայրական արցունքը ցայտեց իր աչքերէն: Ողբ ըրաւ ու լացաւ ճուռց խելագարի մը պէս ու ժամերով խօլական վարուրտուքի ու վիհտտուքի մը վերջ մարող հրթիռի պէս վնկաւ թուխին մէջ՝ անշնչացած:

Հարաւի քամին կը մռնչէր, լիճը ալեկոծ էր, ու անոր փոփուրներու մէջէն կը լսուէր կարապներուն կռկռոցը: Անոնք կը թեւածէին կոհակներուն վրայ, կը խորասուզուէին ալիքներուն մէջ ու յետոյ, մարմին մը իրենց ուսերուն վրայ, հասան լճափը: Մխիթիս ու բարի թռչունները նետահար այծեամը բերած էին հոն, կշտացնելու համար աղջնակը երբ աղբերդութիւնը հասած էր իր լրումին: Հաւաքուեցան մեռելին չուրջը, շոյեցին անոր մարմինը իրենց դլխով ու վիզերով, փրենց թեւերով հովահարեցին անոր դէմքը, կըլկլացին, իրենց ոտքերուն ծայրին վրայ կանգնած, սուզի դրօշակի պէս բացին իրենց թեւերը, ու անոր ծայրը նետի պէս աւազներուն մէջ խրելով՝ չուրջ – պար բռնեցին: Դարձան մտրակուած հոլի պէս ու իրենց կռկռոցէն լսուեցաւ էն սրտաճմլիկ ողբը, կարապին երգը, ու իրիկուան դէմ պաղած մարմինը իրենց ուսերուն վրայ առած կրկին սուզուեցան ալիքներուն մէջ: Ու այդ օրէն սկսեալ հրաժարեցան իրենց սիրած լիճէն ու զացին օտար երկիրներ ալ չվերադարձան:

Անդին, ալիքները ողողեցին ձիմոտսին բոլոկած խրճիթը, այդինեղն ու արտերը ու ճահիճի վերածեցին աղջկան ոաք դրած բոլոր մասերը: Ու մինչեւ այսօր ան մնաց ցեխէ աւազանի մը պէս: Որուն ջուրը նեխած է ու ժժեղները կեռան հոն ու մահ կը սփռեն մօտակայ բնակչութեան ու դեղերուն վրայ:

×

Սեպտեմբերի վերջերն էր: Օրուան իշխանին քան տարեկան տղան իր հեռուտրդներով ճամբայ ելած էր ցամաքէն, լիճին չորեանը ընթերու համար: Երբ ան հասաւ արեւելքի ափերը ան հանդիպեցաւ առասպելական առաւտութեան, յորդառատ բերքի ու բարիքի: Ապշեցաւ երբ մեղի ծանօթ դղմենին տեսաւ, անոր տիրակալած ու ծածկած դեռնին վրայ կային հարիւրներով. դղումներ: Բայց մէկը անոնցմէ տաճարի գմբեթի պէս ծածկեր էր հողը: Անոր կեղեւը քարէխի նման դըծուած էր, ու ոտայինէն խէժի պէս կակուղ մեղրամոմ հիւթ մը կը պղպջէր, որուն հոտէն լճին օձերը պինդացած, հաչիչամոլ տէվրիշներու պէս իրենց պլուխը անկած, իրենց բերանը բաց, վրենց լեզուն կը վարտէին ու կը սուլէին:

Գ. ԶԱՔՐԵԱՆ

ԴԱՂՈՒԹՔ ԴԱՂՈՒԹՔ

ՀՆԴԿԱՍՏԱՆ.— Կան յուսատու եւ սրտապնդիչ կէտեր, որոնք խորհիլ կուտան թէ դեռ Հնդկահայերու վաղեմի ամիզեղծ հայրենասիրութեան ոգին ապրեցուն է, չէ մեռած եւ պիտի չմեռնի: Ճշմարիտ հայրենասէրներու չառաւիղները դաստիարակուած ըլլալով նահապետական միջավայրի ազնուութեամբ ու սրբութեամբ, չատեր փրկնց էութեամբ վարած են ազգային գործերուն: Գաղութը կը վայելէ կատարեալ խաղաղութիւն: Թերեւս ոչ մէկ առեն Հնդկահայերը ցոյց չեն տըւած այնքան իրատես եւ գործնական վերաբերմունք դէպի ազգային մշակոյթը, որքան հիմա: Նոյնիսկ այն անհատները որոնք փրենց կրթութիւնը ստացած են օտար դպրոցներուն մէջ, հիմա խորին համոզումով ազգային եւ հայրենիքի կեանքով կ'ապրին: Գաղութի նշանաբանն է հաւատարմօրէն կատարել քաղաքացիական բոլոր պարտականութիւնները, միահամուռ ուժերով զարկ տալ ազգապահպանման գաղափարին եւ կարելի եղածին չափ մատաղ սերունդին տալ հայեցի կրթութիւն: Կալկաթայի նկեղեցիի եւ դպրոցներու վարիչ մարմինները արժանի են յարգանքի եւ շնորհակալութեան իրենց անխոնջ աշխատանքները համար: Հայրենիքէրուն կարօտով ու հաւատքով ամէն մարդ լծուած է աշխատանքի: Եթէ այսօր Հնդկաստանի հիւրընկալ երկրին մէջ կ'ապրինք իրրեւ Հայ ու հոգիով միացած ենք, այդ կը պարտինք մեր ազգային եւ առաքելական նկեղեցիին: Եթէ այցելէք Հնդկաստանի այն կարեւոր քաղաքները ուր Հայերը բնակութիւն են հաստատած, անկասկած պիտի տեսնէք հայ նկեղեցիներու երկնասլաց գմբէթները որոնք հայ ցեղին անմահութեան խորհրդանիշը կը կազմեն:

Գաղութին հոգեւոր պարտականութիւնը կը կատարեն պարկեշտ հոգեւոր հովիւներն են Համբարձում աւագ քահանայ Վարդանեան եւ Վարդան աւագ քհնյ. Վարդանեան, որոնք տարիներէ ի վեր անդամները եղած են Պարսկա-Հնդկաստանի Թեմի Կրօնական Խորհուրդին:

Պարսկահայ մատաղ սերունդը պիտի չմոռնայ Տէր Գարեգին Կիւրակոսեանի գրական եւ լեզուական թանկագին ծառայութիւնները: Պոմպէյի մէջ կը պաշտօնավարէ վերջերս ձեռնադրուած Տէր Արիստակէս Մխրտչեան: Մատրասի եւ Դաքքայի վիճակաւոր քահանաներն են Տէր Գրիգոր Հախվերեանց եւ Տէր Բագարատ Դաւթեան: Ընդհանուր առմամբ Հնդկահայ գաղութի հոգեւոր կեանքը մխիթարական է:

Պիրմանստանի Հայերը պատերազմի նախօրեակին կրցան անցնիլ Հնդկաստան: Ռանգունի ազգային նկեղեցին եւ բազմաթիւ ազգային հաստատութիւնները պատերազմի պատճառով տեղափոխութեան դատապարտուեցան:

Անուրանալի է այն ծառայութիւնը զոր մատուցած է Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ձեմարանը, մուտաւոր վարարանը: Քանի սերունդներ են այդ սրբավայրին մէջ բարձր ու վսեմ իտէալներով եւ ազգապահպանական իրրեւ ազատութեան ջահակիրները ազգային հոգին հրահրել: Որո՞ն ծանօթ չէ Իսրայէլ Օրին, կամ Յովսէփ Էմինը որոնք Հայաստանի ազատութեան եւ անկախութեան գաղափարի առաջին ռահվիրաները եղան:

Հայ Մարդասիրական Ձեմարանը թէեւ նիւթապէս եւ իրաւապէս բոլորովին անկախ է եւ կրնայ ուրիշ առեն գործադրել զուտ ազգային ծրագիրը, բայց որպէսզի հայ ուսանողը ազատ մուտք ու դիւրութիւն ունենայ պետական բարձրագոյն վարժարաններ եւ համալսարաններ մտնելու, կառավարական ծրագիրին է որդեգրուած: Ձեմարանը բաղկացած է տասը դասարաններէ: Դասաւանդութիւնը աւելի շատ անգլերէնի լեզուով է քան հայերէնով: Բայց դասերէն զուրս, բոլոր ուսանողները կը խօսին Արեւելահայ գրական մաքուր լեզուն:

Ձեմարանի ուսանողներն են որոնք գաղութին հայկական գոյն ու փայլ կուտան: Ազգային տօնները ամէն տարի կը տօնուին մեծ չուքով, ինչպէս Վարդանանց սրբազան տօնը:

Պատերազմի պատճառով ուսանողներու թիւը զգալիօրէն պակաս է որովհետեւ Նոր Զուղան կամ Պարսկաստանը անցեալի պէս չեն կրնար ապահերաններ ղրկել Կալկաթա:

Ուսուցչական կազմը բաղկացած է ութը հայ, չորս օտար ուսուցիչներէ: Ներկայիս տնօրէնն է Պ. Ներսէս Յակոբեան որ Աստուածաբանութեան դասընթացքը աւարտած է Անգլիա: Անոր միակ ցանկութիւնն է պատրաստել սերունդ մը որուն կեանքը եւ գաղափարները չի խայտաճեւեն ազգած կեանքը եւ գաղափարները չի խայտաճեւեն Աւետարանի ուղիղ վարդապետութեան հետ:

Անցեալ տարի Ձեմարանը չահեցաւ փառաւոր յաղթանակ մը, որուն նմանը տեղի ունեցած չէ Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ձեմարանը, մուտաւոր վարարանը: Քանի սերունդներ են այդ սրբավայրին մէջ բարձր ու վսեմ իտէալներով եւ ազգապահպանական իրրեւ ազատութեան ջահակիրները ազգային հոգին հրահրել: Որո՞ն ծանօթ չէ Իսրայէլ Օրին, կամ Յովսէփ Էմինը որոնք Հայաստանի ազատութեան եւ անկախութեան գաղափարի առաջին ռահվիրաները եղան:

Հայ Մարդասիրական Ձեմարանը թէեւ նիւթապէս եւ իրաւապէս բոլորովին անկախ է եւ կրնայ ուրիշ առեն գործադրել զուտ ազգային ծրագիրը, բայց որպէսզի հայ ուսանողը ազատ մուտք ու դիւրութիւն ունենայ պետական բարձրագոյն վարժարաններ եւ համալսարաններ մտնելու, կառավարական ծրագիրին է որդեգրուած: Ձեմարանը բաղկացած է տասը դասարաններէ: Դասաւանդութիւնը աւելի շատ անգլերէնի լեզուով է քան հայերէնով: Բայց դասերէն զուրս, բոլոր ուսանողները կը խօսին Արեւելահայ գրական մաքուր լեզուն:

Ձեմարանի ուսանողներն են որոնք գաղութին հայկական գոյն ու փայլ կուտան: Ազգային տօնները ամէն տարի կը տօնուին մեծ չուքով, ինչպէս Վարդանանց սրբազան տօնը:

Պատերազմի պատճառով ուսանողներու թիւը զգալիօրէն պակաս է որովհետեւ Նոր Զուղան կամ Պարսկաստանը անցեալի պէս չեն կրնար ապահերաններ ղրկել Կալկաթա:

Ուսուցչական կազմը բաղկացած է ութը հայ, չորս օտար ուսուցիչներէ: Ներկայիս տնօրէնն է Պ. Ներսէս Յակոբեան որ Աստուածաբանութեան դասընթացքը աւարտած է Անգլիա: Անոր միակ ցանկութիւնն է պատրաստել սերունդ մը որուն

Տարեկան շնորհավոր պատուհան

Փարիզի Հայ Տիկնոջ Միության Դպրոցական Հայկական պատուհանը ցերեկույթ մը կազմակերպած է Մարտ 8-ին, Կիրակի, ժամը 3-ին, Մեծ Սրահին մեջ, 43 Bld. Raspail, Paris:

Տարեկան ընդհանուր ժողով Կիրակի, Մարտ 15-ին, ժամը 3-ին, Մեծ Սրահին մեջ, 43 Bld. Raspail, Paris:

ՍՈՒՆԱԼՈՒՄ – ՄԱՆԱՑԱՔ

Հայկական Կենտրոնական Կոմիտէն Հայրենասէր Միութեան Սունալումի Մասնաճիւղին հրաւիրած է Մարտ 11-ին, Կիրակի, ժամը 11-ին, Մասնաճիւղին Սրահին մէջ, Տարեկան Ընդհանուր Ժողովի մը, որուն Կեդրոնական Կոմիտէն ներկայացուցիչ մը պիտի ուղարկէ:

Ընդհանուր Ժողովի Օրակարգ մը պիտի ներկայացուի Կեդրոնական Կոմիտէի Ներկայացուցչին կողմէ:

Ներկայութիւնը անհրաժեշտ է:

Վարչութիւն

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ի. Ս. Դ. Ս.

Հայրենասիրական Միութեան Ֆրանսայի Մասնաճիւղերուն

Ի Յիշատակ Ազգային Հերոս Գարեգին Նժդեհի

Ի Յիշատակ Ազգային Հերոս Գարեգին Նժդեհի, Միութեան Ֆրանսայի Մասնաճիւղերը Կիրակի, Մարտ 15-ին, Առաւօտեան ժամը 10-ին, Ս. Խաչ Եկեղեցւոյ Մէջ, Պարտէզ, Պուլոնիա, Պատարագ մը Կը Մատուցանեն Հոգեհանգստեան Արարողութեամբ:

Ներկայ Կը Գտնուին Միութեան Բոլոր Անդամները Իրենց Դրօշակներով:

Ներկայ Կը Գտնուին Նաեւ Հայրենասիրական Միութեան Ֆրանսայի Ընկերական Միութիւն

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6 ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Vendredi 9 Janvier 1948 — Ուրբաթ 9 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5235-նոր շրջան թիւ 844 — Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՒԵԱՆ — ԳԻՆ՝ 5 Ֆր.

Թիչ տուրֆեր պիտի վճարէ

Պաշտօնաթերթը հրատարակեց տուրքերու ինչպէս նաեւ ելմտացոյցին հատատարակչութեան համար քուէարկուած նոր օրինագիծին տրամադրութիւնները :

Ստորեւ կուտանք յանկը այն տուրքերուն որոնք վճարելի են յունուար 1էն սկսեալ :—

Թոշակներ եւ օրավարձեր

Տուրքէ ղերծ է տարեկան ընդհանուր եկամուտին առաջին 96.000 Ֆրանքը : Տուրքի ենթակայ է վերոյիշեալ գումարը անցնող կոտորակը. սակը 15 առ հարիւր :

Ընտանեկան նպաստ

Առեւտրական, ճարտարարուեստական եւ արհեստագործ. գործառնութիւններէ ինչպէս նաեւ թոշակներէ եւ օրավարձերէ գոյացած եկամուտներէն կը զեղչուին հետեւեալ գումարները. — 15 առ հարիւր երբ ընտանիքի մը մէջ կան երկու անչափահաս երախաներ (մինչեւ 16 տարեկան). 45 առ հարիւր երրորդ երախային համար : Այս զեղչերուն գումարը պէտք չէ անցնի 4000 Ֆրանքը առաջին պարագային իսկ 12.000 Ֆրանքը երկրորդ պարագային :

Մի ամնուազ եկամուտ ունեցող առեւտրականներ.— Անոնք որոնց տարեկան եկամուտը նախատեսուած է :—

20 առ հարիւր մինչեւ 25.000 Ֆրանք, 30 առ հարիւր մինչեւ 35.000 Ֆրանք, 40 առ հարիւր մինչեւ 50.000 Ֆրանք, 50 առ հարիւր մինչեւ 50 հազարէն վեր գումարներու համար :

Ազատ ասպարէզներու հետեւողներ

25 առ հարիւր, ընդհանուր գումարէն 10.000 Ֆրանք զեղչուելէ ետք : Այս զեղչը մինչեւ 40.000 Ֆրանքի կը բարձրանայ եթէ ինդրոյ առարկայ անձը հինգ տարիէն պակաս ժամանակէ մը ի վեր կը զբաղի իր ներկայ գործով եւ իր եկամուտին գումարը 200.000էն աւելի չէ :

Եկամտահարկ տուրք

20 առ հարիւր 450.000էն մինչեւ 1 միլիոն (առանց զաւակի) : 600.000էն մինչեւ 1 միլիոն (մէկ կամ երկու զաւակ), 750.000էն 1 միլիոն (երեք կամ չորս զաւակ), 850000էն 1 միլիոն (առնուազն հինգ զաւակ) :

30 առ հարիւր երբ եկամուտը 1 միլիոնէն մինչեւ 3 միլիոն է :

40 առ հարիւր երբ եկամուտը 3 միլիոնէն բարձր է :

Ինչ վաճառք պիտի վճարէ

ՀՆԱԿԱՐԱՆՆԵՐ.— 70 առ հարիւր աւելի այն գումարէն որ վճարած էիք 1943ի Ապրիլ - Յունիս եռամսեայի համար, եթէ ձեր բնակած չէնքը չնուաճած էր 1914էն առաջ : 35 առ հարիւր աւելի այն գումարէն որ վճարած էիք 1939ի Յուլիս — Հոկտեմբեր եռամսեայի համար, եթէ ձեր բնակած չէնքը չնուաճած էր 1914էն 1939 :

ՀՆԱԿԱՐԱՆ - ԱՇԽԱՏԱՆՈՑ.— Եթէ ձեր բնակարանն ու աշխատավայրը միեւնոյն հասցէն ունին, պիտի վճարէք վերոյիշեալ գումարը եւ յաւելուածական 10 առ հարիւր աշխատավայրի վերաբերուած մասին համար :

Վերոյիշեալ յաւելումներէն զերծ են Ա.— Անոնք որոնց տարեկան եկամուտը 40.000էն աւելի չէ (մէկ հոգի) կամ 60.000էն աւելի չէ (երկու հոգի) : Բ.— Այն աշխատաւորները որոնց ընտանիքի անդամներուն հաւաք. օրավարձերը ամսական նուազագոյն 10.920 Ֆրանքին հարիւրին 120էն վար են :

×

Ֆրանսայի 1948ի ելմտացոյցը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.— Հասոյթներ՝ 913 միլիառ Ֆրանք : Ծախքեր.— Պետական սովորական ծախքեր 415 միլիառ, արտասովոր՝ 55 միլիառ, վիճուրական ընթացիկ ծախքեր 205 միլիառ, արտասովոր 45 միլիառ :

★ Համաձայն ամերիկեան կառավարութեան հրատարակած ցուցակին, Ֆրանսա՝ 1948 Ապրիլէն մինչեւ 1952ի յունիս ամիսը Մարշալ Նահանգներէն պիտի ստանայ հետեւեալ ապրանքները (Մարշալի ծրագիրը).—

Ցորեն.— 750.000 թոն, զանազան արմտիքներ՝ 300.000 թոն, ճարպեղէն եւ իւղ՝ 183 հազար թոն, կաթնեղէն (պանիր եւայլն) 63 միլիոն 500.000 տոլարի արժողութեամբ, թարմ պտուղ՝ 229 հազար թոն, ծխախոտ՝ 32.700.000 տոլարի արժողութեամբ, բամպակ՝ 539 հազար թոն, ածուխ՝ 22.636.000 թոն, ատաղձ՝ 35.900.000 տոլար արժողութեամբ, պղպեղ եւ պղպատ 3 միլիոն թոն, բեռնակառքեր 4800 հատ, երկրագործական մեքենաներ՝ 188.3 միլիոն տոլար արժողութեամբ, ինչպէս նաեւ մեծաքանակ էլեկտրական եւայլ տեսակի գործիքներ ու մեքենաներ :

★ Հանրապետութեան նախագահը չորեքշաբթի օր անգլեւամերիկեան մամուլի ընկերակցութեան կողմէ իրեն ի պատիւ տրուած հացկերոյթի մը ընթացքին խօսք առնելով, կոչ ըրաւ Եւրոպայի ժողովուրդներուն որ գործակցին Եւրոպայի վերակազմնուազ բերնականացնելու համար : Նախագահը գնահատական քառերով ողջունեց Մարշալի ծրագիրը եւ բացատրեց թէ Ֆրանսա որքան երախտապարտ է Ամերիկայի : Եթէ պատերազմ չենք ուզեր, պարտաւոր ենք խաղաղութիւնը կազմակերպել ըսաւ Պ. Վէնսան Օրիոլ :

Ցունուսատանի դէպքերը

Վարչապետ Սոֆուլիս յայտարարեց չորեքշաբթի օր թէ հելլէնական բանակը կրնայ չախչախել Մարկոսի ապստամբական չարժումը, առանց Ամերիկայի զինուորական միջամտութեան, պայմանաւ, սակայն, որ պէտք եղած զէնքերը հայթայթուին եւ ապստամբները նոր օժանդակութիւն չստանան ուրիշ տեղերէ : Վարչապետը կը պահանջէ նոր թնդանօթներ եւ դնդացիրներ : Ամերիկեան առաքելութեան վարիչը չորեքշաբթի օր Ուոշինկթընէն Աթէնք վերադարձաւ եւ տեսակցութիւն ունեցաւ վարչապետին հետ :

Աթէնքի մամուլին մէկ մասը կը դանդաղի թէ մինչեւ հիմա տրուած օգնութիւնը անբաւական է : Տարաձայնութիւններ կան թէ Մոսկուա մնձաքանակ ռմբակիզ օդանաւեր ղրկած է ապստամբ զինուորականին որուն բանակը կը մարզուի Ալպանիոյ մէջ : Ամերիկեան նաւատորմիղը պէտք է եղէականի ջուրերը մտնէ, կը պահանջեն կարգ մը թերթեր :

★ Ինչպէս արդէն կը նախատեսուէր, Ամերիկեան եւ բրիտանական կառավարութիւնները պաշտօնապէս ազդարարած են Գուլկարիոյ, Նուկոսլաւիոյ եւ Ալպանիոյ կառավարութեանց որ չճանչնան հելլէն ապստամբ Մարկոսի «կառավարութիւնը» : Այս լուրը կ'ըսուի որ Լոնտոնի եւ Ուոշինկթընի պաշտօնական շրջանակներէն : Ազդարարութիւն եղած չէ Ուսանիոյ քանի որ այդ երկիրը նուազ չափով կապ ունի Ցունաստանի դէպքերուն հետ :

ՊԱՂԵՍՏԻՆԻ ԿԻԻԻՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Չորեքշաբթի օր Հրեաները երկու ռումբեր նետեցին Եաֆայի կեդրոնը, եւ սպաննեցին 8 Արաբներ եւ 2 Հայեր : Վիրաւորուած են 42 Արաբներ : Ութերը նետող ահաբեկիչներէն երեքը սպաննուեցան բրիտանացի զինուորներուն արձակած զնդակներէն : Մահացեալ երեքը ձերբակալուած են : Մինչեւ հիմա սպաննուած են 621 հոգի :

Պէյրութի համալսարանին հրեայ ուսանողները հրաման ստացած են երկրէն հեռանալու :

ՍՈՖԻԱՆՑԷՆ կը հաղորդեն որ վարչապետ Կէորկի Տմիթրով մօտ օրէն Պուքրէշ պիտի երթայ բարեկամական դաշնագիր մը ստորագրելու համար ռումանական կառավարութեան հետ :

ԹՈՒՐՔԻՈՑ Ազգային ժողովը քուէարկեց 1948ի ելմտացոյցը : Ընդհանուր ծախք նախատեսուած է 1.243.365.697 թրք. ոսկի (մօտաւորապէս 110 միլիոն սթերլին) : Զինուորական պէտքերու յատկացուած է 376.934.895 թրք. ոսկիի վարկ մը : Այս գումարին վրայ կրնայ բարձրանալ 170 միլիոն եւս : Այս հաշիւով Թուրքիոյ ընդհանուր հասոյթներուն 45 առ հարիւրը յատկացուած է բանակին, նաւատորմին եւ օդային ուժին :

ՖՐԱՆՍԱԿԱՆ կառավարութիւնը որոշած է երկիրը ուղղել « պաշտպանողական չրջանակ»ու բաժնել : Իւրաքանչիւր չրջան պիտի ունենայ մարզպան մը որուն պաշտօնը պիտի ըլլայ ամրապնդել կառավարութեան հակակշիռը ընդհանուր գործադուլի մը կամ խռովութեան մը պարագային :

Մարզպանները պատասխանատու պիտի ըլլան օրէնսդիր մարմինին եւ իրենց իշխանութիւնները պիտի ըլլան աւելի լայն քան քաղաքապետներուն իրաւասութիւնները :

ՍՄԻՖԻԱՆՑԷՆ կը հաղորդեն որ վարչապետ Կէորկի Տմիթրով մօտ օրէն Պուքրէշ պիտի երթայ բարեկամական դաշնագիր մը ստորագրելու համար ռումանական կառավարութեան հետ :

ԹՈՒՐՔԻՈՑ Ազգային ժողովը քուէարկեց 1948ի ելմտացոյցը : Ընդհանուր ծախք նախատեսուած է 1.243.365.697 թրք. ոսկի (մօտաւորապէս 110 միլիոն սթերլին) : Զինուորական պէտքերու յատկացուած է 376.934.895 թրք. ոսկիի վարկ մը : Այս գումարին վրայ կրնայ բարձրանալ 170 միլիոն եւս : Այս հաշիւով Թուրքիոյ ընդհանուր հասոյթներուն 45 առ հարիւրը յատկացուած է բանակին, նաւատորմին եւ օդային ուժին :

ՖՐԱՆՍԱԿԱՆ կառավարութիւնը որոշած է երկիրը ուղղել « պաշտպանողական չրջանակ»ու բաժնել : Իւրաքանչիւր չրջան պիտի ունենայ մարզպան մը որուն պաշտօնը պիտի ըլլայ ամրապնդել կառավարութեան հակակշիռը ընդհանուր գործադուլի մը կամ խռովութեան մը պարագային :

Մարզպանները պատասխանատու պիտի ըլլան օրէնսդիր մարմինին եւ իրենց իշխանութիւնները պիտի ըլլան աւելի լայն քան քաղաքապետներուն իրաւասութիւնները :

Նախագահի Թրումընի ճառը

Միացեալ Նահանգներու նախագահը, Պ. Թրումընը, չորեքշաբթի օր Միսսիսիփին եւ երեսփոխանական ժողովին խառն նիստին մէջ քաղաքական կարեւոր ճառ մը խօսելով յանձնարարեց որ քուէարկուի Մարշալի ծրագիրը որուն մանրամասնութիւնները մամուլին յանձնուած էին քանի մը ժամ առաջ : Կուտանք իր ճառին դլխաւոր մասերը.—

«Ես համոզուած եմ որ այս ծրագիրը դրական արդիւնքներ պիտի տայ : Եւրոպայի տնտեսական վերականդնումով, իր ճարտարարուեստին արդիւնքը օգտակար պիտի ըլլայ նաեւ տնտեսապէս քայքայուած ուրիշ չրջաններու համար : Մեր նպատակն է գործակցիլ բոլոր ազդերուն՝ ամբողջ աշխարհի տնտեսական վերելքը իրականացնելու համար : Պիտի չարունակենք գործակցիլ արեւմտեան կիսագունդի ժողովուրդներուն հետ : Մարզրդարանին պիտի ներկայացնենք Զինաստանին տրամադրական օգնութիւն փութացնելու ծրագիր մը : Դժբախտաբար կան երկիրներ որոնք չեն կրնար թէ աշխարհի վերականդնումը կրնայ իրականանալ ազդերու համերաշխ գործակցութեամբ : Հակառակ այդ տարակարծութեան, մենք պիտի չարունակենք մեր ճիգերը : Ոչ մէկ ազդ կրնայ ինքնիրեն իրագործել այդ ծրագիրը. բայց, անտարակոյս, առաջնորդի դերը պիտի կատարենք մենք :

Շատ կենսական է որ խորհրդարանը քուէարկէ Եւրոպայի օգնութեան օրինագիծը որուն դործադրութիւնը պէտք է սկսի ապրիլ 1ին եւ չրանայ 1952 յունիս 30ին : Առաջին 15 ամիսներուն, պիտի յատկացնենք 6.800 միլիոն տոլար : Մենք կրնանք դիմանալ թշուառութեան, անօթութեան եւ տառապանքին դէմ այս ծրագիրը մեզի խաղաղութեան կ'առաջնորդէ, ոչ թէ պատերազմի» :

Խօսելով ներքին խնդիրներու մասին, նախադահը դիտել տուաւ որ Ամերիկա կը հետապնդէ հինդ դլխաւոր նպատակներ.— Ա.— Ապահովել քաղաքացիին մարդկային կենսական իրաւունքները : Բ.— Պաշտպանել ու զարդացնել մեր ազդութիւնները : Գ.— Տրամադրել մեր ազդային հարստութիւնները ժողովուրդին բարօրութեան : Դ. — Բարձրացնել ժողովուրդին կենցաղի պայմանները եւ ուժեղացնել մեր տնտեսական կարդուսարքը որպէսզի ամէն քաղաքացի հաւասար չափով օգտուի մեր արտադրութիւններէն. Ե.— Իրագործել համաչխարհային խաղաղութիւնը որ հիմնուած պէտք է ըլլայ ազատութեան եւ արդարութեան ինչպէս նաեւ ազդերու հաւասարութեան սկզբունքին վրայ :

Նախագահը դիտել տալէ ետք թէ արժեզրկումի վտանգ կայ Ամերիկայի մէջ եւ դիները հետզհետէ կը բարձրանան, առաջարկեց կարգ մը ելմտական բարեկարգումներ — քառատոկոսը տալով դեղչել իւրաքանչիւր Ամերիկացիի եկամտային տուրքէն, աշխատանքի ժամական սակը բարձրացնել 75 սէնթի, վարձքերու հակակչիռը չարունակել :

Մօտ օրէն նախագահը խորհրդարանին պիտի ներկայացնէ օրինագիծ մը որ կ'առաջարկէ ընդլայնել խորհրդարանի անդամներուն ապահովութեան մասին :

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՄԻԱՑԵԱԼ ԱԶԳԵՐՈՒ չրջանակներուն մէջ մեծ մտահոգութիւն կը տիրէ Պաղեստինի քննիչ յանձնաժողովին անդամներուն ապահովութեան մասին :

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ իշխանութիւնները յայտարարեցին չորեքշաբթի օր թէ վերջ պիտի տան Հայկական զաղտնի ընկերակցութեան գործունէութեան :

ՔՍԱՆԸՄԼԻ պելճիքացիներ մահուան դատապարտեցան պելճքսէլի զինուորական դատարանին կողմէ, ամբաստանուածքլլալով թէքամմաթիւ ռճիրներ գործած էին պատերազմի ընթացքին : 14 ամբաստանեալներ ցկեանս բանտարկութեան դատապարտուեցան :

ԳԵՐՄԱՆԻՈՑ բրիտանական եւ ամերիկեան գօտիներու իշխանութիւնները չորեքշաբթի օր գեմման քաղաքական ղեկավարներուն առաջարկեցին առժամեայ կառավարութիւն մը հաստատել երկու գօտիներուն մէջ հետեւեալ պայմաններով.— Ա.— կրկնապատկել Միացեալ գօտիներու տնտեսական խորհուրդին անդամներուն թիւը եւ ընդլայնել անոր իրաւասութիւնները.— Բ.— Հաստատել օրէնսդիր երկրորդ ժողով մը՝ ամերիկեան ձեւակոյտին տրուած իրաւունքներով : Գ. — Նշանակել գործադիր իշխանութիւն մը որ վարչականին մէջ պիտի ըլլայ դահլիճ մը : Դ.— Հիմնել գատարան մը՝ տնտեսական խորհուրդին օրէնքներու գործադրութեան համար. Ե.— Բանայ դրամատուն մը՝ Զինուորական Մարմնին հակակչիռին ենթակայ :

Ինչպե՞ս ձեռք բերել ավտոմեքենա

Ավտոմեքենա ձեռք բերելու համար անհրաժեշտ է ունենալ ավտոմեքենայի գնման հատուկ տոմս։ Տոմսերը վաճառվում են ավտոմեքենայի առևտրի կազմակերպությունների կողմից։

Ավտոմեքենայի տոմսերի վաճառքի կարգը սահմանվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի առևտրի գործերի կոմիտեի կողմից։

Ավտոմեքենայի տոմսերը վաճառվում են ամենուրեք՝ առանց որևէ բացառության։

Ավտոմեքենայի տոմսերի վաճառքի կարգը հրապարակվում է մամուլում։

Ավտոմեքենայի տոմսերի վաճառքի մասին հայտարարությունները տպագրվում են նաև ռադիոյով։

Ավտոմեքենայի տոմսերի վաճառքի մասին հայտարարությունները պարունակում են տոմսերի վաճառքի սկզբի և վերջի ամսաթվերը, ինչպես նաև տոմսերի վաճառքի կետերի ցանկը։

Ավտոմեքենայի տոմսերը վաճառվում են ամենուրեք՝ առանց որևէ բացառության։

Ավտոմեքենայի տոմսերի վաճառքի մասին հայտարարությունները պարունակում են տոմսերի վաճառքի սկզբի և վերջի ամսաթվերը, ինչպես նաև տոմսերի վաճառքի կետերի ցանկը։

Ավտոմեքենայի տոմսերի վաճառքի կարգը հրապարակվում է մամուլում։

Ավտոմեքենայի տոմսերի վաճառքի մասին հայտարարությունները տպագրվում են նաև ռադիոյով։

Ավտոմեքենայի տոմսերի վաճառքի մասին հայտարարությունները պարունակում են տոմսերի վաճառքի սկզբի և վերջի ամսաթվերը, ինչպես նաև տոմսերի վաճառքի կետերի ցանկը։

Ավտոմեքենայի տոմսերը վաճառվում են ամենուրեք՝ առանց որևէ բացառության։

Ավտոմեքենայի տոմսերի վաճառքի կարգը հրապարակվում է մամուլում

ւելի լացուց բոլորը: Երանի թէ Հայր Կոդեան գրի առնէր եւ մամուլին տար զայն:

Ամէն բան անցաւ խաղաղ եւ կարգին, ինչպէս ոչ կ'ակնկալուէր ու հարկ էր որ ըլլար: Շքեղ ու պատկառազդու եկեղեցին իր աքանչելի երեք խոյաններով, իր Աստուածաշնչական յաղթ պատկերներով, դունատուր ապակիներէն ներս մաղուող արեւի չողերով կը թողուր աքանչելի տպաւորութիւն, եւ կը մղէր երկիւղածութեան եւ վերացման:

Ունկնդրելով պատարագիչի հանդիսաւոր ու հաճելի ձայնին, կը մտածէի մեր չատ սիրելի Գուրգէնի մասին...: Ինչ արդար հպարտութեամբ կը պատմէր Փարիզի Նօթր Տամի մէջ ամէն տարի Ծնունդի յաղթող չարթուն իր զեկավարած հայկական պատարագի մասին. «Կը հեռարձակեն Ֆրանսայի ամէն կողմը, իսկ եկեղեցիին մէջ, լացող լացողի»,— կ'ըսէր ան երջանիկ: Ծուղումէն լացնելը արուեստի գերագոյն յաղթանակն էր երկին համար:

Իսկ հիմա՞, Գուրգէն ջան, հիմա մենք ինչո՞ւ կուլանք ...

Այժմ, բախտի մէկ տխուր հեղնանքով հաւաքուած ենք Նիւ Եորքեան աղօթատեղիի մը մէջ, քեզ համար մատուցուող հոգեհանդստեան պատարագին ունկնդրելու...: Ալ մեղի հետ պիտի չբաժնես երազներդ ու ծրագիրներդ, որոնք սահման չունէին: Ալ պիտի չլսենք զուարթ ու քաղցր ծիծաղդ, որ այնքան վարակիչ էր: Ալ պիտի չհանդուրժուինք բարձրացող աստղիդ ի խնդիր, որովհետեւ ան մարեցաւ անժամանակ:

Պատարագը կը յառաջանայ. նոր, ուշացած այրեր ու կիներ կը հասնին, կ'աղօթեն, կը խաչակնքեն ու կը կենան պատուր: Երբ «Ի վերին Երուսաղէմ»ի առաջին խազերը կ'արձագանգեն եկեղեցիի բարձր կամարներուն տակ, մինչեւ այդ պահուած յուզումները կը յորդին, կը պոռթկան. կը քանդուին ամբարտաւանութիւններ ու լացը կը սկսի՝ աղէկն, ձախէն, առջեւէն ուետեւէն՝ խոր, անվերջ, վարակիչ:

Մարմինը ուսամարձ դուրս կը հանեն եկեղեցիէն, մինչ երդչախումբը, վերէն, այս անգամ Միհրան Թումաճանի առաջնորդութեամբ, կ'երգէ Ալէմշահի այնքան յուղիչ «Աւարայր»ի չարականը:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ եղան Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան, որուն մէկ աշխարհիկ սանն էր ինք:

Փարիզի իր զեկավարած «Սիխան Կոմիտաս երգչախումբ»ի հետաձգումով խնդրանքին վրայ, Փիլմի առնուելու ամբողջ ապարդիւնքը:

Մարմինը, բազմաթիւ կառքերու ուղեկցութեամբ տարուեցաւ պահ դրուելու Քլիվըրի գերեզմանատան պահարանը, մինչեւ հանդուցեալ արուեստագէտին եղբօր ժամանումը, Փարիզէն:

Հաղար ափսոս, սիրելի Գուրգէն, քեզ կորսնցնելու մեր ցաւը այնքան մեծ է, որքան մեծ էր քեզ տեսնելու մեր ուրախութիւնը: Բայց որքան սիրով պիտի հրաժարէինք անկէ, եթէ միայն դուն դեռ ապրէիր, հոգ չէ թէ հեռու. միայն թէ ապրէիր ու ստեղծագործէիր...

Հողը թեթեւ դայ վրադ, Գուրգէն ջան:

«Հայրենիք» Ա. Հ.

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՄԱՆԱԳԻՆի (Իրաք) հայ գաղութը կը հաշուէ չուրջ 30 տուն եւ աւելի քան 20 տարուան կեանք ունի: Բաղկացած մեծ մասամբ արհեստաւորներէ, կ'աշխատին անդլ. K. O. C. քարիւղի ընկերութեան մէջ, քաղաքին մօտ 5 քիլոմեթր հեռու: Փոքր մաս մըն ալ կ'ապրի քաղաքը, զանազան զբաղումներով: Հակառակ անոր որ մեծ կեդրոններէ կարուած եւ ինք իր մէջ ամփոփուած գաղութ մըն է, սակայն չնորհիւ իւրաքանչիւր անհատի պարտականութեան գիտակցութեան, կրցած է պահել իր ազգային դիմագիծը, ձգտելով լաւագոյնս կազմակերպել եւ վարել իր առօրեայ ընթացիկ կեանքը:

Հասարակական կազմակերպութիւններէն գոյութիւն ունի միայն Ի. Հ. Կ. խնամակալութեան մասնաճիւղը որ կը բաղկանայ մօտ 45 անդամուհիներէ: Մասնաճիւղը չնորհիւ իր յաջողակ վարչութիւններու ժրաջան աշխատանքին, անցնող երեք տարիներու ընթացքին կրցած է կեդրոնական վարչութեան դանձարկղը մոցնել աւելի քան 300 իրաքեան տինար: Երկու տարիէ ի վեր գաղութը ունի իր մանկապարտէզը: Մանկապարտէզի սիւռճէն կազմուած է ծնողներու տուած դրամով եւ Ի. Հ. Կ. խնամակալութեան պատգամատուական ժողովի, քուէարկած տարեկան 50 տինարի նպաստով:

Ինչպէս միշտ, ընթացիկ տարուան մէջ ալ տօնուեցան Ապրիլ 24ի Նահատակաց Սգատօնը եւ Մայիս 28ի մեր անկախութեան հիմնադրութեան պատմական թուականը: Գաղութը տօնեց նաեւ Հ. Օհանջանեանի եւ Ն. Աղբալեանի մահուան տարեդարձները: Գաղտատի կրօնական խորհուրդէ ուշադրութեան կը յանձնուի հոգեւոր հովիւներու այցելութեանց պակասը:

1947ի կարեւոր թուականները

(Բ. եւ վերջին մաս)

ՅՈՒԼԻՍ.— 2.— Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ արտաքին նախարարներու ժողովը կը վակուի:

3.— Անգլիա եւ Ֆրանսա կ'որոշեն տնտեսական խորհրդաժողովի մը հրաւիրել եւրոպական պզդերը:

5.— «Համագործին»ի ճեմարանը կ'օժտուի սեփական չէնքով:

6.— Սպանիոյ հանրաքուէին մէջ կը չահի Ֆրանքօն:

9.— Ազինքի մէջ կը ձերբակալուին համայնավար զեկավարները:

11.— Չեխոսլովաքիա կը մերժէ մասնակցիլ տնտեսական խորհրդաժողովին:

12.—Կը բացուի Եւրոպայի տնտեսական խորհրդաժողովը:

22.— Ռուսիա կը մերժէ մասնակցիլ Ճափոնի դաշնագրին համար Ամերիկայի կողմէ առաջարկուած խորհրդաժողովին:

29.— Ռումանիոյ մէջ կը լուծուի գիւղացիական կուսակցութիւնը:

31.— Մահ ողբ. ընկ. Համօ Օհանջանեանի:

31.— Ազգերու Դաշնակցութիւնը վերջնական կերպով կը լուծուի:

ՕԳՈՍՏՈՍ, 1.— Մահ նկարիչ Շարլ Ադամեանի:

15.— Մահ ողբ. ընկերը Նիկոլ Աղբալեանի:

15.— Հինդիստան եւ Փաքիստան անկախութիւն կը առնեն:

16.— Մահուան կը դատապարտուի Պուլիար ընդվզադիր Նիթզլա Փէթքով:

21.— Միացեալ Ազգերը կը մերժեն Գերմանիոյ հինգ արբանեակներուն անդամակցութիւնը:

29.— Ցունաստանի վարչապետ կը նշանակուի Ցալտարիս:

31.— Համայնավարները կը չահին Հունգարիոյ ընտրութիւններուն մէջ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2—. Բիօ տը Եանէյրոյի մէջ կը ստորագրուի համամերիկեան պաշտպանութեան դաշնագիրը:

4—. Մահ Տօքթ. Նէվրուզի:

4.— Եդիպտոսի Ա. կարաւանը կը մեկնի:

6.— Ներդաղթի Ա. կարաւանը կը մեկնի Ռուսիա չոգենաւով Մարսէյլէն:

7.— Ցունաստանի նոր վարչապետ կը նշանակուի Սօֆուլիս:

10.— Թուրքիոյ վարչապետ կը նշանակուի Հասան Սաքա:

15.— Փարիզի մէջ կը ստորագրուի իտալական դաշնագիրը:

16.— Միացեալ Ազգերու տարեկան համագումարը կը բացուի Նիւ Եորքի մէջ:

18—. Վիչինսքի կ'ամբաստանէ Ամերիկան թէ նոր պատերազմ մը կը պատրաստէ:

25.— Քոլերայի համաճարակ Եգիպտոսի մէջ:

25.— Մահ ողբ. ընկեր Լիպարիտ Նազարեանցի:

30.— Փաքիստան եւ Եգիպտն Միացեալ Ազգերու անդամ կը նշանակուին:

ՀՈԿՏԵՄԲԵՐ, 3.— Լոնտոնի մէջ կը բացուի արտաքին փոխ նախարարներու խորհրդաժողովը՝ իտալական դաղթավայրերու հարցը քննելու համար:

5.— Կը հրատարակուի կոմինֆորմի կազմութեան լուրը:

11.— Ամերիկա կը յայտարարէ թէ համաձայն է Պաղեստինը բաժնելու ծրագրին:

14.— Փարիզի փոստուղիին գործադուլը կը սկսի:

19—. Ֆրանսայի Թաղապետական ընտրութեանց մէջ կը չահի զօր. տը Կոլ:

21.— Միացեալ Ազգերը կը նշանակեն պալքանեան յանձնաժողով մը:

22.— Կը վերակաղմուի Բամատիչի դահլիճը:

22.— Իրանի խորհրդարանը չեղեալ կը յայտարարէ Ռուսիոյ հետ կնքուած քարիւղի համաձայնութիւնը:

24.— Վիչինսքի Միացեալ Ազգերու ժողովին մէջ կը յայտարարէ թէ Կարօլը եւ Ամերահանր վրացական են եւ պէտք է Վրաստանի վերադարձուին:

25.— Լեհաստանի ընդդիմադիր առաջնորդ — ներքին Միխոլայչիք — նախկին վարչապե տ— արտասահման կը մեկնի դաղտնաբար:

27.— Զօր. Տը Կոլ կ'առաջարկէ խորհրդարանին լուծումը եւ սահմանադրութեան վերաքննութիւնը:

30.— Բամատիչ վստահութեան քուէ կը ստանայ խորհրդարանէն:

ՆՈԵՄԲԵՐ, 1.— Անգլիոյ Թաղապետական ընտրութեանց մէջ կը չահին պահպանողականները:

6.— Ռումանիոյ արտաքին նախարարուհի կը նշանակուի համայնավար Աննա Փաուքէր:

11.— Խառնակութիւններ Մարսէյլի մէջ:

12.— Ընդհանուր գործադուլ Միլանի մէջ:

16.—Կը յետաձգուի Ֆրանսայի Ներդաղթի Բ. կարաւանին մեկնումը:

17.— Համաստարած գործադուլ Ֆրանսայի մէջ:

19.— Վարչապետ Բամատիչ կը հրաժարի:

20.— Անգլիոյ գահաժառանգուհին կ'ամուսնայ:

22.— Պ.Բոպէր Շումանֆրանսայի վարչապետ:

24.— Գործադուլները կը տարածուին ամբողջ Ֆրանսայի մէջ:

25.— Լոնտոնի մէջ կը բացուի Զորսերու խորհրդաժողովը:

29.— Միացեալ Ազգերը կ'ընդունին Պաղեստինի բաժանման ծրագիրը:

ԴԵԿՏԵՄԲԵՐ, 9.— Ռուսիա կը խզէ Ֆրանք-եւխորհրդային առեւտրական բանակցութիւնները:

14.— Տիէթրոյթի մէջ յանկարծամահ կ'ըլլայ եբրայ-չռազէտ Գուրգէն Ալէմշահ:

14.— Անգլիոյ մէջ կը մեռնի նախկին վարչապետ՝ Լորտ Պոլտուին:

15.— Լոնտոնի խորհրդաժողովը կը ձախողի:

15.— Ռուսիա կ'արժեզրկէ լուսպլին եւ կը ջնջէ բաժնեչափի դրութիւնը:

19.— Ֆրանսայի Աշխատաւորներու Դաշնակցութենէն կը բաժնուին ոչ-համայնավար Արհեստակցականները:

19.— Նախագահ Թրումըն խորհրդարանէն կը պահանջէ 17 միլիառ տոլար՝ Եւրոպայի համար:

23.— Ներդաղթի Բ. կարաւանը կը մեկնի Մարսէյլէն:

24.— Ապատամբ «կառավարութիւն» մը կը կազմուի հիւս. Ցունաստանի մէջ:

28.— Մահ Իտալիոյ գահընկէց Թագաւոր, Վիքթոր Էմանուէլի:

29.— Ողողումներ արեւելեան Ֆրանսայի մէջ:

30.— Ռումանիոյ Թագաւորը կը հրաժարի, հանրապետութիւնը կը հռչակուի:

Հ. Մ. Ը. Մ.Ը ՄԱՐՍԷԼԻ ՄԷՋ

Coupe de Provenceի խաղարկութեան համար Հ. Մ. Ը. Մ.ի վիճակուած էր մրցիլ Gardanneի տեղական խումբին հետ:

Ամբողջ Gardanneի հայ եւ Ֆրանսացի մարզասէր հասարակութիւնը դիմած էր մարզադաշտը:

Շատ դժուարին խաղարկութենէ մը վերջ Հ. Մ. Ը. Մ.ը տարաւ յաղթութիւնը 2ի դէմ 1ով:

Մեր մարզիկները թէեւ ցոյց տուին գեղեցիկ ընկերական ֆութպոլի խաղարկութիւն մը, բայց ի գործ չդրին իրենց լաւագոյնը, անտարակոյս խնայելու համար իրենց ոյժերը ապագայ դէմ-տուելին մրցումներուն:

★ Այս կիրակի 11 Յունուար Port St. Louis du Rhôneի մէջ Հ. Մ. Ը. Մ.ը կը կատարէ ախոյեանական մրցում մը տեղացի խումբին դէմ:

Կը յուսանք որ մեր տղաքը ամէն ջանք ի գործ պիտի դնեն ձեռք ձգելու համար պատուաբեր արդիւնք մը: Ճամբորդութիւնը պիտի կատարուի Air Franceի, 40 հոգինոց օթօբառերով: Ամէն անոնք որ կ'ուզեն ընկերանալ մեր տղոց կանուխէն թող արձանագրուին: 250 Ֆրանք է ամէն մէկ աձի համար:

Ուրախութեամբ կը ծանուցանենք մեր մարզասէր հասարակութեան որ District de Provenceի Comité de Selectionի որոշումով Հ. Մ. Ը. Մ.ի ելիտասարդ մարզիկներէն Պ. Ֆէրմանեան, Պ. Գալուստեան, Պ. Աւետեան եւ Պ. Ղազարեան յաջողած են իրենց նուրբ խաղարկութեան շնորհիւ մաս կազմել Provenceի ներկայացուցիչ Cadet խումբին մէջ:— Վ. Շ.

ՁԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

ԼՒ. ՍԻՈՒԹ. — Կաղանդի առթիւ ընտանեկան ջերմ մթնոլորտի մը մէջ խնջոյք մը ունեցանք ընկեր Ց. Աճէմեանի բնակարանը՝ շրջանիս Դաշնակցական ընկերներուն եւ իրենց ընտանեկան պարագաներու ներկայութեամբ:

Ընկեր Աճէմեան խօսեցաւ մեր կուսակցութեան կատարած աշխատանքներուն խնչպէս նաեւ մեր նահատակ ընկերներու հայրենասիրական գործունէութեան մասին եւ յանձնարարեց ամուր կառչիլ Դաշնակցութեան դրօշին:

Կատակի համար աճուրդի դրուեցաւ նպաստատակի մը դլուխը: Արդիւնքը եղաւ 3400 Ֆրանք որուն 1700ը յանձնուեցաւ վերթերաններու հիմնադրամին, իսկ մնացեալը կապոյտ Աչքի տեղւոյս մասնաճիւղին:

ԿԸ ՆՇՈՒՐՈՒԻ Հ. Ց. Դ., կապոյտ Աչքի եւ զանազան կազմակերպութեանց գաւառի կոմիտէներէն եւ մարմիններէն որ ժողովներու եւ հանդէսներու ազդերը խմբագրատուն հասցնեն թուականէն առնուազն երեք օր առաջ:

Տարեվերջի ցուցակ
պարտատոմսերու

Փոխանցում Մեր Հայ Հիմնադրամի Ընթացիկ Հաշիւին Եւ Յանձնարարութիւն Ներկայացնելու Ձեր Բանկին Որ Ամսական 8 Փոխանցումներ Ընէ Մեր Հաշիւէն Ձեր Հաշիւին Մինչեւ Երկրորդ Ծանուցում։

Hôtel Lutétia, 15են մինչեւ 45 Bld. Raspail, Paris:

Տարեվերջի ցուցակ պարտատոմսերու Մեր Մարտկոցներուն Համար։

Ֆրանսերէն Հայերէն Ռուսերէն Տեղեկագիր Ամբողջ Ֆրանսայի Համար։

Ֆրանսայի Ամէնէն Մեծ Հրատարակութիւնը։

Ամէնէն Ընդարձակ Տարեցոյցը։

Ամէնէն Ճշգրիտ Տարեցոյցը։

Ամէնէն Ընդհանրական Տարեցոյցը։

Ամէնէն Ամբողջական Տարեցոյցը։

Ամէնէն Ամբողջական Տարեցոյցը։

Ամէնէն Ամբողջ

ՅԱՌԱՋԸ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél. : GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Samedi 10 Janvier 1948 Շաբաթ 10 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5236-Նդ տրջան թիւ 845 Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ ԳԻՆ՝ 5 ֆր.

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ԽԱՐՇԱԽ

Ինչպէս կ'երեւայ, փողոցային խառնիճաղանճին «անտեսանելի խմբապիրը» նոր հրամաններ արձակած է իր արտասահմանեան լագէներուն որպէսզի սաստկացնեն հակադաշնակցական ԼԺարշաւը եւ փոքթացնեն հայոց ազդին ամէնէն հայրենասէր, ամէնէն հարազատ եւ ամէնէն կուռ ու ծաւալուն կազմակերպութեան տապալումը :

Քանիը հինգ տարուան ապազդիւն ու զզուելի պայքարին ընթացքին, այնքան ինկած չէր մեր անդուզական հակառակորդներուն բարոյականը :

Երբեք՝ տորոնթոլիթիւնը իր ներկայ գերազրականին հասցուցած չէին :

Այսօր, կը գրեն այնպիսի տողեր զորս ոճրագործ Դաշնակցութեան հապճէին — այն Դաշնակցութեան որուն անունն իսկ քուն փախցնել կուտայ Անգարայի էֆէնտիներուն : Խոստովանինք՝ որ հոդեկան անկումի ճակատին վրայ ալ դիմացի ԼԺերը հակայարձակ յառաջդիմած են, թերեւս, արդարացնելու համար իրենց «Ճառաջդիմականի» տիտղոսը :

Ինչէ՞ր, ինչէ՞ր զրել կուտայ իրենց հիւանդագին տաելութիւնը : Ի՞նչ գարշելի զրպարտութիւններ, ի՞նչ ստայօղ բարբանջանքներ իրենց քուրջի կտորներուն լայնքին ու երկայնքին՝ Սէնի ափերէն մինչեւ Նիւ Եորք կամ Սուրիա :

Եւ ի՞նչ սրտառուչ «փաստեր» — արճճարանները անկիւններէն հաւաքուած՝ ապացուցանելու համար Դաշնակցութեան հրէասիրական մեղքերը :

Երեք տարիէ ի վեր բերնի – ծամոց ըրեր են թէ Դաշնակցութիւնը ֆաշականի հակումներ ունի եւ թրքասէր է իր քաղաքականութեամբ :

Դաշնակցութիւնը ֆաշականի՞ն, Դաշնակցութիւնը թրքասէ՞ր : Զրոտեր է ձեր ուղեղը, պարոններ :

Եթէ պուտ մը խելք եւ պուտ մը պատիւ ունիք, արտասահմանեան Հայաստանի բազմութիւններուն հրամցուցէք կարգ մը պատմական ղէպքեր եւ այդ ամբաստանութիւններով դատապարտեցէք ձեր փաքթոռները :

Այս վերջիններէն չէի՞ն որ ամբողջ տասնըհինգ տարի — մինչեւ 1945 — քարեկամական դաշնագրով կապուած էին մեր երկուամն — եւ այսօրուան — ջարդարարներուն :

Ձեր փաքթոռները չէի՞ն որ հազար կտոր կ'ըլլային փաստերու համար Թուրքերուն «անմեղութիւնը» 1915ի ջարդերուն մէջ :

Ո՞վ էր որ դաշնակցեցաւ մարզասպան Հիթլէրին, 1939ին, որպէսզի «մի լաւ ծեծ քաշի, սըբտնց, Անգլիացիներին» : (ականջը խօսի Լոնտոնի խորհրդային դեսպանատան պաշտօնատարներէն մէկուն) :

Ո՞վ էր որ ցորեն ու պատերազմական ուրիշ պիտոյքներ հայթայթեց խելագար Նացիներուն 1939էն մինչեւ 1941ի կէսերը :

Զոնի՞ք նկարը Մոլոթովին ու Ռիպէնթրոփին : Կամ նկարագրութիւնը անոնց սիրալիր տեսակցութեան :

Արտասահմանեան Հայաստանի ո՞ր թերթերը կը փառաբանէին Նացիներու եւ Ռուսերու դաշնակցութիւնը 1939 Օգոստոս 23էն մինչեւ 1941ի Յունիս 22ը :

Ո՞ր պետութիւնը դաշնակցեցաւ Ճափոնի հետ այն պահուն երբ Ֆրանսացի, Անգլիացի կամ մնացեալ ժողովուրդներուն ծաղկահասակ երիտասարդութիւնը արիւն կը թափէր արեւմուտքի մէջ՝ յանուն ազատութեան եւ արդարութեան :

Տեսո՞ր, կարգացո՞ր էք այն պաշտօնական յայտարարութիւնը զոր Հայ Ցեղափոխական Դաշնակցութիւնը մեծ դաշնակիցներուն — եւ Մոսկուայի կառավարութեան — կը յանձնէր 1941ի Յունիսէն ետք, իր ունեցածը – չունեցածը տրամադրելով ընկերը Սթալինին :

Լսո՞ր էք Մոսկուայի վարիչներուն պաշտօնական կարծիքը մեր կուսակցութեան հայրենասիրութեան եւ հեղինակութեան մասին — լրագրական բամբասանքները մէկդի :

Լսո՞ր էք մանաւանդ ձեր փաքթոռներուն կարծիքը ձեր մասին՝ Իամկավարները, Ճառաջդիմականները, «այծեր ու կապիկներ» :

Դաշնակցութիւնը Նացիներուն բարեկա՞մ :

Երազի մէջ էք, դեղնած ու մետասաներորդ ժամու կեղծատոր «Հայաստանասէր»ներ :

Սթալին մեռա՞ծ է

ԱՆՀԻՄՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Երկու օրէ ի վեր անհիմն զրոյցներ շրջան կ'ընեն եւրոպական մայրաքաղաքներուն մէջ, մարշալ Սթալինի առողջական վիճակին — կամ մահուան — մասին : Համաձայն զուիցերիական աղբիւրներէ հասած լուրերու, Խորհրդային Միութեան վարչապետը որ ծանրապէս հիւանդացած էր վերջերս, մեռած է :

Պերն հրատարակուող «Տէր Պունտ» թերթը առաջին անգամ լուրը հաղորդած է՝ հարցական նշանով : Ընկերվարական օրաթերթ մըն ալ տուած է լուրը՝ առանց հաւաստելու անոր ճշմարտութեան : Պոլսոյ մէ Անգարայի թերթերուն մէջ եւս լուրը հրատարակուած է :

Հաւանաբար այս տարաձայնութիւնները հեռաւոնք են Շուէտացի, խլիրդի մասնագէտ բժիշկի մը Մոսկուա այցելութեան ինչպէս նաեւ Մոսկուայի պրազիլիական նախկին դեսպանին այն յայտարարութեան թէ մարշալները կաթուածահար եղած էր ամիսներ առաջ :

Լուրը հաստատուած — կամ հերքուած — չէ որ մէ պաշտօնական աղբիւրէ :

Պաղեստինի դէպքերը

Տասնըհինգ հոգի եւս սպաննուեցան Պաղեստինի մէջ՝ հինգշաբթի օրերուասղէմի մէջ : Արաբ նաւի ընդհարումներ տեղի ունեցան Արաբներուն, Հրեաներուն եւ Բրիտանացի զինուորներուն միջեւ :

Բրիտանական իշխանութիւնները խիստ միջոցներ ձեռք առած են երկու կողմի ահաբեկիչները զսպելու համար :

Երկու Հրեաներ սպաննուեցան երբ Ապրաները Հայֆայէն թէլ Աւիվ գացող հանրակառքին վրայ յարձակեցան : Հականային ահաբեկիչները Ապար մը սպաննեցին Երուսաղէմի մէջ :

★ Միացեալ Ազգերու ընդհանուր քարտուղարը Թրոկվի Լի, Պաղեստինի ապահովութեան խնդիրը յանձնաժողովին ներկայացուց երէկ :

★ Հրէական զործակալութեան ամերիկեան հատուածին ներկայացուցիչը յայտարարեց հինգշաբթի օր Փարիզի մէջ թէ «մենք կ'ուզենք զէնք ստանալ՝ պայմանաւ որ Միացեալ Ազգերու կազմակերպութիւնը հաւանի» : Անգլիա իր խոստումները չի յարգեր, ըսաւ ներկայացուցիչը :

ՀԱՄԱՁՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՕՐԻՆԵՒ ԴՈՒՐՍ ՊՐԱԶԻԼԻՈՑ ՄԷՋ

Պրազիլիոյ կառավարութիւնը խորհրդարանէն վտարել տուաւ բոլոր համայնավար երեսփոխանները եւ քուէարկել տուաւ համայնավարը կուսակցութիւնը օրէնքէ դուրս հռչակելու Մայիսի օրինագիծը : Հինգշաբթի առաւոտ ոստիկանութիւնը գրաւեց «Թրիպունա Փոփուլար» թերթին խմբագրատունը : Ոստիկանները հասան այն պահուն երբ թերթը մամուլին յանձնած էր բացառիկ թիւ մը : Ընդհարումներ տեղի ունեցան : Ոստիկանութիւնը ստիպուեցաւ գնդացիրներով եւ արտասուաբեր ռումբերով յարձակիլ ցնծալիս վրայ : Համայնավարները ձեռնաւորմբ գործածեցին, բայց ի վերջոյ անձնատուր եղան : Յոյցեր տեղի ունեցան նաեւ խորհրդարանէն նեղս երբ նախագահը վերջին անգամ մը եւս քուէի դրաւ կառավարութեան օրինագիծը որ ընդունուեցաւ 74ի դէմ 181 ձայնով : Համայնավար երեսփոխանները յարձակեցան իրենց պաշտօնակիցներուն վրայ :

Խորհրդարանէն վտարուած են 76 երեսփոխանները : Ինչպէս նաեւ մէկ ծերակուտական եւ 18 թաղապետական խորհրդականներ :

Կարգացէք Դաշնակցութեան յիսունըմեկ տարուան կեանքրութիւնը :

Դաշնակցութեան դրօշին տակն էր որ Հայոց ազգին արիւրանց քաջերը կուռեցան ու նահատակուեցան որպէսզի հայրենիքը ըլլար ազատ, անկախ ու միացեալ :

Դաշնակցութեան դրօշին տակն է որ հայ ժողովուրդը պիտի չարունակէ իր ճամբան մինչեւ որ հրաշափառ արեւը ցոլքի Արարատեան աշխարհին վրայ :

Ժ.

Հայցութիւնը չափազանց ծանրակշիռ էր կ'ըսէ Մարշլ

Հինգշաբթի օր, Միացեալ Նահանգներու Ժողովին Արտաքին Յարաբերութեանց Յանձնաժողովին մէջ, արտաքին նախարարը, Պ. Ճորճ Մարշըլ, Եւրոպայի ազգերուն նիւթական օգնութիւն հասցնելու հարցին քննութեան առնն, խօսք առնելով յայտարարեց թէ «կացութիւնը չափազանց ծանրակշիռ է» :

Նախարարը պատրաստած էր 5500 բառնոց ճառ մը յանձնարարելու համար որ անպայման քուէարկուի նախագահ Թրումընի օրինագիծը :

Ստորիւ կուտանք իր ճառին գլխաւոր մասերը :— Եթէ թոյլ տանք որ Եւրոպան իր սեփական միջոցներով վերականգնի, իր տնտեսական տագնապը պիտի ծանրակշիռ պիտի ըլլայ եւ իր դժգոհութիւնը այնքան մեծ որ պիտի վտանգուի նաեւ Միացեալ Նահանգներու ապահովութիւնը : Տոլարը չի կրնար փրկել աշխարհը, բայց եւ այնպէս աշխարհը չի կրնար փրկուիլ առանց մեր տոլարներուն : Շատ անգամներ ըսուած է որ պատերազմը չահեցնանք, բայց տակաւին չհաց չենք խաղաղութիւնը : Այս յայտնութիւնը իրական կացութիւնը չի պատկերացներ : Այսօր չատ մը կէտերու վրայ աւելի կռիւ կայ քան պատերազմի օրերուն :

Մեր դիմացը ունինք ժողովրդավար կառավարութիւններ որոնք, ինչպէս մերկառավարութիւնը, պատասխանատու են իրենց ժողովուրդներուն : Թոյլ պիտի չտայինք որ տարբեր ըլլար կացութիւնը : Կը սպասենք որ ժողովրդավար կառավարութիւն մը որ յանձնարարութիւններ ըրած է հանդիպի իր ժողովուրդին, յարգէ այդ յանձնարարութիւնները :

Եթէ որոշում տանք թէ Միացեալ Նահանգները չեն կրնար կամ չեն ուզեր մասնակցիլ Եւրոպայի վերաշինութեան աշխատանքին, պարտաւոր ենք դիմադրելու այն հետեւանքները որոնք յառաջ պիտի գան այդ որոշումէն, այսինքն սպասելու ամբողջ Եւրոպան ենթարկուի տոտալիտարական պետութեանց լուծին : Մի մոռնաք որ հիւանդագին կան : Պէտք է տքի բարձրացնենք զանոնք որպէսզի ժամանակի ընթացքին, ինքնաբուլան :

Տասնըհինգ ամիս պիտի տեւէ մինչեւ որ մեր դերը կատարած ըլլանք : Ներկայացուած ծրագրին դաղափարն անգամ մեծ քաջալերութիւն մը եղած է Եւրոպայի ժողովուրդներուն :

Մարշըլ, յիշելէ ետք այն ընդհմութիւնը զոր համայնավարները կը մղեն իր անունը կրող ծրագրին դէմ, դիտել տուաւ թէ տագնապը կը լուծուի այն պարագային երբ բոլոր ազդերը գործակցին :

Նախարարը յետոյ ըսաւ թէ խորհրդային կառավարութեան ներկայ քաղաքականութիւնը կը դժուարացնէ այդ բաղձանքին իրագործումը, բայց «մենք պիտի չթերանանք մեր աշխատանքներուն մէջ՝ հակառակ անոր որ Խորհրդային Միութիւնը եւ համակիր կուսակցութիւնները վճռապէս որոշած են ձախողեցնելու մեր ծրագրին գործագրութիւնը :

Ներկայ առաջարկները, պէտք է իրենց ամբողջութեամբ քուէարկուին, այլապէս պէտք չէ դործի ձեռնարկենք, ըսաւ Մարշըլ :

Ծերակուտական Վէնտընպըրկ հարցուց թէ Մոսկուայի կառավարութիւնը իսկապէս «պատերազմ հրատարակած է Մարշըլի ծրագրին դէմ» : Արտաքին նախարարը բացատրեց թէ Մոսկուայի պաշտօնատարներուն եւ Մոլոթովի յայտարարութիւնը տրուշ կերպով ցոյց կուտան թէ Ռուսիա թշնամական վերաբերում ունի ծրագրին դէմ :

Մարշըլ, իր ճառը վերջացնելէ առաջ, ազատնաց հրաժարիլ, եթէ ծրագիրը չքուէարկուի :

★ Ամերիկա 6800 միլիոն տոլար պիտի յատկացնէ Եւրոպայի յառաջիկայ 15 ամսուան մէջ եթէ խորհրդարանը վաւերացնէ Թրումընի օրինագիծը : Մինչեւ 1952, յատկացուցած պիտի ըլլայ 17 միլիառ տոլար :

Պետական ծախքերը պիտի կրճատուին

ԵԼՄՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հինգշաբթի իրիկուն, ելմտական նախարար, Պ. Բլում Մայէր, ձայնասփիւռի վրայ, օրուան տնտեսական տագնապին ու ելմտական նոր ծրագրին մասին խօսելով, յայտարարեց թէ կառավարութիւնը որոշած է ղալի չափով կրճատել պետական ծախքերը եւ երեսուն միլիառ Ֆրանք խնայել մինչեւ Մարտի վերջը :

Ազատ պիտի արձակուին 150.000 պետական պաշտօնեաներ : Կարգ մը հանրային հաստատութիւններ պիտի փակուին : Բոլոր պաշտօնատարները պիտի աշխատին 10 առ հարիւր խնայողութիւն մը ընել իրենց ընթացիկ ծախքերէն : Կրճատումներ պիտի կատարուին նաեւ պատերազմական

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Ե· էջ)

Մեծճ Տիգրա՞ն, թէ Միհրդատ Եւպատոր

Ա.

Քրիստոսէ առաջ՝ Ա. դարուն, Կապադովկիոյ թագաւորութիւնը, իբր Փոքր Ասիոյ ու Հայաստանի միջեւ տարածուած շատ կարեւոր երկիր մը, կը նկատուէր հռոմէական հողմամաս մը, մանաւանդ Սկիպիոս Ասիտիկոսի յաղթանակներէն վերջ:

Կապադովկիոյ գրաւումը կը դիւրացնէր Հայաստանի աշխարհակալութիւնը եւ կը նշանակէր Միջագետքի ու Պարսկաստանի պարտութիւնը: Կապադովկիոյ անջատ թագաւորութեան մը դոյութիւնը վտանգ մըն էր նաեւ Պոնտոսի թագաւորութեան ու տպաւորիչ մը Պարթեւներուն, որոնց վերջին զօրաւոր թագաւորն էր Միհրդատ Ա. որ իր դրամներուն վրայ կը կրէր «Նիքեփոռ» եւ «Փէղոպատոր» տիտղոսները:

Ա. Դարուն (Ն. Ք.) Ասիական երեք զօրաւոր պետութիւններ կային: Պարթեւստանէն վերջ զօրաւոր էր Պոնտոսի թագաւորութիւնը որուն գահին վրայ նոր բարձրացած էր Մեծն Տիգրան (95 — 55 Ն. Ք.), որ աշխարհակալական նոր ձգտումներու կը պատրաստուէր ու կը փափաքէր Պարթեւները տկարացնել, Հռոմի Սելեւկեան թագաւորութիւնը իրեն ենթարկել ու հայկական նոր կայսրութիւն մը հիմնել, որուն սահմանները պիտի հասնէին Ծովեզրու ափերը ու որուն ուժը պատկառազդու պիտի ըլլար Արեւմուտքի մեծագոր Հռոմի հասարակապետութեան: Այս վերջին ծրագիրը յաղողցնելու համար, պէտք էր կապադովկիան գրաւէր, որուն սահմանակից եղող Հայկական Ծոփաց թագաւորութիւնը անգամ չէր կրցած մտածել Տիգրանի հզօր նախորդներէն՝ նոյնիսկ Արտաշէս Ա. «Աշխարհակալը»: Եթէ նկատի ունենանք որ Տիգրան Մեծին գահակալութեան տարին, արեւմտեան Հայաստանի մէջ գոյութիւն ունէր Ծոփաց (Sophene) հայկական առանձին թագաւորութիւնը, որուն գահին վրայ կը բազմէր Տիգրանը չճանչցող հայազգի Արտաշէս թագաւորը, կրնանք մակաբերել թէ Տիգրանի համար կանխաւ նկատուած էր կապադովկիան գրաւելու հարցը: Երբ Պարթեւներու Մեծն Միհրդատ Ա. թագաւորը մեռաւ, Մեծն Հայքի շրջանակ փոքր պետութիւնները՝ ինչպէս Կոմմագինէ, Աթիաբենէ, Օսրոյենէ, ու Ատրոպատականի անջատ թագաւորութիւնները կը պատկանէին Պարթեւստանին: Մեծն Տիգրան ոչ միայն այս 4 երկիրները իր ձեռքին տակ չունէր, այլ դեռ իր պապենական երկրէն 70 հայկական հովիտներ պարտադրաբար «նուէր» տուաւ Պարթեւ Արքային՝ որպէսզի կարենար Հայաստանի գահը բարձրանալ ու իշխել Արտաշատ մայրաքաղաքին մէջ:

Մինչդեռ Տիգրան այսպիսի պայմանները տակ գահ կը բարձրանար, Միհրդատ Եւպատոր արդէն իսկ զօրաւոր թագաւորի մը համբաւը ունէր, ու միշտ Ասիոյ զօրաւորագոյն թագաւորը զգալու յաւակնութեամբ ինքզինքը կը խարէր, որովհետեւ քանի մը յաղթանակներ տարած էր, օգտուելով Հռոմի մէջ տիրող ներքին անհամաձայնութիւններէն: Դէպքերը սակայն, կուգան հակառակը ցոյց տալ: Միհրդատ Եւպատորին թաթերուն տակ գտնուող Կապադովկիան անգամ չէր կրցած տեւականապէս գրաւել իր կողմէ, (ինչպէս որ այժմու Իտալիոյ թաթերուն տակ գտնուող Մալթան այսօր չի պատկանիր Իտալիոյ), ու Կապադովկիոյ գահին վրայ բազմած էր Հռոմէասէր Աբիսթրատան թագաւորը՝ թշնամին Տիգրանի ու Միհրդատի:

Ռազմագիտական խրոխտ արժանիքի տէր էր սակայն Տիգրան, որ հազիւ գահ բարձրացած՝ իր թագին իսկոյն կցեց նախ Ծոփաց Հայկազնեան անկախ թագաւորութիւնը, ձնտնդ տալով Միացեալ Մեծ Հայաստանին: Տիգրան յետոյ վերագրաւեց Պարթեւստանի «նուիրած» 70 հովիտները ու իսկոյն աշխարհակալեց չուրջի 4 անկախ թագաւորութիւնները, ու 500.000 զինուորներով (ըստ Ափիանոսի) գրաւեց Սելեւկեան բովանդակ թագաւորութիւնը, հալածելով անոր գահակալը ու մէկէ աւելի թագապահանջները, խրոխտաբար հասաւ մինչեւ Միջերկրականի ծովը (որուն չէր կարողացած հասնիլ Ռուսիոյ Մեծ Պետրոս անգամ), ու հայկական յաղթական դրօշը ծածանեցուց Սիւրիոյ, Փիւնիկէի, Կոմագինէի, հիւսիսային Պաղեստինի, ու քանի Ցովնտփոսի մինչեւ Եգիպտոսի սահմանները): Կիլիկիոյ քաղաքները, Պէյրութ ու Դամասկոս, Անտիոք ու Եփրատեան — Միջերկրականեան երկիրը հայկական եղած էին: Երուսաղէմի Աղէքսանդրիա թագուհին հպատակութիւն յայտնեց Տիգրան Մեծին ու խնդրեց որ չարիք չի հասցնէ Հրէից աղգին: Տիգրան ապնուզին չհպատակեց անոր երկիրը, ու ոչ ալ չարիք հասցուց Հրէաստանի, պահելով իր խոստումը, մինչդեռ դարեր առաջ Մեծն Աղէքսանդր Փիւնիկէ արշաւած օրերուն նման խնդրանքի մը ընթացք էր տուած, իսկ անոր յաջորդող Սելեւկեան թագաւորները չատ անգամներ խաթած էին Հրէաստանի ժողովուրդը: Իր առաջին տարիներուն մէջ, Տիգրան այնքան յաջողութիւններ կ'ունենար, որոնք քիչ վերջ կրկնապատկուած էին նորանոր իր աշխարհակալութիւններով: Մինչդեռ Եւպատոր նոյնիսկ չէր կարողացած կապադովկիան իր ձեռքին մէջ պահել հակառակ որ Տիգրան զայն քանիցս դրաւած էր Միհրդատին առաջարկով ու անոր հաշուոյն ...

Մեծն Տիգրանի այս առաջին ռազմային յաղթանակներուն համար էր որ խորամանկ Միհրդատ Եւպատորը փակոյն ծրագրից անոր դաշնակիցը ըլլալ: Համեստ սկզբնաւորութենէ մը նոր մեծցած Տիգրանի կը մօտենար սկիզբէն ի վեր մեծ ու զօրաւոր նկատուած Միհրդատ Եւպատորը, որ Տիգրանի հետ ազգական ըլլալն ալ պատճառ համարելով, իսկոյն կնքեց 2 դաշինքներ ու կինութեան առաւ իր դեռատի եւ լաւ դաստիարակուած դուստրը — Կղէոպատրան :—

Այս դաշինքներով, Կապադովկիան ու Փոքր Ասիան կը ձգուէր Միհրդատին, իբր ռազմային առպարէզ: Իսկ Արեւելքը կը ձգուէր Տիգրանին, իբր ռազմային իրաւունք, հակառակ որ Ծոփաց թագաւորութեան քանդումով՝ Տիգրան կը փափաքէր իր պետութեան կցել Կապադովկիան, որուն սահմանակից Կիլիկիան արդէն իր ձեռքին տակ կը գտնուէր, ու ամենայն իրաւամբ՝ Կապադովկիան ալ գրաւելու փափաք կրնար ունենալ: Տիգրան միշտ հաւատարիմ իր խոստումներուն՝ սկիզբնները Հայաստանի չի կցեց Կապադովկիան, ու բաւականացաւ չափուելու Պարթեւներու, Սելեւկեաններու ու չքնաղ ուրիշ ազգերուն հետ:

Իայց այս 2 դաշինքներէն վերջ, կը սկսէր Տիգրանին վերապահուած նոր յաղթութիւններուն՝ երկրորդ շրջանը, որ Միհրդատին նախանձը գրգռելով զինքնած էր Տիգրանի արքունիքին մէջ խառնակութիւններ ու երկպառակութիւններ սաղմնել, որոնք դիւրաւ կրնար յաջողցնել իրր Տիգրանի անունը:

Տիգրան այս անգամ մտաւ բուն Պարսկաստան ու աշխարհակալեց ամբողջ Մարաստանը (Media), ու յաղթանակով հասաւ մինչեւ Եկբատան Եօթնասպարիսպ քաղաքը (այժմու Պարսկաստանի Համատանի շրջակայքը):

Այս յաղթութիւններուն վրայ Կովկասեան ազգերը ճանչցան Տիգրան Մեծին գերիշխանութիւնը, հակառակ որ Միհրդատ Եւպատոր ունէր Կիմիրեան տիրապետութիւնը: Ազուանից պետութիւնը (Albania Caspii) Վրաստան ու ուրիշ երկիրներ հպատակեցան Տիգրանին, որուն պետութեան սահմանները հիմա կ'երկարէին Երուսաղէմէն մինչեւ Թիֆլիս, ու պատկառանք կ'ազդէին մինչեւ Պարսից Ծոցին բնակիչներուն :

Մեծն Տիգրան իր Արեւելքի մեծագոյն ինքնակալը՝ Սելեւկեաններէն ժառանգեց «Թէոս» (Աստուած), իսկ Պարթեւներէն խլեց « Վասիլեւս Վասիլէոն» (Արքայից Արքայ) մականիները, ու իր ձիուն առջեւը առած 4 գահազուրկ թագաւորներ շրջեցաւ կապադովկիայէն մինչեւ Կովկաս: Նոյնիսկ Հռոմի աչքին, Տիգրան երեւցաւ իրր «Ասիոյ հզօրագոյն Արքան», որ «իր ուժերով սարսափեցուց Հռոմը», ինչպէս իր մասին դրեց աշխարհահռչակ Կիկերոնը :

Կապադովկիան, սակայն, Միհրդատին սեփականութիւնը չէրաւ: Անոր Հռոմէասէր Աբիսթարտան թագաւորը Տիգրանի ու Միհրդատի բազմակներով հինդ անգամներ գահէն հալածուելէ վերջ, կրկին կը վերադառնար, ու գահ կը բարձրանար Հռոմի բազուկով, որովհետեւ Միհրդատին էր վերապահուած անոր պահպանութիւնը ու ոչ Տիգրանին ... : Միհրդատ միշտ կ'ազդուէր Տիգրանին որ օգնէր իրեն որպէսզի զրկի հանէր Կապադովկիոյ գրաւումը ... : Տիգրան զղուած Միհրդատին վերջին ամբարտաւանութիւններէն, առանձինն արշաւեց Կապադովկիոյ վրայ, 77 թուականին, ու բոլոր երկիրը գրաւեց ահ ու սարսափ պատճառելով Հռոմայեցւոց: Կապադովկիոյ գահազուրկ թագաւորը փախաւ մինչեւ Հռոմ իր ամբողջ թագաւորութիւնը ձգելով Տիգրան Մեծին, որ Կապադովկիոյ բնակիչներէն 300.000 ժողովուրդ բռնութեամբ Հայաստան փոխադրեց, ու նոյնպէս ուրիշներ ալ փոխադրեց Կիլիկիոյ Սոլի քաղաքին ամենայն վեհափառութեամբ ու անհնազանդ ռազմային յաղողութիւնեւով, որոնք թերեւս գերեզմանցիին Նաբուգոդոնոսորը կամ Սամանասարը ... :

Համաձայն իր դաշինքներուն, Տիգրան ազնուօրէն կրկին Միհրդատին ձգեց Կապադովկիոյ աշխարհակալութիւնը, բայց ապիկար Միհրդատ դարձեալ չկրցաւ պահել զայն ... : Միհրդատ իր Լուկուլլեան պատերազմներէն վերջ՝ ոչ միայն Կապադովկիան, այլ իր բովանդակ թագաւորութիւնը կորնչուց ու երեք հոգիով սկսաւ փախչիլ անմատչելի լեռներ ... : Յուսահատ Միհրդատ Եւպատորը, իր ձեռքով իր կիներ, աղջիկները ու հաւատարիմները մի առ մի թունաւորելէ վերջ ջորիներուն վրայ բեռցուց իրեն մնացած դանձերը, որոնք սկսաւ առատօրէն գետին թափել որպէսզի գինքը մօտէն հալածող Հռոմայեցիները զրպտիցնէ, ու հազիւ հազ մազապուրծ կեանքը ազատց՝ հասնելով Հայաստանի սահմանները, ուր սահմանապահ հայ պահակները ներս ընդունեցին գինքը՝ որ անծանօթ զարձած էր իր երկիւղէն ու տագնապներէն : Պատրաստուեցաւ Տիգրանի առջեւ ծունկի զալ իր փրկութեան համար:

Թուխրիոց ներքին հոգեբը

Քեմալապետութեան վտանգի օրերուն, լեզուպլիտական ակադեմական ժողովներ տարբուեցան Պոլսոյ մէջ, ապացուցանելու համար թէ Թուրքերէնը «արեւ լեզու» մըն է, որմէ ծնած են միւսները:

Նոյնիսկ մարդկային քաղաքակրթութեան ծնունդը վերագրուեցաւ թրքական հանճարին:

Օտար դիտնականներ անդամ ծախու հանեցին իրենց համբաւութիւնն ու գրիչը, ապացուցանելու համար այս «նոր գիտելիքները»:

Միեւնոյն առեն զարկ տրուեցաւ թուրքերէնի զտման: Անխնայ վտարուեցան պարսկերէն եւ արաբերէն բառերն ու բացատրութիւնները :

Մ. Քէմալի մահէն վերջ, լեզուները հեղհեղ բացուեցան, գլուխները բարձրացան, եւ այժմ կատարեալ ջղագրգռութեան մը մատնուած է նոյնիսկ Մ. Քեմալի կուսակցութիւնը, «Հալք» , որուն բացառիկ համակրանքը նոր վերջացաւ :

Մեկէ աւելի ծանրակչիռ հարցեր դիզուած էին օրակարգին վրայ: Իսկ մթնոլորտը այնքան պղտոր էր որ, պռոսմ – գոչումներ, ընդհարումներ իրարու կը յաջորդէին չարտօնակ :

Այսպէս, Իզմիր 2ի նիստին մէջ, պատգամաւոր մը բեմ ցատկեց բարկաճայլի, վար առնելու համար ճառախօս մը որ անխնայ կը քննադատէր քեմալական կարգադրութիւնը:

Շատ խոր են այս իրարանցումին չարժառիթները եւ սերտօրէն կապուած Թուրքիոյ ոչ միայն ներքին, այլեւ արտաքին քաղաքականութեան հետ :

Հրատարակուած տեղեկութիւնները կը հաստատեն կարգ մը նշանակալից իրողութիւններ. —

Ա.— Դժգոհութիւն «Հալք»ի աշխարհական (լայիք) եւ ընկերային գործունէութեան դէմ: Ո՛չ միայն բողոք, այլեւ ծանր մեղադրանքներ, — անկրօնութիւն, անաստուածութիւն , անբարոյականութիւն : Պատգամաւոր մը իրրեւ զարմանք կ'առաջարկէր աստուածաբանական համալսարան մը հիմնել եւ բոլոր միջոցներով ուժ տալ կրօնի ուսման :

— « Երբ միւս համայնքները ժառանգաւորաց վարժարաններ բանալով բարեւներ, քահանաներ կը հասցնեն, մեր կրօնից տեսուչը ամէն փոխառութենէ զրկուած՝ օրը իրիկուն կ'նայ երես քաշելով: Այսօր երկրին մէջ բախտախաղը եւ գինեմոլութիւնը աւերներ կը գործեն եւ բարոյական ապականութիւն կը տիրէ: Պատճառը անկրօնութիւնն է : Աստուածավախութիւն չմնաց »:

Նոյնքան պատկերալից բացատրութիւններ՝ ուրիշ պատգամաւորներու կողմէ, որոնց մէկը , բժիշկ, վերջը մը եւս կը բանայ.

— « Բացարձակապէս ստոյգ է այն վայրենութիւնը թէ յետադիմութիւնը գլուխ կը ցցէ, հայրենիքը վտանգի մէջ է, վարչաձեւը ձեռքէ կ'ելլէ եւն: Բուն յետադիմութիւնը այն չարժումն է որ կ'ուզէ մեզ տանիլ «կիւնէշ – միւնէշ» լեզուներու, ցախուռքներու »:

Բ.— Շատ աւելի բնորոշ է երկրորդ երեւոյթը :

Համադումարի օրակարգին վրայ կը գտնուէր քաղաքական խնդիր մը եւ այս առթիւ փոխն ի փոխը արտասանուեցան կարգ մը խմաստալից բառեր, — ազգայնականութիւն, ցեղապաշտութիւն , թուրանականութիւն , համայնավարութիւն :

Վերջին հոսանքը, համայնավարութիւն , աչքի փուշ դարձած է առեն մը ի վեր: Այն աստիճան որ, առաջարկուեցաւ մտանաւոր մարմին մը կազմել, պայքարելու համար անոր դէմ :Իսկ իրրեւ անմիջական միջոց, համայնավարները վտարել բոլոր հանրային հաստատութիւններէն եւ գպրոցներէն :

Տեսակէտները այնքան ալ յստակ չեն միւս վարդապետութեանց մասին: Աւելի ճիշդ, բերնի տակ խօսքեր կան որոնք վերապահութեամբ կ'արտասանուին :

Նոր Թուրքիան դարձեալ խարխափումի մէջ է, իր ճամբան գտնելու համար ազգայնականութեան եւ թուրանականութեան միջեւ: Եւ այս՝ իրրեւ հետեւանք սլաւականութեան ծաւալման:

Պատգամաւոր մը յայտարարեց.— «Մենք բոլորս ազգայնականներ ենք թրքական սահմաններուն մէջ»:

Ուրիշ մը, ծանօթ բանաստեղծ Համտուլլահ Սուպհի, Թուրքիոյ նախկին դեսպանը, կը ձգտի ընդարձակել համաթրքական չարժման սահմանները : Իր տեսութեամբ, ազգայնականութիւնը

(Մնայեալը յաջորդով)

պէտք չէ հիմնուի լեզուի եւ կրօնի վրայ: Այն 60 միլիոն հաշուելով կեդր. Ասիոյ, Կովկասի, Պալքաններու եւ Անատոլուի Թուրքերուն թիւը, կ'ըսէ :—

«Մենք սիրոյ համբոյր կը շահագրգռուինք արտասահմանի բոլոր Թուրքերով: Միայն թէ քաղաքական չէ այս շահագրգռութիւնը »:

Կարժէ աւելի լայնօրէն պարզել այս նոր խոմորումը, որ կը շահագրգռէ մեզ ալ :

Այն օրէն ի վեր որ կորնչուց Պալքանեան ճակատը, Թուրքիա նոր յենարաններ կը փնտռէ, յանուն արտաքին ապահովութեան եւ ներքին անդորրութեան :

Այլեւս իրականութիւն է սլաւական ցանցը իր սահմաններու երեք չորրորդին վրայ, հոդ չէ թէ տարբեր նշանախօսքերով: Պալքանեան ճակատին միակ հաւատարիմ բարեկամն ու զինակիցը, Յունաստան: Ինք պէտք ունի արտաքին օգնութեան, դիմանալու համար ներքին վոճրորիկներուն: Իսկ անգլեւսաքսոն աշակցութիւնը, որքան ալ թանկագին, դեռ ամէն վստահութիւն չի ներշնչեր :

Կը մնայ արաբական աշխարհը, որուն մօտենալու ձեւեր է որ կը փնտռեն «Հալէպի չափաւոր հոսանքները եւ օրուան վարիչները իրենք, առանց շատ տուր հանդամանք տալու իրենց մարզանքներուն :

Երբեմնի միակ հոսանքը, Մ. Քեմալի կուսակցութիւնը, հարկադրուած է չափաւորել իր եռանդը, որովհետեւ իր դիմացն ունի ընդդիմադիր կազմակերպութիւն մը, «Դեմոկրատ», որ այնքան ալ համաձայն չէ չեշտակի դիրք բռնելու Հիւսիսի հարեւանին դէմ : Շ.

Վահան Արծրունի

Յուլիս 28ին, 87 տարեկան հասակում վախճանուեց Գիտութեան վաստակաւոր գործիչ, դեկտոր – պրոֆ. Վահան Մակարի Արծրունին:

Արծրունին հանդիսանում է Սովետական Հայաստանի բժշկական գիտութեան ակնառու ներկայացուցիչներից մէկը, որը տնտեսել է աւելի քան 60 տարիների բժշկական, գիտական եւ մանկավարժական բեղուն գործունէութիւն :

Նրա գրչին են պատկանում բազմաթիւ գիտական աշխատութիւններ :

Լինելով Երեւանի պետական համալսարանի բժշկական ֆաքուլթէթի վարիչը, ապա Բժշկական կաճառի հիմնադիրներից մէկն ու նրա Նորմալ Անատոմիայի բեմի վարիչը, Վահան Արծրունին անցած 25 տարիների ընթացքում դաստիարակել, աճեցրել է հարիւրաւոր բժշկական մանկագէտներ :

Վահան Արծրունին ծնուել է 1860ին Նոր Բայազիտում: Տարրական կրթութիւնն ստացել է իր ծննդավայրում, ապա փոխադրուել Թիֆլիս, որտեղ շարունակել է ուսումը դասական գիմնազիայում: Գիմնազիան աւարտելուց յետոյ անցել է Փարիզ եւ մանկապիտական կրթութիւն ստացել այստեղ :

Վերադառնալով Թիֆլիս, 1890ին Արծրունին աշխատում է որպէս թաղամասային առողջապահական բժիշկ: Փաստօրէն այդ թուականներից էլ սկսում է նրա գիտական հասարակական գործունէութիւնը :

Պարբերական մամուլում լոյս են տեսնում նրա հանրամատչելի լեզուով գրուած մի բժշկական բազմաթիւ յօդուածները, որոնցից յիշատակութեան արժանի են յատկապէս «Ամուսնութիւն» եւ «Աղջիկը» ընդարձակ ուսումնասիրութիւնները, որոնք տպագրուել են «Մուրճ» ամսագրի 1901—1902 թուականների համարներում եւ յետագայում լոյս են տեսնել առանձին գրքոյկներով:

Բացի վերոյիշեալ աշխատութիւններից, Վահան Արծրունին այդ շրջանում գրում է առողջապահական մի շարք գրքոյկներ, («Մի ծխիր», «Մի խմիր», վարակիչ հիւանդութիւնները եւ նրանց թոյները», «Դողերոցք կամ մալարիա» «Ինֆլուենցա կամ նոր ցաւ», «Ծաղիկ եւ պատուաստ», «Վատ ցաւ» եւայլն) , բոլորն էլ գրուած ժողովրդի համար հասկնալի, մատչելի լեզուով:

Ժողովրդական առողջապահութիւնը էլ աւելի զարկ տալու նպատակով 1903ին Արծրունին սկսում է հրատարակել «Առողջապահիկ թերթ» պատկերազարդ հանդէսը, որը շարունակում է երեք տարի եւ լայն ժողովրդականութիւն է ձեռք բերում յատկապէս բանուորական ընտանիքներում, դառնալով այդ ընտանիքների մտերիմ բժշկական խորհրդատուն : ո

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մի պահ ընդհատւում է Բժ. Վահան Արծրունու գիտահետազոտական աշխատանքը : Նա հարկադրուած է լինում զբաղուել բացառապէս բժշկութեամբ: Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անմիջապէս յետոյ Արծրունին դառնում է Երեւանում :

1921ին Վահան Արծրունին հրաւիրւում է Թբեան նորաստեղծ համալսարանի բժշկական հա-

մալսարանը դասախօսելու: Նրա ղեկավարութեան է յանձնւում Ֆաքուլթէթի Նորմալ Անատոմիայի բեմը: Սովետական կառավարութեան լայն աջակցութեամբ ընդարձակում է ֆաքուլթէթն, վերածւում առաձին կառուցի, որի հիմնադիրներից մէկն է Արծրունին :

Արծրունու յետագայ տարիների ամբողջ գործունէութիւնը կապուած է այդ կառուցի հետ: Մնալով երկար տարիներ որպէս կառուցի դասախօս եւ Նորմալ Անատոմիայի բեմի վարիչ, Արծրունին ոչ մի ջանք չի խնայել նոր մասնագէտների պատրաստման, այդ մասնագէտներին բժշկական դիտութեամբ զինելու գործում :

1924ին լոյս է տեսնում նրա «Բժշկական տերմինների բառարանը» (ՀՄԲ.— Այս բառարանին կասկածելի արժէքի մասին ընդարձակ քննադատական մի հրատարակութիւնը «Ճառագ»ի մէջ մէկ տարի առաջ) : Այս բառարանը պարունակում է 17.000 բառ եւ մեծապէս օգնել է ուսանողներին՝ մայրենի լեզուով ուսումնասիրելու բժշկական գիտութիւնը :

Բժիշկ Արծրունին գրել է «Մարդու Անատոմիայի » դասագիրքը բաղկացած 6 պրակներից, որոնցմով սովորել եւ սովորում են հարիւրաւոր ուսանողներ :

Չնայած իր առաջացած տարիքին, տոքթ. պրոֆ. Արծրունին մինչեւ վերջին շրջանումն էլ չէր կորցնում իր սիրած կառուցից եւ մասնագիտութիւնից :

(Սովետական Հայաստան Ամսագիր, թիւ 8)

Ոտնակոխուած իրաւունքներ

Մտածում եմ երբեմն — անչէքի տո՛ւկ ենք ծնել մենք: Բայց այդ չի կարող պատահել, քանի որ մեր ամբողջ պատմութեան ընթացքում մենք ոչ ոքին, ժամանակ չենք ունեցել :

Մտածում եմ — անիրաւունք ենք ապրում մենք, բայց անյիշելի ժամանակներից պետութիւն ենք ունեցել, առաջին քրիստոնեայ ժողովուրդն ենք եղել ամբողջ աշխարհում, լուսաւորեալ Եւրոպայի մշտավառ վարսոն ենք հանդիսացել խաւարակուռ Ասիոյ մէջ: 451 թուին, քրիստոնէութեան պաշտպանութեան համար դիւցազնական ճակատամարտ ենք մղել հզօրագոյն յունաստանի դէմ: Դարեր շարունակ անհատապէս պայքար ենք տարել արնապբու հորդաների դէմ :

Պետութիւն ենք մենք եւ այժմ, եւ այն էլ հզօր Մ. Միութեան 16 հանրապետութիւններից մէկը, հաւասարաիրաւունքի տէր: Ուրեմն մենք կանք: Օրինաւոր, մշտական, անխորտակ մեծութիւն ենք մենք, եւ այդ հանգամանքից էլ բխող իրաւունքների եւ պարտականութիւնների տէր : Պետական գործիչների շարան ունինք մենք, որոնք միութենական չափանիշով աշխատաղներ են, հայ անունը իրենց միջազգային գործունէութեան մասնակից դարձնողներ, բայց դարձեալ ոչինչ չունենք մենք:

Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ, Դաշնակիցների կողքին կռուեցինք, մեր կէսը վայ տալով: Կռուից յետոյ յաղթողների շարքում դասուեցինք, բայց որպէս վաստակ Լոզանը միայն ստացանք :

— «Մեզ չի բերում»,— ասում է հայ ժողովուրդը :

— « Բերելու » կամ «չբերելու» խնդիր չկայ, — բացատրեցին մեր մերկի այսօրուայ տէրերը, — դրամատիրական պետութիւնները ձեզ խաբեցին— իրենց աշխարհատիրական նպատակների համար, ձեր արիւնն էր նրանց պէտք եւ ոչ ձեր բարօրութիւնը :

Լսեցինք նրանց եւ լռեցինք:

— Միայն խորհրդային իշխանութիւնն է պաշտպանը հայ ժողովրդի իրաւունքներին, շրջունակում էին նրանք :

Դարձեալ լսեցինք եւ սպասեցինք արդիւնքին:

Ծագեց համաշխարհային երկրորդ պատերազմը: Փոքրիկ Հայաստանը, Դաշնակիցների կողքին, ամենագործօն կռուողներից մէկը հանդիսացաւ :

Հենց իրան, Մ. Միութեան ղեկավար Ստալինի յայտարարութեան համաձայն, Մ. Միութեան անգամ ժողովուրդներից ոչ մէկը հայ ժողովուրդին չափ զոհաբերեց:

Կերչը՝ հայ երիտասարդութեան համատարած գերեզմանոցը դարձաւ :

Հայ զինուորը քաջաբար կռուեց եւ իրեն դէմ բերեց ճակատի բոլոր դրիքերում: Հայ սպայութիւնը պատերազմի վարման անգուգական համութիւնը, եւ հերոսութիւն ցուցաբերեց: Հայերը վաստակուած գովասանքների թեւերի վրայ երկինք բարձրացուեցին :

Մնում էր գործով հատուցման խնդիրը : Այդ ուղղութեամբ էլ կարծես որոշ բան կատարուում էր: Եթէ չէր էլ կատարուում, դոնէ խօստում էր այդ մասին:

Եւ խօսւում էր շատ, լուրջ , շատ կորուկ, շատ որոշ կերպով :

Այդպէս, Մ. Միութեան հզօրագոյն տէր ու տիրական քաղաքական բիւրոյի օրդանը, իր քաղաքական արտայայտութիւնների մէջ շատ դուռլ «Պրաւտա»ն խօսելով այդ ուղղութեամբ, աւելով սպիտակի վրայ գրում էր հէնց 1946ին :—

— Կովկասահայութեան իրաւունքն է Սուրմալուն, Կարս եւ Արտահան, իսկ Տաճկահայութեան իրաւունքն են Վան, Պիթլիս եւ Կարնոյ վիլայէթները »: « Մ. Հայաստանը ունի բոլոր միջոցները ու հնարաւորութիւնները այս նահանգներն էլ զարձնելու ծաղկեալ ու բարգաւած, որպիսին է արդի ծաղկեալ Մ. Հայաստանը»...:

Բոլորս մեծ հրճուանքի մէջ էինք :

Իսկապէս պէտք էր որ դրամատիրական եւ համապատասխան պետութիւնների ղեկավարների խօսքերի եւ գործերի միջեւ մի տարբերութիւն լիներ. ուրիշ կերպ չէր կարող լինել »:

Բայց ինչպէս ասում են, «սարը մուկ ծնեց»:

«Կարսն ու Արտահանը վրացական են եղել եւ նրանց էլ պէտք է վերադարձուեն» Ազգերի միութեան ժողովում յայտարարում է պարոն Վիշինսքին :

Վիշինսքու յայտարարութիւնը երկնքից ընկնող կայծակի տպաւորութիւն թողեց հայ ժողովուրդի վրայ եւ արդար զայրոյթ եւ վրդովմունք առաջ բերեց նրա հոգում :

Նորից, Վիշինսքու յայտարարութիւնից յետոյ, լսում ենք հայ ժողովուրդի իմաստուն բառերը, երբ իր իրաւունքները տրորում են.

— « Մեզ չի բերում »...

Սակայն դրանով ամէն ինչ չվերջացաւ :

Պարոնայք համաշխարհարները, մեր ժողովուրդի այսօրուայ ճակատագրին տէրերը, երէկ համարձակօրէն բացատրում էին թէ մենք խաբուած ենք եղել, որ մենք զոհ ենք դնացել դրամատիրական , աշխարհակալական պետութիւնների շահերին :

Այսօր մենք նորից սպասում ենք նրանց իմաստուն բացատրութիւններին: Մենք ցանկանում ենք իմանալ թէ, հայ ժողովուրդը հիմի՞ էլ խաբուած է :

Եթէ խաբուած է, ո՞ւմ կողմից :

Արդարամիտ համաշխարհարները պէտք է որ պատասխանեն այդ հարցին :

Պէտք է պատասխանեն, եւ բացատրեն, հանուր աշխարհին թէ այս անգամ էլ հայ ժողովուրդը իր անհամար զոհերը տուեց իր համաշխարհային ազատութեան եւ արդարութեան համար :

Եւ պէտք է որ նա վարձատրուի , դոնէ այս անգամ :

Մ. ԱՐԱՔՍ

ՁԱՑՆԵՐ ԴԱՒԱՌԷՆ

ՆԱՄԱԿ ԲՈՒԺԱՐԱՆԷՆ

ՓԹԻԹ – ԱՐՊՈՒԽ.— Իսկապէս մարդ կը չուարի թէ ինչ անուն տայ այն անձնուրաց եւ անձնազոհ Կապոյտ Խաչուհի գթասիրտ քոյրերուն, որոնք իրենց ընտանեկան հոգերէն վեր կը դասեն հիւանդներու օգնութեան գործը եւ հեւ ի հեւ ու անխոնջ կը վազվզեն հիւանդանոցէ հիւանդանոց, բուժարանէ բուժարան իրենց հետ բերելով մխիթարութիւն եւ զոհաբերութիւն :

Անգամ մը եւս, նոր տարուայ առթիւ, բուժարանս այցելեցին Մարսէյլի ժրալման տիկիններն, Տիկին Փափազեան, Գասպարեան, Թիլքէրեան եւ Շիրիկբէյեան եւ հոս գտնուող տասնեակու հայ հիւանդներուն անխտիր բաժնեցին մէյ մէկ զոյգ սօքէթ, երկ երկու տուփ սիգար, կարկանդակ , պտուղ, նարինջ եւ խնձոր :

Դժբախտաբար ներկայիս իրենց այս գոհողութիւնը եւ անփոխարինելի բարիքը չենք կրնար փոխարինել, ուստի մեր վրայ կ'իյնայ գոնէ մեր սիրելի « Ճառագ »ին միջոցաւ հրապարակաւ մեր խորին շնորհակալութիւնները եւ երախտագիտութեան յայտնելու պարտականութիւնը : Փառք եւ պատիւ իրենց, փառք ցեղիս ո րիր մէջն կ'արտադրէ այսպիսի տիպար Հայուհիներ :

Ցաջողութիւն իրենց բոլոր ձեռնարկներուն որոնք ըլլան բեղուն եւ արդիւնաւոր :

Շնորհակալութիւն նաեւ Մարսիլիոնակ հայրենակից Պ. Աւագ Ահարոնեանի որ յանձն առած էր մեր գթութեան քոյրերը իր անձնական օթոյով մինչեւ բուժարան բերել եւ վերադարձնել :

Մկրտիչ Մատոյեան

ԿԸ ՅՈՒՆԻՐԻՒ Հ. Ց. Դ. , Կապոյտ Խաչի եւ զանազան կամակերպութեանց դաւառի կոմիտէներէն եւ մարմիններէն որ ժողովներու եւ հանդէսներու ազդերը խմբագրատուն հասցնեն Թուականէն առնուազն երեք օր առաջ:

Ծախքերուն մէջ։ Պետութիւնը նոր փոխառութիւններ պիտի չկնքէ պետական գրամատուներէն։ Մօտ օրէն շրջաբերութեան հանուելիք փոխառութեան դրամագլուխը ամբողջութեամբ պիտի յատկացուի շինարարական ձեռնարկներու։

★ Տակաւին յայտնի չէ թէ ֆրանքին արժեզրկումը — օտար շուկաներու համար մխայն — երբ տեղի պիտի ունենայ։ Ամերիկացի երեսփոխան մը որ միեւնոյն առնն նախագահն է դրամատուներու յանձնախումբին, յայտարարեց հինգշաբթի օր թէ «խորհրդարանը նախարար Մարշըլի ծրագրին ամբողջական կամ մասնակի գործադրութիւնը պէտք չէ քուէարկէ մինչեւ որ Եւրոպայի ազգերը չարժեզրկեն իրենց թղթադրամները»։ Իր կարծիքով մէկ սթերլինը պէտք է արժէ 2.65 տոլար — փոխանակ 4ի— իսկ տոլարը Ֆրանսայի մէջ պէտք է արժէ 240 Ֆր. փոխանակ 119ի ։

«ՀԵՂԼԻՆ ԱՊԱՏԱՄԲՆԵՐԸ ՊԻՏԻ ՊԱՐՏՈՒԻՆ»

Ծունաստանի ամերիկեան դիւանագործական ատաքելութեան պետը յայտարարեց հինգշաբթի օր թէ հեղլին ապստամբները չարաշար պիտի պարտուին յառաջիկայ գարնան կամ ամառուան ընկիզները։

Ամերիկեան կառավարութիւնը ի մօտոյ թընդանօթներ եւ զինամթերքներ պիտի յանձնէ հեղլին կառավարութեան։ Անդլիա 40.000 հրացան եւ ռազմանիւթ պիտի դրկէ շուտով ։ —

Աթէնքէն կը տեղեկացնեն թէ լեռնային կռիւներու վարժ Ամերիկացի զինուորականներ քանի մը շաբաթէն Ծունաստան պիտի երթան՝ իբրեւ մարզիչ։ Բացի Ամերիկացի զինապետներ օգնականով Աթէնք մեկնած են, իրենց պիտի հետեւին վաթսուն սաորդաս զինուորականներ եւս։

ԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԼՈՆՏՈՆի մէջ հինգշաբթի օր մեռաւ աշխարհահռչակ երգիչ Բիչարդ Թաուզըր։ Ծագումով գերմանացի էր եւ 55 տարեկան ։

ՊԵԼՃԻՐԱՑԻ տարածքը թագաւորին վերադարձի խնդրին քննութիւնը յետաձգուած է անպայման ժամանակով, համաձայն վարչապետ Սփաքի յայտարարութեան ։

ԹՈՒՐՔԻՈՅ ռումանական հիւպատոսը կը մերժէ պուքրէշ վերադառնալ, հակառակ Լրեն եղած ազդարարութեան, առարկելով թէ թագաւորին զահընկեցութենէն ետք նշանակուած հանրապետական կառավարութիւնը ճանչցուած չէ Թուրքիոյ կողմէ։ Գահընկեց թագաւորը տը ներկայիս Լոզան կը գտնուի, պաշտօնապէս չէ յայտնած թէ ինչ պարագաներու տակ ստորագրած է իր հրաժարականը։ Զանազան աղբիւրներէ կը հաստատուի, սակայն թէ համայնավար ազատաքին նախարարութէն խմբագրած է իր հրաժարականը զոր ստորագրել տուած է սպառնալիքով։

ՖԻԼԱՆՍՏԱՑԻ ընկերվարական կուսակցութեան անդամներէն փոքրաթիւ համբանք մը որ համակիր է համայնավարներուն հետ գործակցելու քաղաքականութեան, կուսակցութեան չարքերէն հեռանալով պիտի կազմակերպէ նոր կուսակցութիւն մը «Մերացեալ եւ ժողովրդավար Ընկերվարական Շարժում» անունին տակ։ Շարժումին գլուխը կեցած են կարգ մը ծանօթ ընկերվարականներ որոնց մէջ նաեւ Ֆռան – Թիւֆօ Թերթին խմբագիրը։ Այս ապստամբները համայնավարներուն տեսակէտները կը պաշտպանեն հետեւեալ հարցերուն մէջ — պայքարիլ Մարշըլի ծրագրին դէմ, պայքարիլ ներկայ կառավարութեան դէմ, պաշտպանել Սէ Ժէ Թէի տեղծութիւնը եւ արդարացնել Նոյեմբերի գործադուլները ։

ՀՈՐՀՐԴԱՑԻՆ «Թաս» հեռագրական գործակալութիւնը կը հաղորդէ որ ամբողջովին հաշուարդարի ենթարկուած է յունական կաթոլիկ եկեղեցին որ Վատիկանի ենթակայ էր։ Եկեղեցին ունէր շորս միլիոն հաւատացեալներ Ուկրայնայի եւ Կարբաթներու այն նահանգներուն մէջ որոնք նախապէս մաս կը կազմէին Զեխոսլովաքիոյ եւ Լեհաստանի ։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ.— Այրի Տիկին Բերկրուհի Մազումեանի ամուսնոյն՝ կարապետ Մազումեանի, հօրը, եաղկիւլեան Յոսէփովի եւ Վարդանեան ընտանիքի ննջեցեալոց համար հոգեհանգիստ տեղի կ'ունենայ վաղը, կիրակի, Յունուար 11, Ալֆորվիլի եկեղեցիին մէջ։ Անոնց յիշատակը յարգողները կը հրաւիրուին ։

ՏԻԿԻՆ Ս. ՍԻՆԱՆԵԱՆ ձեռնարկ Թէրճանեան Երգնկացի, կը փնտռէ հինգհարիւր Սարդիս կի – լակոսեան Երգնկացի որ Տիթրոյթ ըլլալ կը կարծուի ։ Նաեւ մօրաքրոջ աղջիկը Սիրուհի Զուքուրեան որ նոյնպէս Ամերիկա ըլլալ կը կարծուի։ Տեղեկացնել Տիկին Սիրամոյ Սիմոնեանի, 31 rue de Nice, Alfortville, Seine:

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

Տարեկան շքեղ ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան կազմկը Հայկի եւ Արքանեանի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétia-ի շքեղ սրահներուն մէջ, 43 Bld. Raspail, Paris:

Ցերեկոյթ պարահանդէս

Կազմակերպուած Փորթ տ'Իթալիի Ֆ. Կ. Հայի մասնաճիւղին կողմէ։ Կիրակի 18 Յունուար կէսօրէ վերջ ժամը 15էն 23։ Պէտ Տուշի սրահը, Rue Jules Ferry. Petit Ivry, մէթրօ Porte de Choisy ։

Գեղարուեստական ճոխ բաժին.— Պիտի ներկայացուի ՀԱՐՍԸ եւ զուարճալի մը, Սէվրանի Ֆ. Կ. Հայի թատերախումբին կողմէ։

Եւրոպական պարերը կը սկսին ժամը 6ին, ղեկավարութեամբ Պ. Սասեանի նուագախումբին։ Ճոխ պիւֆէ դիւրամատչելի դիներով ։

Մուտքը 75 ֆրանք ։

ԿԻՐԱԿԻ, 25 ՅՈՒՆՈՒԱՐ 1948, ԺԱՄԸ 14.30ԻՆ
Մ'Իւթիւալիթէի սրահին մէջ, **métro Mutualité**
Յովհ. Թումանեանի մասնաւոր հայամեակի առիթով
Նախաձեռնութեամբ Փարիզի Հայկական երգչախումբին, մեծ պատրաստութեամբ կը ներկայացուի

ԱՆԱՀ

Երաժշտական ողբերգութիւնը 5 արար, մասնակցութեամբ Սր. Ասծէվ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆի (Անուշ), Ա. grand Prix Wicard de la Ville de Marseille ։ Դր. Մ.ՀԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (Սաքօ) եւ Վ. ԱՒԱԹԻՆԵԱՆի (Մ'օսի)։ Սէվրանի մեծ նուագախումբ ղեկավարութեամբ ԱՒԱ. ՊԱՐԹԵՒԵԱՆի (60 հոգի)։ Թումանեանի մասին պիտի խօսին եւ կ'արտասանեն ծանօթ արուեստագէտներ ։

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Բոլոր տոմսերը թուագրուած ըլլալով կը խնդրուի նախապէս ապահովել Հրաուդ Սամուէլէն Tel. Dan. 88–63, եկեղեցւոյ դիւանէն։ Սապօնճեանէ 39 rue Trévise, Պ. Պարթեւեանէ, 14 rue Petit. Bot. 99–22, Պ. Բամպուք–ճեանէ, 9 rue Jouy Rouve, Ուշաղլեանէ 61 rue Rébéval, Պարսամեան գրատուէն, եւ նոյն օրը թատրոնի կիւշէէն, առաւօտէն սկսեալ։

Տոմսերու գինները՝ տարբերէն երեք հարիւր յիսուն, տուրքերով միասին ։

ԳՐԱՒՈՒՄԱԾ ՕՐ.— Ֆր. Կ. Հայի Սէվրանի մասնաճիւղի թատերապահանդէսը տեղի կ'ունենայ կիրակի 7 Մարտ, 1948ին։ Կը խնդրուի չխաչաձեւել ։

ՏՕՆԱԾՈՒՌ – ԽՆԶՈՑՔ –ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Կլընտալի Կապոյտ Հայի մասնաճիւղին կողմէ, 11 Յունուար կիրակի ժամը 15էն կէս գիշեր, Salle Armenonville-ի մէջ (Exposition կեդրոնը)։ –

Մնամուտ յայտագիր եւրոպական պարերով, ընտիր խմիչք եւ ուտելիք ։

Կաղանդ Պապա պիտի բաժնէ նուէրները։ Կը հրաւիրուին գաղութի բոլոր երախաները անխտիր ։

«ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ» ՎԱԼԱՆՍԻ ՄԷՋ

Վալանսի Ֆր. Հայ Կապոյտ Հայի «Մանուկներու Օր»ուան հանդէս տօնածառը, տեղի պիտի ունենայ Յունուար 11ին, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին ընդդէմ Յակոբ Կօշկակարեանի կառատան մէջ։ Պիտի ըլլան երգեր, արտասանութիւններ, գեղջկական պարեր սանուհիներու կողմէ։ Կը հրաւիրենք տեղւոյս հայութիւնը քաջալերելու համար մեր մանուկները։

« ԳՈՑԱՄԱՐՏ » պատի օգտագործուած են եւ կը ծախուին Բալուեան գրատան մէջ, 43 Rue Richer, Paris (9), ինչպէս նաեւ Նոր Սերունդի անդամներուն քով։ Գինն է 100 Ֆրանք։ Ծաւալը մեծ ըլլալով փոստով չի ղրկուիր։ Անձամբ դիմել եւ ստանալ ։

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՑՈՒԱՐՈՒԹԻՒՆ

Փարիզի Հայոց եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչութիւնը ընդ. ժողովի կը հրաւիրէ ընկերակցութեան բոլոր անդամները՝ 18 Յունուար 1948, կիրակի ժամը 2.30ին Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, օրակարգ ունենալով եկեղեցւոյ օգնական լուսարար Պ. Յակոբ Ձօրթուեանի քահանայական թեկնածութեան հարցը ։

Կը խնդրուի բոլոր անդամներէն որ հաճին անձամբ ներկայ ըլլալ այս ընդ. ժողովին եւ կատարել իրենց եկեղեցասիրական պարտականութիւնը ։ ։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. ՄԱՐՍԷՅԻ Շրջ. Կոմիտէն ընդ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ մարմինները.—

Զաւարեան ենթախոմիտէն ՝ չաբաթ 10 Յունուար ժամը 8ին ։

Ակնունի ենթակոմիտէն չաբաթ 10 Յունուար ժամը 8ին ։

Քեռի խումբը չաբաթ 10 Յունուար ժամը 8ին։

Նիկոլ Դումանի ենթակոմիտէն կիրակի 11 Յունուար ժամը 3ին։

Արամ խումբը կիրակի 11 Յունուար ժամը 8.30ին ։

Այս ժողովները տեղի կ'ունենան սովորական հաւաքատեղիները։ Ներկայ պիտի ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը ։

ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՑԻ «Զաւարեան» կոմիտէն ընդ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս չաբաթ 10 Յունուար, ժամը 8.30ին, Խրիմեան սրահին մէջ. պարտաւորիչ ներկայութիւն ։

ՓԱՐԻԶԻ «Եղիպտացի» կոմիտէն ընդ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս չաբաթ իրիկուն ժամը ճիշդ 8.30ին ընկերվարականներու սրահը (9 rue Victor Massé)։ Պարտաւորիչ ներկայութիւն ։

ՓԱՐԻԶԻ Հ. Ց. Դ. «Ռոստոմ» խումբի բացառիկ ժողովը, այս կիրակի ժամը 9.30ին, 57 rue des Courronnes, ի քովի Métro Courronnes: Բացակայողները պատասխանատու են ։

ԼԻՈՆԻ Հ. Ց. Դ. «Վարանդեան» կոմիտէն ընկերական ընդ. ժող. կը հրաւիրէ բոլոր ընկերները այս կիրակի 11 Յունուար, կէսօրէ վերջ ժամը 2ին, 78bis, rue Rabelais, պրոթին սրահը։ Կարեւոր օրակարգ։ Պարտաւորիչ ներկայութիւն։ Ներկայանալ անդամատետրով ։

ՄԱՐԲԵՐԻԻ Համախմբերգչական Միութեան Մարսէյլի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս կիրակի առաւօտ ժամը 9ին Հ. Ս. Ը. Մ. սրահը, 63 rue Longue des Capucines, Մարսէյլ ։ Կը խնդրուի բոլոր անդամներէն ներկայ գտնուիլ այս խիստ կարեւոր ժողովին ։

Հ. Ց. Դ. ՍԷՆ ՇԱՄՈՆի կոմիտէին ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ 11 Յունուար, կիր. ժամը 2.30ին սովորական հաւաքավայրը։ Կարեւոր օրակարգ, բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է ։

Ֆ. Հ. Կ. ՄԱՋի Իսիի մասնաճիւղին ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ չաբաթ իրիկուն, 10 Յունուար , ժամը 8.30ին Ազատեան սրահը ։ 4 rue de la Défense: Բոլոր անդամակիցներուն ներկայութիւնը անհրաժեշտ է։ Կը խնդրուի ճշդապահ ըլլալ ։

Հ. Ց. Դ. ԱԼՖՈՐՎԻԼԻ Ս. Մինասեան ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերները 12 Յունուար երկուշաբթի իրիկուան ժամը 8.30ին, սովորական հաւաքատեղին ։

ՏԷՍԻՆԻ Հ. Ց. Դ. Նոր Սերունդի վիճաբանական ժողովը այս երկուշաբթի իրիկուն ժամը 9ին Հ. Ց. Դ. Տան մէջ։ Նիւթ՝ «Խորհրդային վարչաձեւը Հայաստանի մէջ»։

ԸՆԿԵՐԱՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԽՆԶՈՑՔ

Կազմակերպուած Ալֆէդ Պուա Քոլմարի Հ. Ց. Դ. Ազատ ենթակոմիտէին կողմէ Նոր Տարւոյ եւ Ծնունդի առթիւ, տեղի կ'ունենայ յառաջիկայ չաբաթ , 10 Յունուար ժամը 9էն մինչեւ լոյս, Ընկերվարականներու սրահը 149bis, Ave. d'Argenteul, Asnières: Ճոխ պիւֆէ, գեղարուեստական յայտագիր ։

ՆԱՄԱԿԱՏՈՒԹ

Շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ դուարները.—

ՓԱՐԻԶ (17) Ամիր. հազար ֆրանք, (17) Պակ. հազար, Ս. ԼՈՒՒ Խ.Վ. 1000, ԱՆԿԷՆ Ազաք. 500, ՏԻԹՐՈՑԹ Ս. Ս. 1200, ՌՈՄԵՆՎԻԼ Գում. հազար, ԹՈՒԼՈՒԶ Ռես. հազար, ՓԱՐԻԶ Ճետ. հազար, ՄԱՐՍԷՅԼ Մուր. 1700, Օհա. հազար, Մարգ. 500, ՓԱՐԻԶ (13) Ալէք. հազար, ԼԻՈՆ Քրաթ. 600, ՆԻՍ Զոտ. հազար, ԱՎԼԷՔՐՈՆ Ալե. հազար, ՊԱՆԵԼՕ Զաթ. հազար, ՓԱՐԻԶ (11) Կոսա. 500, ԼԷՀԷՑԼԷՐՈՉ Ֆէն. հազար, ՄԱԼԱՔՈՎ Պար. 500, ՓԱՐԻԶ (20) Գաս. հազար, ԼԻՈՆ Մ. Տ. Պ. հազար, ԿՐԸՆՈՊԼԸ Օնպ. հազար, ՖՈՆԹԷՆ Հաճ. հազար, ՄԱՐՍԷՅԼ Ճակ. հազար, ՄԱՐՍԷՅԼ Ալքը. հազար, Աբգ. հազար, Արծր. հազար, Ակո. 500, Ասլ. հազար, Պապ. հազար, Պալ. հազար, Պան. հազար, Պաք. հազար, Պար. հազար, Պօղ. 2000, Դանի. 1000, Գրիգ. 500, ՔԱԱԻՍ Ա. Փ. 1500, ԹՈՒԼՈՆ Էզկ. հազար, ՓԱՐԻԶ (17) Տաթ. հազար, ԻԶԼԻ Կիւ. 500, ՌՈՆ Ճընկ. 2000, ՓԱՐԻԶ (16) Շահ. 1500, ՕՐԼԷԱՆ Մալ. հազար, ՌՈՄԱՆ Մահմ. 500, ԼԻՈՆ Դաւ. 2000, ՖԻՄԵԼ Դան. հազար, ՓԱՐԻԶ (18) Հալ. 500, ՆՒՕՑԵԻ Փամ. հազար ֆրանք ։

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15.70 — C.C.P. Paris 1678-63

Dimanche 11 Janvier 1948 Կիրակի 11 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5237-Նոր շրջան թիւ 846 Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ ԳԻՆ՝ 5 Ֆր.

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Ժուռկը ամ երեւան

Իրաւունք ունէ՞ք հարցնելու ձեզի, արենակիցներ, թէ ուր կ'ուզէք հասնիլ ձեր հակադաշնակցական խաչակրութեամբ :

Քանըւեօթը տարի է կը հայհոյէք, կ'ամբաստանէք, կը զրպարտէք, ձեր հասկցած ձեւով ու ձեր լաէներուն մէջոցաւ, բայց դուք ալ, աչօք բացօք կը տեսնէք որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը առաւել քան երբեք պոյութիւն ունի՝ ամէն տեղ :

Քանը եօթը տարին բաւական երկար ժամանակաշրջան է՝ աշխարհի չորս ծագերուն փռուած քաղաքական կուսակցութիւն մը հաշուեյարդարի ենթարկելու համար, մանաւանդ երբ նկատի ունենաք որ հարուածը կուգայ ձեզմէ՝ վիթխարի պետութեան մը կուշտին կուշ եկած մանրանկար հայրենիքի մը վարիչներէն :

Կը թուի, սակայն, որ հակառակ ձեր թափած քրտինքին ու վատնած ժամանակին, առիւծին բաշերէն թել պակսած չէ :

Այլապէս, տրամաբանօրէն, չատոնց հրաժարած պիտի ըլլայիք մոլեդին գործ մը որ հետաքրքրական ըլլալու առաքինութիւնն ալ կորսնցուցած է երկար ժամանակէ ի վեր :

Ձեր սեւ բիծերն ալ ձերմակ տեսնող եւ զարհուրելի սարկամտութեամբ ձեր բոլորտիքը պար բռնող արտասահմանեան չողոքորթները մեր մասը կ'աւետեն ձեզի, յանուն «երեսուն արծաթի» :

Եւ դուք երբեմն կը հաւատաք այդ հէքեաթին :

Ցիշեցնե՞նք ձեզի, ընկերներ, որ ձեր Լոնտոնի դեսպանատան առաջին քարտուղարը (Ռուս մը) բոլորովին տարբեր կարծիք ունի Դաշնակցութեան մասին երբ տակաւին ինքն էր որ 1945ի Ապրիլ 6ին, տասնըհինգ «հակա»ներու եւ մէկ Դաշնակցականի ներկայութեան կը յայտարարէր :—

— Ո՛չ, Դաշնակցութիւնը մեռած չէ. ընդհակառակն ...

Օտարի մը վկայութեան պէտք չկար թերեւս այդ ճշմարտութիւնը հաստատելու համար :

Անշմաստ է ձեր խաչակրութիւնը մեղի դէմ, Երեւանցի հայրենակիցներ :

Մենք չենք բաժներ ձեր քաղաքական, ընկերային, վարչապետական աշխատհայեացքը տրուվհետեւ հիմնովին տարբեր է հայրենասիրութեան մասին մեր ունեցած ըմբռնումը :

Դարացի հզօր պետութեան մը սուինները ապաւինած, հայրենիքի հողէն ու ջուրէն զրկեցիք այն կազմակերպութիւնը որ հիմը դրաւ ներկայ Հայաստանին :

Ձեր բոցավառ ճառերով չէ որ պիտի խեղաթիւրէիք պատմութիւնը :

Քանըեօթը տարուան մէջ դուք չկրցաք հայ ժողովուրդին արմէն վրցնել, նետել Դաշնակցութեան հաւատամքը : Չկրցաք Դաշնակցութեան դէմ հանել արտասահմանեան Հայաստանի աշխատաւոր զանգուածները :

Ու երբեք պիտի չկրնաք հասնիլ ձեր «մուրազ»ին, որովհետեւ Դաշնակցութիւնը կրօնք է այդ բազմութեան համար :

Մեր սիրտը կ'արիւնի երբ կը տեսնենք որ ամենայն Հայոց կառավարութեան խամաո՛ւն վարիչները, արտասահմանի մէջ հաւաքեր են խայտաբղետ համբոյր մը հակադաշնակցական ճիհատը ի կատար ածելու համար :

Որովհետեւ պայքարի դրօշը՝ պատեհապաշտ, անբարեխիղճ, դաւանափոխ ու սարկամիտ մուենաւիկներու յանձնելով չէ որ դուք պիտի տապալէիք Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը :

Աչք մը նետեցէք ձեր չարականը կարդացող այդ ողորմելիներուն վրայ :

Ու յետոյ, աչք մը, արտասահմանի Դաշնակցական ու համակիր բազմութեան վրայ :

Եթէ քսանըեօթը տարի չհամոզուեցաք, քսանըութերորդ տարին թերեւս համոզուիք որ Հայ ժողովուրդին ամէնէն կենսավառ ու ամէնէն հզօր կազմակերպութիւնը աւտերով ու վայրահաչութիւններով չէ որ կը լուծուի :

Դաշնակցութեան հաշիւը մաքրելու համար պէտք է իրագործուին Հայ ժողովուրդին բազձանքները, ամբողջութեամբ :

Այո՛, ամբողջութեամբ :

Երբ այդ օրը գայ, Դաշնակցութիւնը, ինքը, հրապարակէն կը քաշուի :

Այս լուրը օղ ձեր ականջին, Երեւանցի արենակիցներ :

Ժ.

Ֆո կարօտը, ֆո ախրը ..

... Անցան օրերը անդարձ բզարեր ու հողմաւար,
Ծաղկանց բոյրը թեւերին զարուն անցաւ անժպիտ,
Կախարդական այն երկրում, ուր կեանքը երդ էր վարար,
Ճանկարծ խինդը դարձաւ սուգ եւ երդը մահ չարախինդ :

Մըրիկն անցաւ ու փշրեց կեանքիս չիւղերը մէկ - մէկ,
Կորզե՛ց, տարաւ ինձանից՝ ինչ վեհ էր ու լաւագոյն ...
Բայց վայրիայած իղձերիս, երազներիս հետ մէկտեղ,
Կարօտիդ հուրը անշէջ պայծառ մնաց իմ հոգում :

Եւ օրերի փոթորկոտ յորձանքներից հալածուած՝
Թափառեցի ոտքիս տակ ծով ու ցամաքներ անծիր,
Ինչ ուզեցին՝ տուեցի և ինձ ոչինչ չընծայ,
Լո՛կ քո կարօտն ու սէրը ես ինձ համար պահեցի :

Շատ անդամներ ես տեսայ աղէտ, արիւն և չարիք,
Իմ մէջ ամէն հաւատ, յոյս ապրեց աւեր եւ անկում,
Արարատի պէս յաւերժ միայն քո սէրն հայրենիք,
Որպէս դրօշ արնաներկ՝ մնաց մի՛շտ վառ, մի՛շտ կանգնուն :

Թող հալածեն ինձ օտար նենգ ուժերը վայրենի,
Ո՛ւր էլ կ'ուզէ չար հողմը թող ինձ քշի ու տանի :
Դարձեալ հոգիս կառչած է քար ու հողիդ հայրենիք,
Քո սուրբ զրկից ոչ մի ուժ հոգիս չկարող վանի :

Գ. ՇԻՇԵՒՆԱԿ

Պաղեստինի դէպքերը

ԱՐԱԲՆԵՐԸ ԿԸ ՅԱՐՁԱԿԻՆ ՍՈՒՐԻԱՑԻՆ

Վեց հարիւր հոգիէ բազկացած Արաբ հրոսակախումբ մը ուրբաթ օր, սուրիական սահմանապլուխէն, յարձակում գործեց հիւսիսային Պաղեստինի վրայ՝ պաշարելու համար 12.000 Հրեաները :

Հակառակ «զինադադար»ները հակայարձակումի սկսելով, եօթը ժամուան արիւնալի կռիւ մը եաք յաղթեցան եան մղել թշնամին : Իրիտասարդ օդաչուները ամբակոծեցին Արաբները :

Պաղեստինի մարզպանը, Սըր Ալըն Քանինկըմ բողոքեց սուրիական կառավարութեան :

Արաբներուն նպատակն էր քարուքանդ ընել Ջուրի աւազանները եւ յարձակիլ սահմանագլուխին վրայ հաստատուած հրէական գիւղերուն վրայ :

ՅՐԱՆՍԱԿԱՆ դահլիճը երէկ բացառիկ նիստ գումարեց օրուան մէջազգային կացութիւնը քննելու համար : Օրակարգի գլխաւոր ալիքէնէն մէկն էր արեւմտեան Գերմանիոյ բրիտանական և ամերիկեան գօրութիւններուն մէջ միացեալ վարչութիւն մը ստեղծելու առաջարկը որուան համաձայն չէ Ֆրանսական կառավարութիւնը : Լոնտոնի Ֆրանսական դեսպանը այս մասին տեսակցութիւն ներ ունեցաւ ուրբաթ օր արտաքին նախարարութեան հետ :

ՊԵԼՃԻԱԿԱՆ կառավարութիւնը իրաւասութիւն տուաւ վարչապետ Սպաքի որ տեսակցութիւն ունենայ տարագիր Էդուարդ թագաւորին հետ՝ այս վերջինին վերադարձի խնդիրը կարգադրելու համար : Էնկերվարականները հակառակ են վերադարձի ծրագրին, իսկ կաթոլիկ համակցութիւնը կը պաշտպանէ թագաւորը : Հաւանական է որ Էդուարդ համաձայնի հրաժարուելու եթէ իրեն յանձնուի նշանակուի դահաժառանգ իշխանը :

ՒՒՒՄԱՆՈՒԱՑ հաւաքագիտութեան նախագահ նշանակուած է 84 տարեկան Փրոֆ. Կոստանդին Փարոն : Պիտի ունենայ մէնեւոյն իրաւասութիւնները որոնք տրուած էին գահընկէց թագաւորին :

ՓԱՌԻՍԱՆԷՆ կը հերքուի այն տարածայնութիւնը թէ խորհրդային կառավարութիւնը դիմում կատարած է բարեկամական դաշնագիր մը կնքելու համար նորաստեղծ պետութեան հետ :

Ամերիկեան Նաւատորմը Միջերկրականի մէջ

ԹՈՒՋՄԱՓՈՐՁ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ

Աթէնքէն կը տեղեկացնեն թէ ամերիկեան նաւաբաժին մը այս օրերս ռազմափորձ կը կատարէ Միջերկրականի չուրերուն մէջ Յունաստանի ափերուն բաւական մօտիկ կէտի մը վրայ :

Նաւային կցորդ՝ հրամանատար Մորթըմըր Սընտըրլընտ յայտարարած է որ ռազմափորձը սկսած է յունուար 7ին եւ պիտի տեւէ մինչեւ Յունուար 16, արեւելեան Միջերկրականի ինչպէս նաեւ Յոնիական ծովու մէջ : Հրամանատարը աւելցուցած է որ «բացառիկ բան չկայ» : Ռազմափորձին կը մասնակցին Միտուէյ օդանաւակիրը, եւ Փորթսմըթին, Փրավիտընս եւ Լիթլ Րաք յածանաւերը եւ բազմաթիւ Թորփիլահալածներ :

Երբ ռազմափորձերը աւարտին, նաւաբաժինը պիտի այցելէ Կրեաէ, Յունուար 17էն 19 ինչպէս նաեւ կարգ մը հելլէնական նաւահանգիստներ — Պիրէոն, Սելանիկ, Աթէնք եւ Հերաքլեան : Թորփիլահալածնէրուն մէկ մասը պիտի երթայ Հոռոդոս, Լերոս, Վոլոս եւ Սամոս կղզիները :

★ Յունաստանի պատերազմական նախարարը, Երկրի Սթրաթոս, յայտարարեց Ուրբաթ օր թէ ապստամբները երկու զօրադիմդ տեղաւորած են Պուլկարիոյ մէջ, սահմանադլուխին չատ մօտ : Աթէնքի պաշտօնական շրջանակներուն մէջ կը տիրէ այն կարծիքը թէ այդ զօրադիմդերը բեռնակառքերով փոխադրուած են Ալպանիայէն անցնելով Եուկոսլաւիայէն : Ապստամբները կը պատրաստուին յարձակիլ Թրակիայէն՝ Քոմիքցայի մէջ իրենց կրած ձախորդութիւնը դարմանելու համար : Կառավարութիւնը հրահանգ տուած է պինուրակեան իշխանութեանց որ աչալուրջ հսկողութիւն կատարեն Պուլկարիոյ սահմանադլուխին վրայ :

Ինքնըսուն ապստամբներ գերի բռնուեցան Ոդիմպոսի հիւսիս-արեւմտեան լանջերուն վրայ : Ապստամբները 35 հոգի առեւանգեցին երբ յարձակում գործեցին լայն պոդուատյէ մը անցնող հանրակառքին վրայ Լամիայի մէջ :

★ Հելլէնական համայնավար կուսակցութիւնը որ այլեւս ապօրինի կազմակերպութիւն մըն է Յունաստանի մէջ, հրաւէր պիտի ուղարկէ Պելկրատի կոմինֆորմին անդամակցելու : Այս տեսակ որոշում մը տրուած է վերջերս կոմինֆորմի ժողովին մէջ : Աթէնքի մէջ դիտել կը տրուի որ ասիկա պիտի ըլլայ նոր ձեւ մը ապստամբ Մարկոսի «կառավարութիւնը» ճանչնալու :

Ամերիկա չորս սուզանաւեր կը յանձնէ Թուրքիոյ

Ամերիկեան ծովակալութիւնը, մօտ օրէն, Թուրքիոյ պիտի յանձնէ չորս սուզանաւեր ի հաշիւ՝ Թրումընի օրինադծով սահմանուած հարիւր միլիոն տոլար վարկէն : Համաձայն վերոյիշեալ օրինադծին տրամադրութեանց, Թուրքիա Ամերիկայէն պիտի ստանար 15 պատերազմական նաւեր :

Այս սուզանաւերը շինուած են 1944ին եւ ունին տասը ամբարձակ խողովակներ : Կը փոխադրեն 65 նաւաստիներ : Ճանճնումը պիտի կատարուի ամերիկեան նաւահանգիստի մը մէջ :

Այս լուրէն զուրկ ընթացք Ուաշինկթընի մէջ դիտել կը տրուի որ Թուրքիոյ Միութիւնը սուզանաւերու խոշոր տորմիղ մը ունի Սեւ Ծովին մէջ :

«Եթէ պիտի չ'օգնեմ, պիտի զիջուիմ»

Լոնտոնի ամերիկեան դեսպանը Լուիս Տակլըս որ ներկայիս Ուաշինկթընի կը դառնայ, Թերակոյտ Արտաքին Յարաբերութեանց Յանձնաժողովին մէջ յայտարարեց Ուրբաթ օր որ եթէ խորհրդարանը չքուէարկէ Եւրոպայի նիւթական օգնութեան օրինադիծը, հետեւանքը պիտի ըլլայ այն որ աշխարհի ռազմադիտական կէտերուն մեծ մասը պիտի ենթարկուի ոսոիկական վարչութեան մը :

«Թիւրիմացութեան մէջ են անոնք որ կ'ըսեն թէ օգնութեան ներկայ ծրագիրը յաւասէ պիտի բերէ դինեալու յաւելում մը Ամերիկայի մէջ : Եթէ օգնութիւն չտանք, մեր երկիրը պիտի վերածուի զինարանի մը՝ եթէ չօգնենք, պիտի զինուինք : Այդ պարադային ալ հետեւանքը պիտի ըլլայ միեւնոյնը — արժեզրկում» :

Դեսպանը յետոյ բացատրեց իր ունկնդիրներուն որ օգնութիւնը պիտի յատկացուի աշխարհի այն մասին որ ունի աշխարհի բնակչութեան 12 առ հարիւրը, դրել - կարդալ գիտցողներուն 26 առ հարիւրը, ճարտարարուեստական արտադրութեանց 27 առ հարիւրը, պողպատին 37 առ հարիւրը եւ փոխադրանաւերուն 68 առ հարիւրը : Այդ հողերուն վրայ էր որ մշակոյթը զարգացաւ

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. էջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ
Ուրբաթ, 5 Հոկտեմբերի 1934 թ. № 232 (6123)

Ընկեր Ստալի՛ն, թե՞

Մեր դպրոցները ինչպե՞ս կսկսեն

Ընկեր Ստալինի ուղերձը ամբողջ աշխարհի աշխատավորության համար հսկայական նշանակություն ունի։ Ընկեր Ստալինի ուղերձը ամբողջ աշխարհի աշխատավորության համար հսկայական նշանակություն ունի։ Ընկեր Ստալինի ուղերձը ամբողջ աշխարհի աշխատավորության համար հսկայական նշանակություն ունի։

ՊՈԻՏՄ ԾԻՇԱՂ

Տոտիկ-տոտիկ...

Կը հիանամ համերաշխութիւն քարոզողնե-րուն եւ կը նախանձիմ հաւատացողներուն վրայ:

Դժբախտ մարդ եմ: Ոչ համերաշխութեան կը հաւատամ, ոչ եղբայրութեան: Հաւատք չունիմ եւ «հայասիրութեան» մասին :

— Հապա «հառաջդիմական»ութե՞ն : Վըստահ եմ, որ դուն ալ անոր կը հաւատաք:

— Կանուխ է տակաւին: Երբ ծերանամ եւ ապաութեան ծարաւս մարի այն ատեն «հառաջդիմական» պիտի արձանագրուիմ :

Ըստ իմ տեսակէտիս, այս բոլոր գեղեցիկ բառերը հնարուած են բառագիրքերը ճոխացնելու եւ վախկոտները գինելու համար...

Ջարդի ու խրատի հաւատալու մէջ ալ չատ տկար եմ ...

— Հապա ի՞նչ բանի կը հաւատաս, երբ այնքան նուիրական առաքինութիւններ հոլին կոտտաս :

— Առաքինութիւննե՞ր: Կրօնքի հետ՝ հնամաճառին տուր: Ես կը հաւատամ վէճի, կռուի, իրար մրածելիքլու, ատելու, հայհոյելու, խեղաթիւրելու ...

Առօք թմրութիւնը վարատող եւ յեղափոխական ոգին ամրացնող ազդակներ են: Մարդուն չիզերը, ջուրակի լարերուն պէս կը պրկին եւ պրծ կ'արտադրեն: Մանաւանդ խակամ Հայը միշտ եւ ամէն բանի դէմ պէտք է հակաճառէ...

— Այս կերպով, բոլորին աչքին կ'ինչնաս :

— Ընդհակառակը, բոլորին աչքը կը մտնես եւ «հառաջդիմական» կը դառնաս :Եւ արդէն «աչքէ իյնալը» թաչիլնակիդ քոլը դիր: «Աչքէ մտնելու» եռանդով բռնկածներ, հանդիպած մղկիթին առջեւ նամազի նստողներ են յաճախ:

— Ուրեմն, ինչպէ՞ս բուժելու է սա մեր անհամաձայնութիւնը :

— «Հայ Բոյժ»ին դիմէ: Թերեւս «Կաղամբ կերէք» մը յանձնարարէ:

— կարծեմ, այդ թերթին խմբագիրն ալ, բարեկամ չէ համերաշխութեան ...

— Եթէ անպայման համերաշխութիւն կ'ուզէք, դեղահատի վերածեցէք զայն ու կլեցուցէք բոլոր Հայերուն: Կամ, վարչական աթոռները վինեցէք անկէ, որպէսզի բոլորը վազեն անոր ետեւէն ...

— Հայրենակից, պղպիկէն սկսինք: Նախ՝ Միութեան մը վարչական երկու անդամները իրարու հետ համերաշխեցնելու, կամ երկու տէլեգէրնեռուն իրարու «ողջոյն տէր եղբայր»ով բարեւելու միջոցը գտնէք, անկէ ետքը կը խօսինք ձեզի հետ:

— Այդ պզտի՞կ բաներով ազդը պիտի բուժենք :

— Համերաշխութիւնը կաթիլ – կաթիլ խմելու է, ապա թէ ոչ սիրտխառնուտք կուտայ:

Քիչ մըն ալ ընդարձակերով: Իրար բարեւելու դիպող քանի մը մտաւորականներ, առնուազն ամիսը հեղ մը իրարու քով դալով, յուշիկ-յուշիկ զրոյցներ են: Իրենց ծրագիրները թէյի դաւաթին մէջ կաթեցնելով ումպ – ումպ խմելու են: Իրենց դրութիւնները իրարու կարդալով հրապարակ դնելէ առաջ՝ եթէ ատկելիք բաներ կան, կարգի դնելու են:

— Արդէն այդ ըսածներդ կ'ընեն մեր ինները: Հաւաքոյթներ կը սարքեն սրահներու մէջ եւ հոն իրենց ընկերներուն դնահատանքին կ'ենթարկեն իրենց մտքին արտադրութիւնները :

— Այո, յաճախ «պուալօ կոնսոտոս, չատ հիանալի բան ես չարադրե՞ր» մը փրցնելու համար: Հոն, այդ սրահներուն մէջ, ունկնդիրէն աւելի աթոռները մեծամասնութիւն կը կազմեն, որոնք դիտողութիւն ընելու եւ ծափահարելու իրաւունքէն զրկուած են :

Նախընտրելի է, սակայ մէկ ձեռքի մատներու համրանքով մտքի տղաքը, մաքուր սրճարանի մը անկիւնը, մէկ մէկ դաւաթ հեղուկի չուրջ բոլորուին, ցած՝ փա մինէօռ ձայնով զրոյց ընելու համար... ոչ ծրագիր – կանոնադրի, ոչ վարչութիւն կոչուած դալմադանի պէտք կայ :

— Այդ խմբակին նոր մասնակցող մը, առնուազն ամիս մը լուռ ու մունջ, մտիկ ընելու է միայն:

— Աս ինչ դիւրին միջոց է եղեր:

— Ոչ կարծուածին չափ: Կեր ապա դոհացիր:

Կ. ՊԵՏՈՒՇ

(երբ կը նկարադրէ Տիգրան Երուանդեանը) ու օտար մատենադիրներ: Խորենացին մանաւանդ պէս կը բացատրէ անոր կերուխումի մէջ իսկ չափաւոր ու իր կեանքին ընթացքին ժուժկալ ապրելը, ու օտարներուն հետ կը հիանայ անոր ոսկեդանդուր առատ մաղերուն, լայն ճակատին, բարձր հասակին ու քաղցրահայեաց աչքերուն վրայ: Մինչ Միհրդատ Եւպատոր վտանգի պահուն Տիգրանի քով չապաստանած՝ ոչ միայն լքեց իր կիները ու զաւակները, այլ հոգ տարաւ իր մեկնումին առիթով որ բոլորն ալ Թումաւորուին ու մահանան:Նոյնը չէր պատահած Տիգրան Մեծին կողմէ, երբ ան 69 Թուականին քրիստոսէ առաջ՝ պաշարուած Տիգրանակերտէն կրցաւ Հռոմայեցի զինուորները ճեղքել ու դիչերանց անկէ փոխադրել Տիգրանակերտ ապաստանած իր կիները ու սիրեւկիները, ու յետոյ միայն պատրաստուեցան իր պետութիւնը փրկել ընչաքաղց Հռոմին արխնարրու դինուորներէն ...:

Օտար պատմիչներէ քաղելով, կը տեսնենք թէ օտար շատ մը կարեւոր աշխարհակալներ ոչ միայն դուրկ էին Տիգրանի բարոյական բարձրութենէն, այլ նաեւ անոր ֆիզիքական դեղեցկութենէն: Արդարեւ, Ցուլիոս Կեսար ճաղատ էր ու անբարոյական (զարմանալիօրէն իր մասին կը պատմուի որ օրինադիծ մը ստորագրած էր՝ որով իւրաքանչիւր Հռոմայեցի կրնար իր կինը փոխանակել ուրիշներու կիներուն հետ՝ համաձայն իր կիրքին ու ճաշակին, ու այս փոխանցումը հաւասար էր նոր ամուսնութեան): Միւս կողմէն՝ Աղէքսանդր Մեծը քիչ մը ասպատող էր ու միշտ դինով, Նաբուլէոն կարճահասակ էր ու ճաղատ, իսկ նշանաւոր Անդիբաղը կոյր էր ու ոգեղ :

ՆՈՒՊԱՐ ՄԱԴՈՒՏԵԱՆ

ՄՏԻԻ ԶԲՕՍԱՆՔ

ՈՐՔԱՆ ԲԱՆ ԳԻՏԷՔ

(Պատասխանները կարդալ վարը)

1.— Ե՞րբ կը պատահի Ա.— Աբելին խաւարումը, Բ.— Լուսինին խաւարումը :

2.— Ո՞րն է աշխարհի ամէնէն երկար ջրանցքը եւ ամէնէն մեծ ովկիանոսը :

3.— Ո՞ր լրտեսը կրնան Անգլիոյ երեսփոխանական ժողովին անդամ նշանակուիլ :

4.— Քանի՞ համայնավար երեսփոխան ունի Ֆրանսական խորհրդարանը: Քանի՞ M.R.P.:

5.— Ձիւղ դրուած են հետեւեալ բառերը — Դեպերիլ, հերճուած, յեղյեղուկ, հերաթափ, յեսան, անպայտ, քարակուժ, դիւցազն, դիցաբանութիւն, փքոցուռայ :

6.— «Իսկ անծանօթ եթէ մնայ երկրի մէկ խորչն հողակոյտ եմ». կը յիչե՞ք մնացեալ երկու տողերը :

7.— Անոնք ներկայ Հայաստանի սահմաններէն նե՞րսն է դուրսը :

8.— Գիտե՞ք Լենինականի, Կիրովականի ,Սթալինկրատի նախկին անուանները :

9.— Ալաբարները քանի՞ տարի տիրապետեցին Հայաստանի :

10.— Ե՞րբ կնքուած է Սան Սթէֆանոյի դաշնագիրը, Պերլինի դաշնագի՞րը :

11.— Ո՞ր աշխարհահռչակ ոդբերդակը ծնած է 1564ին :

12.— Իսրայէլ Օրին, ո՞ր թուականին եւրոպական պետութեանց օժանդակութիւնը խնդրեց Հայաստանի համար :

13.— Լեւոն Զ. թագաւորը ո՞ր երկրէն վերադարձին Ֆրանսայի մէջ մեռաւ :

14.— Ռուսական առաջին յեղափոխութիւնը ե՞րբ պայթեցաւ :

15.— Ինչո՞ւ համար երբ դեկտեմբեր 21ին եւ Յունիս 21 ին երկիրը արեւէն ամէնէն հեռու դիրքին մէջ է, տարբեր եղանակներ կ'ունենանք :

×

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ.— 1.— Ա.— Երբ լուսինը արեւին եւ երկրին միջեւ դայ. Բ.— Երբ երկիրը արեւին եւ լուսինին միջեւ դայ :

2.— Սուէզը, Պաղդադականը: 3.— Անոնք ոնց տիրողսր պատուակալ է: 4.— 186, 162:

5.— Այո՛: 6.— «Եւ յիչատակս ալ Թառամի , Ո՛չ, այն առեն ես կը մեռնիմ »:

7.— Դուբսը: 8.— Ալեքսանդրափոլ, Ղարաքիլիսէ, Յարիցին:

9.— 400 տարի: 10.— 1878ի Մարտին, Յուլիսին: 11.— Շէյքսփիր : 12.— 1702ին:

13.— Անդլիայէն 14.— 1905ին:

15.— Որովհետեւ եղանակները երկրին միայն արեւին չուրջ կատարած Թաւալումին արդիւնք չեն, այլ նաեւ իր առանցքին տատանումներէն կախուած են :

Կը խնդրուի Հ. Ց. Դ., կապոյտ Խաչի եւ դանազան կազմակերպութեանց դաւառի կոմիտէներէն եւ մարմիններէն որ ժողովներու եւ հանդէսներու ազդերը խմբագրատուն հասցնեն Թուականէն առնուազն երեք օր առաջ:

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ

ԼՍԱ ԵՒ ՀԱՄԱՑ

(ՀՈՐՀՐԴԱՎԷՊ)

Ա. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԳԱԼ

Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

Դարը պատմական էր, Արեւելքը՝ կախարդական :

Արշալոյսը նման էր ամենօրեայ վհուկի մը, որ քօղերը կամաց, կամաց վեր առնելով, կուզար , կը նայէր աւազուտքին վրայ, իր լայնածալ փեշերը փռած: Անոր աստղահիւս անուխին տակէն կը յորդէր , կը քակուէր դիւթահրաշ ծրարը թալիսմաններ: Սեւալոյս ուղունքներ, սուր շեղբեր, հնչեղ մետաղներ, խունկ ու կնդրուկ :

Ան, նախ կը հանէր մէկջէն երկար ու ծանրակիր համրիչը խաւարին, որուն իւրաքանչիւր հատիկներուն հազիւ թէ իր մոգական մատները հպած՝ խաւարը կը հալէր ,անապատին դեւերը կը հալածուէին, օձերը կը փախչէին, չնազալները լեռները կը քաշուէին խուճապահար, ու ջրաշուները կը նետուէին Նեղոսի դիրկը գետամոյն: Խաւարը կը'ւլար մարմնաթափ, բայց իր փեչերուն վրայ դեռ կ'արածէին սեւ ոչխարներ չրջախումբ: Լպիրշ երազները, մեղաբարշ ուրուականներ խռովք, անձկութիւն եւ բովանդակ կարաւանը դիչերափորձութեան: Աղամասարսուռը կը հալէր, կ'անհետար Աղամամուխեան հետ, երբ «Գառն Աստուծոյ»ն իր չուչանաթոյր գլուխը կը ցցէր հորիզոնէն, լուսաստղի մը նման:

Զանդակահարութիւնը կը սկսի, ուժգին, մխթարի, չորս դիէն: Անապատը կ'արձագանգէ պղնձադոռ: Ռումբեր կը թաւալին իր տաքին վրայէն արընթաց: Պայթիւններ , համազարկներ՝ վրաններու, քարայրներու եւ վանքերու կուրծքին: Խունկի, կնդրուկի ծխաչուէչ սիւներ կը բարձրանան, իրարու վրայ կ'իյնան, կը ճուլուին ու իրենց միախառնուածէն կը տարածուի մշուշահիւս շղարշ մը միջոցին մէջ, որ կը բաժնէ աստղերը աւազուտքէն :

Բայց ո՞ւր է կախարդուհին, ինքը կայ ու չկայ: Ան կախեր է ամէնքին լայնջքին ու թեւերուն թաւահունչ հնչակներ ու ինք անկիւն մը քաշուած՝ կ'ունկնդրէ հոգեմայլ :

Ու հիմա, փակեցէք ձեր աչքերը, որ չչլանան ու բացէք լուսամուտները ձեր հոգիներուն :

Երկնակամարին խորումկ ու մերկալ աչքերէն՝ դէպի երկիր՝ հալած լոյս մը կը հոսի պոռթկալուն: Ակունքը անհունին, ու հունը կապոյտին լոյծ խորացումներուն մէջ լուսաթաթախ: Ճանապարհին աստղերը կը մեռնին, կապոյտը կը նուաղի չաղերու չղերու եւ համանթաղներու անձրեւացումներուն տակ, ուր դիցամոյշներ, դեղամոյշներ, օդանոյշներ կը լողան, կը պարեն, կը թեւածեն բազմահոյլ: Երեք կապոյտներու արանքէն՝ Արեւելքի բարձրաբերձ դոնները կը դողան, կը փլչին լուսակոտոր: Աամազուն փեղկեր, խոյակներ, քանդակներ, դրասանդներ՝ ոլորոց վրայէն լուսագիրը կը նետուի խենթեցած գառան մը պէս փրփրածին :

Այդ պահուն, Բեթղեհէմի Աստղը՝ հազարաւոր փչուրներու բաժնուած՝ անապատի իւրաքանչիւր աւազահատիկը կը փոխակերպէ աղամանդի, յակինթի, զմրուխտի, այսպիսի տաճարահիւս պրիսմակներու :

Վերը՝ հրեշտակային տաղեր ու խաղեր: Սուրբ, Սուրբ, Սուրբ, Ալէլուիա...: Վարը՝ Արեւագալ :

Լոյս, արարիչ լոյսոյ՝ առաջին լոյս,
Բնակեալդ ի լոյս անմատոյց, հայր երկնատոր,
Ի գալուց լուսեղինաց օրհնեալ ,
Ի ծագել լուսոյ առաւօտուն,
Ծագեա ի հոգիս մեր զլոյս քո իմանալի :

Հեռուն, Սելսիէյի սիւնքով՝ մատները ական ջին կծուրցած աչքերով կը դեղերի հին Աստուածներու խորտակուած դոներուն առջեւ:

×

Այս կախարդական առաւօտներէն մին, պատռուած չրթներով, սեւաքիթ նաւակ մը, թեւերը կուչեին՝ տաքերը խրեց ափոնքին: Ան, Նեղոսի ոսկիէ ու կրակէ ալիքներէն ջրաքարշ ջրէն ելած ձուկի մը պէս կը դողար հեւաչունչ: Բայց անմիջապէս որ թեթեւցաւ իր բեռէն, սկսաւ խայտալ , պարել ու ծափ զարնել ծփանքին հետ ծիծղուն :

Բրդադէմ, սեւամոյն նաւավարը իր լծժոռ ու մռայլ աչքերը յառած, քեթին տակէն մռլտաց թթուադէմ :

— Ահա ապուշ մըն ալ, քուրձերու աչխարհին ... :

(1)

եւ խորհրդարանական դրութիւնը ծնունդ առաւ, ըսաւ դեսպանը: «Օգնութեան ծրագրին նպատակը չէ ոչ միայն անտեսական վերաշինութիւնը խնդրոյ առարկայ երկիրներուն, այլեւ պահպանումը մարդկային ազատութեանց: Այս ծրագրին դէմ է որ Խորհրդային Միութիւնը կը կռուի»:

★ Արտաքին նախարար Մարշըլ մամուլի ներկայացուցիչներուն յայտարարեց որ ճիշդ չէ այն լուրը թէ ինք սպառնալիք ըրած է հրաժարելու եթէ ծրագիրը չընդունուի:

★ Անգլիոյ եւ Ֆրանսայի արտաքին նախարարները ծրագիր կը մշակեն բացառիկ նպատակ հետապնդելու համար Եւրոպայի տնտեսական խորհրդաժողովը որ, ինչպէս յայտնի է, առաջին անգամ դումարուեցաւ յուլիս 12ին, Փարիզի մէջ՝ Մարշըլի ծրագրին նախնական քննութեան համար: Կը մասնակցէին 16 ազգեր, հինգ հրաւիրեալ պետութիւններ մերժեցին մասնակցիլ:

Հաւանական է որ խորհրդաժողովը տեղի ունենայ փետրուարի առաջին շաբթուն:

ԿԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՈՉ ՄԷԿ ԱՂԲԻՒՐԸ չեն հաստատուիր մարաչխան Սթալինի «մահուան» չուրջ եղած տարաձայնութիւնները որոնք հիմնուած են զանազան ենթադրութեաց վրայ: Լոնտոնի խորհրդային դեսպանատունը «չարամիտ քարոզութեան» կը վերագրէ լուրը: Մոսկուայէն որեւէ լուր ստացուած չէ այս մասին: Սթոքհոլմի մամուլէսը որ Մոսկուա հրաւիրուած էր շաբթուան սկիզբը, պիտի վերադառնայ երկշաբթի օր: Համաձայն տեղական թերթի մը, հիւանդը ոչ թէ Սթալինն է, այլ Միկոյեանը:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ նորընտիր դեսպանը Սըր Օլիվըր Հարվի իր յանձնարարականները հանրապետութեան նախագահին պիտի ներկայացնէ Յունուար 16ին:

ՊՈՒԿԱՐԻՈՅ վարչապետը կէորկի Տիմիթրով այս օրերս Պուտափէշթի պիտի երթայ զինակցութիւն մը կնքելու համար Հունգարիոյ կառավարութեան հետ: Երկու պետութիւններն ալ նախապէս նոյնիսկ դաշնագիրներ կնքեցին վերջերս Եուկոսլաւիոյ հետ:

ՄԱՐՈՔի սուլթանը, անձնական նամակով մը, կը խնդրէ հանրապետութեան նախագահէն որ անմիջապէս եւ կանչէ Մարոքի կառավարիչը դեսպան Ալֆոնս Փիւէն ամբաստանելով այս վերջինը թէ «բռնաբարած է 1912ին երկու երկիրներուն միջեւ կնքուած դաշնագրին տրամադրութիւնները»:

SALLE MAZENODի ՄԷՋ
ՄԱՐՍԷԼ, RUE D'AUBAGNE
2ՐԴ ԵՐԳԱՀԱՆԴԷՍԸ ԹԷՆՕՒ
Կիրակ Սազդեանի
(Ռումանական օփերայէն)
17 Յունուար, շաբաթ ժամը **20.30**ին
Յայտագիր.— Եւրոպական եւ հայկական կտորներ:
Տոմսերը ապահովել.— Bottier Royal, 39 rue de Rome, A. Aroutian 37 Canebière, Boyagian Georges, 39 rue E. Rostand, Kevork Esmerian Beaumont, A. Krikorian 37 Tapis Vert:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇՔԵՂ ՅՈՐԵԿՈՅԹ
Նախաձեռնութեամբ՝ Սեբաստիոյ Նահանգային Միութեան, վաստակաւոր դերասան՝ ՏՐԴԱՏ ՆՇԱՆԵԱՆի, մասնակցութեամբ Փարիզի հայ բեմի լաւագոյն ուժերուն, 8 Փետրուար, 1948, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Մարսըլէզի Պէռթըլօի չքեղ թատրոնին մէջ, 28bis, rue St. Dominique, métro Invalides:
Առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէ համեմատելի ողբերգու Վ. Շէյքսփիրի
ԱՐՔԱՅ ԼԻՐ
Պատմական տռամ 6 արար եւ 2 պատկեր, թարգմ. եւ բեմադրութիւն Տ. Նշանեանի:
Տոմսերու գիները, 100էն 400 Ֆրանք, կը ծախուին հայկական բոլոր գրատուները, ճաշարանները, Սեբ. Նահ. Միութեան կեդրոնին եւ մատուցիչներուն մօտ: Հարիւրին տասը պիտի յատկացուի Սեբ. Նահանգ. Միութեան ներդաշնակ Փոնտին: Սրահին ներմուծիչը ապահովուած է: Փութալ յայտագիրը:

ԼՈՑՔ ՏԵՍԱՒ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԻ
Ճոխ հատորը, որ ամբողջացուց Սասունցի Դաւիթի դիւցազներգութիւնը, շարահիւսեց
Կ. ՍԱՍՈՒՆԻ
350 մեծադիր էջ, ընտիր տպագրութեամբ, գին՝ 500 Ֆրանք: Կը գտնուի Փարիզի հայ գրավաճառներուն մօտ: Տպ. Պէյրութ, 1947:

Տարեկան շէնք ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան Կարմիր Խաչի եւ Ողբախնամի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétia-ի շքեղ սրահներուն մէջ, 43 Bld. Raspail, Paris:

Ցերեկոյթ պարահանդէս

Կազմակերպուած Փոքր ա'Իթալիի Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղին կողմէ: Կիրակի 18 Յունուար կէսօրէ վերջ ժամը 15էն 23: Պէն Տուչի սրահը, Rue Jules Ferry. Petit Ivry, մէթրօ Porte de Choisy:

Գեղարուեստական ճոխ բաժին.— Պիտի ներկայացուի ՀԱՐՍԸ եւ զաւեշտ մը, Սէվրանի Ֆ. Կ. Խաչի թատերախումբին կողմէ:

Եւրոպական պարերը կը սկսին ժամը 6ին, ղեկավարութեամբ Պ. Օհաննեանի նուագախումբին: Ճոխ պիւֆէ դիւրամատչելի գիներով:

Մուտքը 75 ֆրանք:

ԿԻՐԱԿԻ, 25 ՅՈՒՆՈՒԱՐ 1948, ԺԱՄԸ 14.30ԻՆ
Մ'Իթիւալիթէի սրահին մէջ, métro Mutualité
Յովհ. Թումանեանի մահուան 25ամեակի առիթով
Նախաձեռնութեամբ Փարիզի Հայկական երգչախումբին, մեծ պատրաստութեամբ կը ներկայացուի

ԱՆԱՒՇ

Եղեռնագործական ողբերգութիւնը 5 արար, մասնակցութեամբ Օր. ԱՆԺԻԼ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆի (Անուշ), Ա. grand Prix Wicard de la Ville de Marseille: Դր. Մ. ՔՀԹԻՐԵԱՆի (Սարօ) եւ Վ. ԱԼԹՈՒՆԵԱՆի (Մօսի): Սէնֆոնիք մեծ նուագախումբ ղեկավարութեամբ ԱՐԱ. ՊԱՐԹԵՒԵԱՆի (60 հոգի): Թումանեանի մասին պիտի խօսին եւ կ'արտասանեն ծանօթ արուեստագէտներ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Բոլոր տոմսերը թուագրուած ըլլալով կը խնդրուի նախապէս ապահովել Հրանդ Սամուէլէն Tél. Dan. 88–65, եկեղեցւոյ դիւանէն: Սապօնճեանէ 39 rue Trévise, Պ. Պարթեւեանէ, 14 rue Petit. Bot. 99–22, Պ. Բամպուքճեանէ, 9 rue Jouy Rouve, Ուշպլեանէ 61 rue Rébeval, Պարսամեան գրատունէն, եւ նոյն օրը թատրոնի կիւշէն, առաւօտէն սկսեալ:

Տոմսերու գիները՝ հարիւրէն երեք հարիւր յիսուն, տուրքերով միասին:

ԴՐԱՒՈՒՄԱԾ ՕՐ.— Ֆր. Կ. Խաչի Սէվրանի մասնաճիւղի թատերապարահանդէսը տեղի կ'ունենայ կիրակի 7 Մարտ, 1948ին: Կը խնդրուի չխաչաձեւել:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ.— Այրի Տիկին Բերկրուհի Մազլումեանի ամուսնոյն՝ կարապետ Մազլումեանի, հօրը, եղբկիւրեան Խոսրովի եւ Վարդանեան ընտանիքի ննջեցեալց համար հոգեհանդիսատեղի կ'ունենայ այսօր, կիր., Յունուար 11, Ալֆորվիլի եկեղեցին մէջ: Անոնց յիշատակը յարգողները կը հրաւիրուին:

ՏԻԿԻՆ Ս. ՍԻՆԱՆԵԱՆ ծնեալ Թէրճանեան երջանկացի, կը փնտռէ հնգքահայրը Սարգիս Կիրակոսեան երջանկացի որ Տիթրոյթ ըլլալ կը կարծուի: Նաեւ մօրաքրոջ աղջիկը Սրբուհի Զուքուրեան որ նոյնպէս Ամերիկա ըլլալ կը կարծուի: Տեղեկացնել Տիկին Սիրանոյշ Սինանեանի, 31 rue de Nice, Alfortville, Seine:

« ԴՈՑԱՄԱՐՏ » պատի օպացոյցները ստացուած են եւ կը ծախուին Բալուեան գրատան մէջ, 43 Rue Richer, Paris (9), ինչպէս նաեւ Նոր Սերունդի անդամներուն քով: Գինն է 100 Ֆրանք: Փաւալը մեծ ըլլալով փոստով չի ղրկուիր: Անձամբ դիմել եւ ստանալ:

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Փարիզի Հայոց եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերակցութեան բոլոր անդամները՝ 18 Յունուար 1948, կիրակի ժամը 2.30ին Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, օրակարգ ունենալով եկեղեցւոյ օգնական լուսապար Պ. Յակոբ Ճօրթուեանի քահանայական թեկնածուութեան հարցը:

Կը խնդրուի բոլոր անդամներէն որ հաճին անձամբ ներկայ ըլլալ այս ընդհ. ժողովին եւ կատարել իրենց վերեղեցասիրական պարտականութիւնը:

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶԻ Հ. Յ. Դ. «Ռոստոմ» խումբի բացակայողները պատասխանատու են:

Հ. Յ. Դ. ԱԼՖՈՐՎԻԼԻ Ս. Մինասեան ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերները 12 Յունուար երկուշաբթի իրիկուան ժամը 8.30ին, սովորական հաւաքատեղին:

ՏԻՍԻՆԻ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի վիճաբանական ժողովը այս երկուշաբթի իրիկուն ժամը 9ին Հ. Յ. Դ. Տան մէջ: Նիւթ՝ «Խորհրդային վարչաձեւը Հայաստանի մէջ»:

ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ կը տեղեկացուի որ Մարսէյլի «Արմենիա» երգչախումբի համերգը տեղի կ'ունենայ յառաջիկայ յարթիլ 18ի կիրակին, կէս օրէ վերջ: Կը խնդրուի չխաչաձեւել:

ԼԻՈՆԷՆ Տիկին Արմաւենի Սէդրայտաբեան իր ներքոյը՝ Տիկին ՄԱՐԻ ՍԷՐԱՑՏԱՐԵԱՆի մահուան առթիւ՝ փոխան ծաղկեպսակի հազար Ֆրանք կը նուիրէ Լիոնի Ֆրանսահայ Կապոյտ Խաչի մասնաճիւղին:

ԳՐԱՒՈՒՄԱԾ ՕՐ.— Կապոյտ Խաչի Տեսիլի Ազգային վարժարանի կրթական մարմինը կը պատրաստուի տալ պարահանդէս մը յառաջիկայ 21 Փետրուար շաբաթ երեկոյ: Կը խնդրուի չխաչաձեւել: Մանրամասնութիւնները յառաջիկայ:

ԼՈՒ. ՍԻՈՒԹԱՑի ընկերներուն մէջ հաւաքուած է 1700 Ֆրանք, ի նպաստ Վեթ. Ֆոնտին: Ստանաւ «Յառաջ»էն:

«Զանգէ» օդին 40°
Ամէնէն աճարատը եւ ամէնուն փնտռածը
Լիտր 400 Ֆրանկ
կրնաք անմիջապէս ընել ձեր
յանձնարարութիւնները
Ami ՆՊԱՐԹԵՂԷՆԻ Վ.ԱՃԱՌԱՏՈՒՆՆԷ
D. NARGUIZIAN, 62 Rue Rabelais, Lyon

Իսիի Հայերու ժամադրավայրը
Café des Sports, 4 rue de la Défence Հեռ. Mic. 37–03
Հայրենակի'ց, կեանքդ թարմացնելու համար կ'ուզե՞ս լաւ օղի խմել, դիմէ վերի հասցէին, ուր ընտիր աղանդերներով համեմուած լաւագոյն օղին պիտի հրամցուի քեզի:
ՄԻԱՑՆ ԱՍ ՉԷ

Ազատ սրահը ձեր տրամադրութեան տակ է, պայմանաւ որ 8 օր առաջ անձամբ, հեռաձայով լուր տաք, հարանիքի, մկրտութեան, նշանառութեան եւ ամէն տեսակ հանդէսներու համար, կը հայթայթենք նոյնպէս պէտք եղած ըմպելիները, խաղամիս գիներով:
Տէր եւ Տիկին ՍԱՐԳԻՍ ԵԼԻԱԶԱՐԵԱՆ

Ամենակարեւոր հասցէ մը
ԼՈՒՏԵՐ ՖԵՆԷՐՃԵԱՆի
Աշխատանոցը բացուած է եւ կը ստանձնէ չէնքի նորոգութեան եւ զետեղումներու ամէն կարգի աշխատանք վարպետներու ձեռքով: Նորոգութիւն աղօրիքներու, արդուկներու եւ կազի վառարաններու: Բաղնիքի եւ խոհանոցի փոդզու-թիւն եւ ապակիներու զետեղում: 'Իմիլ՝ Entreprise Générale Etablissement LODER, 25 Route de Villejuif, L'Hay-les-Roses, դիմել նամակով: Autobus 186:

ՃԱՇԱՐԱՆ ԼԻԼԸ
Որ բոլորած է իր fսաՆամեակը եւ տիքա-
ցած արդար համբաւի մը,
Պատրաստ է գոհացնելու իր ամէնէն դժուարահաճ յաճախորդները իր համեղ
կերակուրներով ու բազմապիսի աղանդերներով
Հեռաձայն TRI 31 - 62
24, Rue St. Lazare, PARIS (9)

Ազատ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — fondé en 1925 —
R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN
17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Ն.Ամ. 15 ռուբ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Mardi 13 Janvier 1948 Երեքշաբթի 13 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5238-Նոր շրջան թիւ 847 Խմբագիր Շ. ԱՐՍԱՖԵԱՆ ԳԻՆԸ՝ 5 ֆր.

Ցուրտի օգնութեան ճոպանը

ՆՈՐ ԱՌԱՔՈՒՄՆԵՐ ՍԿԶ

Ձրտութենէ տառապող ոչխարներուն համար ամբողջ գիւղեր կ՚ոչնչանան ամէն տարի։ Ցուրտէն ոչ միայն ոչխարները, այլ նաեւ մարդիկ կը մեռնին։ Ձմրան ամիսներուն Հայաստանի մէջ ցուրտը 30 աստիճանի կը հասնի։ Ձիւնը կը ծածկէ ամբողջ գիւղերը, ճամբաները կը փակուին, եւ գիւղերը կը մնան ամիսներով կապի մէջ քաղաքներուն հետ։ Ձիւնի տակ կը մնան նաեւ ոչխարները։ Ձիւնը կը հալի միայն գարնան, երբ ոչխարները կը գտնուին ձորերուն մէջ, ուր ձիւնը աւելի խոր է։ Ձիւնի տակ ոչխարները կը մնան 5-6 ամիս։ Ձիւնը հալելէ ետք,

Նկարագրի 1947թ. գրաքննության ենթարկված տպագրության համար։ Ֆոտոպատճենահարման համար։ Ընդգծումները բնագրում։ Ընդգծումները բնագրում։ Ընդգծումները բնագրում

է կեղծիքով արտայայտուիլ, այն ալ արտասահմանի մէջ եւ պաշտօնական լիազօրներու բերաններով կամ հրապարակային արտայայտութիւններու մէջ: Ինչպէ՞ս կարելի է արդարացնել այս ուղղութեամբ կատարուած քարոզչութիւնը մը որ ըսելիք նպատակ չունի եթէ ոչ խարեբայ միամիտ ժողովուրդ մը ոտքի հանելու համար «վերջին տրուած հրամաններու :

Արդեօ՞ք այդ պատրոնները կամ լիազօրները կ'անգիտանան թէ Խանջեան մը սպանուեցաւ բանտին մէջ, որովհետեւ միամտօրէն հաւատացած էր թէ կարմիր դրախտին սահմանադրութեան մէջ «այլացեղ ժողովուրդներու համար լայն ինքնավարութիւն» բացատրութիւնը օրինական, եւ ոչ թէ ձեւական հիմունք ունէր: Ճիշդ այդ միամտութեան զոհ չգացի՞ն Կասեանն ու Աստուածատուրեանը, Մխոյեանիկեանն ու Մակինցեանը, Շահվերտեանն ու Շահումեանը, Իւզպաշեանն ու Երզնկաեանը, Դաւիթեանն ու Վարդանեանը, Աթանասեանն ու Ղեւոնդեանը, Գալիկեանն ու Զուխուրեանը: Այդ «յանցանք»ին համար չէ՞ր որ սպանուեցաւ Զարենցը : Եւ դեռ ուրիշներ :

Նահատակներու եղերական վախճանը չ'արգուցանի՞ր թէ այնտեղ կարելի չէ, ոչ ազատութեան, ոչ ալ արուեստական ինքնավարութեան մասին խօսք ընել: Ալ ուր կը մնայ անկախութիւնը :

(1)

ՋԱՁՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԼԷ ՉՕԼԻՎԻ ՄԷՋ

Ընկալեալ առաւօրութեամբ հանդէսներու անունները պճնազարդող « աննախընթաց » բառը թերեւս անդօր ալիտ ըլլար պատկերացնելու համար բացման հանդէսը Լէ գ'Օլիվի Հ. Ը. Դաշնակցութեան «Իշխան» ու Համօ Օհանջանեան «Նոր Սերունդ»ի խումբերուն, որ տեղի ունեցաւ Ցունուար երեքին շաբաթ երեկոյ :

Այս պզտիկ գիւղին պարզունակ սրահը լեցուած էր ընտրեալ բազմութեամբ մը, ոչ միայն թաղեցիներով, այլ նաեւ շրջաններու ենթակոմիտէներու ներկայացուցիչներով: Հոս եւս պատուոյ տեղ դրաւած էին Ֆրանսացի ընկերվարականներ: Բացի Mme. Irma Rappuziէն ներկայ էր քաղաքապետարանի խորհրդական Jean Mass եւ Լէ գ'Օլիվի ընկերվարականներէն Michel Garo :

Գիւղին աղքատիկ բեմին վրայ կային Դաշնակցութեան հիմնադիրներուն մեծադիր ու դուռնաւոր նկարները, ինչպէս նաեւ կաղանդի ծառը:

Հինգ հարիւրի մօտ հանդիսականներու ներկայութեամբ բացումը կատարուեցաւ Փրանսական քայլերգով, որուն յաջորդեց «Մշակ բանուոր»ը, որուն ոգեկոչութեան երկիւղածութեամբ եւ յոտնկայս :

Գեղարուեստական բաժնի առաջին մասին տեղի ունեցան, նոր տարուայ յատուկ երգեր ու արտասանութիւններ տասներկու տարեկանպզտիկներու կողմէ, որոնք իրենց արտասանած նիւթը ըմբռնած , կատարեալ դերասաններ էին կարծես, որոնց մէջէն ամէնէն տաղանդաւորն էր եօթը տարեկան Ժաննէթ Զինեանը մէկէ աւելի դերերով եւ արտասանութիւններով որ արժանացաւ անվերջ ծափերու: Օր. Ժաննէթ Դաւիթեան իր հնչեղ ու անուշ ձայնով «Շնորհաւոր ձեզ, բարի կաղանդ եկաւ նոր տարի, աւետիս» երգերով բեմ առաջնորդեց «Հայր Բարսեղ»ը կաղանդ պապան երկայն ու ճերմակ մօրուքով :

Երկրորդ մասը սկսաւ տասր վայրկեան դադարէ վերջ, երբ կարգը եկած էր «Նոր Սերունդ»ի երկսեռ պատանիներուն, որոնք հայրենասիրական արտասանութիւններ ըրին եւ երգեցին :

Ընկերվարականներէն խօսեցան Jean Mass, եւ Mme. Irma Rappuzi, որոնք հայ ժողովուրդի բարեմասնութիւնները թուելէ վերջ խոստացան իրենց կարելին ընել օժանդակելու համար, ատոր նեղ օրերուն :

Շրջանային կոմիտէի կողմէ խօսեցաւ ընկեր Ասատուր Քէօսէեան, Դաշնակցութիւնը նմանցնելով, հայ ժողովուրդի հարազատ զաւկին որուն ժառանգ մնացած էր իրական ոսկի զինուորը: Ու Դաշնակցութիւնը արժեցուց հարազատ զաւկի մակդիրը, ատեղծելվ Մայիս 28ը, շեշտեց ընկերը:

« Իշխան խումբի կողմէ խօսեցաւ ընկեր Ս. Մխլոնեան որ չնորհակալութիւն յայտնելով ներկաներուն, Դաշնակցութիւնը նմանցուց խորհրդական կաղնիի մը որ չարունակ նոր ճիւղեր կ'արձակէ, այդ ճիւղէն մին է Լէ գ'Օլիվի «Իշխան» խումբը եւ անոր ծիրն է քանի հինգ հոգինոց Համօ Օհանջանեան Նոր Սերունդի խումբը :

Ժամը մէկէն վերջ սկսան եւրոպական պարերը, որոնք մերթ ընդ մերթ կը համեմատէին հայկական եւ կովկասեան պարերով որոնք տեւեցին մինչեւ լոյս :— Պարթեւեան

×

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ֆ. Կապոյտ Խաչի Մարսէյլոյ մասնաճիւղի Մանուկներու օրուան տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Ցունուար 3ի, կէսօրէ վերջ : Ընկերուհի Հ. Շալճեան տղոցը իր բնակարանը տրամադրած ըլլալով, լիագարձակ սրահին մէջ պատրաստուեցաւ հայկական կաղանդի աւանդական սեղանը, ամէն տեսակ պտուղներով եւ խմորեղէններով, որուն չորքը տեղ բռնեցին 45 փոքրիկները 4էն 10 տարեկան: Խաչուհիները մայրական հոգածութեամբ եւ ժպտուն ու երջանիկ, նախընթերցը եւ ուտելիքներ կը բաժնէին տղոց :

Ախորժակներուն հետ լեզուները ալ բացուելով, արտասանութիւն, երգ , խմբերգ իրարու կը յաջորդէին, ատեղծելով զուարթ եւ տաքուկ մթնոլորտ մը: Բոլորն ալ բան մը ունէին ըսելիք կարծես իրարու հետ մրցումի ելած էին: Մխիթարեան էր լսել 5 տարեկան երեխաները որոնք մաքուր առոգանութեամբ հայրենասիրական երգեր կը թռթռվէին: Մինչ Օր. Հ. Թորոսեանի եւ Օր. Ա. Աւաքեանի երգապնակները իրենց « Հօյ նար ով կամ «Պլպուլ»ով հայ երգը կը հոսեցնէին մատաղ ուղեղներէն ներս : Շարժանկարի ժապաւէնի մը ցուցադրութենէն վերջ, բոլորին անխտիր բաժնուեցաւ մէկ մէկ գոյգ կաշխ sportի կօշիկներ եւ մէկ մէկ ծրար պտուղ :

Այս առթիւ վարչութիւնս պարտք կը զգայ հրապարակաւ իր շնորհակալութիւնը յայտնել Մարսիլիայի կօշիկի գործատէրերուն որոնք մեր բոլոր ձեռնարկներուն առատաձեռնօրէն կը մասնակցին եւ այս անգամ ալ մեզի նուիրեցին 50 զոյգ կօշիկ՝ փաքրիկներուն բաժնուելու համար : Վարչութիւնս նոյնպէս շնորհակալութիւն կը յայտնէ Տէր եւ Տիկին Շալճեաններու որոնք ոչ միայն իրենց բնակարանը տրամադրեցին մեզ, այլ նուիրատուութեանց ալ առատաձեռնօրէն մասնակցեցան :— Հ. Վ.

ԼՈՒՐԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

ՊՕՍԹՐՆԻ ԹՕՓԱԼԵԱՆ ԴՐԱԴԱՐԱՆԸ

Պոսթընի հայրենակից մը՝ Վահան Թօփալեան նուիրած է Պոսթընի հայ համայնքին իր ամբողջական հայկական հաղուստներու դրադարանը: Բացումը տեղի ունեցած է Նոյեմբեր 6ին :

Թօփալեան դրադարանը կը պարունակէ ոչ միայն հայերէն, այլեւ աշխարհի բոլոր դասականներուն լաւագոյն գործերուն առաջին հրատարակութիւնները չքեղ կազմով: Ունի հայկական բոլոր թերթերու եւ պարբերաթերթերու հաւաքածոն մինչեւ 60ական թուականները: Անգին հաւաքածոյ մըն է որ կարելի է բաղդատել միայն Վենետիկի եւ Վիէննայի հայկական դրադարաններուն հետ :

Թօփալեան դրադարանին չէնքը որ կը գտնուի քաղաքին կեդրոնը ընդարձակ հաստատութիւն մըն է, եւ հայթայթուած եւ վերաշինուած է Թօփալեանի Տիգրանակերտցի հայրենակիցներու առատաձեռնութեամբ :

ՆԱՄԱԿՆԵՐ « ՅԱՌԱՋ »ԻՆ

Սիրելի «Յառաջ»,

Իմ անձնական առաջնորդ, նախ քեզի շնորհակալութիւն, դուն որ ինծի եւ ինծի նմանեալ ու շատ նոր Սերնդականներու մանուկ հոգիին մէջ կաթեցուցիր ազգային դիտակցութիւնը եւ սէրը եւ փրկեցիր այլասերումէ :

Շնորհակալութիւն նաեւ Հ. Ը. Դաշնակցութեան Ս. Լուի Ակնումի ենթ.ին, Կապոյտ Խաչին, Նոր Սերունդի մեր ընկեր – ընկերուհիներուն եւ Փղիի Հայրկ. Մխիթեան Ս. Լուի մասնաճիւղին, որոնք հեռաւոր մեր բուժարանին մէջ ալ ջմռոցաններ, հիւանդներ եւ մխիթարեցին ու քաջալերեցին մեզ տօնական օրերուն:

Ս. Լուի Նոր Սերունդի անդամներէն
Տիգրան Հոսրոեան

ԿԸ ՄՆԴՐՈՒԻ Հ. Ը. Դ. , Կապոյտ Խաչի եւ դանազան կազմակերպութեանց գաւառի կոմիտէներէն եւ մարմիններէն որ ժողովներու եւ հանդէսներու ազդերը խմբագրատուն հասցնեն թուականէն առնուազն երեք օր առաջ:

ԼՍԱ ԵՒ ՀԱՄԱՏ

(ՅՈՐՀՐԴԱՎԷՊ)

Ա. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԳԱԼ

Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

Նորածագ արեւուն սլացիկ առէջներուն տակ, իսկապէս հսկայ կետ ձուկ մը լիր երկար ու դողահար սառերը փռեց ցամաքի վրայ :

Անոր հասակը նման էր Հիւսիսի երկնաբերձ կաղնիներուն, ու գլուխը՝ Արեւելքի խմաստունները ծանրութեամբ: Նաւաստիները սարսափած, եա, եա քաշուեցան: Քարոն կը հեռանար :

Կռնակը արեւուն տուած այդ յաղթանդամ սառերը պահ մը եռք սկսաւ շարժիլ, կծկուիլ ու ամփոփուիլ, մինչեւ որ մաս մը գլուխին, մաս մը թեւերէն, խոշոր մաս մը հասակէն արեւուն փոխ տուած՝ աւազին վրայ ուրուագծեց օտարական մը, տառատակը ուսին, ուռուռ գաւազանը ձեռքին եւ խորհրդի կնճիռը ճակատին: Անոր աչքերուն դէմքին ու տրեխներուն վրայ նստած էին փոշին ու ցեխը հեռաւոր աշխարհի մը, ուր մերթ ընդ մերթ կը ծնին ու կը մեռնին ճերմակ սաւաններու մէջ, լեռներ կը թաւալին ու կը լրդանան դաշնաթաւալ աղբիւրներու կատարին: Ճերմակ չուշաններ կը ծնին ու չեն մեռներ երբեք, չրջապատի ծիլին ու ծաղիկին հետ վերածնելով :

Իսկ հո՞ս... Տարաշխարհիկ, տարօրինակ հոգամաս մը: Բնական ու անբնական, ներդաշնակ ու աններդաշնակ հակադիր ու համադիր : Նեղոս եւ Սիւք, Եղիսեան դաշտ եւ Սբ. Թէփոյիտ ... :

Մովսէս դարահոլով ճանապարհին վրայ ինկած ուղեւորը առաւ ու քալեց յամրաքայլ: Անոր վիրաւոր կրունկներուն տակ աւազուտը տաքցաց ու հեծեծեց հառաչահոտ ոտքի համելով հսկայ թափորը մրափող ոգիներուն, որ կ'ողջունեն գինք խորհրդաւոր չարժումներով: Անոնց ողջոյնը թէ հեթանոսական էր, թէ՛ Քրիստոնէական:

Արեւը նման էր Ապեւելքի ոսկեքանդակ դրոշներուն փակած հրաթաւալ մատնիսի մը որ իրեն կը քաշէ բովանդակ աւազուտքը: Անկամուրջ տարածութիւններու մէջէն կը հոսեցնէ հոսանուտ մը, որուն մաղնիսածոր ալիքներուն մէջ բովանդակ անապատը կուչ եկած, կը ցնցէ իր բաշերը, կը դոփէ ոտքերը եւ իր պղինձէ այրած ճակատը կը դարձնէ ծնկաչոք Արեւելքին :

Այս ելեկտրահար երկրամասին մէջ, Հիւսիսն ու հարաւը եւ Արեւմուտքը հալէր, տարրալուծուէր եւ նոյնացեր են Արեւելքին հետ, ուր արեւածագիկներ կ'աճին, կը բազմանան, իրենց հոգիներուն բաժանները վերկինքին կարկառած :

Գաւազանակիր ուղեւորը կը քալէ ծանրադէմ, բայց ո՞ւր եւ ինչո՞ւ ...:

Ոչ ոք չտեսաւ թէ ինչպէս անապատը ճչաց մէկէն պատռտուելով իր արդանդէն, ուրկէ դուրս ելաւ աստուածներէն մին, հսկայ մագաղաթ մը բռնած, որուն էջերէն մէկուն վրայ մատնեցը կտրած ցոյց կուտար ուղի մը ճակատագրական :

Ուղին իր ուղղութիւնն էր ուղղութիւնը աւազէ քաղաքին սեմին վրայ կանգնած հարիւրաւթոռնոց աստիճանի վրայ իր հորիզոնաչափ հայեացքը: Ահա դիմացը վրաններ, հիւղեր, խըրճիթներ ու խաչեր, եւ լայնքին կրծքին, ուսերուն ու թեւերուն վրայ: Իսկ բզդուն փեթակը անապատականներուն՝ ամէն տեղ, պարսի նետած :

Անոնցմէ տմտնք կը հառաչեն, լռութիւնը իրենց ծոմապահ ակռաներուն տակ սեղմած: Ոմանք պիչերէն մնացած փորձանաւոր պատկերի մը սեւ շղարշը կը կրծեն: Ուրիշներ կը ծամեն ձանձրոյթի փշուրներ , ամենօրեայ աղօթագրքին իւղոտ էջերէն փրցուած: Աւելի ուրիշներ անջրդի աւազուտքին մեղրի խորխորներ հանելու, մեղուական աշխատանքին են լծուած :

Մշակութիւն, կողովագործութիւն, աւազագործութիւն , ոսոխականութիւն ու դեռ հոգեբուժութիւն: Բալասանը՝ հեչտութեան կաթսաներուն մէջ եռացած արիւնն ու քրտինքը մարդուն :

Կեանքի խմաստը՝ տաքերը աւազին խրած, ճակատը արեւին կը հովուէ իր դոհարեր հոտը, խորհրդաւոր մականի մը տակ, հաւատք :

— Աղաղութիւն ընդ քեզ ...

— Գովեալ է Աստուած, եղբայր օտարական:

(2)

ՑԱՌԱՋԻԿԱՑ չորս տարուան մէջ — Ապրիլ 1948էն մինչեւ յունիս 1952 — ամերիկեան կառավարութիւնը հետեւեալ գումարները պիտի յատկացնէ Եւրոպայի, եթէ խորհրդարանը վաւերացնէ օրինագիծը որ ներկայիս կը քննուի.
— Անգլիա՝ 5348 միլիոն տոլար, Ֆրանսա՝ 3701 միլիոն, Իտալիա 2913 միլիոն, Գերմանիոյ անդրեւմտեան գօտիները 2499 միլիոն, Հոլանտա 2436 միլիոն, Պելճիքա եւ Լիւքսէնպուրկ 1419 միլիոն, Աւստրիա 713 միլիոն, Տանիմարքա 582 միլիոն, Իրլանտան 497 միլիոն, Յունաստան 473 միլիոն, Նորվեկիա 234 միլիոն, Փորթուգալ 150, Իսլանտա 38, եւ Թուրքիա 18 միլիոն:

ԼԻԲԱՆԱՆԻ կառավարութիւնը լուծեց խորհրդարանը - լիբանանեան մշակութային ընկերակցութիւնը եւ գրաւեց անոր կեդրոնատեղին: Ապրիլուեցաւ Սարեթ եւ Շաբաթ համայնավար թերթերուն հրատարակութիւնը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ կառավարութիւնը առաջարկած է Թէհրանի կառավարութեան զինուորական պիտոյքները ղրկել՝ կազմակերպելու համար իրանեան բանակը:

ԱԹԻՆՔԻ զինուորական դատարանը մահուան դատապարտեց 26 Ցոյներ որոնք ամբաստանուած էին թէ օժանդակած էին ապստամբ Մարկոսին:

ԼՈՆՏՈՆի քաղաքական շրջանակներուն մէջ կը նախատեսուի որ Խորհրդային Միութիւնը բոլորովին հեռանայ Միացեալ Ազգերու կազմակերպութենէն: Այս մասին կարդ մը քօղազերծուած յայտնութիւններ ըրաւ չարաթ օր Մոսկուայի ձայնասփիւռը: Մոսկուայի մէջ մեծ վրդովում յառաջ բերած է Ամերիկայի կողմէ Յունաստանի տրուած զինուորական օժանդակութիւնը: Զայնասփիւռին դէկուցանողը դիտել տուաւ որ Նիւ Եորքի միջազգային հիմնարկութիւնը ամերիկեան քաղաքականութեան հոլու, հնազանդ գործիքը եղած է:

ՀՈՒՆԳԱՐԻՈՑ Սոցիալ - Դեմոկրատ կուսակցութեան վարիչներէն կարլ Փէյէր որ նոյեմբեր 18ին Աւստրիա փախաւ, չաբաթ օր Փարիզէն անցնելով Լոնտոն դնաց: Պուտափէշթի ռուսական իշխանութիւնները դինքը կը մեղադրէին երկու ամիսէ ի վեր: Փէյէր հակառակ էր իր կուսակցութեան եւ համայնավար կուսակցութեան միացման առաջարկին:

Լոնտոնի մէջ պիտի մասնակցի այն խորհրդաժողովին զոր Եւրոպայի գանազան մասերէն Անգլիա ապաստանած քաղաքական տարագիրներ պիտի դումարեն այս օրերս: Պատասխանելով մամուլի ներկայացուցիչներուն հարցումներուն, Պ. Փէյէր չհաւնց թէ «չատ ուրախ է որ անդամ մը եւս առիթ կ'ունենայ այցելելու ազատ ու ժողովրդավար Անգլիան»:

ԱՆԳԼԻԱ եւ Ֆրանսա ծրագիրներ կը մշակեն մաքսային միութիւն մը ստեղծելու համար իրենց գաղթավայրերուն համար:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇՔԵՂ ՅՈՐԿՈՑԹ

Նախաձեռնութեամբ՝ Սերաստիոյ Նահանգային Միութեան, վաստակաւոր դերասան՝ ՏՐԴԱՏ ՆՇԱՆԵԱՆի, մասնակցութեամբ Փարիզի հայ բեմի լաւագոյն ուժերուն, 8 Փետրուար 1948, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Մարբէլն Պէոլիօի չքեղ թատրոնին մէջ, 28bis, rue St. Dominique, métro Invalides:

Առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէ հանճարեղ ողբերգու Վ. Շէյքսփիրի

ԱՐՔԱՅ ԼԻՐ

Պատմական տուամ 6 արար եւ 2 պատկեր, թարգմ. եւ բեմադրութիւն Տ. Նշանեանի:

Տոմսերու գիները, 100էն 400 ֆրանք, կը ծախուին հայկական բոլոր գրատուները, ճաշարանները, Սեր. Նահ. Միութեան կեդրոնին եւ մասնաճիւղերուն մօտ: Հարիւրին տասը պիտի յատկացուի Սեր. Նահանգ. Միութեան ներդաղթի Ֆոնտին: Սրահին ներմուծիչը ապահովուած է: Փնտռել յայտագիրը:

Կ'ՈՒԶՈՒԻ ֆարտուղար մը կամ քարտուղարուհի մը որ տեղեակ ըլլայ նաեւ հաշուապահութեան եւ մեքենագրութեան: Դիմել Տապաղեանի, 30 rue de Trévise, Paris (9): Հեռաձայն Tai. 40 -- 63:

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ

Ե յօբելեանի դիւցազներգութիւնը, չարահիւսեց

Կ. ՍԱՍՈՒՆԻ

350 մեծադիր էջ, ընտիր տպագրութեամբ, գին՝ 500 Ֆրանք: Կը գտնուի Փարիզի հայ գրավաճառներուն մօտ: Տպ. Գէյրութ, 1947:

Ցերեկոյթ պարահանդէս

Ֆր. Կ. Մաչի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը, տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24, Hôtel Continentalի չքեղ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde:

Նուագախումբ ՖԷՐՆԱՆ ՊՈՒԶՕՆ: Գեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ:

Տարեկան շքեղ ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան կարմիր Մաչի եւ Ութբանեամի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 6 Փետր. կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէջ, 45 Bld. Raspail, Paris:

Ցերեկոյթ պարահանդէս

Կազմակերպուած Փորթ տ'Իթալիի Ֆ. Կ. Մաչի մասնաճիւղին կողմէ: Կիրակի 18 Յունուար կէսօրէ վերջ ժամը 15էն 23: Պէս Տուչի սրահը, Rue Jules Ferry. Petit Ivry, մէթրօ Porte de Choisy:

Գեղարուեստական նոր բաժին.— Պիտի ներկայացուի ՀԱՄԱՍ եւ վաւերչ մը, Սէվրանի Ֆ. Կ. Մաչի թատերախումբին կողմէ:

Եւրոպական պարերը կը սկսին ժամը 6ին, ղեկավարութեամբ Պ. Սուսեանի նուագախումբին: Ճոխ պիւֆէ դիւրամատչելի վճարով:

Մուտքը 75 ֆրանք:

ԿԻՐԱԿԻ, 25 ՅՈՒՆՈՒԱՐ 1948, ԺԱՄԸ 14.30ԻՆ
Մ'Իթթալիթէի սրահին մէջ, **métro Mutualité**
Յովհ. Թումանեանի մասուան 25ամեակի առիթով
Նախաձեռնութեամբ Փարիզի Հայկական երգչախումբին, մեծ պատրաստութեամբ կը ներկայացուի

ԱՆԱՀԻՏ

Եղած չեղածը 5 արար, մասնակցութեամբ Օր. Ասծխ. ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆի (Ատուշ), Ա. grand Prix Wicard de la Ville de Marseille: Դր. Մկրտչեան (Սափօ) եւ Վ. Ալթունեանի (Մօսի): Սկիզբը մեծ նուագախումբ ղեկավարութեամբ Ա.Ս.Ա. ՊԱՐԹԵՒԵԱՆի (60 հոգի): Թումանեանի մասին պիտի խօսին եւ կ'արտասանեն ծանօթ արուեստագէտներ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Բոլոր տոմսերը թուագրուած ըլլալով կը խնդրուի նախապէս ապահովել Հրանդ Սամուէլեան Tél. Dan. 88-65, եկեղեցւոյ դիւանէն: Սափօնճեանէ 39 rue Trévise, Պ. Պարթեւեանէ, 14 rue Petit. Bot. 99-22, Պ. Բամպուքճեանէ, 9 rue Jouy Rouve, Ուշպլեանէ 61 rue Rébéval, Պարսամեան գրատունէն, եւ նոյն օրը թատրոնի կիւշէն, առաւօտեան սկսեալ: Եւ թերթերու խմբագրութենէն:

ԳՐԱՒՈՒՄԱՅ ՕՐ.— Ֆր. Կ. Մաչի Սէվրանի մասնաճիւղի թատերապարահանդէսը տեղի կ'ունենայ կիրակի 7 Մարտ, 1948ին: Կը խնդրուի չխաչաձեւել:

« ԳՈՑԱՄԱՐՏ » պատի օրացոյցներ ստացուած են եւ կը ծախուին Բալուեանի գրատան մէջ, 43 Rue Richer, Paris (9), ինչպէս նաեւ Նոր Սերունդի անդամներուն քով: Գինն է 100 Ֆրանք: Ծաւալը մեծ ըլլալով փոստով չի ղրկուիր: Անձամբ դիմել եւ ստանալ:

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Փարիզի Հայոց եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերակցութեան բոլոր անդամները՝ 18 Յունուար 1948, կիրակի ժամը 2.30ին Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, օրակարգ ունենալով եկեղեցւոյ օգնական լուսարար Պ. Յակոբ Ճօրճունեանի քահանայական թեկնածութեան հարցը:

Կը խնդրուի բոլոր անդամներէն որ հաճին անձամբ ներկայ ըլլալ այս ընդհ. ժողովին եւ կատարել իրենց եկեղեցասիրական պարտականութիւնը:

Imprimerie DER AGOPIAN. 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ԼԻՈՆԻ Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Սիամանթօ խումբին դասախօսութիւնը տեղի կ'ունենայ վաղը, չորեքշաբթի ժամը 8.30ին դպրոցին սրահին մէջ, 78bis, rue Rabelais: Կը դասախօսէ ընկեր Կ. Մանուկեան, նիւթ ունենալով «Մեր հայրենիքը»: Կը հրաւիրուին բոլոր Կ. Մաչուհիները եւ համակիրները:

ԱԼՖՈՐՎիլի Հ. Ց. Դ. Նոր Սերունդին մասնաճիւղի դասախօսութիւնը այսօր, երեքշաբթի իրիկուն ժամը 8.30ին «Հայ Ազգային տան» մէջ: Կը դասախօսէ ընկեր Հայկ Սարգիսեան:

ՄԱՐՍԻԼԻԱ.— «Քրիստափոր» ենթակոմիտէի ժողովը տեղի կ'ունենայ այս ուրբաթ իրիկուն ժամը 8ին, Պար տիւ Կլօպի մէջ: Կարեւոր օրակարգ:

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ Փարիզի մասնաճիւղի դասախօսութիւնը, այս հինգշաբթի, ժամը 9ին, SociétésSavantesի մէջ: Նիւթ «Հայ ժողովուրդը յեղափոխութենէն առաջ եւ յետոյ»: Դասախօս Պ. Վչտունի: Հայերէնի դաս 8էն 9:

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ Փարիզի շրջանային վարչութիւնը ժողովի կը հրաւիրէ Փարիզի շրջանի «Նոր Սերունդ»ի բոլոր մասնաճիւղերու վարչութիւնները, չորեքշաբթի 13 յունուար ժամը 8.30ին, ծանօթ հաւաքատեղին:

ՌՈՄԱՆ.— Հ. Ց. Դ. Նոր Սերունդին դասախօսական ժողովը տեղի պիտի ունենայ այս չորեքշաբթի ընկեր Վարուժան Մուպիկեանի բնակարանը ժամը 8.30ին: Կը դասախօսէ ընկեր Ա. Պօյաճեան:

ՌՈՄԱՆ.— Հ. Ց. Դ. Նոր Սերունդի խնջոյքը տեղի պիտի ունենայ այս չորեքշաբթի իրիկուն, ժամը 8ին Փաթրոնաժ Սէն Պէրնարի չքեղ սրահին մէջ: Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ: Ճոխ պիւֆէ: Մուտքը ազատ է:

ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ կը տեղեկացուի որ Մարսէյլի «Արմենիա» երգչախումբի համերգը տեղի կ'ունենայ յառաջիկայ ապրիլ 18ի կիրակին, կէս օրէ վերջ: Կը խնդրուի չխաչաձեւել:

ԴՐԱՒՈՒՄԱՅ ՕՐ.— Կապոյտ Մաչէ Տեսչի Ազգային վարժարանի կրթական մարմինը կը պատրաստուի տալ պարահանդէս մը յառաջիկայ 21 Փետրուար չաբաթ երեկոյ: Կը խնդրուի չխաչաձեւել: Մանրամասնութիւնները յառաջիկայ:

SALLE MAZENODի ՄԷՋ
ՄԱՐՍԻԼԻԱ, RUE D'AUBAGNE
2ՐԴ ԵՐԳԱՀԱՆԴԷՍԸ ԹԷՆՕՒ

Կիրակ Սազդեանի

(Ռումանական օփերայէն)
17 Յունուար, շաբաթ ժամը 20.30ին

Յայտագիր.— Եւրոպական եւ հայկական կտորներ:

Տոմսերը ապահովել.— Bottier Royal, 39 rue de Rome, A. Aroutian 37 Canebière, Boyagian Georges, 39 rue E. Rostand, Kevork Esmerian Beaumont, A. Krikorian 37 Tapis Vert:

ՃԱՇԱՐԱՆ ԼԻԼԻԱ

Որ բոլորած է իր բանաստեղծական տիպարացած արդար համբաւի մը,

պատրաստ է գոհացնելու իր ամէնէն ընտրուարահաճ յաճախորդները իր համադամ կերակուրներով ու բազմապիսի աղանդերներով

Հեռաձայն TRI 31 - 62

24, Rue St. Lazare, PARIS (9)

ՎԻՐԱԲՈՑԺ - ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Պ. Ա. ԴԱՒԻԹԵԱՆ

Կը յայտարարէ Պօմպոնաբեակ իր յարգելի յաճախորդներուն որ օգտուելով քաղաքին ելեկտրականութեան չաբաթական երկու օրուան դադարէն կ'ընդունի իր հիւանդները,

ԵՐԿՈՒՇԱԲԹի ԵՒ ԵՐԵՔՇԱԲԹի

Իր անձնական բնակարանը 15 Bld. du Nord, La Rosière (Marseille) առտուան ժամը 9էն մինչեւ 5: Իսկ՝

ՀԻՆԳՇԱԲԹի ՕՐԵՐԸ

քաղաքի իր դարմանատունը, 53 Cours Lieutaud: Կարօտ հիւանդները եւ երկաեռ ուսանողները ձրի:

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 աճպ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Mercredi 14 Janvier 1948 Չորեքշաբթի 14 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5239-Նոր շրջան N° 848 — Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ — ԳԻՆ՝ 5 Ֆր.

Պիտի զիևուիմ հբէ...

ԹՐՈՒՄԸՆԻ Ա.ԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Նախագահ Թրումըն երկուշաբթի օր խորհրդարանին ներկայացնելով 1948ի ելմտացոյցը ըսաւ որ Ամերիկա ստիպուած պիտի ըլլայ զինելու եթէ Եւրոպայի մէջ հաստատուն մենատիրական վարչաձեւեր :

Յառաջիկայ տարեշրջանին համար (սկսյ Յունիսէն) ընդհանուր ելք նախատեսուած է 39.700.000.000 տոլար որուն 46 առ հարիւրը պիտի յատկացուի ինքնապաշտպանութեան ինչպէս ա- եւ արտասահմանեան երկիրներու տնտեսական-ժանդակութեան : Զինուորական պէտքերու յատկացուած դումարն է տասնըմէկ միլիառ տոլար որուն 900 միլիոնը օդային ուժին : Սորեւ ու տանք իր ճառին ղլխաւոր մասերը.—

Նախագահը նախ դիտել տուաւ որ չատ աւելի «տուղի պիտի նսան» մեր սպառազինումը — այն պարագային երբ Եւրոպան ենթարկուի մենատիրական վարչաձեւի — քան ներկայիս առաջնակուած օգնութեան ծրագրին գործադրութիւնը : Առաջին մասնավճարը զոր պիտի ընենք եւրոպական ազգերուն եւ Չինաստանի, պիտի հասնի 4.400 միլիոն տոլարի : Մարշըլլի ծրագրին գործադրութեան համար պէտք պիտի ունենանք 6800 միլիոն տոլարի — յառաջիկայ 15 ամիսներուն : Կառավարութիւնը կը նախատեսէ 44.500 միլիոն տոլար Յունուար 1948ի տարեշրջանին :

« Մեր բոլոր ծախքերը , տակաւին, անխուսափելիօրէն պատերազմին եւ իր հետեւանքներուն պատճառու կը կատարուին : Մեր եղմտացոյցին 79 առ հարիւրը ուղղակի արդիւնքն է անցեալ պատերազմին, աւերներուն ինչպէս նաեւ նոր պատերազմի մը առաջքը առնելու մեր ճիգերուն : Տասնըմէկ տոկոս ... պաշտպանութեան համար, 279 միլիոն աւելի քան նախորդ տարեշրջանին :

« Եթէ Եւրոպայի երկիրներուն տնտեսական օգնութիւն հասցնելու մեր ծրագիրը ձախողի եւ համաշխարհական վարչաձեւը ծաւալի այդ հողերուն վրայ, պիտի վերաքննենք մեր ապահովութեան խնդիրը եւ նոր քայլեր պիտի առնենք՝ որուած պայմաններուն մէջ :

Նախագահը մանրամասնօրէն ներկայացուց պետութեան նախահաշիւը, բայց մերժեց մանրամասնութիւններ տալ հիւլէական ուժի զարգացման յատկացուած դումարներուն մասին : Ըսաւ միայն թէ պատկան յանձնաժողովին տրամադրութեան տակ դրուած է 400 միլիոն տոլար :

ՆԻՒ ԵՈՐՔԻՆ կը հաղորդեն որ հրէական գործակալութիւնը պաշտօնապէս դիմում պիտի կատարէ Միացեալ Ազգերուն որ միջազգային ինքնուրոյն ուժ մը յատկացնէն Պաղեստինի բաժանման ծրագրին գործադրութեան համար : Գործակալութիւնը պիտի առաջարկէ 15էն 20 հազար հոգինոց զօրախումբ մը՝ երկրին անդորրութիւնը ապահովելու նպատակաւ : Այս տեղեկութիւնները մամուլի ներկայացուցիչներուն հաղորդած է գործակալութեան քաղաքական բաժնին վարիչը Շէրթոք :

Երկուշաբթի օր գարձեալ ընդհարումներ տեղի ունեցան Պաղեստինի տարբեր կամ մասին վրայ երբ Արաբները յարձակեցան հրէական գիւղերուն վրայ : Կռիւներն ու սպանութիւնները կը շարունակուին Երուսաղէմի, Հայֆայի եւ Թել Աւիվի մէջ :

ԼՈՋԱՆԷն կը տեղեկացնեն թէ Ռումանիոյ գահընկէց թագաւորին շրջապատէն կարեւոր անձնաւորութիւն մը յայտարարած է որ եթէ թագաւորը չստորագրէր երեն ներկայացուած հրաժարականը, դատարան պիտի առաջնորդուէր իբրեւ դաւադիր :

Վարչապետ Կրոզա , համաձայնաւար նախապարտներու ընկերակցութեամբ երկուքուկէս ժամ տեւակցութիւն կ'ունենայ թագաւորին հետ : Այս վերջինը կ'ուզէ իմանալ թէ կառավարութիւնը ինչ միջոցներու պիտի դիմէ եթէ ինք մերժէ ստորագրել հրաժարականը : Կը պատասխանուի թէ դատի պիտի կանչուի եւ պիտի ամբաստանուի թէ ըրեռնութիւն կը կատարէր ի նպաստ Ամերիկայի : Վարչապետը կը յայտնէ նոյնիսկ որ Մանուլի դատավարութեան ընթացքին, մերեան հանուած են այնպիսի փաստաթուղթեր որոնք կը հաստատեն թագաւորը ճարահատեան իր մեղակցութիւնը : Թագաւորը ճարահատեան կը ստորագրէ ներկայացուած հրաժարականը :

ՕՐԸ ՕՐԻՆ

ՀԱՑԵՐԷՆ ՍՈՐՎԻՆԻ

Շարունակենք հայերէն սորվիլ, Երեւանի բարբառով, բայց մեր ուղղագրութեամբ. —

Միաւորեալ Ազգերի ատամբլէյի սէսիայում սովետական դելեգացիան մի անգամ եւս մերկացրեց ամերիկական դիւլոմատիայի ագրեսիվ տենդենցները Իրանում :

★ Շուտով լոյս է տեսնելու լաւրիատ-պօէտ Ն. Զարեանի մի մատենարալ պօէման՝ նուիրուած դեներալիսիմուս Ստալինի :

★ Երեւանի համալսարանի Փիլոլոգիական ֆակուլտետը լրացրեց մի չարք ասպրոլոգիական, պրոտանիկական, զօօլոգիական, դէոլոգիական , պատոլոգիական, էնթէոլոգիական , պսիխոլոգիական եւ ֆիզիոլոգիական բառերի սեռմիոլոգիան :

★ Արտասահմանի հետ կուլտուրական կապի Ընկերութեան վիցէ պրեզիդենտ Մարիա Պետրոսեանը վերջերս ընտրուել է դիմպուտատ Երեւանի ժ. օգրուհիից :

★ Հոկտեմբերեան ռեվոլիւցիայի տարեդարձի առթիւ, Ֆրանսիայի կոմունիստական պարտիան մի դեղլարացիա հրատարակելով , դատապարտում է Զորրորդ Ռեսպուբլիկայի ռէպրեսիան մեղալոմանիան :

★Աբեւելեան Ֆրոնտի կոմենդենտ մարշալ-դե-Ներալ X.ը իր մօտ հրաւիրելով Գ. դիվիզիայի օֆիցերներին, նրանց բացատրեց ամերիկայի եւ նոր ստրատեգիայի պրոբլէմները :

×

Ձեր չհասկցած բառերը կրնաք փնտռել որեւէ օտար բառարանի մէջ, քիչ մը տատադարձութիւն տալով :

— Բայց աւելի լաւ չէ՞ անոնց հայերէնը սորվիլ, մէկ անդամէն :

= Մ՛յ դու մաուղերիստ, ֆաշիստ, բուրժուա - նացիոնալիստ, կոր՛ր ...

ՎԱՐՄԱԶ

Ռուսիա պիտի գործէ ամերոյ պետիները?

Քաղաքական շրջանակներու մէջ կը տիրէ այն կարծիքը թէ խորհրդային իշխանութիւնները մօտ ատենէն քայլեր պիտի առնեն՝ Պերլինի ազեմատեան թաղամասերն ալ իրենց գօտիին մէջ առնելու եւ Ամերիկացիները, Անգլիացիները եւ Ֆրանսացիները հեռացնելու համար :

Այդ ձեռնարկը յաղողցնելու համար Ռուսերը — համաձայն Ամերիկացիներու ենթադրութեանց — պիտի սաստկացնեն ջամբարը որ ներկայիս յառաջ կը մղուի Պերլինի մէջ : Խորհրդային իշխանութիւնները չարաթներէ ի վեր կը քարոզեն թէ արեւմտեան Գերմանիոյ մէջ անկախ կառավարութիւն մը ստեղծելու ծրագիրը, անկարելի կը դարձնէ Միջդաշնակցային հակակշիռի յանձնաժողովին աշխատանքները : Կըսուի նաեւ թէ ռուսական իշխանութիւնները կրնան թէքնիք դժուարութիւններ յարուցանել եւ, օրինակ, դրաւել բոլոր կայարանները ու փոխադրական միջոցները : Անհատանական չինկատուիլը նոյնիսկ որթուսերը բռնի կերպով դուրս հանեն Դաշնակիցները : «Եթէ այդքան առաջ երթան, կը նշանակէ թէ անոնք աչք առած են պատերազմը, դիտել կուտայ Ամերիկացի պինուորական մը :

Պերլինի խորհրդային մամուլը բացէ ի բաց կը յայտարարէ որ Դաշնակիցները Պերլին մնալու իրաւունք չունին : Թող մեկնին անոնք որ կ'ուզեն անդամահատել Գերմանիան , կը գրէ «Կարմիր Բանակ» թերթը :

ՄԱՀՄԹՄԱ կանոն կամաւոր ծառայութեան սկսաւ երէկ «իրականացնելու համար Հընդիւներու եւ Մահմէտականներու համերաշխութիւնը» : 1932էն ի վեր չորրորդ անդամն է որ այս միջոցին կը դիմէ :

ՄԻՍՅԵՒԼ ԱԶԳԵՐՈՒ Պալքանեան յանձնախումբը փաստով ապացուցած է որ Ալպանիա գործօն դեր կատարած է ի նպաստ հելլէն ապստամբներուն եւ միջամտած է Յունաստանի ներքին գործերուն :

«Ռուսիոյ ղեկտցէր դիպի պատերազմ կը տանի»

Անգլիոյ փոխ-վարչապետը Հէրպերթ Մորիսըն որ Աշխատաւորական կուսակցութեան յայտնի դէմքերէն մէկն է, կիրակի օր կարեւոր ճառ մը խօսելով Էդմընթըի մէջ, դիտել տուաւ որ Մոսկուայի Միութեան ներկայ քաղաքականութիւնը մարդկութիւնը պատերազմի կ'առաջնորդէ :

«Մենք բացարձակօրէն անկեղծ ենք երբ կը վախնանք դործակցիլ Ռուսիոյ եւ Ամերիկայի ընչպէս նաեւ մնացեալ ազգերուն հետ՝ յանուն խաղաղութեան եւ յառաջդիմութեան, ըսաւ Պ. Մորիսըն : Երբ կը քննադատեմ Ռուսիոյ քաղաքականութիւնը , ցաւով է որ կ'ընեմ ատիկա քանի թէ զայրոյթով : Անգլիոյ Աշխատաւորական կուսակցութիւնը , պոլշեւիկեան յեղափոխութենէն ետք , օգտագործեց իր բոլոր միջոցները որպէսզի պետութիւնները չի միջամտեն Ռուսիոյ գործերուն :

Չկայ բան մը որ աւելի բաշխանք քան գործակցութիւն մը Մորհրդային Միութեան հետ՝ խաղաղութիւնը պահպանելու համար : Եւ սակայն թող չսպասուի որ ամէն առեն մենք լուռ մնանք երբ առայօդ ու չարամիտ յարձակումներ կ'ըլլան մեր երկրին ու մեր կառավարութեան դէմ : Ուսիոյ համայնավարներուն ընչպէս նաեւ միջազգային համայնավար կուսակցութենց կողմէ որոնք հոլ հնապաղ ծառանեն են խորհրդային արտաքին նախարարութեան : Մենք չուզախանալու պատճառները չենք կրնար ունենալ երբ արեւելեան Եւրոպայի երկիրները իրարու եռանէ կ'ենթարկուին ոչ-ժողովրդավար եւ ժողովուրդներուն կամքը չարաչահող համայնավար կառավարութեանց, երբ կը լուծուին քաղաքական կուսակցութիւնները, կը ընջուի մամուլի ազատութիւնը, գանգուածային հալածանք կը սկսի եւ նոյնիսկ մահապատիժ կը դատապարտուին ոչ - համայնավարները : Մենք, ոչ միայն կը ցաւինք այդ իրողութենց վրայ, այլ կը զայրանանք ոտովհետեւ մենք կը հաւատանք ժողովրդավարութեան եւ մարդկային ազատութեան սկզբունքներուն : Մեր ցաւն ու ցասումը շատ աւելի մեծ են երբ այս դէպքերը կեղծիքով ու ագմկարարութեամբ ցոյց կը տրուին իբրեւ մէկոցներ ժողովրդավարութեան, ազատութեան եւ հակաֆաշականութեան յաղթանակին :

Ոչ ոք կ'ուզէ խանգարել Մորհրդային Միութեան ներքին կարգադրութիւնը : Անոնք ալ չեն կրնար փոխել իրենց ուղղութիւնը եւ հրաժարիլ քենց գրգռիչ քաղաքականութենէն որ ոչ միայն պատերազմի սպառնալիք մըն է այլեւ կը խափանէ տնտեսական վերականգնումի աշխատանքները» :

★ Լոնտոնէն կը տեղեկացնեն թէ արտաքին նախարար Պեվին , վերջ մը եւս պիտի կատարէ մերձեցում յառաջ բերելու համար Մորհրդային Միութեան եւ արեւմտեան դաշնակիցներուն մի - ջեւ : Նախարարը այս մասին յայտարարութիւն մը պիտի ընէ խորհրդարանին մէջ՝ յառաջիկայ շաբթու :

Յունաստանի դէպքերը

Աթէնքէն կը տեղեկացնեն թէ 20 հրոսակներ սպանուեցան եւ 16 հոգի ձերբակալուեցան երբ ընդհարում մը տեղի ունեցաւ, երկուշաբթի օր, Փաթրասի մէջ, 600 ապստամբներ եւ կառավարական ուժերուն միջեւ : Այս վերջիններս գրաւած են Նիքանովա եւ էքզոհի արուարձանները, (Պոնտոսյի հիւսիսը) :

★ Տասնըվեց Ամերիկացի սպաներ որոնց մէջ կան գնդապետներ եւ հազարապետներ, Աթէնք հասան անցեալ կիրակի օր եւ այս շաբթու ճակատ պիտի երթան պինուորական կացութիւնը քննելու համար : Սպաններու ուրիշ խումբ մը պիտի հասնի յառաջիկայ շաբթու : Այս բոլոր պինուորականներն ալ մաս պիտի կազմեն հելլենական զանազան սպայակոյտերու եւ հետուէն պիտի վարեն պատերազմական գործողութիւնները՝ ապստամբներուն դէմ :

★ Ամերիկեան առաքելութեան պետը յայտարարեց որ եթէ հելլէնական թագաւորական արժէ - պրկումը շարունակուի, Յունաստանի տագալտումը անխուսափելի է եւ ապստամբները կուիւ ընելու պէտք չեն ունենար : Ինչպէս արդէն գրած էինք երէկ, անգլիական մեծաղ ոսկին Աթէնքի մէջ կ'արժէր 235.000 տրախմի : Վերջին վեց ամսուան մէջ դինները կրկնապատկուած են : Օրալարձերը , որոնք յաճախում կրեցին վերջերս , դարձեալ անբաւարար են : Ապստամբական շարժումը շատ անստոյգ վիճակ մը ստեղծած է երկրին մէջ : Շինարարական աշխատանքները ընդհատուած են : Ապստամբները պինուորական յաղողութիւն ձեռք չեն բերած , բայց քաղաքացիք ըրած են սահմանապլուխի դիւղերը : Սովի վտանգ ալ կայ դիւղական շրջաններու մէջ :

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

Տարի մը առաջ Ֆրանսիոյ մէջ հրատարակուեցաւ Լեւոն Զաւարեանի «Ոսկի ճամբան» վէպը։ Ֆրանսերէն թարգմանութեան մէջ վէպին անունը դարձած է «Ոսկի ճամբան, որ կ՚անցնի Ալեքսանդրապոլէն»։ Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։ Ֆրանսացի ընթերցողները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։

Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։ Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։

Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։ Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։

Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։ Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։

Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։ Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։

Իրենք ալ կը հաստատեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։ Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։

Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։ Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։

Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։ Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։

Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։ Ֆրանսացի քննադատները կը գրեն, որ Զաւարեանի վէպը ամենէն ուշագրաւ գործն է, որ մինչեւ հիմա հրատարակուած է ֆրանսերէն լեզուով։

պատրաստուած եւ դեռ չմեկնած հազարաւորներու անել եւ թշուառ կացութիւնը :

Թող ներուի մեզի որ հարկադրուած ենի կրկնելու որ մեզի կը պակսին ստացուած թիւերը 1947ի տարեշրջանին Հայաստան արդէն մեկնածներու եւ մինչեւ այժմ մեկնումի պատրաստ սպասողներու : Ասոր փոխարէն մենք գիտենք հետեւեալ փաստերը :

Ռումանիայէն՝ Օգոստոսէն ի վեր ներգաղթի արտօնութիւն ստացած եւ իրենց բոլոր պատրաստութիւնները տեսած հայրենակիցները ձմրան այս ծանր օրերուն կը սպասեն միշտ փոխադրող նաւերուն :

Պարսկաստանի մէջ աւելի ծանր վիճակ մը ստեղծուած է : Շուրջ 15.000 արձանագրուածներ՝ մեկնումի արտօնութեամբ, լքեր են իրենց գիւղերն ու բնակավայրերը, տեղափոխուելով դէպի ուր կայաններու մէջ : Ասոնք ալ կը սպասեն, միշտ կաղմ ու պատրաստ :

Պաղեստինի մէջ 700 ընտանիքներէ, 100ը փոխադրուեցաւ միայն Հոկտեմբերի վերջերը, շաբաթներով Հայֆայի մէջ ամեն տեսակի թշուառութեան մատնուելէ ետք : Իսկ 600 ընտանիքները կը սպասեն դեռ, թէեւ միշտ 947ի փոխադրուողներու ցանկերուն ալ արձանագրուած :

Եգիպտոսի մէջ 15.000 արձանագրուողներէն, 7000ը արտօնուած էին մեկնելու երկու կարաւաններով : Ասոնցմէ կէսը փոխադրուեցաւ հոկտեմբերին, մինչ 1500 հոգիի բոլոր երեքը Աղեքսանդրիոյ նաւահանգիստը ամբարուած, տէրերը դէմիկոր կը թափառին ենթակայ անլուր թշուառութեան :

Ֆրանսայի մասին, աւելորդ կը նկատենք կրկնութիւններ ընել : Գոհունակութեամբ հաստատենք, որ Մարսէյլի մէջ կատարուած վերջին անախորժութիւններէն յետոյ,այսուամենայնիւ մեծ թիւ մը չեն ներկայացներ մեկնումի դժուարութիւն ունեցողները :

Զլսօսինք ուրիշ վայրերու մասին, այլապէս հետաքրքրական թէեւ— այլ աշխատինք հանել ճիշդ եղակացութիւնը վերը յիշուած չոր փաստերէն :

Որպէսի մեկնութիւն ալ արուի մատնանշուած կացութեան, վճռապէս կարելի է պնդել, որ ներգաղթի այս դժուարութիւնները երկու աղբիւրներէ կուգան : Առաջինը՝ Մոսկուան — Խորհրդ. մեր հայրենիքի բուն քաղաքական կեդրոնը, իսկ երկրորդը՝ այն օտար երկիրները, որոնք որոշ դժուարութիւններ ունեցան արտօնելու համար իրենց հպատակ Հայերու ներգաղթը :

Այս երկու գլխաւոր արգելքները ճշդելէն ետք, արդարութիւնը կը պահանջէ սակայն ընդգծել նոյնպէս, որ երկրորդ դժուարութիւնը հաղիւ թէ վճռական դեր կատարած է ներգաղթին վրայ :

Ֆրանսական կառավարութեան ցոյց տուած վերջի խստութիւնը իր քաղաքացի Հայերու վերաբերմամբ, մանաւանդ դէպք մը պիտի նկատել : Վերջին հաշուով քանի մը հարիւր, անգամ մէկ քանի հազար Ֆրանսահպատակ Հայերու հանդէպ եղած արգելքին զերծ կը մնան տասնեակ հազարաւորներ, որոնք միշտ ալ ազատ են մեկնելու, Նոյնը կարելի է ըսել Ամերիկայի վերաբերմամբ, ուր նոյնպէս մեծ աղմուկ բարձրացաւ մէկ քանի հարիւր ներգաղթողներու չուրջ :

Մնացեալ բոլոր երկիրներուն մէջ, հայ գաղթականութիւնը, տեղական կառավարութիւններէն ոչ միայն դժուարութիւններու չէ հանդիպած, այլեւս ստացած է ամենալայն եւ բացառիկ հնարաւորութիւններ :

Այս պայմաններուն մէջ, ինդրին լուսաբանութիւնը, հարկադրաբար մեզ կը մղէ ծանրանալ վերը մատնանշուած առաջին արգելքի վրայ, որմէ ետք աւելի հեշտութեամբ կը ճշդուին ներգաղթի իրական թիւնամիները :

Թ.Ս.

կեղծիք եւ իրականութիւն

(Ր. եւ վերջին մաս)

Այս անժխտելի փաստերէն վերջ ի՞նչ համոզումի հակառակ քարոզ կարդալ արտասահմանի մէջ, այն ալ պաշտօնական բերաններով :

Ընդունինք պահ մը — օրինակ մը տուած ըլլալու համար — որ մեզի կաթողիկոսը ազգին դեմքադրոյն հեղինակութիւնն է, իմաստուն ու հայրենասէր, եւ ան ինչ հրահանգներ տայ մեզի կրօնական գետնի վրայ, պէտք է համակերպինք: Բայց սխալ պիտի չըլլա՞ր եթէ կուրօրէն հետեւէինք

Օր· ՍԻՐԱՆՈՑՇ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ
ԸՆԿԵՐ ԳԷՈՐԳ ԹՈՒՓԱՆԵԱՆ
ՆՇանուած

1 Յունուար 948 Պաներէօյ

ՀԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԻԱՑԵԱԼ Նահանգներու արտաքին նախարարը երկուշաբթի օր, խորհրդարանի արտաքին յարաբերութեանց յանձնաժողովին մէջ դարձեալ յանձնարարեց քուէարկել Եւրոպայի օգնութեան օրինագիծը: Եթէ ընդ առաջ չերթանք Եւրոպայի պահանջներուն, մեզի համար պիտի ստեղծուին շատ անհաստատ պայմաններ, ըսաւ նախարարը: Առեւտրական նախարարն ալ իր կարգին, դիտել տալէ ետք թէ ծրագիրը շատ խոշոր զոհողութիւն մը պիտի ըլլայ Ամերիկայի ժողովուրդին համար, կոչ ըրաւ որ խորհրդարանը քուէարկէ զայն «որովհետեւ մեր ձեռք բերելիք օգուտը շատ աւելի մեծ է քան այսօրուան մեր զոհողութիւնը»:

ՖՐԱՆՍԱԿԱՆ խորհրդարանին 1948ի տարեշրջանը բացուեցաւ երէկ, քաղաքական անստոյգ մթնոլորտի մը մէջ: Ֆրանքը փրկելու համար կառավարութեան մշակած օրինագիծը որ մեծ զրժուարութիւններով քուէարկուեցաւ խորհրդարանէն, մեծ ընդդիմութիւն յառաջ բերած է երկրագործներու եւ մանր առեւտրականներու մօտ: Գիներու զսպելի անկում չկայ տակաւին. կարգ մը պատղներ եւ բանջարեղէններ աժանցած են, բայց միսը բարձրացած է:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ յայտնի գրագէտներէն ոմանք, խտօրէն կը քննադատուին դարձեալ համայնավար կուսակցութեան մամուլէն: Շատերը ամբաստանուած են թէ չեն յարգեր խորհրդային ապրուեստին մաքրութիւնը եւ սկզբունքները: « Ամբաստանեալներուն » մէջ կան Ալէքսանդր Ֆատէյեւ, Իլիա Էրէնպուրկ, Կոնստանտին Ֆէտին եւ Ալէքսանդր Մակարով: Գրական չարաթաթերթի մը ցաւ կը յայտնէ որ կարգ մը գրողներ ի գործ չեն դրած ինքնաքննադատութեան պոլշեւիկեան սկզբունքը: Սիմոնովի դրուածքներուն մէջ նշմարուած են «զաղափարական սայթաքումներ»: Ֆատէյեւ յանձն առած է վերատին գրել իր «Երիտասարդ պահակը» որուն մէջ հեղինակը կը նկարագրէ գիւղացիներու սարսափը՝ գերմանական գրաւման օրերուն:

ՄՈՍԿՈՒԱՅԻ «Քրաւատա»ն կատաղի յարձակում մը կը գործէ աշակողմեան ընկերվարութեան ու մասնաւորաբար Անգլիոյ վարչապետին, Պ. Էթլիի վրայ որ անցեալ շաբթու կը յայտարարէր թէ համայնավարութիւնը գերութիւն է: Այդ ճառը կ'ապացուցանէ որ բրիտանական ընկերվարութիւնը ոչ միայն հեռու մնացած է աշխարհակալութեան դէմ մղուած պայքարէն, այլ, ընդհակառակն, անձնատուր եղած է Ամերիկայի եւմական շրջանակներուն, կը գրէ «Քրաւատա» հետեւաբար Էթլին ալ իր կարգին, մխացած է Լէոն Պլումին, միջազգային պատեհապաշտութեան այդ նահապետին:

ԱՆԳԱՐԱՑԻ համալսարանէն վտարուեցան երեք վիրաբոյժներ որոնք ձախակողմեան հակումներ ունէին: Վերջերս ուսանողները բողոքած էին եւ ցցեր կազմակերպած էին պահանջելով երեք ամբաստանեալներուն հրաժարականը:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ· Բ· Ը· Միութեան ցերեկոյթ - երեկոյթը տեղի պիտի ունենայ, Առաքել վարդապետի հովանաւորութեամբ, 1948 Յունուար 18 կիրակի օրը Hôtel Georges Vի սրահներուն մէջ: Զոյգ օր - քէսքէթա եւ հաճելի անակնկալներ:

Հրաւիրեալներու թիւը սահմանափակ ըլլալով, նախապէս ապահովել տոմսը եւ տեղանքը:

Ուսանողներու համար մատչելի տոմս:

Դիմել Բարեգործականի գրասենեակը, 11 Սքուար Ալպոնի, կամ Պ· Պ· Պետրոս Պալըքճեանի, 43 rue des Petits Carreaux, Paris (2), Հեռ· Gut. 08-48, Խաչիկ Ջէպպաճեանի, 66 rue d'Hauteville, Paris (10), Հեռ· Pro. 25-36, Գէորգ Փարմաքի, 47 rue Blanche, Paris (9), Հեռ· Tri. 39-09, եւ Մանուէլ Ոսկերիչեանի, 62 rue Beaubourg, Paris (3), Հեռ· Arc. 77-90:

Հ· Բ· Ը· ՄԻՈՒԹԵԱՆ Փարիզի մասնաճիւղին դասախօսութեանց երկրորդը տեղի կ'ունենայ 24 Յունուար, չաբաթ օրը, ժամը 16ին: Բանախօս՝ Փրոֆ· Հ· Խաչատրեան, միւթան Վիէննայէ, Աստղիկ Պեռ· համալսարանէն: Նիւթ՝ «Հայ ժողովուրդին ծագումը»: Վայր·— Հայ Ուս· Ոստան, 57 Պուլվար Ժուռտան, մէթրօ Փորթ ա'Օռլէան: Հայ մտաւորականութեան եւ երիտասարդութեան մասնաւոր ուշադրութեան կը յանձնենք այդ չահեկան բանախօսութիւնը, որուն կը յաջորդէ ազատ վիճաբանութիւն: Մուտքը ազատ է:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ·— Այրի Տիկին Նուրիճանեան եւ բոլոր պարագաները իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, նամակով եւ ծաղկեպսակներով իրենց յարգանքը եւ ցաւակցութիւնը յայտնեցին իրենց ողբացեալ ամուսնոյն եւ ազգականին Պ· ՍՏԵՓԱՆ ՆՈՒՐԻՃԱՆԵԱՆի մահուան առթիւ:

Ցերեկոյթ պարահանդէս

Ֆր· Կ· Խաչի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը, տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24, Hôtel Continentalի չքեղ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde:

Նուագախումբ ՖԼՐՆԱՆ ՊՈՒԶՕՆ: Գեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ:

Տարեկան շէյն ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Մխիթեան Կազմիր Խաչի եւ Ողբաթնամի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր· կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէջ, 43 Bld. Raspail, Paris:

Ցերեկոյթ պարահանդէս

Կազմակերպուած Փորթ ա'Իթալիի Ֆ· Կ· Խաչի մասնաճիւղին կողմէ: Կիրակի 18 Յունուար կէսօրէ վերջ ժամը 15էն 23: Պէն Տուէի սրահը, Rue Jules Ferry. Petit Ivry, մէթրօ Porte de Choisy:

Գեղարուեստական ճոխ բաժին·— Պիտի ներկայացուի ՀԱՅՐԸ եւ վաւերա մը, Սէվրանի Ֆ· Կ· Խաչի Թատերախումբին կողմէ:

Եւրոպական պարերը կը սկսին ժամը 6ին, ղեկավարութեամբ Պ· Օհանեանի նուագախումբին: Ճոխ պիւֆէ դիւրամատչելի գիներով:

Մուտքը 75 ֆրանք:

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՕՐ·— Ֆր· Կ· Խաչի Սէվրանի մասնաճիւղի թատերապարահանդէսը տեղի կ'ունենայ կիրակի 7 Մարտ, 1948ին: Կը խնդրուի չխաչաձեւել:

« ԴՈՑԱՄԱՐՏ » պատի օրացոյցները ստացուած են եւ կը ծախուին Բալտեան գրատան մէջ, 43 Rue Richer, Paris (9), ինչպէս նաեւ Նոր Սերունդի գրատունէն քով: Գինն է 100 Ֆրանք: Մաւալը մեծ ըլլալով փոստով չի ղրկուիր: Անձամբ դիմել եւ առնել:

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Փարիզի Հայոց Եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչութիւնը ընդհ· ժողովի կը հրաւիրէ ընկերակցութեան բոլոր անդամները՝ 18 Յունուար 1948, կիրակի ժամը 2.30ին Ս· Յովհ· Մկրտիչ Եկեղեցւոյ մէջ, օրակարգ ունենալով եկեղեցւոյ օգնական լուսարար Պ· Յակոբ Ճօրթուեանի քահանայական թեկնածութեան հարցը:

Կը խնդրուի բոլոր անդամներէն որ հաճին անձամբ ներկայ ըլլալ այս ընդհ· ժողովին եւ կատարել իրենց եկեղեցասիրական պարտականութիւնը:

Կ'ՈՒԶՈՒԻ Քարտուղար մը կամ քարտուղարուհի մը որ տեղեակ ըլլայ նաեւ հաշուապահութեան եւ մեքենագրութեան: Դիմել Տապպեանի, 30 rue de Trévise, Paris (9): Հեռաձայն Tai· 40 — 63:

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ Հ· ՏԱՏՐԵԱՆ իր զաւկին Բարսեղ Տատրեանի մահուան 4րդ տարելիցին առթիւ 1000 ֆրանք կը նուիրէ Ֆր· Կ· Խաչին: Ստանալ « Յառաջ »էն:

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Մօտ օրէն կը ներկայացուի
ՀՐԱԶ ՏԱՐՕՆԵԱՆԻ
Նոր Թատերդուքիանը

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԻ

Յայտնի դիւցազներգուքիանը, չարահիւսեց

Կ. ՍԱՍՈՒՆԻ

350 մեծադիր էջ, ընտիր տպագրութեամբ, գին՝ 500 ֆրանք: Կր գտնուի Փարիզի հայ գրավաճառներուն մօտ: Տպ· Պէյրութ 1947:

Imprimerie DER AGOPIAN 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ կը տեղեկացուի որ Մարսէյլի «Արմենիա» երգչախումբի համերգը տեղի կ'ունենայ յառաջիկայ ապրիլ 18ի կիրակին, կէս օրէ վերջ: Կը խնդրուի չխաչաձեւել:

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՕՐ·— Կապոյտ Խաչի Տեսիլի Ազդային վարժարանի կրթական մարմինը կը պատրաստուի տալ պարահանդէս մը յառաջիկայ, 21 Փետրուար չաբաթ երեկոյ: Կը խնդրուի չխաչաձեւել: Մանրամասնութիւնները յառաջիկային:

SALLE MAZENODի ՄԷՋ
ՄԱՐՍԷՅԼ, RUE D'AUBAGNE
2ՐԴ ԵՐԳԱՀԱՆԴԷՍԸ ԹԷՆՕՈՐ

Պիրակ Սագզեանի

(Ռումանական օփերայէն)

17 Յունուար, շաբաթ ժամը **20.30**ին

Յայտագիր·— Եւրոպական եւ հայկական կտորներ:

Տոմսերը ապահովել·— Bottier Royal, 39 rue de Rome, A. Aroutian 37 Canebière, Boyagian Georges, 39 rue E. Rostand, Kevork Esmerian Beaumont, A. Krikorian 37 Tapis Vert:

ՃԱՇԱՐԱՆ ԼԻԼԼԷ

Որ բոլորած է իր հսաճամեակը եւ տիքաճցած արդար համբաւի մը,

Պատրաստ է գոհացնելու իր ամէնէն դժուարահաճ յաճախորդները իր համադամ կերակուրներով ու թաղմապիսի աղանդերներով

Հեռաձայն TRI 31 - 62

24, Rue St. Lazare, PARIS (9)

ՎԻՐԱԲՈՑԾ - ԱՏԱՄՆԱԲՈՑԾ

Պ. Ա. ԴԱՒԻԹԵԱՆ

Կը յայտարարէ Պօմպնաբնակ իր յարգելի յաճախորդներուն որ օգտուելով քաղաքին ելեկտրականութեան չաբաթական երկու օրուան դադարէն կ'ընդունի իր հիւանդները,

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՒ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Իր անձնական բնակարանը 15 Bld. du Nord, La Rosière (Marseille) *առտուան ժամը* 9էն *մինչեւ* 5: *Իսկ՝*

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

քաղաքի իր դարմանատունը, 53 Cours Lieutaud : *Կարօտ հիւանդները եւ երկսեռ ուսանողները ձրի:*

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Jeudi 15 Janvier 1948 Հինգշաբթի 15 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5240-Նոր շրջան թիւ 849 Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ ԳԻՆ՝ 5 Ֆր.

Հակադաշնակցական թերթերը եւ Վիշինսկիի յայտարարութիւնը

Աւելի քան ամիս մը անցած է այն օրէն (հոկտեմբեր 24), երբ Վիշինսկին ըրաւ իր տխրահռչակ յայտարարութիւնը այն մասին թէ՝ Կարսն ու Արտահանը «անվճռելիօրէն» կը պատկանին Վրացիներուն եւ պէտք է օր առաջ վերադարձուին Վրաստանին :

Ասիկա այլեւս երկու ցաւագար Վրացի փրոֆէսօրներու «անպաշտօն» եւ «անպատասխանատու» մէկ յայտարարութիւնը չէր միայն, որ կրնար ըլլալ չիմարական կատակ մը նկատել: Ասիկա Մոսկուայի պատասխանատու լիազօր ներկայացուցչի պաշտօնական յայտարարութիւնն էր, եղած Մլթացեալ Ազգերու մէկ ժողովին մէջ: Հետեւաբար, տչ ոք կրնար անտես առնել զայն, իբրեւ անլուրջ, մտածուած կամ անպատասխանատու ելոյթ մը: Աւելի կասկած չէր կրնար ըլլալ այլեւս, որ՝ ինչ որ Վիշինսկին կըսէր, Խորհրդային կառավարութեան պաշտօնական վերաբերումն էր դէպի Կարսն ու Արտահանի խնդիրը :

Եւ, սակայն, անցած հինգ չաբաթներու ընթացքին Ամերիկայի մէջ հրատարակուող հակադաշնակցական երեք դիմաւոր թերթերէնեւէ մէկը ուզեց աչքօրէն անդրադառնալ Խորհրդային կառավարութեան այդ անակնկալ եւ այնքան վերջավճռուչ դիմադարձութեան : Ոամկավար «Պայքար»ը, հաւատարիմ համայնավարներու ուղեկից իր վարքին հանդամանքին, թեթեւամտօրէն փորձեց խնդիրը զանց ընել՝ անհատական սքեսալ մը կռչելով Վիշինսքիի յայտարարութիւնը եւ չանալով ձգել այն տպաւորութիւնը թէ՝ Խորհրդային կառավարութիւնը տարբեր եւ Հայաստանի համար ունալի ապատաւոր տեսակէտ ունի: Անոնով Հնչակեան, բայց լրագիչս համայնավար «Երիտասարդ Հայաստան»ը փորձեց մոլորեցնել հանրութեան միտքը՝ այնպէս մը ներկայացնելով խնդիրը, որ իբր թէ Վիշինսքիի կարծիքը կարելի է դիւրութեամբ վոխել, բաւական է միայն, որ հայ դիւանագէտները մէկտեղ գան եւ հերքեն երկու Վրացի «դիտնականներու» սխալ տեսութիւնը Կարսի ու Արտահանի մասին: Իսկ «Ճառագեղիմական» կոչեցեալ համայնավար հայատառը պարզապէս անտեսեց Վիշինսքիի յայտարարութիւնը եւ այնպէս ձեւացուց, որ կարծես թէ ոչինչ տեղի ունեցած էր :

Այսքան անպարկեշտ, խաբեպատիր վերաբերում ցոյց տալով դէպի Խորհրդային կառավարութեան լիազօր ներկայացուցչի յիշեալ խիստ ծանրակշիռ ելոյթը՝ համայնավարներու եւ անոնց ուղեկիցներու թերթերը պարզապէս կ'աշխատին ծածկել Խորհրդային կառավարութեան դատապարտութիւնը Հայ Դատին, որպէսզի առաջուայ պէս կարենան Սովիէտները ներկայացնել ներկայ Հայաստանի ընդարձակման ջերմ ախոյեան, մինչդեռ այժմ իրենք արդէն շատ լաւ դիտեն թէ՝ Խորհրդային կառավարութիւնը իրապէս կը ձգտի Կարսն ու Արտահանն իսկ Թուրքիային առնել եւ Վրաստանին տալ եւ այդ կերպով ընդմիշտ թաղել Մլթացեալ Հայաստանի խնդիրը :

Ոչ նուազ յատկանշական է եւ այն, որ յիշեալ հակադաշնակցական երեք ամերիկահայ թերթերն ալ, խուսափելով ոեւէ քննադատական խօսք ըսելու կամ ոեւէ ցաւում կամ դէմ թեթեւ դիտողութիւն յայտնելու Խորհրդային կառավարութեան զգուելի դիմադարձութեան առթիւ, ակնառ աւելի կատաղի յարձակումներ գործել մեր վրայ: Ինչո՞ւ: Որովհետեւ յանդգնած էինք սեւով ճերմակի վրայ արձանագրել դառն ճշմարտութիւնը Խորհրդային կառավարութեան դատապարտական ընթացքի մասին եւ ատկէ հանել այն միակ տրամաբանական եզրակացութիւնը, զոր պէտք է հանէր ոեւէ պարկեշտ ու հայրենասէր անձ: Մեր հակառակորդ թերթերը այնպէս կը չարժին, որ կարծես ոչ թէ Խորհրդային կառավարութիւնը, այլ Հ. Յ. Դաշնակցութիւնը կ'ուզէ Կարսն ու Արտահանը Վրաստանին տալ եւ այդ կերպով ընդմիշտ թաղել Մլթացեալ Հայաստանի խնդիրը: (Հայրենիք)

ԹՈՐՀՐԴԱՅԻՆ Մլութեան մէջ խլրդէն նոր բռնարարներ բացուած են վերջին երկու տարիին 1500 թռչկիներով: «Փրավտա» կը գրէ թէ Մլութեան թռչկիներուն թիւը 17.000 աւելցած է: 1947-ին բացուած են 391 հիւանդանոցներ, 300 բուժարաններ եւ 2500 ապաքինարաններ :

Ցունաստանի դէպքերը

ԱՊՍՏԱՄԲՆԵՐԸ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՍՏԱՆԱՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԷՆ

Աթէնքէն կը տեղեկացնեն թէ կառավարութիւնը համոզուած է որ ապստամբները դիմադրական օժանդակութիւն կը ստանան դրացի երկիրներէ եւ օտար դիմադրներ կը կռուին Մարկոսի բանակին մէջ :

Ապստամբները երեքշաբթի օր, ալպանիական սահմանին մօտերը, Թիլիատէսի շրջանը, գիւղ մը վրայ յարձակում գործելով, այրեցին բոլոր տուներըը եւ կողոպտեցին բնակիչները: Տէսպոթիկոնի մէջ առեւանդեցին երկու հոգի եւ դողցան 250 ոչխարներ :

Մարկոսի թնդանօթները դարձեալ ռմբակոծեցին Քոնիցայի արուարձանները՝ տասնըմէկ մըղոն հեռաւորութենէ մը :

Կառավարական ուժերը քնդհանուր յարձակողականի սկսան Աթէնքէն 75 մղոն դէպի հիւսիս—արեւմտեան ուղղութեամբ գտնուող Պարնասոս լեռան վրայ ուր 800 ապստամբներ դիրք բռնած են քանի մը օրէ ի վեր: Յարձակումը կատարուեցաւ օդէն եւ ցամաքէն միաժամանակ :

Սելանիկէն կը հեռագրեն թէ Մակեդոնիոյ ապստամբներուն առաջնորդը՝ Սոֆիանոս սպանուած է, իսկ իր օգնականը՝ Աորիսթոս ծանրապէս վիրաւորուած է:

Աթէնքի ոստիկանութիւնը ձերբակալեց 200 «համակիր»ներ մայրաքաղքին Ասիրմատոս արուարձանին մէջ եւ աքսորեց 120 հոգի :

★ Ամերիկեան առաքելութեան պետը յուշագիր մը ներկայացնելով հելլէն կառավարութեան դատապատած է թէ պատերազմական նախարարը, Եորկի Սթրատոս չի գործակցիր առաքելութեան հետ ու եթէ չարունակէ իր այդ ընթացքը, կառավարութիւնը պէտք է հրաժարեցնէ զինքը:

ՓՐԱՆՍԱԿԱՆ խորհրդարանին 1948ի նստաշրջանը բացուեցաւ երեքշաբթի օր: Բուռն վիճաբանութիւններ տեղի ունեցան եւ նոյնիսկ ապտակներ վոխանակուեցան երբ կը կատարուէր դիւանին ընտրութիւնը: Պ. Էտուար Էրիօ, դարձեալ նախագահ ընտրուեցաւ 174ի դէմ 317 քուէով: Իրարանցումը սկսաւ այն պահուն երբ կը նշանակուէին խորհրդարանին վեց վոխ նախագահները ու տասնըչորս քարտուղարները : Համայնավարները վոչնչեցին նախագահական թեկնածու առաջարկել Պ. ժաք Տուքլո, բայց չյաջողեցան :

ՓԻՒԱՆՍԱՑԻ ելմտական նախարարը, Պ. Րընէ Մայէր վաղը Լոնտոն պիտի երթայ խորհրդակցութիւններ ունենալու համար Անգլիոյ ելմտական նախարարին հետ: Իրենց տեսակցութեան գլխաւոր նիւթը պիտի ըլլայ Փրանքին եւ սթերլինին արժեզրկումին խնդիրը :

Լոնտոնի պաշտօնական շրջանակներուն մէջ կը հաստատուի այն լուրը թէ Անգլիա երթեք տրամադիր չէ արժեզրկելու իր թղթադրամը: Փրանքին համար նոր սակ մը նշանակուած չէ տակաւին, բայց անհատական չէ անոր գլալի արժեզրկումը :

ԼԻՈՆՏՈՆԷն կը տեղեկացնեն թէ համաձայն Մոսկուայէն հասնող լուրերուն, անդեզիններու գլալի տպնաղ կայ երկրին մէջ՝ բաժնեչափի դրութեան չնչումէն ի վեր: Հակառակ Մոսկուայի թերթերուն տուած տեղեկութեանց, բրիտանական արտաքին նախարարութիւնը կը յայտնէ թէ անդեզիններու հալթայթումը չատ դժուարացած է: Սեւ չուկայի գիները եռապատիկ բարձրացած են: Ստար դեսպանատուներու պաշտօնէութիւնը «անձուկ վիճակի մէջ է» բուքլիին անկումին պատճառաւ :

ՇՈՒԼԵՏՍԱՑԻ մանազէտը որ վերջերս Մոսկուա կանչուած էր բարձրաստիճան անձնաւորութիւն մը բժչկելու համար, երեքշաբթի օր Հելսինքիի (Փինլանտա) մէջ յայտարարեց թէ «դարմանած է ռուս մարշալ մը որ Սթալինը չէ»:

ՊՈՒԼԿՈՒՐԻՈՑ վարշապետը յայտարարեց երեքշաբթի օր թէ պինակցութիւն մը պիտի կնքուի Խորհրդային Մլութեան, Հունգարիոյ եւ Չեխոսլովաքիոյ հետ :

ԻՒՈՒՄԱՆԻՈՑ համայնավար կառավարութիւնը սկսած է վոխել անունները այն պողոտաներուն եւ վաղցներուն որոնք, մինչեւ հիմա, մկրտուած էին դաշնակից թագաւորին կամ արքայական ընտանիքին անդամներուն անուններով:

Պաղեստինի դէպքերը

ԱՐԱԲՆԵՐԸ ՊԻՏԻ ՅԱՐՁԱԿԻՆ ՓԵՏՐՈՒԱՐ 15ԻՆ

Համաձայն Դամասկոսի արաբական շրջանակներու տեղեկութեանց Արաբները ընդհանուր յարձակողականի պիտի սկսին Փետրուար 15ին «Սիոնականութիւնը պաղեստինէն միանգամ ընդմիշտ հեռացնելու համար» :

Շոգեկիր պատրաստութիւններ կը տեսնուին բանակը մարզերու համար : Սուրիոյ պատերազմական նախարարը, Ահմէտ Շարապաթի, երեքշաբթի օր յայտարարեց թէ պատերազմը — Հրեաներուն դէմ — պիտի սկսի մէկ ամիսէն : «Մուրթին մէջ չէ որ պիտի ոմբակոծենք թնչպէս Հրեաները կ'ըսեն. մենք մեր զինուորներով ու զէնքերով պիտի յարձակինք եւ պատուաւոր պատերազմ պիտի մղենք՝ պաշտպանելու համար մեր Արար եղբայրակիցներուն իրաւունքները» :

Ուրիշ յայտնի Արաբ մը, Ֆէվզի էլ - Քաւուքճի որ Արաբ կամաւորներու առաջնորդ նշանակուած է, ըսաւ.— «Մէկ ամիսէն պիտի տեսնէք արդիւնքը մեր պատրաստութիւններուն: Պատերազմը սկսած է: Մեր նպատակն է Պաղեստինը մաքրագործել սիոնականութենէն » :

Վերոյիշեալ թուականը տակաւին կրնայ փոխուիլ: Կ'ըսուի թէ Արաբները ունին 2500 մարզուած զինուորներ որոնց 700ը Պաղեստինի Արաբներ են, 30ը Եւրոպացի մահմետականներ եւ 70ը Եդիպտացիները: Սակայն Սուրիոյ մէջ կան 80.000ի չափ կամաւորներ որոնք, ի հարկին, կըրնան օգտագործուիլ :

Սուրիական բանակին շրջանակներէն կը հաստատուի թէ Հրեաները Երուսաղէմի մէջ չինած են հրթիռներ պատրաստող գործարան մը որ ներկայիս ձեռնադումբեր կ'արտադրէ :

Պաղեստինի Արաբներուն գերագոյն մարմնին փոխ նախագահը, Ճէմալ Հիւսէյնի, յայտարարեց որ իրենց նպատակը չէ Պաղեստինեան կառավարութիւն մը հիմնել երկրին ներս կամ դուրս: Բայց պիտի նշանակեն 10 հոգինոց յանձնաժողով մը որուն պարտքը պիտի ըլլայ Պաղեստինը կառավարել ժողովրդավար սկզբունքներով եւ ձախողեցնել բաժանման ծրագրին գործադրութիւնը:

★ Երկու ամսուան մէջ Պաղեստինի կռիւներուն զոհ գացած են 708 հոգի, 302ը Հրեաներ, 364ը Արար եւ մնացեալը Հայեր կամ ուրիշ ազգութեանց պատկանող տեղացիներ :

ՊՈՒԼԿՈՒՐԻՈՑ խորհրդարանին երեքշաբթիի նիստին մէջ 9ընդդիմադիրները քննադատեցին կառավարութեան ներկայացուցած եմատացոյցը : Վարչապետը, Կէորկի Տիմիթրով, պատասխան տալով իրենց, յայտարարեց — «Տասն անգամ աղղարարեցի Փէյթոնի խմբակցութեան ձեր բանակամներուն, ակամէ չհավատցիք: Զախջախուեցան եւ իրենց առաջնորդը, այսօր, հողին տակը պառկած է: Լաւ մտածեցէք, դուք օտար գործակալներ եւ Պուլկարիոյ թշնամիներ, թերեւս դուք ալ ձեր դաշնակիցներուն ճակատագրին արժանանաք: Եթէ քիչ մը աւելի խմաստութիւն ցոյց տուած, ազգը ձեզի պիտի տայ պէտք եղած դասը»: Վարչապետը դիտել տուաւ որ եթէ Անգլիա եւ Ամերիկա միջամտած չըլլային, Փելթով իր գլուխը փրկած պիտի ըլլար :

ՔՍԱՆԵՐՔԵՍ Թերմանացիները որոնք մահուան դատապարտուած էին լեհական զինուորական դատարանին կողմէ, պնդակահարուեցան երեքշաբթի օր Քրաքովի մէջ: Ամբաստանուած էին թէ ահաւոր խժդժութիւններ կատարած էին Աուշվիցի տրդեզարանին մէջ: Մահապարտներուն մէջ կային երկու հրէայ կիներ :

ԻՐԱՆի գահլիճը որոշած է քաղուզի լրտանական ընկերութիւն մը հիմնել: Խորհրդարանը մօտ օրէն պիտի քննէ այս առաջարկը եւ, համաձայն լրագիչ շրջանակներու կարծիքին, անմիջապէս պիտի վաւերացնէ: Նորակազմ ընկերութեան դրամագլուխը պիտի հալթայթուի անգլեւիրանեան քարիւղի ընկերութենէն ստացուած տարեկան 20 միլիոն սթերլինի չահաբաժինէն: Հանքերու շահագործման համար օտար մասնագէտներ պիտի կանչուին, բայց անոնց մէջ պիտի չըլլան ոչ Ամերիկացիներ, ոչ ալ Ռուսեր :

ՆԱՒԱՊԱՀ ԹՐՈՒՄԸՆի օդալին խնդիրներու մասնագէտները յայտարարեցին երեքշաբթի օր թէ Ամերիկա հիւլէական ուժի մենաշնորհէն տէր պիտի մնայ մինչեւ 1952ի վերջերը, բայց այդ թուականէն ետք բոլոր ազգերը հիւլէական զէնքեր պիտի ունենան եւ ի վիճակի պիտի ըլլան յարձակելու Ամերիկայի վրայ: Պատկան յանձնախումբը տեղեկագիր մը տալով, կը յանձնարարէ որ Ամերիկա անյապաղ քայլեր առնէ եւ միլիառներ յատկացնէ հիւլէական զէնքերու պատասխանութեան համար, «յալտպէս յուսահատօրէն ետ

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

Հայաստանի և աշխատավոր կանանց

Տարեկան հանդիսությունը չէ միայն մի պատեհություն, որ կին աշխատավորները հիշեցնեն իրենց իրավունքները, այլև մի առիթ՝ հրապարակ հանելու իրենց պահանջները։ Այդ օրը կանայք ամբողջ աշխարհում «ձայնի» իրավունքի համար պայքարելու և «Մարդ»-ի նման ազատ ու հավասար լինելու համար ցույցեր են կազմակերպում։

Այդ օրը, ամբողջ աշխարհում, կանայք հանդես են գալիս մի պահանջով՝ ազատություն։ Ազատություն՝ կապիտալիստական ստրկության լուծից։ Ազատություն՝ ամեն տեսակ բռնության դեմ։

Այդ օրը, ամբողջ աշխարհում, կանայք հանդես են գալիս մի պահանջով՝ խաղաղություն։ Ազատություն՝ պատերազմի սարսափներից։ Խաղաղություն՝ ֆաշիստական բարբարոսության դեմ։

Այդ օրը, ամբողջ աշխարհում, կանայք հանդես են գալիս մի պահանջով՝ հաց։ Ազատություն՝ սովից։ Հաց՝ իրենց և իրենց երեխաների համար։

Այդ օրը, ամբողջ աշխարհում, կանայք հանդես են գալիս մի պահանջով՝ հավասարություն։ Ազատություն՝ կանանց նկատմամբ տղամարդկանց ունեցած անհավասարության դեմ։

Այդ օրը, ամբողջ աշխարհում, կանայք հանդես են գալիս մի պահանջով՝ ազատ

ւելի քան չահեկան որ մեր երիտասարդ ուսանողները կը խառնէր Փարիզի հայ գաղութի կեանքին եւ անոնց այժմէն իսկ այն պարտականութիւնը որ ունին իրենց բազմազբաղ կրթութեամբ լրնոյց հասակակիցները առաջնորդելու :

Ընկերը Հ. Բալուեան որ սեղանապետի օգնական էր, անակնկալներ վերապահած էր ներկաներուն որոնց դերակատարը Տիկին Ա. Գազանճեան յայտնութիւն մը եղաւ իր շատ յաջող «ծաղրանկար»ներով :

Գեղարուեստական բաժինը յանպատրաստից եւ ինքնաբուխ մեծ հաճոյք պատճառեց բոլորին, արտասանեցին Օր. Ալին Մաթէոսեան, Օր. Արիս Սամուէլեան եւ Պ. Ժիրայր Փալամուտեան, մեներգեցին Օր. Ս. Մալեան, Պ. Պ. Վահրամ Սարաֆեան, Արծիւ Ուրուպէյեան :

Իսկ Օր. Մ. Աճէմեան ողբացեալ Ալէմշահի «Նաղեր»ով յուզեց բոլորը : Տիկին Է. Բիւզանդ մէկ վայրկեան յոնկայա լռութեամբ յարգանքի հրաւիրեց ներկաները Գուրգէն Ալէմշահի յիշատակին :

Ուսանողներու կողմէ հետզհետէ խօսք առին Տօքթ. Անուշեան, Հրաչ Աբրահամեան, Ժ. Փալամուտեան, Քիւլէկեան եւ Վ. Օշական : Բոլորն ալ իրենց ուրախութիւնը յայտնեցին փրենց տըրուած այս գեղեցիկ առիթին համար, չեչտելով մասնաւորաբար իրարու մօտ դալու անհրաժեշտութիւնը : Իրենց ուսանող ընկերներուն կողմէ բոլորն ալ խոստացան ի դերեւ չհանել իրենց վրայ տրուած յոյսերը ծառայելու համար հայ ժողովուրդին եւ մանաւանդ հայ մշակոյթին :

Այս գեղեցիկ, դուարթ եւ խանդավառ հաւաքոյթը չարունակուեցաւ պարերով մինչեւ կէս գիշեր :

ՇՐՋՈՒՆ ԹՂԹԱԿԻՑ

Ֆինլանտան

Իրեն բախտակից, յաղթուած մանր պետութիւնների մէջեւ Ֆինլանտան այսօր համեմատաբար ամէնէն երջանիկն է : Ազատ մնալով յաղթողի պիւուղական դրաւումէ, նա ազատ է ներս քաղաքական հակակշռէ : Իրերի այդպիսի կացութեամբ, Ֆինլանտան կարծես լրեն է թողուած իր քաղաքական ուղղութիւնն ընտրելու :

Համայնավարութիւնը Ֆինլանտոյ մէջ գրեթէ զարգացած չէ, որովհետեւ Ֆինն ժողովուրդը ներս մէջ է տեսնում իրեն այնքան ատելի ռուսական աչխարհակալութիւնը : Ցետոյ էլ, Եւրոպայի այդ օրինակելի հայրենասէրը ժողովուրդը իր հարևնիքի ազատութիւնն ու անկախութիւնը միշտ էլ վեր է դասում հազար ու մէկ օտար «երջանկարեր» քաղաքական ներմուծումներից : Ամէն Ֆինն նախ վառ հայրենասէրը է յետոյ միայն մնը լեզուով ասած «յառաջադիմասէրը» :

Բայց եւ այնպէս կողք կողքի ապրելով համարեայ հզօր պետութեան հետ եւ ներսից պարտուելով, պարզ է որ այսպէս կամ այնպէս Ֆինլանտան այսօր ունի փոքրիկ համայնավար կուսակցութիւն մը : Չունենալ չէր կարող :

Ֆինլանտայի համայնավարների ձեռքին է գտնում (Ժ. Միութեան թելադրանքով), ներքին նախարարութիւնը եւ նրա պատրաստած քաղաքական ոստիկանութիւնը, որը «Ստապօ» է կոչւում, յիշեցնելով նացիական մահատարած «Կէսթապօ»ն : Սակայն իրենց գործունէութեան ծաւալով, վերջինը մի սարսափելի կազմակերպութիւն էր իսկ առաջինը, միայն վերահսկիչ ուժ մը երկրին մէջ :

Այդպէս, համայնավարների ձեռքին է գտնուում «Ստապօ»ն իսկ ժողովրդավարներին՝ խորհրդարանը, ուրեմն եւ օրէնքների հաստատումը ինչպէս նաեւ դատարանը : Քաղաքական այդ տարբեր հոսանքների ներքին պայքարն էլ տարուում է այդ երեք պետական կարեւոր մարմինների միջոցով :

Պարզ է որ քաղաքական ոստիկանութիւնը ինչպէս բոլոր նրա նմանները ամէն տեղ, գրաւուած է մութ գրգռումներով, դաւադրութիւններ պատրաստելով եւ նրանց յայտնաբերելով : Սակայն միշտ էլ անյաջող, քանի որ գոյութիւն ունի ֆին ազդարարութիւնը որ գործում է համաձայն օրէնքի :

Շատ ծանր է Ֆինլանտայի տնտեսական դրութիւնը : Ֆինլանտան կարիք ունի ամերիկեան վարկերի, բայց Ժ. Միութեանը չդրգռելու համար նա մոյնիսկ հրաժարուեց Եւրոպայի տնտեսական վերականգնումի Մարշալի ծրագրին մասնակցելուց : Դրա հետ միասին նա ստիպուած է Ժ. Միութեան վճարել 237 միլիոն տոլար պատերազմական տուրք, որ ծանր քարի նման ծանրել է առանց այն էլ քարից հաց քամող աշխատասէր Ֆինն ժողովուրդի ուսերին :

Ֆինլանտական կառավարութիւնը ոչինչ չի խնայում լաւ յարաբերութիւնների մէջ պահելու համար հզօր Ժ. Միութեան հետ : Դրա համար էլ կատարում է պարտուածի բոլոր պարտականութիւնները յաղթական պետութեան հանդէպ, աչխատելով աւերուած թիւրիմացութիւնների տեղի չտալ : Եւ այդ շատ կարեւոր է Ֆինլանտայի քաղաքական ապագայի համար : Հարցը ապատ մնալու եւ կուլ դնալու մէջն է կայանում : Ժ. Միութեան հանդէպ այդպիսի քաղաքականութիւն վարելու ծրագիրն էլ հանդիսանում է Ֆինլանտայի ընդհանրապէս արտաքին քաղաքականութեան բացատրող բանալին : Այդպէս պատերազմական տուրքի լրիւ վճարման համար Ֆինլանտան կարիք ունի դիմելու Հիւս. Ամերիկայի դրամական օգնութեան, բայց չի անում Ժ. Միութեան դժգոհութիւնից վախենալով :

ՄԱԿի վերջին նստաշրջանում Անդլիոյ եւ Հիւսիսային Ամերիկայի կողմից հարց տրուեց Ֆինլանտան Մաքի անդամ նշանակելու համար, բայց Ժ. Միութիւնը մերժեց նրա անդամակցութիւնը : Եւ զարմանալին այն է, որ այդ արդելքը Ֆինլանտական քաղաքական շրջանակներում մեծ գոհունակութեամբ ընդունուեց : Պատճառները միանգամայն հասկանալի են : ՄԱԿի անդամ Ֆինլանտան բացորոշ կերպով պէտք է ցոյց տար երկու հզօր հակամարտ կողմերին, թէ ով է ինքը : Իսկ այդ բանը առ այժմ ձեռնտու չէ նրան :

Մէկ ուրիշ հանգամանք : Պատերազմական տուրքի մնացորդի վճարման ժամկէտի երկարաձգման համար Ժ. Միութիւնը պահանջում է ղինուորական դաշինքի կազմում, որից Ֆինլանտան սարսափում է, այնպէս ինչպէս զարը գայլի դաշնաւորութիւնից :

Այդ բոլորից պարզ է որ Ֆինլանտայի այսօրուայ արտաքին քաղաքականութիւնը, ոչ թէ երկու լարի վրայ խաղալու քաղաքականութիւն է, ինչպէս սխալմամբ ուրիշներն են կարծում, որը միայն յատուկ է կեղծաւոր Թուրքիային, այլ ինքն իր մէջ քաշուելու, չնկատուելու, ղրկանքներ կրելու, բայց ազատ մնալու քաղաքականութիւն է :

Այդ քաղաքականութիւնը ճակատագրական է բոլոր ազատասէր մարդ ազգերին որոնք այս կամ այն կերպ անցել են նման պատմական ժամանակաշրջան :

Այդ քաղաքականութիւնը յիշեցնում է Հայաստանի հանրապետութեան կառավարութեան վարած քաղաքականութիւնը, 1918 թուի Մայիսից մինչեւ Թուրքիայի պարտութիւնը նոյնն թուին :

Մ. ԱՐԱՔՍ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԽՄԲ.— Բարեգործականի յունուար 8ի գումարին կը քաղենք հետեւեալ մասերը . —

Գործադիր ժողով.— Հ. Բ. Ը. Միութեան լիազօր վարիչ պատուիրակ Վ. Մալէզեանի նախաձեռնութեամբ եւ նախագահութեամբ, գործադիր ժողովը յաջորդական նիստերու մէջ կարեւոր տնօրինութիւններ ըրաւ վերջերս, իր շրջանին, այսինքն Եւրոպայի եւ մասնաւորապէս Փարիզի կազմակերպական եւ վարչական մարզերուն մէջ :

Գործադիր ժողովը վերակազմուեցաւ հետեւեալ կերպով.— Պատուաւոր Սրբ. Սիւրմէեան, պատուոյ նախագահ եւ տոքթ. Պօղոս Քօլօլեան, Պատ. անդամ Պ. Զարեհ Նուպար, նախագահ Պ. Պ. Վահէ Ֆրէնկեան եւ (առժամապէս) Վահան Մալէզեան, փոխ նախագահներ, Վահան Խմէրեան, տոնեադպիր, Սարգիս Սաղըրեան, դանձապետ, իսկ խորհրդականներ Գէորգ Եսայեան, Ա ռաքել Զաքըրեան, Երուանդ Պարկիրճեան, Յակիմ Սվաճեան, Կրօնիկ Փափազեան եւ Պօղոս Ֆրէնկեան :

Գործադիր ժողովի կողքին կազմուեցան հետեւեալ յանձնախումբերը.— Ա.— Եկմտական յանձնախումբ, Պ. Պ. Ս. Սաղըրեան, Ժ. Սվաճեան, Կ. Փափազեան եւ Վ. Ֆրէնկեան : Բ.— Կրթական յանձնախումբ.— Պ. Պ. Վ. Խմէրեան, Ա. Զաքըրեան եւ Յ. Պօղոսեան : Գ.— Նուպարեան մատենադարանի եւ Մելկոնեան հրատարակութեան յանձնախումբ, Պ. Պ. Զ. Գազազեան, Ա. Հարթենց, Վ. Ֆրէնկեան, Ա. Զօպանեան եւ Ս. Զաքըրեան (միանդամայն վերատեսուչ մատենադարանի) : Քարտուղար՝ դրադարանապետ Պ. Ա. Անտոնեան :

Բաց ասած, պատուիրակները նշանակուած են ներպաղթի կոմիտէին, Մարի Նուպար Ուսանող. Տան եւ Դպրոցասէր Տիկնանց խնամակալութեան մօտ : Փարիզի դրասենեակ.— Ինչպէս յայտնի է, ներկայ տարեշրջանի սկսեալ վերջ դտած ըլլալով վարիչ պատուիրակ եւ ընդհ. տնօրէն Վ. Մալէզեանի պատասխանատու պաշտօնը, այսուհետեւ իր դրածակցութիւնը պիտի ընծայէ «պատուական» հանդամանքով : Փարիզի դրասենեակին վարչութիւնը յանձնուեցաւ Մ իութեան երկու վաղեմի պաշտօնեաներուն, Պ. Գաբրիէլ Յակոբեան, որպէս տնօրէն պահելով դիւանապետի եւ արկղակալի պաշտօնները եւս, եւ Պ. Օնիկ Թադէոսեան, որպէս ընդհ. քարտուղար եւ հաշուակալ :

Փարիզի մասնաճիւղը.— Գործադիր ժողովը լրջօրէն զբաղուած է նաեւ Եւրոպայի մասնաճիւղերուն վերակազմութեան եւ գործունէութեան վերաբերեալ հարցերով, եւ կրկնակ շրջաբերականներով ամրապնդած է փոխադարձ յարաբերութիւնները, տրուած ըլլալով որ 1945ին Նիւ Եորքի մէջ գումարուած ընդհ. ժողովը իրեն վըստահած էր Եւրոպայի կեդր. յանձնաժողովի պաշտօնը եւս :

Մասնաւոր յիշատակութեան արժանի են Փարիզի, Մարսէյլի, Մանչէսթրի, Լոնտոնի, Ժընեվի, Միլանի, Ալճէրի, Սելանիկի եւ Փլովտիվի մասնաճիւղերը, որ առաջին դիծին վրայ կուգան եւ որոնց վրայ ուրախ ենք յայտարարելու որ հետզհետէ ուրիշներ կուգան աւելնալ իրենց գըրնահատելի գործունէութեամբը :

Ներպաղթի հանդանակութիւնը.— Երբ Միութեանս կեդր. վարչ. ժողովը 1946ին չքաւոր ներպաղթողներու ճանապարհածախսը ապահովելու համար, Եգիպտոսի կառավարութեան հրաւէրովն իսկ, ձեռնարկեց մէկ միլիոն տոլարի համազգային հանդանակութեան, Ֆրանսայի բաժին հանած էր 50.000 տոլար : Այսօր ուրախ ենք յայտնելու որ Ֆրանսահայութիւնը եւ մանաւանդ ժողովրդային զանգուածները խանդավառութեամբ գնդ առած գացին Միութեան կոչին, եւ հանգանակիչ յանձնաժողովը, հովանաւորութեամբ Կաթ. պատուիրակ Սրբ. արք.ի, որ բոլորանուէր լծուեցաւ սոյն գործին, յաջողեցաւ գոյացնել շուրջ 27 միլիոն ֆրանքի գումար մը, չի հաշուելով խոստացուած, բայց դեռ չի դանձուած գումարները :

Սոյն հանդանակութեան, ինչպէս նաեւ ներդաղթի հաշիւներուն ամփոփումը քիչ առենէն պիտի ներկայացնենք հրապարակաւ :

«ԾԱՂԻԿ»ի ԹԵՐԹՕՆԸ

ԼՍԱ ԵՒ ՀԱՄԱՏ

(ՀՈՐՀՐԴԱՎԷՊ)

Ա. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԳԱԼ
Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆՆԵԱՆ

Ճանապարհի լուսանցքին ջրհորի մը բերանը կանգներ է բարձրահասակ արեւածաղիկ մը, վերէն վար լայնածալ քուրձի մը մէջ թաղարուած, դլխին՝ կնգուղ ու մէջքին հասու չուան : Անոր հունտ կապած արեւախառն երեսներէն կը թափին լոյսի չորցած շիթեր, ածխացած կայծեր ու ճակտին մութ փապարներու մէջ ման կուգան, անանուն զգացած ալիքներ : Ան նման էր անապատի թոնիրներէն ելած ու խարկուած եղիպտացորենի խոշոր հատիկի մը, որուն վրայէն խորուած սոխի եւ սխտորի հոտ կուգար :

— Օրհնեալ է Աստուած, եղբայր, ի յիսուս քրիստոս ... : Ամէն այս կենաց ջուրէն, որուն մէկ մի կաթիլը մեր աղօթքի մրմունջներովն է թորուած ու զտուած :

Ջրհորին հայելին փչրուեցաւ Քեթեղպայի աղաղանին պէս բայց երբ օտարականը վերցուց շրթունքը կարկառուած դոյլէն երբ այնպէս եկաւ թէ անապատը կը մկրտէր դինքը աւազով ու ապխունով :

Օրհնեալ ըլլաս հիմա պատասխանդ ըլլայ ինծի ուղեցոյց եւ աղօթքդ ռահվիրայ, ո՞ւր է Սկիւթ :

Հաստ ճպուռին աղեղնամին տակ հորիզոնը իր մէջքը ծռեց, թեւերը չարժեց ու բազուկները երկարած՝ դծեց ուղին մատնացոյց :

— Ահա Սուրբ Թէպայիսի վրանները, դիմացը Պախոմեան վանքերը ... հեռուն Կորզին լեռը, ուր մեծաւորն Ս. Անտոն իր մենաստանէն կը կառավարէ անապատին Սուրբ Թաղաւորութիւնը ի Ցիսուս Քրիստոս : Աւելի անդին, Սկիւթի անապատն ու լեռները փչերը Հիմերիոյ աւազներուն ու կարմիր ծովուն տուած :

Անապատը անապատներու կողքին ու լեռները լեռներու փչչինափակած եան քաչուածեան ու հեռացան երկու օրուայ մշուշապատ ճանապարհով :

Սպիտակ առագաստները արմատահիւս չուաններով աւազուտքին ոտնակապուած արեւուն տակ կը մրափեն թեւածալ : Գիչերը մտրակիչ էր եւ վարձանաւտր, տիրոջ ծառաները մութէն վախցած երախաներու նման դուրս թափուած՝ իրենց թրջուած մարմինները կը դարձնեն արեւուն տակ ու թուլցած մկաններդ կը զօրացնեն բահով ու բրիչով :

— Հայր Մարկոս, հայր Մարկոս, նայէ, նայէ, սա տուարծիներուն ուսերուս վրայ թառած՝ ինչպէս սրտաբուխ աղբերք կը մաղթեն սա արագաւազ օտարականին :

— Փառաւորեալ է Աստուած եւ հաւատացած եմ որ թռչունին ձայնը օրհնեղ է, ինչպէս վանականներուն աղօթքը հայ՝ եւ արտասուքը ըմպելի :

պիտի մնանք» : Տեղեկագրին հեղինակները դիտել կուտան թէ «բաղդատաբար ապահով ենք այսօր, բայց անապահով ապագային համար երբ լուրջ վտանգ մը կրնայ ապառնալ մեզի : Ցանձնարարուած է նաեւ բաթթրացնել ռմբաձիգ ու ռազմիկ օդանաւերու թիւը :

ՈՒՇԻՆԿԹՐՆի քաղաքական շրջանակներուն մէջ հաւանական կը նկատուի որ զօրավար Այզընհաուըր ընդունի թեկնածու նշանակուիլ այս տարուան նախագահական ընտրութեանց մէջ : Զօրավարը պաշտօնական որեւէ յայտարարութիւն չէ ըրած այս մասին :

ՄԱՀԱԹՄԱ Կանաի , Հնդկաստանի հոգեւոր առաջնորդը, երեքշաբթի օր սկսաւ իր 15րդ ծոմապահութեան : Պիտի մնանի միայն այծի կաթով եւ խաշած բանջարեղէնով : Եօթանասունրնի տարեկան է եւ չատ հիւանդկախ : Իր բարեկամները կը վախնան որ այս անգամ իր կամաւոր ծոմը վերջացնէ իր վախճանը :

ԵԻՐՈՊԱՅԻ անուեսական խորհրդաժողովին անդամ պետութիւնները սկզբունքով համաձայնած են որ բացառիկ նիստ մը դումարուի մօտ ատենին՝ Մարշըլլի ծրագրին գործադրութեան համար դրական քայլեր առնելու համար : Խորհրդաժողովին թուական նշանակուած է Փետրուար 16 : Հրաւէրները պիտի ղրկեն Անգլիա եւ Ֆրանսա :

ՊՈԼՍՈՑ երեսփոխան Համատուլլահ Սուլհի Թանրըօվկը որ վերջերս հրաժարեցաւ Հալք կուսակցութենէն , հետեւեալ յայտարարութիւնները ըրած է իր ապագայ ծրագիրներուն մասին .—

Այլեւս հնչած է ժամը, որպէսզի մթնոլորտը փոխէ Թուրք ազգը : 1908ի սահմանադրութեան դարն եւ յաւագին փորձի շրջանին երկիրը պատերազմի մտաւ՝ առանց ազգին դիտակցութեան եւ հաւանութեան : Մեր երկիրը պատերազմի պատրաստ չէր :

Ազգային պայքարի ընթացքին քաղաքական տեսակէտով ուելի հատուն էինք եւ հանրապետութիւն հռչակեցինք :

1825ին Ռուսիոյ մէջ Փէթրոկ Դեկտեմբերեան յեղափոխութիւնը պայթեցուց եւ պարտուեցաւ հետեւեալ դարն խոստովանութիւնը ընելով. — Ուզեցի հնձել՝ առանց նախապէս սերմերը ցանելու եւ պատիժս կը կրեմ »:

Մեզի համար ալ նոյնն է կացութիւնը : Մինչեւ այսօր հանրապետական գրականութիւն մը չունինք : Հալք կուսակցութիւնը եւ ընդդիմադիրները նոյն հիւանդութենէն վարակուած են : Հալքի համաժողովը յուսախաբութեամբ վերջացաւ :

ՄՆԱԿԵԱՆ ԵՒ ԱԼԻԲԱՆԵԱՆ

Այդ ժողովի մէջ յուղիչ ճառեր արտասանուեցան յիշեցնելով Մնակեանը եւ Ալիբանեանը : Հիացայ եւ հասկցայ թէ այդ երկու մեծ արուեստագէտները ինչ աստիճան զօրաւոր ազդեցութիւն գործած են մեր վրայ :

Մեր երկրին մէջ ոչինչ փոխուած է : Զինք հետաքրքրուած երիտասարդութեամբ , մինչդեռ Լայսինց ըսած է.— «Երիտասարդութիւն մը տալէ ինծի ու ես աշխարհ մը կուտամ ձեզի » :

Ռուս ժողովուրդը միայն ընդունակ եղած է իր պատմութեան մէկ ծայրէն միւսը սահելու. երիտասարդութիւնը պէտք չէ հրամայ ստանայ կուսակցութենէ մը :

Հալք կուսակցութիւնը նախկին վերածուած է խառնաչփոթ դաղափարներու ակր մարդոց խմբակի մը, որ չի կրնար դիմագրաւել արդի վտանգաւոր եւ փոթորկոտ շրջանը » :

ԻՏԱԼԱԿԱՆ կառավարութիւնը յուշագիր մը յանձնելով Զորս Մեծերուն, պահանջ դրած է որ Սոմալիի հոգաբարձութիւնը դարձեալ Իտալիոյ յանձնուի : Նոյնիսկ պահանջ մը պիտի ներկայացուի նաեւ Լիբիոյ եւ Էրիթրէայի համար :

ՆԻՒՐԸՄԲԷՐԿի դատարանին մէջ, երկուշաբթի օրուան հարցաքննութեանց ընթացքին Զեխոսլովաքիոյ նախկին նախագահ Հախայի աղջիկը յայտնեց թէ իր հայրը 1939ի Մարտ 13ին յանկարծ Պերլին հրաւիրուած էր կարեւոր գործով : Գերման կառավարութիւնը մեծարանքներով առաջնորդած է զայն Հիթլէրի մօտ որուն անձնական թիւչքը «ներարկում» մը ըրած է իրեն : Այդ ներարկումին ազդեցութեան տակն է որ Հախա ստորագրած է իրեն ներկայացուած զաշնագիրը : Երկու օր վերջ Հիթլէրի բանակը զրաւած էր Զեխոսլովաքիան :

ԳԵՐՄԱՆԻՈՑ խորհրդային գօտիին ընդհանուր հրամանատարը, մարշալ Սոքոլովսքի Մոսկուա կանչուեցաւ երեքշաբթի օր : Իրաղեկ շրջանակներուն մէջ կը հաւաստուի որ ռուս պինուորական կը հրահանգներ պիտի ստանայ թէ ինչ քայլեր պիտի առնէ իր գօտիին մէջ երբ Անգլիա եւ Ամերիկա անկախ կառավարութիւն մը ստեղծեն արեւմտեան Գերմանիոյ մէջ : Այս մեկնումին հետ կապ ունի, թերեւս Պերլինը ամրոցելութեամբ գրաւելու եւ դաշնակիցները դուրս հանելու ռուսական ծրագիրը :

ՄՈՍԿՈՒԱՑԻ կառավարութիւնը յուշագիր մը ներկայացնելով Ֆինլանտական կառավարութեան , կը պահանջէ որ իրեն յանձնուին կարգ մը փախստական էսթոնիացիներ :

Ցերեկոյթ պարահանդէս

Ֆր. Կ. Մաշի Փարիզի մանանաճիւղին տարեկան պարահանդէսը, տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24, Hôtel Continentalի չքեղ սրահներուն մէկ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde :

Նուագախումբ ՅԵՐՆԱՆ ՊՈՒԶՕՆ : Դեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ :

Տարեկան շքեղ ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան Կարմէր Մաշի եւ Ալբալեանամի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէկ, 45 Bld. Raspail, Paris:

«Մանուկներու Օր»

Ֆր. Կապոյտ Մաշի Պոմոնի մանանաճիւղը կը տօնէ Մանուկներու Օրը, Յունուար 18ին, կիրակի կէս օրէ վերջ, ժամը 2ին, Պոմոնի նորակառոյց սրահին մէկ :

Ցերեկոյթ պարահանդէս

Կազմակերպուած Փորթ տ'Իթալիի Ֆ. Կ. Մաշի մանանաճիւղին կողմէ : Կիրակի 18 Յունուար կէսօրէ վերջ ժամը 15էն 23 : Պէն Տուչի սրահը , Rue Jules Ferry. Petit Ivry, մէթրօ Porte de Choisy :

Գեղարուեստական ճոխ բաժին.— Պիտի նկարկացուի ՀԱՐՍԸ եւ զաւեշտ մը, Սէվրանի Ֆ. Կ. Մաշի Թատերախումբին կողմէ :

Եւրոպական պարերը կը սկսին ժամը 6ին, ղեկավարութեամբ Պ. Սեսոեանի նուագախումբին : Ճոխ պիւֆէ դիւրամատչելի գիներով :

Մուտքը 75 Ֆրանք :

« ԳՈՑԱՄԱՐՏ » պատի օգացոյցներ ստացուած են եւ կը ծախուին Իտալական գրատան մէջ, 43 Rue Richer, Paris (9) , ինչպէս նաեւ Նոր Սերունդի անդամներուն քով : Գինն է 100 Ֆրանք : Մատաղը մեծ ըլլալով փոստով չի ղրկուիր : Անձամբ դիմել եւ ստանալ :

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Փարիզի Հայոց եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերակցութեան բոլոր անդամները՝ 18 Յունուար 1948, կիրակի ժամը 2.30ին Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէկ, օրակարգ ունենալով եկեղեցւոյ օգնական լուսարար Պ. Յակոբ Ձօրթուեանի քահանայական թեկնածութեան հարցը :

Կը խնդրուի բոլոր անդամներէն որ հաճին անձամբ ներկայ ըլլալ այս ընդհ. ժողովին եւ կատարել իրենց եկեղեցասիրական պարտականութիւնը : :

Կ'ՈՒԶՈՒԻ Բարտուղար մը կամ քարտուղարուհի մը որ տեղեակ ըլլայ նաեւ հաշուապահութեան եւ մեքենագրութեան : Դիմել Տապաղեանի, 30 rue de Trévise, Paris (9): Հեռաձայն Tai. 40 — 63 :

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԻ

Յայտնի դիւցազներգութիւնը, չարահիւսեց

Կ. ՍԱՍՈՒՆՑԻ

350 մեծադիր էջ, ընտիր տպագրութեամբ, գին՝ 500 Ֆրանք : Կը գտնուի Փարիզի հայ գրավաճառներուն մօտ : Տպ. Պէյրութ, 1947:

Գործ կը փնտռէ

Երիտասարդ մը գործ կը փնտռէ իբրեւ ճաշարանի պնակ լուացող (plongeur) : Դիմել «Ցառաջ»ի :

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶԻ Հ. Ց. Դ. Եզիպտացի կամքին ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերները այս շաբաթ իրիկուն ժամը 8.30ին, ընկերվարականներու սրահը, 9 rue Victor Massé: Կարեւոր օրակարգ :

ՄԱՐՍԷՑ .— «Քրիստափոր» ենթակոմիտէի ժողովը տեղի կ'ունենայ այս ուրբաթ իրիկուն ժամը 8ին, Պար տու կլօպի մէջ: Կարեւոր օրակարգ :

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ Փարիզի մանանաճիւղի դասախօսութիւնը այսօր, ժամը 9ին, SociétésSavantesի մէջ : Նիւթ «Հայ ժողովուրդը յեղափոխութենէն առաջ եւ յետոյ» : Դասախօս Պ. Վ. Չատունի : Հայերէնի դաս 8էն 9:

ՌՈՄԱՆ .— Հ. Ց. Դ. Նոր Սերունդի խնջոյքը տեղի պիտի ունենայ այս շաբաթ իրիկուն, ժամը 8ին Փաթրոնաժ Սէն Պէրնարի չքեղ սրահին մէջ: Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ: Ճոխ պիւֆէ : Մուտքը ազատ է :

Հ. Ց. Դ. ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՑԻ Զաւարեան կոմիտէի ժողովը այս շաբաթ ,17 Յունուար , ժամը 8.30ին, Կ. Մաշի Խրիմեան սրահը :

ՖՐ. Կ. ՄԱՇԻ Լիոնի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերուհիները ու տանուտէրները, կիրակի 18 Յունուար 1948, կէսօրէ ետք ժամը 3ին, 78 rue Rabelais, դպրոցին սրահը : Կարեւոր օրակարգ : Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ԼԻՈՆԻ Հ. Ց. Դ. Վարանդեան կոմիտէին ընկերական ընդհ. ժողովը այս կիրակի, 18 Յունուար 1948, կէսօրէ վերջ ժամը 2.30ին 73 rue Rabelais դպրոցին սրահը : Կարեւոր օրակարգ : Պարտաւորիչ ներկայութիւն : Ներկայանալ անդամատետրով :

ՀԱՑ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ եւ Մարտիկներու Միութեան Մարսէյլի մանանաճիւղի ընդհ. ժողովը այս կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին, Պառ Կլոպին մէջ: Կարեւոր օրակարգ :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ՝ ՄԱՐՍԷՑԻ

Թէնօռ ԿԻՐԱԿ ՍԱԳՋԼԵԱՆի երդահանդէսը, որ տեղի պիտի ունենայ, 17 Յունուար 1948, Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին, Սալ Մազընոյի մէջ, մուտքը միմիայն հրաւիրատոմսով ըլլալուն պատճառաւ, կը խնդրուի Մարսէյլի երաժշտասէր հասարակութենէն որ կնիսօրօք ապահովեն իրենց տեղերը, այլապէս երդահանդէսի երեկոյեան, կիշէնն ոչ մէկ հրաւիրատոմս հայթայթել կարելի չի պիտի ըլլայ :

Ցանձնախումբ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Մօտ օրէն կը ներկայացուի

ՀՐԱՉ ՏԱՐՕՆԵԱՆԻ

Նոր թատերդութիւնը

Կ'ուզուի

Հոլանտայէն արեւելեան անուշեղէններ պատրաստող չատ լուրջ վարպետ մը : Նախընտրելի է որ տուրքի ըլլայ : Դիմել ՄԱՆԿԻԿԵԱՆի, 135 Ave. de Bois de Boulogne à Clamart (Seine): Շատ դժուարութիւն չվճարում :

ՃԱՇԱՐԱՆ ԼԻԼԱ

Որ բոլորած է իր բաղնիքակը եւ սիրաշատ յաճախորդներէն կը խնդրէ որ ամէնէն դժուարահաճ յաճախորդները իր համադամ կերակուրներով ու բազմապիսի աղանդերներով

Հեռաձայն TRI 31 - 62

24, Rue St. Lazare, PARIS (9)

ՎԻՐԱԲՈՑԺ - ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Պ. Ա. ԴԱՒԻԹԵԱՆ

Կը յայտարարէ Պօմօնաքնակ իր յարգելի յաճախորդներուն որ օգտուելով քաղաքին եւկերտրականութեան չաբաթական երկու օրուան դադարէն կ'ընդունի իր հիւանդները ,

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՒ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Իր անձնական քնակարանը 15 Bld. du Nord, La Rosière (Marseille) առտուան ժամը 9էն մինչեւ 5: Իսկ՝ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ քաղաքի իր դարմանատունը, 53 Cours Lieutaud : Կարօտ հիւանդները եւ երկսեռ ուսանողները ձրի :

ՅԱՌԱՋԱԼ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Vendredi 16 Janvier 1948 Ուրբաթ 16 Ցունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5241-Նոր շրջան թիւ 850 Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ ԳԻՆ՝ 5 Ֆր.

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ԻՆՉՈ՞Ւ ՉԵՆ ՍՈՒԼԵՐ ԱՁՄՕՐ

Վերջերս մեր սիւնակներուն մէջ արտատպեցինք Դաշնակցական շարք մը թերթերու խմբագրականներն ու յօդուածները՝ Վիշինսքիի ծանօթ յայտարարութեան մասին:

Մեր ընթերցողները տեսան թէ Դաշնակցութիւնը ինչ տեսակէտներ ունի Սովետական Միութեան վրայ վարչապետին այդ անորակելի ելոյթին նկատմամբ եւ ինչ ազդար ընդվզումով բողոք կը բարձրացնէ՝ յանուն հայ ժողովուրդին:

Շարլաթանութեան խառնիճաղանճը, սակայն, քար լռութիւն կը պահէ տակաւին, Վիշինսքիի բարբանջանքներէն մօտաւորապէս երեք ամիս ետքն ալ, հակառակ որ Միացեալ Ազգերու խորհրդաժողովին առանձնաշնորհութիւնները, անգլիական եւ ամերիկեան մամուլը եւ մանաւանդ «Փրավտա»ն ու «Իզվեստիա»ն հաստատեցին որ ակնառու Ռուսը արտասանած է իրեն վերագրուած բառերը:

Քար լռութիւն կը պահեն որովհետեւ լծուած են աւելի կենսական աշխատանքներու —

Հայհոյել Դաշնակցութեան դէմ եւ պզտարտել այս կամ այն Դաշնակցականը:

Բամբասել Անգլիան ու Ամերիկան եւ «Հին ազգաց» պատմութիւնը քերքել օրուան բոմն խնդրին չիղելու համար:

Համայնավարական քարոզ կարդալ Ֆրանսայի մէջ թէ այլուր եւ անփառունակ վարդապետութեան մը թոյնը ներարկել մեր հայրենասէր, այլ միամիտ աշխատաւորներու մտքին մէջ:

Ու մանաւանդ, երդիքներէն ճառ կարդալ, երկաթէ վարագոյրին արեւելեան սահմաններէն ներս գոյութիւն ունեցող ազատութեան եւ անկախութեան մասին:

Ինչ համարձակութեամբ բերան պիտի բանային Մոսկուայի կամ Երեւանի սուրբերուն դէմ: Կեցցէ՛ ստրկամիտ հոգեբանութիւնը, սողալու եւ գարշապար համբուրելու, Սթալինները եւ Վիշինսքիները սայթաքումներն ալ ծածկահարելու եւ փառաբանելու առաքինութիւնը:

Այս մարդիկը չէ՞ն որ երբ, 1946ի փետրուար 21ին, Անգլիոյ արտաքին նախարարը — դիւանագիտական բառերով եւ առանց «հայ» կամ «հայկական» բացատրութիւններու բերանը առնելով, կը ժխտէր մեր իրաւունքները, լուր անցան եւ երկու ամիս վերջ Ապրիլ 24ի սգահանդէսին մէջ սուլեցին ամէն անգամ որ Անգլիացի նախարարին անունը կ'արտասանուէր:

Ինչո՞ւ չեն սուլեր հիմա, ինչո՞ւ չեն բողոքեր, ինչո՞ւ չեն հեռաքրքրուիր թէ ինչ ըսած է ընկեր Վիշինսքին, եւ ինչո՞ւ չեն ապացուցաներ, փաստերով, թէ խնդրոյ առարկայ նահանգները վրացական չեն:

Ամէնէն առաջ Դաշնակցական մամուլն էր որ բողոքեց Պէվինի ելոյթին դէմ:

Դաշնակցութիւնն էր որ իր սեփական միջոցներով հայ ժողովուրդին ցաւումը տեղեկացուց Մեծն Բրիտանիոյ պատկան իշխանութեանց՝ կատարուած ամպհատնական յայտարարութեան առթիւ:

Այո՛, Դաշնակցութիւնը, «արեւմտահայը» Դաշնակցութիւնը որ միշտ պատնէշին վրայ է երբ յարձակումներ կը գործուին մեր իրաւունքներու դէմ:

Խառնիճաղանճին ամօթալի լռութիւնը չապացուցանե՞ր որ իրենք ամէն ազատութիւն կը վայելեն այս ափերուն վրայ, իրենց առած արեւմտահան քաղաքակրթութեան դրօշին տակ:

Ամէն ազատութիւն՝ աչին ու ճախին հայհոյելու, բայց չեն համարձակիր լրտեսց շրթունքները բանալ եւ քննադատել իրենց փաթրոններն ներկայիս այն պարագային երբ այս վերջինները ոտքի տակ կ'առնեն հայ ժողովուրդին չահերը:

Ո՞ր ազատութեան մասին է ձեր ճառը, Մոսկուայի գոյնզգոյն լաքէներ:

Ե՞րբ պիտի բանաք ձեր աչքերը տեսնելու համար որ Մոսկուայի «Հանճարափայլ» վարիչները անխախտական չեն վերջ ի վերջոյ եւ անոնք ալ սայթաքումներ կ'ունենան երբեմն:

Կամ գիտակցօրէն կը մոռնան մեր հայրենի քին դերապոյն չահերը:

Սթալինը տակաւին ինչե՞ր պէտք է ընէ մեզի դէմ որպէսզի դուք քիչ մը կարմրիք, արթննաք ու բողոքէք:

Եւ սուլէք:

Ժ.

ԿՈՒԻՆՓՈՐՄԸ ԿԸ ԳՈՐԾԷ

ՄԱՐՇԷԼԻ ԾՐԱԳԻՐԸ ԶԱՒՕՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Համաձայն Պերլինէն ստացուած տեղեկութեանց, Դաշնակից պետութեան մը ներկայացուցիչները երեւան հանած են գաղտնի փաստաթուղթ մը — M — որ կը հաստատէ թէ ծրագիրը մը մշակուած է համաստատած գործադրութիւնը կազմակերպելու համար Գերմանիոյ մէջ:

Այս տեղեկութիւնը անգլիական եւ ամերիկեան թերթերուն հաղորդուած է լաւատեղեակ տուվստհելի աղբիւրէ մը:

Խորհրդային կառավարութիւնը տեղեակ է փաստաթուղթին գոյութեան ինչպէս նաեւ հետապնդուած նպատակին:

Որոշուած է որ մարտի սկիզբը, նախապէս ճշդուած օր մը, գործադրուի հռչակուելիք մարշալ Կոմինֆորմը եւ ամէն քայլ առնուի տրպէսզի գործադրութիւնը տեւէ չորս ամիս կամ աւելի: Ծրագրին յաջողութեան պարագային, թնականաբար տակնուվրայ պիտի ըլլայ երկրին տնտեսական կացութիւնը եւ Ամերիկա պիտի չկրնայ գործադրել Մարշալի ծրագիրը:

Պելկրատի կոմինֆորմը որոշած կը մասնակցին ինը երկիրներու համաձայնավար կուսակցութիւնները, ամէն ջանք ի գործ պիտի դնէ սերտ գործակցութիւնն առեղծելու համար բոլոր ընկերվարական — այսինքն համաձայնավար — կուսակցութեանց միջեւ՝ Մարշալի ծրագիրը չուրը ձգելու համար: Կոմինֆորմը այս նպատակով, յատուկ յանձնախումբեր նշանակած է Գերմանիոյ մէջ:

Համաձայնավարները պիտի ջանան ի բնէ ամբիծ մէջ առնել Գերմանիոյ բոլոր աշխատաւորները ու Արհեստակցականները եւ, վերջին պահուն, ձեռք ձգելով երկրին փոխադրական միջոցները:

Որոշում ստուած է կործել Պրէմէն — Տուսէլտորֆ եւ Համիւրկ — Պիէլֆէլտ երկաթուղիի երկու կարեւոր գիծերը Րուրի մէջ: Փոխադրութեան աշխատաւորներուն գործադուլը պիտի սկսի Տորթմունտէն:

Որոշուած է նմանպէս որ համաձայնավարները պիտի չմասնակցին այդ գործադուլներուն եւ անցուդարձին պիտի հետեւին՝ հեռուէն: Ազդարարուած է գործադուլներու դէմ կռիւ որ Դաշնակիցները կրնան դիմադրական միջոցներու դիմել:

Այս բոլոր որոշումները ստուած են անցեալ Նոյեմբերին, հետեւաբար Պելկրատի մէջ ուր հաստատուած է կոմինֆորմի կեդրոնը: Ցունուար եւ Փետրուար ամիսներուն գործադուլները վարողները վերջնական պատրաստութիւններ պիտի տեսնեն իսկ Մարտին պիտի պայթի գործադուլը:

Այս դիւցազնութիւնը վաստաթուղթը առջին անգամ տուած է Պերլինի Ֆրանսական գօտիին մէջ հրատարակուող «Տէր Քուրիէր» օրաթերթը որուն խմբագիրը կը հաստատէ անոր վաւերականութիւնը: Փաստաթուղթը, տակաւին մամուլին չյանձնուած, ցոյց ստուած է Ֆրանսական իշխանութեանց որոց արտօնութեամբ թերթը հրատարակած է բացառիկ թիւ մը:

ԱՁՄՕՐ ԺԱՄԸ 17.20ԻՆ ՓԱՐԻԶԻ ձայնասփիւռէն (Paris - Interne) Օր. Մաուխա Պերոնիքա պիտի երգէ Օննիկ Պէրպէրեանի ԱԼԱԴԵԱԶԻ ԵՐԳԵՐԸ:

ՌՈՒՄԱՆԻՈՑ գահընկէց թագաւորին ընկերացող կարեւոր անձնաւորութիւն մը ըսաւ չորեքշաբթի օր թէ թագաւորին հրաժարականին դիմաւոր պատճառն էր Մոսկուան որ կը պահանջէր որ Պուքրէշի կառավարութիւնը ճանչնար հելլէն ապստամբ վինոտրականին «կառավարութիւնը»:

ՀԱԿԱՌԱԿ կարգ մը տարաձայնութեանց Մխացեալ Նահանգներու կառավարութիւնը վրճռապէս որոշած է չհեռանալ Պերլինէն: Անհիմն են ռուսական աղբիւրներէ հասնող այն լուրերը թէ Անգլիա եւ Ամերիկա կը պատրաստուին լքել իրենց գօտիները:

ՊԱՂԵՍՏԻՆԻ բրիտանական իշխանութիւնները կ'աշխատին որ վնասատուլ մը հռչակուի Արաբներուն եւ Հրեաներուն կողմէ որպէսզի չվանդուին եկեղեցիները ու մզկիթները:

Հայաստանահարցը չեն մոռնար խորհրդարանի դիւանին

Համաչխարհային կուսակցութեան խորհրդարանական խմբակցութիւնը չորեքշաբթի օր որոշեց չմոռնակցիլ խորհրդարանի դիւանին որոնք անդամներուն ընտրութիւնը բուռն վիճաբանութեաց տեղի տուաւ ամբողջ երկու օր:

Երեքշաբթի օր Պ. Խուաւա էրիս նախագահ ընտրուեցաւ ձայներու մեծամասնութեամբ եւ հակառակ ընդդիմադիրներու իրարանցումին: Փոխ նախագահ նշանակուեցաւ ընկերվարական մը, Պ. Մաքս Լըժէօն իսկ համայնավար կուսակցութեան ղեկաւոր ներկայացուցիչներէն Պ. Ժաք Տիւքլօ որ նախորդ նստաշրջանին փոխ նախագահն էր, չկրցաւ քուէ ստանալ: Համայնավարները բողոքեցին թէ «հրամանը կուգար Ոտչինկիրէն»:

Կարեւոր պատճառներ կային թէ ինչու խորհրդարանը մեծ ժխտեց փոխ նախագահ նշանակել համայնավար մը: Համաճայն սահմանադրական օրէնքին որամադրութեանց, առաջին նախագահին մահուան կամ հիւանդութեան պարագային, իրեն յաջորդ կը նշանակուի փոխ նախագահը: Իսկ խորհրդարանի լուծման պարագային, առժամեայ վարչապետ կը նշանակուի խորհրդարանին այդ օրուան նախագահը:

Բացայայտ է որ զօրավար որ Կոլ կը պահանջէ խորհրդարանին լուծումը, իսկ Պ. Էրիս երիտասարդ չէ. հետեւաբար, անյարմար նկատուած է փոխ նախագահութեան պաշտօնը վստահիլ համայնավարի մը:

Հանրապետութեան խորհուրդին նախագահ ընտրուեցաւ Պ. Մոնէրվիլ, իսկ առաջին փոխ նախագահ ընկերվարական, Տիկին Ժէլպէռ Պրոտէթ:

Կիպրոս զինուորական խարիսխ

Լոնտոնի, զաղթավայրերու նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատարներէն մէկը, չորեքշաբթի օր յայտարարեց թէ Անգլիա պոշած է զինուորական խարիսխ մը հաստատել Կիպրոսի մէջ եւ այնտեղ փոխադրել Պաղեստին գտնուղ 70.000 զինուորները: Ինչպէս ծանօթ է, այս բանակը Պաղեստինէն պիտի հեռանայ յառաջիկայ Մայիս 15ին:

Կիպրոս Թրքական ծովակին քառասուն մղոն հեռու է: Քանի մը տարիէ ի վեր չարժումներ տեղի կ'ունենան հելլենական շրջանակներուն մէջ, կղզին Յունաստանի կցելու համար: Բրիտանական իշխանութիւնները որոշ կերպով հակացուցած են հակադրուողներուն որ հրաժարին այդ պահանջէն որովհետեւ Կիպրոսը ռազմական մեծ արժէք կը ներկայացնէ Մեծն Բրիտանիոյ համար: Կառավարիչը, Լորտ Ուիլմոթը, վերջերս խորհրդակցութիւն մը ունեցաւ տեղական իշխանութեանց հետ եւ առաջարկեց տեսակ մը ինքնավարութիւն տալ իրենց, պայմանաւ որ կղզին պաշտպանութիւնը յանձնուի Անգլիոյ: Տեղացի Յոյներէն կազմուած ազգ. ժողովին անդամներուն մեծ մասը համայնավարներ են, դիտել տուած է զաղթային նախարարը:

Յունաստանի դէպքերը

ԱՐԻՒՆԱՒԻ ԿՈՒԻՆԵՐ ԱԹԷՆՔԻ ՇՐՋԱԿԱՆԵՐԸ

Կառավարական ուժերը չորեքշաբթի օր եւ մղեցին Աթէնքէն քանի մղոն հեռաւորութեան վրայ գտնուղ Ափոլովայի արուարձանին վրայ յարձակող ապստամբները որոնց դէմ օդային յարձակում մը սկսած էր նախորդ օրը:

Հելլենական օդանաւերը ռազմանիւթ նետեցին քաղաքը պաշտպանողներուն: Հազար հինգ հարիւր ապստամբներ կը մասնակցին յարձակումին:

Հիւսիսային արեւմտեան սահմանին վրայ ապստամբները յաջողեցան յառաջանալ քանի մը մղոն տարածութեան վրայ, կառավարական ուժերը դիրք բռնած են պաշտպանողական երկրորդ գիծի մը վրայ: Երկու հարիւր ապստամբներ յարձակում գործելով Սիչենտամի գիւղին վրայ, բանի կերպով գինուորագրեցին վաթսուն գիւղացիներ, այրեցին տուները եւ գրաւեցին ոչխարներն ու կովերը:

Աթէնքէն վաթսուն մղոն հիւսիս, Լէվատիայի մէջ, ապստամբները առեւանգեցին 200 հոգի: Երեք երիտասարդներ գինուահարեցին Տիսթոմոյի հրապարակին վրայ:

Լարիսայի մէջ մահուան դատապարտուեցան տասը ահաբեկիչներ:

Կառավարութիւնը զէնքի տակ կանչած է 29 հազար զինուորներ եւս:

(Յաջորդ շաբաթուան թիւը կարդալ Դ. էջ)

ԽՈՐՀՐԴԱՑԻՆ կառավարութիւնը Պուկարիա պիտի ղրկէ 75000 թոն ցորեն «որպէսզի ժողովուրդը անօթի չմնայ»:

Նոր տարի, նոր բա՜խ

Տարիները կը թռչտային ախուր եւ մխրճնակ: Աւելի քան մոայլ է հորիզոնը, մեկ տարիէն միւսը: Ոչ միայն ազգային, այլեւ մինչազգային տեսակէտով:

Դեռ նոր լռեցին հրանօթները: Այլեւս չենք լսեր «թռչուն բերդերու» մահասիրտ ճռինչը Եւրոպայի, Ասիոյ եւ Ափրիկէի վերեւ: Միլիոնաւոր երիտասարդներ վերադարձած են տուն: Նոյնքան ալ դժբախտներ կը մխիթարուին որ ողջ մնացին, թէեւ դերի կամ հաշմանդամ:

Եւ սակայն, ահա նորէն վառօդ է որ կը շնչենք: Ու վայրեր կանչեր շրջան կընեն պարբերաբար: Հեռուէն աւելի խռովալով, զունաւորուելով:

Վեց - եօթն էին աշխարհի հզօրները, վերջին պատերազմին առաջ: Եւ դիտենք թէ ինչ քամեցաւ խաղեր, արիւնաղած դաշեր կը սարքէին, փոխադարձաբար: Ի հարկին, մասցու ոչխարներու վերածելով ամբողջ ժողովուրդներ:

Այժմ իջած են երեք չորսի: Աւելի ճիշդ՝ եռեքի: Բայց կը թուի թէ չատ աւելի դժուար կը հասկնան իրար, քան երէկ: Աւելի մոլեգնօրէն կ'ատեն իրար, քան երէկուան թշնամին:

Մարդ կը փորձուի հարցնել թէ ատոնք չէ՞ն որ ձեռք ձեռքի տուին աշխարհի բոլոր ոռմադաշտերուն վրայ, խորտակելու համար հասարակաց թշնամին ...

Եւ ահաւասիկ տարի մըն ալ կը փակուի ծանր ճախողանքներով, եթէ չհաշուենք հինգ պարտեալ պետութեանց դաշնադիրներուն տասորագրութիւնը:

Ինչ որ միջազգային դիւանագիտութիւն կը կոչեն, յայտնի կամ դաղտնի, դարձեր է իսկական լաբորիւնթոս մը: Ժողովուրդները ի դուր լոյսի ճեղքեր, ելքեր կը փնտռեն անոր պայմուցիկ բաւիղներուն մէջ:

Ուրեմն, ինչո՞ւ զարմանալ որ, մենք ալ, միշտ հալածական եւ տարուբերի՝ Մեծերու ճամբուն վրայ, դարձեալ «օր ու արեւ չտեսանք»:

Ջտեսանք այնպէս ինչպէս կը սպասէինք: Ինչպէս իրաւունք ունէինք սպասելու:

Ոչ թէ իբրեւ խեղճուկրակ բազմութիւն մը, այլ իբրեւ մարտական ուժ:

Ի վերջոյ եթէ մարդիկ ուրանան, աշխարհասատան պատերազմին՝ բոլոր ոռմադաշտները, բոլոր խրամներն ու քաղաժայռերը, ծովերն ու ճահճախուռները պիտի վկայեն:—

Այս այն ժողովուրդն է որ իր զաւակներէն աւելի քան 300.000 քաջեր տրամադրեց ընդհանրական յաղթանակին համար, մօտ մէկ երրորդը կորսնցնելու գնով:

Եւ պատմագիրն ալ պիտի աւելցնէ:— Միայն Կովկասի մէջ, այս ժողովուրդը, համեմատաբար փոքրաթիւ, ուսացաւ քաջութեան չքանչաններու ամէնէն մեծ թիւը, Խորհրդային կարգուսարքին տակ:

Այսպէս ըլլալով հանդերձ, ընդհանուր յաղթանակէն մեզի բաժին ինկաւ նոյն լեռնակուտակ չոայլաքանութիւնը, ինչպէս նախորդ Աշխարհամարտին:

Եւ մենք, յաւիտենական մանուկ, ծափահարեցինք ով որ խնդաց մեր երեսին կամ չոյեց մեր դանդուր մազերը:

Ոչինչ: Այս այն ժողովուրդն է որ իբրեւ խորհրդանշան ունի Աթաքան ու Արարատը, իսկ իբրեւ յատկանական ուժ՝ Աշխատանքը:

Քանի կան այդ լեռն ու դետը,— լեռներն ու դետերը — բոլոր դաւերն ու չարաճճիութիւնները դատապարտուած են ամլութեան:

Եթէ այսօր մեր արեւը աւելի չատ ուրիշներուն ճամբան կը լուսաւորէ, այդ չի նշանակեր թէ այսպէս ալ պիտի մնայ:

Ունինք արդէն կորիզը հայրենիքի մը որ կրնայ հեռուհեռու աւելի լայն բանալ իր թեւերը, քանդել արուեստական սահմանաքարերն ու փշաթելերը, դոնելու համար իր բնական, եթէ ոչ պատմական տարածութիւնը:

Եւ նոյն առեն անշուշտ այսօրուան ամենահայ թեւարկութիւնն ալ պիտի դառնայ իրական դաշնակցութիւն, խնայելու ազատ եւ անկախ հարեւանի մը հետ, որ չունի ուրիշ փառասիրութիւն եթէ ոչ իր չինարար ստեղծագործութեան բարիքը բերել մարդկութեան:

Պիտի մնանք անսասան՝ այս հաւատքին մէջ, իբրեւ հաւատարիմ ժառանգորդները դարաւոր աւանդին:

Մեռը Հոմար ալ, տարբերան պայման է որ Հայաստանն ու Հայկական Արարատահմանը իրարու բացուին ազատ համարձակ, առանց կողմնակի, ծուռ բերան միջնորդներու:

Եւ պայման է որ Երեւանը ոչ թէ թերխաչ, թխածոյ հրամաններ արձակէ, այլ վարժուի լսել, ունկնդրել, ըմբռնել:

Ի վերջոյ ոչ բանաւոր հօտ է Արարատահմանի մէկ միլիոնը, ոչ ալ բայաներու ամբոխ մը, որպէսզի փարախներու բաժնեն, վեղարաւոր թէ անվեզար հովիւներ կամ լիազօրներ նշանակելով անոնց դլխուն վերեւ:

Գարձեալ պայման է որ Արարատահմանը ինքն ալ ունենայ յստակ դիրք, հիմնական չահերու հաստատ գիտակցութիւն, մեկդի դնելով «յաւակնոտիական» ձեռնհասութիւնը:

Եւ այս՝ ոչ միայն քաղաքական տեսակէտով, այլեւ մշակոյթի ճակատի վրայ:

Օրինակ, երբ մենք անդադար կը յիշեցնենք թէ երեւանը իրաւունք չունի քամահաճօրէն խաղալու բուն հայկական մշակոյթին, լեզուին ու դրականութեան հետ, ամօթ է որ Արարատահմանի դրոց բոցները տուտ խնդ ձեւանան, կամ ճակատ յարդարեն, անփառունակ պատալքութեամբ:

★

... Նոր տարի, նոր բարի, կ'ըսէ մեր իմաստուն ժողովուրդը:

Կրկնենք մենք ալ բարձրաձայն, նոյն կենսուրախ լաւատեսութեամբ:

ԳՈՒՄԱՒԵՐ

Մոսկուայի վէց փճոտեցիէ պատճառները

Ներգաղթի շուրջ 1945—46ին տեղծուած դեւորութիւնը, նուազեցաւ 1947ին: Մեր հայրենադարձ եւ հայրենասէր դաղթահայը, ներքին տաժեղ հաւատք մը ունէր հայրենիքին եկած պաշտօնական հրաւէրներու մասին:

Ան կը հաւատար զանդուածային ներգաղթի իրական նշանակութեան, որ իր մէջ կը բովանդակէր նաեւ, հայրենի հողերու ընդարձակման արդար երազն ալ:

Ոչ ոք կրնայ առանց մեղա՛ չանքի պնդել, որ միեւնոյն տրամադրութիւնները չունէին մեր երկրի իշխանաւորները, իրենց՝ հոգ չէ թէ ցուցական բազմազան պաշտօնական եւ անպաշտօն յայտարարութիւններով:

Մեր «ճառագիմական»ները կրնան խռովիլ եւ դազազել, եթէ ըսենք, հայութեան մէջ, տդեւորութիւնը այս ուղղութեամբ ընդհանուր էր, բոլորին ու բոլորի հայրենիքի մէջ թէ հայրենիքին դուրս, առանց խորութեան եւ առանց բացառութեան:

Այս ընդհանուր ոգեւորութեան մէջ, առաջին սպ հովը եկաւ 1947ին, թէեւ նկատելի էր ան՝ դեռ 1946ին:

Ճիշդ է, որ անցեալ տարուան համար ալ 70 հազար ներգաղթողներու լուրը տրուեցաւ պաշտօնապէս: Այս տոթիւ ճշդուեցան դաղթահայութեան պարտաւորութիւնները, ինչպէս եւ այն պարտաւորութիւնները, որ տեսուած էին եւ դեռ պիտի տեսնուէին բուն հայրենիքին մէջ, դիւրացնելու ներգաղթողներու փոխադրութիւնն եւ տեղաւորումը:

Հակառակ այս բոլորին, Սեպտեմբեր ամսուն միայն ձեռնարկուեցաւ բուն փոխադրութեան, քիչ մը բոլոր դաղութներէն:

Առանց պատճառի՞ էր այս որոշումը, եւ կամ, պատճառները հետեւանք էին միա՞յն գործնական դժուարութիւններուն, (զիւակարտային շինարարութեան կարճ ժամանակը, փոխադրական նաւերու պակասը եւայլն), մենք կը վարանինք դրականն պատասխան տալու: Որովհետեւ, ցարդ, խորհրդային ոեւէ հրապարակութեան մէջ, կը հանդիպինք նման արդելք մը մատնանշող ոեւէ տեղեկատուութեան:

Իսկ ընդհակառակն, անդակատ են միշտ նըկատագրութիւնները ակող ու դալիք ներգաղթողներու համար չինուած աւաններու, թաղերու եւ բնակարաններու, ինչպէս նաեւ ուրիշ պատրաստութիւններու:

Մնա կողմէն՝ դաղութներն ալ ոչ մէկ ձեւով չդժկամակեցան իրենցմէ եղած պահանջներէն՝ նպաթական թէ բարոյական: Հոս աւելորդ չէ յիշել, որ մեր ամենադքատ դաղութներն անդամ — ինչպէս օրինակ Ճունտտոնը եւ Ռումանիան չր վարանեցան հոդալ իրենց բոլոր ծախսերը: Բացդգործականը իր կարդին, արտակարդ եռանդ եւ հոդածողութիւն մը յայտնաբերեց ներգաղթի համար, կանդ չառնելով ոեւէ զոհողութեան առջեւ:

Բայց որ դժուարութիւնները այս ուղղութեամբ չէին, մենք նկատի ունինք ուրիշ իրողութիւններ ալ:

Այսպէս օրինակ, վերցնենք Ռումանիայէն փոխադրուողներու պարագան:

Յայտնի է, որ Օգոստոսին միայն Խորհրդ. կառավարութիւնը կ'որոշէ Ռումանիայէն ալ մաս մը Հայեր Հայաստան փոխադրել: Նախապատրաստական բոլոր աշխատանքները կը կատարուին, մինչ ներգաղթի լիազօր Ապրամօֆի անմիջական հրահանգներովն ու հսկողութեան տակ: Կը ճշդուին անմիջական մեկնողներու ցուցակները, կը կատարուին վերջնական բոլոր գործողութիւնները, առանց մոռնալու «ողջերթի» վերջնական եւ մանակի ցոյցերն ու հաւաքոյթները:

Աչքը անցաւ, ձմեռ է այլեւս, այն ալ Ռումանիոյ ձմեռը, սակայն մեկնումի հրամանը չր կայ: Ո՞ւրկէ այս արդելքը: Ռումանական կառավարութիւնէ՞ն.— Անշուշտ ծիծաղելի է այս մասին մտածել: Կը խորհի՞ք «Դաշնակցութեան մասը» տեսնել այս անլուր տղերգութեան մէջ — այդ արդէն, լաւագոյն բարեկիր մը կրնայ ըլլալ ուղեղային հիւանդութիւնէ տառապողներու համար:

Ուղիղ եւ միակ արդար լուծումը, մենք կըրնանք դանել Մոսկուայի մէջ, որ ոչ միայն տէրն է այս կարդի հարցերուն, այլեւ բուն հեղինակը նըման անլոյծ դաղանիքներուն:

Երբ կը խօսուի Դաշնակցութեան կողմէ ներդաղթի շուրջ տրպէս, թէ կատարուած մեքենայութիւններու մասին, եւ երբ անբաբեխղճութեամբ եւ անպատասխանատու ձեւով «Դաշնակցութեան մասը» ցոյց կը տրուի Ֆրանսական եւ ամերիկեան կառավարութիւններու կողմէն յատուցուած քան ամենայնի օրինական դժուարութիւններու առթիւ — լաւ է, տակէ առաջ դիտել տարբեր վայրեր ալ:

Ռումանիոյ օրինակը միայն, չատ քան կրնայ բացատրել, ամէնէն առաջ մեր «Ճառագիմական »ներուն: Դժբախտաբար իրականութիւնը տեսնելը հաճելի բան չէ անոց համար: Որովհետեւ, ներգաղթի այսօրուայ իրականութեան մէջ, ոչ մէկ իրական արժէք կը ներկայացնեն ոչ Ֆրանսահայ, ոչ ամերիկեան դժուարութիւնները, եւ ոչ ալ Դաշնակցութեան երեւակայական «մեքենայութիւնները»:

Ջանդուածային ներգաղթը, հաստատուած եւ հրամանագրուած Մոսկուայէն, դժբախտաբար, այսօր չունի այն իմաստն ու նշանակութիւնը, ինչ որ ունէր 1945—46 թուականներուն:

Այն տարբեր իմաստ եւ բովանդակութիւն ունէր ոչ միայն Մոսկուայի համար մեր չիշած թըւականներուն, այլ նաեւ բովանդակ Հայութեան համար, հայրենիքի մէջ թէ հայրենիքին դուրս:

Այդ թուականներէն ասդին, չատ բան փոխուեցաւ մեր այս անլծուած երկրագնդին վրայ:

Փոխուեցաւ նաեւ Մոսկուան, Հայոց մեծ ու փոքր իր խնամակալներուն հետ:

Եւ մենք տեսանք զանդուածային ներգաղթի հետ մէկտեղ նետուած թրքահայոց հողերու կըցման պահանջի աստիճանական մոռացումը:

Դեռ ասկէ առաջ, երբ Վիչինսկին Կարսն ու Արտահանը վրացական կը յայտարարէր, մթթէ այդ յայտարարութեամբ չէր լուծեր նաեւ ներդաղթի շուրջ ստեղծուած հարցերը ..

Լաւ է, քիչ մը երեւոյթը այդ ուղղութեամբ դարձնէք պարոնայք «Ճառագիմականներ, ո՞վ գիտէ, դուցէ, Վիչինսկիի յայտարարութեան մէջ եւս «Դաշնակցութեան մասը» գտնել յաջողիք ...

Թ. Ս.

Լեզուական

Գ. Ալէմշահի նուիրած գրութեանս մէջ կարճ ակնարկ մ'ունէի հայերէն տառերու դաշնագայնութեան մասին: Նամակագիրը մը կը խնդրէ «Ճառագի»ի մէջ ներկայացնել իմ «նոր աղբիւրներս»ի մասին Լ եւ Ղ տառերուն անուանակոչութեան (լիւն = լիւյուն = յունական Լ), ինչպէս եւ անոնց ծագման (զա՞տը հայերի է եւ հին թէ լիւնը):

Ահա թէ ինչ:

Եւ դեռ կան, որ զիս կը մեղադրեն թէ յօդուածներս չարունակելի կը մնան: Ի՞նչպէս ընեմ որ չարունակելի չմնան: Հաշիւ կը սկսիմ գրգռել նկսի մը, եւ ահա մէկը ասդին կը քաշէ թեւէս, միւսը՝ անդին:

Պատասխան: Իմ ակնարկիս մէջ՝ զիս հետաքրքրողը գաշնադայնութեան (euphonie) օրէնքն էր,— ընդարձակ է նիւթը, բայց որեւէ հետաքրքրութիւն չի կրնար ներկայացնել օրաթերթի ընթերցողներուն:

Տառերու անուանակոչութեան մասին նոր բան մը չեմ դիտեր: Ուսուցիչս Արամ Նիկողոսեան կը պնդէր թէ լիւնը ազգանն է լիւյոն անուան, (նոյնը Տ տառին համար),— առով հաստատելու համար թէ յունարէնէ փոխ առնուած տառ մըն է, յաճախ յունարէն բառերու տառադարձութեամբ եւս համապատասխան:

Գալով Ղ եւ Լ տառերու ծագման եւ հնութեան կամ պատմական հնչումներուն հարցատուութեան՝ վէճը կայ ու կը մնայ: Ոմանք կը պընդեն թէ մեր լեզուին յատկանիշն էր, սկիզբները, Լ տառը հնչել Ղ, ինչպէս մեղր, աղ: Ընդհակառակն, ուրիշներ կը պնդեն թէ հայ լեզուն Ղ տառը կը չինէ Լ, ինչպէս մատաղսուղ — մատաղսլապատ, բոդ (բոդդ) — բոդլ: Առաջին տեսակէտը պաշտպանողներուն գլուխը կը կանգնի Գ. Այվազովսկի: Հակառակ տեսակէտը պաշտպանողներուն գլուխը՝ Բագրատունի, (որ կը պնդէ թէ Լ եւ Ղ տառերուն մէջեւ գոյութիւն ունէին երկու միջին ձայներ եւս, որոնք կը նշանակուէին փչիկով մը,— ուրեմն ընդամէնը չորս Լ կամ Աչքը անցաւ, ձմեռ է այլեւս, այն ալ Ռումանիոյ ձմեռը, սակայն մեկնումի հրամանը չէ կայ: Ո՞ւրկէ այս արդելքը: Ռումանական կառավարութիւնէ՞ն.— Անշուշտ ծիծաղելի է այս մասին մտածել: Կը խորհի՞ք «Դաշնակցութեան մասը» տեսնել այս անլուր տղերգութեան մէջ — այդ արդէն, լաւագոյն բարեկիր մը կրնայ ըլլալ ուղեղային հիւանդութիւնէ տառապողներու համար:

Ուղիղ եւ միակ արդար լուծումը, մենք կըրնանք դանել Մոսկուայի մէջ, որ ոչ միայն տէրն է այս կարդի հարցերուն, այլեւ բուն հեղինակը նըման անլոյծ դաղանիքներուն:

Երբ կը խօսուի Դաշնակցութեան կողմէ ներդաղթի շուրջ տրպէս, թէ կատարուած մեքենայութիւններու մասին, եւ երբ անբաբեխղճութեամբ եւ անպատասխանատու ձեւով «Դաշնակցութեան մասը» ցոյց կը տրուի Ֆրանսական եւ ամերիկեան կառավարութիւններու կողմէն յատուցուած քան ամենայնի օրինական դժուարութիւններու առթիւ — լաւ է, տակէ առաջ դիտել տարբեր վայրեր ալ:

Ռումանիոյ օրինակը միայն, չատ քան կրնայ բացատրել, ամէնէն առաջ մեր «Ճառագիմական »ներուն: Դժբախտաբար իրականութիւնը տեսնելը հաճելի բան չէ անոց համար: Որովհետեւ, ներգաղթի այսօրուայ իրականութեան մէջ, ոչ մէկ իրական արժէք կը ներկայացնեն ոչ Ֆրանսահայ, ոչ ամերիկեան դժուարութիւնները, եւ ոչ ալ Դաշնակցութեան երեւակայական «մեքենայութիւնները»:

Ջանդուածային ներգաղթը, հաստատուած եւ հրամանագրուած Մոսկուայէն, դժբախտաբար, այսօր չունի այն իմաստն ու նշանակութիւնը, ինչ որ ունէր 1945—46 թուականներուն:

Այն տարբեր իմաստ եւ բովանդակութիւն ունէր ոչ միայն Մոսկուայի համար մեր չիշած թըւականներուն, այլ նաեւ բովանդակ Հայութեան համար, հայրենիքի մէջ թէ հայրենիքին դուրս:

Այդ թուականներէն ասդին, չատ բան փոխուեցաւ մեր այս անլծուած երկրագնդին վրայ:

Փոխուեցաւ նաեւ Մոսկուան, Հայոց մեծ ու փոքր իր խնամակալներուն հետ:

Եւ մենք տեսանք զանդուածային ներգաղթի հետ մէկտեղ նետուած թրքահայոց հողերու կըցման պահանջի աստիճանական մոռացումը:

Դեռ ասկէ առաջ, երբ Վիչինսկին Կարսն ու Արտահանը վրացական կը յայտարարէր, մթթէ այդ յայտարարութեամբ չէր լուծեր նաեւ ներդաղթի շուրջ ստեղծուած հարցերը ..

Լաւ է, քիչ մը երեւոյթը այդ ուղղութեամբ դարձնէք պարոնայք «Ճառագիմականներ, ո՞վ գիտէ, դուցէ, Վիչինսկիի յայտարարութեան մէջ եւս «Դաշնակցութեան մասը» գտնել յաջողիք ...

Թ. Ս.

չորս Ղ.)։ Տեսնել Ա) Բագրատունիի աշխատու-թիւնը՝ «Ցաղագս հնչման Լ եւ Ղ տառից մերոց», իր նշանաւոր Քերականութեան իրրեւ յաւելուած, 22 էջ, (1852, Վենետիկ)։ Բ) Այվազովսկիի դըպ-քոյկը՝ «Ճառ յաղագս հնչման Ղ եւ Լ տառից», 33 էջ, (1852, Վենետիկ)։

Այս վէճին թերուղէի տեսնել նաեւ Գր. Վանցեանի յօդուածները՝ նախ «Մուրճ»ի մէջ (1899), «Գիր եւ Հնչմունք» խորագրին տակ, ուր «Պատմական քերականութեան» այս հեղինակը կը պնդէ թէ ոչ միայն հայ, այլեւ յունեւլատին տառերու պատմական հնչիւնները կորսուած են բոլորովին։ Երկրորդ՝ «Լումայի» մէջ (1905), ուր, խօսելով Ղ եւ Լ տառերու հնչարանական վէճին մասին, կը պնդէ թէ ոչ ոք կրնայ ճշդել հազարաւոր տարիներ առաջուան հնչիւնները, բացի Մեսրոպէն։

Տեսնել նոյնպէս Մ. Աբեղեանի տեսակէտները՝ «Հայոց լեզուի տեսութիւն» (տպ. Երեւան, 1931), էջ 108, ուր բռնաբռօսիկ փորձեր կը կատարէ նոր ուղղագրութեան տեսաբանը, հաստատելու համար թէ Ղ տառին հնչիւնը «սկզբնապէս հաւանօրէն ձայնորդ կառկային Լ է եղել» եւ նմանի կաղմախօսական քրտնաժոյր ենթադրութիւններ։

Եթէ կան հետաքրքրուողներ նման հարցերով, կրնան ուսումնասիրել Ա. Ճառեանի «Հայոց դրերը», տպ. Վիէննա 1928, Տաղաւարեանի «Մագուս մըն հայ տառից», տպ. Վիէննա 1895, Ի. Ճարուճեանի «Հայոց դերը», տպ. Թիֆլիս, 1892։ Ա. Ճառեան ունի նաեւ «Ս. Մեսրոպ եւ դրերու դիւտի պատմութեան աղբիւրներն ու անոնց քննութիւնը» դրքոյկը, տպ. Փարիզ, 1907, որ կը վերջանայ օգտակար եւ ամարժէք աղբիւրներու ընդարձակ մատենացոյցով մը։

Կան անշուշտ նորագոյն աշխատութիւններ եւրոպական մատենագրութեան մէջ՝ դիրերու ծագման մասին։ Կրնամ մատենացուցական օժանդակութիւն ընել փափաքողներուն, բայց յօդուած դրել այդ նորութեանց մասին՝ զբաղումներս կ'արգիլեն ինձ։

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Բարեգործականներ

1.— Քանի մը օր առաջ, կեդր. Վարչ. ժողովը Հայաստանէն ստացաւ հետեւեալ երկու հեռագիրները, Ներգաղթի կեդր. Կոմիտէի նախագահ քաղ. Բ. Աստուածատուրեանի ստորագրութեամբ.

«Շնորհակալութեամբ յայտնում ենք ձեր կողմից ուղարկուած 111 հակ հագուստեղէն եւ 104 մնատուկ կօշիկների ստացման մասին, որ տրամադրուած է չքաւոր ներգաղթողների օգնութեան համար»։

«Շնորհակալութեամբ յայտնում ենք 4 էքսքավաթորների ստացման մասին, որոնք մեծապէս կ'օժանդակեն ներգաղթողների համար կառուցուող աւաններում հողերի չորացման եւ ոռոգման գործին։ Խնդրում ենք հաղորդել, ե՞րբ կարելի է սպասել մնացած 2 էքսքավաթորների ուղարկումը»։

Պեղիչ մեքենաներու ստացումը ծանուցանող երկրորդ հեռագիրն է այս, եւ լաւ բացատրական

8.— Մխիթեանս կեդր. դիւանին ստացած տեղեկութեանց համաձայն, այս տարի Հայաստան ներգաղթած են՝

Ծաւ առատանէն 13.322 անձ, Սուրիայէն եւ Լիբանանէն 2.953 անձ, Ֆրանսայէն 4.280 անձ, Եգիպտոսէն 1.680 անձ, Պաղեստինէն 1.305 անձ, Իրաքէն 857 անձ, Ամերիկայէն 152 անձ, ընդհանուր գումար 34.549 անձ։

ԴԻՒԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

23/12/47

Հ. Մ. Ը. Մ.Ը ՄԱՐՍԷՑԼԻ ՄԷՋ

Այս կիրակի Հ. Մ. Ը. Մ.ի մարզադաշտին Atlanticի վրայ տեղի կ'ունենայ Promotion d'honneurի մրցումը Հ. Մ. Ը. Մ.ի եւ St. Loupի մրցում։

Առաջին խաղարկութեան, դասաւորին վճռով Հ. Մ. Ը. Մ.ը պարտուած յայտարարուեցաւ 2ի դէմ 1ով, բայց այս անգամ մեր տղաքը վրէժ ունին լուծելիք, երկար տարիներու վրէժ մը։

Հ. Մ. Ը. Մ.ի մարզադաշտը շատ պզտիկ պիտի դայ այն բազմահազար հանդիսականներուն համար որոնք ներկայ պիտի ըլլան դիտելու այս կարեւոր մրցումը։ Մարզական թերթերը գուշակութիւններ չեն ըներ տակաւին, հակառակ որ St. Loup շատ ուժեղ զօրատար է իր յարձակողական դիծով քան մենք։ Հ. Մ. Ը. Մ.ը պէտք է յաղթէ St. Loupին, քովհետեւ ամէն անգամ այս երկու խումբերուն հանդիպումը պրեմէ մէջտեղ է Հ. Մ. Ը. Մ.ի յաղթութեամբ։

Կը խնդրենք մեր մարզասէր հասարակութենէն որ չմիջամտէ դասաւորին տուած որոշումներուն եթէ նոյնիսկ անոնք հակառակ ըլլան մեզի։ Այս կապեւոր մրցումը տեղի պիտի ունենայ 5 պաշտօնական դատաւորներու եւ délégué-ներու ներկայութեան, իսկ ոստիկանական ջոկատ մը պիտի հսկէ մարզադաշտին վրայ։

Ժամը 1ը 30 անցած Հ. Մ. Ը. Մ.ի պահեստին կը մրցի St .Loupի պահեստիին հետ։

Վահան Շամլեան

Անցեալ կիրակի օրուան Port St. Louis du Rhôneի մէջ մեր տղոց տարած յաղթութիւնը 1—0 կ'արդարացնէ այն գոհողութիւնները զոր Հ. Մ. Ը. Մ.ի վարիչները, բարերարները եւ համակիրները ըրած են մինչեւ հիմա, Մխիթեան անունը բարձր պահելու համար։

Մեր անմահ բերդապահը բացակայ էր եւ զայն կը փոխարինէր Պ. Էմանէլեան որ իր պաշտօնը լիովին կատարելով բոլորին ծափահարութեան եւ ընդհանուր գոհունակութեան արժանացաւ։ Մեր պաշտպանողական գիծը այս անգամ եւս կայ տուաւ որ promotion d'honneurի ամենազօրաւոր պաշտպանողական գիծն էր։

Գալով մեր յարձակողական գծին, հետզհետէ կազմակերպուելով աւելի փայլուն արդիւնքներ ձեռք պիտի ձգէ։ Ֆէրմանեան, Տիգրան եւ Գալուստեան անբաժանելի երրորդութիւնը փութալի կատարեալ ցուցադրութիւն մըն է որ կը կատարեն մարզադաշտերուն վրայ։ Օտար մարզական չրջանակները գովեստով կը խօսին Հ. Մ. Ը. Մ.ի խաղարկութեան մասին։ Կրնամ վստահեցնել որ եթէ մերոնք չպարտնակեն իրենց յաղթութիւնները կրնան այս տարի Division d'honneurի դասակարգին բարձրանալ։

★ Վերադարձին, օթօքառին մէջ յաղթու-

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ

ԼՍԱ ԵՒ ՀԱՄԱՏ

(ԽՈՐՀՐԴԱՎԷՊ)

Ա. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԳԱԼ

Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

Պանանիներու նեարդները աւիշի մէջ, հաւատքին թելերը աւելի երկարեցան եւ տուարծիկներէն մին թելերը իր կռնկոճած մատներուն քաշելով իջաւ, թառեցաւ իր զոհած փսխթին վրայ ու սկսաւ ոստոստել ճռուողան։

Բայց ո՞ւր մնաց Սկիւթի ուղեւորը ... Ահա քիչ մը անդին Սպիտակ վանքին սեղանատունը. Պախոմեան հայկերոյթի է նստեր, արմաւ, թուզ, նռան գինի, հաց, դոպայ, հում խոտեր եւ աղ։ Ուզիահակ մատիկ կ'ընէ վանահօր խօսքերը։

— Հոգեւոր առողջութիւնը սակաւանունդ մարմնի մէջ է, իսկ հոգեկան վերացումը ծոմամարմնի մէջ է, իսկ հոգեկան վերացումը ծոմապահութեան։ Վանականին տեսիլքի՝ խորութիւնը ու մելամաղձոտութիւն, իսկ բարեխորութիւնը՝ մելամաղձոտութեան։ Տիրոջը խաղաղութիւնը վրադ, բարի ճանապարհ ... ։

Երբ դուրս ելաւ այդ սպիտակ սպանդանոցին, ճանապարհը երկուքի էր բաժնուած, եւ տեսաւ կածանները ներաշխարհին ուր սկսաւ դեղերել։

— Ինչ որ ճշմարիտ կը թուի սուտ է, եւ ինչ որ սուտ՝ ճշմարիտ։ Այս հաւատքը ճշմարտութիւն մըն է ինքնին, բայց մտքին թռիչքը հաւատքին թոցերուն մէջ այրել, դատողութեան լոյսը մտքին ուրացումներուն ժխտական չունչին տակ մարել, սա՝ ստութիւն է։ Հոգիին բժշկութիւնը մարմնին հիւանդութեան մէջ փնտռել... Երկուքէն մէկը — կամ մարմինն է մեր մէջ ուժեղ եւ հոգին տկար, եւ կամ հոգին Աստուածմէ է չնորհուած ու մարմինը՝ չաստուածներէն։ Ո՛հ, քաւ լիցի։ Անոնք միեւնոյն Արարիչին գործերուն ստեղծագործութիւններն են. կը մնայ զանոնք իրարու հետ հաշտեցնել ու ներդաշնակել։

Լոյսը աստուերին, աստուերը լոյսին, քարը քարին ու ինչ ամէնուն դարնուած՝ ինկաւ ու ելաւ, մինչեւ որ հորիզոնին վրայ խոշոր կարմիր գլուխ մը կապոյտին քղանցքները բռնած, դուրս ցցուեցաւ ու սոսկաւահիլ ու արիւնած աչք մը նետեց եռք՝ սուզուեցաւ վարագոյրի ետին։

Մայրամուտ։ Գիշեր։ Խաւար։

Ո՞ւր ես բարի վհուկն աստուծոեան։ Ահա մարմնաթափ խաւարը կրկին յարութիւն կ'առնէ. հալածուած շնագայլերը կրկին կը սկսին ոռնալ, Ո՞ւր ես ամենահզօր հալածիչն դեւերու և չար ոգիներու։ Սեւ ոչխարներու մեղաքարշ եղամակները դարձեալ կը շրջին ու գիշերուան կարաւանը հեչտանքով ու տուիանքով բեռնաւոր կրկին կը քալէ երիկամունքի տարիայոյզ ճանապարհով։

Բայց ի՞նչ է մօտէն չաս մօտէն զինքը դիմաւորող ու տարօրինակ, վարդենի ստուերը. մա՞րդ թէ կենդանի... յանկարծ հսկայ ագռ մը, իր եռեւի ոտքերուն վրայ չարագուշակ սիւնի մը պէս անկուած, կ'ինչեցնէ խոշոր թաթերը՝ սարսափած ուղեւորին ուսերուն։

— Բարի եւ խաղաղ գիշերը ամէնուս վրայ, եղբայր պատուական։

Մէկը՝ արջին չափ մաղտա ու խաւարին չափ սոսկադէմ, ձեռքէն բռնած, կ'առաջնորդէ զինքը իր քարայրը ուր խաւարը չերեւիտ, հալած սեւ ձիւթ կը հոսեցնէր, սարսափի կղպանքով մը դռները փակած։

— Օտարական այս է մեր կեանքը, կրակ չվառել, կրակին չմօտենալ, ցերեկը կարղալ, գիշերը հսկել ու միշտ աղօթել ...

— Այո, այո՛ կը հասկնամ, վառել լոյսն ու կրակը մտքին ու թունաւորել հոգին... Սա է ճշմարիտ ճշմարտութիւնը, գիշեր բարի, Աստուած օգնական ...

⁂

Մէջօրէն՝ ոտքերը անապատի հրաւառ թումներուն մէջ կախած՝ կը քրտնի ջրասոյզ. կաւաչ կարմիր օձեր կը վազեն բերանաբաց վրան ու կատաղօրէն լլկելով, կը չորցնեն անոր ծոյլ քրտինքը, միայն աղ ու լտութեան աղէ արձանը թաղուած, վառուած թունելներուն չուրջ։ Շուրջը՝ լեզուն այրած համրի մը պէս, քարին ու աւազին կպած՝ կամ կայ, կամ չկայ։

Սկիւթի անապատ... աւելի դաժան, աւելի հրաչէկ երկաթ՝ քան Ս. Թեմեյիրը։

թեան երգերը կը թնդային : Պ. Պադրճեան, Պ. Գարուտեանները եւ Տիկին Փափազեան իրենց զեղչիկ ձայնով մեզ կը խանդավառէին :

Ցաղթութեան դիմաձօնը կատարուեցաւ Հ. Մ. Ը. Մ.ի հաւաքատեղիին մէջ : Մեր խոբին շնորհակալութիւնները կը յայտնենք Պոմոնի Արմենուհիներուն որ Հ. Մ. Ը. Մ.ի մեծ յաղթութենէն ուրախացած, խոշոր կարկանդակ մը նուիրեցին մեր ուղղ : — Վահան Շամլեան

Նախագահ Թրումըն կ'ազդարարէ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ ԵԹԷ...

Նախագահ Թրումըն չորեքշաբթի օր խորհրդարանին ներկայացնելով տնտեսական նոր ծրագիրը մը, ազդարարեց որ «տագնապ մը անխուսափելի է եթէ խիստ միջոցներ ձեռք չառնենք գիները բարձրացումը կասեցնելու համար» :

Ամերիկայի ժողովուրդը գիտէ որ արժեզրկումը մեզ զրաղեցնող կարեւոր խնդիրներէն մէկն է ներկայիս, ըսաւ նախագահը եւ խորհրդարանին ջնջութեան յանձնեց տասը կէտերէ բաղկացած նոր «յայտագիր» մը :

Եթէ ազգը ցոյց չտայ թէ ինք կրնայ չափաւորել իր պահանջները եւ կառավարութեան կողքին կանգնիլ, «գիներու վտանգաւոր բարձրացում մը տեղի պիտի ունենայ եւ յառաջ պիտի գայ տնտեսական տագնապ մը» :

Նախագահը յետոյ առաջարկեց — հակակշիռ հաստատել բոլոր գիներուն վրայ, պատկան իշխանութեանց իրաւասութիւն տալ բաժնեչափի դրութիւնը հարկ եղած պարագային վերահաստատելու, աւելցնել Ամերիկայի արտադրութիւնները 35 առ հարիւր համեմատութեամբ՝ յառաջիկայ տասը տարուան ընթացքին եւ աշխատանք ապահովել 59 միլիոն աշխատող ձեռքերու՝ 1948ին :

Նախագահը դիտել տուաւ որ 1947ին իւրաքանչիւր Ամերիկացի միջին հաշուով, 1264 տոլարի գուտ եկամուտ ունեցած է այսինքն 170 տոլար աւելի քան նախորդ տարին :

★ Ամերիկայի երմտական նախարարը, Ճան Մնայըը Վերակոյտի արտաքին յարաբերութեանց յանձնաժողովին մէջ յայտարարեց որ սըխալ պիտի ըլլայ պահանջել Մարշըլի ծրագրէն օգտուող 16 պետութիւններէն որ նախապէս Ամերիկայի մէջ իրենց ունեցած 4800 միլիոն տոլարի վարկերը : Նախարարը յանձնարարեց որ քուէարկուի ներկայացուած օրինագիծը :

★ Միացեալ Նահանգներու արտաքին նախարարութիւնը իր հաւանութիւնը տուած է որ մանուածարներ արտայն Ճունաստանի, Աւստրիոյ եւ Ֆրանսայի միջեւ որ քուէարկուի Մարշըլի ծրագիրը : Փոխադարձութիւններ պիտի ըլլան նաեւ Իրլանտայի, Շուէտի եւ Նորվեկիոյ : Զուիցերիա, Փորթուգալ եւ Թուրքիա պարտաւոր են կանխիկ վճարել իրենց գնումներուն փոխարժէքները :

ՊԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԵՐԿՈ գրած էինք որ Պուլկարիոյ վարչապետը յայտարարած է խորհրդարանին մէջ թէ փեթքով իր պլուխը փրկած պիտի ըլլար եթէ Անգլիա եւ Ամերիկա միջամտած չըլլային : Լոնտոնի քաղաքական շրջանակներուն մէջ դիտել կը տրուի որ Տիմիթրովի այդ յայտարարութիւնը կ'ապացուցանէ որ մահապատիժը դործադրուած էր քաղաքական չարժառիթներով :

ԱՆԳԼԻՈՑ արտաքին նախարարութեան պաշտօնաւորէն կը հաստատուի այն լուրը թէ բրիտանական կառավարութիւնը յոյսերած է որ Ամերիկա դարձեալ օդակայան մը հաստատէ Պէնկազիի մէջ (Միւէյտա) : Այդ կէտէն էր որ դաշնակից օդանաւերը, պատերազմի ընթացքին, կը կատարէին իրենց յարձակումները Աթէնքի, Հռոմի, Թիւնիսի վրայ :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Սէն Լուի-Ֆր. Կապոյտ Խաչի Մանուկներու Օրուան հանդէս տօնածաւալ այս կիրակի իրիկուն ժամը 8ին, Սէն Լու, կրան Բէնի ազգային մանկապարտէզին մէջ : Պիտի ըլլան երգեր, արտասանութիւններ եւ դեղջկական պարեր :

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Dameme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

Ցերեկոյթ պարահանդէս

Ֆր. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը, տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24, Hôtel Continental-ի ջերմ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde :

Նուագախումբ ՖԼՐՆԱՆ ՊՈՒՑՕՆ : Գեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ :

Տարեկան շքեղ ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Մխիթեան Կաթմբը Խաչի եւ Ալբալեանամի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétia-ի շքեղ սրահներուն մէջ, 45 Bld. Raspail, Paris :

«Մանուկներու Օր»

Ֆր. Կապոյտ Խաչի Պոմոնի մասնաճիւղը կը տօնէ Մանուկներու Օրը, Յունուար 18ին, կիրակի կէս օրէ վերջ, ժամը 2ին, Պոմոնի նորակառոյց սրահին մէջ :

Ցերեկոյթ պարահանդէս

Կազմակերպուած Փորթ տ'Իթալիի Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղին կողմէ : Կիրակի 18 Յունուար կէսօրէ վերջ ժամը 15էն 23 : Պէն Տուշի սրահը, Rue Jules Ferry. Petit Ivry, մէթրօ Porte de Choisy :

Գեղարուեստական ճոխ բաժին.— Պիտի նկարայարուի ՀԱՐՄԸ եւ զաւեշտ մը, Սէվրանի Ֆ. Կ. Խաչի թատերախումբին կողմէ :

Երգոպական պարերը կը սկսին ժամը 6ին, ղեկավարութեամբ Պ. Սիսոեանի նուագախումբին : Ճոխ պիւֆէ դիւրամատչելի վճարով :

Մուտքը 75 ֆրանք :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ ՓՈՆ Տ'ՕՊՆԱՑԻ ՄԷՋ

Փոն տ'Օպնացի Ֆր. Հայ Կապոյտ Խաչը կը տօնէ Մանուկներու Օրը, կիրակի ժամը 3ին Փոն տ'Օպնացի մէջ :

Անխտիր կը հրաւիրենք զաղութահայութիւնը :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ֆր. Կ. Խաչի Շրջ. վարչութիւնը իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ Տիկիններ Կ. Կարապետեանի, Ս. Մաւեանի, Ա. Թազազեանի, Թաւթեանի, Տ. Միսաքեանի, Վ. Այրամճեանի, Տ. Սերկիսկիւլեանի, Ա. Յակոբեանի եւ Սրդ. Ի. Տակաւեանի որոնք իրենց կարկանդակներով եւ զանազան նուէրներով ճոխացուցին ուտանողներու սեղանը :

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Փարիզի Հայոց Եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերակցութեան բոլոր անդամները՝ 18 Յունուար 1948, կիրակի ժամը 2.30ին Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, օրակարգ ունենալով եկեղեցւոյ օգնական լուսարար Պ. Յակոբ Ճօրճուեանի քահանայական թեկնածութեան հարցը :

Կը խնդրուի բոլոր անդամներէն որ հաճին անձամբ ներկայ ըլլալ այս ընդհ. ժողովին եւ կատարել իրենց եկեղեցասիրական պարտականութիւնը : :

ՖՐԱՆՔԻՀԱՅԿԱԿԱՆ Միութիւնը ծրագրած է սարքել Հայ եւ Ֆրանսական մշակոյթներուն նուիրուած նոր փառատօն մը որ տեղի պիտի ունենայ Սորպոնի մեծ ամփիթատրոնին մէջ Ապրիլ 18ին, կիրակի կէսօրէ վերջ : Կը խնդրուի չհաձեւել :

Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի մասնաճիւղին դասախօսութեանց երկրորդը տեղի կ'ունենայ 24 Յունուար, շաբաթ օրը, ժամը 16ին : Բանախօս՝ փրոֆ. Հ. Խաչատրեան, միաբան Վիէննայի, Աւստրիոյ Պետ. համալսարանէն : Նիւթ՝ «Հայ ժողովուրդին ծագումը» : Վայր.— Հայ Ուս. Ոսատան, 57 Պուլվար Ժուռտան, մէթրօ Փորթ տ'Օրլէան : Հայ մտաւորականութեան եւ երիտասարդութեան մասնաւոր ուշադրութեան կը յանձնենք այդ չափական բանախօսութիւնը, որուն կը յաջորդէ ազատ վիճաբանութիւն : Մուտքը ազատ է :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶԻ Հ. Ը. Դ. եղբայրացի կամիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերները այս շաբաթ իրիկուն ժամը 8.30ին, ընկերվարականներու սրահը, 9 rue Victor Massé : Կարեւոր օրակարգ :

ՄԱՐՍԷՅԼ — «Քրիստասիրտ» ենթակոմիտէի ժողովը տեղի կ'ունենայ այսօր ուրբաթ իրիկուն ժամը 8ին, Պար տու Կլօպի մէջ : Կարեւոր օրակարգ :

ՌՈՄԱՆ — Հ. Ը. Դ. Նոր Սերունդի խնջոյքը տեղի պիտի ունենայ այս շաբաթ իրիկուն, ժամը 8ին փաթրոնաժ Սէն Պէրնարի չքեղ սրահին մէջ : Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ : Ճոխ պիւֆէ : Մուտքը ազատ է :

Հ. Ը. Դ. ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՑԻ Զաւարեան կոմիտէի ժողովը այս շաբաթ ,17 Յունուար, ժամը 8.30ին, Կ. Խաչի Սրմեան սրահը :

ՖՐ. Կ. ԽԱՉԻ ԼԻՈնի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերուհիները, ուր սանուհիները, կիրակի 18 Յունուար 1948, կէսօրէ ետք ժամը 3ին, 78 rue Rabelais, դպրոցին սրահը : Կարեւոր օրակարգ : Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ԼԻՈՆԻ Հ. Ը. Դ. Վարանդեան կոմիտէին ընկերական ընդհ. ժողովը այս կիրակի, 18 Յունուար 1948, կէսօրէ վերջ ժամը 2.30ին 73 rue Rabelais դպրոցին սրահը : Կարեւոր օրակարգ : Պարտաւորիչ ներկայութիւն : Ներկայանալ անդամատեսրով :

ՀԱՑ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ եւ Մարտիկներու Միութեան Մարսէյլի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին, Պառ Կլոպին մէջ : Կարեւոր օրակարգ :

ՏԻՄԻՆԻ Հ. Ը. Դ. Նոր Սերունդի դասախոսական ժողովը այս երկուշաբթի, ժամը 9ին, Հ. Ը. Դ. Տան մէջ : Նիւթ՝ «Հայ թաթարական կռիւները » :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ՝ ՄԱՐՍԷՅԼ

Թէնօր ԿԻՐԱԿ ՍԱՐԳՋԼԵԱՆի երջահանդէսը, որ տեղի պիտի ունենայ, 17 Յունուար 1948, Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին, Սալ Մաքընոյի մէջ, մուտքը միմիայն հրաւիրատոմսով ըլլալուն պատճառաւ, կը խնդրուի Մարսէյլի երաժշտասէր հասարակութենէն որ կանխօրօք ապահովեն իրենց տեղերը, այլապէս երջահանդէսի երեկոյեան, կիշէն ոչ մէկ հրաւիրատոմս հայթայթել կարելի պիտի չըլլայ :

Յանձնախումբ

Կ'ուզուի

Հոլանտայէն արեւելեան անուշեղէններ պատրաստող չատ լուրջ վարպետ մը : Նախընտրելի է որ ամուրի ըլլայ : Դիմել ՄԱՆԿԻԿԵԱՆի, 135 Ave. de Bois de Boulogne à Clamart (Seine) : Շատ գոհացուցիչ վճարում :

ՃԱՇԱՐԱՆ ԼԻԼԼԷ

Որ բոլորած է իր բանամեակը եւ տիրացած արդար համբաւի մը,

պատրաստ է գոհացնելու իր ամէնէն դժուարահաճ յաճախորդները իր համադամ կերակուրներով ու բաժմապիսի աղանդերներով

Հեռաձայն TRI 31 - 62

24, Rue St. Lazare, PARIS (9)

ՎԻՐԱԲՈՑԻ - ԱՏԱՄՆԱԲՈՑԻ

Պ. Ա. ԴԱՒԻԹԵԱՆ

Կը յայտարարէ Պոմոնացիներ իր յարգելի յաճախորդներուն որ օգտուելով քաղաքին ելեկտրականութեան չաբաթական երկու օրուան դադարէն կ'ընդունի իր հիւանդները ,

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՒ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Իր անձնական բնակարանը 15 Bld. du Nord, La Rosière (Marseille) առաւտեան ժամը 9էն մինչեւ 5: Իսկ ՝ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

քաղաքի իր դարմանատունը, 53 Cours Lieutaud : Կարօտ հիւանդները եւ երկար ուսանողները ձրի :

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Մօտ օրէն կը ներկայացուի

ՀՐԱԶ ՏԱՐՕՆԵԱՆի

Նոր թատերգութիւնը

Ազատ Հայրենիք

ՕՐԱԹԵՐԹ

HARATCH — Fondé en 1925 —
Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN
17, Rue Damesme — PARIS (13e)
Տարի 1200, 6ամիս 650, Նյութ. 15 տող. Կամ 3 անգ.
Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63
Samedi 17 Janvier 1948 Շաբաթ 17 Յունուար

Խմբագիր՝ Շ. ՊՐՈՒՖՈՒՆԻ Գին՝ 5 ֆր. — Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5242-Նոր շրջան թիւ 851

ՄԵՐ ՕՐԻՆ

ՄԻ ՍԽԱԼԵՑ ՑԱՑՏԱՐԱՆՔ...

Մէ հիւր մտէր ու կարատ կոյներ եղեր եր մեր ապրուստ տեսնելիքներէն, այլ եր ևիր, ու ևիր ատոնց :

Չի բաւեր որ մեզ ամէն ի ևեր շորցած կո լսենք ինքզինքնիս վրայնուն ծանր ոտքերուն տակ, մեր ականջներն ալ ևիւ ևեր ևեղեր կ՚ուզեն որ մենք ալ ևիւ խօսի հոգ «Մոսկուայի լուրերուն» համար։ Ամէն օր

Ո՞ր է մեր բարձրագույն կոչումը

Ամեն օր պիտի հոգ տանենք մեր մասին, ամեն օր պիտի ջանանք մեզ ավելի լավ ճանաչել, ամեն օր պիտի ձգտինք մեր մեջ գտնել մեր ներքին ուժերը, որոնք մեզ կարող պիտի դարձնեն մեր կոչումը կատարելու։

Ի՞նչ է մեր կոչումը։ Ինչո՞ւ համար ենք մենք ստեղծված։ Ի՞նչ է մեր նպատակը։ Ինչո՞ւ համար ենք մենք ապրում։ Ի՞նչ է մեր գոյության իմաստը։ Ինչո՞ւ համար ենք մենք աշխատում։ Ինչո՞ւ համար ենք մենք սիրում։ Ինչո՞ւ համար ենք մենք ատում։ Ինչո՞ւ համար ենք մենք ուրախանում։ Ինչո՞ւ համար ենք մենք տխրում։ Ինչո՞ւ համար ենք մենք ծնվում։ Ինչո՞ւ համար ենք մենք մեռնում։

Ահա հարցեր, որոնք ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկյան մեր առջև են կանգնում, մեր ուղեղը տանջում, մեր հոգին խռովում, մեր սիրտը ծակծկում։ Ահա հարցեր, որոնք մեզ ստիպում են մեր ներքին աշխարհի մեջ խորանալ, մեր ներքին ուժերը ուսումնասիրել, մեր ներքին հարստությունը հայտնաբերել։

Ամեն ոք, որ ինքն իրեն չի հարցնում, թե ինչո՞ւ համար է ապրում, ինչո՞ւ համար է աշխատում, ինչո՞ւ համար է սիրում, ինչո՞ւ համար է ատում, ինչո՞ւ համար է ուրախանում, ինչո՞ւ համար է տխրում, ինչո՞ւ համար է ծնվում, ինչո՞ւ համար է մեռնում, նա մարդ չէ, նա կենդանի է, նա անասուն է, նա ոչ թե մարդ է, այլ մարդակերպ։

Ամեն ոք, որ ինքն իրեն չի հարցնում, թե ինչո՞ւ համար է ապրում, ինչո՞ւ համար է աշխատում, ինչո՞ւ համար է սիրում, ինչո՞ւ համար է ատում, ինչո՞ւ համար է ուրախանում, ինչո՞ւ համար է տխրում, ինչո՞ւ համար է ծնվում, ինչո՞ւ համար է մեռնում, նա մարդ չէ, նա կենդանի է, նա անասուն է, նա ոչ թե մարդ է, այլ մարդակերպ։

Մարդկային հոգին ունի բազմաթիվ ներքին ուժեր, որոնք մեզ կարող են դարձնել ամենաերջանիկ մարդիկ աշխարհի վրա։ Մարդկային հոգին ունի բազմաթիվ ներքին ուժեր, որոնք մեզ կարող են դարձնել ամենաերջանիկ մարդիկ աշխարհի վրա։ Մարդկային հոգին ունի բազմաթիվ ներքին ուժեր, որոնք մեզ կարող են դարձնել ամենաերջանիկ մարդիկ աշխարհի վրա

հետ դարաւոր կենակցութիւնը ձուլեց այս երկու ազգերը առանց վնասելու ազգային նկարագրին: Թրանսիլվանիոյ Հունգարացիներուն հիւրասիրութիւնն ու բարեացակամութիւնը հնարաւոր դարձուց Հայերուն — նիւթական ապրուստի հետ — ազգային նկարագիրն ալ պահպանել եւ իրենց հին ասանդութիւններուն համաձայն ապրիլ: Ատոր մեծապէս նպաստեց Մխիթարին, ինչպէս նաեւ Օգոստինոս Վերդար (1655—1715) Հայ կաթողիկէ եպիսկոպոսին հաստատուած չորս ժողովրդապետութիւններու մեծ գործունէութիւնը: Ուստի պէտք ենք մանաւանդ ուշադրութիւն դարձնել Թրանսիլվանիոյ չորս եւ Պուտափէշի միակ հայ կաթոլիկէ ժողովրդապետութիւններու դոյութեան եւ անոնց բարոյական ու նիւթական բարգաւաճումին:

Հայերը սկիզբը Հունգարիոյ քաղաքական կեանքին մէջ դեր չունէին: Սակայն Թրանսիլվանիոյ իշխանապետներէն եւ Հունգարիոյ թագաւորներէն ընդունած զանազան մենաշնորհներու օժանդակութեամբ՝ ամէնակարեւոր դեր խաղացին Թրանսիլվանիոյ արուեստներու եւ վաճառականութեան բարգաւաճման համար: Շատ վնասուած էր Հայերէն հիմնուած կաշեգործութիւնը (Kordovan անունով):

Արտասահմանի վաճառականութիւնն ալ իրենց ձեռքով կը կատարուէր: Ապառնիներու վաճառականութեան համար հողային մեծ ստացուածքներու պէտք ունէին, մանաւանդ արօտավայրերու: Մեծ Պատերազմէն վերջ, երբ այլեւս անասուններու վաճառականութիւնը այնքան շահաբեր չէր, Հունգարիոյ հարաւային մասին մէջ հայ մեծ հողատէրերու դասակարգ մը առաջ եկաւ այս վաճառականներէն:

Արուեստի ու վաճառականութեան մէջ մեծ ընդունակութիւնը՝ Հայերու հարստութեան աղբիւրը եղաւ:

Սակայն 1847 — 49ի պատերազմը ծանր հարուած մը տուաւ: Շրջակայ ազգերը զրկուած Աւստրիացիներէն կողոպտեցին Հունգարացիներու միացած Հայերուն բնակարանները եւ խանութները:

Մնանկացած ընտանիքներու անդամները դիմեցին պաշտօնեայի ասպհով գործին եւ ցրուեցան Հունգարիոյ զանազան կողմերը: Կիրզա եւ Եղիսապէթպոլիս Հայ քաղաքներէն զատ, նաեւ Ճուրճովի մէջ չատ մը անուններ սրբուեցան: Այսօր չատերուն դիմագիծը միայն կը մատնէ իրենց հայութեան պատկանիլը:

Հայերը Թրանսիլվանիոյ անտեսական կեանքին մէջ մէկուկէս դար պատուաւոր դեր մը ունեցան: Ժ. դարու կէսին — 1848ի դէպքերէն վերջ — երբ Հունգարացիները ստիպուեցան հրաժարիլ իրենց անկախութեան պահանջներէն՝ Հայերն այ մտաւորական ու քաղաքական շրջանակներու մէջ բարձր տեղեր գրաւեցին, չատեր հասան մինչեւ նախարարութեան ու քաղաքական կեանքի մէջ ցայտուն դիմքերէն համարուեցան: (1914—1918)ի Ազգերէն ազատած Հայերը եկան Հունգարիա եւ երեք դարէ ի վեր Հունգարիոյ մէջ ապրող Հայերուն մէջ ցեղին սէրը արծարծեցին: 1920ին այս տողերը գրողը կոչ ըրաւ Հունգարահայերուն

«Հայ-Բոյժի ընթերցողներուն

Դեկտեմբերի թիւով լրացաւ ՀԱԳ-ԲՈՑԺի եօթներորդ տարեշրջանը:

«Տունին բժիշկը» կը կոչուի այս թերթը: Իր տեսակին մէջ միակ պարբերականը՝ գտած ընդունելութեամբ եւ վայելած ժողովրդականութեամբ հպարտութիւն կը պատճառէ ինծի: Իր առաքելութիւնն է ժողովուրդին տալ, առանց երեք վիտոսիկութիւն ընելու, առողջապահական եւ բժշկական ծառայութիւններ, որոնք գործնական են, օգտակար եւ ամէնուն մատչելի: Ներկայացնել օրուան հիւանդութիւնները եւ զարմանուելի ժողովրդական եղանակները, ծանօթացնել մանրէները եւ անոնց դէմ պաշտպանուելու միջոցները, ճանչցնել մարդկային մարմինը եւ անոր գործարանական պաշտօնները, եւ վերջապէս՝ հարցարանի մը մէջ պատասխանել հիւանդներու նամակներուն,— ահա աշխատանքը, որ կը կատարէ ՀԱԳ - ԲՈՑԺ իր գոյութեան եօթը տարիներու ընթացքին: Աշխատուած է որ թերթին լեզուն ըլլայ մաքուր, պայծառ եւ հասկնալի: Ջանք չի խնայուիր, ընթերցումը հաճելի դարձնելու նպատակով, գրական ու պատմական նշմարներով ճոխացնելու համար յօդուածները, միշտ կարճ, միշտ այժմէական: Կարելիութեան չափով՝ արձագանգ կը տրուի Հայաստանի բժշկական աշխատանքներուն,— ամէն մէկ թիւով՝ յօդուած մը կը գրուի Երեւանի բժշկներէն մէկուն ստորագրութեամբ կամ Հայաստանի բժշկական աշխարհագրութեան ծանօթ մասնագէտի մը կողմէ:

Այսպէս, ՀԱԳ - ԲՈՑԺը փոքրիկ բժշկատուն մըն է, որ կը գործէ իր օգտակար խորհուրդները եւ գիտութեան բարիքը հասցնելով ամէն ուր որ Հայ մը կ'ապրի:

Բայց անտեսական անձնախընթաց տագնապը կը ճնշէ նաեւ ՀԱԳ - ԲՈՑԺի գործունէութեան վրայ: Թուղթին սուղը, տպարանին էլեկտրական ուժին կրճատումը եւ կեանքին սղութիւնը թոյլ չտուին, որ ՀԱԳ - ԲՈՑԺը աւելի եւս ճոխանար: Արտասահմանէն դրամական փոխադրութեանց արգելքները եւս մեր դժուարութիւնները կ'աւելցնեն:

Հակառակ բոլոր այս նեղութեանց, վճռած ենք չարունակել ՀԱԳ - ԲՈՑԺի հրատարակութիւնը, հետեւելով մեր բարեկամներուն քաջալերութեանց: ՀԱԳ - ԲՈՑԺ ինքնաբաւ թերթ մըն է, բայց մեր բարեկամները պէտք է այնպէս մը ընեն որ մենք կարենանք վարչական դործերը չանճնել ուրիշին՝ մամժամանակ կատարելու համար ուրիչ հրատարակութիւններ եւ դրադելու համար մեր դրական աշխատանքներով, — ա՛յդ է արդէն մեր դլխաւոր նպատակը, երազը:

ՀԱԳ - ԲՈՑԺ պէտք է ապահովէ այդ ծրագիրը: Ատոր համար կոչ կ'ընեմ թոլոր ընկերներուս եւ բարեկամներուս,— տարածել թերթը եւ օր ա-

«Արծարծել սէրը հայ անցեալին ու աւանդութիւններուն հանդէպ»

Այս վերջին պատերազմի արհաւիրքները Հայերը Հունգարացիներու հետ ֆիզիքապէս տկարացան ու անտեսապէս փճացան:

ՏՈՒԹ. ՖԷԼԻՔՍ ԱԻԵՏԻՔ

ռաջ հասցնել բաժնեդիրները: Այս տարի, ես ա՛յնքան կարդիս, պիտի աշխատիմ օրը օրին պատասխանել հասած նամակներուն, — դիտեմ որ չատեր կը գանգատին չպատասխանելուս համար, բայց երբ դիտնան թէ ի՛նչքան ծանրաբեռնուած եմ, պիտի ներեն անշուշտ:

Ցառաջիկայ Մարտ 1էն սկսեալ, պիտի սղէ ՀԱԳ - ԲՈՑԺի բաժնեդինը: Ստիպուած ենք բարձրացնել դինը, անտեսական անօրինակ տագնապին պատճառով: Ով որ կանուխ կը բաժանորդագրուի, Մարտ 1էն առաջ, կը վճարէ հին բաժնեդինը: Ցետնեալ որեւէ բաժնեդին կը հաշուենք նոր սակով, Մարտ 1էն ետքը:

ՀԱԳ - ԲՈՑԺ կ'ապրի ընթերհիւ իր բարեկամներուն,— այդ բարեկամներէն կը խնդրեմ կրկնապատկել իրենց ճիդը, որպէսզի կարենամ ՀԱԳ - ԲՈՑԺին հետ տալ նաեւ տարեկան առնուազն երկու հատոր դրականութիւն կամ ուսումնասիրութիւն, միակ հաճոյքս կամ երազս՝ որ դիս կը կապէ այս պարապ աշխարհին:

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Ց. Գ.— ՀԱԳ - ԲՈՑԺի տարեկան բաժնեդինն է, մինչեւ Մարտ մէկ, 300 Ֆրանք Ֆրանսայի համար, արտասահման 350—400 Ֆրանք:

Հասցէ.— 17 Rue Damesme, Paris (13):

ՆՈՒԻԷՐ ՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Ֆրանսահայկական Միութեան վարիչ մարմինը որոշած էր, անցեալ տարուան ընթացքին Սորպոնի մեծ ամփիթատրոնին մէջ իր սարքած «Հայ բանասիրութեան եւ երաժշտութեան փառատօն»ին զուտ հասոյթին կէսը նուիրել Փարիզի համալսարանի ուսանողաց իրերօգնութեան արձանին եւ միւս կէսով նուէր մը ղրկել Խորհրդային Հայաստանի համալսարանին:

Զուտ հասոյթը եղած է 52.000 Ֆրանք որուն կէսը յանձնուած է Փարիզի Համալսարանի վերատեսուչին, իսկ միւս կէսով դնուած են չարք մը դիրքեր տրուած Պ. Հինայէկեանի միջոցով ղրկուած են Երեւանի Համալսարանի վերատեսուչին իրր Ֆրանքեւհայկական Միութեան նուէրը Հայաստանի համալսարանի մատենադարանին: Ահա ցուցակը այդ դիրքերուն.—

Լառուսի 20րդ դարու բառարանը, վեց հատոր, Ֆրանսական նկարչութեան դանձերը — 7 հատոր, Ն. Ադոնցի «Հայոց պատմութիւն»ը — երկու հատորներ, Եուվիս Պարթուսաթխէնի — Հայկական ճարտարապետութեան մասին — Մարսէլ Լորանի «Քանդակագործութեան եւ ճարտարապետութեան դլուխ գործոցները» — Լուսամբիի «Կեանքը եւ բարքերը Ռուսիոյ մէջ Մեծն Պետրոսէն մինչեւ Լենին» — Ջորս չահէկան հատորներ, Օր. Սիրարիի Տէր-Ներսէսեանէն — հինդ հատորներ Ֆրէտէրիք Մաքլէրէն — Ամբ. Սարդիսեանի «Հայկական արուեստի նմոյշներ»ը — Շոթա Ռուսթավելիի «Ընվաղի մորթով մարդը»:

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ Հ. Ց. Դ., կապոյտ Խաչի եւ դանազան կազմակերպութեանց գաւառի կոմիտէներէն եւ մարմիններէն որ ժողովներու եւ հանդէսներու ազդերը խմբագրատուն հասցնեն թուականէն առնուազն երեք օր առաջ:

ԷՍԱ ԵՒ ՀԱՄԱՏ

(ԽՈՐՀՐԴԱՎԷՊ)

Ա. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԳԱԼ
Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

Համանուն լեռը, ժայռած տեղերը ափերուն մէջ, վեր կը փախչի կաղնիկազ, իսկ համանուն տուղեւորը անոր ուռած ցուցամատը բռնած՝ կը բարձրանայ ցից զառիվերը՝ քրտնաթոր: Իր կարդին, կը կաղայ ինքն ալ, խորհուրդի սուր վուշ մը դանկին մէջ մխրճուած:

— Ամէն մարդ կը ճգնի Աստուծոյ նմանիլ ու հաճելի ըլլալ: Նմանութիւնը պատրանք է տակ, տրուհետեւ Աստուած է որ կրնայ նմանիլ մարդուն, ոչ թէ մարդը Աստուծոյ: Հաճելին հնարաւոր է, բայց յաւերժական: Երազով անանցողնեը կ'ըլլան հաճելիին մօտաւոր սահմանները մէջ բայց եղազը աւելի հզօր է քան իրականութիւնը: Ան իրերու հոգին է ու ինքնին դերադոյն իրականութիւն եւ դեռ...

Ճանկարծ լեռը իր լայնանիստ գագաթին վրայ մեծաչուք պարիսպ մը քաշեց իր առջեւ ու կեցուց ինքը խոհաթախ ու մարմնաթախ:

Հայոց վանք ... հո՞ս ալ ... բայց ո՞ւր կաս ու չկաս դուն, ով Արմէնի սերունդ եւ ամէնուն սերունդ:

Այս դիշեր Մասիսը իր ճերմակ, ձիւնահիւս շղարշը փոխեց, քուրձ հագաւ, ծնունդ տալով անսովոր արեւածագիկի մը: Տրեխները քաշած՝ վազեց Սկիւթ: Իսկ ասդին, վանքին համանուն սուրբը, Ս. Գէորգ, պատէն վար իջաւ գաղտագողի, ոտքերուն թաղիքի մուճակներ՝ երեք անգամ խուցին շրջանը ըրաւ ուշադիր: Ջննեց բազկերակը նորեկ վանականին, սիրտը չօշափեց, դանկը մատնահարեց եւ յետոյ գլուխը չարժելով խորհրդաւոր, քաշուեցաւ իր տեղը:

Յոդնած մկանունքները, դեմքին եւ ուղեղին նեարդները երազին դամած՝ Եսայի վանականը ամենեւին չիմացաւ, ամենեւին չիմացաւ:

×

Պապիրոսը մաեր է խուցէն ներս, մեծածաւալ պատառնները պատին վրայ փռեր ու ցուցատար անկած՝ կը բարբառէ մեծատառ.—

— Ուխտադրուժիւն, աղօթք, ծոմապահութիւն, աղքատութիւն, հնազանդութիւն եւ պատիժ...

Լերան ադատ լոյսը՝ նեղ յուսամուտէ մը ներս խնկած կը քսէ ճակատը կանոնադրի թեւերուն, կը մօտեցնէ շրթունքը հատագիծ վերատուութիւններուն եւ անոնց արտաքունէ սեղմում - ներքին ու ճնշումներէն խրտչած՝ կը վերադառնայ դուրսի ազատ ու անկաշկանդ մթնոլորտին: Ներսը իր ճգած սառնութիւնը կը կախուին ու կը ծորին խուցին կարասիներուն չուրջ: Սեղան մը, դիրքեր, խաչեր, Ջուրի կուժ մը եւ խչաեակ մը դետնատարած:

Անկիւնի սեղանը կը կթի արբազան ծանրութեան տակ: Ապչ ծոռը է թեւերէն մին, չուքի մը գիրկը ջրին կուժը կը քրտնի կաթիլ - կաթիլ, երկունքի մը ցաւերէն տառապահար:

Եսայի վանականը փախչող լոյսէն փչուր մը բռնած իր աչքին, կը հալածէ մոայլ ստուերները իր խուցին եւ կը հոսեցնէ չունչ ու կենդանութիւն պապիրոսի չորցած չերտերուն վրայ մտքին լուսածոր ծորակը բացած: Զսպուած լեզու մըն է որ կը թաւալի, իր օրադրութեան ինքնագիր էջերուն վրայէն:

ՆԱԽԱՄՈՒՏ: Դուրսը ժամանակը կը թաւալի առտեղահիւս օրացոյցի մը էջերուն վրայէն, հոս, օրը, օրուան թեւերէն կախուած, կը մեռնի անթուակիր կրօնացոյցի մը մաչած դիրքերուն մէջ: Օր՝ Սուրբ պատարագի, Օր՝ ծոմապահութեան, օր կիրակմուտքի, ժամ աղօթքի, ժամ աղուհացի, ժամ մարմնաթախտութեան: Ոչ տարի, ոչ ամիս, այլ եօթնեակ ու եօթնեակներ, իրարու նետէ, վանական կարգի մը միաթաւալ անհուներուն լըծուած: Երեւոյթներ, կրկներեւոյթներ, միօրինակութիւններ, միեւնոյն կաղապարին մէջ քաշուած: Ոչ էութիւնը որ ողբերգութեան մը նման իրերուն խորը թաքնուած՝ չի հոսիր երբեք:

«Այո, ամէն երեւոյթի տակ կայ անտեսանելի եւ համր ողբերգութիւն մը որ հետզհետէ կ'ուռի եւ օրին մէկը կը պայթի պատռած վարագոյրի մը մէջէն որպէս ցնցող տրամա: Ես քաշուած եմ խաւարին մէջ աւելի լաւ տեսնելու համար քաոսին մէջ չողացող ողբերգութիւնը:

« ԳԱՂՏՆԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՇԻՆՈՒՈՒ Է» Կ'ԸՍԵՆ ՀԱՄԱՁՆԱՎԱՐՆԵՐԸ

Մեր երէկուան թիւով տեղեկացուցած էինք թէ Պերլինի Փրանսական եւ բրիտանական իշխանութիւնները երեւան հանած էին գաղտնի փաստաթուղթ մը որուն հիման վրայ ընդհանուր գործադուլներ տեղի պիտի ունենային Գերմանիոյ մէջ, յառաջիկայ մարտ ամսուն — կոմինֆորմի եւ Մոսկուայի կառավարութեան գիտակցութեամբ եւ հաւանութեամբ — Մարշըլի ծրագիրը ձախողեցնելու համար :

Այս լուրը հրատարակուած էր Լոնտոնի, Փարիզի եւ Նիւ Եորքի բոլոր թերթերուն մէջ :

Պերլինէն կը հաղորդեն, սակայն, որ «եղածը չնչին պատմութիւն մըն է եւ այդ տեսակ ծրագիր գոյութիւն չունի» :

Ծրագրուած դաւադրութեան մասին ամէնէն առաջ լուր ստացած են բրիտանական իշխանութիւնները որոնք «համոզուած են փաստաթուղթին վաւերականութեան» : Պերլինի համաձայնաւար օրկանը կը դրէ թէ ամբողջ պատմութիւնը ստո՛ւտ է եւ դրգռիչ եւ անոր նպատակն է խարել Գերմանիոյ ժողովուրդը եւ անոր ուշադրութիւնը ուրիշ տեղ հրաւիրել այն տեսակ տանեմ մը երբ անգլիամերիկեան դատամարտութիւնը հակադեմման ծրագիրներ կը մշակէ» :

Շատ մշանակալից է, կ'ըսեն, որ խորհրդային հակակշիռին ենթակայ մամուլը, հերքումի տալու համար սպասած է քանի՛ օրու ժամ :

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԼՈՒԲԸՐԸ

Համաձայն Աթէնքէն ստացուած տեղեկութեանց, ամերիկեան կառավարութիւնը խոստ մի-ջոցներ ձեռք պիտի առնէ Յունաստանի մէջ որպէսզի կարգ մը նախարարներ եւ պաշտօնատարներ դժուարութիւններ չյարուցանեն ամերիկեան առաքելութեան աշխատանքներուն մէջ : Պիտի պահանջուի, ի հարկին, քանի մը նախարարներու հրաժարումը : Այս տեղեկութիւնը մեծ վրդովում պատճառած է Աթէնքի մէջ : Հելլէնական շրջանակներուն մէջ զարմանք կը յայտնուի թէ ինչու Ամերիկա — որուն չահերուն տեսակէտէն, Յունաստանը չափազանց կարեւոր խաղերխ մըն է — դրամ ու ռազմանիւթ չի հասցներ անհրաժեշտ քանակութեամբ : Ակնկռմեան մամուլը կը քննադատէ Ամերիկայի այդ քաղաքականութիւնը :

Ապստամբները զբաւեցին Ազատոմա դիւղը՝ մեծ կորուստներ պատճառելով կառավարական ուժերուն : Ընդհարումներ տեղի ունեցան նաեւ Տրամալի եւ Ինկանդասայի մէջ, Սելանիկէն հիւսիս : Եղերոսի մէջ, կառավարական զինուորները բուռն յարձակողականի մը սկսան : Ապստամբները կը նահանջեն :

★ *Զրոյց կը չրջի թէ ամերիկեան առաքելութեան պետը, Կրիգսըլըս, Ուշինկթընի պիտի երթայ յանձնարարելու համար որ վերաքննուի Յունաստանի օդնութեան ծրագիրը :*

ՓԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀԱՄԱՁԱՅՆ ՈՒՈՇԻՆԿԹՐՆԷՆ հասած տեղեկութեանց, ամերիկեան եւ բրիտանական կառավարութիւնները որոշած են որ Ներկայ պայմաններուն մէջ կանխահաս է խորհրդաժողովի հրաւիրել՝ Մարշըլի ծրագիրէն օգտուող երկիրները :

Այս կարգադրութիւնը անհրաժեշտ նկատուած է քանի որ Մարշըլի օրինագիծը տակաւին քուէարկուած չէ եւ յայտնի չէ թէ որքան դոլար պիտի տրամադրուի իւրաքանչիւրին եւ ինչ պայմաններով :

ԹՈՒՐՔԻՈՅ Ազգային ժողովը չորեքշաբթի օր լիազօրութիւն տուաւ կառավարութեան որ պատրաստէ ընտրական նոր օրինագիծ մը որպէսզի «խորհրդարանական քուէարկութիւնը կատարուի գաղտնի եւ քուէները համրուին հրապարակաւ» : Ընդդիմադիրները կը դանգատէին ժամանակէ մը փ ի վեր թէ դեղծումներ կատարուած են մինչեւ հիմա : Հալք կուսակցութեան անդամները հակառակ են բարեկարգումներու որովհետեւ եթէ նոր օրինագիծ մը պատրաստուի, ընդունած պիտի ըլլան որ նախորդ ընտրութիւններուն ընթացքին ապօրինի քայլեր առնուած են : Նոր օրինագիծը խորհրդարանին պիտի ներկայացուի քանի մը շաբաթէն :

★ *Ամերիկայի Պաշտպանութեան նախարարը Ջոնսթոլ, խորհրդարանի արտաքին յարաբերութեանց յանձնաժողովին մէջ, Մարշըլի ծրագրին մասին խօսելով, չէշտեց թէ «ոչ մեր օդնութեան ծրագիրը, ոչ ալ ազգային պաշտպանութեան համար նախատեսած զումարները նպատակ ունին կասեցնելու օտար ազգերը» : Միացեալ Նահանգներու կառավարութիւնը կ'ուզէ որ ազատ ժողովուրդները իրաւունք ունենան ընտրելու իրենց սեփական կառավարութիւնները եւ ոչ մէկ երկիր կամ բռնապետական վարդապետութեան թոյլ տրուի որ [illegible] տէրութիւնը տարածէ աշխարհի վրայ՝ բռնի կերպով, ըսաւ նախարարը :*

Ցտեսութիւն պարահանդէս

Ֆր. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը, տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24, Hôtel Continentalի չքեղ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde :

Նուագախումբ ՖԼՐՆԱՆ ՈՒԻՑՕՆ : Գեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ :

Տարեկան շուկայ ցտեսութիւն պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան կարմիր Խաչի եւ Ողբախնամի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէջ, 43 Bld. Raspail, Paris :

«Մանուկներու Օրը»

Ֆր. Կապոյտ Խաչի Պոմոնի մասնաճիւղը կը տօնէ Մանուկներու Օրը, Յունուար 18ին, կիրակի կէս օրէ վերջ, ժամը 2ին, Պոմոնի նորակառոյց սրահին մէջ :

Ցտեսութիւն պարահանդէս

Կազմակերպուած Փորթ տ'Իթալիէի Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղին կողմէ : Կիրակի 18 Յունուար կէսօրէ վերջ ժամը 15էն 23 : Պէն Տուչի սրահը, Rue Jules Ferry. Petit Ivry, մէթրօ Porte de Choisy :

Գեղարուեստական ճոխ բաժին.— Պիտի նկատի ունենայ ՀԱՐՄԸ եւ զուարճ մը, Սէվրանի Ֆ. Կ. Խաչի Թատերախումբին կողմէ :

Եւրոպական պարերը կը սկսին ժամը 6ին, ղեկավարութեամբ Պ. Սիմոնեանի Նուագախումբին : Ճոխ պիւֆէ դիւզամատչելի գիներով :

Մուտքը 75 Ֆրանք :

Այրի Տիկին Գազազպաշեան եւ իր աղջիկը Օր. Գազազպաշեան, Տիկին Վ. Գազազեան իր սանամայրը եւ Պ. Աբրահամեան իր բարեկամը արտ խորունկ ցաւով կը ծանուցանեն մահը՝

Պ. ԲԱՐՍԵՂ ԳԱԶԱԶՊԱՇԵԱՆԻ

իրենց ամուսնոյն, հօր եւ աղգականին :

Յուղարկաւորութիւնը պիտի կատարուի այսօր չաբաթ ժամը 10.45ին, Փարիզի Հայոց եկեղեցին եւ մարմինը պիտի ամփոփուի Պանեէօյի գերեզմանատունը :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ ՓՈՆ Տ'ՕՊՆԱՅԻ ՄԷՋ

Փոն տ'Օպնայի Ֆր. Հայ Կապոյտ Խաչը կը տօնէ Մանուկներու Օրը, կիրակի ժամը 3ին Փոն տ'Օպնայի մէջ :

Անխափ կը հրաւիրենք գաղութահայութիւնը :

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Փարիզի Հայոց եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերակցութեան բոլոր անդամները՝ 18 Յունուար 1948, կիրակի ժամը 2.30ին Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, օրակարգ ունենալով եկեղեցւոյ օդնական լուսարար Պ. Յակոբ Ճօրթուհանի քահանայական թեկնածուութեան հարցը :

Կը խնդրուի բոլոր անդամներէն որ հաճին անձամբ ներկայ ըլլալ այս ընդհ. ժողովին եւ կատարել իրենց եկեղեցասիրական պարտականութիւնը : :

ԼՈՆՏՈՆԻ մէջ հինգշաբթի օր լոյս տեսան Մերձաւոր Արեւելքի բրիտանական վերհսանուր հրամանատար զօրավար Սըր Քլոտ Օըքինլէքի տեղեկագիրները որ ան ղրկած էր պատերազմական նախարարին : Այդ տեղեկագիրներէն մէկուն մէջ զօրավարը դիտել կուտայ իր կառավարութեան թէ Ռուսերը պէտք եղած օժանդակութիւնը չէին տար : «1942ին հակկշռելնք սպայակոյտի պետերուն թէ չէինք կրնար պաշտպանել հիւսիսային Պարսկաստանը եթէ դիւրութիւններ չտանայինք Ռուսերէն : Բայց Ռուսերը չտուին այդ դիւրութիւնները : Զէինք գիտեր թէ Կովկասի պաշտպանութեան համար ինչ միլոցներ ձեռք առած էին : Ռուսերը դարձեալ որեւէ տեղեկութիւն չտուին մեզի» : Խօսելով Թուրքիոյ չէզոքութեան մասին, զօրավարը գրած է հետեւեալ տողերը.— Թիւրիմացութիւններ ծագեցան Ռուսերուն հետ երբ ծրագիրներ կը մշակէինք Թուրքիոյ պաշտպանութեան համար : Թուրքիան չէին ուզեր կասկածներ արթնցնել Գերմանիոյ մէջ՝ իրենց չէզոքութեան մասին : Հակառակ ատոր, մեծ քանակութեամբ պատերազմական պիտոյքներ զաղտնի կերպով Թուրքիա ղրկեցինք, մոլորեցնելք իրենց նաւահանգիստները, ճամբաները եւ երկաթուղիները» :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶԻ Հ. Ց. Դ. Եղիպատոսի կամիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերները այս չաբաթ երեկոյեան ժամը 8.30ին, ընկերվարականներու սրահը, 9 rue Victor Massé: Կարեւոր օրակարգ :

Հ. Ց. Դ. ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ Զաւարեան կոմիտէի ժողովը այս չաբաթ, 17 Յունուար, ժամը 8.30ին, Կ. Խաչի Սրխմեան սրահը :

ՖՐ. Կ. ԽԱՉԻ Լիանի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերուհիները ու անուհիները, կիրակի 18 Յունուար 1948, կէսօրէ ետք ժամը 3ին, 78 rue Rabelais, դպրոցին սրահը : Կարեւոր օրակարգ : Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ԼԻՒՆԻ Հ. Ց. Դ. Վարանդեան կոմիտէին ընկերական ընդհ. ժողովը այս կիրակի, 18 Յունուար 1948, կէսօրէ վերջ ժամը 2.30ին 73 rue Rabelais դպրոցին սրահը : Կարեւոր օրակարգ : Պարտաւորիչ ներկայութիւն : Ներկայանալ անդամատոմով :

ՀԱՑ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ եւ Մարտիկներու Միութեան Մարսէյլի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին, Պառ Կլոպին մէջ : Կարեւոր օրակարգ :

ՏԷՍԻՆԻ Հ. Ց. Դ. Նոր Սերունդի դասախօսական ժողովը այս երկուշաբթի, ժամը 9ին, Հ. Ց. Դ. Տան մէջ : Նիւթ՝ «Հայ Թաթարական կռիւները » :

ՇԱՎԻԼԻ Ֆր. Կ. Խաչի մասնաճիւղի ընդհ. ժողովը յունուար 20ին, երեքշաբթի, ժամը 9ին մանկապարտէզին սրահը : Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը պարտադիր է : Ներկայանալ անդամատոմարով :

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Հ. Բ. Ը. Միութեան ցերեկոյթ - պըեկոյթը տեղի պիտի ունենայ, Առաքել վարչա Նուպարի հովանաւորութեամբ, 1948 Յունուար 18 կիրակի օրը Hôtel Georges Vի սրահներուն մէջ : Զոյգ օր - քէսթրա եւ հաճելի անակնկալներ :

Հրաւիրեալներու թիւը սահմանափակ ըլլալով, նախապէս ապահովել տոմս եւ սեղանը :

Ուսանողներու համար մատչելի տոմս :

Դիմել Բարեգործականի դրասենեակը, 11 Սքուար Ալպոն, կամ Պ. Պ. Պետրոս Պալըքճեանի, 43 rue des Petits Carreaux, Paris (2), Հեռ. Gut. 08-48, Խաչիկ Քէպապճեանի, 66 rue d'Hauteville, Paris (10), Հեռ. Pro. 25-36, Գէորգ Փարմաքի, 47 rue Blanche, Paris (9), Հեռ. Tri. 39-09, եւ Մանուէլ Ոսկերիչեանի, 62 rue Beaubourg, Paris (3), Հեռ. Arc. 77-90 :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ՝ ՄԱՐՍԷՅԼ

Թէնօ. ԿԻՐԱԿ ՍԱՐԳՍԵԱՆի երդահանդէսը, որ տեղի պիտի ունենայ, 17 Յունուար 1948, Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին, Սալ Մաղընոյի մէջ, մուտքը միմիայն հրաւիրատոմսով ըլլալուն պատճառաւ, կը խնդրուի Մարսէյլի երաժշտասէր հասարակութենէն որ կանխօրօք ապահովեն իրենց տեղերը, այլապէս երդահանդէսի երեկոյեան, կիշէէն ոչ մէկ հրաւիրատոմս հայթայթել կարելի պիտի ըլլայ :

Յանձնախումբ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Սէն Լուի Ֆր. Կապոյտ Խաչի Մանուկներու Օրուան հանդէս տօնածառը այս կիրակի իրիկուն ժամը 8ին, Սէն Լու, Կրան Բէնի ազգային մանկապարտէզին մէջ : Պիտի ըլլան երգեր, արտասանութիւններ եւ գեղջկական պարեր :

Կ'ուզուի

Հոլանտացի արեւելեան անուշեղէններ պատրաստող չաո լուրջ վարպետ մը : Նախընտրելի է որ ամուրի ըլլայ : Դիմել ՄԱՆԿԻԿԵԱՆի, 135 Ave. de Bois de Boulogne à Clamart (Seine) : Շատ գոհացուցիչ վճարում :

Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի մասնաճիւղին դասախօսութեանց երկրորդը տեղի կ'ունենայ 24 Յունուար, չաբաթ օրը, ժամը 16ին : Բանախօս՝ Փրոֆ. Հ. Էսատրեան, միասին Վիէննայի, Աստրիոյ Պետ. համալսարանէն : Նիւթ՝ «Հայ ժողովուրդին ծագումը» : Վայր.— Հայ Ուս. Ոստան, 57 Պուլվար Ժուռտան, մէթրօ Փորթ տ'Օրլէան : Հայ մտաւորականութեան եւ երիտասարդութեան մասնաւոր ուշադրութեան կը յանձնենք սոյն չահեկան բանախօսութիւնը, որուն կը յաջորդէ ազատ վիճաբանութիւն : Մուտքը ազատ է :

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 աճգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Dimanche 18 Janvier 1948 Կիրակի 18 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5243-Նոր շրջան թիւ 852 — Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ — ԳԻՆ՝ 5 Ֆր.

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ՊՈՒԱՀՕ, ԸՆԿԵՐ ՎԻՇԻՆՍՔԻ

Նոյեմբեր 25ին Նիւ Եորքի խորհրդային հիւպատոսարանին մէջ տեղի կ'ունենայ հայկական «աննախընթաց» մը՝ տօնելու համար Հայաստանի խորհրդայնացման 27րդ տարեդարձը :

Պ. Անաբէ Վիշինսքի որ օրուան պվհատար հիւրն է, ճառ մը խօսելով, կ'արտասանէ հետեւեալ բառերը .—

« Դաշնակ «Հայրենիք » թերթը խեղաթիւրած է « Մի յացեալ Ազգերու ժողովին մէջ արտասանած իմ ճառս :

« Ես ըսած էի թէ Վրացի դիւանակալները յայտնած են թէ Կարսն ու Արտահանը 1500 թուականներէն ի վեր կը պատկանին Վրաստանին : Ես չըսի թէ Կարսն ու Արտահանը Վրաստանին կը պատկանին : Զըսի նաեւ թէ Կարսն ու Արտահանը Հայաստանին կը պատկանին : Ես ըսի որ Խորհ. Միութիւնը պիտի տայ Կարսն ու Արտահանը եւ զանոնք պիտի տայ անոնց որոնց կը պատկանին : Պէտք է ի մաի ունենաք որ Խորհ. Միութիւնը վոս չի բանար իրեն մաս կազմող հանրապետութիւններէն ոչ մէկուն համար »:

Պ. Վիշինսքիի այս բառերը հայերէնի թարգմանած է նախկին փոխ-հիւպատոսը, Պ. Ապրեսեան, իւրաքանչիւր նախադասութիւն առանձին :

Նիւ Եորքի հայ համայնավարներուն եռօրեան հանդէսին նկարագրութիւնը տալով հանդերձ, «կը մոռնայ» իր ընթերցողներուն հրամցնելու Պ. Վիշինսքիի բառերը Կարսի եւ Արտահանի մասին :

Փարիզի իրենց լուսաղբիւրը —դոկտոր, վարդապետ կամ վարժապետ — Վիշինսքիի ճառէն կը պրցնէ միայն քանի մը բառեր , բայց չի համարձակիր հրատարակելու Պ. Վիշինսքիի ամէնէն կարեւոր յայտարարութիւնը .—

« Զըսի նաեւ թէ Կարսն ու Արտահանը Հայաստանին կը պատկանին» :

Կարեւոր չէ թէ դիմացի պատասխանը ինչ կը դրէն, ինչ կը կարդան, ինչպէս կը կարդան կամ ինչ կը հասկնան իրենց կարդացածներէն :

Մեզի համար հետաքրքրական է Պ. Վիշինսքիի մեռսասաններորդ ժամու «հերքում»ը :

Պ. Վիշինսքի իրեն վերագրուած բառերը արտասանած էր Հոկտեմբեր 24ի Միացեալ Ազգերու քաղաքական յանձնաժողովին մէջ : Վերոյիշեալ «հերքում»ը կարդալէ ետք, իրաւունք ունէինք բանիմացներու ուշադրութեան յանձնելու հետեւեալ կէտերը .—

Ա.— Ակնհայտ Ռուսը ինչո՞ւ պաշտօնապէս չհերքեց իրեն անունին կապուած յայտարարութիւնը : Երեսունը մէկ օր վե՞րջն էր որ անհրաժեշտ նկատեց «հերքել», եւ այն ալ, հայկական «հքեղ ու աննախընթաց»ի մը մէջ՝ ափ մը հայ տունկդիրներու առջեւ :

Բ.— Իր ճառը լոյս տեսաւ Լոնտոնի, Նիւ Եորքի, Ուաշինկթընի, եւ Փարիզի թերթերուն մէջ : Պ. Վիշինսքի ձայն - ծպտուն չհանեց : «Փրավտա»ն ու «Իզվեստիա»ն հրատարակեցին իր բառերը, Պ. Վիշինսքի զարձեալ լուռ մնաց : Ի՞նչ դիւային փաստարկութեամբ կ'արդարանայ այդ լռութիւնը :

Գ.— Եթէ չենք սխալիր, Թաղական խորհուրդի մը նիստերուն առնչակցութիւնները անդամ կը կարգացուին ու կը վաւերացուին : Իսկ Միացեալ Ազգերու ժողովներուն մէջ արտասանուած ամէն բառ մագէ կ'անցնի՝ առնչակցութեանց մէջ արձանագրուելէ առաջ : Պ. Վիշինսքիի բազմաթիւ քարտուղարները ո՞ւր էին Հոկտեմբեր 24էն մինչեւ Նոյեմբեր 25 :

Դ.— Աւելցընէ՞նք որ Պ. Վիշինսքիի տարտղնութիւնը ունեցող մարդոց ճառերը մեր «դոկտոր»ին ճառերուն չեն նմանիր եւ կ'արձանագրուին, պատշաճ կերպով : Զայնագիր մեքենան մեր դիմացի խառնիճաղանճին չարակամներուն համար հնարուած չէ :

Եւ ի՞նչ սրտառուչ հերքում — ես չըսի, Վրացի դիւանները ըսին թէ Կարսն ու Արտահանը վրացական են. բայց չըսի նաեւ թէ այդ նահանգները Հայերուն կը պատկանին :

Պ. Վիշինսքի ոչ թէ կը հերքէ իր նախորդ ճառը, այլ, ընդհակառակն, կը հաստատէ զայն դիւանագիտական զարձուածքներով :

Վրացի դիւանները «անվիճելիօրէն» հաստատեր են երկու նահանգներուն վրացական նկարագիրը, իսկ ինք կրկներ է անոնց տեսակէտը : Այդ չէ՞ «հերքում»ին իմաստը :

ՕՐԸ ՕՐԻՆ

ԱՅՍ Ի՞ՆՉ ԱՂՄՈՒԿ Է

« Ըսաւ, չըսաւ » :

Ահա տրամախօսութիւն մը որ ամիսներէ ի վեր ամբողջ գաղթաշխարհը յուզումի մատնած է :

Հասկցաք անշուշտ, որ նիւթը Վիշինսքիին ծանօթ ելոյթն է : Կը բաւէ որ ենթական հեռուէն կամ մօտէն ծանօթութիւն մը ունենայ աշխարհի վեցերորդ ցամաքամասը նկատուող երկրին հետ : Բանակը ոտքի է արդէն, կը քալէ «տավուլ — զուռնայի» խլացուցիչ աղմուկով մը — չըսաւ , չէր կրնար ըսած ըլլալ ... չենք կրնար ընդունիլ որ ըսած ըլլայ ... կը կանչէ :

Եւ այս, իբր թէ հաստատելու համար այս «չըսուելիք»ը : Ի՞նչ ապացոյցներ նորէն, հաւաքուած դիմացի աղբիւրէն :

Ասոր կուշտին նորութիւն մըն ալ, նոյնքան չպարակուելիք եւ ծիծաղաշարժ պատճառաբանութիւններով ապացուցուած :

Գրեր ու հարցուցեր են թէ ինչու բայ չենք Հայաստանի դուռները : Ինչո՞ւ զացողը չի կրնար, իր ուզած առենը, դուրս ելլել այդ երկրէն, երբ աշխարհի ամէն կողմը, որեւէ մէկը իրաւունք ունի իր բնակավայրէն մեկնելու եթէ ուզէ : Եթէ նոյնիսկ այդ խնդրոյ առարկայ պետութիւնը ըլլայ ամէնէն յետադիմականը :

Պարզ տրամաբանութեամբ չատ տեղին կ'ներեւայ այս անմեղ հարցումը : Բայց «Ճառաչղիմական» պէտք չէ ըլլալ անոր պատասխանը նոյնքան պարզութեամբ տալու համար :

Ու կը սկսի «վերլուծումը» այս «չարամիտ» հարցումին : Ի՞նչպէս կարելի է պահանջել որ զացողը կարենայ դուրս ելլել, այդ ի՞նչ արտառոց միտք է, մի միայն Հայաստանի թշնամիները կրնան մտքէ անցնել եւ դրել սեւով ճերմակի վրայ այդպիսի անբնական խնդիր մը» : Եւ չարունակեցէք որքան որ կրնաք, մեղադրեցէք հարցնողն ալ, պատասխանողն ալ բայց երբէք չէք կրնար ձեր մտքէն ամբողջել այն չնաչխարհիկ եզրակացութիւնը զոր Յիւրիխի համալսարանին փիլիսոփայութեան նախկին «դոկտոր»ը հանած է այս պարզ երեւոյթով հարցումէն :

— Ցիմար չէք, հօ՛, ինչպէ՛ս թէ...

ՉՐՕՍԱՇՐՋԻԿՆԵ՞Р են զացողները որ դուրս դան երբ ուզենան, այդպիսի բան կապիտալիստ երկրներում է ընդունուած, ուր չահագործում են մարդոց երթեւեկն իսկ : Մեր «դեմոկրատ» հայրենիքում այդ կարգի բուրժուական սովորութիւններ արտօնուած չեն, ի չահ անչուշտ ժողովուրդին, որ կը խնայէ այսպէսով թէ իր ժամանակը, թէ դրամը եւ թէ մանաւանդ «իր ազատութիւնը » :

ԱՐԱՄԱԶԴ

Լիբանան եւս համայնավարներու դէմ

ՊԷՅՐՈՒԹԻ «ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՁԱՅՆ»Ը ՓԱԿՈՒՄԱԾ

Պէյրութի մեր թղթակիցը կը գրէ թէ Լիբանանի կառավարութիւնը վերջնապէս փակած է երկու համայնավար օրկանները, «Սաութ էլ Շաապ» (արաբերէն) եւ «Ժողովուրդի Ձայն» (հայերէն) :

Լիբանանի կառավարութիւնը եօթը տարի առաջ լուծած էր բոլոր կուսակցութիւնները, փակելով անոնց կեդրոնատեղիները : Նոյն միջոցը ձեռք առնուած էր համայնավար կուսակցութեան հանդէպ : Վարչապետը իրեն ուղղուած հարցումներու պատասխանելով, յայտարարեց .

— « Կառավարութեան կողմէ ճանչցուած հա-

Պ. Վիշինսքի չէր կրնար այս տեսակ «հերքում» մը չհրամցնել իր հայ ունկնդիրներուն, «փառաշուք» ընդունելութեան մը յորդառատ վոթքային ու խաւեարին հետ :

Որովհետեւ ինքն ալ գիտէ թէ ինչ անփառունակ տպաւորութիւն գործած է իր Հոկտեմբեր 24ի անհերքելի յայտարարութիւնը՝ հայ ժողովուրդին վրայ :

Եւ սակայն պռավօ :

Ուրիշ ի՞նչ ձեւ կրնար հնարել իր հայ ունկնդիրները լոլոզելու եւ անոնց քթին խնդալու համար :

Իսկապէս պռավօ, ընկեր Վիշինսքի :

Ժ.

Պերլինի գաղեցի փաստաթուղթը

ՉԳԱՑԱՑՈՒՆՑ ԵԱՑՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Բրիտանական արտաքին նախարարութիւնը ուրբաթ օր հրատարակեց Պերլինի մէջ ձեռք անցուած «M» փաստաթուղթին վաւերական պատճէնը :

Ինչպէս արդէն հաղորդած էինք, այդ փաստաթուղթով ճշդուած էին այն միջոցները որոնք ձեռք պիտի առնուէին՝ ընդհանուր դործադուլ հռչակելու համար ամբողջ Գերմանիոյ մէջ , յառաջիկայ Մարտին՝ Դաշնակիցներուն դործը դժուարացնելու եւ Մարշըլի ծրադրին դործադրութիւնը ձախողեցնելու համար : Երկու հրատարակեցինք Պերլինի համապատասխան շրջանակներու « հերքում »ը :

Արտաքին նախարարութեան պաշտօնատարներէն կարեւոր անձնաւորութիւն մը յայտարարեց որ բրիտանական իշխանութիւնները որոնք ամէնէն առաջ տեղեկութիւն ստացած էին փաստաթուղթին դոյութեան մասին, անոր պատճէնը հաղորդած են ամերիկեան եւ Ֆրանսական — բայց ոչ ռուսական — կառավարութեանց :

Ահաւասիկ այդ փաստաթուղթին դլխաւոր որոշումադրութիւնները .—

« Ներկայ ճակատամարտին նպատակը նախապարտական պաշտօններ ձեռք բերելու մէջ չի կայանար : Ջանք պիտի թափենք որ դրաւենք այն պիսի դիրքեր որոնք կարելի ըլլայ պայքարիլ՝ իրականացնելու համար համաշխարհային աշխատաւորութեան ազատագրումը : Տարակոյս չկայ որ այս վերջնական յաղթանակը ձեռք բերելու համար , պիտի գործածուին աշխատաւորութեան բոլոր դէնքերը : Մորհրդային Միութիւնը, ընկերվարութեան այդ վառարանը, կրնայ օժանդակել եւ պիտի օժանդակէ իր բոլոր միջոցներով, որպէսզի պայքարը յառաջ տարուի դրամատիրական պետութեանց դէմ : Պելճիքատի կոմինֆորմը պիտի գործակցի Եւրոպայի բոլոր ընկերվարական կուսակցութեանց հետ : Թէեւ Գերման ընկերվարութիւնը անդամ չէ այդ մարմնին, բայց կարեւոր դեր մը ունի կատարելիք : Ան պիտի կռուի Բուրի մէջ : Բոլոր երկիրներու աշխատաւորները պիտի աջակցին : Գերման ընկերվարականներուն դործը պիտի ըլլայ, առանց խղճահարութեան օգտադործելու այդ վերջինները՝ յաւադոյն արդիւնքը ձեռք բերելու համար : Մեր դլխաւոր նպատակը պիտի ըլլայ չախչախել, այս ձմեռ,

(Տե՛ս շարունակութիւնը հետոյ Դ. Էջ)

մայ-յունիս կուսակցութիւն մը դոյութիւն չունի : Անոնց դործունէութիւնը ապօրինի է եւ միջոցներ ձեռք պիտի առնուին վերջ տալու համար անոր :

Արդէն իսկ խուզարկուած են համայնավար կուսակցութեան կեդրոնատեղին, Լիբանանի բանուորներու եւ պաշտօնեաներու սէնտիքաներու համադաշնակցութեան նախագահին, « Սաութ էլ Շաապ»ի խմբագիրը Նիքոլա Շաուի եւ համայնավար կուսակցութեան ընդհ. քարտուղար Ֆարաժալլա Հէլուի բնակարանները :

ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿԱՅՑԵԼԷ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Անցած չաբաթ օր, 10 Յունուար , Լիբանանի վարչապետ Ռիատ պէյ Սոլհ, ընկերակցութեամբ երկու հայ երեսփոխաններու Մնուճդի առաքիւ այցելութիւն տուաւ կաթողիկոսին, Անթիլիաս :

Մօտ մէկ ժամ տեւող տեսակցութեան մը ընթացքին կաթողիկոսը յայտնեց թէ հայ ժողովուրդին մէջ համայնավարները չատ չնչին փոքրամասնութիւն մը կը ներկայացնեն, առաւելադոյնը 5 առ հարիւր համեմատութեամբ :

Մտակցութեան նիւթ դարձան Լիբանանի հայութիւնը չահադրդռող զանազան հարցեր : Ռիատ պէյ Սոլհ յայտնեց թէ կառավարութիւնը միջոցներ ձեռք առած է Պուրճ Համուտի մէջ քանդուելիք թիֆիղեայ տուներու բնակիչները տեղաւորելու համար նոր վայրեր եւ այդ նպատակի համար արդէն կազմուած է մասնաւոր յանձնախումբ մը , որուն պիտի մասնակցին երկու հայ երեսփոխանները :

Վարչապետը յետոյ ըսաւ թէ ինք մանկութեան չրջանին, աքսորի ճամբաներուն վրայ եւ բանտերու մէջ ճանչցած է Հայերը եւ վիճակակից եղած անոնց : Որով հայ ժողովուրդին հանդէպ սկիզբէն իսկ ունեցած է մասնաւոր համակրանք :

Այս առիթիւ Գարնիգին արք. բարեմաղթութիւններ ըրաւ վարչապետին, իր գլխաւորած կառավարութեան եւ Լիբանանի նախագահին համար : Ռիատ պէյ Սոլհ յայտնեց թէ քիչ վերջ անձնապէս Նախագահին պիտի հաղորդէ այդ բարեմաղթութիւնը :

Վարչապետը հիւրասիրուեցաւ չամփանիայով, երեւանի չօքոլայով եւ Դպրեվանքի պարտէզին նարինջով եւ մանտարինով : Մեծ հիւրը հետաքրքրուեցաւ Դպրեվանքի պարտէզով եւ տեղեկանալէ վերջ թէ այնքան լաւերը եւ առատ բերք կուտայ ան, պրամատութեամբ դիտել տուաւ թէ պատուասոը միշտ լաւագոյն արդիւնքը կուտայ արաբական հող, հայկական աշխատանք :

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Ֆ.

— Մտաւոր, իմաստուր Հայոց։

Փիլիսոփայ, չափաւոր ապրող հոյակապ հին հայ, որուն անունը տակաւին կը հնչէ մեր շրթներուն վրայ, մինչ ուրիշ շատ մը մեծ անուններ մոռցուած են։ Ան ոչ միայն իմաստուն էր, այլ նաեւ ուսումնասիրող մը մարդկային հոգիին, անոր ուժերուն եւ տկարութիւններուն։ Ան գիտէր, որ մարդիկ կրնան ըլլալ ուժեղ եւ տկար, ազնիւ եւ նենգաւոր, ազատ եւ ստրկամիտ

ԼՈՒՌ ԿԻ ՀԱՍՏԱՏ

(ԱՄՍԱԳՐՈՒԱԿ)

Ա. ՉԱՐԽ

ՊԵՐՈՒԱՆԻ
ՏԻԳՈՒՆՈՒՀԻ ՊԱՀԱՆԱՆ
Գրքե՛, տիկնայք ու պարոնայք, ձեզ մի հետաքրքրական լուր ունիմ տալու։ Ես ձեզի կրնամ ըսել, որ ես ալ ձեզի պես կարդացող եմ եղեր։ Ես ալ ձեզի պես սիրեր եմ ընթերցել։ Ես ալ ձեզի պես ուրախացեր եմ, երբ հեղինակ մը կամ հեղինակուհի մը ինծի նոր գիրք մը նվիրեր է։ Ես ալ ձեզի պես ուզեր եմ գիտնալ, թե ինչ կա գրքին մեջ

դրամամոէրներու յարձակումը զոր անոնք կը մղեն Մարշըլի ծրագրով: Ցանուն ռազմավարու-թեան, անհրաժեշտ է որ ընկերները (համայնավարները) առաջին դէին վրայ չդանուին երբ գործադուլները սկսին: Համայնավար կուսակ-ցութիւնը ուղղակի մասնակցութիւն պիտի չունե-նայ:

Փաստաթուղթը յետոյ թելադրութիւններ կ'ը-նէ թէ ինչ ձեւով պիտի կազմակերպուին գործա-դուլները եւ ինչ քայլեր պիտի առնուին պարեհա-ւորումը դժուարացնելու եւ փոխադրութիւնները խանգարելու համար: «Մարշըլի ծրագիրը, կը շարունակէ փաստաթուղթը, պիտի ստրկացնէ ժողովուրդները: Դրամատիրական երկիրներու գործադուլները ցոյց կուտան թէ քաղքենի պե-տութիւնները ինչպէս կը քայքայուին:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԱՐԱԲԱԿԱՆ ԱԶԳԵՐԸ

Լոնտոնէն կը տեղեկացնեն թէ արտաքին նա-խարարը յայտարարած է որ ի մօտոյ բանակցու-թիւններ տեղի պիտի ունենան Սաուտի Արաբիոյ եւ Անդր Յորդանանի կառավարութիանց հետ՝ բա-րեկամական դաշնագիրներ կնքելու համար: Անգ-լիա ջերմօրէն կը բաղձայ որ զինակցութիւններ կնքուին ազաբական բոլոր երկիրներուն հետ: Այդ շարքին առաջինը կնքուեցաւ հինգշաբթի օր, Իրադի հետ: Լոնտոն հրաւիրուած են Սաուտի Արա-բիոյ արտաքին նախարարը, Էմիր Ֆայսալ ինչ-պէս նաեւ Անդր Յորդանանի վարչապետը, Թէվ-ֆիք փաշա Ապուլլահ:

ՔԱՀԻ ՄԸ ՏՈՂՈՎ.

ԵԼՄԻՆԻ թագաւորը, եահիա, հինգշաբթի օր մեռաւ: 85 տարեկան էր: Նոր կառավարութիւն մը կազմուած է Սահայի մէջ՝ իմամին դլխաւո-րութեամբ:

ԱՆԳԱՐԱՑԻ մէջ հինգշաբթի օր բացումը կա-տարուեցաւ «բրիտանական հնագիտական կաճա-ռ»ին կրթական նախարար Սիրիլ Միլոցաւ եւ դահլիճի բոլոր անդամներուն ներկայութեամբ: Անգլիոյ դեսպանը Սըր Տէյվիտ Քէլի կարդաց արտաքին նախարարին ուղերձը որուն մէջ Պե-վին յայտնի կը յայտնէ թէ ներկայ հիմնարկութիւնը մէկտեղ մը պիտի ըլլայ «աւելի եւս ամբապնդելու համար Թուրքիոյ եւ բրիտանացի ազգերուն եր-կարամեայ բարեկամութիւնը»: Կաճառին նախա-պահ նշանակուած է Փրոֆ. Ճան Կարթէնկ, իսկ ծրագրին յաջողութեան օժանդակած են Ա.քսֆըր-տի, Քէմպրիճի եւ Լոնտոնդերկի համալսարան-ները:

ՊԱՂԵՍՏԻՆի մէջ ուրբաթ օր դարձեալ ընդ-հարումներ տեղի ունեցան եւ սպաննուեցան 20 հոգի: Հայֆայի մէջ Հրեաները ռումբեր նետեցին արաբական տուներուն վրայ, սպաննելով 7 երա-խաներ եւ վիրաւորելով 12 հոգի: Կռիւ տեղի ու-նեցաւ փողոցներուն մէջ երբ Արաբները յարձա-կեցան հանրակառքերուն վրայ: Նոյեմբեր 30էն ի վեր մեռած կամ վիրաւորուած են 123 Անդլիացի-ներ, 1069 Արաբներ, 769 Հրեաներ եւ 23 զանազան ազդութեան պատկանող տեղացիներ:

ՕԻՈՇինկթընէն կը տեղեկացնեն թէ Խոր-հրդային դեսպանը Փանիուչկին ամերիկեան կա-ռավարութեան դիմելով խնդրած է որ բանակցու-թիւնները տեղի ունենան Սաուտի Արաբիոյ հետ՝ Ռուսիա դրկուած ապրանքներու փոխադրութեան վճարումը կարգադրելու համար: Ռուսիա միակ դաշնակիցն է որ մինչեւ հիմա տակաւին համա-ձայնութեան չէ եկած Ամերիկայի հետ՝ խնդրոյ առարկայ ապրանքներուն հասուցման համար:

ԵՈՒԿՈՍԼԱՒԻՈՅ նախաձեռնութեամբ խորհրդաժողով մը տեղի պիտի ունենայ Պրիւքսէլի մէջ, փետրուար 5ին, 13 դաշնակից փոքր պետու-թեանց մասնակցութեամբ: Խորհրդաժողովին նը-պատակը պիտի ըլլայ դիմում մը կատարել Զորս Մեծերուն որպէսզի պատերազմական հատուցում-ներ կատարուին հետեւեալ երկիրներուն — Ալպա-նիա, Աւստրալիա, Լիւքսէմպուրկ, Հոլլանտա, Հնդկաստան, Նոր Զելանտա, Չեխոսլավաքիա, Ե-դիպտոս, Տանմարքա, Նոր Զելանտա, Պելճիքա, Նորվեկիա եւ Հարաւ. Աֆրիկէ:

ՖՐԱՆՍԱՅԻ էմիական նախարարը, Պ. Բընէ Մայէր եւ Անդլիոյ համապատասխան նախարարը, Սըր Սթէֆըրտ Քրիփս, խորհրդակցութիւններ կը կատարեն Լոնտոնի մէջ երկու երկիրներու տնտե-սական յարաբերութեանց, Ֆրանքին արժեզրկու-մին ինչպէս նաեւ Մարշըլի ծրագրին գործադրու-թեան հետ սերտ առնչութիւն ունեցող խնդիրնե-րու մասին:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ.— 1.— Գամառ Գաթիպա: 2.— «Հայկ Դիւցազն»ը: 3.— 1524ին: 4.— Գէորգ Դ. կաթողիկոսը: 5.— 1869ին: 6.— 1393ին: 7.— Ո'չ: 8.— Նափոլէոն Գ.: 9.— «Մարմնոյդ վրայ կը բոսորան մութ խոցեր եւ աչուըներդ արիւնի լիճ են դարձեր: Ա. Զօպանեան: 10.— 90: 11.— Ա.յո: 12.— 1863ին: 13.— 1881 Մարտ 13ին: 14.— Ոչ. 15 [illegible]

Ցերեկոյթ պարահանդէս

Ֆր. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին տարե-կան պարահանդէսը, տեղի պիտի ունենայ 15 Փե-տրուարին ժամը 15էն 24, Hôtel Continentalի չքեղ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde:

Նուագախումբ ՖԷՐՆԱՆ ՊՈՒԶՕՆ: Դեղարուես-տական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ:

Տարեկան շուկայ ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան Կարմիր Խաչի եւ Ալբանիամի տարեկան ցերեկոյթ պա-րահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրա-կի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէջ, 43 Bld. Raspail, Paris:

«Մանուկներու Օր»

Ֆր. Կապոյտ Խաչի Պոմոնի մասնաճիւղը կը տօնէ Մանուկներու Օրը, Յունուար 18ին, կիրա-կի կէս օրէ վերջ, ժամը 2ին, Պոմոնի Նորակառոյց սրահին մէջ:

Ցերեկոյթ պարահանդէս

Կազմակերպուած Փորթ տ'Իթալիի Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղին կողմէ: Կիրակի 18 Յունուար կէսօրէ վերջ ժամը 15էն 23: Պէն Տուչի սրահը, Rue Jules Ferry. Petit Ivry, մէթրօ Porte de Choisy:

Դեղարուեստական ճոխ բաժին.— Պիւֆէ ներ-կայացուի ՀԱՄՐՈՒ եւ զաւեշտ մը, Սէվրանի Ֆ. Կ. Խաչի թատերախումբին կողմէ:

Եւրոպական պարերը կը սկսին ժամը 6ին, ղեկավարութեամբ Պ. Օհաննեանի Նուագախում-բին: Ճոխ պիւֆէ դիւրամատչելի դիներով:

Մուտքը 75 ֆրանք:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ ՓՈՆ տ'ՕԱՒԱՅԻ ՄԷՋ

Փոն տ'Օավայի Ֆր. Հայ Կապոյտ Խաչը կը տօնէ Մանուկներու Օրը, կիրակի ժամը 3ին Փոն տ'Օավայի մէջ:

Անխտիր կը հրաւիրենք գաղութահայութիւնը:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇՈՒՐՋ ՅՕՐԵԿՈՑԹ

Նախաձեռնութեամբ՝ Սեբաստիոյ Նահան-գային Միութեան, վաստակաւոր դերասան՝ ՏՐ-ԴԱՏ ՆՇԱՆԵԱՆի, մասնակցութեամբ Փարիզի հայ բեմի լաւագոյն ուժերուն, 8 Փետրուար, 1948, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Մար-սըլէն Պլոթըլօի չքեղ թատրոնին մէջ, 28bis, rue St. Dominique, métro Invalides:

Առաջին անդամ ըլլալով կը ներկայացնէ հանճարեղ ողբերդու Վ. Շէյքսփիրի

ԱՐՔԱՅ ԼԻՐ

Պատմական տուամ 6 արար եւ 2 պատկեր, Թարգմ. եւ բեմադրութիւն Տ. Նշանեանի:

Տոմսերու գիները, 100էն 400 ֆրանք, կը ծախուին հայկական բոլոր դրատուներուը, ճաշա-րանները, Սեբ. Նահ. Միութեան կեդրոնին եւ մասնաճիւղերուն մօտ: Հարիւրէն տասը պիտի յատկացուի Սեբ. Նահանգ. Միութեան ներքազ-թի Ֆոնտին: Սրահին ջերմութիւնը ապահովուած է: Փետռել յայտագիրը:

ԿԻՐԱԿԻ, 25 ՅՈՒՆՈՒԱՐ 1948, ԺԱՄԸ 14.30ԻՆ Միթրիւալիթէի սրահին մէջ, métro Mutualité Յովհ. Թումանեանի մահուան 25ամեակի առիթով

Նախաձեռնութեամբ Փարիզի Հայկական երգ-չախումբին, մեծ պատրաստութեամբ կը ներ-կայացուի

Ա Ն Ո Ւ Շ

Երաժշտական ողբերգութիւն 5 արար, մաս-նակցութեամբ Օր. ԱՆԺԷԼ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆի (Ամուշ), Ա. grand Prix Wicard de la Ville de Mar-seille: Դր. ՄԻՀԹԻՐԵԱՆի (Սարօ) եւ Վ. ԱԼ-ԹՈՒՆԵԱՆի (Մօսի): Սէնֆոնիք մեծ նուագա-խումբ ղեկավարութեամբ ԱՐԱ ՊԱՐԹԵՒԵԱՆի (60 հոգի): Թումանեանի մասին պիտի խօսին եւ կ'արտասանեն ծանօթ արուեստագէտներ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Բոլոր տոմսերը թուա-դրուած ըլլալով կը խնդրուի նախապէս ապահո-վել Հրանդ Սամուէլէն Tél. Dan. 88-65, եկեղեցւոյ դիւանէն: Սապօնճեանէ 39 rue Trévise, Պ. Պար-թեւեանէ, 14 rue Petit. Bot. 99-22, Պ. Բամպուք-ճեանէ, 9 rue Jouy Rouve. Ուշապլեանէ 61 rue Ré-béval, Պարսամեան գրատուէն, եւ նոյն օրը թատ-րոնի կիշէէն, առաւօտէն սկսեալ: Եւ թերթերու կամ ապրանքներուն:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Ց. Դ. ԱՆԻԼԻ Պուա Ռոլամպէ «Արամ» են-թակոմիտէի ժողովը յառաջիկայ չորեքշաբթի, կայարանին դէմի սրճարանը, ժամը ճիշդ 9ին: Կարեւոր օրակարգ:

ՏԷՍԻՆի Հ. Ց. Դ. Նոր Սերունդի դասախո-սական ժողովը այս երկուշաբթի, ժամը 9ին, Հ. Ց. Դ. Տան մէջ: Նիւթ՝ «Հայ թաթարական կռիւ-ները»:

ՇԱՎԻԼԻ Ֆր. Կ. Խաչի մասնաճիւղի ընդհ. ժողովը յունուար 20ին, երեքշաբթի, ժամը 9ին մանկապատէղին սրահը: Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը պարտադիր է: Ներկայանալ ան-դամատետրերով:

Ա յ ս օ ր

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆի ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Հ. Բ. Ը. Միութեան ցերեկոյթ-պարեկոյթը տեղի պիտի ունենայ, Առաքել փաշա Նուպարի հովանաւորութեամբ, 1948 Յունուար 18 կիրակի օրը Hôtel Georges V ի սրահներուն մէջ: Զոյգ օր-քէսթրա եւ հաճելի անակնկալներ:

Հրաւիրեալներու թիւը սահմանափակ ըլլա-լով, նախապէս ապահովել տոմսը եւ սեղանը:

Ուսանողներու համար մասնաւոր տոմս:

Դիմել Բարեգործականի գրասենեակը, 11 Սքուար Ալպոնի, կամ Պ. Պ. Պետրոս Պալըքճեա-նի, 43 rue des Petits Carreaux, Paris (2), Հեռ. Gut. 08-48, Խաչիկ Քէպապճեանի, 66 rue d'Hauteville, Paris (10), Հեռ. Pro. 25-36, Գէորգ Փարմաքի, 47 rue Blanche, Paris (9), Հեռ. Tri. 39-09, եւ Մա-նուէլ Ոսկերիչեանի, 62 rue Beaubourg, Paris (3), Հեռ. Arc. 77-90:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ ՄԱՐՍԷՅԼ ՄԷՋ

Սէն Լուի Ֆր. Կապոյտ Խաչի Մանուկներու Օրուան Հանդէս տօնածառը այս կիրակի իրիկուն ժամը 8ին, Սէն Լու, Կրան Բէնի ազդային ման-կապարտէզին մէջ: Պիտի ըլլան երգեր, արտասա-նութիւններ եւ զեղչկան պարեր:

ԳՏՆՈՒԱԾ.— «Յառաջ»ի 9 յունուարի թիւով վնտռուած Եղիազան ընտանիքին հասցէն է 23 Rue Jean Marc Bernard, Lyon 3me. Դրկուի Եղիա-զան:

ՓԱՐԻԶԻ Հ. Ց. Դ. «Ռուստամ» խումբն հան-դէս - խնջոյքը տեղի պիտի ունենայ Փետրուար 22ին, կիրակի ժամը 3էն մինչեւ կէս գիշեր: Կը խնդրուի նկատի ունենալ այս թուականը:

Այրի Տիկին Ծ. Խանչերեան, Տէր եւ Տիկին Կարապետ Խանչերեան եւ զաւակները, Տէր եւ Տիկ. Բիւզանդ Խանչերեան, Տէր եւ Տիկին Վահէ Խան-չերեան եւ զաւակները, Յովսէփ Խանչերեան եւ բոլոր ազգականները ցաւով կը ծանուցանեն մահը

Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՆՉԵՐԵԱՆի

իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ ազգականին:

Յուղարկաւորութիւնը պիտի կատարուի վա-ղը երկուշաբթի, Յունուար 19, առաւտուն ժամը 10.30ին, Փարիզի Հայոց եկեղեցին:

Մարմինը պիտի ամփոփուի Քաշանի գերեզ-մանատունը իր ընտանեկան դամբարանին մէջ:

Ֆր. Կ. Խաչի մասնաճիւղը չնորհակալու-թեամբ ստացած է հաղար ֆրանք Տիկին Նալ-պանեանէ, ի. Թորիկեանէ, իրենց ողբացեալ մօր Տիկին ԽԱՆՏԱՆԵԱՆի յիշատակին:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ ՄԸ ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒ-ՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ.— Պ. Յակոբ Փափազեան Մէրտէկէօղլի, այժմ Մարսիլիա հաստատուած, իր բարեպաշտ մօրը Տիկին Տիրուհի Փափազեանի յիշատակը յաւերժացնելու համար կարեւոր գու-մար մը նուիրեց Մուրատեան վարժարանի գրա-դարանի եւ ընթերցասրահի վերանորոգութեան:

Պարոն Յակոբ Փափազեան արդէն մասնակ-ցած էր նուիրատուութիւններով վարժարանիս վերաշինութեան: — Տեսչութիւն Մուրատեան վարժարանի:

Ամենամարեւոր հատցէ մը

ԼՈՒՏԵՐ ՖԷՆԷՐՃԵԱՆի

Աշխատանոցը բացուած է եւ կը ստանձնէ չէն-քի նորոգութեան եւ զետեղումներու ամէն կարգի աշխատանք վարպետներու ձեռքով: Նորոգութիւն աղօրիքներու, արդուիներու եւ կազի վառարան-ներու: Բաղնիքի եւ խոհանոցի մորտգա-ճիւն եւ ապակիներու զետեղում: Դիմել՝ Entreprise Générale Etablissement LODER, 25 Route de Villejuif, L'Hay-les-Roses, դիմել նամակով: Autobus 186:

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.186

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Mardi 20 Janvier 1948 Երեքշաբթի 20 Հունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5244-Նար շրջան թիւ 853 Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ ԳԻՆ՝ 5 Ֆր.

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ՄՈՍԿՈՒԱՆ ԵՒ ՄԵՐ ԴԱՅԸ

Պ. Ա. Վիշինսքիի, Նիւ Եորքի հիւպատոսարանին նոյեմբեր 25ի ընդունելութեան ընթացքին արտասանած «Հերքում»ին մէջ կայ նախադասութիւն մը որ չի կրնար վրիպիլ ամէնէն կատաղի հակառաջնակարգականին ուշադրութենէն ալ :

«Ձըսի նաեւ թէ Կարսն ու Արտահանը Հայաստանին կը պատկանին»:

Ակնառուր Ռուսը խնդրոյ առարկայ երկու նահանգներուն՝ ազգագրականօրէն, պատմականօրէն եւ քաղաքականօրէն վրացական ըլլալու պարտական կը չհշտէ Միացեալ Ազգերու ժողովին մէջ, հիմնուելով պարզապէս երկու Վրացի վիտունններու յայտարարութեանց վրայ — «Ես չըսա, անոնք ըսին» — բայց չի հետաքրքրուիր անդամ թէ Հայ գիտուններն ու պատմաբանները իններ գրած են 1945էն շատ առաջ հայկական հողերու ամբողջութեան մասին :

Շատ նշանակալից է որ Խորհրդային Հայաստանի մէջ չեն գտնուած երկու հայ պատմաբաններ որպէսզի իրենք ալ ,իրենց կարգին, վկայեն եւ հաստատեն թէ որ հողերը հայկական են «ազեւմտեան կողմն աշխարհի » — եւ նոյնիսկ Խորհրդային Միութեան սահմաններէն ներս :

Շատ նշանակալից է որ կարմիր դիծէն ներս Վրացի վիտունը իրաւունք կ'ունենայ բարբառելու եւ զանազան պահանջներ ներկայացնելու, իսկ Հայը զրկուած է այդ առաւելութենէն, նոյնիսկ Հայաստանի հողային ամբողջութեան վերաբերեալ խնդիրներու մէջ :

Պ. Վիշինսքիի յայտարարութիւնը կարդալէ ետք, ամէնէն միամիտ Հայն ալ պիտի փոշմտնէր հարցնելու իրեն.

— Ընկե՛ր, մի՞ջազգային ժողովի մը մէջ դուք կը կրկնէք Վրացի դիտուններուն պահանջը Կաթսի եւ Արտահանի մասին. այդ առիթ չէի՞ք կրնար ձեր տեսակէտները ներկայացնել աւելի չափաւոր ,խիչ փաստեր՝ ապացուցանելու համար Վանի , Կարինի, Բաղէշի եւ մնացեալներուն հայկական ըլալու իրողութիւնը՝ պատմական, ազգագրական եւ քաղաքական տուեալներով... Այ չեք յիշեր Ղարաբաղը, Ախալքալաքը, ու Նախիջեւանը որոնք անկախ Հայաստանի սահմաններուն մէջ կրնային մտնել մարաչախտ Սեւանի մէկ խօսքին վրայ ...

Պարզամիտ Հայը պիտի հարցնէր նաեւ Երեւանի վարիչներուն.

— Ա՛ւր եք, ի՞նչ կը բանիք, իշխո՞ւ ձայն – ձուն չէք հաներ երբ ուրիշներ հեքեաթ կը պատմեն՝ ականատուրներու բերնով ...

Բնականաբար մենք՝ ոչ Վիշինսքիներէն, ոչ ալ Երեւանի մեր եղբայրներէն է որ պատասխան կը սպասենք այդ հարցումներուն :

Միացեալ Ազգերու ժողովին մէջ եղած յայտարարութիւնը ապացոյց մըն է որ Խորհրդային Միութիւնը հայկական պահանջներով զբաղելու ոչ ժամանակ ունի, ոչ ալ տրամադրութիւն :

Երեք տարի է որ հրապարակ իչած է մեր Դատը, բայց Մոսկուայի կառավարութիւնը պաշտօնական ոչ մէկ քայլ առած է ի նպաստ անոր լուծումին առնուազն յուսադրելու համար ժողովուրդ մը որ արիւն թափեց Միութեան սահմաններուն պաշտպանութեան համար :

Պղտոնական յայտարարութիւններ այսօրեղ , այնտեղ, պաշտօնական առիթներով, բայց երկրորդական քարտուղարներու մէջոցաս մըայն :

Ընդհանուր խօսքեր, քանի մը ճառ, կամքի հկնատական յուշագիր, կոշտակ, քարոզ եւ այլքան :

Նոյնիսկ Երեւանը իբրեւ «անկախ» պետութիւն չհամարձակեցաւ խնդրացեալ կերպով ներկայացնելու մեր պահանջները առ որ ատկ է :

Միայն Արտասահմանն էր որ դողդոջուն քայլեր առաւ հարցը արծարծելու եւ արդարութիւն պահանջելու համար՝ Մեծերէն:

Դաշնակցութիւնն էր որ ամէնէն առաջ մեր պահանջները ներկայացուց միջազգային խորհրդաժողովի մը 1945ին :

«Ձըսի նաեւ թէ Կարսն ու Արտահանը Հայաստանին կը պատկանին »:

Անգարայի կարգադարներն ալ ուրիշ բան ըսած չունին քանըՀիւզ տարիէ ի վեր : Իսկ Անգլիոյ արտաքին նախարարը այդքան առաջ չգնաց ,

Կարս եւ Արտահան

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒՍ

ԽՄԲ.— Սարքեւ կը հրատարակենք բառացի թարգմանութիւնը խորհրդային «Լթաս» գործակալութեան թիւ 54 եւ 3 Նոյեմբեր 1947 թուակիր պաշտօնական զեկոյցին՝ Պ. Վիշինսքիի հոկտեմբեր 24ի Միացեալ Ազգերու քաղաքական յանձնաժողովին մէջ ըրած ծանօթ յայտարարութեան վերաբերեալ .— (Հալէպի մեր պաշտօնակիցը իր 24 դեկտեմբերի թիւին մէջ կը հրատարակէ զեկոյցին ռուսերէն պատճէնին լուսանկարը, ի պէտս զարգացեցոց) .—

— «Ան (Սէլիմ Սարկիսը) ի միջի այլոց կը յայտարարէ, թէ Ս. Սուլթեան մղած հակաթուրք քարոզչութեան մէջ՝ որոշ տեղ կը գրաւէ Թուրքիայէն անոր հողերու անջատման քարոզչութիւնը եւս: Պ. Սարկիս նկատի ունի Կարսը եւ Արտահանը եւ առ այդ կը յիշատակէ Մոսկուայի մամուլին մէջ հրապարակուած նամակը Վրացի երկու ակադեմականներու, որոնք կ'ապացուցանեն, թէ ճիշդ այդ հողերը, որոնց յիշատակութիւն ըրաւ հոս թուրք պատուիրակը, վաղուց անտի վրացական հողեր էին:

«Այս բոլորը ապացուցուած են այնքան համոզիչ կերպով, որ ես կրկին անդամ խորհուրդ պիտի տայի Պ. Սարկիսին՝ կարդալ այդ նամակը Վրացի ակադեմականներուն ,— երկուքն ալ, թէ Ճանչիա եւ թէ Պերմենիչվիլի, իսկական անդամներ վրացական դիտութեանց կաճառին — որոնք կ'ապացուցանեն, թէ անդամ այն շրջանին, երբ Թուրքիա գրաւած էր այդ հողերը, այդ շրջանին իսկ՝ ան պահած էր անոնց հին վրացական անուանումները: 1595ին փաստաթուղթ մը հրատարակուեցաւ (Թուրքիոյ կողմէ .— «Ցառալ») , որ կը պահուի այսօր վրացական գիտութեանցկաճառին մէջ, «Ընդարձակ Մաահան Վրացական Վիլայէթի» ,ուր , ի թիւս այլ շրջանները,կը յիշատակուին եւ այսպիսիք, ինչպիսիք են, օրինակ Փանեաքի (Պանա) , Զըլտըրի , Փոցխովի, Ախտահան: Այս շրջաններուն մէջ միայն Վրացիները կ'ապրին, եւ հոս՝ Թուրքերու քանակը կամ շատ չնչին է կամ Թուրքեր բնաւ չկան :

«Այսպէս, այդ նամակին հեղինակները, խաղաղօրէն,— ինչպէս եւ վայել է ակադեմականներուն, որոնք իրենց զբաղումով խակ չափազանց խաղաղ մարդիկ են արդէն,— կ'արտայայտուին, ինչպէս յայտնի է ձեզի, այն խնամսով, որ այդ հողերը պէտք է վերադարձուին վրացական հանրապետութեան, Վրաց ժողովուրդին, թէ պատմական, թէ ազգագրական եւ թէ քաղաքական ու բոլոր այլ հիմերով: Ասիկա արդար է այն պատճառով, որ վրացական են այդ հողերը »:

ԱՆԳԼԻԱՑԻ ԵՒ ՖՐԱՆՍԱՑԻ մասնագէտներ վերջերս խորհրդակցութիւններ կը կատարեն Մանչի ափէն վապուղի մը շինելու եւ երկու երկիրներուն միջեւ «ցամաքային» կապ մը հաստատելու համար: Այս ծրագիրը, առնուազն յիսուն տարի է սեղանի վրայ էր, բայց անկարելի եղած էր իրարու հետ հաշտեցնել երկու երկիրներու վիտուրական իշխանութեանց տեսակէտները: Որոշուած է, սակայն, ստիպական եւ դրական քայլեր առնել այդ ուղղութեամբ եւ վապուղին չինել յառաջիկայ վեց տարուան մէջ: Անգլիացի ձարտարագէտները կ'առաջարկեն երկու ճամբայ չինել, մէկը երկաթուղիի խակ մխսը կառքերու համար: Ֆրանսացիները բուական կը նկատեն միայն առաջինը: Փապուղին ամբողջ երկարութիւնը պիտի ըլլայ 36 մղոն, խակ ջուրին տակէն անցնող հատուածին երկարութիւնը — կոխեչ հրուանդանէն մինչեւ Ֆոքսթըն — 24 մղոն :

երբ կը կատարէր իր ծանօթ — ու դատապարտելի — ելոյթը 1946ի վերջերուն :

Խորհրդային Միութեան համար այսօր կայ միայն Վրացիներուն պահանջը երկու նահանգներուն մասին:

Ուիլսընեան Հայաստանի ծրագիրը չկայ իր օրակարգին վրայ, գոնէ առայժմ: Օրակարգի վրայ դրուելէն ետքն ալ տակաւին չենք գիտեր թէ մեր հայրենիքը ինչ չափով պիտի օգտուի կամ ինչ բաժին պիտը առնայ իր պատմական հողերէն: Կարսն ու Արտահանը սեր ղրացիներուն «անվիճելի իրաւունքը նկատող պետութեան» ներկայ քաղաքականութիւնը շատ ալ յոյս չի ներշնչեր այդ տեսակէտէն :

Ժ.

Գերիների Գաղթի փաստաթուղթը

Բրիտանական դահլիճը այս չաբթու պիտի դրաւի «M» փաստաթուղթով որ քանի մը օր առաջ երեւան հանուեցաւ Պերլինի մէջ եւ որուն պատակն էր ընդհանուր դործադուլ հռչակել ամբողջ Գերմանիոյ մէջ, յատկիկայ մարտին՝ Մարշըլի ծրագիրը ջուրը ձգելու համար :

Պատերազմական նախարարը, Շինուէլ, երէկ Լոնտոնի վերադարձաւ Գերմանիայէն ուրկէ ցածէը խորհրդակցութիւն ունենալու համար բրիտանական զօտիին ընդհանուր հրամանատար Սըր Պրայըն Բաղերթըրընի հետ :

Լոնտոնի քաղաքական շրջանակներուն մէջ կը նախատեսուի որ Անգլիա աւելցնէ իր զինուորերուն թիւը Գերմանիոյ մէջ: Լսողները կան նոյնիսկ որ երկրորդ դաղանի փաստաթուղթի մը եւս երեւան հանուած է՝ նախորդին չատ նման : Փորձեր կը կատարուին կազմակերպելու համար պերմանական ազգային մարմին մը որուն մաս պիտի կազմեն Նացիներու նախկին բանակին չյանկի զինուորականները: Այս կազմակերպութիւնը օժանդակութիւն պիտի ստանայ կարմիր բանակէն որ գործակալներ ունի ամերիկեան եւ բրիտանական զօտիներուն մէջ եւ պիտի աշխատի զինուորական վնասարարութիւն կատարել կարգ մը կեդրոններու մէջ :

Վախ կայ որ խառնակութիւններ սկսին Գերմանիոյ մէջ փետրուարին: Վատնգաւոր ամիսներ կը նկատուին Մարտը եւ Ապրիլը: Լոնտոնի մէջ կը տիրէ այն կարծիքը թէ Խորհրդային Միութիւնը Յունաստան եւ Իտալիոյ մէջ, վերջին ամիսներուն, իր կրած պարտութիւններէն հետք, նոր «ռազմադաշտ» ընտրած է Գերմանիան միջտ միեւնոյն նպատակին համար — ձախողեցնել Մարշըլի ծրագրին գործադրութիւնը :

★ *Պերլինի համապատասխան օրկանը խօսելով փաստաթուղթին մասին ելած պաշտօնական յայտարարութեանց չորչ, կը պահանջէ որ Միջդաշնակցային հակակշիռի յանձնախումբը քննութիւններ կատարէ անմիջապէս: Համապատասխան կուսակցութիւն ալ, իր կարգին, կը պահանջէ որ Դաշնակից պետութիւնները յայտնեն թէ խնդրոյ առարկայ փաստաթուղթը ուր, երբ, ինչպէս եւ որուն մօտ «պտնուած է» :*

Բրիտանական իշխանութիւնները բացատակօրէն կը մերժեն դտնացնել այս վերջին պահանջը եւ կը կրկնեն որ փաստաթուղթը վնասարար կան է : Համապատասխանները կը պնդեն որ պատմութիւնը չենծուծ է, իսկ արեւմտեան Գերմանիոյ մէջ Անգլիացիներուն յայտնութիւնը մեծ յուզում յառաջ բերած է :

Ցրաւնսա 53 միլիոն տոլարի նպաստ տացած է 24 ժուռան մէջ

Փարիզի ամերիկեան դեսպանը, Պ. ՃէՔըրսըն ՖէՔըր, չաբաթ օր Ամերիկեան Առեւտրական Պրասենեակին բացառիկ նիստին մէջ յայտարարեց որ Ֆրանսա մինչեւ Յունուար 10— Մարշալ Մահանգերէն սատցած է 53 միլիոն տոլարի արժողութեամբ զանազան ապրանքներ — ածուխ՝ 1.250.000 թոն (արժէք 25.500.000 մ. տոլար), ցորեն՝ 140 հազար թոն (արժէք 18.250.000 մ. տոլար), քարիւղ՝ 200 հազար թոն (արժէք 4.500.000 մ. տոլար), քիմիական նիւթեր, ճարպեղէն, բամպակ եւն. 28.000 թոն (արժէք 5 միլիոն տոլար):

Դեսպանը այս առիթիւ ճառ մը խօսելով, ըսաւ.— Այս առաքումները ոչ միայն թուականին նպաստ մը կը բերեն Ֆրանսայի ժողովուրդին, այլեւ ցոյց կուտան թէ Ֆրանքհամերիկեան պարծակցութիւնը որքան առիւծիչա է երկու երկիրներուն համար : Մարշալ Նահանգներուն տառապ, Ֆրանսան անկիւնադարձ է Եւրոպայի վերականգնումին : Լաւատես ենք Ֆրանսայի ապագային մասին եւ կը մաղթենք որ ամերիկեան օժանդակութիւնը պիտի դադատ որ այս երկիրը վերադանէ արտադրելու իր նախկին կարողութիւնը ...

Պաղեստինի դիպաձրը

Երուսադէմէն կը տեղեկացնեն թէ չաբաթ օր Անգլիացի պինուորները անկարզելներով տուրիական սահմանի մօտերը վար իջնելով , նա մը ղեցին Արաբները որոնք երկու չաբաթէ ի վեր կը յարձակին սահմանամերձ տրչական պիւղերուն վրայ : Հինուորները երեւան հանեցին 35 Հրեաներու դիակները :

Անգլիացի պինուորները օդը հանեցին արաբական եւ հրչական երկու տուներ Թել Ավիվի եւ Հայֆայի ճամբուն վրայ, որովհետեւ պինարանները վերածուած էին: Հակառակ հրչական զգեցակցութիւնը նոր ուժեր կը համախմբէ հարաւային Պաղեստինի մէջ :

★ *Միացեալ Ազգերու ներկայացուցիչները մօտ օրէն Պաղեստին պիտի հասնին փոխանդիման պատրաստութեանց հետեւելու համար: Իրրեւ նախական ուժերը պիտի մեկնին ամէնէն ուշը Մայիս*

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Թ. էջ)

Թուրքիոյ երկաթուղիները եւ ճամբաները

Թուրքերը զինուորական ազդ մը ըլլալով, լաւ կ'ըմբռնեն երկաթուղիներու եւ ճամբաներու կարեւորութիւնը: Առաջին համաշխարհային պատերազմին, Թուրքիա ստիպուեցաւ ենթարկուելու ցամաքային հաղորդակցութեան մեծ դժուարութիւններու — նեղացումներ, որոնց մէջ դժուար չէր տեսնել մեր «Հայաստանասէր»-ներու իսկական, ոչ հայկական եւ Հայաստանական ժանդոտ դէմքերը:

Գիտակցաբար եղած այս անտեսումը նաեւ ամոր համար, որ ինչպէս կրկնած ենք միշտ, ներդաղթի հարցը մեզի համար հիմնական խնդիր մըն է, ազգահատութեան թէ քաղաքական տեսակէտներով: Մեր վերաբերմունքը այս խնդրին չուրջ ճշդուած է եւ կը ճշդուի ոչ թէ «Հայաստանասէր յառաջդիմական»-ներու այս կամ այն արտքներէն, այլ մեր երկրի եւ ազգային հիմնական պահանջներէն եւ իրական հնարաւորութիւններէն:

1945ին, Մոսկուայի ընդհանուր ազդանշանին վրայ չէր, որ մենք որդեգրեցինք ներդաղթի քաղաքականութիւնը: Մեր դիրքը եւ մեր պահանջները այս խնդրի վերաբերմամբ, ծանօթ էին եւ յստակ բոլորին՝ դեռ երկար տարիներ առաջ:

Հիմնական տարբերութիւնը մեր եւ մեր հակառակորդներու միջեւ, աւելի ճիշդը մեր եւ Մոսկուայ վարիչներու միջեւ, այն էր, որ այս վերջինները, 1945էն առաջ կը մերժէին ներդաղթին տալ ազգային պահանջի բնոյթ, անհրաժեշտ նկատի ունենալով իրենց քաղաքական բարդ կացութիւնը:

Ռուսեւթրքական բարեկամական ուխտը եւ դեռ բազմաթիւ այլ համաձայնութիւնները, այդ ընթացքին չատ աւելի մեծ արժէք մրն էին անոնց համար, քան ներդաղթը:

Հարկ կայ յիշեցնելու, որ մինչեւ այդ ընթացքին, ներդաղթի մեր պահանջը կը նկատուէր, որպէս «հայ բուրժուազիայի պահանջ»ու դեռ «երազուած ծովէ ծով Հայաստանը՝ թուրք աշխատաւորութեան հողերի վրայ»:

1945ին, երբ պահ մը կարծուեցաւ թէ հրաշքներ պիտի կատարուին Մոսկուայ. իրականութեան մէջ, որպէս հետեւանք յետպատերազմեան նոր կացութեան ամէն հայ, իրաւացիօրէն կը յուսար որ Մոսկուայ իշխանութիւնը որդեգրած է նոր ուղղութիւն մը հայ քաղաքական դատի, ինչպէս նաեւ ներդաղթի մասին:

Չկրկնենք ատկէ ի վեր տեղի ունեցող փոփոխութիւնները եւ կատարուած իրողութիւնները:

Փաստը այն է, որ զանգուածային ներդաղթը՝ կապուած յատկապէս հայկական հողերու ազատագրութեան եւ Հայաստանի սահմաններու ընդարձակման գործին հետ, մնաց դժբախտաբար այն կէտին վրայ, ուր որ էր 1945էն առաջ:

Կա՞յ տեղ բարեմիտ հայ մարդ, որ ներկայ պայմաններուն — տեսել կ'ուզեմ մեր երկրի ներկայ սահմաններուն մէջ—հնարաւոր դատէ այլեւս խօսիլ եւ ազմկել զանգուածային ներդաղթի մասին:

Անտարակոյս որ ոչ: Որով, խոստովանինք, որ անբաւական եւ վնասակար ալ է տեւականօրէն ազմկել ներդաղթի չուրջ, երբ քար լուռիկն կը պահուի նոյնպէս, հայկական հողերը Հայաստանին միացնելու կենսական հարցին չուրջ:

Բայց, եթէ հակառակ այս աղաղակող իրականութեան — այս ալ ուրկէ կ'ելլենք, որպէս հետեւանք, ընդհանուր միջազգային յարաբերութեանց բարդութիւններուն — ներդաղթի չուրջ աղմուկը կը սասկանայ անդադար այդ արդէն, խնդրին մէկ ուրիշ կողմը կը ներկայացնէ:

Այդ մեր հակառակորդներու արտակարգ ապատրանքն է ատկէն, Դաշնակցութիւնը վերջնապէս թաղելու իրենց տենչէն ծնած:

Հայկական պահանջներու մասին Մոսկուայի աշխարհին մէջ ստեղծուած նպաստաւոր մթնոլորտը — բացատրեցաւ սխալ ձեւով:

Ընդհանուր ցանկութիւններն ու մաղթանքները — իրականութեան տեղ առնուեցան:

Հայկ. Դատը վերջապէս եւ լիովին լուծուած ձեւացուցին, իսկ զանգուածային ներդաղթը նոյնպէս կատարուած փաստ:

Ուրախութեամբ չէ, որ կ'արձանագրենք այս մերկ իրողութիւնները — այլ չատ խոր ցաւով եւ դառնութեամբ:

Մեր հակառակորդներուն համար անչուշտ ըմբռնելի չեն մեր այս բացատրութիւնները, այլապէս իրենց կ'իյնար այս դերը: Եւ այս՝ յանուն Հայաստանի եւ հայութեան շահերուն, դաղթահայութեան եւ Մ. Հայրենիքի կապերու ամրապնդման:

Անոնք՝ այս դերը չեն կատարեր, որովհետեւ իրենց բուն դերը այլ է:

— Շահադրդել ներդաղթը Դաշնակցութեան դէմ, պայքար մղելու եւ քայքայելու գաղութները, ինչպէս ցոյց տուին վերջին երկու տարուան դէպքերը:

Այսպէս է, որ անոնք՝ փոխանակ անապահովութեան, այլասերման եւ ամէն տեսակի թշուառութեան մատնուած գաղութները, հայրենիք փոխադրելու չվարանեցան դժուարութիւններ ըստեղծել բոլորովին ապահով (գոնէ որոշ տարիներու համար դեռ) գաղութներու մէջ — Ամերիկա, Եգիպտոս, Ֆրանսա եւն.), ցուցական նեղդաղթի ձեռնարկներով:

Զնոք խօսիր դեռ եւս Մ. Հայաստանի սահմաններէն՝ Մ. Միութեան զանազան շրջաններու մէջ բազմութիւններու մասին ալ որոնց ներդաղթը չատ աւելի կենսական եւ հրամայական անհրաժեշտութիւն մըն է, քան Ամերիկայէն եւ Եգիպտոսէն:

Այս բոլորէն եանք, պարզ է, որ եթէ մարդիկ կան «Ճառագդիմական» թէ «Հայաստանասէր», որ պիտի չուզեն անհրաժեշտ դասը հանել, Դաշնակցութիւնը չէ որ իրենց պիտի նայի: Այս պատճառով ալ, այսօր աւելի քան երբեք յստակ է եւ պայծառ Դաշնակցութեան դիրքը ներդաղթի մասին:

Երէկ, այսօր, ինչպէս վաղը, ներդաղթը կը մնայ Դաշնակցութեան հիմնական պահանջներէն մէկը:

Միշտ, դրական եւ կարեւոր գործ մը ընդունելով ներդաղթը, Դաշնակցութիւնը այսօր այլեւս պիտի չհանդուրժէ այն բոլոր մեքենայութիւնները, որոնք կը կատարուին ներդաղթի անուան չուրջ:

Այս ընդհանուր սկզբունքի սահմաններու մէջ

Ցնծալի է մեր դիրքը Աւերգաղթի հանդէպ

Ներդաղթի մասին մեր նախորդ գրութիւններով, մենք աշխատեցանք, չափով մը մխայն, պարզել իրական կացութիւնը:

Մեր քննութեան համար, նկատի առած էինք մխայն եւ բացառաբար չոր փաստեր, առանց մօտենալու այն մանրամասնութիւններուն, որոնց մէջ դժուար չէր տեսնել մեր «Հայաստանասէր»-ներու իսկական, ոչ հայկական եւ Հայաստանական ժանդոտ դէմքերը:

Գիտակցաբար եղած այս անտեսումը նաեւ ամոր համար, որ ինչպէս կրկնած ենք միշտ, ներդաղթի հարցը մեզի համար հիմնական խնդիր մըն է, ազգահատութեան թէ քաղաքական տեսակէտներով: Մեր վերաբերմունքը այս խնդրին չուրջ ճշդուած է եւ կը ճշդուի ոչ թէ «Հայաստանասէր յառաջդիմական»-ներու այս կամ այն արտքներէն, այլ մեր երկրի եւ ազգային հիմնական պահանջներէն եւ իրական հնարաւորութիւններէն:

1945ին, Մոսկուայի ընդհանուր ազդանշանին վրայ չէր, որ մենք որդեգրեցինք ներդաղթի քաղաքականութիւնը: Մեր դիրքը եւ մեր պահանջները այս խնդրի վերաբերմամբ, ծանօթ էին եւ յստակ բոլորին՝ դեռ երկար տարիներ առաջ:

Հիմնական տարբերութիւնը մեր եւ մեր հակառակորդներու միջեւ, աւելի ճիշդը մեր եւ Մոսկուայ վարիչներու միջեւ, այն էր, որ այս վերջինները, 1945էն առաջ կը մերժէին ներդաղթին տալ ազգային պահանջի բնոյթ, անհրաժեշտ նկատի ունենալով իրենց քաղաքական բարդ կացութիւնը:

Ռուսեւթրքական բարեկամական ուխտը եւ դեռ բազմաթիւ այլ համաձայնութիւնները, այդ ընթացքին չատ աւելի մեծ արժէք մրն էին անոնց համար, քան ներդաղթը:

Հարկ կայ յիշեցնելու, որ մինչեւ այդ ընթացքին, ներդաղթի մեր պահանջը կը նկատուէր, որպէս «հայ բուրժուազիայի պահանջ»ու դեռ «երազուած ծովէ ծով Հայաստանը՝ թուրք աշխատաւորութեան հողերի վրայ»:

1945ին, երբ պահ մը կարծուեցաւ թէ հրաշքներ պիտի կատարուին Մոսկուայ. իրականութեան մէջ, որպէս հետեւանք յետպատերազմեան նոր կացութեան ամէն հայ, իրաւացիօրէն կը յուսար որ Մոսկուայ իշխանութիւնը որդեգրած է նոր ուղղութիւն մը հայ քաղաքական դատի, ինչպէս նաեւ ներդաղթի մասին:

Չկրկնենք ատկէ ի վեր տեղի ունեցող փոփոխութիւնները եւ կատարուած իրողութիւնները:

Փաստը այն է, որ զանգուածային ներդաղթը՝ կապուած յատկապէս հայկական հողերու ազատագրութեան եւ Հայաստանի սահմաններու ընդարձակման գործին հետ, մնաց դժբախտաբար այն կէտին վրայ, ուր որ էր 1945էն առաջ:

Կա՞յ տեղ բարեմիտ հայ մարդ, որ ներկայ պայմաններուն — տեսել կ'ուզեմ մեր երկրի ներկայ սահմաններուն մէջ—հնարաւոր դատէ այլեւս խօսիլ եւ ազմկել զանգուածային ներդաղթի մասին:

Անտարակոյս որ ոչ: Որով, խոստովանինք, որ անբաւական եւ վնասակար ալ է տեւականօրէն ազմկել ներդաղթի չուրջ, երբ քար լուռիկն կը պահուի նոյնպէս, հայկական հողերը Հայաստանին միացնելու կենսական հարցին չուրջ:

Բայց, եթէ հակառակ այս աղաղակող իրականութեան — այս ալ ուրկէ կ'ելլենք, որպէս հետեւանք, ընդհանուր միջազգային յարաբերութեանց բարդութիւններուն — ներդաղթի չուրջ ազմուկը կը սասկանայ անդադար այդ արդէն, խնդրին մէկ ուրիշ կողմը կը ներկայացնէ:

Այդ մեր հակառակորդներու արտակարգ ապատրանքն է ատկէն, Դաշնակցութիւնը վերջնապէս թաղելու իրենց տենչէն ծնած:

Հայկական պահանջներու մասին Մոսկուայի աշխարհին մէջ ստեղծուած նպաստաւոր մթնոլորտը — բացատրեցաւ սխալ ձեւով:

Ընդհանուր ցանկութիւններն ու մաղթանքները — իրականութեան տեղ առնուեցան:

Հայկ. Դատը վերջապէս եւ լիովին լուծուած ձեւացուցին, իսկ զանգուածային ներդաղթը նոյնպէս կատարուած փաստ:

Ուրախութեամբ չէ, որ կ'արձանագրենք այս մերկ իրողութիւնները — այլ չատ խոր ցաւով եւ դառնութեամբ:

Մեր հակառակորդներուն համար անչուշտ ըմբռնելի չեն մեր այս բացատրութիւնները, այլապէս իրենց կ'իյնար այս դերը: Եւ այս՝ յանուն Հայաստանի եւ հայութեան շահերուն, դաղթահայութեան եւ Մ. Հայրենիքի կապերու ամրապնդման:

Անոնք՝ այս դերը չեն կատարեր, որովհետեւ իրենց բուն դերը այլ է:

— Շահադրդել ներդաղթը Դաշնակցութեան դէմ, պայքար մղելու եւ քայքայելու գաղութները, ինչպէս ցոյց տուին վերջին երկու տարուան դէպքերը:

Այսպէս է, որ անոնք՝ փոխանակ անապահովութեան, այլասերման եւ ամէն տեսակի թշուառութեան մատնուած գաղութները, հայրենիք փոխադրելու չվարանեցան դժուարութիւններ ըստեղծել բոլորովին ապահով (գոնէ որոշ տարիներու համար դեռ) գաղութներու մէջ — Ամերիկա, Եգիպտոս, Ֆրանսա եւն.), ցուցական նեղդաղթի ձեռնարկներով:

Զնոք խօսիր դեռ եւս Մ. Հայաստանի սահմաններէն՝ Մ. Միութեան զանազան շրջաններու մէջ բազմութիւններու մասին ալ որոնց ներդաղթը չատ աւելի կենսական եւ հրամայական անհրաժեշտութիւն մըն է, քան Ամերիկայէն եւ Եգիպտոսէն:

Այս բոլորէն եանք, պարզ է, որ եթէ մարդիկ կան «Ճառագդիմական» թէ «Հայաստանասէր», որ պիտի չուզեն անհրաժեշտ դասը հանել, Դաշնակցութիւնը չէ որ իրենց պիտի նայի: Այս պատճառով ալ, այսօր աւելի քան երբեք յստակ է եւ պայծառ Դաշնակցութեան դիրքը ներդաղթի մասին:

Երէկ, այսօր, ինչպէս վաղը, ներդաղթը կը մնայ Դաշնակցութեան հիմնական պահանջներէն մէկը:

Միշտ, դրական եւ կարեւոր գործ մը ընդունելով ներդաղթը, Դաշնակցութիւնը այսօր այլեւս պիտի չհանդուրժէ այն բոլոր մեքենայութիւնները, որոնք կը կատարուին ներդաղթի անուան չուրջ:

Այս ընդհանուր սկզբունքի սահմաններու մէջ

Մինչեւ այժմ Թուրքիոյ ներքին գաւառները, մանաւանդ Արեւելեան նահանգները անմատչելի վայրեր էին եւրոպական քաղաքակրթութեան համար: Մեծ պետութիւններու մրցակցութիւնը այդ կացութիւնը ստեղծած էր, փոխադարձաբար զսպած վտանգով: Զարական Ռուսաստանը ամէն ճիգ կը թափէր որպէսզի եւրոպական ընկերութիւնները չկարողանան իրենց ազդեցութիւնը տարածել դէպի Թրքահայաստան: Սամանեան Սահմանադրութեան շրջանին, հանդուցեալ ընկեր Գարօ Փաստրմաճեանը արտակարգ ճիգ թափեց տպէսպի Զեմքերի ընկերութեան տրուի եւ շուտով ձեռնարկուի Թրքահայաստանի երկաթուղիներու կառուցումը: Ռուս եւ գերման էնթերիկներ ձախողեցուցին այդ ծրագիրը, Հանրային Շինութեանց նախարար Մուլուսի պէյի միջոցով եւ որուն դէմ Արմէն Գարօն բուռն պայքար մը մղեց:

Այդ օրերէն ի վեր Ռուսաստան չատ աւելիներ կորսնցուց եւ այսօր գարձեալ Զեմքերներու հայրենակիցները կը տեղաւորուին այդ մարզերուն մէջ, ամբողջ արաբական ընդարձակ շրջանները իրենց տնտեսական ու քաղաքական ազդեցութեան ներքեւ առնելէ ետք:

Թուրքիան քառորդ դարու ընթացքին, կրկնապատկելու վրայ է իր երկաթուղիները: Իսկ Կովկասի մէջ ձարերու օրով շինուած երկաթուղագծերը կարեւոր յաւելում դեռ չունեցան, որովհետեւ Ռուսաստանի նոր վարիչները զբաղած են ընկերային մարզանքներով եւ միջազգային յեղափոխութեան գարոզչութեամբ:

Գ. ԼԱԶԵԱՆ

«Ամերիկահայ Ճառագդիմական Միութիւնը հակա-ամերիկեան կազմակերպութիւն մրն է»

ՆՄԲ.— Պոսթընի «Հայրենիք »ի Դեկտեմբեր 14ի թիւին .—

Քանի մը օր առաջ ամերիկեան կարգ մը թերթեր հրատարակեցին Միացեալ Նահանգներու ընդհ. դատախազ Թամ Քլարքի կազմած ցանկը, ուր նշանակուած էին անուններըը հակա-ամերիկեան գործունէութիւն ունեցող 70 կազմակերպութիւններու եւ կոմունիստներու հակակշիռին ներքեւ գտնուող 11 դպրոցներու: Այդ ցանկին մէջ դրուած էր նաեւ անունը հայ բոլշեւիկներու կազմակերպութեան, որ ծանօթ է հանրութեան «Ամերիկահայ Ճառայդիմական Միութիւն» անունով:

Երկար ժամանակէ ի վեր Հայերը Միացեալ Նահանգներու մէջ ճանչցուած էին աշխատասէր, պարկեշտ, օրինապահ ու հաւատարիմ տարր մը: Հայ բոլշեւիկները սակայն, որոնք հետեւող ուժի մը ձեռքին կոյր գործիքներ են, վերջին տարիներս արատաւորեցին Հայու դեղեցիկ անունը ամերիկեան ժողովուրդի ու կառավարութեան աչքին: Այսօր, Հայ Ճառայդիմական Լիկը ամբաստանութեան աթոռին վրայ է. ան անցած է սեւ ցանկին մէջ. բայց այդ խմբակի գործունէութեան սեւ ստուերը ինկած է նաեւ ամերիկահայ գաղութին վրայ : Այդ է մեզ համար ամէնէն ցաւալին:

Ամերիկայի մէջ « Հայ Ճառայդիմական»ը նոյնինքն հայ բոլշեւիկն է. անոր օրկանը «Լրաբեր»ն է, որ ասկէ 10 տարի առաջ յայտարարած է «Բանուոր»ին: Եթէ թղթատենք այս վերջինի հաւաքածոն, ինչեր պիտի չգտնենք հոն. սեւով ճերմակի վրայ ան յամառ գրած է, որ չուտով Ամերիկայի մէջ ալ, ֆաշիզմի փլատակներուն վրայ , պիտի ծածանի համաչափ միջազգայնականի կարմիր դրօշը: Եւ «կարմիր դրօշը ծածանեցնելու» այս նոյն գիծով ուղիղ թելի մը նման անցած է նաեւ «Լրաբեր»ին: Տարբերութիւնը «Բանուոր»ին ու «Լրաբեր»ին միջեւ այն եղած է, որ մինչ առաջինը չէր ծածկեր իր բոլշեւիկ մը ըլլալը, « Լրաբեր »ը, թէեւ ամէն օր կը թափէ իր թորը, բայց կը կեղծէ ինքզինքը եւ հազար կտոր կ'ըլլայ իր հոգին ծածկելու: «Լրաբեր» եւ իր հետեւորդները ոչ մէկ առեն ալի եղած են. անոնք միշտ քաղաքական պահակ տուապած են :

«Ճառայդիմական» խմբակը բոլշեւիկ կազմակերպութիւն մրն է: Մտէք այդ խմբակի ոեւէ մէկ ակումբը եւ պիտի տեսնէք հոն Սթալինի մեծադիր նկարները, որոնք կը փայլին պատերու վրայ, կամ պիտի տեսնէք որ բոլշեւիկեան ղրկանուէրներն է որ անունդ կուտայ անոր բոլոր անդամներուն: Հայ Ցեղասպանութեան մեծագոյն դէմքերու նկարներ չկան հոն, չկան նոյնիսկ Մրմեաններու, Ալիշաններու, Նալբանդեաններու կամ Աբովեաններու նկարներ: Այլեւս աւելորդ է խօսքի բռնել Ամերիկեան Հանրապետութիւնը կերտողներու. անոնք բուրժուաներ ու յետադիմականներ են, որոնք ոչ թէ պիտի յարդուին, այլ պիտի դառնան նշանակ յարձակման: Եւ ինչ կարելի է սպասել այսպիսի Հայերէ, որոնց ամէնէն փայլուն գաղափարախօսը, վերջերս, Հայաստան մեկնելու առեն իր ճամբու վրայ՝ Մոսկուայի մէջ, նախ եւ առաջ ուխտ դնաց Լենինի դամբանին՝ իր երախտապարտ սրտի տուրքը տալու համար «մեծերու մեծին». առաջ բոպէ մը մոռնալու որ հայութեան համար «մեծերու մեծ» մրն այ մեր անմահ Մեսրոպն է, որուն ոսկորները կը հանգչին Երեւանի այնքան մօտիկ Օշականի մէջ: Լենինի դամբանին այդ տուող բոլշեւիկ պարոնը չաթմէներով Երեւան մնաց, բայց ան մոքէն իսկ չանցուց Օշական երթալ՝ Մեծ վարդապետի դամբանին այդ մը տալու համար :

Ըստ այս երկրի կառավարութեան, Հայ Ճառայդիմական Միութիւնը հակամերիկեան կազմակերպութիւն մրն է եւ ատոր համար ալ ան սեւ ցանկին վրայ դրուած է: Ան չատոնց այդ ցանկին վրայ էր, ու եթէ այսօր միայն, ուրիշ կազմակերպութեանց կարգին, անոր անունն ալ հրատարակութեան կը արուի, այդ միայն անոր համար է, որ միամիտ Հայեր չմոլորին եւ չիյնան անոր սեւ ծուղակին մէջ:

Հայ Ճառայդիմական Միութիւնը արժանի էր այս պատիժին :

« ԹԱՎԻՐ»ի մէջ Թահա Թօրոս «Ազգային պայքարի ընթացքին Ատանա» խորագրով թեր - թօնին մէջ կը պատմէ Ատանայի դրաւումը եւ ի մէջ այլոց կը գրէ.

«1918 Դեկտեմբեր 17ին Մերսին եկած Ֆրանս. եւ Հայ զօրքեր Դեկտեմբեր 19ին Թարսուս մտան: Մէկ օր ետք, այսինքն 20ին, 300 հոգինոց առաջին զօրամասը Ատանա եկաւ: Միակ ուշադրաւ կէտը սա էր որ այդ ֆրանսական զօրամասին հարիւրին 80ը Օսմանեան հպատակ Հայերէ բաղկացած էր: Ատոնք կամաւոր Հայեր էին: Դժգոհութիւնը կ'աւելնար այն իրողութենէն թէ քաղաքը ֆրանսացի զինուորներէ աւելի տեղացի եւ զինեալ հայ զօմիթաճիներու կողմէ կը դրաւուէր:

«Քաղաքին ամէն կողմը հայկական եւ հելլէն դրօշներ կախուած էին: Հայ զինուորները փողոցներուն մէջ խրոխտաբար կը շրջադայէին եւ մահմէտականներու կրօնքին եւ հաւատքին կը հայհոյէին :

«Առանց դժուարութեան չեղաւ սակայն կիլիկիոյ դրաւումը: Նիհատ փաշայի կողմէ հիմնուած իսլամական կազմակերպութիւնները այնքան տարածուած էին որ կրնային ապստամբութեան մղել Ատանան: Այդ կազմակերպութիւններուն պատրուակն էր հայկական հարստահարութիւնը որ երբեմն դժբախտաբար ճիշդ, շատ անդամ ալ անհիմն ու խեղաթիւրուած, առհասարակ չափազանցուած էր :

ՀԱՄԱԶԱՑՆ Ա.ՓԷնքէն հասած լուրերու, ապստամբները ծանր կորուստներ կրեցին ուրբաթ օր, Նիկրիթայի մէջ: 64 ապստամբներ սպանուեցան Լամիայի եւ Տոմոկոսի մէջ: կառավարական ուժերը ազատեցին 40 պատանդներ: կարնասոս

ՈՐԲՈՒՀԻՒՆ ԴԱՏԻՆ ՀԱՄԱՐ

Որբուհիին պատճին համարը իմ կոչես իբրեւ պատասխան՝ հանգանակութեան մասնակցողներուն ցանկը տուած եմ երկու անգամ :

Ա.— Հոկտեմբեր 29ի թիւով յայտարարուած ցանկին դումարն էր 14.300 Ֆրանք:

Բ.— Նոյեմբեր 11ի թիւով յայտարարուած ցանկին դումարն էր 16.350 Ֆրանք: Ընդհ. դումար 30.650 Ֆրանք :

Այժմ կուտամ Գ. ցանկ մը :

Ց. Մալաքեանի միջոցով՝ Մարսէյլէն Տէր եւ Տիկին Ն. Ներսէսեան եւ Տէր եւ Տիկին Վ. Քիւպարեան 1000ական Ֆրանք: Արայ Տէր Վարդանեանի միջոցով՝ Մոնփէլիէէն Ցար. Թահմազեան 1000 եւ Ս. Վարդանեան ու Ս. Գասապեան 500ական: Զիմուոր Պարոյր Թուրեան հեռագրով Ալճերիայէն՝ 2000: Շ. Զօտեան (Նիս) 1000, Օր. Զ. Փափազեան (Փարիզ) 150: Հայկուհիի ձեռքով՝ Պորտոյէն Տէր եւ Տիկին Հալաճեան եւ Տէր եւ Տիկին Կ. Տոնէրեան 1000ական, Ա. Քէնթրեան, Կ. Վարդանեան, Կ. Հալաճեան եւ Չ. Թաշճեան 500ական, իսկ Ճ. Տօնիկեան, Մ. Ցակոբեան եւ Մարգար Ցակոբեան 200ական: Ջոմունիք Վանէն (Բ. անգամ) 1300: Լիոնէն Ղազար Ղազարեան եւ Սահակ Կէնճեան 500ական եւ Վ. Շահպազեան 300: Անահիտ եւ Շաքէ Նիկողոսեան (Պուա Քոլոմպ) 300, Ս. Քէնտոյեան (Կարաման) 500: Վ. Մրմեանի ձեռքով (Լուար) Կ. Սանճեան 500, Մ. Պալոյեան եւ Վ. Մրմեան 300ական, Ա. Ասլանեան 150 եւ Գ. Սեդրակեան 100 : Է. Էքսէրճեան (Ալճերիա) 500: Որբերու համակիր Տիկին մը Փարիզէն 500: Մ. Քիւրճեան (Լիոն) 500 Ֆրանք :

Այս երրորդ ցանկին դումարը 18.000 Ֆրանք :

Երեք ցանկերուն ընդհ. դումարը 48.650 Ֆր.:

Այս ցանկերուն հետ ինծի հասած են նաեւ նամակներ, ոմանք հրատարակելի իրենց պատմութեան նիւթ, ոմանք ալ ատոր՝ իմ ուսումնասիրութիւններուս համար,— բժշկութիւնը առիթ մը եղաւ որ ճանչնամ հայ ցեղը իրենց կեանքի տարաբնական նիւթ, այս դատը պատճառ մը եղաւ որ աւելի խորանամ՝ ճանչնալու համար հայ ժողովուրդը իրենց բնկերային նիւթ: Եւ ի՞նչ նիւթ, — մարդ ի բնէ հետաքրքիր է գաղտնիքներու ծանօթանալու, բայց երբ կը ծանօթանայ գաղտնիքներուն՝ խորչանքով կը լեցուի հոգին: Լաւ որ Ատտուած - պապան գաղտնիք մրն է դրեր ամէնի մէջ: Վայ անոր որ կը բանայ գաղտնիքի մր գոցը՝ երբ մատղաշ է տակաւին իր հոգին :

Տեսնենք ինչ կը շահի հայ գրականութիւնը ի վարձ այս հետաքրքրութեան: Առ այժմ չնորհակալութիւն բոլոր իմ բարեկամներուս, որոնք պատասխանեցին կոչս: Առիթ կ'ունենամ հարկաւ աւելի լուսաւոր խօսելու իրենց բաժին հանելով իմ հետաքրքրութիւններէս :

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

լերան վրայ 17 ապստամբներ սպանուեցան: Միսոլունքիի մէջ, մահուան դատապարտուեցան 26 ահաբեկիչներ: Հելլէն համարնակար Նիքոլա Զաքարիատէս որ ներկայիս Պելկրատ կը գտնուի , մօտ օրէն Մոսկուա պիտի երթայ Մարկոսի «կառավարութեան» ճանաչումը առաջարկելու առաքելութեամբ :

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ

ԼՍԱ ԵՒ ՀԱՄԱՏ

(ՍՈՐՀՐԴԱՎԷՊ)

Ա. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԳԱԼ
Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

Ու տաճարին գմբեթը յանկարծ կը բացուի լայնափեսիկ ... : Ալօթատար կարաւանը, բարեխօս Սուրբերու առաջնորդութեամբ, լուսեղէն աստղուխի մը վրայէն, կը բռնէ երկինքի ճամբան : Հոկայ թափօրը զԱստուած կը փնտռէ, մինչ Աստուած, վարը, տաճարին մէջ, սիւնի մը կռթնած, ղէմքը կը շարժէ :

Անդրշխարհեան :

— Հայր Եսայի, միշտ լուսիւն եւ մեղմամաղձոտութիւն կայ վրադ: Երկու տխերիմ թշնամիները՝ վանականին : Մարդ աշխարհի ալեկոծութիւնները երբ կ'անցնի մենաստանի անդորրութեան, կ'ենթարկուի հոգեկան տագնապի մը, որ թէ չերմուխիւն է, թէ ցրտութիւն միանգամայն: Ասոր դարմանը՝ աշխատանք, մարմնի յոգնածութիւն , նոյնիսկ անդամներու հիւանդութիւն: Լաւ է, որ քիչ մը բանջարանոցին մշակութեամբ պարապիս: Ցանուն Յիսուս Քրիստոսի զօրութեան, կը հաստատեմ որ մեծ վոխոխութիւն մը պիտի կատարուի մէջդ.... : կ'ազդարարէ Վանահայրը խստադէմ, որուն առջեւ ուխտադրութիւնս կը խոնարհեցնէ իր վիզը — հնազանութիւն :

« Հիմա, արեւը, կիզանուտ, մեծ կրակարան մը բռնած, կանգներ է գլխիս վերեւ, հողը ոտքերս կը լիզէ, կրակէ լեզուներով : Քարերը բահին ու բրիչին հետ հրախաղութեան են բռնուեր : Ա-ջիս՝ հայր Սիմոն, արմաւենիի մը ծակոտկէն չուքին տակ, պանանիներու ցօղունները կը կտրէ ու քարի մը տակ տապրելով, անոնց բարակ թելերէն հատ հատ չուաններ կը հինէ :

— Հայր Եսայի, կը բացագանչէ յանկարծ, դուն շատ դիտուն, հօթը լեզու կարդացող մարդ ես: Կ'ըսեն թէ՝ երկիրը կլոր է ու կը դառնայ, հրաշք մը չէ՞ մեր վրայէն չթափիլը :

— Այո, հայր Սիմոն... հրաշք մրն ալ իմ վրունդ, հազար, դղում ցանելս եւ չմահանալս է այս պահուս ...:

Բանջարանոցի եզրին, սպասատուր ուղտ մրն է չոքեր, կռնակը արեւին : Հողին, աւազին կարծր ու բոհրած գունդերուն տակ, խոր քունի մը կը քաշէ քարացած : Ո՞ր դարը, ոդիներու լռին կարաւանէն բաժնած, բերեր, նետեր է դինք, այս ամուլ ու դաժան սարաւանդին վրայ : Մկանները բահին սրահատ ատամներուն յենած, ջիղերու դեղադոյն պրկումով մը կը նետուին վրան : Այո, գերազանց յոգնածութիւնը կ'ըսէ գերազանցքը-ժշկութիւն :

Սպասատուր հոդակոյտ կը սկսի դողալ ու տքալ հեծեծալուր, թեւերը թուլնալ : Կատաղի պայքարէ մը ետք կ'իյնայ ոտքերուս տան փչրուած ու ջախջախուած : Ատտուած իմ, սպասին ընդերքէն, դարերու ատամներուն տակ մատաւոր դանկ մը, որ լեզուիս կապերը կը քակէ :

— Ահա, մահն ու կեանքը մխասին, ձեռքերուս մէջ: Ոչ մի զանազանութիւն ... կեանքը մահ է ու մահը՝ կեանք: Ով, դու կենդանի խորհուրդը անդենականին, խօսիր, խօսիր ... : Ես քու աշխարհդ չեմ թէեւ, բայց կը ճանչնամ քեզ.. նոյն իսկ կարող եմ հասկնալու քու լեզուդ ... :

— Հայր Եսայի, հայր Եսայի, խելքի եկուր, մթթէ՞ ասոր ո՞վ ըլալը կը գիտցուի... մթթէ՞ ոսկորը կը խօսի ... :

— Եղբայր Սիմոն, ես կը ճանչնամ այս դանկին տէրը այնչափ, որչափ քեզի: Այս մարդը ժամանակին մտեր է այս վանքը, մեղի պէս քուրձ հագած, ապաշխարհեր է աշխարհին դէմ աչքերը դոց: Աղօթքը հաց, արտասուքը ըմպելի է ըլեր, բնութեան ատտուածատուր վայելքները արհամարհեր, վարդն ու կինը սատանայութեան բաժին է հաներ, ու վերջապէս օրին մէկը ան մը հողճանկած, չուեր է Անդենական, աչքերը բաց : Հիմա, կեանքին գերագոյն իմաստը սոսկած, կը վերադառնայ աշխարհին, ըղձակարօտ աչքերով: կ'ուզէ վերապրիլ, վայելել, ինչ որ բնական է ու բանական, ինչ որ հաճելի է եւ անմեղ: Նայէ, նայէ, ինչ պէս բացեր է խոշոր, խոշոր, իր աչքերն ու բերանը, կարծես կուլ պիտի տայ աշխարհը ... :

— Յիսուս Քրիստոս, ինչ որ կը լսեմ ... դուն մեղք չի համարես ... :

15ին : *Միջազգային կազմակերպութեան աշխատանքներուն պիտի օժանդակեն 4500 Հրէաներ եւ 13.000 Արաբներ մինչեւ որ բաժանումի ծրագիրը գործադրուի :*

ՓԱՆՏ ՄԸ ՏԻՐԱԼԻՎ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ հոգեւոր առաջնորդը Մահաթմա կանտի որ կամաւոր ծոմապահութեան ակաւ անցեալ շաբթու, մահամերձ է՝ համաճայն Նիւ Տէլհիէն հասնող տեղեկութեանց : «Մահուան անկողինիս մէջն եմ, ըսաւ ան շաբաթ օր, եւ կոչ ըրաւ Փաքիստանի վարիչներուն որ ընդունին իրենց սխալները : Հնդկաստանի նախկին փոխարքան — այժմ ընդհատուր կառավարիչ — Լորտ Մաունթպէթըն եւ իր կինը այցելութիւն մը տուին իրեն :

ՖԻՆԼԱՆՏԱՑԻ կառավարութիւնը տեղի տալով Մորտրդային Միութեան պահանջներուն, որոշեց երկրէն վտարել 15 էսթոնիացիները :

ՊԱՓԱՎԻԱՑԷՆ կը տեղեկացնեն որ հոլանտական կառավարութեան ներկայացուցիչներուն եւ Հոլանտական Արեւելեան Հնդկաստանի միջեւ զինադադար մը կնքուեցաւ շաբաթ օր՝ Միացեալ Ազգերու պատուիրակներուն միջամտութեամբ : Այս ձեւով վերջ կը գտնէ աւելի քան հինգ ամիս տեւող արիւնալի կռիւները : Հանրաքուէ պիտի կատարուի ժամանակ եւ Սումաթրա կղզիներուն ապագան որոշելու համար :

ԱՄԵՐԻԿԱՑԻ արտաքին նախարարը յայտարարեց շաբաթ օր թէ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը Եւրոպայի օգնութեան ծրագրով Եւրոպայի մէջ զինուորական խորհրդներ պահելու ակնկալութիւնները չունի : Մեր հիմնական նպատակն է այնպիսի վիճակի մը մէջ դնել եւրոպական ազգերը որ վերապահեն իրենց առողջութիւնն ու եռանդը, ըսաւ Մարշըլ :

ՆԵՐՔԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ պաշտօնական կերպ Փարիզի 11րդ եւ 20րդ արուարձաններու համայնավար քաղաքապետները՝ ամբաստանած ըլլալով թէ Նոյեմբերի եւ Դեկտեմբերի դործադուլներուն ընթացքին «թշնամական վերաբերում ցոյց տուած են կառավարութեան հանդէպ» : Համայնավար կուսակցութեան ընդհանուր դիտել կուտան որ խնդրոյ առարկայ ամէները մասնակցած էին դիմադրական ճակատին :

ՎԱՏԻԿԱՆԻ լատտեղական շրջանակներուն մէջ դիտել կը տրուի որ Պապը ներկայիս կ'ուսումնասիրէ համայնավար կուսակցութիւնը բառադրելու ծրագիրը մը : Սակայն իրազեկները կ'ըսեն նաեւ որ կաթոլիկ եկեղեցին պետը այդ ծայրայեղ միջոցին կրնայ դիմել չատ բացառիկ պարագաներու մէջ եւ առայժմ նախապատիւ պիտի համարի բանադրելու միայն կարգ մը անհատներ փոխանակ պատժելու ամբողջ կուսակցութիւնը հաւաքաբար : Միլանի կարտինալը կը մերժէ հաղորդուելթիւն տալ համայնավարներուն :

ՖՐԱՆՍԱՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ Դաշնակցութիւնէն վերջերս բաժնուող «Աշխատաւորներու ուժը» կազմակերպութիւնը կոչ կ'ընէ բոլոր աշխատաւորները որ կրկնապատկեն իրենց ճիդերը՝ երկրին արտադրութիւնը աւելցնելու համար : Նոյակամ Դաշնակցութիւնը համաձայն է Մարշըլի ծրագրին : Ունի երկու միլիոն անդամ :

ՊՈՒԼԿԱՐԻՈՑ վարչապետ Կէորկի Տիմիթրով յայտարարեց Պուքրէշի մէջ որ Պալքանեան համագործակցութիւն մը պիտի կազմուի «երբ ժամանակը գայ» : Այդ քաղաքականութիւնը կը հետապնդեն, ներկայիս, Պուլկարիա, Ռումանիա, Եուկոսլաւիա եւ Ալպանիա : Վարչապետը դիտել տուաւ որ համագործակցութիւնը պիտի ըլլայ ամբողջովին անկախ եւ պիտի դործակցի անոր հետ, անհրաժեշտ պարագային, տնտեսական եւ քաղաքական բացարձակ հաւասարութեան պայմանով :

ԹՈՒՐՔԻՈՑ ՆԱԽԱԳԱՀԸ, Ըմէթ Ինէօնիւ, Ուրբաթ իրիկուն երկարատեւ խորհրդակցութիւն մը ունեցաւ ամերիկեան դեսպանին հետ : Որեւէ մանրամասնութիւն չէ հաղորդուած մամուլին, բայց դիտել կը տրուի ո րբերնոց խօսակցութեան նիւթը «չափազանց կարեւոր » էր :

ՈՒՈՇԻՆԿԻՐՆԷՆ կը հաղորդեն որ Մորտրդային Միութիւնը պիտի ստանայ իտալական նաւատորմին երկու կարեւոր մարտանաւերը—ճիուլիօ Զեզարէ, 23 հազար թոն եւ Տուքա տ'Աօսթա 7000 թոն ընդհանուր տրեք թորփիլահալածներ, երկու սուզանաւեր, երկու թորփիլահալածներ եւ երեսունի չափ պահականաւեր :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՐՋԵԼ ՅԵՐԵԿՈՑԹ

Կազմակերպուած Ֆրանսահայ կապոյտ Խաչի Սէվրանի մասնաճիւղին կողմէ, կիրակի 7 Մարտ 1948, ժամը 3ին 12, Casino des Etoiles, Մասիս սրահին մէջ , 87 Ave. de Livry, à Sevran :

Գեղարուեստական հաճելի բաժին : Խմբերդ , ներկայացում եւ անակնկալներ, եւրոպական պարեր : Ճոխ պիւֆէ : Մուտք՝ 75 ֆր.

Հաղ. միջոց.— Կառախումբ Gare du Nordէն ժամը 13.45ին եւ 14.15ին : Eglise de Pantinէն 147 թիւ օթօպիւս, իջնել Terminus :

Ցտեսութիւն պարահանդէս

Ֆր. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը, տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15ին 24, Hôtel Continentalի չքեղ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde :

Նուագախումբ ՖԷՐՆԱՆ ՊՈՒԶՕՆ : Դեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ :

Տարեկան շքեղ ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան կարմիր Խաչի եւ Ողթախնամի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրակի օր ժամը 15ին մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէջ, 43 Bld. Raspail, Paris:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇՐՋԵԼ ՅԵՐԵԿՈՑԹ

Նախաձեռնութեամբ՝ Սեբաստիոյ Նահատակաց Միութեան, վաստակաւոր դերասան՝ ՏԻԻԱՆ ՆՇԱՆԵՆԵԱՆի, մասնակցութեամբ Փարիզի հայ բեմի լաւագոյն ուժերուն, 8 Փետրուար , 1948, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Մարսըլէն Պէոթըլօի չքեղ թատրոնին մէջ, 28bis, rue St. Dominique, métro Invalides:

Առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէ համնաարեղ ողբերգու Վ. Շէյքսփիրի

ԱՐՔԱՅ ԼԻՐ

Պատմական առում 6 արար եւ 2 պատկեր, թարգմ. եւ բեմադրութիւն Տ. Նշանեանի :

Տոմսերու դիները, 100էն 400 ֆրանք, կը ծախուին հայկական բոլոր գրատուներուն, Ճաշարաններու, Սեբ. Նահ. Միութեան կեդրոնին եւ մասնաճիւղերուն մօտ : Հարիւրին տասը պիտի յատկացուի Սեբ. Նահանգ. Միութեան նեցուկի Ֆոնտին : Սրահին ջերմութիւնը ապահովուած է : Փնտռել յայտագիրը :

ՆԱՄԱԿԱՏՈՒԿ, Հոկտ. 25էն 31

ՓԱՐԻԶ (19) Խպկ. հազար ֆրանք, ՄԱՐՍԷՑԼ Հայց. 1500, ՓԱՐԻԶ (18) Ս.Լ. 500, Ս. ՌԱՖԱՑԼ Զրեմ. հազար, ՄԱՐՍԷՑԼ Դրէպ. 500, ՌԻՒԼ Մկրտ. 500, ՄԻՐԻՊԷԼ Ճլօ. 500, ՄԱՐՍԷՑԼ Գոճ. հազար, Փէք. 500, Վիմրի Շահ. հազար, ՄԱՆՓԵԼԼԷ կի. հազար, ԱԼՖՈՒՐՎԻԼ Մուր. 1500, ԼՈՒՄԱՐ Նորհ. հազար, Նիս Սբեն. հազար, Ս. ԼՈՒ Մալ. 300, ՓԱՐԻԶ (16) Խարբ. հազար, ԹՈՒՐ Գէզ. հազար, ԻՍԻ Վուկ. 500, ՍԵՎՐ Գապ. հազար, ԼԻՈՆ Պօզ. 500, ՓԱՐԻԶ (19) Նչան. 1000, ՌՈՄԱՆ Թաշ. 500, ՄԱՐՍԷՑԼ Մարշ. 2000, Ալիս. հազար, Դանի. 500, ՎԻԼՄՕՊԼԷ Ելան. 500, ՓԱՐԻԶ (17) Վարդ. 2000, Ի. (ՆԻՒ) Պաք. հազար, ՊՈՒՏՕ Հայր. հազար, ԱԼՖՈՒՐՎԻԼ Էմիլ. հազար, ԲՐԻ ՍԷՆ ԳԵՐՎԷ Նիկ. 500, Ֆլաւիաք Նազ. 500, ԱԼՓ ՄԱՐԻԹԻՄ Զապ. 500, ՓԱՐԻԶ (17) Ղազ. 500, ԳԼԱՄԱՐ Օնո. 1500, ԼԻՎՐԻ Ճակ. 800, ՍԵՎՐԱՆ Ոսկ. 300, ՓԱՐԻԶ (2) Խաչ. 550, Ս. ԷՓԼԷՆ Աբր. 500, Պօզ. 500, ԿԱՐՏԱՆ Մարգ. հազար, Բուլ. հազար, ՄԱԼԱՔՕՖ կար. 1200, ԱԼՖՈՐՎԻԼ Փաչ. հազար, ՓԱՐԻԶ (19) Մին հազար, ՓԱՐԻԶ (19) Տէյ. հազար, ՆԻՍ Պէր. Պ. հազար, Պէր. Կ. հազար, Պան. հազար, Ճակ. հազար, Ա. Թ. 1500, ՍԵՎՐԱՆ Նազ. հարիւր, ՌՈՄԱՆ Աբր. 1700, ՓԱՐԻԶ Պաթ. հազար, ՄԱՐՍԷՑԼ Վարդ. 500, ՓԱՐԻԶ (5) Գազ. 1200, ՍԵՎՐԱՆ Մարտ. 300, ԱՆԿԷՆ Պազ. հազար, ԴԱԼԻՖՈՐՆԻԱ Վարդ. 1500, ՓԱՐԻԶ (10) Մասե. 1500 ֆրանք:

ՄՈՒՐԱՏ ՐԱՓԱՑԷԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ հաւատարիմ իր ծրագրին, որ է ծաւալել հայ ժողովուրդին մէջ աղգային մշակոյթը, որոշած է պարբերաբար բանախօսութիւններ սարքել Սեւրի Մուրատեան վարժարանին մէջ, 26 բիս Թրուայօն, Սէվր :

Առաջին բանախօսութիւնը տեղի կ'ունենայ 1 Փետրուար կիրակի ժամը 15.30ին : Պիտի բանախօսէ Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեան : Նիւթ ունենալով «Հայ ցեղին ծագումը » :

Այրի Տիկին Վ. Խաչատուրեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի Պօտոյի Կ. Խաչի մասնաճիւղին կը նուիրեն Տիկին Նարդուհի Քէնտիրեան 500 ֆրանք : Տիկին Վարդանեան 600 ֆրանք, Տիկին Ղալս Կարապետեան 200 ֆրանք, Տիկին Տօնէրեան 500 ֆր., Տիկին Գօնթալեան 300 ֆրանք, Տիկին Թաշճեան եւ Տիկ. Քէօսէեան 200 ական ֆրանք : Ֆր. Կ. Խաչի Պօտոյի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացաւ բոլոր գումարները :

ՕԲ. ԱԼԻՍ ԵՈՓԵԱՆ
եւ
Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ
Նշանուած
Choisy le Roi 18 Յունուար Փարիզ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Ց. Դ. ԱՆԻԷՒ Պատա Ջոլոմպի «Արամ» ենթակոմիտէի ժողովը վաղը չորեքշաբթի , կայազանին դէմի սրճարանը, ժամը ճիշդ 9ին : Կարեւոր օրակարգ :

ՇԱՎԻԼԻ Ֆր. Կ. Խաչի մասնաճիւղի ընդհ. ժողովը յոյնուար 20ին, այսօր, ժամը 9ին մասնակապարտէզին սրահը : Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը պարտադիր է : Ներկայանալ անդամատուերով :

Հ. Ց. Դ. «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» Փարիզի մասնաճիւղի դասախօսութիւնը, այս հինդշաբթի ժամը 9ին, Sociétés Savantesի մէջ : Կը խօսի ընկ. ՀՐԱՆԴ ԲԱԼՄԻԵԱՆ : Նիւթ՝ «Աչխատանքն ու Աչխատանքային կեանքը հայ ժողովրդական երաժչտութեան մէջ» : Հայերէնի դաս 8—9:

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ Փարիզի շրջ. վարչութիւնը, ժողովի կը հրաւիրէ շրջանի մասնաճիւղերու վարչութիւնները, վաղը չորեքշաբթի 21 Յունուար , ժամը 8.30ին, Ծանօթ հաւաքատեղին :

ԱՆՈՒՇ

Կիրակի 25 Յունուար 1948, ժամը 14.30ին
ՄԻՒԹԻԻԱՒԹԻՒՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Մեծ պատրաստութեամբ եւ խնամքով Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆի մահուան 25ամեակին առթիւ :

Փարիզի հայկական երգչախումբին կողմէ
ՍԷՆֆոնիկ մեծ նուագախումբ (60 հոգի) :
Ղեկավարութեամբ ԱՐԱ. ՊԱՐԹԵԻԵԱՆի



Անուշի դերը կը կատարէ Օբ. ԱՆԺԷԼ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, Ա. Grand prix Wicard de la Ville de Marseille :

Ներկայացումը կը սկսի ճիշդ ժամուն : Նուագի պահուն դուռները փակ կը մնան :

ՏԷՐ եւ Տիկին Ե. ԻՒթիւճեան եւ զաւակը, ՏԷՐ եւ Տիկին Մ. ԻՒթիւճեան, Պ. Արման ԻՒթիւճեան կը ծանուցանեն թէ փետրուար 1ի կիրակին հոգեհանգստեան մատուցուի արարողութիւն պիտի կատարուի Փարիզի Հայոց եկեղեցիին մէջ, ի յիշատակ իրենց ծնողաց ՄԿՐՏԻՉ եւ ԷԼԻԶ ԻՒԹԻՒՃԵԱՆՆԵՐԻ : Կը հրաւիրուին իրենց յիշատակը յարգողները :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ.— Մուրատ Ռաֆայէլեան Նախկին Սանուց Միութեան Մարսէյլի մասնաճիւղը հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտայ ի յիշատակ տարաբախտ երաժչտագէտ՝
ԳՈՒՐԳԻՆ ԱԼԷՄՇԱՀի
կիրակի 25 Յունուար 1948, 40 rue d'Aubagneի կաթողիկէ Հայոց եկեղեցւոյն մէջ, կը պատարագէ Սէվրի Մուրատեան վարժարանի տեսուչ Հայր Սահակ Տէր Մովսէսեան : Երգեցողութեանց սիրայօժար մասնակցութիւնը կը բերէ «Ազմենիա» երգչախումբը ղեկավարութեամբ Վ. Սարգսեանի :

Կը հրաւիրուի Մարսէյլի հայութիւնը անխտիր յարգելու համար բոլորէն սիրուած երաժչտագէտին յիշատակը :

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN LANGUE

HARATCH — Fondé en 1925 —
R. C. Seine 376.236
Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN
17, Rue Damrémont — PARIS (13e)
Տար. 1200, 6ամս. 650, Նպաս. 15 տող. կամ 3 ռճգլ.
Tél. : GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Mercredi 21 Janvier 1948 Չորեքշաբթի 21 Յունուար

Խ. ՏԱՐԻ — 20e Année N° 5245–Նոր շրջան թիւ 854 Երկուքշաբթի՝ Շ. ՊՈՍՖԱՔԱՆ Գին՝ 5 ֆր.

ՍՈՎԻԵՏԱՀԱՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Երէկ առաջին անգամ Լենինգրատի վերստին նշանակուած հիւպատոսը՝ պ. Ստեփան Աղաջանեան, ներկայացուց իր հաւատարմագիրները Խորհրդային Միութեան նախագահ Կալինինին։

Ներկայ էին նաեւ Խորհրդային Միութեան արտաքին գործոց նախարար Վիշինսքին եւ արտաքին գործոց նախարարութեան պետական քարտուղար Լոզովսքին։

Հիւպատոսը իր հաւատարմագիրները ներկայացնելէ ետք, ելոյթ մը ունեցաւ, որուն մէջ ըսաւ թէ ինք կը գտնուի իր նոր պաշտօնին մէջ, որպէսզի ամրապնդէ Խորհրդային Միութեան եւ Հայաստանի միջեւ գոյութիւն ունեցող բարեկամական յարաբերութիւնները։

Կալինին պատասխանեց հիւպատոսին՝ ըսելով թէ ինք կը հաւատայ, որ հիւպատոսը պիտի յաջողի իր առաքելութեան մէջ։

ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆԻՆ

Ամերիկահայ գաղթականներու ներկայացուցիչ Ռուբէն Տէր Մինասեան, որ Ամերիկայի Միացեալ Նահանգներու կառավարութեան կողմէ ուղարկուած էր Եգիպտոս՝ հոն գտնուող հայ գաղթականներուն հետ խօսելու համար անոնց ամերիկա գաղթելու հարցին մասին, Եգիպտոսէն վերադարձին ենթարկուեցաւ մարտիրոսութեան։

Ան ինքնաթիռով Եգիպտոսէն Ամերիկա կը վերադառնար, երբ Ատլանտեան ովկիանոսի վրայ ինքնաթիռը պայթեցաւ եւ ան զոհ գնաց։

Ռուբէն Տէր Մինասեան ծնած էր Պոլսոյ մէջ, 1894 թուականին։ Ան 1913 թուականին գաղթած էր Ամերիկա։

Ան ամուսնացած էր Ամերիկայի մէջ եւ ունէր երկու զաւակներ։

Ռուբէն Տէր Մինասեան ամերիկահայ գաղթականներու ներկայացուցիչ մը եղած էր նաեւ Սուրիոյ մէջ։

Ան ամերիկահայ գաղթականներու ներկայացուցիչ մը եղած էր նաեւ Սուրիոյ մէջ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԻ ՎՐԱՅ

Ֆրանսական կառավարութեան հրաւէրով, Ֆրանսայի մէջ կը գտնուին հայկական պատրաստներ հայկական հողի վրայ։

ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐ

ԳԱՂԱՓԱՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ

Լենինն ու Ստալինը մեր հայրենի հայրենասեր ազգային հերոսներ են

Ա.

Իր ազգասիրական գիտակցությունն ունեցող յուրաքանչյուր հայ, որ հետաքրքրվում է հայ ժողովրդի անցյալով, նրա մշակույթի զարգացման ուղիներով, նրա ներկա դրությամբ, ոչ միայն ոգևորվում է Ռուսաստանի մեծ ժողովրդի հանճարեղ առաջնորդների՝ Լենինի և Ստալինի «Հայաստանի» և հայ ժողովրդի մասին գրվածքներով, այլև ամեն անգամ, երբ կարդում է նրանց մասին, ամեն անգամ, երբ լսում է նրանց անունը, ամեն անգամ, երբ տեսնում է նրանց պատկերները, նրա հոգու խորքերում ծագում է անսահման երախտագիտության, անսահման սիրո զգացում դեպի այդ մեծ մարդիկ, որոնք ոչ միայն մեր ժամանակների, այլև մարդկության պատմության ամենամեծ հանճարներն են։

Ինչո՞ւ է հայ ժողովրդի համար Լենինն ու Ստալինը այդքան սիրելի, այդքան հարազատ։ Որովհետև նրանք հայ ժողովրդի ամենամեծ բարեկամներն են, որովհետև նրանք հայ ժողովրդի ամենամեծ բարերարներն են։

Ինչո՞ւ է հայ ժողովրդի համար Լենինն ու Ստալինը

ՅԱՋՈՂԻՆ ԳԱՒԱՌԸՆ

ՄԱՆԱԻԿՆԵՐՈՑ ՕՐԸ ՎԱԼԱՆՍԻ ՄԷՋ

Կիրակի, ապրիլ 11ին, Վալանսի հայ եկեղեցւոյ մանուկներու կարեւոր մէկ մասը նշանակալից օր մը ապրեցաւ :

Օր մը ուրախութեան, ոգեւորութեան եւ օր մը սիրուհանքի ու քաջալերիչ նաեւ մեզ մեծերուս համար :

Ընկերուհի եւ ընկեր Յակոբ Կօշկակարեաններ սիրայօժար տրամադրած էին իրենց մեծ կառատունը, մանուկներու օրուան տօնակատարութեան համար :

Ընկերներ Ա. Տէր Սարգսեան, Ազատ, Ղազար, Մարտիրոս եւ ուրիշներ բեմի պատրաստութեան եւ կառոյց — սրահի յարդարումին դժուարին գործը յանձն առած էին , իսկ Աջուհիներ եւ վարչութեան անդամուհիները լծուած էին սեղուական աշխատանքի :

Կէսօրէն վերջ, երբ սրահը լեցուած էր արդէն, Կալոյտ Աջի քայլերգով հանդէսը բացուած յայտարարուեցաւ :

Վարչութեան ատենապետուհի Տիկին Շուշանիկ Տէր Սարգիսեանը, դրաստր բովանդակալից ճառով մը բացատրեց «Մանուկներու Օր»ուան նշանակութիւնը եւ թուեց Կ. Աջի գործունէութեան սահմանները մէջ գտնուած զանազան ազգօգուտ աշխատանքներ, որոնք տարիներէ ի վեր գործադրուած են :

Ի վերջոյ շեշտեց Կ. Աջի գլուխներու կատարած դերը եւ յայտարարեց «ճիշդ է որ մենք ցարդ մեր դպրոցը ունեցած չէինք, բայց այժմ միջոցներ ձեռք առած ենք եւ մօտ ատենին պիտի ունենանք նաեւ մեր դպրոցը, ճշմարիտ ազգային դպրոց մը, հարազատ բոլորին համար :

Այս ճառէն վերջ, բեմ հրաւիրուեցան 5էն 15 տարեկան երկսեռ մանուկներ ու պատանիներ, որոնք բոլորն ալ երգերով, արտասանութիւններով, խանդավառեցին հանդիսականները :

Աջուհիները դհոմանակ ու ժպտերես մէկ առ մանչն միւս կ'անցնէին, ըմպելիներով եւ խմորեղէններով, զհացում տալու համար մեծերուն եւ փոքրերուն :

Կարճ դադարէ մը վերջ, սկսաւ հանդէսի երկրորդ մասը :

Սանուհիները հայկական տարազներով ու հայկական պարերով, կրկնապատկեցին զուարթ մթնոլորտը :

Պ. Ռ. Մուշեղեան իր նուագով աւելցուց փայլը հանդէսին : Սուրիահայ այս չնորհալի երիտասարդը քանիցս բեմ հրաւիրուեցաւ, խանդավառ ծափերով :

Պէտք է չեշտել որ բոլոր արտասանողները, երգողները եւ կենդանի պատկեր ներկայացնողները ու պարողները կատարելապէս մարզուած էին ու յաջող, չնորհիւ մեր եռանդուն ու կորովի Աջուհիներուն :

Հանդէսի վերջաւորութեան բեմ եկաւ ատենապետ «Կաղանդ պապան» բեռնաւորուած մրգեղէններու ծանր պարկով :

Եղբայրներու հրճուանքն իր զագաթնակէտին հասաւ :

Կաղանդի ծառին դոյզնզոյն մոմերը լուսաւորեցին բեմը եւ զուարթ մանուկները իրենց մանկական պարով դիմաւորեցին առատաձեռն «Կաղանդ պապան» :

Հարիւրէ աւելի մանուկներ իրենց նուէրները տոպրակները դրկած, ճռուողելով, ցատկոտելով գացին, տեղատուութեան իրենց ծնողներու քով :

Ընդհանուր խրախճանքի այդ պահուն սկսաւ ժամուդր եւ քանի մր վայրկեաններու ընթացքին պոյտաւ 14.000 ֆրանք :

Ա.ճուրդի կը քաշահայրութիւնը ստանձնեցին Սուրիահայ երեք երիտասարդներ, 1000 ֆրանքով : Հանդէսի փակման խօսքը վիճակուած էր վարչութեան ժրաջան քարտուղարուհի Տիկին Պ. Մազաքեանին, որ չնորհակալութիւն յայտնեց Տէր եւ Տիկին Կօշկակարեաններուն, իրենց կառատունը տրամադրած ըլլալուն համար, եւ բոլոր անոնց որոնք իրենց աշխատանքով եւ նուէրներով օժանդակեցին հանդէսին :

« Յառաջ»ի ծաւալը նկատի ունենալով մի առ մի չենք արձանագրեր դերակատար երկսեռ մանուկներու անունները, ու կը բաւականանք, իրենց յարատեւութիւն ու նոր նուաճումներ մաղթելով :

Ապրին մեր Աջուհիները :— Ա. Մարալ

ՆԱՄԱԿ ՄԻՋԱԴԱՐՈՒԹԵԱՆ

ՀԱՑԿԱԿԱՆ ԴԱՏԻ ԿԵԴՐ. ԳԱՆՁՆԱԽՈՒՄԲ

1944ին գաղութներու եւ Հայաստանի ամենայետին անկիւններուն մէջ անգամ կազմակերպուեցան հրապարակային ժողովներ ի նպաստ Հայկական Դատի վերարծարծման, կազմուեցան, քիչ մը ամէն տեղ, այդ նպատակաւ յանձնախումբեր, ենթայանձնախումբեր եւ հանգանակիչ մարմիններ : Ամէն Հայու սրտէն կը խօսէր Հայկական դատի արդարացի հանգանակը որ դարու արդար պահանջն է եղած ստատպած հայ ժողովուրդին :

Ֆրանսայի մէջ եւս կազմուեցան կեդրոնական մարմիններ պաշտպանելու եւ հետապնդելու համար մեր դատը : Պարբերաբար լոյս կը տեսնէր նաեւ թռուցիկ մը :

Սակայն, դժբախտաբար, մեր միութեամբ հայրենիքին պարտադրուած է լռութիւն եւ բոլի համակերպում : Սփիւռքը բաւարարաբար ազատ է, բայց «վերի արտի» մարդիկը ձայն չեն բարձրացներ ու չեն բողոքեր այն վիրաւորիչ յայտարարութեան դէմ զոր խորհրդային պատուիրակութեան պատասխանատուն պատգամեց անցեալ Հոկտեմբերին :

Արդ, ո՞ր օրուան կը սպասեն այն մարմինները՝ որոնց գերագոյն պարտականութիւնն է պաշտպանել մեր արիւնոտ Դատը, ինչո՞ւ հրապարակին ժողովներ չեն կազմակերպեր, ինչո՞ւ բայ տրտով չեն արտայայտուիր, ինչո՞վ սիւտի արդարացնեն իրենց դոյութիւնը, ինչո՞ւ այս դետնաշարժ սորկութիւնը ... Ց.Հ.

ՄԻ ՄՈՌՆԱՔ կարճ դրել, մաքուր դրել, մեքենով դրել եւ թուղթին միայն մէկ էջին վրայ գրել խմբագրութեան եւ գրաշարին գործը դիւրացնելու համար :

ՉԵԿՈՑՑ ԳԱՂԹԱՀԱՅ ԴՐԱՍԵՆԵԱԿԸ

Հայ Գաղթականաց գրասենեակին տնօրէնը վերջերս այցելած է Լիոնի, Վալանսի, Մարսիլիոյ եւ Նիսի հայկական գաղութներուն ծանօթանալու համար անոնց կացութեան եւ կարիքներուն իրենց պէս նաեւ իմանալու համար թէ ինչ գործունէութիւն ունին հանրային այն մարմինները որոնց նպատակ կը յատկացուի Նանսէնեան վկայագիրներուն գնումէ հաստատութեան հասոյթէն յօգուտ վերոյիշեալ քաղաքներուն մէջ բնակող հայ գաղթականներուն : Վարչական թուղթերու կամ գանձան վկայագիրներու ստացումը դիւրացնելու նպատակով, կեդրոնական վարչութիւնը ներկայացուցիչներ նշանակած է այդ քաղաքներուն մէջ :

Այս վերջիններուն մէջ գտնուող հայ ազգային միութիւնները յանձն առած են վկայագիրներու համար իրենց ներկայացուած խնդրանքները փարիզի կեդր. գրասենեակին յղել :

Կեդրոնական գրասենեակը կը յանձնարարէ, հետեւաբար, վերոյիշեալ շրջաններու բոլոր գաղթականներուն որ դիմեն տեղական ազգային մարմիններուն որոնց հասցէները հետեւեալներն են.—

Union Nationale Arménienne de Lyon et des Environs, 69 rue Louis Blanc, Lyon (Rhône) :

Union Nationale Arménienne de Valence et des Environs, 4 rue Bouffier, Valence (Drôme) :

Union Nationale Arménienne de Nice et des Environs , 38bis Bld. Victor Hugo, Nice (A. M.):

ԳԱՂՈՒԹԻ ԳԱՂՈՒԹ

Պոլսոյ վերջին թղթաթերէն կ'իմանանք թէ Տիարպէքիրի հայ համայնքի Աղբատախնամ մարմինը գրած է արտաուղ նամակ մը՝ ուր կ'յայտնի թէ 30ի մօտ գաղթականներ հոն ժամանած ըլլալով առժամարար պատսպարուած են տեղւոյն Ս. Կիրակոս եկեղեցիի մէկ կալուածին մէջ : Եկեւորները դուրկ են նիւթական ամէն միջոցէ մինչդեռ հազած գիցուոիները բաւական չեն զանոնք պաշտպանելու ձմրան խստաչունչ ցուրտին դէմ : Գաղթականներուն մէջ կան նաեւ անչափահաս երախաներ, որոնք մկրտուած են տեղւոյն Արսէն քահանային կողմէ : Տիարպէքիրի հայութիւնը հակառակ իր նեղ պայմաններուն կարելի օժանդակութիւնը ընծայած է իր ակուռ ազգակիցներուն, քիչ թէ շատ ուռեստեղէն հայթայթելով անոնց :

ԼՈՆՏՈՆԷՆ ԿԸ ԳՐԵՆ ՄԵԶԻ.— Վերջերս կրկնուցինք մեր գաղութին ամէնէն տարէց անդամը, պարոն Կիւլպէնկ Կիւլպէնկեան, 95 տարեկան : Այս առթիւ փոխան ծաղկեպսակի Լիբանանի Ազգ. բուժարանին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները — 5ական սթերլին՝ Բ. Շահինեան , Շահպենտէրեան եւ Իսմիթլեան ընտանիքները, 3 սթերլին Պ. Ա. Թօսունեան եւ մայրը, 2 ոսկի երկու չիլին՝ Տիկին Ասլանկիւլ եւ զաւակները, 2ական սթերլին Պ. Լ. Եադուպեան եւ Տէր եւ Տիկին Ճ. Ամասեան, 1 սթերլին Տէր եւ Տիկին Դերձակեան, իսկ Տէր եւ Տիկին Վ. Ունճեան, Տէր եւ Տիկին Հ. Ունճեան եւ Տոքթ. Գ. Կիւլպէնկեան 30 սթերլին , ընդհ. դումար 55 ոսկի 2 չիլին : Հանդուցեալին աղջիկը, Տիկին Ա. Ունճեան, Թոռները եւ համայն ազգականները իրենց չնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր նուիրատուներուն :

ՅԱՌԱՋԻ ԹԵՐԹՈՆԸ

ԼՍԱ ԵՒ ՀԱՄԱՑ

(ԽՈՐՀՐԴԱՎԷՊ)

Ա. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԳԱԼ

Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

— Ձե՞ս լսեր իր ձայնը... : Ան կը խօսի գաղտնի լեզու մը, լուռ ու համր... : Աստուածներուն լեզուն՝ բարձրագոյն ու պերճախօս : Պայծառ մըրիկ՝ մեղի պէս ուղեկորոյսներու գլխին, չանթահարիչ կայծակ՝ սեւաթաթախ ամպերու կարաւանին : Մտիկ ըրէ, ի՞նչպէս ուժգին կը բողոքէ մոլար վարդապետութիւններու, մանաւանդ ինքը մոլորեցնողներուն դէմ :

— Եկուքէն մէկը... այս բաները կամ չատ խելօք մարդու խօսքեր են եւ կամ խեղճի ... պիտի հալցնեմ վանահօր, այս գիշեր ...:

ՓԼՈՐԻԿ : Այս գիշեր չնագայլ մը երկար ատեն ոռնաց խցկիկս մօտ ... գէշ նշան : Առաւոտուն նեղ հով մը պատին վրայէն վար առաւ կանոն տվիլը ու գիտին փռեց պատատելով : Դարձ ալ գէշ նշան... : Կէս օրին, լուր տուին , որ վանահօր ներկայանամ... աւելի գէշ :

Գիտեմ, այս օրը կայծքարով է բռնկած : Ջերմութիւն, տենդ ու բոց... : Ձեմ գիտեր ճակատագրական վախճանը այս լուսաշարժ տարրերուն : Լո՞յս թէ խաւար... : Միայն գիտցածս այն է, որ պէտք է ներկայանալ հաւատացեալական առանին ու դիմաստրել անխուսափելին... : Ու ըերթամ :

— Գովեալ է Աստուած... վանահայր ...

— Խաղաղութիւն ընդ քեզ, հայր Եսայի :

Բայց խաղաղութեան տեղ խռովք, որ չարաչուք ուրուականի մը պէս իր դէմքին վրայ ներսած, կը մաղէ ամպ ու կայծակ :

— Հայր Եսայի, դիտես որ միաբանական կանքը հոգեւոր կղզիացում մըն է, մեղքին գարշելի ալիքներէն ու աշխարհիկ ալեկոծութիւններէն, իսկ վանական օրինադիրքը համազօր Նովսէսի Տաճնարանեային :

— Այո, այդպէս է ...:

— Այս սրբազան մենաստանին անդորրութեան դէմ ոեւէ մեղանչում եւ կանոնադրական տ ե է բռնաբարում, ենթակայ են խստագոյն պատժարկութեան :

— Այդպէս է...:

— Իսկ ոսկորի մը բերանը լեզու դնել ու խօսցնել, կարգ մը նորահանուկ, հակասական վարդապետութիւններով միաբանակիցներ գայթակղութեան մատնել... սա, առնուազն դաւաճանութիւն է :

— Այդպէս չէ վնահայր... : Այդ մեռելին գանկը աւելի կենդանի է քան հայր Ս ոնը, աւելի իմաստուն եւ ճշմարտախօս՝ քան ամբողջ միաբանութիւնը ...:

Վանահայրը չբացաւ, անյայտացաւ էր կարծես : Անսպասելի վատ երազ մը, չորցած տերեւի մը կերպարանափոխուր էր ինքը : Դէմքը ծռմռեր, բերանը չրթներէն հեռացեր, մօրուքին թելերը ակռաներուն տակ սեղմեր, գլուխը երկու ձեռքերուն մէջ թաղուեր էր :

— Վանահայր, ինչ որ այլաբանօրէն խօսած եմ, մտքիս բանալիները խորհուրդին մէջ մխրճած մեկնաբանեմ պարզօրէն : Հայր Աստուած , Որդի Աստուած, Հոգին Սուրբ Աստուած՝ հաւատարակից, համազոյակից եւ բնութենակից ...:

Ահա, եռապետութիւնը քրիստոնէութեան : Եռապետութիւն մըն ալ մարդը, ինքը: Հոգի, միաք եւ մարմին : Համաստեղծ, համարժէք եւ անբաժանելի : Արարչագործութեան այս սրբազան խորհուրդը անդամահատել, միաքը բթացնել, մարմինը փտեցնել ու միայն կուրօրէն հոգիին հաւէն վազել... այո, Աստուածարեալ եռապետութիւնը քուրձապատ միաբանութեան մը վերածել, ուր տիեզերական, անյեղլի օրէնքները չղթայակապ կը մռնչեն, ուր իմացականութիւնն ու դատողութիւնը բանտուած կը հեծեծեն... այս չէ՞ ձեր գործը :

— Բայց այլ է կրօնքը, այլ է վիլիսոփայութիւնը :

— Ոչ, ոչ, ամենեւին... կրօնքը հոգեկան ըղգացում մըն է, թիկունքը հաւատքի ապառաժին տուած, չոր հոգին տակ թաղուած հին քաղաքներու նման, որչափ սերտես, այնչափ կը մերկանայ իր վեհութենէն : Ու մենք առանց հաւատքի, չոր ու ցամաքի վրայ նետուած ձուկերու կը նմանինք :

— Լսեցէք, վանահայր... : Կար ու չկար թագաւորանիստ քաղաք մը կար, ուր ոսկին պալատներու վրայէն կը հոսէր լուսաստրակի :

ամէն ,, սակայն տակաւին խմորումներ տեղի կ'ունենան կառավարական շրջանակներուն մէջ : Ցալտարիս կ'աշխատի հեռացնել 87 տարեկան վարչապետը, Սօֆուլիս որ պետն է ժողովրդական կուսակցութեան : Կրիզուըլտ հասկցուցած է օրուան վարչապետին որ Ցունաստան պարտաւոր է վերջ տալ կուսակցական պայքարին :

Ամերիկեան կառավարութիւնը «ազատ արձակած» է Ցունաստանի ոսկիի մթերքը որ կը դտնուի Նիւ Եորք, թղթադրամին թաւալզլոր անկումը կասեցնելու համար : Միեւնոյն ատեն նոր յանձնարարութիւններ եղած են կառավարութեան որպէսզի տնտեսական կարգ մը բարեկարգումներ կատարուին :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊՈՒԼԿԱՐԻՈՑ վարչապետը, Կէորկի Տիմիթրով, երկուշաբթի օր կարեւոր ճառ մը խօսելով, յայտարարեց թէ «Պուլկարիա կրնայ դաս տալ արեւմտեան աղգերուն թէ խաղաղութիւնը ինչպէս կը պահպանուի եւ աշխատաւորներու բարօրութիւնը ինչպէս կ'իրականանայ» : Վարչապետը նոր վերադարձած էր Պուքրէշէն ուր պացած էր բարեկամական դաշնագիր մը ստորագրելու համար Ռումանիոյ համաձայնաւար կառավարութեան հետ : «Եուկոսլաւիոյ, Զեխոսլովաքիոյ , Լեհաստանի , Հունգարիոյ, Ռումանիոյ եւ Պուլկարիոյ մէջ ոչ գործադուլ կայ, ոչ տնտեսական տագնապ, ոչ ալ քաղաքացիական կռիւ, ըսաւ Տիմիթրով : Այդ բոլոր չարիքները կը գտնէք Թրումընի վարդապետութեան եւ Մարշըլի ծրագրին ենթակայ երկիրներուն մէջ : Ցարաճուն ռնդործութիւն, թշուառութիւն, աղքատութիւն — ահաւասիկ հետեւանքները արեւմտեան ժողովրդավարութեան դոր կ'ուզուի մեզի պարտադրել » :

ԱՆԴԼԻՈՑ արտաքին նախարարը, Պ. Էրնէսթ Պէվին, վաղը խորհրդարանին պիտի ներկայացնէ կառավարութեան նոր քաղաքականութիւնը որ արդիւնքն է Ցորս արտաքին նախարարներու խորհրդաժողովներուն յաճախադէպ վիժումներուն : Դիւանագիտական շրջանակներու մէջ դիտել կը տրուի որ նախարարը պիտի չհլսէ Ամերիկայի եւ Անգլիոյ ինչպէս նաեւ արեւմտեան ազդերու սերտ գործակցութեան անհրաժեշտութիւնը, բայց պիտի «չդոցէ բոլոր դուռները» : Պ. Պէվին պիտի դատապարտէ Խորհրդային Միութեան ներկայ քաղաքականութիւնը , ինչպէս քանի մը չաբաթ առաջ ըրին վարչապետն ու փոխ – վարչապետը, բայց, միեւնոյն ատեն, պիտի առաջարկէ նոր խորհրդաժողով մը : Նախարար պիտի խօսի Ցունաստանի, Պաղեստինի եւ ընդհանրապէս Եւրոպայի տնտեսական կացութեան մասին :

ՀԱՄԱԶԱՅՆ Լոնտոնէն հասնող լուրերու, Անգլիոյ նախկին փաշական կուսակցութեան պետը, Սըր Օզուըլտ Մոզլի, լուրջ աշխատանքներ կը կատարէ վերակենդանացնելու համար իր կազմակերպութիւնը : Սըր Օզուըլտ անցեալները յայտարարեց թէ 51 դանագան մարմիններ առաջարկած են իրեն որ վերակազմէ իր կուսակցութիւնը : Այս մասին յայտարարութիւն մը պիտի ընէ մօտ օրէն :

ՀՌՈՄԷՆ կը տեղեկացնեն թէ բարձրաստիճան Ամերիկացի զինուորական մը յայտարարած է թէ Միացեալ Նահանգներ նաւային կարեւոր ձեռնարկներու սկսած են Միջերկրականի աւազանին մէջ՝ «տրուած ըլլալով մեր պատասխանատուութիւնները այդ շրջաններուն մէջ» :

ՊԵԼԿՐԱՏԻ զինուորական դատարանը մահուան դատապարտեց Սերպ քահանայ մը ամբաստանած ըլլալով թէ օժանդակած էր ահաբեկչական ընկերակցութեանց, 1946ին եւ 1947ին :

ՆՈՅԵՄԲԵՐ 29ԷՆ Ի ՎԵՐ 900 հոգի սպան – նուած են Պաղեստինի մէջ : Եօթը հոգի սպաննուեցան երկուշաբթի օր երբ Արաբները յարձակում գործեցին հրէական թաղօրի մը վրայ՝ Երուսաղէմի մէջ : Եգիպտացի կին մը եւ 12 տարեկան Արաբ աղջիկ մը սպաննուեցան երբ ձիաւոր ոստիկան մը նետեցին Ռադիօ Եամ էլ Ամիր դիւղին վրայ : Հայֆայի նաւահանգիստին Հրեայ եւ Արաբ աշխատաւորներուն միջեւ ընդհարում մը տեղի ունեցաւ : Արաբական Գերագոյն Մարմինը պաշտօնապէս հաղորդեց Միացեալ Ազգերուն որ իրենք պիտի չմասնակցին Պաղեստինի բաժանման շուրջ կատարուող բանակցութեանց, հետեւաբար կը մերժեն այդ առթիւ իրենց ղրկուած հրաւէրը :

ՎԻՆՆԱՑԻՆ կը հաղորդեն որ Խորհրդային իշխանութիւնները 100 առ հարիւր բարձրացուցած են իրենց հակակշիռին ենթարկուած Ցիսթէրտորֆի հանքերէն Աւստրիոյ յանձնուելիք քարիւղին գինը : Բացատրուած է Վիէննայի կառավարութեան որ մէթ չընդունին նոր սակացոյցը, քարիւղ պիտի չտանան : Եթէ գինը ընդունելի հետեւանքը պիտի ըլլայ ապրուստգիներուն անխուսափելի յաւելումը : Ամերիկա ամսական 4-5000 Թոն քարիւղ կը յանձնէ Աւստրիոյ, Թոնը 55 տոլարէն, Ռուսերուն այսօրուան գինն է 93 տոլար որ հիմա պիտի բարձրանայ 200ի :

Ցուղարկաւորական

Ֆր. Կ. Ալէի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը, տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24, Hôtel Continentalի չքեղ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde :

Նուագախումբ ՖԷՐՆԱՆ ՊՈՒՑՕՆ : Գեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ :

Տարեկան շքեղ ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Մխիթեան Կազմիր Ալէի եւ Ղրախնամի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէջ, 43 Bld. Raspail, Paris :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇՐԶԵԼ ՑԵՐԵԿՈՑԹ

Նախաձեռնութեամբ՝ Սերաստիոյ Նահանգային Մխիթեան, վաստակաւոր դերասան՝ ՏԻԴԱՍ ՆՇԱՆԵԱՆի, մասնակցութեամբ Փարիզի հայ բեմի լաւագոյն ուժերուն, 8 Փետրուար 1948, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Մաքսըլէն Պէռճըլօի չքեղ թատրոնին մէջ, 28bis, rue St. Dominique, métro Invalides :

Առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէ հանճարեղ ողբերգու Վ. Շէյքսփիրի

ԱՐՔԱՅ ԼԻՐ

Պատմական ողբ 6 արար եւ 2 պատկեր, թարգմ. եւ բեմադրութիւն Տ. Նշանեանի :

Տոմսերու գիները, 100էն 400 Ֆրանք, կը ծախուին հայկական բոլոր գրատուներէն, Ճաշրանները, Սէր. Նահ. Մխիթեան կեդրոնին եւ մասնաճիւղերուն մօտ : Հարիւրին տասը պիտի յատկացուի Սէր. Նահանգ. Մխիթեան ներդաղթի Փօնտին : Սրահին ջեռմութիւնը ապահովուած է : Փետռել յայտագիրը :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՐԶԵԼ ՑԵՐԵԿՈՑԹ

Կազմակերպուած Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Սէվրանի մասնաճիւղին կողմէ, կիրակի 7 Մարտ 1948, ժամը 3էն 12, Casino des Etoiles, Մասիս օթըրահին մէջ, 87 Ave. de Livry, à Sevran :

Գեղարուեստական հաճելի բաժին : Խմբերդ , ներկայացում եւ անակնկալներ, եւրոպական պարեր : Ճոխ պիւֆէ : Մուտք՝ 75 Ֆր. :

Հաղ. միջոց — Կառախումբ Gare du Nordէն ժամը 13.45ին եւ 14.15ին : Eglise de Pantinէն 147 թիւ օթօպուս, իջնել Terminus :

ՄՈՒՐԱՏ ՐԱՓԱՑԼՆԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ հաւատարիմ իր ծրագրին, որ է ծաւալել հայ ժողովուրդին մէջ ազգային մշակոյթը, որոշած է պարբերաբար բանախօսութիւններ սարքել Սեւրի Մուրատեան վարժարանին մէջ, 26 բիս Թրուայօն, Սէվր :

Առաջին բանախօսութիւնը տեղի կ'ունենայ 1 Փետրուար կիրակի ժամը 15.30ին : Պիտի բանախօսէ Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեան : Նիւթ ունենալով «Հայ ցեղին ծագումը » :

ՑԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՑ

Նուիրուած Թենիա Վարդանեանի

Այս հինգշաբթի երեկոյ 22 Յունուար ժամը 21ին, Maison de la Mutualité G. սրահին մէջ :

Բանախօսութիւն, արտասանութիւն, երգ , նուագ :

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ հաղար Ֆրանք կը նուիրեն Հ. Ց. Դ. Նոր Սերունդ Քաշանի մասնաճիւղին, Տէր եւ Տիկին Գր. Քանանեան հազար Ֆրանք Ֆր. Կապոյտ Խաչի Քաշանի մասնաճիւղին փոխան Ծաղկեպսակի Պ. ԲԱՐՍԵՂ ԴԱԶԱԶԱՆԵԱՆի մահուան առթիւ : Սաանալ «Ցառաջ»էն :

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ հոգեւոր առաջնորդը, Մահմատ Կանտի վերջ տուաւ իր կամաւոր ծոմապահութեան, խոստանալ սուացած ըլլալով որ պիտի յարդուին յանուն խաղաղութեան իր կատարած յանձնարարութիւնները : Կանտի ծոմ պահեց 121 ժամ : Ցմահ ծոմ մնալու իր որոշումը եւս առնելէ առաջ, Կանտի տեսակցութիւն ունեցաւ Հինդիստանի վարչապետ Ճաւահարլալ Նեհրուի հետ որոնք խոստացան ամէն բան ընել արիւնահեղութեանց առաջքը առնելու համար :

ՑՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Ց. Դ. «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» Փարիզի մասնաճիւղի դասախօսութիւնը, այս հինգշաբթի ժամը 9ին, Société Savantesի մէջ : Կը խօսի ընկ. ՀՐԱՆՏ ԲԱԼՈՒԵԱՆ : Նիւթ՝ «Աչխատանքն ու Աչխատանքային հայ ժողովրդական երաժշտութեան մէջ» : Հայերէնի դաս 8—9 :

ԱՆՈՒՇԸ

Կիրակի 25 Յունուար 1948, ժամը 14.30ին

ՄԻԽԹԻԽԱԼԻԹԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Մեծ պատրաստութեամբ եւ խնամքով Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆի մահուան 25ամեակին առթիւ :

Փարիզի հայկական երգչախումբին կողմէ ՍԷՆՖՈՆԻԿ մեծ նուագախումբ (60 Հոգի) :

Ղեկավարութեամբ ԱՐԱ ՊԱՐԹԻԵԱՆի



Անուշի դերը կը կատարէ Օր. ԱՆԺԷԼ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, Ա. Grand prix Wicard de la Ville de Marseille :

Ներկայացումը կը սկսի ճիշդ ժամուն : Նուագի պահուն դուռները փակ կը մնան :

ՓՈՐԹ Տ'ԻԹԱԼԻԻ Հ. Ց. Դ. Մ. Եօթնեղբայրեան խումբը իր ցուցակցութիւնները կը յայտնէ ընկերներ Թորոս կարապետեանի, Մովսէս եւ Օնիկ Տէմիրճեանեանց իրենց մօր եւ մեծ մօր տխուր մահուան առթիւ :

ԾԱՆՕՒ Է կօշկակարի (Bottier) խանութ մը լիսանսով, եւ քնակարանով :

Մանրամասնութեանց համար դիմել Պ. Chukurianի, 56 rue Genève — Arles sur Rhône :

ՖՐ. ԿԱՊՈՑՑ ԽԱՉԻ Իսիի մասնաճիւղը իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ Փարիզաբնակ Տէր եւ Տիկին Հայկազուն Հալաճեանի որ դեղեցիկ գաշնակ մը նուիրեցին մասնաճիւղին Խըրիմեան ղպրոցին :

ՏԷՐ ԵՒՏԻԿԻՆ ԵՂԻԱ ԵԶԻԿԵԱՆ Խարբերդի Հապուսի գիւղին իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, ընդրաւոր եւ ծաղկեպսակով ցաւակցութիւնը յայտնեցին իրենց վաղամեռիկ զաւկին քսանամեայ ՊԵՏՐՈՍ ԵԶԻԿԵԱՆի կսկծալի մահուան առթիւ :

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆի ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴԸ : Մինչեւ այժմ լոյս տեսած եւ բաժանորդներուն ուղարկուած են առաջին, երկրորդ եւ չորրորդ հատորները : Մարտին լոյս պիտի տեսնէ երրորդ հատորը, իսկ ապրիլին հինգերորդը : Ամբողջական գործը պիտի բաղկանայ 10 հատորներէ, որոնք պիտի պարունակեն հոդիւածներու բոլոր գեղարուեստական գործերը : Տասը հատորներու բաժնեգինը Ֆրանսայի համար 6000 Ֆրանք կանխիկ :

Բաժանորդագրուելու համար դիմել «Ցառաջ»ի վարչութեան :

ՏԱՐԵԿԱՆ ՇՐԶԵԼ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Վիէննի Հ. Մ. Ը. Մ. մասնաճիւղին կողմէ : Այս չաբաթ իրիկուն Hôtel de la Posteի չքեղ սրահներուն մէջ : Մուտքը 125 Ֆր. :

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Jeudi 22 Janvier 1948 Հինգշաբթի 22 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5246–Նոր շրջան թիւ 855 Խմբագիր՝ Շ. ՄԻՍԼԱԿԵԱՆ ԳԻՆ՝ 5 ֆր.

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ՓԱՍՏԱԲԱՆԸ

Երեք ամիս քար լռութիւն պահելէ եւ իր յօդուածագիրներուն վողոցային անհամ ու ղըզուելի քաշքշուքներով վիշինսքիի ծանօթ յայտարարութեան վաւերականութիւնը կասկածի տակ դնող «դոկտորը», օրը իրիկուն ըլլալէ ետք քանի մը վերջապէս բերնին կապերը, հաւերը խնդացնելու համար ...

Եթէ հաւատաք իր բարբանջանքներուն .—

Ս.— Միացեալ Ազգերու քաղաքական յանձնաժողովին հոկտեմբեր 24ի նիստին ատենապետութիւնը պատրաստողները ստախօս են քանի որ Ռուսիոյ պատուիրակին բերանը դրած են անոր չարտասանած բառերը՝ Կարսի եւ Արտահանի մասին :

Բ.— Ստախօս են «Նիւ Եորք Թայմզ»ը, «Նիւ Եորք Հէրըլտ Թրիպիւն»ը, Լոնտոնի «Թայմզ»ը, «Տէյլի Մէյլ»ը, «Թրիպիւն»ը, «Շիքակօ Թրիպիւն»ը, Ուոշինկթընի թերթերը եւ մնացեալ ներ :

Գ.— Ստախօս են ռուսական «Թաս» գործակալութիւնը, «Փրաւտան» եւ «Իզվեստիան» :

Դ.— Ստախօս է նաեւ Նիւ Եորքի նախկին փոխ – հիւպատոսը Պ. Ապրեսեան որ բառ առ բառ թարգմանած է Պ. Վիշինսքիի ճառը հիւպատոսարանին նոյեմբեր 25ի ընդունելութեան մէջ — « Զըսի նաեւ թէ Կարսն ու Արտահանը Հայաստանի կը պատկանին» :

Տասը աղբիւրէ վկայութիւն բերինք կամաւոր կոյրերուն աչքը բանալու եւ Պ. Վիշինսքիի յայտարարութեան վաւերականութիւնը ապացուցանելու համար :

Չկրցաք կշտուած խմբագիրներն անգամ փոր – ձեցին հակազրել համաչնաւոր վարժապետին թէ Խորհրդային Միութեան պատուիրակը արտասանած է իրեն վերագրուած բառերը . —

« Կարսն ու Արտահանը անվիճելիօրէն վրացական են եւ պէտք է կցուին Վրաստանին» :

Եւ սակայն, Վիշինսքիի անճարակ փաստաբանը իր փաթրոնը ազդարարելու առաջադրութեամբ, առանց կարմրելու, կը պնդէ տակաւին որ այդ տեսակ բան ըսած չէ եւ դաշնակ մամուլն է որ մեծ դիւանագէտին կը վերագրէ այդ յայտարարութիւնը :

Որովհետեւ հակադաշնակցական ախտէ վարակուած «դոկտորը» հրահանգ ստացած է որ կրցածին չափ թուղթ մրոտէ Դաշնակցութիւնը վարկաբեկելու համար :

Որ քարին կ'ուզէք զարկէք ձեր գլուխը, պարոնայք համայնավարներ, Դաշնակցութեան վաստացի տեղեկութիւնները ջրելու եւ արտասահմանի զանգուածը խաբելու համար :

Անօգուտ է :

Եթէ Խորհրդային Միութիւնը ուզէր գոհացնել հայ ժողովուրդին հողային պահանջները իր սահմաններէն ներս կամ իր սահմաններէն դուրս, այդ իմաստով ալ կ'արտայայտուէր միջազգային խորհրդաժողովներու մէջ :

Եթէ Խորհրդային Միութեան համար Հայաստանի հողային ընդարձակումը անհրաժեշտ նկատուէր, չատոնց լուծուած կ'ըլլար ներքին սահմաններու խնդիրը :

Ոչ միայն Ղարաբաղը, Ախալքալաքը կամ Նախիջեւանը այսօր մաս կազմած կ'ըլլային մեր հայրենիքին այլ տարիներ առաջ իր ջարդարար վինակցութեան յանձնուած չէին ըլլար Կարսն ու մնացեալը :

Այսօր, քանիը եօթը տարի վերջ, Մոսկուայի կառավարութիւնը ոչ միայն անտարբեր է մեր հիմնական պահանջներուն նկատմամբ, այլ ահաւասիկ, իր պաշտօնական ներկայացուցիչին բերնով, խոշոր պատառ մը ալ կը վերապահէ դրացի Վրաստանին :

Ցոյց տուէք մէկ հիմնական միջոց որուն դիմած ըլլայ Մոսկուայի կառավարութիւնը երեք տարիէ ի վեր, արժեւորելու համար մեր հողային պահանջները որոնք հիմնուած են Սէվրի դաշնագրին վրայ :

Այս ու այն հայ քարտուղարին պղատոնական եւ անպաշտօն յառաջարկութիւնը ի նպաստ մեր դատին, այնքան արժէք ունին որքան կաթողիկոսին սրտառուչ մաղթանքները ու բաղձանքները :

Մենք չենք հաւատար որ հայկական հարցին այս ու այն «մասը» լուծուած է ներկայ Հայաստանի գոյութեամբ կամ նոյնիսկ ներգաղթով :

Տարիներ առաջ «հող չունինք, ներգաղթ չենք կրնար կատարել » պատասխանող երեւոյթը — իմա Մոսկուան — ի՞նչ ծրագիր կը մշակէ այսօր մեր սահմաններու ընդարձակման մասին :

Ոչ մէկ : Անվիճելիօրէն հայկական Կարսն ու Արտահանը պարզելու տրամադրութիւնը — կամ այդ մասին տրուած որոշումը — ի՞նչ ապահովութիւն կը ներշնչէ որ Թրքական սահմանին վերաքննութեան պարագային, հայ ժողովուրդը պիտի տիրանայ իր պատմական հողերուն :

Այս հարցին պէտք է պատասխան տան փաստաբանին փաստաբանները փոխանակ Լուր ծնծղալու եւ բամբասելու :

Ժ.

ՕՐԸ ՕՐԻՆ

ԻՆՉ ՁԱՒ ԵՒ ԻՆՉ ...

Երէկ վարչապետի մը ճառը կարդացի թերթերուն մէջ եւ յանկարծ պատմութիւն մը մխաքս ինկաւ : Նախ ճառը սակայն, յետոյ պատմութիւնը :

Պետական այս յարդելի անձնաւորութիւնը նկարագրելով «երկաթէ վարագոյրին» տակի դաւուող եղկելիներու անտեսական եւ ընկերային փայլուն վիճակը, յայտարարած է :

— Կը տեսնէք որ մեր դեմոքրատ երկիրներուն մէջ ոչ գործազուլ կայ, ոչ գործազրկութիւն, ոչ ալքատութիւն, ոչ թշուառութիւն, այլ բոլոր չափերը թրումընի վարդապետութեան եւ Մարշըլի ծրագրի եղեռնակայ երկիրներուն մէջ վիճառեցէք : Մեզ կրնանք դաս տալ արեւմտեան պետութիւններուն թէ ինչպէս կը պահպանուի խաղաղութիւնը » :

Նախ պզտիկ եզրակացութիւն մը այս ճառէն : Ուր թշուառութիւն ոչ աղքատութիւն, ոչ խակզորձազրկութիւն երկրի մը մէջ ուր կաթն ու մածունը , պանրին ու կարագը պատերազմէն առաջ կը յորդէին խանութներու ցուցափեղկերէն, իսկ այսօր կը պատմեն թէ առանց մասին գաղափար չունեցող փոքր մանուկները : «Շոքոլային համար պէտք է բացատրել աղոց թէ ինչ գոյն եւ համ ունէր, կը դրեն «վարագոյրին» ետեւէն : Ճիշդ է որ աղտոտ պուրժուաներն են որ կարեւորութիւն կուտան այդքան ոչնչի բաներու, իսկ պրոլետարներու մէջ մարդիկ կը մնանին Մարքսի եւ Լենինի վարդապետութեամբ որ թրումընի եւ Մարշալի վարդապետութիւններէն այնքան հեռու է որքան կաթն ու պանիրը պոզապէնը, եւ շոքոլան ու չաքարը չուշկայէն (պզպեղ) :

Գալով գործազուրկներուն եւ գործազուրկներուն, իրաւ որ հաւատալիք բան չէ : Բանի աշխատանքի կայաններ չկան անշուշտ այն երկիրներուն մէջ, ուր իշխող կառավարութիւնները այնքան դեմոքրատ են եւ ամէն մարդ այնքան զբաղած որ հրացանաղարկներու եւ կախաղաններու հաշիւն իսկ պահով չես կրնար գտնել :

Բայց սա գործազուրկները ի՞նչ եղած են : Ինչպէս բացատրել որ Ցրանսայի կամ Իտալիոյ մէջ, բոլոր անոնք որոնք հակառակ էին Մարշըլի ծրագրին տասը կտոր եղան գործաւորներու այդ զեղչազոյն իրաւունքը արժեցնելով՝ ձախողեցնելու Մարշալի գործը : Եւ ինչ պատկերազարդ օրինակներ հրապարակ իջան բանտորին աշխատանքի այդ զէնքը պզելու համար : Բայց ոչ իսկ մէկ գործազուրկ այն երկիրներուն մէջ ուր Միացեալ Նահանգներու արտաքին նախարարը օրը տասն անգամ խաչը կը հանուի :

— Ի՞նչու չես ուզեր հաւատալ ու համոզուիլ. այս ինչ զաւեշտն հոգեբանութիւն է, այս որքան թշնամի էք հայրենիքին, եղբայր : Գործազուրկի պէտք չկայ հոն, որովհետեւ ոչ միայն գործաւորը գործազուրկ ընելու պէտք չունի, այդ դուն, հոսկէ, այդ մասը իսկ հասկնալու պէտք չունիս : Հիմա դուն պատմութիւնդ պատմէ տեսնենք». ըսաւ Ցառաջիմական բարեկամս, ու բերանս գոցեցի :

ԱՐԱՄԱԶԴ

ԵԹԷ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ քուէարկէ Եւրոպայի ազգերուն յառաջիկայ 15 ամսուան ընթացքին 6800 միլիոն տոլար յատկացնելու օրինագիծը, Անգլիա պիտի ստանայ այդ դրամարին քառորդը — 1760 միլիոն :

ՎԱՂԸ, ՈՒՐԲԱԹ ԳԻՇԵՐ ԺԱՄԸ 11ին Բատիս Էնթէրփրի վրայ կը նուագէ էքթլ Նորմալէն թաւջուաթահար Պ. Նահապետ Ալաէտտեան :

Թուախա կը քողոքէ

«ԳՕՏԻՆԵՐՈՒ ՄԻԱՑՈՒՄԸ ԿԸ ԲՈՒՆԱԲԱՐԷ ՓՈՑՏԱՄԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ »

Գերմանիոյ ռուսական գօտիին վինուտրական կառավարիչը, մարաշալ Սօքոլովսքի մէջդաշնակցային հակակշիռի խորհուրդին երեքշաբթի օրուան նիստին մէջ ճառ մը արտասանելով ամբաստանեց արեւմտեան Դաշնակիցները թէ կ'ուզեն Գերմանիան երկուքի բաժնել եւ բռնաբարել Փոցտամի մէջ կնքուած համաձայնութիւնը :

Հակառակ վերջերս ըղձան ընող զրոյցներու , մարաշալը չպահանջեց որ Անգլիա եւ Ամերիկա քաշուին Պերլինէն : Ահաւասիկ իր ճառին գլխաւոր մասերը .— «Բրիտանական եւ ամերիկեան կառավարութիւնները քայլեր կ'առնեն Գերմանիան բաժնելու եւ արեւմտեան նահանգներուն մէջ անկախ կառավարութիւն մը հաստատելու համար : Երկու գօտիներուն մէջ ստեղծուած կացութիւնը ներկայիս կը վայելէ դաշնակցային պետութեան մը բոլոր իրաւասութիւնները : Արեւմտեան պետութիւնները, այս կէտին մէջ, դրծած են առանց հակակշիռի խորհուրդին դիտակցութեան : Այս կազմակերպութիւնը կը դժուարացնէ քանակական պոյավճաի մը վերադարձը Գերմանիոյ մէջ : Խորհրդային հրամանատարութիւնը կը պահանջէ, ուրեմն, որ չեղեալ նկատուին եղած կարգադրութիւնները որոնք կը բռնաբարեն Փոցտամի համաձայնութիւնը :

Մարաշալին կարճ պատասխան մը ուղաւ ամերիկեան ուժերու ընդհանուր հրամանատարը, զօրավար Քլէյ որ ցոյց յայտնելէ ետք թէ Ռուսները բոլոր անհրաժեշտ տեղեկութիւնները չտուցած կը բողոքեն, յիշեց արտաքին նախարարին կը – ջերս ըրած յայտարարութիւնները Գերմանիոյ անտեսական կացութեան մասին : Անգլիոյ ներ – կայացուցիչը, զօրավար Բասըրթըսըն մարաշալին ուշադրութիւնը հրաւիրեց Պ. Պեվինի յայտարարութեանց վերայ զորս արտաքին նախարարը ըրած է Լոնտոնի վերջին խորհրդաժողովին մէջ :

Մարաշալը զեռ նոր վերադարձած էր Մոսկուայէն եւ բնականաբար իր կառավարութեան հրահանգներուն վրայ էր որ կը բողոքէր :

«Մարշըլի ծրագրի պիտի փրկէ խաղաղութիւնը»

Ամերիկայի արտաքին նախարարութեան խորհրդական եւ Միացեալ Ազգերու ամերիկեան ներկայացուցիչ, Պ. Ճան Ֆոսթըր Տալլես, Մերսկոյի Արտաքին Ցարաբերութեանց Ցանձնաժողովին երեքշաբթի օրուան նիստին մէջ խօսք առնելով յայտարարեց թէ Մարշըլի ծրագիրը քայլ մըն է դէպի խաղաղութիւն : Եւրոպայի ազգերը ապաքինումի մէջ են, ըսաւ Տալլես : Խորհրդային Ռուսիոյ ղեկավարները ամէն միջոցի կը դիմեն — բացի պատերազմէն — հաւաստելու համար որ այդ ազգերուն ստացած վէրքերը մահացու են : Ռուսիա հաւանաբար յաջողի իր ձեռնարկներուն մէջ եթէ Միացեալ Նահանգները քայլեր չառնեն հիւանդ երկիրներուն օգնելու : Ես վստահ եմ որ եթէ, յանուն խնայողութեան, մենք հրաժարինք օժանդակութեան մեր ծրագիրէն, հետեւանքը պիտի ըլլայ այն որ ապագային պիտի ենթարկուինք չատ աւելի մեծ ծախքերու : Խորհրդային վարիչները կ'ուզեն հաւաստացնել թէ Եւրոպայի ազատ կարծիքը ելլուզումի մօտ են ու եթէ իրենք յաջողին առնելու թեթեւ հարուած մը տան, Եւրոպան պիտի քայքայուի : Կը թուի թէ համայնավար գաւակցութիւնը պատրաստ է, ի վիճակի եւ տրամադիր՝ այդ տեսակ հարուած մը իջեցնելու : Քաղաքական պատակտումը յառաջ պիտի բերէ տնտեսական քայքայում մը հետեւաբար անհրաժեշտ է որ տեսակ մը մաքսային եւ դրամական համաձայնութիւն դոյանայ արեւմտեան Եւրոպայի երկիրներուն մէջեւ, Գերմանիան ալ միասին : Այդ միջոցով միայն կարելի է ներկայ թշուառութիւնը բարօրութեան վերածել, մանաւանդ երբ Ափրիկէի աղբիւրներն ալ օգտագործուին այդ միութեան ի նպաստ : Անհրաժեշտ է նաեւ որ քաղաքական միութեան ծրագիրն ալ իրականանայ որպէսզի այդ երկիրները միացեալ ճակատ մը ունենան որեւէ թշնամիի դէմ : Միացեալ Ազգերը առաջուին այդ ուժը չունին :

Տալլես, իր ճառին ընթացքին, յանձնարարեց որ Գերմանիոյ մէջ ի գործ դրուելիք քաղաքականութեամբ զբաղի արտաքին նախարարութիւնը՝ «առանց յապաղումի» : Խորհրդականը աւելցուց նաեւ որ «եթէ համաձայնութիւնը գրուեն Լոնտոնի, Ամերիկա հարկադրուած պիտի ըլլայ ձախսելու անհաւատալի միլիառներ որուն հետ բաղդատելով, Մարշըլի ծրագրով պահանջուած գումարները «կաթիլ մը ջուր» են :

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Ի. էջ)

Լենինն ու Ստալինը ինչպես ազատեցին Հայաստանը

(Բ. եւ վերջին մաս)

Մարտի համաձայնավար եւ թաթարական ընդհարումների ժամանակ մօտ 10.000 թաթարներ (Թուրքեր) ապաստանեցին Բագու քաղաքը դատարկուեց նրանցից: Նրանք էլ իրենց վրէժը լուծեցին Շամախի եւ Գօքչայ գաւառների Հայերից, որոնք աւելի շատ կորուստներ տուին քան Թուրքերը տուել էին Բագուում եւ շրջակայքում :

Համայնավարները մինչեւ Բագուի Օսմանեան բանակի կողմից գրաւուելը (1918 Սեպտեմբեր) ունեցան Հայերի անկեղծ գործակցութիւնը եւ Բագուի կարմիր բանակը Կովկասի կարմիր բանակ անունով սկսեց արշաւանք գրաւելու համար Բագուի ամբողջ նահանգը, ինչպէս եւ Գանձակը, որ Ազէրբէյճանի կառավարութեան ժամանակաւոր մայրաքաղաքն էր դարձել :

Կովկասի կարմիր բանակը սկզբներում գրեթէ այնքան Ռուս, ինչքան Հայ զինուորներ ունէր եւ քանի յաջողութեամբ առաջ էր գնում, Ռուսները բանակում մնացին, բայց Ելիսաթի առաջ կարմիր բանակի Օսմանեան բանակից կրած պարտութեան հետեւող նահանջից եւ այդ պարտութեան հետեւող նահանջից յետոյ ռուս զինուորների թիւը օրից օր պակասեց բանակում, նոյնպէս էլ Ռուս քաղաքացիների թիւը օրից օր պակասեց Բագու քաղաքում եւ շրջակայքում: Ռուս զինուորները եւ ռուս քաղաքացիները վախչում էին դէպի Ռուսաստան Հայերին մենակ թողնելով Բագու արշաւող Օսմանեան բանակի եւ նրան օգնող Թուրքեւթաթար (Ազէրբէյճանցի) զինուած կամաւորների դիմաց:

1918 Թուի Օգոստոս ամսին Օսմանեան բանակը արդէն Բագուի պաբիսայներէ տակ էր, նրա դէմ կանգնած էր միայն Հայերից մի բանակ մօտ քսան հազար հոգուց բաղկացած եւ քաղաքումն էլ Ռուսների թիւը այնքան էր քչացել, որ քաղաքը հայկական քաղաքի տպաւորութիւն էր թողնում: Չէ՞ որ Թուրքեւթաթարներն էլ Բագուն գրեթէ դատարկել էին 1918 Թուի Մարտի դէպքերից յետոյ:

Բագուն իր նաւթային հարուստ շրջանով պաշտպանում էին Հայերը Ռուսաստանի համար, որովհետեւ այդ քաղաքը եւ նրա նաւթային շրջանը երբեւիցէ նոր անկախ յայտարարուած Հայաստանին միանալու ոչ մի կարելիութիւն եւ հաւանականութիւն չունէր: Բագուն Հայերը պաշտպանում էին ռուսական եւ համայնավարական կուսակցութեան ղեկավարութեան տակ, թէեւ կուսակցութեան առաջնորդը մի Հայ էր: Բագուն պաշտպանող կարմիր կոչուած բանակը գրեթէ բացառապէս Հայերից էր բաղկացած, բայց բանակի լեզուն էլ, ղեկավարութիւնն էլ ռուսական էր, եւ, ամենացաւալի եւ զզուելի երեւոյթը այն էր, որ Բագուում գտնուող կասպեան նաւատորմիղի նաւերը ամբողջ կռիւների ընթացքում մի հատ ռումբ էլ չարձակեցին քաղաքը շրջապատող եւ քաղաք մտնելու պատրաստ Թուրք (Օսմանեան) զինուորների վրայ գոնէ Ռուսաստանի համար Բագուն պահող հայ զինուորներին օգնելու համար :

Աւելի զզուելի եւ ցաւալի երեւոյթ էր նաեւ այն, որ Բագուի Խորհրդային կառավարութեան անդամ ազգութիւնս Տյոլօն իր ընտանիքը պահում էր քաղաքի շրջակայքի Թուրքեւթաթար մի գիւղում եւ շաբաթը մի անգամ այցելում էր իր կնոջ Թուրքեւթաթար գիւղում , քաղաքում մնացած սակաւաթիւ Ռուսներն էլ զժգոհութիւն էին յայտնում որ « Հայերը Բագուն իրենց համար պահելով խեղճ ու բարի Թուրքերին կոտորումներն»:

Ահա վերոյիշեալ Հայերի համար շատ ծանր կացութեան օրերին Սթալինը յանուն Լենինի եւ Ընկերութեան Շահումեանին յայտնում է, որ Հայաստանի անկախութիւնը պէտք չէ ճանաչել, բայց Վրաստանի անկախութիւնը պէտք է ճանաչել, թէեւ այդ թէ Ռուսաստանի եւ թէ Հայերի համար ճնշաժամային օրերին Վրաստանը Օսմանեան կառավարութեան վերաբերմամբ բարեացակամ էր եւ վայելում էր զէրմաններէ եւ Օսմանցիներէ բարեացակամութիւնը: Պէտք է չմոռանալ, որ Սթալինը Վրացի է:

Մեր պատմագիրներն ու օրագրողները այս պատմական չատ բարձր աղաղակող փաստերի մասին էլ լռում են դրեթէ :

●

1918 Թ. Սեպտեմբերի 5ին ընկաւ Բագուն Թուրքերի (Օսմանցիների) ձեռքը :

Քանի՞ ամիսից մի քանի օր առաջ քաղաքը պաշարող Օսմանեան բանակի սպայկոյտի պետը, Մուրսէլ փաշա, Հայոց Ազգային Խորհրդին է դիմում մի նամակով, որով առաջարկում է քաղաքը թող յանձնել 48 ժամ յետոյ, խոստանալով ոչ մի վնաս չհասցնել Հայերի գոյքին ու կեանքին եւ թոյլ տալ, որ հայ զինուորները իրենց զէնքով եւ ռազմամթերքով անցնին Հայաստան, հակառակ պարագային քաղաքը գրաւուելու դէպքում Մենակ, ինչպէս ըսինք, մարդ կր ամաչէ պատմական այդքան աշխատելէ յանուն քրիստոսեան ոչ անօթի փորին :

Ահա այսպէս էր մեր քիւրտ քրիստոսեաններուն բարի սովորութիւնը, որ մենք կը տանէինք սիրտով, ու չեմ գիտեր թէ՝ պէ՞տք է մեղադրել զիրենք իրենց այդ ոճակութեան համար, կամ արդարացնել ամէկոտութեան, անհամարձակութեան կամ իրենց տոհմիկ սովորութեան վերադրելով :

Սակայն մենք այդ սովորութիւնը չունէինք : Ու ես փորձով գիտեմ ատիկա թէեւ ըսի թէ՝ մանուկ էի այն օրերուն :

Ասիկա երէկին՝ կր պատկանի այլեւս ... : Մըտիկ ընէք, նաեւ այս օրերու պատմութիւնը :

★

Ամէն անգամ, որ մեր հակառակորդ աղբարիկները կը լսեմ կամ կը կարդամ, յիշողութիւնս ետ, նա կ'երթայ, կը սահի տարիներու երկայնքին ու, րոպէապէս միեւնոյն կուգան մեր այն օրերու բարի ու միամիտ Քիւրտ քրիստոսեանները , որոնք ճաշի ժամանակ «անօթի չենք» կը յարէին սակայն, կը վախնայիր, որ քեզ ալ կրնային կլլել ու իրենց «կուչտ» որովայնին մէջ տեղաւորել :

Հիմակ, մեր խիկարիկ–աղբարիկները, ըլլան անոնք հնչակեան, ռամկավար կամ «Յառաջդիմական» անունը կրողներ, ջրոտած ուղեղով ու չորցած բնրտանով (ներկար խօսելու պարագային), տաքին տատնեղկու ամիս , անդադրում , իրենց բեմերով, մամուլովն ու լիտուրգներովը խորհրդային վարչաձեւին, համայնավարութեան ու Ստալինի փառաբանութիւնը, քարոզութիւնը կ'ընեն, հիացած, զմայլած անոնց անսխալականութեան վրայ: Կ'աստուածացնեն, մեր մոլորակին վրայ ոչ անցեալին մէջ եւ ոչ ալ ներկային անոր հաւասարը գտնելով: Երկրպագած խունկ կր ծըխեն, մոմ կր վառեն անոր կարմիր խորանին առջեւ :

Հնչակեա՞ն է, հնչակեանութեան մասին բան չես լսէր իրմէն... (քանի մը բացառութիւններր յարգելի են): Շարունակ համայնավարութեան փառաբանութիւնը կ'ընէ: Անոր բարիքներուն՝ առաւելութիւններու մասին կը ճառէ, բայց երբ ճակտին կ'ուզես փակցնել «համայնավար»ը, «էհ, ես համայնավար չեմ» կը բղաւէ :

Նոյնը՝ կուա – կուա ռամկավար աղբարիկները: Քիչ մը նուազ... կամ առաւել նաեւ անդիմակ — դիմակով «Յառաջդիմական» հայրենիքը :

Մեր երէկի՝ քիրվաներուն պէս «անօթի» չեն, բայց, զգոյշ, սեղանէն քիչ մը անդին քաշուեցէք, որովհետեւ ձեղի ալ կը կլլեն :

Սակայն, մեր աղբարիկները պատուական հայհոյիչ, թէորիապէս, գիտականօրէն համայնավարներ չեն, այլ՝ փոռթիք, դործնականօրէն: Որովհետեւ , համայնավարութեան մասին գիտնալը, մտածելը անարժէք բաներ են, պէտք է խօսիլ ու գործել, գործքով ցոյց տալ... : Գիտես եղեր ու չես խօսիր , կը խօսիս՝ չես գործեր, ի՞նչ արժէք ունի:

Անօթի չեն (հաամբնավար չեն) բայց ուղտ

Համայնավար չեն...

Տարիներ առաջ, երբ դեռ հայրենիք կը դիտնուէինք ու մեր չէն, չքանդուած բոյներուն մէջ, երկպառած ու բազմադաւ նահապետական ընտանիք էինք: Ունէինք բազմաթիւ Քիւրտ բարեկամներ, որոնց «քիրվա» կը կոչէինք ու, իրենք ալ փոխադարձաբար՝ ինձի:

Ցաճախ՝ իրարու հայցելէինք տարուան բոլոր եղանակներուն: Հիւր կ'ըլլայինք, կը գիշերէինք իրարու յարկի տակ: Եւ, հետեւաբար կը վայելէինք նաեւ իրարու սեղան:

Այն օրերուն, դեռ մանուկ էի ես, սակայն, չատ լաւ կը յիշեմ մեր Քիւրտ քիրվաներուն մէկ սովորութիւնը: Բայց չեմ գիտեր թէ՝ ատիկա իրենց ամէկոտութեանը պէտք է վերագրել թէ անհամարձակութեանը ճաշելու պարագային :

Նախ՝ տանտէրը անպայման «հրամեցէք քիրվա» նախերդանքը պէտք էր արտասանէր դռլը վերցնելով ու հիւրը դէպի սեղան՝ առաջնորդելով :

Սակայն, մեր քիրվանները, առհասարակ, մէկ «հրամեցէք», երկու՝ երեք «հրամեցէք»ներով սեղանի մօտեցողներ չէին ու առնուազն վեցհատ մը «հրամեցէք քիրվա» պէտք էր կրկնուէր :

Ու ամէն անգամ «հրամեցէք»իդ անոնք երբեմն Թոյլ... երբեմն վճռական կերպով կը պատասխանէին .

— Չէ, քիրվա, անօթի չեմ... ճամբան, այն ինչ աղբիւրին վրայ՝ կերանք ..:

Բայց դուբ, ծանօթ ըլլալով իրենց այդ բարի սովորութեան միշտ պիտի պնդէիք առաջ, առանց կանչ կախելու «անօթի չեմ», «քիչ առաջ այն ինչ աղբիւրին վրայ ճաշեցինք», մինչեւ որ սեղան քաշէիք ու դռլ վերցնել տայիք ...:

Անկէ ետք, դուբ դարձեալ բնաւ չէիք զարմանար անոնց ոչ անօթի փորին տարողութեանը..: Հապա՞ եթէ «անօթի» եղած ըլլար ...:

Բայց, անօթի՝ կամ կուշտ, «տարծոց»էն սեղան եկած ու իարու վրայ չարուած հացին դէմ ինչը հալիլը ձեզի կրկին զարմանք չէր պատճառեր քանի մը անդամ ալ կերակուրին ամանը լեցուելով, դատարկուելով:

Միեւնոյն, մարդ կր ամաչարանար կշտանալէ ետք սեղանին վրայ կեղծ ուտել ձեւացնելէ ու դանդղելէ, մինչեւ որ «անօթի չեմ» թող սիրելի քիրվաղ վերջանար, քաշուէր սեղանէն, որ դուն ալ ազատուէիր այդ կեղծ դրութենէն:

Ինչպէս սովորութիւն էր, որ նախ տանտէրը պիտի սկսէր , նոյնպէս՝ էն վերջին դռլը վար դնողը, պատառը կուլ տուողը տանտէրը պէտք էր ըլլար :

Հակառակը վարուիլը անպատշաճ էր ու վիրատորական :

Մեր հացին տարծոցը կրնար այդպիսի քանի մը տասնեակներով «անօթի չեմ» թող քիրվաներ կշտացնել մեղի հետ ու կծծիութիւնը մեր նահապետական տուներէն ներս անծանօթ էր ծանր ու դէղ – դէղ չարուած հացի տարծոցներուն առջեւ:

Օսմանեան բանակի հրամանատարութիւնը պատասխանատու չի լինելու առաջ գալիք ցաւալի դէպքերի համար: Մուրսէլ փաշա յիշեցնում է նաեւ, որ Հայերը Բագուն մի միայն Ռուսների համար են պահում եւ հայ հայրենիքը ոչ մի օգուտ չունի :

48 ժամ անցնելուց յետոյ Մուրսէլ փաշան իր վերջնագրի պատասխանը չի ստանում եւ ուղղում է իր երկրորդ վերջնագիրը այս անգամ պատասխանի համար տալով 24 ժամ: Այս անգամ վերջնագրի տակ ստորագրում է նաեւ Օսմանեան բանակին կից գտնուող զերմանական միսիոնի պետը, որ խոստանում է զերման կայսր անունով, որ Օսմանեան բանակը ոչ մի վնաս չի հասցնելու Հայերի ոչ գոյքին, ոչ էլ կեանքին :

Այս երկրորդ վերջնագիրն էլ անպատասխան է մնում: Հայ զեկավարները եւ Ռուսներից բաղկացած կառավարութիւնը տեղաւորում են նաւերում, ժողովուրդի (հայ) մի մասն էլ նաւ են նըստում եւ հեռանում քաղաքից, բայց Հայերի մեծ մասը մնում է քաղաքում: Օսմանեան բանակը մտնում է քաղաք եւ երեք օր շարունակ թալանում եւ կոտորում է Հայերին: Բագուի պաշտպանութիւնը ի նպաստ Ռուսաստանի եւ ռուսական համայնավար կուսակցութեան ղեկավարութեան Հայերին ստիպում է մօտաւորապէս 50.000 կեանք, առանց հաշուելու Գօքչայի եւ Շամախի գաւառներում ապրող հայ գիւղացիների եւ քաղաքացիների կոտորածը :

Բագուի գրաւումից մի ամիս անցած Օսմանեան բանակները ամենատուր են լինում դաշնակիցներին եւ հետզհետէ դաշնակից ուժերը մտնում են նաեւ Անդրկովկաս եւ գրաւում գլխաւոր քաղաքները, Բաթում, Թիֆլիս, Բաքու, Երեւան եւն.:

Հայաստանի կառավարութիւնը օգտուելով դաշնակիցների ներկայութիւնից Անդրկովկասում փորձում է Վրացիների, Ազէրբէյճանցիների եւ Օսմանցիների կողմից գրաւուած հայկական հողերը միացնել Հայաստանին: Նոր զոհողութիւնների մի շրջան է սկսում Հայերի համար: Պատերազմ Վրաստանի դէմ, արիւնահեղ ընդհարումներ Ազէրբէյճանի չատ մասերում, մանաւանդ Ղարաբաղում եւ Զանգեզուրում: Ապստամբութիւններ Թուրքերի կողմից Հայաստանում, Նախիջեւանում, Էչմիածնում, եւն.:

Եւ այդ բոլորի արդիւնքը լինում է այն, որ մօտ 10,000 քիլոմեթր քառակուսի ունեցող Հայաստանը դառնում է մօտաւորապէս 60 հազար քիլոմեթր տարածութիւն ունեցող մի երկիր: (Դաշնակիցները օգնեցին կարսը միացնել Հայաստանին) :

Եւ մինչ հայ կառավարութիւնը եւ ժողովուրդը ճգնում էր երկրի բնական սահմանները ապահովել, Փարիզի Խաղաղութեան քոնֆէրանսը իր աշխատութիւններն էր վերջացնում եւ պատրաստում էր Օսմանեան կայսրութիւնը Լիբանանի, Սուրիայի, Պաղեստինի, Միջագետքի հետ հրաժարեցնել նաեւ Տաճկահայաստանի չորս նահանգներից (Բիթլիս, Վան, Էրզրում, Տրապիզոն) :

Թէեւ Հայաստանի սահմանները որոշ չափերով ձեւաւորուած եւ հայկական հողերի մեծ մասը ձեռք էր բերուած Արեւելեան Հայաստանում բայց Ազէրբէյճանցիների կռիւը Հայերի հետ չարունակում էր Ղարաբաղին եւ Զանգեզուրին տիրելու համար: Նրանց յաջողուեց Ղարաբաղի մի աչքի ընկնող մասին տիրել, բայց Ղարաբաղի մի ուրիշ աչքի ընկնող մասը եւ Զանգեզուրի գաւառ ամբողջութեամբ մնաց Հայերի ձեռքը :

Բայց հայ ժողովրդին վիճակուած էր նոր դժբախտութիւններ եւ այդ Հայաստանի « ազատարարներ» Լենինի եւ ընկերութեան ջերմ եւ ռանդուն աջակցութեամբ :

Գ. ԵՂԻԿԵԱՆ

ԹՈՒՐՔԻԱ

ԻՆՉԵՐ ԿԸ ԳՐԵՆ ԴԱՐԱՅԱՆԻ ՄԱՍԻՆ

ՄՄՐ.— Գոլոսահայ թերթէ մը կը քաղենք «Թասվիր»ի հետեւեալ պատմութիւնները Մոսկուայի նախկին դեսպան հայազգի Գարախանի մասին.—

«Թուրքիոյ մէջ կարմիրներուն գործունէութեան կարեւորագոյն շրջանը Գարախանի շրջանն է: Գարախան Կովկասցի Հայ մըն է: Այս երիտասարդ համայնավարը որ փայլիլ սկսաւ Հոկտեմբերեան Յեղափոխութեան սկզբնական շրջանին, մինչեւ արտաքին քոմիսարութեան խորհրդականի պաշտօնին բարձրացաւ այն շրջանին երբ Ռուսիա սկսած էր զբաղիլ Մերձ. Արեւելքով: Երբ Անգարայի մէջ յոռի տպաւորութիւն գործեց համայնավար դրգռութիւնը որ 1928էն մինչեւ անկախութեան առեւանները յանդեցաւ, հարկ եղաւ դեսպան ընկեր Սուրիցի տեղ նոր արտակարգ դեսպան մը ղրկել: Գարախան ահա այս մթնոլորտին ներքեւ ընտրուեցաւ:

Հանդուցեալ Վասրֆ Զընարի կողմէ Աթաթիւրքի ղրկուած նամակն մը յետադային կը տեղեկանանք որ ընկեր Սթալին երբ զայն ընտրեց, հետեւեալը բաւ.

— Ա՛հաւասիկ Թուրքիոյ խոհակ դեսպան մը: Ծափողմին թերուժով առանց ցաւ պգալու անհրաժեշտ գործողութիւնը պիտի ընէ Թուրքերուն:

Գարախան Անգարա ժամանելէ անմիջապէս յետոյ, ծիւնոյ առած ցուրտ մթնոլորտը փարատելու համար չարք մը ձեռնարկներ ըրաւ:

1.— Անգարայի մէջ Թուրքեւսովիէթ բարեկամական ընկերակցութիւն մը հաստատուեցաւ:

2.— Փորձուեցաւ երկու երկիրներու միջեւ մշակութային յարաբերութիւններ հիմնել:

3.— Գարախան մեր պետական ւաւագանիէն չատերուն անձնական բարեկամութիւնը ապահովեց: Այս կերպով փորձեց բացատրել ներքին խնդիրներու մասին անգամ կարծիք յայտնել:

4.— Շարք մը ուղեւորութիւններ կազմակերպուեցան Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ: Բազմաթիւ Թուրքեր Ռուսիա գացին եւ Ռուսիայէն ալ մասնագէտներ, արուեստագէտներ, զօրավարներ եկան:

5.— Թուրքիոյ տնտեսական վերակազմութեան համար Ռուսիա վարկեր տրամադրեց: Նաղիլիի, Գայսէրիի կտաւի գործարանները նման բազմաթիւ գործարանները, մինչեւ մեր մայրաքաղաքին օդթօսիւանները Ռուսիայէն եկան: Հարթուրաւոր Թուրք բանուորներ այս գործերը ստանձնելու համար Ռուսիա ճամբորդեցին:

Բայց Գարախանի գործունէութիւնը վերջին ծայր կը ղայրացնէր Անգարայի ւաւագանիէն ոմանք, մասնաւորաբար Սթաֆիերքը: Այս պահուն երկու դէպք պատահեցաւ: Նախ, Մոսկուայի հանդուցեալ Թրքական դեսպան Վասրֆ Զընարէ մասնաւոր լուր մը հասաւ Սթաֆիւրքի: Այս լուրը կարգ մը մերկացումներ ու պարփակէր Գարախանի ընդհանուր ծրագրի մասին:

Ցետոյ երեւան ելան Գարախանի կարգ մը տեղեկագրերը Թուրքիոյ մասին: Առանց կարգին դասուելու բնագիրը յօդուածի մը, զոր կրնանք յորջորջել Գարախանի սեւ ցանկը: Ահաւասիկ կարգ մը պարբերութիւններ այս տեղեկագրէն.

Զօր. Քեազիմ Գարապէքիրի մասին.— Ի դէմ ամէն բանի անհրաժեշտ է բնաջնջել Քեազիմ Գարապէքիրը:

Ճէլալ Պայարի համար.— Մեր խոչընդոտը դործունէութիւնը շատ պիտի դժուարանայ այնքան ատեն որ չարունակէ Թուրքիան կազմակերպել այս տնտեսական գործաւորը, որ հարստահարուած կազմակերպիչ մըն է:

Ֆուատ Քէօփրիւլի համար.— Փափաքելի է որ անունը չլսուի ոչ հասարակաց եւ ոչ հրատարակչական կեանքի մէջ:

Զօր. Սալիհ Օմուրթաքի համար.— Այս վերստացարդ հրամանատարը ծր մը չատ վտանգաւոր կրնայ ըլլալ: Հետեւարար պէտք է հնարաւորութիւն չընծայել որ առաջին դէմ վայ ներքին:

Ներքին գործոց Շիւքրիւ Գայայի համար.— Հակառակ այն պատրանքը թողելուն թէ Թուրքիոյ ձախակողմեան տարրերուն մեծապէս աչք կը դոցէ, իրեն երբեք չեմ կրնար վստահիլ:

Շիւքրիւ Սարաճօղլուի մասին.— Այս երիտասարդ գործավարին բաղձանքն է արտաքին գործոց կարգուիլ: Բայց մեր փաղձանքն ենք իրագործումին արգելք կը հանդիսանայ իր ծայրայեղ ազգայնական պետական մարդոցմէ դիմութեամբ, զոր բարեկամ չենք կրնար նկատել: Կարգ մը թերթերու մասին.— Ահմէտ Էմինները, Վէլիճաները նման յառաջդիմասէր դաղափարներու թշնամիները միշտ վտանգ են Թուրքիոյ յեղաշրջական քաղաքականութեան համար: Պէտք է առաջքը առնել այսպիսի տարերքներու գործօն դեր խաղալուն: Վերջապէս մարշալ Ճէվիտ Զաղմաքլի համար գրած է.— Այնքան ատեն որ այս ծերունի զինուորը պատասխանատու դիրք գրաւէ արգելք պիտի հանդիսանայ որ յառաջդիմական դաղափարները (1) մուտք գործեն Թրքական բանակին մէջ: Շուրջի զօրավարներն ալ համակարծիք են իրեն: Թուրքիոյ մէջ բանակը միշտ պատմական հակառուսութեան ազդեցութեան ներքեւ մեղի թշնամի պիտի մնայ: Գարախան տեղեկագրին մէջ կ'ըսէ նաեւ.— Թուրք սաղանին մեղի կը խարէ: Անոնց ցոյց տուած բարեկամութիւնը երբեք անկեղծ չէ:

Աթաթիւրք այս տեղակագիրը կարդալէ յետոյ, պատրուակելով այն իրողութիւնը թէ Հանրապետութեան տօնին Սթալին չէ ընդհատուած զինքը, անակնկալ այց մը կուտայ ռուս դեսպանատունը:

Այս անակնկալ այցը զարմանքի կր մատնէ Գարախանը որ դեռ դեղին եւ դողդոջուն կր դիմաւորէ յաւերժական Աթան: Աթաթիւրք կարճ նախաբանէ մը յետոյ Գարախանի կը պարզէ որ Թուրքիոյ մէջ ինք կը ներկայացնէ Թուրք ազգր եւ ուրիշ ոեւէ իշխանութիւն պիտի չընդունուի Թուրք ժողովուրդին կողմէ: Երբ Գարախան կ'ըսէ որ դեսպանատուն ուրուած այսօրինակ այցէ մը նոյնիսկ կրնայ պատերազմ յառաջացնել, Աթաթիւրք դիտել կուտայ որ Սպէ. Մեծ ժողովը իրաւասու է պատերազմ յայտարարելու եւ իր անձնական այցը բնաւ չէ նկատի առնուիր զեկոյցը ներկայացնել երկու պետ. մարդոց միջեւ ու կը հեռանայ դեսպանատունէն:

Այն ատեն Անգարա դտնուղները կը յիշեն որ այս դէպքը նոյն իսկ հաւատացած էր պատերազմական վիճակ մը Ռուսիոյ հետ:

Գարախան այս դէպքէն քիչ յետոյ ետ կանչուեցաւ: Քանի մը կէրէուի, այսինքն դպրանի սովիէթ ոստիկանի ատրճանակներուն ներքեւ Անգարայէ մեկնելէ առաջ Աթաթիւրք Գարախանի լոյր ղրկելով հաղորդեց թէ անձին դէմ ոչ մէկ ատելութիւն ունի եւ եթէ փափաքի, երբեւ դաղթական Թուրքիա կրնայ մնալ: Գարախան այլեւս Թուրքիոյ մէջ չկեցաւ երբ հասկցաւ որ բոլոր ծրագիրներուն վերահասու դարձած էր Թուրք կառավարութիւնը:

«ԾԱՌԱՉ»Ի ԹԵՐԹՕՆԸ

ԼՍԱ ԵՒ ՀԱՄԱՏ

(ՀՈՐՀՐԴԱՎԷՊ)

Ա. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԳԱԼ
Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

Հակայ չէնքերը կառուցուած էին թանկագին քարերով — ադամանդ, յասպիս, զմրուխտ, մեղեսիկ: Արեւին ճաճանչները առուտրի պէս կ'անցնէին անոնց շլացուցիչ ցոլքերուն վրայէն: Փողոցները՝ մարմար, մայթերը՝ ոսկեքար, ու եղեմական ծաղիկներ քաղաքին հօթը հրապարակներն ու վրայ, ուսկից իմաստութեան հօթը չատրուանները կը հոսեցնէին աստուածները, դիշեր ացերեկ: Մարդիկ այս մոգական քաղաքին մէջ. եղած էին Աստուածներ: Զարաչուք օր մը սակայն, արեւը յանկարծ խաւարեցաւ: Երկրաշարժ ու երկնաշարժ: Ու այդ աստուածաբնակ դրախտավայրը ծլորուեցաւ միանդամ ընդ միշտ, քարի, ուաղ եւ լավայի մոխիրներուն տակ: Անցան դարեր... եւ ահա, նոր մարդիկ եկան ու նոր քաղաք մը հիմնեցին վկատակներուն վրան: Հաւատքը ատմութեան թեւերով հասած էր եկուորներու կանջին թէ՝ իրենց ատքերուն տակ, հոյակապ տուք մը թաղուած, կը ննջէ չատ խորունկ: Բայց ատնք չվորձեցին ոչ մի չարժում, ճիգ ու սպառում, մտաւոր ու ֆիզիքական: Մինչեւ որ, օր մը դիտուն երկրախոյզներ եկան,, պեղեցին ու թաղուած վտառքը երեսան հանեցին, իր զանձերով: Մարդիկ վրան վազեցին խելայեղ, ոսկին առին ու կեանքի նոր խորանները չինեցին, թանկագին քարերէն լոյսի նոր չատրուաններ կանգնեցին, իմաստութեան հօթը աղբիւրներէն խմեցին կուշտ ու կուռ ու եղան Աստուածներ:

— Մենք պէտք չունինք նոր Աստուածներու, մեր Աստուածը մի է եւ անքննելի ու ինչո՞ւ ես ակեր հոս... գնա, հեռացիր այս սրբարանէն:

— Այո, ես եկած եմ Արեւելքէն, Սկիւթի այն դաժան բարձունքին վրայ: Եկած եմ ի խնդիր լոյսի, թափառիլ ճշմարտութեան բաւիղներուն մէջ, կանգ առնել աստուածայայտ տեսիլքներու առջեւ, տատապիլ խորհուրդին երկունքով: Եւ օր մը լոյսն ու կրակէ մկրտուած, նետուիլ գիրկը աշխարհին: Մինչդեռ, ինչ յուսախաբութիւն, Աստուածները շատոնց մեկներ են այս ան հիւրընկալ վայրերէն: Սոկրատ եւ իր չքախտութիւնը, մտեղադարաններէն դուրս շպրտուեր են, երկաթէ խաչերով ու ոսկրացած մաղաղաթներով: Կան միայն «ես»եր, իրենց տեւաթոյր պատեանին մէջ խաչուած ու խաչուած: Կեանքի դերագոյն իմաստէն զուրկ, բացատրած թուղթեր՝ անոց անըմբռնելի կուզայ աստուածային ատգամը — բարձրացիր եւ բարձրացուր:

Վանահայրը չկար այլեւս...: Ան հեռացեր էր ակնափակ եւ տնկախից: Եւ եմ, որ կամ ... ու չկամ վաղը ...:

ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐ: Չուսինը իր ձիւնաթոյր ձեռնոցներով, անապատին աւազուտքը կը խառնէ ... Երեւանէն կը փսփսան.

— Մահ Դաշնակիզմին (չճանճրացա՞ք...).

Իսկ արտահայաստանի մէջ «քիւմանները» կը գոռան ամպի պէս.

— Մահ, մահ, ֆաշիստ Դաշնակցութեան:

Եւ սակայն, այս բոլորէն ետք, քաւ լիցի, անտնք բնաւ համայնավար չենք:

Համայնավարի պէս մտածել, խօսիլ, դրել ու գործել.

Համայնավար ճամբայով (կարմիր...) քալել, աւոր գտնուիլ ալ բերնիդ ...

Համայնավար վարդապետութեան ի նպաստ չարունակ պայքար տանիլ:

Ու եռքէն՝ ելլել ըսել.— մենք համայնավար չենք:

Արդ, հարց տանք մեր այս քիրվանները.

— Ինչո՞ւ համայնավար չէք: Համայնավարութիւնը այդքան դէշ վարդապետութիւն մըն է, որ իրեն դաւանակից ըլլալէ կը վախնաք ...:

Ինչո՞ւ կ'ըսէք մեր քիւրտ քիրվաններուն պէս «անօթի չենք» բայց Շարայի որկորին անգամ մատ խածնել կուտաք:

Այնպամ մըն ալ կրկնենք.— Ինչո՞ւ համայնավար չէք, քիրվաններ:

ՀԱՑԿ ԱՐՄԻՆ

մը եւ փիղ մը կրնան կլլել՝ իրենց բեռներովը:

Համայնավար չեն, բայց կարմիր Մոսկուայի պորտին վրայ բուսած ռուս համայնավարը «պուր է խաղը» իրենց քով: Երբ Մոսկուայէն պոռան.

— Կեցցէ Ստալինը:

Երեւանէն կը կրկնեն.

— Կեցցէ, կեցցէ համայնավարութեան ղեկավար ընկեր Ստալինը:

Արտահայաստանի «համայնավար չենք» ըսող ազբարիկները կ'երեքնեն.

— Կեցցէ, կեցցէ, կեցցէ արեւ Ստալինը: Զայրը կը չարունակուի Մոսկուայէն.

— Մեր հայր Ստալինը անսխալական է:

Երեւան բոպէապէս ձայն կ'առնէ.

— Մեր հանճարեղ, անզուգական հայր Ստալինը անսխալական է:

Արտահայաստանի անդիմակ «Ծառայդիմակ»ը, դիմակով Ռամկավարն ու կիսադիմակ Չիչեակեանը իրենց կոկորդը պատռելու աստիճան կը պոռան.

— Մեր եւ ամբողջ մարդկութեան հայր ու առաջնորդ, հանճարեղ, աստուածածին ընկեր Ստալինը անսխալական է:

Ֆրանկին արժեզրկումը

Մինչեւ չաբաթ օր Ֆրանսական կառավարութիւնը համաձայնութիւն մը կնքած պիտի ըլլայ միջազգային պատկան հիմնարկութեան ինչպէս նաեւ բրիտանական եւ ամերիկեան կառավարութեանց հետ, Ֆրանքը արժեզրկելու համար :

Դահլիճը չորեքշաբթի օր բացառիկ նիստ դումարեց : Պաշտօնական յայտարարութիւն մը պիտի ըլլայ, եթէ ոչ այսօր, գոնէ մինչեւ յառաջիկայ չաբաթ օր՝ հաւանաբար սակարանի փոփոխումէն ետք :

Արժեզրկումին նպատակն է զարկ տալ արկղին արտաքին առեւտուրին : Ներկայ կարգադրութիւնը պիտի ըլլայ առժամեայ, եւ կառավարութիւնը նոր միջոցներու պիտի դիմէ թղթադրամը միանգամընդմիշտ կայունացնելու համար : Այդ ծրագիրը յաջողցնելու համար անհրաժեշտ պայման կը նկատուի նախ կայունութիւն յառաջ բերել կենսական նիւթերու դիներուն յարաբերութեան մէջ : Ելմտական չրջանակներուն մէջ դիտել կը տրուի որ Եւրոպայի բոլոր դրամներուն կայունութիւնը պիտի փրկանանայ Մարշըլի ծրագրին գործադրութենէն ետք :

Ֆրանքին արժեզրկումէն ետք, պահք որ Ֆրանսայ իր ոսկի մթերքին իրական արժէքը պիտի չերթայցնէ եւ դրամատունը իր հաչիւները պիտի կատարէ տոլարը 119 Ֆրանքի հիման վրայ : Տոլար կամ դուիցերիական թղթադրամ ունեցող օտարականները իրաւունք պիտի ստանան դրամատուներէն պահանջելու իրենց դրամներուն համար սահմանուած նոր սակը : Տոլարը «ազատ շուկայի» մէջ պիտի արժէ 216էն 240 Ֆրանք, իսկ ոսկեդրամը մօտաւորապէս հազար Ֆրանք : Այս թուանշանները ենթադրութեանց վրայ հիմնուած են ապագային : Թղթադրամին արժեզրկումէն ետք, կառավարութիւնը հաւանաբար պիտի վերաքննէ օրական ծերու յաւելման համար տրուած վերջին որոշումը որ 350 միլիառի յաւելում մը կը կատարէր պետական ելմտացոյցին վրայ : Այս թիւը պիտի բարձրանայ 700 միլիառի : Ուսուցանողականները ամիսուսաթելիօքին պիտի սպին : Հետեւաբար կառավարութիւնը այս չաբթու մատուցոր հրամանագրով որոշեց որ օրականներու յաւելումը 30 առ հարիւրը պէտք չէ անցնի :

«ԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

«ԴՐԱՄԱՏԻՐԱԿԱՆ երկիրներու տնտեսութիւնը անմեխութեամբ ազէտի մը չեմին վրայ է», կը յայտարարէ Փրոֆ. Շեթայնպէրկ, Մոսկուայէն, ճայնասփիւռ ճառով մը : «Օրինակ, վերցուցէք Ամերիկացի սեղանատուներուն հետ կնքուած պարտքին մէկ լոդալ եւ իր ժողովուրդը դատապարտուած է կէս-սովամահութեան » :

ԱՆԳԼԻԱՑ վարչապետը, Էթլի, երեքշաբթի օր խորհրդաժողովի մէջ պատասխանելով աշխատաւորական երեսփոխանի մը հարցումին թէ ինչ կը մտածէ Սթալինի եւ Թրումէնի հետ հանդիպում մը ունենալու մասին, ըսաւ «Թէեւ չկարծեմ կը փափաքիմ որ ամէն քայլ առնուի միջազգային կացութիւնը բարելաւելու համար, բայց չեմ կարծեր որ ներկայ պայմաններուն մէջ այդ տեսակ հանդիպում մը կրնայ օգտակար ըլլալ » :

ՖՐԱՆՍԱԿԱՆ ոստիկանութիւնը երկու օր առաջ փակեց Խորհրդային «Սովիէթսքի Փաթրիօթ» թերթը որուն խմբագիրներէն քանի մը հոգի վերջերս ձերբակալուած էին :

ՆԻՈՒ ՏԷԼՀիին կը հաղորդեն որ չարագործներ ոումբ մը նետեցին երեքշաբթի օր այն չէնքին վրայ ուր կանտի կ'աղօթէր՝ հնդիկ տիրացուներով չրջապատուած : Շէնքը վնասուած է բայց մարդկային կորուստ չկայ : Ձերբակալուած է երիտասարդ մը որ դրպանին մէջ ունէր 2 ձեռնառումբեր :

ՀԱՄԱՋԱՑՆ Քանատայէն ստացուած տեղեկութեանց, Ուկրանացի ճարտարագէտ մը յայտարարած է որ Խորհրդային Միութիւնը հնարած է V—3 եւ V—4 երկու հրթիռներ որոնք չատ աւելի զօրաւոր են քան Հիթլերի կողմէ Անգլիոյ վրայ նետուած V—2 հրթիռը :

ՊԱՂԵՍՏԻՆի Հրեաները բրիտանական իշխանութիւններէն դնած են 21 օդանաւեր եւ զինուորական պիտոյքներ որոնք ճամբրդի համուած էին : Ապարները զին չեն տուած :

ՓԱՐԻԶի թաքսիներուն գիները բարձրացած են Յունուար 19էն իվեր, հետեւեալ կերպով — ժամը առտուան 6.30էն մինչեւ իրիկունը ժամ 11, ճամբայ եղած առեն 20 Ֆրանք, քիլոմեթրը 17 Ֆրանք մէկ ժամուան սպասում՝ 150 Ֆրանք, սակայցոյցը 5 Ֆրանք պիտի ավճարուի իւրաքանչիւր 29? մէթրին կամ երկու վայրկեան սպասումի համար : Գիշերուան ժամը 11էն մինչեւ առտուան 6.30ը, ճամբայ եղած առեն 20 Ֆրանք, քիլոմեթրը 34 Ֆրանք, մէկ ժամուան սպասում՝ 150 : Սակացոյցը 5 Ֆրանք պիտի արձանագրէ իւրաքանչիւր 147 մէթրին կամ ամէն երկու վայրկեանը անգամ մը երբ կը սպասէ : Գայուսակ եւ ծրար — 5 քիլոյէն աւելի կշռողներուն 5 Ֆրանք, սնտուկ եւ հեծանիւ՝ 10 Ֆրանք :

Ցերեկոյթ պարահանդէս

Ֆր. կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15ն 24, Hôtel Continentalի չքեղ սրահներուն մէջ, 2, rue Rouget de Lisle, métro Concorde :

Նուագախումբ Ֆինանս ՊՈՒՅՕՆ : Գեղարուեստական խնամուած ընթերց եւ ճոխ պիւֆէ :

Տարեկան շքեղ ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան կարմիր Խաչի եւ Ազթանամի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէջ, 45 Bld. Raspail, Paris :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԻՇԵՐԵԼ ՑԵՐԵԿՈՅԹ

Նախաձեռնութեամբ Սբ. Սերաստիոյ Նահատակ Մխիթեան, Ազատակատար Գերասան ՏԻԳԱՆ ՆՇԱՆՆԵԱՆի, մասնակցութեամբ Փարիզի հայ բեմի լաւագոյն ուժերուն, 8 Փետրուար, 1948, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Մասլէն Պէռթլօի չքեղ թատրոնի մէջ, 26bis, rue St. Dominique, métro Invalides :

Առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէ հանճարեղ ողբերգու Կ. Շէյքսփէյրի

ԱՐՔԱՅ ԼԻՐ

Պատմական տուամ 5 պարերով եւ 2 չափածոյ, թարգմ. եւ բեմադրութիւն Տ. Նշանեանի :

Տոմսերու գիները, 100էն 400 Ֆրանք, կը ծախուին հայկական բոլոր գրատուներէն, ճաշարաններէն, Սեբ. Նահ. Մխիթեան կեդրոնին եւ մասնաճիւղերուն մօտ : Հարիւրին տասը պիտի յատկացուի Սեբ. Նահատ. Մխիթեան ներզաղթի Փոնտին : Սրահին ջեռմութիւնը ապահովուած է : Փետռել յայտագիրը :

ԲՈՄԱՆի Ֆր. կ. Խաչի մասնաճիւղը կը տօնէ «Մանուկներու Օրը» այս չաբաթ իրիկուն ժամը 8ին Սէն Պէրնարը սրահին մէջ : Կը հրաւիրենք մեզի դրացի քոյր մասնաճիւղերը, Վալանս, Վիէն եւ Սալենս : Կը բանախօսէ Վիէնէն ընկեր Ս. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՔԵՂ ՑԵՐԵԿՈՅԹ

Կազմակերպուած Ֆրանահայ Կազդայ Խաչի Սէվրանի մասնաճիւղին կողմէ, կիրակի 7 Մարտ 1948, ժամը 3էն 12, Casino des Etoiles, Մանիս սըրահին մէջ, 87 Ave. de Livry, à Sevran :

Գեղարուեստական հաճելի բաժին : Խմբերգ, ներկայացում եւ անակնկալներ, եւրոպական պարեր : Ճոխ պիւֆէ : Մուտք՝ 75 Ֆր.

Հաղ. միջոց — կառախումբ Gare du Nordէն ժամը 13.45ին եւ 14.15ին : Eglise de Pantinէն 147 թիւ օթօպուս, իջնել Terminus :

ՄՈՒՐԱՏ ԲԱՓՃՃԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ հաւատարիմ իր ծրագրին, որ է ծաւալել հայ ժողովուրդին մէջ ազգային մշակոյթը, որոշած է պարբերաբար բանախօսութիւններ սարքել Սեւրի Մուրատեան վարժարանին մէջ, 26 բիս Թրուայօն, Սէվր :

Առաջին բանախօսութիւնը տեղի կ'ունենայ 1 Փետրուար կիրակի ժամը 15.30ին : Պիտի բանախօսէ Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեան : Նիւթ ունենալով «Հայ ցեղին ծագումը » :

ՅԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅ

Նուիրուած Թենիա Վարդանեանի

Այս հինգշաբթի երեկոյ 22 Յունուար ժամը 21ին, Maison de la Mutualiteի Գ. սրահին մէջ :

Բանախօսութիւն, արտասանութիւն, երգ, նուագ :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ. — Մուրատ Թաֆայէլեան Նախկին Սահուց Միութեան Մարսէյլի մասնաճիւղի հոգեհանգստեան պաշտօն կատարել կու տայ ի յիշատակ տարաբախտ երաժշտագէտ

ԳՈՒՐԳԷՆ ԱԼԷՄՇԱՀի

Կիրակի 25 Յունուար 1948, 40 rue d'Aubagneի կաթոլիկէ Հայոց եկեղեցւոյ մէջ կը կատարուի Սէվրի Մուրատեան վարժարանի տեսուչ Հայր Սահակ Տէր Մովսէսեան : Ցրգնցողութեանց արարողութիւնը կը բերէ «Ազմենիա» երգչախումբը ղեկավարութեամբ Վ. Սարգսեանի :

Կը հրաւիրուի Մարսէյլի հայութիւնը անխտիր չարգելու համար բոլորէն սիրուած երաժշտագէտին յիշատակը :

Օր. ԹԱՏԼԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ
եւ
ԸՆԿ. ՅԱԿՈԲ ԱՂԱՂԱՆԵԱՆ
Նշանուած

Պանէզօ — 1 Յունուար 1948 — Մարմէզոն

ԱՆՈՒՇԸ

Կիրակի 25 Յունուար 1948, ժամը 14.30ին
ՄԻԽԻԹԻԱԼԻԹԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Մեծ պատրաստութեամբ եւ խնամքով Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆի մահուան 25ամեակին առթիւ :

Փարիզի հայկական երգչախումբին կողմէ ՍԿՆՖՈՆԻԿ մեծ նուագախումբ (60 հոգի) :

Ղեկավարութեամբ ԱՐԱ ՊԱՐԹԻԵԱՆի



Անուշի դերը կը կատարէ Օր. ԱՆԺԷԼ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, Ա. Grand prix Wicard de la Ville de Marseille :

Ներկայացումը կը սկսի ճիշդ ժամուն : Նուագի պահուն դուռները փակ կը մնան :

ՇԱՄՈՒԻ է կօշկակարի (Bottier) խանութ մը լեռնանուէ, եւ քնակարանեղ :

Մանրամասնութեանց համար դիմել Պ. Chukurian, 56 rue Geneve — Arles, sur Rhône :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ — Վ. Մալոյեան ձեր ուղած անձին հասցէն է 12 rue Lacretelle, Paris (15) :

ՄԱՐՍԷՅԼԷՆ Պ. Հ. Սահակեան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ Պ. Յ. Սահակեանի, Ս. Լուի :

ԼՈՑՍ ՏԵՍԱ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆի ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴԸ : Մինչեւ այժմ լոյս տեսած եւ բաժանորդներուն ուղարկուած են առաջին, երկրորդ եւ չորրորդ հատորները : Մարտին լոյս պիտի տեսնէ երրորդ հատորը, իսկ ապրիլին հինգերորդը : Ամբողջական գործը պիտի բաղկանայ 10 հատորներէ, որոնք պիտի պարունակեն հեղինակին բոլոր գեղարուեստական գործերը : Տասը հատորներու բաժնեգինը Ֆրանսայի համար 6000 Ֆրանք կանխիկ :

Բաժանորդագրուելու համար դիմել «Յառաջ»ի վարչութեան :

ՏԱՐԵԿԱՆ ՇՔԵՂ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Վիէնէն Հ. Մ. Ը. Մ. մասնաճիւղին կողմէ : Այս չաբաթ իրիկուն Hôtel de la Posteի չքեղ սրահներուն մէջ : Մուտքը 125 Ֆր. :

ՎԻՐԱԲՈՑԺ - ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Պ. Ա. ԴԱՒԻԹԵԱՆ

Կը յայտարարէ Պօմօնաբնակ իր յարգելի յաճախորդներուն որ օգտուելով քաղաքին ելեկտրականութեան չաբաթական երկու օրուան դադարէն կ'ընդունի իր հիւանդները,

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՒ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Իր անձնական քնակարանը 15 Bld. du Nord, La Rosière (Marseille) առտուան ժամը 9էն մինչեւ 5: Իսկ՝

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

քաղաքի իր գրասենեակը, 53 Cours Lieutaud : Կարօտ հիւանդները եւ երկունք ուսանողները ձրի :

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Ի. ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՊ ՕՐԱԹԵՐԹ ՀԱՆՐԱՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Եռամս. 15 տոլ. կամ 3 ֆգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Vendredi 23 Janvier 1948 Հրատարակ 23 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5247-Նոր շրջան թիւ 856

Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ գին՝ 5 ֆր.

Ի ՊԱՏՏԱՎԱՆԱԲԱՐՔ ՂԱԶԱՐԻ

ՀԱՅ ԿԵՍԱՐԻԱՑԻ

Հաւկալ «Միութեան»էն որ գրեցին Իր Գերազնիւ Հայրապետին 28ի խրատական նամակին մասին.—

Ծանր պահ է հայ ազգին մեր համար, երբ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Վեհափառ Հայրապետը կը գտնուի Ղազարայ Ս. Կղզիի Մայր Վանքին մէջ, ուր ինկած է ան ծանր հիւանդութեան մը պատճառով, որ կը տագնապեցնէ Իր կեանքը։ Ամբողջ ազգ մը, ամբողջ հայութիւն մը, ամէն կողմ, ուր հայ կայ, կը սպասէ Իր առողջացման լուրին, որպէսզի կարենայ ինքնին ներկայանալ Իր առջեւ եւ Իր օրհնութիւնը ստանալ։

Ծուրիոյ եւ Լիբանանի Հայ Գրողներու Միութեան Ա. ընդհ. ժողովը

ԳԱՂՈՒԹԱՀԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՑ ՄԻՆՉԵՒ 1948 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Համաձայն Սուրիոյ եւ Լիբանանի Գրողներու Միութեան Ստժամեայ Ցանձախոսքի հրապարակային հրաւէրին, 3 եւ 4 Յունուար 1948, Շաբաթ ցերեկէ վերջ եւ կիրակի առաւօտ, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ.-ի ակումբին եւ ժողովրդային Տան մէջ տեղի ունեցան յաջորդական երկու նիստերը Սուրիոյ եւ Լիբանանի Հայ Գրողներու Միութեան Ա. Ընդհանուր ժողովին, որ հաւաքուած էր քննարկելու իր օրակարգին մաս կազմող հիմնական խնդիրներու քննութեամբ, եւ տուաւ համապատասխան որոշումներ :

Հրաւարակուած ընդհանուր կոչին պատասխանած էին երկու դաշտութիւններու բոլոր երէց եւ կրտսեր պզտիները, թուով 21 հոգի, — Հալէպէն, Դամասկոսէն եւ Պէյրութէն :

Ա. Նիստը տեղի ունեցաւ Հ. Մ. Ը. Մ.-ի ակումբին մէջ, Շաբաթ, 3 Յունուարի 1948, ժամը 5.30 — 8.30:

Առժամեայ յանձնախումբի քարտուղար Ա. Մառուխեան, կարդաց ամփոփ տեղեկագիր մը, որ կը պարզէր վերջին հինգ ամիսներու ընթացքին զարթնման մտաւոր եւ մտաւորականութեան կողմէ Գաղութահայ Համագումարի մը կայացման չուրջ յայտնուած թեր ու դէմ կարծիքները, եւ կ'ընդգծէր հայ մտաւորականութեան ճնշիչ մեծամասնութեան դրական կեցուածքը՝ հանդէպ նման նախաձեռնութեան մը :

Զեկուցագրի ընթերցումէն վերջ, ժողովը տեղեկացաւ յիշատակը Գրողներու Միութեան նախագահ ողբացեալ Նիկոլ Աղբալեանի, երկու վայրկեանի յատկացեալ լռութեամբ :

Ապա ձեռնարկուեցաւ Դիւանի ընտրութեան : — Ներկաներու միաձայն հաւանութեամբ՝ նախագահ ընտրուեցաւ Կարօ Սասունի, եւ քարտուղարներ՝ Զարեհ Զարդուն եւ Եղուարդ Պօյաճեան :

Նախագահ Կարօ Սասունի խօսք առաւ, եւ ամփոփ գիծերու մէջ ըրաւ պատմականը Սուրիոյ եւ Լիբանան հայ Գրողներու Միութեան կազմութեան : — 10 Օգոստոս 1947-ին, խումբ մը հայ գրողներ, Շէմրանի մէջ հիմը կը դնէին Միութեան, նախապատրաստելու ողբացեալ Նիկոլ Աղբալեանի : Այդ միութիւնը հաստատելու համար ամուր ու օրինական հիմերու վրայ, Առժամեայ Յանձնախումբը հրաւիրած էր Սուրիոյ եւ Լիբանանի բոլոր հայ գրողները այս ընդհանուր ժողովին, որ կը գումարէ իր Ա. նիստը՝ 21 ներկայ անդամներու մասնակցութեամբ : Մեր առաջին գործը պիտի ըլլայ քննութիւնը ծրագիր կանոնագրի մը, որ պատրաստուած է Առժամեայ Յանձնախումբին կողմէ, եւ որուն վաւերացման համար պիտի խնդրէի որ ամէն անդամ յայտնէ իր կարծիքը » :

Կ. Սասունի կարդաց ապա ծրագիրը — կանոնագրի ամբողջական պատճէնը : Յօդուած առ յօդուած, այդ կանոնագիրը ենթակուեցաւ քննութեան : Ներկաները պարզեցին իրենց տեսակէտներն ու մտահոգութիւնները, վիճաբանութիւններ տեղի ունեցան խաղաղ ու ներդաշնակ մթնոլորտի մէջ, եւ ներկաներու միաձայն հաւանութեամբ, ան ստացաւ իր վերջնական դիմագիծը :

Ապա օրակարգի նիւթ դարձաւ Գաղութահայ Համագումարի առաջարկը : Խօսք առին երէց թէ կրտսեր բազմաթիւ դրողներ, որոնք միաձայն եւ միահամուռ չեշտեցին անհրաժեշտութիւնը նման նախաձեռնութեան մը իրագործումին, առաջարկելով որ նորակազմ Գրողներու Միութիւնն իսկ առանձին համագումարի կազմակերպութեան գործը, մինչեւ 1948 Հոկտեմբեր իրականացնելու համար գայն : Ընդհանուր ժողովը յանգեցաւ գրական եղակացութեան մը նաեւ այս խնդրին չուրջ, եւ միաձայնութեամբ որոշուեցաւ համագումարը կայացնել մինչեւ 1948 Հոկտեմբեր :

Բ. Նիստը տեղի ունեցաւ կիրակի, 4 Յունուար 1948, ժողովրդային տան մէջ : Զեկուցաւ օրակարգի երրորդ խնդրի քննութեան եւ ձեռնարկուեցաւ Սուրիոյ եւ Լիբանանի Գրողներու Միութեան վարչութեան ընտրութեան : Բացառ — ձակ մեծամասնութեան ձայնով Վարչութեան անդամ ընտրուեցան՝ Կ. Սասունի (նախագահ), Ա. Ծառուկեան (ընդհ. քարտուղար), Եդ. Տաօնեան (գանձապահ), Արմէն Անդր, Մ. Իշխան, Եդ. Պօյաճեան եւ Մ. Թէօլէօլեան :

Վարչութեան ընտրութենէն վերջ, ներկաները չատեր յայտնեցին իրենց բաղձանքներն ու կարծիքները՝ Գրողներու Միութեան ծրագրին եւ աւանդապրութեանց կատարելագործման համար :

Նախագահ Կ. Սասունի փակեց ընդհանուր ժողովը, ողջոյնի նկատելով օրակարգի բոլոր խնդիրները :

★ Ընդհանուր ժողովի երկու նիստերուն ալ, բացի 21 հիմնադիր անդամներէ, կը մասնակցէին բազմաթիւ ուսանողներ եւ դրասէրներ : Անկախ դրողներէ, խօսք առաւ Վահան Փափազեան (Կոմս), որ յայտնեց «Համազգային»ի յաջողութեան մաղթանքները եւ դրական տրամադրութիւնները՝ հանդէպ Միութեան առաջադրութեանց : Իսկ Լիբանանի Հայ Օդնութեան Միաբ նամակով մը կը յայտնէր նոյնպէս յաջողութեան իր մաղթանքները, եւ առաջին առթիւ 500 լ. ոսկի կը նուիրէր Միութեան, խոստանալով զօրավիգ կանգնիլ անոր բոլոր աշխատանքներուն :

★ Ի պատիւ Սուրիոյ եւ Լիբանանի դրողներուն, ընդունելութիւններ տեղի ունեցան պանդոկ «Լիբքի (Մ. Թոպիկեանի), Վ. Սէթեանի եւ Մ. Տէտէեանի բնակարաններուն մէջ :

Գիտական առաջիկ

ՀԻՆ ԱՏԵՆ ԿՐ ԿԱՐԾԷԻՆ թէ պէյրութը կը կազմէ ամառնային ու ձմեռնային տարածութիւն մը, ուր գոյութիւն ունին երկնային մարմիններ, լուսին, աստղեր, միգամած աստղեր, որոնք իրարմէ բաժանուած են անհուն ու անեղ տարածութիւններով :

ԺԸ. դարուն վերջերը, երբ Հերսապէլ երեւան հանեց 5000 միգաստղերու գոյութիւնը, իրեն յաջորդող աստղագէտները սկսան ուսումնասիրել — լուսիւնները կատարել աստղերու միջեւ գոյութիւն ունեցող նիւթի մասին :

Ժամանակակից մասնագէտներու կարծիքով՝ անջրպետը պարապ չէ, թէ հոն ամենուրեք գոյութիւն ունին նիւթին հետքերը՝ հիւլէները, միջհիւլէական համախմբումներ, նիւթերու ամենափոքր մասնիկները, որոնց ամէնէն ուժգին առաջ տարբը կը կազմէ ջրածինը (90 առ հարիւր), կրածին, ազոտիմ, թթուածին եւ ուրիշ հիւլէական բաղկացութիւններ, վիճչպէս՝ ամոնիաքին, հիտուիր տը ազոտիմ, եւն. :

Զայնական ալիքները ընդունող մասնաւոր գործիքներու չնորհիւ, կարելի եղած է հաստատել, թէ ձայնատիւռ գործիքին մակաբոյծ ալիքներուն մեծամասնութիւնը աստեղային ծագում ունին :

ԻՆՉՊԷՍ ԾԱՆՕԹ է, ուժգին քան տարի մըն է որ Ամերիկացիք փորձի համար եւ իբր քաղաքական ցոյց հիւլէ ռումբ մը պայթեցուցին Պիքինիի ջուրերուն մէջ, սակայն այդ կղզին մինչեւ այսօր կը ներկայանայ իբր վտանգաւոր կայան մը՝ ուր կարելի չէ բնակութիւն հաստատել : Միւս կողմէ յիշեալ ծովախորշին մէջ ժամանակին խարխիս նետած եւ իբր նշանակէտ ծառայած մարտանաւերն ալ իրենց կարգին կը ներկայացնեն ճառագայթադործօն վիճակ մը, ուր անկարելի է քանի մը ժամէն աւելի մնալ :

ԵԹԷ պայթումի միջոցին գործածուած նաւերուն մաս կազմող նաւաստիները իրենց պաշտօնին պլուխը գտնուէին, հիւլէ ռումբը անոնցմէ 35.000 հոգի պիտի մահացնէր, իսկ եթէ այդ միեւնոյն ռումբը նետուէր Նիւ Եորքի նաւահանգիստին մէջ հարաւային սաստիկ հովի մը առեւն, երկու միլիոնէն աւելի մարդկային զոհեր պիտի պատճառէր :

ԹԻԼԱՏԼԱԹԻՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ փրոֆ. Տօքթ. Հօսարթ Ռէյման ամերիկեան բժշկական համաժողովի մը մէջ, հետեւեալ կարծիքը կը յայտնէ սպրդ հարցումի դարմանումի մասին. —

Ջանապան ու զարմանազան գեղեր եւ դեղա – հատներ հնարուած են դարմանելու համար հարբուխը, սակայն կարելի չ'եղած մինչեւ այսօր չօշափելի ու հիմնական արդիւնք մը ձեռք բերել, եւ առաջքն առնել այդ համատարած ախտին, որ հակառակ իր անվնաս բնոյթին, կրնայ անախորժ հետեւանքներ ունենալ :

Այս առթիւ, յիշեալ բժիշկը կը յանձնարարէ ձեռք առնել կարգ մը տարրական նախազգուշութիւններ, մեղմելու համար հարբուխին պատճառած անհանգստութիւնները եւ չափաւորելու անկէ առաջ գալիք հաւանական վնասակարութիւնները :

Այդ նախազգուշութիւններուն առաջինը ֆիզիքական հանգիստն է, լաւագոյն միջոցը հարբուխի մեղմացումին : Երբ մարդ անհանգստութիւն կամ թեթեւ տաքութիւն մը զգայ, խոհեմութիւն է անմիջապէս անկողին մտնել : ԵԹԷ կարելի չէ հիմնովին դարմանել հարբուխը, կարելի է սակայն զայն կանխել, վարելով հանդարտ ու հանգիստ կենցաղ մը, ուշադրելով թեթեւ ու չափաւոր անդադարութիւն, խմել տաք ըմպելիներ, դադարեցնել խոնաւութենէ, ցուրտէ, օդի հոսանքներէ, զգուշանալ կապերէ, փոչիներէ, ֆիզիքական յոգնութիւնէ եւ ամէն տեսակ չափազանցութիւններէ :

Ժ. ՍԱՊՐԱԶԻՍ ԵՒ Ա. ՄԱՐՔԱՆՏԻ պինիին մանրէասպան յատկութիւնը ապացուցանելու համար, որոշեալ քանակութեամբ պասիլ խառնած են պինիին մէջ :

Այդ առթիւ յիշեալ դիտնականները տեսած են թէ պասիլներու կենսունակութիւնը կը փոխուի

ԱՌԱՋ

դինիին տեսակին՝ մասնաւորապէս անոր թթուութեան հետ : Սովորական զուտ կարմիր գինիին մէջ «էպէնթ»ի պասիլը երկու ժամ կ'ապրի, իսկ կէս առ կէս ջրախառն գինիին մէջ չորս ժամ : Պուրկօյնի գինիին մէջ պասիլները առ առաւելն 30 վայրկեան կրնան ապրիլ, իսկ չամբանեայի գինիին մէջ 10 վայրկեանէն քնաջինջ կ'ըլլան :

Հաստատուած է նաեւ թէ գինիները իրենց մանրէասպան յատկութիւնը առաւելապէս կը պարտին իրենց մէջ պարունակած թթուներուն, որոնց որակն ու քանակը կախում ունին գինիին տեսակէն եւ հնութենէն :

Գինին առաջնակարգ հականեխական ըմպելի մը ըլլալով, համաճարակի առին ջուրի տեղ գինի խմել կը յանձնարարուի :

Հ. ՏԷՐՕՍԿԻ

«Անուշ» օփերայի ներկայացման առթիւ

Մեծանուն եւ անմահ բանաստեղծ, հարազատ կանուխներէն Յովհաննէս Թումանեանի մահուան 25ամեակը կը տօնուի յառաջիկայ, Կիրակի, Մխիթարեանէն սրահին մէջ, նախաձեռնութեամբ Փարիզի հայկական մշակոյթին :

Իբր յարգանքի բաժին՝ բանախօսութիւն, արտասանութիւն, եւ անմոռանալի ներկայացում մը « Անուշ » օփերային, մասնակցութեամբ մեր լաւագոյն ուժերուն :

Տենդագին գործի լծուած են երգչախումբի երկտեղ անդամները, Հայ Աղջկան Տան մէջ, դէշերը ցերեկին խառնելով, ուր տեղի կ'ունենան վարժերը, հակառակ ներկայ դժնդակ պայմաններուն :

ԵԹԷ գոնէրն առարկողներ թէ քանիցս տեսնուած խաղ մըն է «Անուշ»ը, ալիտ պատասխանէինք որ նորութիւնը այս անգամ այն է որ ան կը ներկայացուի այս ափերուն վրայ ծնած եւ մեծացած երիտասարդներու կողմէ : Գնահատելի պարագայ մըն է նաեւ այն որ այդ նորահասները իւրացուցեր են թէ հայ երգը եւ թէ հայ մեծասքանչ լեզուն, համեմատաբար կարճ ժամանակի մը մէջ :

Մանօթանանք Օր. Անժէլ Վարժապետեանի, որ մասնաւոր հրաւէրով Փարիզ եկած է, եւ ստանձնած է «Անուշ»ի դերը : Իր արուեստագէտի տաղանդը խոտոր կը համեմատի կարծես իր հաստատութեան հետ : Իր թաւչային ձայնը եւ ողբերգական կրնան ապրիլ, իսկ չամբանեայի դեր

կը նախատեսուի արուեստասէր հասարակութեան մը խումն ներկայութիւնը յառաջիկայ կիրակիի ներկայացման՝ որ ունի երկու նպատակ — անջատաբար գեղարուեստական վայելքէն. —

Նախ՝ յարգանքի տուրքը տալ մեր անմոռանալի թումանեանին իր մահուան 25-ամեակի առիթով, յետոյ՝ քաջալերել խումբ մը մատաղաշէն երիտասարդութեան անվերապահ նուիրումով կատարուած աշխատանքին հանդէպ, որպէսզի անոնք, շլացած դուրզուրուռ հասարակութեան մը ծափերէն՝ անոնին հայ արուեստով, մնծնան այդ ուխտով, եւ ներկայացումէն վերջ տանին իրենց հետ հայ չունչի եւ հայ կեանքի հուրը, եւ գեղեցիկ գործ մը կատարած ըլլալու գոհունակութեամբ աշխատին՝ վաղը լաւագոյնը ընելու համար :

ԹՂԹԱԿԻՑ

ՄՆԱՑՈՂՆԵՐԸ

Առաջին կարաւանով հայրենիք մեկնող մեր հայրենակիցները, բախտաւոր էին : Աշնան առաջին ամիսն էր, ծովը խաղաղ, նաւը փառաւոր :

Մեկնողներու չափ, քարափը խռնուած ժողովուրդին խանդավառութիւնը, եւ ներգաղթի կազմակերպիչներուն անթերի աշխատանքը գովասանքի արժանացաւ այս սիւնակներուն մէջ :

Այսօր պատկերը բոլորովին տարբեր է սակայն : Առաջին կարաւանով մեկնողներուն վակոն անուանկներէն 35 հատը մնացած էին նաւահանգիստը, նոյնպէս նաեւ 86 ինքնաշարժեր որոնց տէրերուն անուններն մի առ մի թուեր էի «Ցարաջ»ի տասը սեպտեմբերի թիւով : Ներգաղթի կոմիտէն, վստահեցուցած էր մեկնողները թէ տասնը հինգ օրէն յիշեալ անուանկներն ու ինքնաշարժները պիտի հասնէին Պաթում, մասնաւոր փոխադրանաւով մը : Զորս ամիս է անուանկները քարափը մնալով անոնցմէ շատերը կոտրուեցան ու կողոպտուեցան անծանօթներու կողմէ, իսկ մնացեալները չենք գիտեր թէ ինչ ձեւով ղրկուեցան : Արգիլուած էր նաեւ Ֆրանսային ինքնաշարժեր դուրս հանել, մինչ Հայաստանէն եկած նամակներէն կը տեղեկանամ թէ, խումբ մը ներգաղթողներ մինչեւ Պաթում պիտի դան իրենց ինքնաշարժերը դիմաւորելու ...

Առաջին կարաւանը որ պիտի մեկնէր Մարսիլիոյ, յապաղելով մեկնեցաւ Սեպտեմբեր չորեքին, եւ այս իսկ պատճառաւ երկրորդ կարաւանի մեկնումը եւս ուշանալով, զուզադիպեցաւ Ֆրանսայի ուղենաւային չըլլային : Բոլորին ծանօթ է թէ ինչ տանջանքներ կրեցին մեկնողները, մայրեր ծծկեր մանուկներով, տկարակազմ յղի հարսներ ու ծերեր՝ օրեր զիշերեցին ծովափը, որոնք նիւթական մեծամեծ գոհողութիւններով հասիլ կրցան «Փոպեաս»ին նաւը մտնել :

Թողունք մեկնողները եւ մաղթենք որ հայ երկինքի օդն ու ջուրը թարմացնէ եւ կազդուրէ զանոնք : Այժմ լսենք թափառականն մնացողները :

ՊԱՏԿԵՐ Ա.— *Երէկ սեփականատէր էի այսօր թափառական, տունս ծախեցի ստիժքէն շատ վար գնով, եւ գնեցի զանազան իրեղէններ Հայաստանի համար պիտանի, ամիսէ մը աւելի է անգործ եմ : Ֆրանսացի գործարանատէրս գործ չի տար, գնածներս կը ծախեմ չնչին դիներով, սպասս խորտակուեցաւ, երեք գաւակներով անճար մնացի :*

ՊԱՏԿԵՐ Բ.— *Լիոնէն եկանք ընտանիքիս հինգ անդամներով, բանուորի համեստ վիճակով կ'ապրէինք : Ունէինք պզտիկ յարկաբաժին մը զոր ծախեցինք եւ եկանք Մարսէյլ, չուտով մեկնելու յոյսով : Պոմոնի «Mon Etoile» սրահին մէջ, ամիս մը զաղթականի կեանք անցուցինք : Շնորհակալութիւն Պոմոնցիներուն, որ մեզ կերակրեցին եւ խնամեցին, մանաւանդ Բարեգործականին որ սակայն վերջերս յայտարարեց՝*

— « Ձեր վերջին ճաշն է այս, ներգաղթը վերջացաւ, թող ամէն մարդ իր գլխուն ճարը նայի» :

— Բնակարան չունիմ, դրամ չունիմ, ո՞ւր երթամ ... :

ՊԱՏԿԵՐ Գ. — *Ներգաղթի պատրաստուող հայրենակից մը իր տունը կը ծախէ ուրիշ հայրենակիցի մը : Առաջինը իր ֆրանսահպատակ զաւակներուն պատճառաւ չի յաջողիր մեկնիլ : Հակառակ նոր սեփականատիրոջ ամիսումներուն՝ չուզեր տունէն ելնել եւ խնդիրը կը հասնի դատարան :*

— Պըշրն դատաւոր, ֆրանսահպատակ զաւակներ ունենալուս համար չկրցայ Հայաստան մեկնիլ, հետեւաբար չեմ կրնար տունէս հնոանալ :

— Բայց քանի որ գիտէիք թէ ֆրանսահպատակներուն մեկնումը արգիլուած էր ինչո՞ւ կ'ուզէիք երթալ ...

Եւ դատարանը կը վճռէ երեք օրուան պայմանաժամով տունը յանձնել նոր սեփականատիրոջ :

Դեռ երկար է չարքը նման պատկերազարդ պատմութիւններու :— Ս. Միլտոնեան

Կ. ՊՕԼԻ ՀԱՆԴԻՍԸ ԻՎՐԻԻ ՄԷՋ

Անցեալ կիրակի Իվրիի Պէն Տուչի սրահին մէջ տեղի ունեցաւ Փորթ ս'Իթալիի մասնաճիւղին տարեկան ցեղեկոյթ — հանդէսը :

Ժամանակէն առաջ խումն բազմութիւն մը ներկայ էր, մեծ մասը Փարիզի, Սէվրանի, Շավիլի եւ Ալֆորվիլի երկաեռ «Նոր Սերունդ»ականները, որոնք հայկական մթնոլորտի մը մէջզուարթ ու համելի կիրակի մը անցընելու զոհունակութիւնը ունեցան :

Ժամը 4ին ընկեր Ս. Յովհաննիսեան բացաւ հանդէսը եւ քանի մը խօսքով պանծացուց Հայ կապոյտ Խաչի կատարած գործը, որ եթէ նախախնամական բարիք մըն է հիւանդին ու չքաւոր հայ ընտանիքին, անվիճելի թրծողն ու խմորողն է նաեւ նորահաս սերունդին ազգային առողջ նկարագրի ու գաստիարակութեան :

Սէվրանի Հայ կապոյտ Խաչի սիրողներու թատերախումբը ներկայացուց Սիլվիլի «Հարսը», եւ ծիծաղաշարժ զաւեշտ մը «Բաժակ մը թէյ» : Բոլոր դերակատարներն ալ յաջողութեամբ կատարեցին իրենց դերերը : Հանդիսականները շատ դոհ մնացին եւ բազմաթիւ անդամներ ծափահարեցին զանոնք :

Գեղարուեստական բաժինին իրենց սիրայօժար մասնակցութեամբ յաջող արտասանութիւն ներ ըրին Օր. Շաքէ Յովհաննէսեան եւ Պ. Քէօսէեան :

Հմայիչ եւ քաղցր ձայնով մեներգեցին Օր. Աստղիկ Քէօսէեան եւ Պ. Սուրէն Անդրէասեան :

Ժամը 6ին սկսան եւրոպական պարերը, մերթ ընդ մերթ համեմուելով հայկական պարով, զուռնայիով եւ յեղափոխական երգերով :

Խաչուհիները իրենց պատշաճ վրայ ամէն ջանք ի գործ դրին հաճոյակատարութեամբ հիւրասիրելու համար ներկաները :

Ժամը 9ին, պուֆէն, այնքան առատ ու այլազան, սպառած էր բոլորովին :

Ժամը 11ին մեներգիչները խումբ առ խումբ սկսան հեռանալ սրահէն՝ երգը իրենց շրթունքին եւ գոհունակ տրամադրութեամբ մը առյգուն : Ցեղեկոյթը վերջացած էր :

Փորթ ս'Իթալիի Հայ կապոյտ Խաչի մասնաճիւղը իր անկեղծ շնորհակալութիւնները կը յայտնէ Պ. Պակիրճեանին որ ներկայ ըլլալով եւ զնահատերով Հայ կապոյտ Խաչի գործունէութիւնը հազար Ֆրանք նուիրեց մասնաճիւղիս ձեռնարկներուն ի քաջալերութիւն :

Շնորհակալութիւն նաեւ Սէվրանի մեր քոյր մասնաճիւղին, որ սիրայօժար իր մասնակցութիւնը բերաւ մեր ցեղեկոյթին, նպաստելով անոր ներճակտին եւ բարոյական յաջողութեան :

Ապրի Հայ կինը եւ իր հարազատ մեծ կազմակերպութիւնը Հայ Կապոյտ Խաչը :

Գուտաց

ՁԱՑՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ՎԱԼԱՆՍ.— Շաբաթ դիշեր, 17 Յունուար, Հայ Մարզականին U. S. A. խնամակալ մարմինը, Պետական թատրոնին մէջ ամբողջ երեք ժամ, Վալանսի հայ հասարակութիւնը ապրեցուց հայրենի յիշատակներով : Մարսէյլէն ու Լիոնէն սիրողներ ղեկավարութեամբ ղերասան Թրազօչին, ներկայացուցին «Ղարապաղի Մելիքները», 4 արար, օ-վերէվը : Սրահը ամբողջութեամբ լեցուն էր մանաւանդ Նոր Սերունդի անդամներով :

★ Յունուար 11ին տեղի ունեցաւ Հայ Մարզականին 12րդ ախոյեանական 1er serie, match Retour, Dieulefit, մրեւնոյն չեմպրն խումբին դէմ, իրենց դաշտին վրայ : Մեր անմոռանալի մարզիկները շահեցան 4—0 : Հետ պարտուողներուն համար այլեւս վերջ կը դնէ promotion բարձրանալու յոյսը մինչեւ նոր շրջան 1948 հոկտեմբեր : Մեր անմոռանալի ընդհանուր երեւանեանը . Օսկի Թաթիկեան, Գիւլխաս Թէպոյեան, եղբարք Գազանճեան համաձայն մարզական մասնաղէտներու կրնան նոյնիսկ ամբողջ խումբերու դէմ մրցիլ :

★ Կիրակի 18 Յունուար տեղի ունեցաւ մեր առաջին խումբին 13րդ մրցումը ախոյեանական Match Retour Lavaultի դէմ իրենց դաշտին վրայ : Մերոնք չհեցան 4— 2 :

Այժմ կը մնայ 2 match Retour եւ ասոնք ալ շահելէն ետք, պիտի սկսինք (Ինթէռ վուլի եւ coup Lyonnaisի ամենահետաքրքիր խաղերուն :

Թղթակից

Մի ՄՈՌՆԱՔ կարճ գրել, մաքուր գրել, մեկնաբանով գրել եւ թուղթին միայն մէկ էջին վրայ գրել խմբագրութեան եւ գրաշարին գործը դիւրացնելու համար :

«ՑԱՌԱՋ»ի ԹԵՐԹՕՆԸ

ԼՍԱ ԵՒ ՀԱՄԱՏ

(ՅՈՐՀՐԴԱՎԷՊ)

Բ. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԴԱՐՁ
Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

Հայոց աշխարհ, հայոց աշխարհ... քեզի հետ եմ :

Աստուածներդ մին, խորհրդապիրքի մը եւ տիւ քաշուած, կ'աղօթէ անյիշաչար ջերմեռանդութեամբ : Անոր դէմքը նման է Այլակերպութեան մը դիւթահրաշ պատկերին, լինչպէս Արարատի ձիւնահեր գագաթը, լուսնային ու աստղային փրփուրներու մէջ : Անոր մազաղաթեայ խորհրդամատեանը, որ դարերու խորէն հաւատացեալներու հսկայ բանակ մը քաշած, բերած է իր եռեւէն, աստեղագիր մը եւ մահիկապատ : Լուսանցքին վրայ սակայն, աւանդութիւնն ու պատմութիւնը կը վիճին չարունակ :

— Ո՞վ է երկնողը զայն ...

Երկուութիւն : Անորոշութիւն :

Միայն, հեռուն, Վանայ ծովակին երախտաց ալիքները, մարակուած նժոյգներու պէս յուզուած ու փոթորկած, կը պատասխանեն բարձրագոչ :

— Անոր երկնողն ու ճգնողը մեր աչխարհէն է ... Չէ՞ք գիտեր որ դէպքերէն դէմքեր եւ դէմքերէ դէպքեր կը ծնին, մեծանուն եւ ճակատագրական :

Եւ կը սկսին պատմահիւսել ծնունդը խորհրդամատեանին :

★

Լուսնակ գիշեր : Գողգոթեան գիշեր :

Հայոց աչխարհի լուին ոգիները, հողերու ընդերքէն դուրս թափուած, կը կռուին ուղտերու երկարաճիգ կարաւանի մը հետ : Քարեր, ապառաժներ կը թաւալին տափաստաններու, կիրճերու եւ ձորերու եզրին : Դաչտերը կը տաքան, լեռները կը հառաչեն ու ձորերը կը վայեն, ահասոսր արձագանգներով :

— Հասար ...

Պարսից Արքայից Արքային կարաւանն է որ կ'անցնի, ոսկի, արծաթ, թանկարժէք քարերով, զէն ու զարդով բեռնաւորուած : Հարկատու գաւառները Հայոց Աչխարհին ... : Հեռուն, կողոպտուած Վասպուրականը, երակներէն արիւն առնուած հիւանդի մը պէս կը հանդայ զալարուն :

Անապատի թեւատ թռչունը, երբեմն, զարմացած, կանգ կ'առնէ ապառաժի մը գողտոր գլխին, երբեմն սարսափած, կը չոքի քարքարուտ անցքի մը կուշտին ու աչքերը սեւեռուն, կարծես կ'աղօթէ պատասուայդղ ապշութեամբ : Երբեմն ալ, դաժան ճանապարհին մաքառումներէն ուժասթափ, ուտերը կը զայթին ու հասարակչռութիւնը կորուսած, իր բեռան հետ կը գահավիժի անդունդին պարապութեան մէջ :

Բայց, որո՞ւմ հոգը ... աւարին չատը իր տէրը կը մնայ : Կարաւանապետը կ'երազէ Մեծն Խոսրովի չնորհատու պարգեւներն ու Շիրազի վարդերը միայն :

Ցանկարծ, չչուկ, աղմուկ եւ սուլոց : Մէկ մի քարի, թուփի եւ ծառի տակէն ստուեր մը՝ դարանամուտ : Լուսինը, մայրիի մը գագաթէն կը համբ չնչատ : Երկու հազար Արմէններ ու Արմէնիներ :

Սուրերը կը մերկանան չառաչուն, վահաններըը կը կռիւկռփեն, տէգերը կը ֆչան ու նիզակները կը չողան կայծակնաթափ : Խսկոյն, կարաւանը՝ արդէն պիտաթափ ու անճնաոուր :

Այո, լուսնակ գիշեր, երկունքի գիշեր : Որովհետեւ Հայոց աչխարհի սուրբերը ամէնչազէս, լեռներէն վար իջեր են յաջորդ գիշեր, մտեր են Վաղարչապատ, զղուչաւոր քայլերով ու Լուսաւորչի գահին չուրջ բոլորուած, վեհաժողովի նստեր են ակմբահոյլ : Աչդագածի սրբալոյս կանթեղը կախուեր է անոնց վերեւ, որպէս խարոյկ մը հրաչումէ :

Մթնոլորտը երկրային է ու երկնային : Խունկ ու վառօդ, վեղար ու աղաւարտ, Աւետարան եւ Վահան, խաչեր, սուրեր ու նիզակներ : Մասիսը, իր մէջ բանուած Արքային մտածչէն մտամչէ, եւ կատաղութենէն կատաղութիւն ցամեր է անոնց հոգիներուն մէջ : Կարգախօսը փչրել Արեւելքին ու Արեւմուտքին դերութեան չղթաները անծայրութեան, ձերբազատել հայրենիքը օտարին լուծէն : Ցեղախոնութիւն, ապստամբութիւն :

Հեռուն, Վասպուրականի վերազրաւուած դանձը, թաքստոցատ քարայրին խորէն կը ճառագայթէ չողարձակ :

ՊԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՒԻ

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ կառավարութիւնը որոշած է Յունաստանէն չհեռացնել իր օդային ուժերը : Նախապէս որոշում տրուած էր որ օդային տարմիղները Ապրիլ վերադառնային այս ամիս :

ԻՏԱԼԻՈՅ ճախակողմեան ընկերվարականներու ղեկավարը, Պ. Նէնի, չորեքշաբթի օր կոստակցութեան համագումարին մէջ յայտարարեց թէ Իտալիոյ ապագան կրնան ապահովել միայն համաշխարհային ու Խորհրդային Ռուսիան: Պ. Նէնի խօսեցաւ երեք ժամ եւ իր 700 ունկնդիրներուն յանձնարարեց որ գործակիցն համայնավար կուսակցութեան հետ յառաջիկայ ապրիլ ընտրութեանց ընթացքին, եւ բուռն կերպով քննադատեց Թրումընի օրինագիծը եւ Մարշըլի ծրագիրը: Կասպերիի կառավարութիւնը «ահեւ կառավարութիւն»մըն է, ըսաւ ընկերվարական առաջնորդը, եւ գործիք մը արեւմտեան պետութեանց ձեռքին մէջ :

25000 ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐ չոգեպլինդ կ'աշխատին Սաքսոնիոյ էրցկէպէրկի լեռներուն հանքերուն մէջ (ռուսական գօտի) ուրանիում հանելու համար: Պատերազմէն առաջ հանքային այդ շերտերու աշխատաւորներուն թիւը 5—6000ը չէր անցներ: Սովորական հանքագործ մը կը չահի ամսական 250 մարք: Բայց Ռուսերը վերոյիշեալ 25000 բանուորներուն մեծ մասին կը վճարեն մինչեւ 2000 մարք :

ՊՐԻՒՔՍԷԼԷՆ կը տեղեկացնեն թէ վարչապետ Պ. Սպաք անցեալ կիրակի օր ժընեւի մէջ գաղտնի տնտեսակցութիւն մը ունեցած է տարադիր թագաւորին, Լէոփոլտ Դ-ի հետ եւ զգացուցած է անոր որ ժողովուրդին փափաքն է դահ բարձրացնել գահաժառանգը, իշխան Պոտուէն, յառաջիկայ սեպտեմբեր երբ այս վերջինը կը հասնի օրինական տարիքին :

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ծովակալութեան որոշումով պիտի քանդուին Քուիք Էլիզապէթ, Վէլիընթ, Նէլսըն, Բաանի եւ Բրինաուն ռազմանաւերը եւ եօթը փոքր յածանաւեր որոնք «ծերացած են»:

ԵՐԿՈՒ ՀԱՐԻՒՐ ՀԱՋԱՐ Գերմանացի աշխատաւորներ գործադուլ հռչակեցին չորեքշաբթի օր Նիւրընպէրկի եւ Քոլընի մէջ բողոքելու համար ուտելիքի նուազութեան դէմ :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ նախարարութիւնը կը հաստատէ թէ ելեկտրական ուժի հայթայթումով ընդհատումներ պիտի չունենայ այս ձմեռ մեծ նեղութիւն պատճառելով :

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ հնգամեայ ծրագրին (1946—1950) գործադրութեան աշխատանքները 1947ին նախորդ տարիէն աւելի լաւ արդիւնք տուած են: Ճարտարարուեստական արտադրութեանց մէջ առաջին տեղը կը գրաւէ Լաթվիան — 117 առ հարիւր ստեղծուած ապրանքի վրայ, իսկ չատ մը մնացած են Ուկրայինան եւ Կարելիան :

ՀԱՄԱԶԱՑՆ Յունուար 16ի Պուքրէշի մէջ Պուլկարիոյ եւ Ռումանիոյ միջեւ կնքուած դաշնագրին տրամադրութեանց, պայմանագիրը կողմերը յանձն կ'առնեն իրարու օգնել երբ որեւէ երրորդ պետութիւն յարձակում գործէ իրենցմէ մէկուն դէմ :

ԼԵՀԱՍՆ կառավարութիւնը կը քննէ « Ցուրութիւնը» ճանչնարու խնդիրը : Բայց հաւանաբար ապստամբ դիւանագիտականին « կառավարական չէ որ վերջնական որոշում մը տրուի այդ մասին՝ «մինչեւ կացութիւնը չպարզուի» :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇՐՋԱԳ ՅՈՐԵԿՈՑԹ

Նախաձեռնութեամբ՝ Սեբաստիոյ Նահանգային Միութեան, վաստակաւոր դերասան՝ ՏՐԴԱՏ ՆԵՇԱՆԵԱՆի, մասնակցութեամբ Փարիզի հայ բեմի լաւագոյն ուժերուն, 8 Փետրուար 1948, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Մաքսըլէն Գէոթըլօի չքեղ թատրոնին մէջ, 28bis, rue St. Dominique, métro Invalides:

Առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէ հանճարեղ ողբերգու Վ. Շէյքսփիրի

ԱՐՔԱՅ ԼԻՐ

Պատմական տուամ 6 արար եւ 2 պատկեր, Թարգմ. եւ բեմադրութիւն Տ. Նչանեանի :

Տոմսերու գիները, 100էն 400 Ֆրանք, կը ծախուին հայկական բոլոր գրատուներուը, ճաշարանները, Սեբ. Նահ. Միութեան կեդրոնին եւ մասնաճիւղերուն մօտ: Հարիւրին տասը պիտի յատկացուի Սեբ. Նահանգ. Միութեան ներդաշնի Ֆոնտին: Սրահին ջեռմութիւնը ապահովուած է: Փնտռել յայտագիրը :

ՏԻԿԻՆ Ա. ԳԱԶԱԶԵԱՆ կը նուիրէ 1500 Ֆր. Ֆր. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին, փոխան Ծաղկեպսակի Պ. ԲԱՐՍԵՂ ԳԱԶԱԶԱՉԵԱՆԻ մահուան առթիւ :

Ցերեկոյթ պարահանդէս

Ֆր. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը, տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24, Hôtel Continentalի չքեղ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde :

Նուագախումբ ՖԻՐՆԱՆ ՊՈՒԶՕՆ : Գեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ :

Տարեկան չքեղ ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Մթութեան կարմիր Խաչի եւ Ալբանիոմի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէջ, 43 Bld. Raspail, Paris:

ՐՈՄԱՆԻ Ֆր. Կ. Խաչի մասնաճիւղը կը տօնէ «Մանուկներու Օրը» այս չաբաթ իրիկուն ժամը 8ին Սէն Պէրնարի սրահին մէջ: Կը հրաւիրենք մեզի դրացի քոյր մասնաճիւղերը, Վալանս, Վիէն եւ Օպլէա: Կը բանախօսէ Վիէնէն ընկեր Ս. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՔԵՂ ՅԵՐԵԿՈՑԹ

Կազմակերպուած Փրանսահայ Կապոյտ Խաչի Սէվրանի մասնաճիւղին կողմէ, կիրակի 7 Մարտ 1948, ժամը 3էն 12, Casino des Etoiles, Մասխս սրահին մէջ, 87 Ave. de Livry, à Sevran :

Գեղարուեստական հաճելի բաժին : Մրափրզ, ներկայացում եւ անակնկալներ, հարուստ պարեր : Ճոխ պիւֆէ : Մուտք՝ 75 Ֆր. Հազ. մի չեղ. — Կառախումբ Gare du Nordէն ժամը 13.45ին եւ 14.15ին : Eglise de Pantinէն 147 թիւ օթոպուս, իջնել Terminus :

ՄՈՒՐԱՑ ԲԱՓՃՃԵԼՑԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ հաւատարիմ իր ծրագրին, որ է ծաւալել հայ ժողովուրդին մէջ ազգային մշակոյթը, որոշած է պարբերաբար բանախօսութիւններ սարքել Սեբաստիան Մուրատեան վարժարանին մէջ, 26 բիս թրուայօն, Սէվր :

Առաջին բանախօսութիւնը տեղի կ'ունենայ 1 Փետրուար կիրակի ժամը 15.30ին: Պիտի բանախօսէ Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեան : Նիւթ ունենալով «Հայ ցեղին ծագումը » :

ՀՈԳԵՀԱՆԴԻՍՏ. — Մուրատ Թաֆայէլեան Նախկին Սահուց Միութեան Մոսկայի մասնաճիւղը հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտայ ի յիշատակ տարաբախտ երաժշտագէտ

ԳՈՒՐԳԷՆ ԱԼԷՄՇԱՀԻ

Կիրակի 25 Յունուար 1948, 40 rue d'Aubagneի կաթողիկէ Հայոց եկեղեցւոյն մէջ: Կըպատարագէ Սկվռի Մուրատեան վարժարանի տեսուչ Հայր Սահակ Տէր Մովսէսեան: Երգեցողութեանց ատյօժար մասնակցութիւնը կը բերէ «Արմենիա» երգչախումբը ղեկավարութեամբ Վ. Սարգսեանի: Կը հրաւիրուի Մարսէյլի հայութիւնը անխտիր յարգելու համար բոլորէն նիւրուած երաժշտագէտին յիշատակը :

Այրի Տիկին Ծ. Խանչէրեան եւ զաւակները, ինչպէս եւ բոլոր պարագաները իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն բոլոր անոնց որոնք ատճառ կամ գրաւոր իրենց ցաւակցութիւնը յայտնեցին՝ Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՆՉԷՐԵԱՆի իրենց ողբացեալ ամուսնոյն, հօր եւ աղգականին տխուր մահուան առթիւ :

ԱՑՐԻ ՏԻԿԻՆ ԳԱԶԱԶԱՉԵԱՆ եւ աղջիկը Օր. Գաղագաչեան իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն, իրենց ամուսնոյն եւ հօր՝ ողբացեալ Պ. ՐԱՖՖԻ ԳԱԶԱԶԱՉԵԱՆի մահուան առթիւ իրենց ցաւակցութիւնը յայտնող բոլոր ազգականներու եւ բարեկամներուն :

Տէր եւ Տիկին Ե. Իւթիւճեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Մ. Իւթիւճեան, Պ. Արման Իւթիւճեան կը ծանուցանեն թէ Փետրուար 1ի կիրակին հոգեհանգստեան մատուռը արարողութիւն պիտի կատարուի Փարիզի Հայոց եկեղեցիին մէջ, ի յիշատակ իրենց ծնողաց ՄԿՐՏԻՉ ԵՒ ԷԼԻԶ ԻՒԹԻՒՃԵԱՆՆԵՐՈՒ: Կը հրաւիրուին իրենց յիշատակը յարգողները :

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՑՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ Սէն Լուի դասախօսութիւնը երկուշաբթի իրիկուն ժամը 8ին, սովորական հաւաքատեղին: Կը խօսի ընկեր ՏԻԳ. ԹՈՒՈՑԵԱՆ :

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ Պուլվառ Օսմանի մասնաճիւղին դասախօսութիւնը երեքշաբթի իրիկուն ժամը 8ին, սովորական հաւաքատեղին : Կը խօսի ընկեր Ս. ՄԻԼՍՈՆԵԱՆ :

Ա Ն Ո Ւ Ե Ր

Կիրակի 25 Յունուար 1948, ժամը 14.30ին

ՄԻԻԹԻՒԱԼԻԹԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Մեծ պատրաստութեամբ եւ խնամքով Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆի մահուան 25ամեակին առթիւ :

Փարիզի հայկական երգչախումբին կողմէ ՍԷՆՖոնիկ մեծ նուագախումբ (60 հոգի) :

Ղեկավարութեամբ Ա.ՐՄ. ՊԱՐԹԻԵԱՆի



Առաջի դէմքը կը կատարէ Օր. ԱՆԺԵԼ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, Ա. Grand prix Wicard de la Ville de Marseille :

Ներկայացումը կը սկսի ճիշդ ժամուն : Նուագի պահուն դուռները փակ կը մնան :

ԾԱԽՈՒ Է կօշկակարի (Bottier) խանութ մը վարձուով, եւ քանակարձէզ :

Մանրամասնութեան համար դիմել Պ. Chukuriantz, 56 rue Genève — Arles sur Rhône :

ԼՈՑՄ ՏԵՍԱՒ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆի ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՏՈՐ ԵՐԿԱՐԱՐԴԸ: Մինչեւ այժմ լոյս տեսած եւ բաժանորդներուն ուղարկուած են առաջին, երկրորդ եւ չորրորդ հատորները: Մարտին լոյս պիտի տեսնէ երրորդ հատորը, իսկ ապրիլին հինգերորդը: Աշխատասիրական գործը պիտի բաղկանայ 10 հատորներէ, որոնք պիտի պարունակեն հեղինակին բոլոր գեղարուեստական գործերը: Տասը հատորներու բաժնեգինը Ֆրանսայի համար 6000 Ֆրանք կանխիկ:

Բաժանորդագրուելու համար դիմել «Ցարոյ»ի վարչութեան :

ՏԱՐԵԿԱՆ ՇՐՋԱԳ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Վիէնի Հ. Մ. Ը. Մ. մասնաճիւղին կողմէ: Այս չաբաթ իրիկուն Hôtel de la Posteի չքեղ սրահներուն մէջ: Մուտքը 125 Ֆր.:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՆՉԻՐԵԱՆի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի 250 Ֆրանք պահեցօ Քաշանի Նոր Սերունդին եւ 250 Ֆրանք Կապոյտ Խաչի մասնաճիւղին, ընկեր Մինաս Ալճունեանի կողմէ:

ՇԱՎԻԼԷՆ ընկեր Փիլիպոս Օհանէսեան 500 Ֆրանք կը նուիրէ վէրերառներու Փունտին, փոխան ծաղկեպսակի՝ ՏԻԿԻՆ ՏԷՄԻՐՃԵԱՆի մահուան առթիւ :

ՅԱՒԱԿՈՒԹԻՒՆ. — Հ. Ց. Դ. Պանեէօ Քաշանի «Արծիւ» ենթակոմիտէն իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ ընկերներ Վահէ եւ Յովսէփ Խանչէրեանեանցին, իրենց մօրը եւ եղբայրներուն, եւ բոլոր պարագաներուն, իրենց հօրը Պ. Օհանէս Խանչէրեանի տխուր մահուան առթիւ, եւ փոխան ծաղկեպսակի հազար Ֆրանք կը նուիրէ Վէրերառներու Ֆոնտին :

ՅԱՌԱՋԱԳ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Samedi 24 Janvier 1948 Շաբաթ 24 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5248—Նոր շրջան թիւ 857 Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ ԳԻՆ՝ 5 Ֆր.

Ա Ն Գ Լ Ի Ա Կ՚Ա Զ Դ Ա Ր Ա Ր Ք

ՊԼԵՒԻՆԻ ԶԳԱՑԱՑՈՒՆՑ ՃԱՌԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Մեծն Բրիտանիոյ արտաքին նախարարը, Պ. Էրնէսթ Պեվին, հինգշաբթի օր խորհրդարանին մէջ կարեւոր ճառ մը խօսելով օրուան միջազգային կացութեան մասին, ըսաւ.—

« Ժամանակը եկած է արեւմտեան Եւրոպայի կացութիւնը ամրապնդելու համար: Մենք չենք առաջարկեր քաղաքական միութիւն մը Ատլանտեան հետ: Միասին պիտի աշխատինք, եւ սերտ յարաբերութիւններ պիտի մշակենք այդ երկրին հետ: Ժամանակը եկած է որ միջոցներ գտնենք զարգացնելու համար մեր յարաբերութիւնները Պելճիքայի, Հոլանտայի եւ Լիւքսէնպուրկի հետ: Շուտով բանակցութիւնները պիտի ունենան այդ երեք երկիրներուն հետ. Պրիւքսէլի, Լահէյի եւ Լիւքսէնպուրկի մեր ներկայացուցիչները փակ հրահանգ ստացան որ, իրենց Ֆրանսացի պաշտօնակիցներուն հետ խորհրդակցաբար, այդ խնամտով խօսակցութիւններ առաջարկեն: Ցոյս ունիմ որ դաշնագիրները պիտի ստորագրուին այդ երկիրներուն հետ եւ Ֆրանսան պիտի ըլլայ կարեւոր կողմ մը արեւմտեան Եւրոպայի մէջ: Պէտք պիտի ըլլայ նաեւ որ մեր ամերիկեան դրացիներուն ալ դուրս ելլենք հարկ եղած պարագային: Նկատի պիտի ունենանք Իտալիան ալ միասին առնելու որովհետեւ այդ երկրին մասնակցութիւնը նուազ կարեւոր չէ: Արեւմտեան Եւրոպայի ներկայացուցիչները միասին կ՚աշխատին՝ արագօրէն եւ արդիւնաւոր կերպով: Այդ երեւոյթը շատ լաւ նշան մըն է ապագայի համար. մեր կարելին պիտի ընենք գործակցութեան ոգին զարկ տալու համար :

Պէտք է դիտել տամ որ ես միայն Եւրոպայի մասին չէ որ կը մտածեմ: Եւրոպան իր աղէտութիւնը ապրած է ամբողջ աշխարհի մէջ. հետեւաբար մենք աւելի հեռուներով ալ կը հետաքրքրուինք: Նախ եւ առաջ մեր աչքերը կ՚ուղղենք դէպի Ափրիկէ ուր մեծ պատասխանատուութիւններ ունին Անգլիան, Ֆրանսան, Պելճիքան եւ Փորթուգալը: Մեր նայուածքը կը հասնի, մանաւանդ, մինչեւ հարաւ արեւելեան Ասիա ուր Հոլանտան մեծ շահեր ունի :

Արեւմտեան Եւրոպայի վերականգնումին համար անհրաժեշտ է անտեսական օժանդակութիւնը: Ատոր համար պէտք է գործակցինք բրիտանական ինչպէս նաեւ Ֆրանսական, Հոլանտական, պելճիական եւ փորթուգալեան գաղթավայրերուն հետ: Շատ կենսական է որ, եթէ Եւրոպան պիտի վճարէ իր պարտքերը եւ նպաստէ աշխարհի տնտեսական հաւասարակշռութեան , այդ գաղթավայրերուն արտադրութիւնները օգտագործուին :

Նախարարը խօսելով Ռուսիոյ մասին, յայտարարեց.—

Խորհրդային Միութիւնը կը հետապնդէ քաղաքական ուղեգիծ մը որուն նպատակն է ամէն միջոց ի գործ դնել համայնավարական հակակշռի տակ առնելու համար ոչ միայն արեւելեան Եւրոպան, այլեւ , ինչպէս երեւան եկաւ վերջերս — արեւմուտքը : Հետեւաբար շատ ալ կարեւորութիւն չունի թէ մենք որ ատիճան կ՚աշխատինք անուշի կապել, կամ հետեւիլ ողջոյնի քաղաքականութեան մը եւ զանազան կարդադրութիւններ ընել: Շատ բացայայտ է որ համայնավար քաղաքականութիւնը անդիմօրէն առաջ կը մղուի, ամէն երկրի մէջ: Տեսանք թէ ինչ խաղեր խաղացին Լեհաստանի, Պուլկարիոյ, Հունգարիոյ եւ, վերջերս ալ, Ռումանիոյ մէջ: Համաձայն մեր քաղած տեղեկութեանց ուրիշ փորձեր ալ պիտի կատարուին այլուր: Այս խնդիրը միայն Լեհաստանի կամ ուրիշ որեւէ երկրի կազմակերպութեան խնդիրը չէ, այլ Խորհրդային Միութեան հակակշիռը արեւելեան Եւրոպայի վրայ: Ռուսիոյ սահմանները, արդարեւ, հասած են Շեխիէն, Թրիէսթէ եւ Էլպա: Եւ սակայն երեւոյթները ցոյց կուտան որ ան տակաւին գոհ չէ այս հսկայ ծաւալումով: Ենթադրողներ եղան թէ Անգլիա եւ Ամերիկա պիտի յոգնէին Յունաստանի մէջ եւ համայնավար ապստամբներու « կառավարութիւն » մը պիտի ճանչցուէր ուշ — կանուխ : Ցետոյ Յունաստանը պիտի ենթարկուէր խորհրդային վարչաձեւին ինչպէս նախորդները :

Ինդիր չէ թէ ինչ տեսակ կառավարութիւն մը կայ Յունաստանի մէջ ժողովուրդին կողմէ ընտրուած : Ձեռնարկները կը կատարուին այդ երկիրը ռուսական ծիրին մէջ առնելու համար : Ասիկա վտանգաւոր կացութիւն մըն է : Յունաստանի դէպքերը անտես կ՚առնեն Մ՚յացեալ Ազգերը: Կը վախնամ որ այդ երկիրները եւ իրենց խորհրդային պաշտպանները մեծ սխալ մը գործեն : Հանդիսաւոր կերպով խորհուրդ կուտամ որ զգուշութեամբ չարժին: Այս կարգի զրգռութիւններ, երբեմն, կը յանգին լուրջ հետեւանքներու, յոյս ունիմ որ անոնք կ՚ուզեն խուսափիլ այդ հետեւանքերէն: Շատ աւելի լաւ պիտի ըլլայ եթէ խնդիրները լուծուին համաձայն Մ. Ազգերու որոշումներուն քան թէ քաղաքացիական կռիւներ ստեղծուին եւ ճանչցուի Մարկոսի աւազակախումբը: Միջազգային յարաբերութեանց մէջ շատ վտանգաւոր բան է կրակին հետ խաղալ : Քարոզչութեամբ չէ որ կը լուծուին միջազգային վէճերը:

Ն. Վեհափառութեան կառավարութիւնը միշտ նկատի առած է որ Գերմանիոյ անդամահատումը կրնայ դժդոհութիւններ ստեղծել: Փոքր ատեն մէջ համաձայնեցանք որ կեդրոնական մարմին մը պիտի ստեղծուէր որուն պիտի յաջորդէր դեմոկրատական նոր պետութիւն մը: Բայց Խորհրդային կառավարութիւնը սկսած է ամբաստանել արեւմտեան դաշնակիցները փոխանակ հաստակաց քաղաքականութեան մը ուժ տալու: Ամէնքս ալ կը բաղձանք Եւրոպայի միութիւնը : Բայց այդ միութիւնը պէտք չէ իրագործուի այնքան մեծ պետութեան դերակշռութեամբ: Եթէ այդ տեսակ քաղաքականութիւն մը հետապնդենք , հետեւանքը, անխուսափելիօրէն պիտի ըլլայ երրորդ պատերազմ մը.... Անգլիա կը վարէ քաղաքականութիւն մը որուն նպատակն է թոյլ տալ փոքր ազգերուն որ ոտքի ելլեն Մեծերու հովանաւորութեան տակ, առանց վախի : Ձենք կրնար ընդունիլ Մեծերու գործակցութիւնը երբ անոնց մէկը կ՚աշխատի իր քաղաքական ու տնտեսական նպատակներուն ենթարկել փոքր պետութիւնները : Խորհրդի մէջ, Պ. Մոլոթով սպառնաց մեզի եւ Ֆրանսացիներու թէ փոխարինիչներ պիտի պայթէին մեր գլխուն եթէ յառաջ տանէինք Եւրոպայի վերականգնումի աշխատանքները: Ես պատասխանեցի թէ Անգլիա վարժուած է այդ կարգի սպառնալիքներու եւ պատրաստ է զանոնք դիմաւորելու :

Արտաքին նախարարը խօսեցաւ նաեւ Իրաքի եւ Եգիպտոսի ինչպէս նաեւ Ֆրանսայի վերջին զրգռուններուն մասին: Երեսփ. ժողովին երկու համայնավար երեսփոխանները բազմաթիւ անդամներ ընդհատեցին զինքը:

Նախարարէն վերջ խօսք առաւ ընդդիմադիրներու կողմէ, նախտղ արտաքին նախարարը Պ. Էնթընի Իան որ համակարծիք գտնուեցաւ Պ. Պեվինի արտայայտած տեսակէտներուն: « Ինչ որ անարիւն կամ « պաղ » պատերազմ կը կոչէինք մինչեւ հիմա, տեղահան « կը տաքնայ », ըսաւ Պ. Իան: Վերջի վերջոյ չէք կրնար ջիղերու պատերազմ մը մղել, պատմց ասոր — անոր ջիղերը ոտքի հանելու. այդ կացութեան մէջ ենք ներկայիս: Երկու երեւոյթներ կը սպառնան խաղաղութեան. Ա.— Համայնավարներու բուռն լեզուն եւ անոնց կատաղի քարոզչութիւնը Յունաստանի պէս երկիրներու մէջ. Բ.— Այն վտանգը որ —կրնայ ստեղծուիլ երբ արեւմտեան երկիրները ձախողին իրենց վերականգնումի ճիգերուն մէջ: Տարակոյս չունիմ որ մարդիկ կ՚աշխատին կացութիւնը անտանելի դարձնել » :

★ Անգլիոյ արտաքին նախարարին ճառէն ետք, Ուէսթմինսթըրի քաղաքական շրջանակներուն մէջ դիտել կը տրուի որ արեւմտեան դաշնակիցները այլեւս որոշած են աւելի վճռական քաղաքականութիւն վարել Ռուսիոյ հանդէպ: Այդ քաղաքականութեան հետեւանքը կրնայ ըլլալ, կ՚ըսեն, կամ վերջնական խզում մը, եւ կամ աւելի հաշտարար իրերհասկացողութիւն մը : Պեվինի ճառը շատ լաւ ընդունելութիւն գտած է եւ արեւմտեան խմբակցութիւն մը կազմելու իր առաջարկը « շատ քաջալերական» կը նկատուի :

★ Ուշագրաւ երեւոյթ մըն է նաեւ այն որ երեք օրէ ի վեր ամերիկեան մամուլը սիւնակներ կը յատկացնէ Սթալին – Հիթլէր համաձայնութեան (1939—41) վերաբերեալ վաւերաթուղթերուն, որոնք հրատարակուեցան այս շաբթու: Ամերիկեան ձայնասփիւռը բազմաթիւ լեզուներով կը պարզէ այդ համաձայնութեան ծալքերը: « Պարզ ու յստակ խօսելու ժամը հասած է դիտել կուտան պատասխանատու պաշտօնատարներ :

Ո Ր Ը Օ Ր Ի Ն

ԻՍԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ...

Երկու օրուան « Օրը Օրինի »ները մեզի պատմութիւն մը կը խոստանային, ի վերջոյ չպատմելու համար երեւի :

Փորձեցի դուշակել այդ պատմութեան ինչ ըլլալը եւ եթէ թոյլ տրուի կ՚ուզէի գոհացնել շատ մը հետաքրքիրներ :

Թերեւս նոյնը չէ իմ պատմելիքս: Բայց ի՞նչու յուշեցի զայն այդ երկու տողերը կարդալէ վերջ: Ձգի կը թողում բացատրել :

— Լեհկթիմուր կը գրաւէ, կարծեմ, Սեբաստիան եւ կը հրամայէ զինուորական դրաման եւթարկել բոլոր անհատական հարստութիւնները, քանըշտրս ժամուան ընթացքին :

Պայմառաժամը լրանալէ վերջ երբ իր հրամանին գործադրութեան եւ արդիւնքի մասին տեղեկութիւն կ՚ուզէ, կը պատմեն որ ժողովուրդը մեծ յուզումի մատնուած է եւ կը խնդրէ իրմէ խնայել եւ չգրաւել գոնէ իրենց անհրաժեշտ գոյքերը որպէսզի տկար ու անօթի փողոցը չմնան :

Ցաղթական արքան երկրորդ հրամանով մը կը պատուիրէ քառասունը ոսկի ժամուան մէջ բան չվճռուլ քաղաքին մէկ եւ դիմադրողը, չյանձնողը խստիւ պատժել :

Երրորդ օրը պաշտօնատարները դարձեալ կու գան Լենկթիմուրի մօտ նկարագրելու համար ժողովուրդին լացն ու կոծը, որուն վրայ բռնապետը զարձեալ, կը հրամայէ չարունակել թալանը :

Չորրորդ օրուան իրիկունը հրամատարը չփոթած կուգայ իր թագաւորին նկարագրելու տարօրինակ տեսարան մը, որուն ականատես եղած էին ինքն ու իր հրամանով թալլող զինուորները :

— Տէր ապքայ կ՚ըսէ զինուորականը, ա՛լ ո՛չ լաց կայ, ո՛չ պաղատանք..., ժողովուրդը ուրախ դուարթ կ՚երդէ ու կը պարէ ամէն տեղ: Քաղաքը տօնախմբութեան մէջ է կարծէք, ինչ զարմանալի մարդիկ են այս քաղաքին բնակիչները, ես չհրցայ բացատրել ...

Լենկթիմուր յաղթական եւ չարախինդ ժպիտով մը կը հրամայէ. — Դադրեցուցէք ամէն բռնութիւն, այլեւ ի զուր են բոլոր հրամաններս ու օրէնքներս, ուրեմն բան չէ մնացեր ժողովուրդին քովքանի որ առ անվախ կ՚երդէ ու կը պարէ» :

Եթէ այս չէր մեզի խոստացուած պատմութիւնը կ՚ենթադրեմ որ առ ալ կը յարմարի այն երկիրներուն ուր, կըսեն, ոչ թշուառութիւն կայ, ոչ աղքատութիւն, ոչ գործազրկութիւն, եւ ոչ իսկ գործադուլ ...

ՍՕՍԻ

Ց ո ւ ն ա ս տ ա ն ի դ է պ ք ե ր ը

ՀԵԼԼԷՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԿԸ ՑԱՐՁԱԿԻ

Համաձայն Աթէնքէն հասած վերջին լուրերու, կառավարական ուժերը ընդհանուր յարձակողականի սկսած են հիւսիսային Յունաստանի մէջ: Արիւնալի կռիւներ տեղի կ՚ունենան Արեւմտեան մէջ՝ Սելանիկէն 60 մղոն հիւսիս – արեւմուտք եւ Եուկոսլաւիոյ սահմանէն ութը մղոն հարաւ: 35 ապստամբներ սպանուած են . չատերը անձնատուր եղած են: Զինուորական գործողութիւններ տեղի կ՚ունենան նաեւ կռամոս լեռներուն հիւսիս արեւմտեան լանջերուն վրայ եւ Քասթորիայի ափերէզքը: Լարիսայի մէջ ձերբակալուած են 70 համայնավարներ որոնք խոստովանած են թէ վնասարարութիւն կատարած էին :

Անգլիա որոշած է կարգ մը դիւրութիւններ տալ անոնց որ կ՚ուզեն, գործով կամ արձակուրդով, արտասահման մեկնիլ: Յառաջիկայ Մայիս 1ն սկսեալ ազատ պիտի ըլլայ ճամբորդութիւնը դէպի Ֆրանսա, Պելճիքա, Հոլանտա, Իտալիա, Չեխոսլովաքիա եւ Եուկոսլաւիա, եւ ամէն Անգլիացի իրաւունք պիտի ունենայ երկրէն դուրս հանելու 35 սթերլին մէկ տարուան ընթացքին: Ներկայիս կարելի է դուրս տանիլ միայն 5 ոսկի:

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. Էջ)

ԲԱՐԵԽԱԳԻՐ

Եկայ, տեսայ եւ կ'աղաղակեմ սրտանց ։
Դալար՛ մնան ձեր ձեռքերը ։

Մենք հեռուէն, շատ հեռուէն հետեւեր էինք ձեր տագնապներուն, ինչպէս չինարար ճիգերուն որոնք հոծ Հայնոցի մը վերածեր են Լիբանանն ու Սուրիան, 25 տարուան ընթացքին ։

Անհրաժեշտ չէր եղեւակայութեան ճիդ մը վազեցնել, չափելու համար խորութիւնը ձեր տառապանքին եւ ծանրութիւնը՝ վերաշինութեան աշխատանքին ։

Տուն — տեղ ձգած, դարաւոր յիշատակարանները եւ ժառանգութիւնները լքած, դուք փոյթ եղիք նոր բոյն մը հաստատել օտար այլ հիւրընկալ երկրի մը, բախտակից ժողովուրդի մը ծոցին մէջ ։

Ձեր մէջէն հազարներ ու հազարներ իրրեւ բնակարան ունէին հիւղակ մը խարխուլ, թուղթի, քուրջի, թիթեղի կտորներէ կազմուած խառնուրդ մը ։ Իսկ իրրեւ ապաւէն՝ Աստծու արեւն ու ձեր բազուկները չինարար ։

Ապրուստի հոգին հետ, ձեր սիրտը կը տեղմուէր ի տես հազարաւոր մանուկներու, մանչ եւ աղջիկ, որոնք հաց կ'ուղէին եւ լոյս ։ Ծաղկոց, դպրոց, դպրանոց եւ մնացեալը ։

Դուք, ձեռք ձեռքի տալով, յաղողեցաք հետզհետէ հոգալ յարաճուն պահանջները ։

Եւ, մէկ տարիէն միւսը, հիւղաւանները դարձան հայկաւան ։ Վերածուեցան բազմամարդ, կենտրոնակ բոյներու ։

Օրուան վաստակին հետ, մեծաւոր վերածնութեան չարժումն ալ իր ստեղծագործ չունչը տարածեց տարագիր բազմութեանց վերեւ ։

Ամբողջ սերունդ մը լաւ ակօսներ բացաւ դէպ ակադեմիան եւ արուեստի, նոյնիսկ լեզուի մշակութեան ճամբաներուն վրայ ։ Ցաճախ՝ ապերջիկ կարզալով լուսացնցուղ պողոտաներու վրայ թառած «ուսումնական»ներու ։

Դալար մնան այն ձեռքերը որ հիմը դրին այս վերածնութեան, կամ թեւ տուին անոր ։

Ճարտասանական մարզանք մը չէ որ դրել կուտայ այս բառը ։

Հեռաւորներ, հարեւաններ, դուք որ ուղղակի կամ անուղղակի հետեւեր էք այս վերելքին, ապահովաբար պիտի խղճահարիք, եթէ պատեհութիւն ունենաք տեսնելու թափուած քրտինքը եւ ձեռք բերուած վաստակը ։

Պիտի խղճահարիք, խոստովանելով թէ կըրնայիք աւելին ընծայել այս բուրաստանին, իրրեւ եղբայրական աջակցութիւն ։

Մանաւանդ մշակոյթի ճակատին վրայ ։

Ինչքան առատ հոսին աղբիւրներ, այնքան չուտ կը բացուին ծաղիկներ պէսպիսուն ։ Այնքան կ'ուռճանայ այդ տեսարանը, ի չահ ընդհանրական հայրենիքին, որ հեռու է, դժբախտաբար ։

×

Մեր ժամանակակից պատմութեան մէջ, դըժուար է դտնել դաղութ մը աւելի խիտ եւ հայաչունչ քան Սուրիա Լիբանանը ։

Աւելի դժուար պիտի բլար դտնել անդաստան մը՝ անարդել ապահովելու համար նոր սերունդին իրաւունքը՝ օտարութեան մէջ ։

Այլուր, մարդիկ իրենց դլուխը քարին կը դարնեն, ապառաժները ճեղքելու, կարելի եղածին չափ չատ բան փրկելու համար ։

Ինչ որ լաւ ծառ պողոտաներ կը կոչենք, լաւ ծառն է, նաեւ ճիգերու արդիւնաւորութեան տեսակէտով ։

Եւ սակայն, յետին կամկարն ալ մեղք պիտի համարէր ոեւէ վհատում, ընկրկում, դասալքութիւն ։

Ձեզի — եւ մեղ բոլորիս — կը մնայ դատել թէ ինչքան աւելի ծանր պիտի կշռէր այդ մեղքը, այս ափերուն վրայ, ինչպէս ամբողջ Միջին Արեւելքի մէջ ։

Մէկ ընդհանուր բազձանք — սիրտերը չէն , ձեռքերը դալար, աչքերը արթուն ։

Եթէ թիւրիմացութիւններ կամ զանազան կիրքեր պղտորեն ձեր աչքերը, նայեցէք դէպի վեր, դէպի կապոյտը, որ այնքան կը յիշեցնէ Հայաստանեայց երկինքը, իր անարատ պայծառութեամբ ։

Նայեցէք, եւ պիտի բացուին ձեր աչքերը ։

Եթէ ձեր սիրտը փրփրի կիրքէն, դիտեցէք ծովը, — միջերկրական — որ ամէնէն կատաղի ալեկոծութեան պահուն ալ, կը պահէ իր վեհութիւնը ։

Ամբողջ խորհուրդ եւ իմաստութիւն՝ այդ ահաւոր տեսարանին անդամ ։ Ալիքները ամեհի կը դարնուին խարակներուն, քարափներուն, կը հետեւին ասիլին անդին, — եւ ինքնապաշտպանութեան կը մղեն ձեզ ։

Ու վերջապէս, եթէ ձեր ձեռքերը թուլնան կամ դողան, կամ չեզին չինարար աշխատանքի մարժուելէն, նայեցէք հարեւան լեռներուն , Տաւրոսի մինչեւ Արարատ ։

Առանց արտակարգ դժուարութեան, ձեր աչքերը անդամ մը եւս պիտի բացուին ։ Եւ պիտի

Երկու «Անուշ»

ԽՄԲ.— Տաղանդաւոր երաժիշտ Ա. Պարթեւեան վաղը, Կիրակի, Փարիզի մէջ կը ներկայացնէ Թումանեանի «Անուշ» երաժշտական ողբերգութիւնը ։ Այս առթիւ կուտանք հետեւեալ ուսումնասիրութիւնը Թումանեանի այդ գործին եւ երաժշտական բեմադրութեան մասին ։—

Տիգրանեանի «Անուշ» Օփերայի համար նիւթ է ծառայել Ցովհ. Թումանեանի համանուն պոէմը ։ Չի կարելի խօսիլ այդ օփերայի մասին եւ ճիշդ դատաստել այն՝ առանց պարզելու այն հարցը, թէ ինչպիսի յարաբերութեան մէջ են եւ ինչպիսի արժէք են ներկայացում այդ երկու ստեղծագործութիւնները ։

Մենք է Թումանեանը որպէս ստեղծագործող եւ այդ մեծութիւնն իր հսկայական եզերով զբաղացրում է յատկապէս «Անուշ» պոէմում ։ Այդ երկի մէջ կենդանութիւն է առել մի ամբողջ կեանք, անհետացող նահապետական կեանքն իր կենցաղով, տովորութիւններով ու հերոսներով ։ Ինչպիսի՛ վարպետութեամբ ու համոզեցողութեամբ , ինչպիսի՛ մեծ արուեստով է այդ բոլորը կտաւրուած ։ Հայ գրականութեան գարդը կազմող այդ հիանալի պօէմն անհետացող կեանքի, իրական կենդանի պատկերման յուշարձան է, որի դեղեցիկ տողերի մէջ շունչ է առել այդ կեանքը, կաթսուի խոր չղացմունքներ կորզելով Թումանեանի սրտից ։—

Կանչում է կրկին, կանչում անդադար
Էն չէնապղ երկրի կաթսուն անմուն ,
Ու թեւերն ահա փռած տիրաքար՝
Թռչում է հոգին թռչում դէպի տուն ։

Էյ հին ծանօթներ, էյ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսայ ու միտքս ընկան,
Առաջըս եկան երջանիկ օրեր,
Սիրելի դէմքեր, որ հիմա չըկան ։

Անցել են, ոնց ջր ծաղկումբը պէս — պէս,
Որ անցած գալնան կայնի ձեր լանջում ·
Անցել ձեր գլխի հերսուս ձիւնի պէս,
Բայց հիմի եմ ես, որ՛նց եմ կանչում ։

Թումանեանի այս եւ նման քնարերգական զեղումները երբեք չեն խախտում պօէմի ամբողջութիւնը, այլ կազմում են նրա անբաժանելի, կազմական դեղեցիկ ամբողջութեան մասը եւ իւրայատուկ չերմութիւն ու նուրբ քնարերգութիւն են ներարկում պօէմին ։ Աւելորդ դործ կը լինի պատմել «Անուշի» բովանդակութիւնը, որի ժողովրդականութեան հետ չի կարող մրցել մի այլ գրուածք՝ հայ անցեալ դրական ժառանգութենից ։ «Անուշ»ը կենցաղային եւ հոգեբանական պօէմ է, որի մէջ ւկարադրուած հոգեբանական ողբերգութիւնը սերտօրէն շաղկապուած է կենցաղային սովորութիւնների հետ ։

Պապենական այդ սովորութիւնների խախտումը, որ իրեն թոյլ է տալիս Սարօն, պատճառ է դառնում մի ցնցող եղերերգութեան ։ Թւում է թէ այդ բոլորը սոսկ կենցաղային պահեր են՝ դուրս ընկերային արժէքից ու հիմքից ։ Մորթապէս սխալ կը լինի «Անուշ»ի նման մեկնաբանութիւնը ։ Ի հարկէ «Անուշ»ը «Հառաչանք»ի նման պօէմ չէ, որտեղ դրսեւորուած են հայ աշխատաւորդիւղացու ընկերային ողբերգութիւնը, նրա հառաչանքները եւ սիրող հասարակական — տնտեսական դրութեան հանդէպ ունեցած նրա տարերային բողոքը ։—

Ո՞վ է մեղաւոր ։ Միտք եմ անում, միտք,
Ու չեմ հասկանում, ո՞վ է մեղաւոր,
Բայց իմ կարճ խելքով էնքանն եմ տեսնում,—
Ապրել չէ լինի՝ էսպէս ամէն օր ։

Դառն կերպով զանգատում է ծերուկ դիւղացին, չցանկանալով սրտի խորքում կուտակուած տեւելութիւնն ու բուռն զայրոյթը դրսեւորել ։ Ամբողջ «Անուշը» համեմատած «Հառաչանքի» հետ, այլ տիպի ու բովանդակութեան պօէմ է ։ Բայց միթէ՞ այդ բոլորը կարող են նսեմացնել «Անուշ»ում պատկերացած կեանքի ընկերային արժէքն ու նշանակութիւնը ։ Բնաւ ոչ ։ Անուշի ու Սարոյի ողբերգական վախճանը, Մօսիի վրիժառութիւնը, ճակատագրապաշտ տրամադրութիւնները (ճակատագրին հաւատալը , Անուշի դուշակութիւնների իրականացումը) եւ վերջապէս կնոջ սարսափան վիճակը, — ահա թէ ինչպիսի հարցեր են չօշափուած պօէմում եւ դրանք, ինչպէս նկատելի է, ընկերային մեծ նշանակութիւն ունեն ։ Ո՞վ կարող է ժխտել այդ հարցերի եւ ընդհանրապէս «Անուշ» պօէմի քնարերգական տարերի մէջ վերակենդանացած կեանքի ընկերային հիմքերն ու ճանաչողական արժէքը ։ Չէ՞ որ «Անուշ»ը եւ Թումանեանի միւս ստեղծագործութիւնները անցեալի ճանաչողութեան եւ ուսումնասիրութեան համար ՝ դեղարուեստական վաստաթղթեր են ։ Դրան նպաստում է ամէնից առաջ Թումանեանի իրապաշտ լինելու հանդամանքը, թէեւ նրա իրապաշտութիւնը տարբեր երանգներ ունի ։ Եթէ «Հառաչանքում» մեծ բանաստեղծը հանդէս է գալիս որպէս մերկացնող , իրապաշտութիւնը քննադատող, ապա «Անուշ»ում եւ այլ գրուածքներում նրա իրապաշտութիւնը հայեցողական նկարադիր ոճի, որը սակայն չի նեսմացնում «Անուշ»ի արժէքը ։ Աւելին կարելի է ասել ։ պօէմում հանդէս եկող բոլոր անձերը, ոչ միայն գլխաւոր հերոսները,— Անուշը, Սարօն, Մօսին, որոնք ամբողջական քնարերգութիւններ են,— այլեւ երկրորդական հերոսներն օժտուած են տիպարային ու կենդանի գծերով ։ Պօէմի հերոսները վերցուած են տիպարային հանդամանքների մէջ իրենց տիպարային կոմերով եւ այդ՝ Թումանեանի իրապաշտութեան , նրա արուեստի մեծագոյն առաւելութիւնն է ։ Մի այն անուղղելի դեհկարանները կարող են «Անուշ»ին ազատազրել, ինչպէս այդ՝ օրինակ՝ տեղի ունեցաւ չարժանկարում, անտեսելով այն մեծ ընկերային արժէքը, որ ներկայացնում է «Անուշ»ն առանց «ուղղումների» եւ «խմբագրումների» ։

×

Թումանեանի «Անուշ» պօէմը հայ դրականութեան մեծ կերտուածքներից մէկը լինելով, յագեցած է երաժշտականութեամբ եւ կարծես օփերային համար դրուած լինի ։ Պօէմի այդ բացառիկ յատկութեամբ է բացատրւում այն հանդամանքը, որ հայ երաժշտագէտներից չատերն են ցանկացել օփերայի վերածել այն ։ Բայսոնի է, որ հանգուցեալ Սպենդիարեանի այդ չորքանի (1916) դաղափարական—քաղաքական մտորումներին ։ Նա հրաժարւում է այդ մտքից եւ օփերայի համար օգտագործում է Թումանեանի «Թմկաբերդի առումը» ։ «Անուշն» օփերայի վերածելու փորձ է արել նաեւ Կոմիտասը եւ, ցաւելով պէտք է ասել, որ անաւարտ է մնացել ։

Ուրիշ երաժշտագէտներ նոյնպէս նման փորձեր են արել, բայց այս ու այն պատճառով իրենց նպատակին չեն հասել, բացի Արմէն Տիգրանեանից ։ Վերջինիս «Անուշ»ը, որ առաջին հայկական օփերան է, իրաւամբ կարելի է համարել ժողովրդական, այնքան մեծ է նրա համբաւը զանգւածների չրջանում ։ Այդ օփերան խորհրդայնացումից յետոյ նոր կեանք ստացաւ Պետ. Օփերայի բեմադրութեան չնորհիւ ։ Տիգրանեանի «Անուշ»ը, որ առաջին անդամ բեմադրւել է 1921 թւին Ալեքսանդրապոլում եւ անցեալի զաւառական բեմերի զարդն է կազմել, ունէր մի հիմնական առաւելութիւն՝ դրւած էր ժողովրդական մելոդիաների ոգով ։ Նրա երաժշտութիւնը կազմած էր արիաներից, առանձին երաժշտական եղանակներից ։ Դրանց որոշ մասը քնարերգական չերմութիւն ունի եւ թախծոտ է ։ «Բարձր սարերը», «Աստմ են ուռին», «Ազջի անաստւած» եւ այլն, անկասկած յաջող երաժշտական կտորներ են, թէեւ օփերայի երաժշտութիւնը միապաղաղ ու միօրինակ է ։ «Անուշ»ում անկախ այդ բոլորից, օփերայի համար չատ անհրաժեշտ դաշնաւորումը եւ նուագախմբի մատակարարութիւնը չափազանց նախնական էին, գործիական երաժշտութիւնը չատ թոյլ եւ անդոյն էր, մի բան՝ որ հետանում է սէնֆոնիք օրքէսթրի սկզբունքներից ։ Եւ դա «Անուշ» օփերայի այն նախնականութիւնն էր, որ առիթը ներկայանալիս միշտ յիշատակւում էր ։ Իր այդ վիճակով «Անուշ»ն ի հարկէ չէր կարող բաւարարել մեզ եւ Պետ. Օփերայի բեմադրութեան համար «Անուշ»ը վերամշակման է ենթարկւել՝ սէնֆոնիք տարրը ուժեղացնելու եւ այլ փոփոխութիւններ մտցնելու համար(*) ։ Սակայն օփերայի հիմնական թերութիւնը՝ նրա նախնականութիւնը, ինչպէս հարկն է, չի յաղթահարւած ։ «Անուշ»ի երաժշտութիւնը չի բարձրանում Թումանեանի պօէմի

(*) ԽՄԲ.— Երաժիշտ Արայ Պարթեւեան եւս, իր կարգին, որոշ փոփոխութիւններ կատարած է «Անուշ»ի երաժշտական հագուստին մէջ, այնպէս ինչպէս պիտի ներկայացուի « Մխիթարեանք »ի բեմին վրայ ։

ԼՍԱ ԲՎ ՇԱՐՔ

(ԱՄՈՒՍՆԱՑ)

Ի. ԳԱՆԻՆ

ՊԱՏՄՎԱԾՔ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ

Ինչպես մի սովորական երեկո, այնպես էլ այդ օրը ես ու Ալիսը նստած էինք մեր սենյակում և զբաղված էինք մեր սովորական գործերով։ Ես կարդում էի մի հետաքրքրական գիրք, իսկ Ալիսը ինչ-որ բան էր գրում։ Հանկարծ նա ինձ ասաց.

— Ես ուզում եմ քեզ մի հարց տալ, Ռիչարդ։

— Խնդրեմ, ես պատրաստ եմ քո բոլոր հարցերին պատասխանելու։

— Ասա, ինչպես է հնարավոր, որ մարդիկ ամեն տարի այդքան շատ գումար են ծախսում Սուրբ Ծննդյան տոների համար։ Ես չեմ հասկանում, թե ինչ կարիք կա դրան։

— Ես էլ չեմ հասկանում, Ալիս։ Ես էլ չեմ հասկանում։ Ես կարծում եմ, որ «Ընտրյալ» օրաթերթերի խմբագիրները ավելի լավ կարող են պատասխանել այդ հարցին։ Ես կարծում եմ, որ Սուրբ Ծննդյան տոները մարդկանց համար ուրախության և զվարճության տոներ են։ Ես կարծում եմ, որ մարդիկ ուրախանում են, երբ նրանք նվերներ են ստանում։ Ես կարծում եմ, որ մարդիկ ուրախանում են, երբ նրանք նվերներ են տալիս։ Ես կարծում եմ, որ մարդիկ ուրախանում են, երբ նրանք ուրախանում են։

Ալիսը ինձ ասաց.

— Ես ուզում եմ, որ դու ինձ մի նվեր տաս։

— Ես էլ ուզում եմ, որ դու ինձ մի նվեր տաս, Ալիս։

— Ես ուզում եմ, որ դու ինձ մի նվեր տաս, Ռիչարդ։

— Ես

տելիք, իւրաքանչիւրը 4 թոն ծանրութեամբ: Այդ ուտելիքներուն մէջ կան 225 կենդանի ցորեն, 18.000 քիլօ միս, 12 հազար հաւկիթ, 1750 քիլօ աղ, 25 հազար լիտր հեղուկ, մնացածը պատրաստի ուտելիքէն են: Այս թիւերը չափազանցուած չեն, քանի որ երախայրութեան ու ծերութեան շրջանին մէջին հաշուով կ'ուտենք օրական 2—2½ — կէս քիլօ, իսկ երիտասարդութենէ մինչեւ հասուն տարիք, 3—4 քիլօ, նոյնիսկ 4½ կէս քիլօ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՐԱԲՆԵՐԸ եօթը Հրեայ ոստիկաններ սպանեցին հինգշաբթի օր Երուսաղէմի մէջ: 12 Արաբներ սպանուեցան երբ Հրեաները յարձակում գործեցին հանրակառքի մը վրայ՝ Թել Ավիվի արուարձանին մէջ:

ԻՐԱԳԻ կառավարութիւնը կրնայ տապալիլ, եթէ խառնակութիւնները ծաւալին երկրին մէջ: Ինչպէս ծանօթ է, մեծ դժգոհութիւն կը տիրէ Անգլիոյ հետ կնքուած դաշնագրին առթիւ եւ ցոյցեր կը կատարուին Պաղատի փողոցներուն մէջ: Յուցարարները կը պահանջեն որ խորհրդարան չվաւերացնէ դաշնագիրը:

ԱՆԳԼԻԱՅի դիմադրութիւն մը անցեալ շաբթու հրատարակեց հատոր մը ուր մէջ աշխարհի տնտեսական կացութիւնը երկարօրէն քննելէ ետք, մասնագէտները կը յայտարարեն — Եւրոպայի կամ Ասիոյ ժողովուրդները Միացեալ Նահանգներու ներկայ մակարդակին բարձրացներու համար, պէտք է արտադրեն 600 միլիոն ձմեռնաւորիւղ դոյլիք, 350 միլիոն հեռաձայն եւ 450 միլիոն ինքնաշարժ: Ընդհատաը պէտք ունի 250.000 քիլոմեթր երկաթուղիի, 26 հազար վայրաշարժի, 300 հազար վակոնի (բեռնատար) եւ 30 հազար ճամբորդական վակոնի:

ՊՈՒՔՐԻՇԷՆ կը հաղորդեն որ օրէնքէ դուրս հռչակուած գիւղացիական կուսակցութեան 34 յայտնի անդամները մօտ օրէն պիտի դատուին պինուտական իշխանութեանց կողմէ: Ամբաստանուած են թէ ըմբոստութիւններ կազմակերպած էին եւ ապստամբ տուած էին դասալիքներուն:

ԱՄԵՐԻԿԱՅի ծովակալ մը, Շէրմըն, յայտարարեց հինգշաբթի օր թէ Միջերկրականի ամերիկեան նաւաբաժինը որ կը բաղկանայ 18 մարտանաւերէ, 3 յածանաւերէ, 12 թորպիլահալածաններէ, 1 օդանաւակրէ եւ կարգ մը ուրիշ նաւերէ, պիտի չարունակէ իր ռազմախրբերը առանց ընդհատումի:

ՊԱՎԱՐիոՁ մէկ միլիոն դոլարնոց 24 ժամուան ընդհանուր գործադուլ հռչակեցին մէկ բողոքելու համար անդեղէններու զալի դուքեան դէմ: Գործադուլի հրահանգը տուողները յայտարարած են թէ համաձնաւարհնէն հրահանգ ստացած չեն: Սակայն ամերիկեան գօտիին ընդհ. հրամանատարը, գօր. Քլէյ կը պնդէ որ համաձնաւարհները կը փորձեն առիթէն օգտուիլ եւ պարենաւորման դժուարութիւնները պատրուակ կը ծառայեն իրենց:

ՄԻԱՑեԱԼ ԱԶԳԵՐՈՒ բրիտանական պատուիրակը, Սըր Ալեքսանտր Քէտակրն, Պաղեստինի յանձնաժողովին հինգշաբթի օրուան նիստին մէջ յայտարարեց թէ Անգլիա թոյլ պիտի չտայ որ — իր հոգատարութեան տեւողութեան — Հրեաները Պաղեստին ներգաղթեն:

ԱՄԵՐԻԿԱՑի նախագահը Պ. Թրումըն, յայտարարեց որ Եւրոպայի համար առաջարկուած 6800 միլիոն տոլարի վարկէն պահէ զեղչ կարելի չէ ընել: Նախկին նախագահը, Պ. Հուվըր առաջարկած էր 4 միլիառի իջեցնել այդ գումարը:

ԻՆՁՊԻՍ ԳՐԱԾ էինք անցեալ օր, Ֆրանսական իշխանութիւնները արգիլած էին խորհրդային «Սովիէթական Փաթրիօթ» թերթին հրատարակութիւնը: Հակառակ այդ արգելքին, սակայն, թերթին խմբագրութիւնը մամուլին յանձնած էր թերթը: Հինգշաբթի օր ոստիկանութիւնը խմբագրատունը երթալով գրաւեց 4000 տպուած թերթեր:

ՊԵԼԿՐԱՏԷն կը հերքուի այն լուրը թէ Եուկոսլաւիա հիւլէական ռումբ ունի: Իտալական թերթին տուած լուրը բոլորովին անհիմն է, յայտարարեց բարձրաստիճան պաշտօնատար մը:

ՄՈՍԿՈՒԱՑին կը տեղեկացնեն թէ մարշալ Սթալին անձամբ ներկայ գտնուած է Լենինի մահուան տարեդարձին առթիւ սարքուած ոգեհանդէսին:

ՊՈԼՈՑ վերջին թղթատարէն կը տեղեկանանք թէ ծանր անգործութիւն կը տիրէ Թուրքիոյ մէջ: Պոլսոյ մէջ բազմաթիւ առեւտրական հաստատութիւններ ազատ կ'արձակեն իրենց պաշտօնեաները: Շատեր Անատոլուէն Պոլիս կուգան գործ փնտռելու համար: Կարգ մը գործարաններ փակուած են:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ դաշնագիր մը պիտի ստորագրուի Խորհրդային Միութեան եւ Պելճիքայի միջեւ: Այդ առթիւ նախապատրաստական աշխատանքներ կատարուած են արդէն: Պելճիքա եւ Լիւքսէմպուրկ ցորեն պիտի գնեն, որուն փոխարժէքը Ռուսիա պիտի ստանայ արդիւնաբերական նիւթերով — մեքենայ, գործիք եւայլն:

Ցերեկոյթ պարահանդէս

Ֆր. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը, տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24, Hôtel Continentalի չքեղ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde:

Նուագախումբ ՖԼՈՐԱՆ ՊՈՒԻԶՈՆ: Գեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պուֆէ:

Տարեկան չքեղ ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան կարմիր Խաչի եւ Ողբախնամի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէջ, 43 Bld. Raspail, Paris:

ՐՈՄԱՆԻ Ֆր. Կ. Խաչի մասնաճիւղը կը տօնէ «Մանուկներու Օրը» այս շաբաթ իրիկուն ժամը 8ին Սէն Պէրնարի սրահին մէջ: Կը հրաւիրենք մեզի դրացի քոյր մասնաճիւղերը, Վալանս, Վիէնն եւ Օպընա: Կը բանախօսէ Վիէննէն ընկեր Ս. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՔԵՂ ՅԵՐԵԿՈՅԹ

Կազմակերպուած Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Սէվրանի մասնաճիւղին կողմէ, կիրակի 7 Մարտ 1948, ժամը 3էն 12, Casino des Etoiles, Մասիս սրճարանին մէջ, 87 Ave. de Livry, à Sevran:

Գեղարուեստական հաճելի բաժին: Խմբերգ, ներկայացում եւ անակնկալներ; եւրոպական պարեր: Ճոխ պուֆէ: Մուտք՝ 75 ֆր.

Հաղ. միջոց — կառախումբ Gare du Nordէն ժամը 13.45էն եւ 14.15էն: Eglise de Pantinէն 147 թիւ օթօպուս, իջնել Terminus:

«ՄՇԱԿՈՑԹի ՕՐ»Ը ՇԱՒԻԼԻ ՄԷՋ

Տեղւոյն «Րաֆֆի» երիտ. Միութեան կողմէ

15 Փետրուար, կիրակի օր

Ֆ. Կ. ԽԱՉի Փարիզի մասնաճիւղը չնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները. — Տիկին Շուշիկ Ցակոբեանէ Բընտա Արժանթէ մը: Պ. Ստ. Թէրզեանէ 25 նոր բուրդէ փուլ-օվըր եւ Պ. Միւռան Սարաճեանէ 52 զոյգ գօշիկ:

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆի ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴԸ: Մինչեւ այժմ լոյս տեսած եւ բաժանորդներուն ուղարկուած են առաջին, երկրորդ եւ չորրորդ հատորները: Մնացորդ լոյս պիտի տեսնէ երրորդ հատորը, իսկ ապրիլին հինգերորդը: Աշխողջական գործը պիտի բաղկանայ 10 հատորներէ, որոնք պիտի պարունակեն հեղինակին բոլոր գեղարուեստական գործերը: Տասը հատորներու բաժնեգինը Ֆրանսայի համար 6000 Ֆրանք կանխիկ:

Բաժանորդագրուելու համար դիմել «Ճառագի»ի վարչութեան:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇՔԵՂ ՅԵՐԵԿՈՅԹ

Նախաձեռնութեամբ՝ Սեբաստիոյ Նահանգային Միութեան, վաստակաւոր դերասան՝ ՏԻԳԱՆ ՆՇԱՆԵԱՆի, մասնակցութեամբ Փարիզի հայ բեմի լաւագոյն ուժերուն, 8 Փետրուար, 1948, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30էն, Մասպլէյն Պէռթլօթ չքեղ թատրոնի մէջ, 28bis, rue St. Dominique, métro Invalides:

Առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէ հանճարեղ ողբերգու Վ. Շէյքսփիրի

ԱՐՓԱՅ ԼԻՐ

Պատմական տուամ 6 արար եւ 2 պատկեր, թարգմ. եւ բեմադրութիւն Տ. Նշանեանի:

Տոմսերու դիները, 100էն 400 Ֆրանք, կը ծախուին հայկական բոլոր գրատուները, ճաշարանները, Սեբ. Նահ. Միութեան կեդրոնին եւ մասնաճիւղերուն մօտ: Հարիւրին տասը պիտի յատկացուի Սեբ. Նահանգ. Միութեան ներգաղթի փոնտին: Սրահին ջեռմութիւնը ապահովուած է: Փնտռել յայտարիրը:

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՑՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴի Սէն Լուի գասախօսութիւնը երկուշաբթի իրիկուն ժամը 8էն, սովորական հաւաքատեղին: Կը խօսի ընկեր ՏԻԳ. ԹԱԴՈՑԵԱՆ:

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴի Պուլվար Օսմանի մասնաճիւղին դասախօսութիւնը երեքշաբթի իրիկուն ժամը 8ին, սովորական հաւաքատեղին: Կը խօսի ընկեր Ս. ՄԻԼՏՈՆԵԱՆ:

Հ. Ց. Դ. «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»ի դասախօսական ժողովը այս չորեքշաբթի 28 Յունուար ընկեր Վրուժան Խուպլիկեանի բնակարանը, սովորական ժամուն: Կը դասախօսէ ընկեր Ա. ՊՕՑՍԱՃԵԱՆ:

ՏԷՍԻՆի Հ. Ց. Դ. Նոր Սերունդի վիճաբանական ժողովը երկուշաբթի 26 Յունուար իրիկուան ժամը 9ին Հ. Ց. Դ. Տան մէջ: Նիւթ՝ «Ինչ պէտք է ըլլայ մեր դիրքը մեր հակառակորդներուն քարոզութեան դէմ»:

ՓՈՆԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿի Շավիլէն Այրի Տիկին Կիւլինա Տէմիրճեանի մահուան առթիւ Հ. Ց. Դ. «Արդութեան» խումբը 500 Ֆրանք եւ Նոր Սերունդի «Անդրանիկ» խումբը 500 Ֆրանք կը նուիրեն Վեթերանեներու Ֆոնտին: Շավիլի «Րաֆֆի» երիտ. երկսեռ Միութիւնը 500 Ֆրանք Տէր եւ Տիկին Գնէլիօշկարեան 200 Ֆր. Ֆ. Կ. Խաչին:

Տէր եւ Տիկին Օննիկ Քիւրլեան եւ զաւակները, Տիկին Լիւսի Քացախեան եւ զաւակը Պ. Զաւէն Քացախեան (Պոլիս), Տիկին Նուարդ Սահակեան եւ զաւակները Պ.Պ. Ազուշէր եւ Կարապետ Սահակեան (Պուլկարիա), Պ. Անանիա Կարապետեան (Պուլկարիա) կը ծանուցանեն մահը իրենց ազգականին՝

Պ. ԱԲՐԱՀԱՄ ՊՕՌԱՃԵԱՆի
(Ռոտոստոգի, 49 տարեկան.

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Յունուար 26ին, երկուշաբթի առաւօտ ժամը 10.30ին, Փարիզի Հայոց եկեղեցին: Մարմինը կ'ամփոփուի Պանէօլէի գերեզմանատունը:

Մասնաւոր մահագդ հաղուած չըլլալով, կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել:

Կիրակի 25 Յունուար 1948, ժամը 14.30էն

ՄԻՒԹԻՒԱԼԻԹի ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Մեծ պատրաստութեամբ եւ խնամքով Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆի մահուան 25ամեակին առթիւ:

Փարիզի հայկական եղջերախումբին կողմէ Սէնֆոնիկ մեծ նուագախումբ (60 հոգի):

Ղեկավարութեամբ ԱՐԱ. ՊԱՐԹԵՒԵԱՆի

Ա Ն Ո Ւ Շ Ը

Անուշի դերը կը կատարէ Օր. ԱՆԺԷԼ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, Ա. Grand prix Wicard de la Ville de Marseille:

Ներկայացումը կը սկսի ճիշդ ժամուն: Նուագի պահուն դուռները փակ կը մնան:

ՅԱՒՈՒ է կօշիկարի (Bottier) խանութ մը լիսանով, եւ քնակարանով:

Մանրամասնութեանց համար դիմել Պ. Chukurian, 56 rue Genève — Arles sur Rhône:

«Զաուի» օղին 40°

Ամէնէն աւետարատը եւ ամէնուն փնտռածը

Լիտր 400 Ֆրանկ

կրնաք անմիջապէս ընել ձեր

յանձնարարութիւնները

Ani ՆՊԱՐԵՂԷՆի ՎԱՃԱՌԱՏՈՒՆՆԷ

D. NARGUIZIAN, 62 Rue Rabelais, Lyon

ՃԱՇԱՐԱՆ ԼԻԼԱ

Որ բոլորած է իր fասնամեակը եւ տիրացած արդար համբաւի մը,

Պատրաստ է գոհացնելու իր ամէնէն դժուարահաճ յաճախորդները իր համադամ կերակուրներով ու բազմապիսի աղանդերներով

Հեռաձայն TRI 31 - 62

24, Rue St. Lazare, PARIS (9)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Dimanche 25 Janvier 1948 Կիրակի 25 Ցունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5249-Նոր շրջան թիւ 858 Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ ԳԻՆ՝ 5 Ֆր.

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ՃԱԿԱՏ ԿԸ ՅԱՐՈՒԱՐԵՆ

Լոնտոնի եւ Նիւ Եորքի թերթերը դիտել կու տան թէ Անգլիոյ արտաքին նախարարին հինգշաբթի օրուան զղայացունց ճառը պատմական նշանակութիւն ունի որովհետեւ ցոյց կուտայ թէ արեւմտեան Դաշնակիցները այլեւս վճռած են նոր քաղաքականութիւն մը վարել Խորհրդային Միութեան հանդէպ՝ պատնց, ի հարկէ, հրաժարելու Մոսկուայի կառավարութեան հետ հաստարակաց լեզու մը գտնելու փորձերէն :

Մինչեւ վերջերս, կ'ենթադրուէր թէ Մեծն Բրիտանիա սեւակ մը միջնորդի դեր պիտի կատարէր՝ իրարու հետ «հաշտեցնելու» համար Ամերիկան եւ Խորհրդային Միութիւնը :

Կը թուի, սակայն, թէ Լոնտոնի ընկերվարական կառավարութիւնը , ներկայ պայմաններուն մէջ, ապարդիւն կը գտնէ հաշտարարի այդ դերը :

Արտաքին նախարար Պեւինն որոշ կերպով կ'առաջարկէ արեւմտեան պետութեանց խմբակցութիւն մը որուն մէջ պիտի մտնեն ոչ միայն Ֆրանսան, Պելճիքան, Հոլանտան կամ մանրանկար Լիւքսէմպուրկը, այլեւ, աւելի ուշ, Իտալիան, Զուիցերիան եւ Փորթուգալը :

Նախարարը ոչ մէկ մանրամասնութիւն կուտայ մշակուած ծրագրին մասին եւ մխայն ընդհանուր բառերով կը գծէ այն ճամբան որուն պիտի հետեւին ազատ ժողովրդավարութիւնները՝ կասեցնելու համար Ռուսիան որ, հակառակ որ հաւասած է Շթէթէն ու Թրիէսթէ, տակաւին գոհ չէ իր սահմաններու ծաւալումէն :

Լոնտոնի ազատական օրկանը, «Նիուզ Քրոնքլ» կը յանձնարարէ աւելի դրական — եւ անմիջական — քայլեր առնել ծրագրին դործադրութեան համար : «Տէյլի Մէյլ», նոյնպէս կ'առարկէ յարկէ ճաճապարել , իսկ ծանրախոհ «Թայմզ»ի կարծիքով, արտաքին նախարարին մարտակոչը պէտք է խթան մը ըլլայ անմիջապէս գործի սկսելու :

Պ. Պեւինի միջազգային ներկայ ակնատոյգ կացութեան պատասխանատու կը նկատէ Խորհրդային Միութիւնը, բայց վճռապէս կը յայտարարէ որ ծրագրուածխմբակցութիւնը ուղղուած չէ այդ երկրին դէմ :

Տարակոյս չկայ որ Եւրոպայի վերականգնումը չի կրնար իրականանալ առանց արեւմտեան ազդերու համերաշխ գործակցութեան եւ առանց այն վճռական քայլերուն որոնք անհրաժեշտօրէն ձեռք պիտի առնուին չափաւորելու համար Խորհրդային Միութեան ախորժակը :

Շատ ուշագրաւ է որ ընկերվարական արտաքին նախարարին ներկայ ուղղութեան բացարձակօրէն համաձայն են պահպանողականները որոնց ականաւոր առաջնորդը Զրչիլ կամ իր փոխանորդը, Իտն, ջերմօրէն գնահատեցին խորհրդարանին ներկայացուած առաջարկը :

« Ապարդիւն աշխատանք է տրամաբանել կամ վիճիլ համայնավարներուն հետ, կ'ըսէ Զրչիլ» : Կամ՝ «ընկերվարական քաղաքականութիւնը իրաւունք չունի ընկերվարութիւն պարտադրելու ուրիշ ժողովուրդներու » :

Ներկայ վարչապետը, ընդհանրապէս նուազ յախուռն քան իր արտաքին նախարարը, աւելի «բաց կը խօսի» ի լուր Խորհրդային Միութեան վարիչներուն — « Համայնավարութիւնը միատեսակ ու նեղմիտ աշխարհահայեացք ունի. ան ամէն բան սեւ ու ճերմակ կը տեսնէ. կամ թերեւս՝ ամէն բան սեւ ու կարմիր... Մենք կ'ուզենք բարեկամական յարաբերութիւններ ունենալ Խորհ. Միութեան հետ, բայց երբեք պիտի չընդունինք համայնավարութիւնը ... Ասիկանական պետութիւնը բացարձակօրէն զարշելի է...» :

Պեւինի, Էթլիի, Զրչիլի բառերուն վրայ աւելցուցէք նաեւ Ամերիկայի մեծամեծներու վերջին ճառերը, ու պատկերը կ'ըլլայ ամբողջական — ամեհի պայքար մը անփառունակ վարդապետութեան մը դէմ որ կ'աշխատի «իր գաղափարները իրագործել միլիոնաւոր մարդոց սովին ու մահուան չնորհիւ » :

Բանիմացներու այս տեսակէտին դէմ են միայն Հայոց ազդին ողորմելի Հայաստանասէրները :

Ֆ.

ՊԵՎԻՆԻ ՃԱՌԸ ԵՏ

ԶՐՉԻԼ ԿԸ ՑԱՆՁՆԱՐԱՐԷ ՀԱՄԱՁԱՅՆԻԼ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԵՏ

Անգլիոյ նախորդ վարչապետը, Ուինսթըն Զրչիլ, ուրբաթ օր խորհրդարանի վիճաբանութեանց մասնակցելով, ըսաւ թէ ինք համակրած է արտաքին նախարարին հետ եւ թէ անհրաժեշտ է կազմակերպել արեւմտեան խմբակցութիւն մը՝ Խորհրդային Միութեան ծաւալումը կասեցնելու համար : Զրչիլ, միաժամանակ, յանձնարարեց ամէն քան ընել համաձայնութեան եզր մը գտնելու համար Ռուսիոյ հետ : Ստորեւ կու տանք իր ճառին հիմնական մասերը. —

Ապարդիւն աշխատանք է տրամաբանել կամ վիճիլ համայնավարներուն հետ : Բայց , կարելի է իրենց հետ գործ ունենալ իրական զեմքի վրայ : Փորձառութեամբ դիտեմ որ անոնք կը սակարկեն այնքան աստեն որ սակարկութիւնը համապատասխան է իրենց շահերուն : Զարմանալի է որ տակաւին դէմ դիմաց կը գտնուինք անհաշտ հարցումի մը հետ — պատերազմ պիտի ըլլա՞յ : Ինծի կը թուի թէ իրական վտանգ մը կայ եթէ շարունակենք այս քաշկռտուքը : Համոզուած եմ որ պատերազմ մը արդիւնքն է մէկուն կամ միւսին կողմէ հաւասար որաւելի երկար սպասելով նպաստաւոր եղրակացութեան մը կրնանք յանդիլ : Զարհաւանց մեծ վտանգներու առջեւ պիտի գտնուինք եթէ թոյլ տանք որ այս վիճակը շարունակուի մինչեւ որ բաներ մը պատահին : Բնականաբար ես պիտի ուզէի որ բոլոր երկիրները որդեգրէին ժողովրդավար ընկերվարութեան սկզբունքները քանի որ այդ միջոցով միայն կարելի է դիմադրել ռուսական համայնավարութեան : Բայց ընկերվարական քաղաքականութիւնը իրաւունք չունի ընկերվարութիւն պարտադրելու ուրիշ ժողովուրդներու :

Նախորդ վարչապետէն առաջ օրուան ընկերվարական վարչապետը Պ. Էթլի, վիճաբանութիւնները քանալով, բաւած էր հետեւեալ խօսքերը.— Անձնապէս, չեմ կարծեր որ լաւ կ'ընենք պատերազմի մասին խօսելով, բայց եւ այնպէս սեւակ պիտի ըլլար մեր աչքերը փակել կարելիութենէ առնչե : Չեմ կարծեր որ պատերազմը մօտալուտ է, բայց կը հաւատամ որ մեր անկարելին պիտի ընենք պատերազմի պատճառները անհետացնելու համար : Իսկոյն ալ կ'ընդունինք որ չատ դժուարին պարտականութիւններ ունինք կատարելիք : Համայնավարութիւնը ուժական վարդապետութիւն մըն է : Մոլեռանդ չարժում մըն է ան որ կ'աշխատի զօրաշարժի ենթարկել այնպիսի մարդիկ որոնք տարօրինակ մտքի տէր են եւ կը գտնուին ընկերային որոշ մակարդակի մը վրայ : Համայնավարութիւնը ծանօթ ազգի մը պաշտօնական դաւանանքն է. քարոզչական դաւանանք մըն է ան որ կ'ուզէ ինքնիրեն պարտադրել ուրիշ ազգերու : Էապէս ռուսական է այդ համայնավարութիւնը... Այս վերջինը անտեսական վարդապետութիւն մըն է՝ ընդելուզուած յետամնաց պետութեան մը քաղաքականութեան : Անիկա հրապուրիչ չէ այն ազգերուն որոնք ճաշակած են արեւմտեան քաղաքակրթութիւնը : Հրապուրիչ է միայն այն ժողովուրդներուն համար որոնք աւելի լաւ բաներ տեսած չեն : Համայնավարութիւնը միատեսակ ու նեղմիտ աշխարհահայեացք մը ունի. ան ամէն բան սեւ ու ճերմակ կը տեսնէ. կամ թերեւս, ամէն բան սեւ ու կարմիր: Անոր մէջ տեղ չկայ ուրիշ մտածումի կամ տեսակէտի համար, թէեւ համայնավար կուսակցութիւններէն կը սպասուի որ նախորդ օրը անիծուած երեւոյթ մը՝ օրհնուի օր մը վերջը : Մենք կ'ուզենք բարեկամական յարաբերութիւններ ունենալ Խորհրդ. Միութեան հետ, բայց երբեք պիտի չընդունինք համայնավարութիւնը. մենք բացարձակօրէն համակակ ենք համայնավար կենցաղին : Ոստիկանական պետութիւնը բացարձակօրէն զարշելի է արեւմտեան այն ազգերուն համար որոնք, այսքան երկար ժամանակ, ազատութիւն վայելած են : Վստահ եմ որ մարգկութիւն կը տեսնէ որ համայնավար դաւանանքը, երկու պատերազմները իրարմէ բաժնող ժամանակաշրջանին, ոչ մէկ նուաճում կատարեց Անգլիոյ մէջ : Ուրեմն պէտք է հրաժարի այն միտքէն թէ Անգլիան ալ կրնայ, օրին մէկը, համայնավար ըլլալ :

Ասելով Մարշըլի ծրագրին մասին, վարչապետը, ըսաւ.— Չեմ հաւնար թէ մարդիկ ինչու դէմ են անոր երբ աւելի լաւ բան մը չունին զայն փոխարինող. ուրիշ խնդիր, սակայն, եթէ անոնք կը պատրաստուին իրագործել իրենց գաղափարները միլիոնաւոր մարդոց սովին ու մահուան չնորհիւ :

★ Ամերիկեան եւ անգլիական մամուլը, կ'ողջունէն արեւմտեան խմբակցութիւն մը կազմելու համար Պեւինի բերած առաջարկները : Ուսումնական քաղաքական շրջանակները չատ գոհ մնացած են արտաքին նախարարին ճառէն որ լաւագոյն ապացոյցն է Ֆրանսայի, Իտալիոյ ինչպէս նաեւ Հոլանտայի եւ Պելճիքայի մէջ եւս :

ՖՐԱՆՔԻՆ ԱՐԺԵԶԱՐԿՈՒՄԸ

ԱՆԳԼԻԱ ՉԱՓԱԶԱՆՑ ՄՏԱՀՈԳ

Ուրբաթ օր Անգլիոյ եմմական նախարարը Սըր Սթաֆըրտ Քրիփս, առանկալ կերպով Փարիզ եկաւ խորհրդակցելու համար վարչապետին եւ եմմական նախարար Պ. Բլում Մայերի հետ՝ որպէսզի Ֆրանքլին արժեզրկման որոշումին դործադրութիւնը առայժմ յետաձգուի :

Կարեւոր խորհրդակցութիւններ տեղի ունեցան մինչեւ ուշ գիշեր :

Բրիտանական շրջանակներուն մէջ գիտել կը տրուի որ Ֆրանսական թղթադրամին արժեզրկումը սերտ կապակցութիւն ունի արեւմտեան խմբակցութիւն մը ստեղծելու անգլիական ծրագրին հետ եւ կրնայ վնասել այս վերջինին յաջողութեան : Ուոշինկթընի բրիտանական դեսպանը լորտ Ինվըրչէփըլ դիմում կատարած է նախագահ Թրումընը սօսա որ առաջնական քայլեր առնէ «Պլանի ծրագիրը» չձախողեցնելու համար : Ամերիկեան կառավարութիւնը որոշած է նոր յանձնարարութիւններ ընել Փարիսայի :

Ահաւասիկ թէ ինչ կ'առաջարկէ Ֆրանսա — տոլարին պաշտօնական դին նշանակել մօտաւորապէս 216 Ֆրանք : Ազատ շուկայի դին պիտի չնչանակուի սթերլինին համար որ, որը սակով , պիտի արժէ 864 Ֆրանք : Արտածումները ընդդէմ Ֆրանսացի վաճառականը իր ստացած տոլարները կէսը պիտի ծախէ նոր սակով, իսկ մնացեալը «ազատ շուկային» մէջ : Ներածողները կը բաժնուին երկու դասակարգի — կենսական ապրանքներ գնողները ենթակայ են Մարշըլի ծրագրին եւ պիտի վճարեն պաշտօնական սակով (216) : Ոչ — կենսական ապրանքներ ներածողները «ազատ շուկային» պիտի հայթայթեն անհրաժեշտ տոլարները՝ ի հարկէ համապատասխան հաշուեցոյցը ներկայացնելէ ետք : Այս ձեւով, ուրեմն, օտար թղթադրամներու պէտքը եղած է հակակշիռ, իսկ վաճառումը բոլորովին ազատ : Այս կարգադրութեան դէմ է Անգլիան :

ՌՈՒՄԱՆԱԿԱՆ կառավարութիւնը երեսուն տոզնոց պատուիրակութիւն մը Պուտափէշթ ղրկեց այս շաբթու վարչապետ Կրոզայի եւ արտաքին նախարարուհի Տիկին Ա. Փաուքէրի գլխաւորութեամբ, բարեկամական դաշնագիր մը ստորագրելու համար Հունգարիոյ եւ Ռումանիոյ միջեւ : Տիկին Փաուքէր յայտարարեց որ Ռումանիա նը-ման դաշնագիրներ պիտի ստորագրէ բոլոր այն երկիրներուն հետ որոնք կր յարգեն իր անկախութիւնը : Ռումանացի ժողովուրդը թոյլ պիտի չտայ որ արեւմտեան աշխարհակալները մեր երկիրներուն մէջ յառաջ բերին այն կացութիւնը որուն մատնուած են Ֆրանսան եւ Իտալիան, ու մանաւանդ Յունաստանն ու Սպանիան, ըսաւ նախարարուհին :

Պուլկարիոյ եւ Ռումանիոյ բարեկամութեան աւելի դործնական քնոյթ մը տալու համար, կառավարութիւն մը պիտի չինուի Դանուբի վրայ՝ Պուլկարիայէն Ռումանիա, համաձայն Տիմիթրովի յայտարարութեանց : Պուլկարիա դաշնագիր պիտի ստորագրէ նաեւ Լեհաստանի հետ :

ԻՐԱԳԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ որ ներկայիս Լոնտոն կը գտնուի, կը հերքէ այն գրոյցները թէ Պաղտատ կանչուած է՝ անգլեւբրագեան դաշնագրին ստորագրութենէն ետք : Անհիմն է այն տարածումը թէ հրաժարած եմ յայտարարեց վարչապետը ուրբաթ օր, ինչո՞ւ հրաժարիմ. եթէ, վերադարձիս, տեսնեմ որ կացութիւնը լաւ չէ, հաւանարար հրաժարականս ներկայացնեմ :

(Ետրերու շարունակութիւնը կարդալ Դ. Էջ)

ՀԱՆԳԱՆԱԿ

Գ.

Սիրելի Սարաֆեան.— Կարելի էր, դեռ, երկարել անտարբերութեան տեսութիւնը՝ ներկայացնելու համար նաեւ անտարբերութիւնը աստուածաբանութեան մէջ, կամ անտարբերութիւնը ախտաբանութեան մէջ (apathie), վերջացնելու համար «փղոսկրեայ աշտարակ»ին տեսութեամբ՝ իբրեւ անտարբերութեան վարդապետութիւն գրականութեան մէջ:

Բայց կ'աճապարեմ՝ պարզելու համար անտարբերութեան տեսութեան հակառակ թէզը, որպէսզի գրագէտը դնեմ երկու այս թէզերուն միջեւ:

Հակառակ այդ թէզը կը կոչուի տարածականութիւն (expansibilité), որ կը յատկանշուի մտաւորական ամէն աշխատանքի մասնակցելու կամ ընկերային ամէն չարժումի միջամտելու յորդահոս ցանկութեամբ մը:

Հոգեբանութեան մէջ չատ քիչ ուսումնասիրուած է տարածականութեան օրէնքը, ըստ էութեան՝ բնազդական: Այսուհանդերձ ոչ ոք կը մերժէ կարողութիւնը, զոր միտքը ցոյց կուտայ տարածուելու եւ ծաւալելու ցանկութեամբ:

Ուրեմն, անտարբերութեան տեսութեան հակառակ՝ այս թէզին պաշտպանները կը ջատագովեն մտաւորականին մասնակցութիւնը այն բոլոր չարժումներուն մէջ, որոնք արտայայտութիւնն են ժողովուրդի մը քաղաքակրթական յաւակնութիւններուն:

Պէտք է խոստովանիլ թէ դպրոցական բոլոր ծրագիրները հիմնուած են այս երկրորդ թէզին վրայ,— մինչեւ բարձրագոյն վարժարան մուտքը՝ երիտասարդը հարկադրաբար կ'ուսանի ամէն առարկայ, փոքրիկ համայնագիտարանի մը վերածելու համար, կարծես, իր մատաղ ուղեղը: Այդ տարիքին մէջ՝ երիտասարդը թուաբէտ է, բուսաբէտ է, հողեբան է, պատմաբան է, վերաժիչտ է, մարզիկ է, ամէն բան է: Եւ եթէ, որոշ տարիքէ մը եառը, կանգ կ'առնէ համայնագիտացումը,— իբր թէ անհրաժեշտ ճկունութիւնը տալէ եառը մտքին՝ յարմարագոյն ասպարէզը ընտրելու (orientation professionnelle) այլեւս ընդունակ դարձուցած,— պատճառն այն է որ կը կարծուի թէ սահմանափակ է մտքին տարածականութիւնը եւ յաղնութիւն կը պատճառէ աւելին: Մանկավարժութենէն կուգայ այս մտահոգութիւնը: Ուրիշ կարուածէ մը, բողոքական մտածողութեամբ յագեցած ժողովուրդներու բժշկապետական ուսումնասիրութեանց մէջ, յաճախ դիտել կը տրուի թէ մարդկային մտքին տարածականութիւնը ոչ միայն թշնամի է կեդրոնացումին, ներշնչումին եւ méditatif ոգիին, այլեւ մասնագիտութեան: Այս նեղ տեսութիւնը, որուն ջերմեռանդ պաշտպանն է Տոքթ. Փօչէ, կը թուի թէ կը հակի դէպի անտարբերութեան թէզը:

Առանց վէճը մինչեւ Արիստոտէլ տանելու,— մենք ի՞նչ գիտենք հիմա, որու մասին մտածած չըլլայ հելլէն այս մեծ իմաստունը, կը զրէ հեղինակ մը,— առանց ուզելու օրինակ բերել կէօթէն, որ զարմանք կը պատճառէ իրրեւ փիլիսոփայ, բնագէտ, բանաստեղծ կամ քաղաքագէտ, եւ վերջապէս առանց յիշելու Տանթէն իր բանաստեղծի եւ քաղաքական դործիչի հետաքրքրութիւններով, կ'ուզէի արձանագրել միայն այն փաստը թէ ժամանակաշրջաններ կան, երբ մարդկային միտքը կը սիրէ ածիլ համայնագիտական մտահոգութիւններով, ինչպէս ժամանակաշրջաններ կան, երբ մարդկային միտքը կը կծկուի ինքն իր վրայ, ինքն իր մէջ: Այսպէս համայնագիտական է ԺԸ. դարը:

Ուրիշներ նոյն այս երեւոյթը ցոյց կուտան անհատին իսկ կեանքին մէջ: Տարածական է երիտասարդութիւնը,— հետաքրքրութիւն ցոյց կուտայ ամէն բանի մասին, եւ չարժումի դեղում՝ ամէն ասպարէզի մէջ: Ընդհակառակն՝ ծերութիւնը թշնամի է տարածականութեան, կը նախընտրէ խնայել իր ուժերը, չյոգնեցնել իր միտքը, չըսպառել իր կարողութիւնները, դէպի անձնապաշտ անտարբերութիւն հակումով մը:

Ու դարձեալ, ուրիշներ այս երեւոյթը կը բացատրեն հոգեբնախօսական բառարանով: Արիւնային խառնուածքով անհատները կը սիրեն հաւաքական կեանքը, ազմուկը, չարժումը, կռիւը, վիճաբանութիւնը,— անոնք հաղորդական են, անձնուէր եւ քաղցրաբարոյ: Մաղձայիններուը կը մատնեն ոմն նկարագիրը՝ քիչ մը աւելի սաստիկ: Ընդհակառակն ալէյինիները, իրենք իրենց մէջ քաչուած, կը խուսափին աղմուկէն, վէճէն, չարժումէն,— ամանթիք բանաստեղծներն են ատոնք, բարեկամ՝ ... լուսնկային:

Ի՞նչ հարկ, սակայն, նիթեր աւելի ընդլայնելու,— կը բաւէ ըսել թէ միտքը այնպիսի «մարմին» մըն է, որու տարածականութեան սահմանը չկայ: Մեր օրերու մանուկը աւելի բան գիտէ քան մէկ դար առաջուան մանուկը: Ու վա՛յ ա-



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ
Որուն «Անուշ»ը կը ներկայացուի այսօր

նոր, որ իր հետաքրքրութեան չօշափուկները ներս քաշած՝ կ'աչխատի ապրիլ աղքատ զգայարանքներով կամ մտնազիտութեան մը պզտիկ հաճոյքներով:

Աճա՛ծ է մարդկային միտքը մինչեւ «չորս դործողութիւն»: Կ'ըսեն թէ Նափոլէոն կրնար տուն տալ երեք տարբեր զեկոյցներ միաժամանակ երեք քարտուղարներու, մին՝ դէմը նստած, միւս երկուքը՝ աչն ու ձախը: Աճա թէ ինչո՛ւ կը հաւատամ, որ մարդկային միտքը չարունակ կ'աճի, ու դեռ պիտի աճի՝ իր տարածականութեան սահմանները ընդարձակելով, հետեւաբար աւելի եւս ճկուն դառնալով՝ չնորհիւ «չորս դործողութիւններուն»: Ընդհակառակն, միտքը, որ միայն դուրս մարել պիտի կամ միայն բաժանել, պիտի զօսանայ հետզհետէ: Անհրաժեշտ է արդիւնք այդ զօսացումը, անշուշտ որոշ վարժութիւններով: Եւ ի՞նչ քաղցր է, դէթ ինծի համար, մտաւնագրական երկարաւոր պրպտումէ մը կամ ծանր եւ յոգնեցուցիչ ընթերցումէ մը եառը՝ պահ մը կազմաքարութիւն ընել կամ ստաղձագործութիւն, ասեղ չարժել կամ սղոց: Երբ յիշողութեանս մէջ պատահական պարապ մը(*) զոյանայ, անմիջապէս կը փորձեմ մտաքովս գտտորշել գաղափարի մը ամէնէն նրբին երանգները,— եւ այս՝ ճշդելու համար մտքիս յոգնութեան աստիճանը կամ դեպեման պատճառը:

Ուրեմն, այս պատճառաբանութեամբ, մարդկային մտքին կատամ ամէն ազատութիւն՝ մեզուի մը պէս թռչկոտելու համաթծաղիկ ծաղիկ ու պարտէզ պարտէզ: Վասնզի այդ ազատ թռիչքն է, որ կը հարստացնէ զինք:

Ճաճախ ինծի համար մարդանք մը կը դառնայ՝ երբ դրականութեան տունէն դուրս կ'ելլեմ ու կը մտնեմ գիտութեան տունը, ու թող ձեզի զարմանալի չթուի, երբ ըսեմ թէ վինաեր եմ, գետր ու մանաւոր հաճոյքով մը կարդացեր թիլքենի գործը սաղերու ոսոտային երկրաչափական աբան չելիքներուն եւ արուեստին մասին,— տակաւին մանուկ կր հետաքրքրուէի թէ սարդը ինչպէս վարկն վեր թել կը նետէ ուղղահայեաց ու վեր կը բարձրանայ այդ թելով: Ո՛րքան նեղր դրեր եմ, ժամանակին, իմ ուսուցիչներս այդ հարցումով: Ճամառ՝ իմ հետաքրքրութիւններուս, ինչպէս պայքարներուս մէջ, իմ համակրանքս կ'երթայ ոչ թէ անոր՝ որ խղունջ — մտաւորական է (առաջին թէզ անտարբերութեան), այլ անոր որ մեղու — մտաւորական է, (երկրորդ թէզ տարածականութեան), որ կը թռչկոտի, կը հետախուզէ, նեկտար կր ժողվէ, բեղնաւորչի կր տարածէ, եւ ի հարկին... կը խայթէ: Այսինքն թէ երբ արդար է խայթել, ոչ մէկ ուժ կրնայ ինձ արդիլել որ չխայթեմ չմոռցուելիք կսկիծով մը:

Եւ հիմա երկու այս տեսութիւնները բերենք պատշաճեցնել մեր ազգային կեանքին եւ օրուան վէճերուն,— այդ ալ յաջորդով:

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

(*) Ֆրանսերէնն absence բառը, զոր ոմանք կը թարգմանեն բացակայութիւն, աւելի ճիշդ է թարգմանել պարապ՝ երբ հարցր կը վերաբերի հոգեբանութեան, բացակայութիւն թարգմանութիւնը գործածելով միայն ախտաբանութեան մէջ (épilépsie):

«Յայտարարութիւն»

«Ժողովուրդի Ձայն» թերթէն իմացայ որ պոլշեւիկ կուսակցութեան հայկական հատուածը ինքզինքը լուծած է... առանց անգլիական իւղ կամ հնդկական իւղ գործածելու: Եւ մտածեցի. անպատճառ մոսկովեան նոր լուծողական մը ըլլալու է որ հոտը դէշ ելաւ:

Խոստովանինք որ պոլշեւիկները չատ անկեղծ մարդիկ են. ինչ որ կը խորհին, անկեղծօրէն կը խոստովանին: Ես կը յիշեմ պոլշեւիկ մեծամեծներու հռչակաւոր դատաւարութիւնը, Զինովիեւ, Քամենեւ, Թուխաչեւսկի եւ չատ մը ուրիշներ, որոնք ներկայացան Վլչինսքիի եւ խոստովանեցան թէ իրենք օձ են, սողուն են, դաւաճան են, մացի են, էշ են եւ պահանջեցին իրենց պատիժը: Վլչինսքին ալ անոնց անկեղծութիւնը տեսնելով, մահուան պէս թեթեւ պատիժ մը տուաւ: Մեր պոլշեւիկներուն րրածն ալ նոյն անկեղծութենէն կուգայ. տեսան որ իրենց... վերարկուն չատ հինցած է, ու այդ պատճառաւ ալ ոչ ոք կարեւորութիւն կուտայ, նոր մը հագան ճիշդ ու ճիշդ հօճային պէս: Հօճան եթէ հին «ճիւպպէ»ով հրաւէրի երթար, դրան քով կր նստեցնէին, իսկ մեր Ղորով երթար, սեղանին դլուխը կը նստէր:

Յայտարարութիւնը կ'ըսէ որ ազգին լաւ ծառայելու համար իրենց անունը փոխած են: Այս խոստովանութիւնը հաւատացէք որ բոլորովին անկեղծութիւն է: Ըսել կ'ուզեն թէ ասկէ առաջ լաւ չեն ծառայած ...:

Կ'ըսեն թէ իրենց պոլշեւիկ ըլլալը մինչեւ հիմա ազգային հրամայական պահանջ է եղեր, որովհետեւ կամուրջի դեր կը կատարեն եղեր հայ, եւ արաբ ժողովուրդի միջեւ: Հոս խելքիս զօր կուտամ եւ կամաց կամաց կր համոզուիմ թէ ճիշդ է րսածնին: Եթէ այդ կամուրջը չըլլար... նաւակով անցնիլ պիտի փորձէին եւ պիտի խեղդուէին առանց հաղորդութիւն առնելու: Եւ կ'աղօթեմ. վա՛ռ քեզ Աստուած, փառք քեզ, որ այս փորձանքին ազատեցիր մեզ:

Սոյն յայտարարութեամբ, Դաշնակցութեան քթին բերին բաւական մը տալէ վեր, չատ մը ուրիշ պարտաւորութիւններ ալ իրենց կռնակր կ'առնեն.

1.— *Ազատագրուած հողերու վերադարձ ... Վիչինսքիի միջոցաւ անշուշտ:*

2.— *Հայ — Արաբ բարեկամութեան ամրացում... Խալիլ Պէքթաշի միջոցաւ:*

3.— *Հայ հաստատութեան զօրացում եւ հայկերուի զարգացում... նոր ուղղագրութեամբ եւ «ռեվոլիւսիոն» բառերով:*

4.— *Հայ ժողովուրդի դաստիարակութիւն սովետական Հայաստանի պայմաններուն համաձայն:*

Իշտէ հոս սխալ բան մը րրած են: Բոլորը մէկ կողմ, սա չորրորդը բոլորովին պոլշեւիկի գործ է: Առաջ պէտք էր «Հայրենասէրներու միութիւն» կազմէին, յետոյ չուղէին ու պոլշեւիկ դառնային, որովհետեւ այդ բոլոր ըրածնին աւելի շուտ պոլշեւիկի գործ է քան հայրենասէրի:

Այս բոլոր որոշումները տրուած են միաձայնութեամբ: Արդէն Ռուսիոյ մէջ միաձայնութեամբ: Արդէն Ռուսիոյ մէջ միաձայնութեամբ կ'ըլլայ ամէն բան:

Ժամանակին Մուսթաֆա Քէմալ, Թուրքերը Եւրոպական եւ դուրսով եւրոպականացնելու համար, ֆէսը չկրնար ու դլխարկ դնել տուաւ, բայց այդ մարդիկը չփոխուեցան: Անոնք ալ քիչ մը փոխուելու համար, իրենց անունը կը փոխեն, կը յայտնեն թէ չէ, չեմ կրնար զուչակել, բայց պատմութիւն մը միտքս կուգայ որ չատ կը յարմարի այս պարագային.

Ժամանակին մարդուն մէկուն անունը աւանակ կ'ըլլայ. իր բարեկամները կ'ըսեն իրեն.

— Բարեկամ, այդ անունը քեզի համար լաւ չէ, եկուր փոխենք:

— Ինչպէ՞ս ...

— Շատ դիւրին է, սեղան կը չոկենք, ուտելիքով խմելիքով, բոլոր դիւղացիները կը հաւաքենք եւ անոնց ներկայութեան նոր անուն մը կր դնենք քեզի:

Մարդը կր համաձայնի եւ սեղանը կուտայ: Ուտել խմելէ վերջ, կ'ըսեն մարդուն.

— Այսուհետեւ քու անունդ քուռակ է:

Մարդը ուրախացած կ'երթայ կնոջը եւ հպարտութեամբ մը կ'ըսէ.

— Կնիկ, անունս փոխեցի:

— Ի՞նչ դրիր նայինք, կը հարցնէ.

— Քուռակ ...

— Էհ, յիմար, երկու տարի վերջը, ծորքն աւանակ կր դառնաս, կը պոռայ կինը եւ երեսը կր դարձնէ էրիկէն:

Կ'ըսեն նաեւ որ ժողովուրդի մէջ չատ մեծ արձագանգ դտած է — այս պատմութիւնը չէ, չսխալիք — իրենց տուած քայլը:

ԹՈՒՐԻԿ

ԼՍԱ ԵՒ ՉԼՍԱՑ

(ՅԱՐԱՀԱՏՈՒՑՈՒԱԾ)

Ա. ԳԼԽԻ

ՍԱՐԳԻՍՈՎՅԱՆ
ԳԲԳ՝ ՏԻԳՈՒՆ ՓԻՒՐԱՆԵՆ

— Կասած ... Կասած ... յոյսերնիւն ա-
ռած, բայց մի մեր հոգ ... ասչ՝ տաւա-
տունը, տաւարածէ՝ զիրասուն սրբած նո-
ճին չեղոքացրած ...:

Թաթի ..... :

Մեր ընկերուհի Նիկիտենան, որ-
պէս ցոյց տալու ձեռքի վատ սո-
վորութիւնը:

Մենք իսկապէս ուրախ էինք, որ
նորից տեսանք մեր ուսուցչուհուն,
մենք կարծում էինք, որ նա մեզ
մոռացել է, բայց նա մեզ չէր մո-
ռացել:

Հիմա, երբ նկատեցինք, որ օրագի-
րը վատ վիճակում է, սկսեցինք նա-
մակներ գրել, որ ուղարկենք տար-
բեր կողմեր, որ մեզ նոր օրագիր
ուղարկեն:

Մենք գրեցինք «Կոմսոմոլսկայա
Պրաւդա»-ին, «Պիոներսկայա Պրաւ-
դա»-ին, «Ուչիտելսկայա Գազետա»-
ին, «Ռաբոչայա Գազետա»-ին, «Ռա-
բոչի Պուտ»-ին, «Ռաբոչայա Մոսկ-
վա»-ին, «Ռաբոչի Կրայ»-ին, «Ռա-
բոչայա Գազետա»-ին, «Ռաբոչի Ռե-
գիոն»-ին, «Ռաբոչայա Տրիբունա»-
ին, «Ռաբոչայա Գազետա»-ին, «Ռա-
բոչայա Գազետա»-ին, «Ռաբոչայա
Գազետա»-ին, «Ռաբոչայա Գազետ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՆՉՊԷՍ ԾԱՆՕԹ է մեր ընթերցողներուն, բժիտանական կառավարութիւնը բազմաթիւ դիմումներ կատարեց վերջերս Խորհրդային Միութեան մօտ, պահանջելով որ Անգլիա ճամբորդելու արտօնութիւն տրուի 13 ռուս կիներու որոնք ամուսնացած էին Անգլիացի զինուորներու հետ՝ պատերազմի ընթացքին: Մոսկուայի կառավարութիւնը կը մերժէ արտօնել իր հպատակներուն քաղաքացիներուն մեկնումը: Հինգշաբթի օր խնդիրը հասաւ մինչեւ Լորտերու ժողովը եւ Լորտ Վէնսիթարթ, նախկին արտաքին փոխ նախարարը, ըրաւ հետեւեալ յայտարարութիւնը.— «Քանի մը նորապսակ զոյգերու ճակատագիրը կրնայ պզտիկ խնդիր մը ըլլալ նոր օրերու Մողոքին կամ Մոլոթովի համար, բայց մենք այդ լոյսին տակ չէ որ կը նայինք հարցին: Եղածը ոչ միայն բռնատիրական դէպք մըն է, այլ առնի հետեւնքը կ'երթայ: Կրնայ առարկուիլ թէ զգացում կը դնեմ քաղաքական վէճի մը մէջ: Այո, ճիշդ այդ է որ կ'ընեմ: Մարդոց երջանկութիւնը իրականութիւն կը դառնայ եթէ մարդիկ երբեմն հետեւին այն սրտին ղոր Ամենակալը տուած է իրենց քան այն ուղեղին ղոր Ամենակալը չէ տուած: Կրեմլինը սիրտ չունի, սիրտ չունին նաեւ անոնք որ որոշած են իրարմէ բաժնել այն անձերը որոնք միացած են Աստուծոյ հրամանով: Պէտք է վերջնական դիմում մը եւս ընէք Սթալինին եւ պահանջենք որ յարգէ Քէնթըպրիի պահերէցին տուած իր խոստումը: Եթէ այդ հարսերը մինչեւ փետրուարի վերջը Անգլիա չվերադարձուին, մենք ալ, միեւնոյն թիւով ռուս կիներ ու երախաներ, պէտք է արգելքի տակ առնենք: Պէտք է վերջ արուի այլեւս պահանջի քաղաքականութեան:

ՔՈՐԷԱՑԻ խորհրդային իշխանութիւնները մերժած են որ Միացեալ Ազգերու կողմէ նշանակուած յանձնաժողովը այցելութիւն մը տայ Քորէական ռուս հրամանատարին: Միւս կողմէ, սակայն, 11 ռուս լրագրողներ արտօնութիւն ստացած են 12 օր պտոյտներ կատարելու Գերմանիոյ ամերիկեան գօտիին մէջ:

ՊԵՐՆԷՆ կը տեղեկացնեն թէ զուիցերիական ոստիկանութիւնը ձերբակալած է Հունգարացի փոթոֆէսէօր մը որ ամբաստանուած է թէ լրտեսութիւն կը կատարէր օտար պետութեան մը հաշուոյն:

ՀԱՄԱՁԱՅՆ Մոսկուայի ձայնատուփերուն, Պուկարիոյ վարչապետը դարձեալ յայտարարած է թէ պալքանեան համադաշնակցութիւն մը պիտի կազմուի, թէեւ, ոչ տակաւին: Մենք կ'ուզենք տնտեսական յարաբերութիւններ մշակել Անգլիոյ, Ֆրանսայի ինչպէս նաեւ արեւմտեան բոլոր երկիրներուն եւ Ամերիկայի հետ, պայմանաւ որ ի գործ դրուի հաւասարութեան սկզբունքը, յայտարարած է Տիմիթրով:

ԼՈՐՏԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ պահպանողական խմբակցութիւնը որոշած է ընթացք չտալ Անգլիոյ ղեկավարին ժողովին իրաւասութիւնները կրճատելու նպատակաւ պատրաստուած օրինագիծին: Պահպանողականները կ'առաջարկեն միջ-կուսակցական խորհրդակցական ժողով մը որոշ բարեկարգումներու շուրջ համաձայնութիւն մը կնքելու համար:

ԱՄԵՐԻԿԵԱՆ կառավարութիւնը որոշած է պաղեստինէն հեռացնել իր քաղաքացիները ինչպէս նաեւ իր հիւպատոսութիւնը: Անոնք որ պիտի մերժեն հեռանալ, պիտի զրկուին իրենց հպատակութենէն եւ պիտի չվայելեն ամերիկեան կառավարութեան պաշտպանութիւնը: Ամերիկա որոշած է զինուորական ուժ չղրկել Պաղեստին: Հրէական գործակալութիւնը առաջարկած է Միացեալ Ազգերուն որ 30—35.000 հոգինոց հրէական բանակ մը կազմակերպուի:

ԱՄԵՐԻԿԵԱՆ եւ բրիտանական կառավարութիւններու խորհրդակցութիւններ կը կատարեն Հիւսիսային Ափրիկէի (Պէնկազիի) մէջ անգլիւ-ամերիկեան զինուորական խարխխներ հաստատելու ծրագրին շուրջ: Հաւանական կը նկատուի որ Պաղեստինի անգլիական զինուորներուն մէկ մասը Պէնկազի կամ Թոպրուք փոխադրուի:

ՄՈՍԿՈՒԱՅԻ կառավարութիւնը մերժած ըլլալով ելքի վիզա տալ Զիլլի դեսպանին հարսին (Ծագումով Ռուս), Սանթիակայի կառավարութիւնը Միջազգային Առեանին պիտի դիմէ:

ՋՕՐԱՎԱՐ Ա. յղընհատուրը յայտարարեց ուրբաթ օր թէ պիտի ջընդունի նախագահական ընտրութեանց թեկնածու նշանակուիլ:

ՇԱՎԻԼ.— ՏԻԿԻՆ Կ. ՏԷՄԻՐՃԵԱՆԻ մահուան տարիւ փոխան ծաղկեպսակի Ֆր. Կապոյտ Մաչի Շավիլի մասնաճիւղը չնորհակալութեամբ ստացած է Տիկ. Զարուհի Տողրամաճեանէ 200 Ֆր.: Իսկ Ֆ. Կ. Մաչի մասնաճիւղը կը նուիրէ հազար Ֆրանք Բաֆֆիի երգեցիկ խումբին նոյն նպատակով:

Ցերեկոյթ պարահանդէս

Ֆր. Կ. Մաչի Փարիզի Վասնաճիւղին տարեկան պարահանդէսը, տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24, Hôtel Continentalի չքեղ պահնեակներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde:

Նուագախումբ ՋԼՐՆԱՆ ՊՈՒՅՕՆ: Դեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ:

Տարեկան հին ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան Կարմիր Մաչի եւ Ազբարնամի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէջ, 43 Bld. Raspail, Paris:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՔԵՂ ՑԵՐԵԿՈՅԹ

Կազմակերպուած Ֆրանսահայ Կապոյտ Մաչի Սկվրանի մասնաճիւղին կողմէ, կիրակի 29Փետր. 1948, ժամը 3էն 12, Casino des Etoiles, Մասխ սըրահին մէջ, 87 Ave. de Livry, à Sevran:

Գեղարուեստական հաճելի բաժին: Խմբերգ, ներկայացում եւ անակնկալներ, եւրոպական պարեր: Ճոխ պիւֆէ: Մուտք՝ 75 Ֆր.

Հազ. միջոց.— Կառախումբ Gare du Nordէն ժամը 13.45էն եւ 14.15էն: Eglise de Pantinէն 147 թիւ օթոպուս, իջնել Terminus:

«ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐ»Ը ՇԱՎԻԼԻ ՄԷՋ

Տեղւոյն «Րաֆֆի» երիտ. Միութեան կողմէ

15 Փետրուար, կիրակի օր

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴԸ: Մինչեւ այժմ լոյս տեսած եւ բաժանորդներուն ուղարկուած են առաջին, երկրորդ եւ չորրորդ հատորները: Մարտին լոյս պիտի տեսնէ երրորդ հատորը, իսկ ապրիլին հինգերորդը: Ամբողջական գործը պիտի բաղկանայ 10 հատորներէ, որոնք պիտի պարունակեն հեղինակին բոլոր դեղարուեստական գործերը: Տասը հատորներու բաժնեգինը Ֆրանսայի համար 6000 Ֆրանք կանխիկ:

Բաժանորդագրուելու համար դիմել «Ճառագի»ի վարչութեան:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇՔԵՂ ՑԵՐԵԿՈՅԹ

Նախաձեռնութեամբ՝ Սեբաստիոյ Նահանգային Միութեան, վաստակաւոր դերասան՝ ՏՐԴԱՏ ՆՇԱՆԵԱՆի, մասնակցութեամբ Փարիզի հայ բեմի լաւագոյն ուժերուն, 8 Փետրուար, 1948, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Մասքլէն Պէռթլօի չքեղ թատրոնին մէջ, 28bis, rue St. Dominique, métro Invalides:

Առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէ հանճարեղ ողբերգու Վ. Շէյքսփիրի

ԱՐՔԱՅ ԼԻՐ

Պատմական տուամ 6 արար եւ 2 պատկեր, թարգմ. եւ բեմադրութիւն Տ. Նշանեանի:

Տոմսերու գիները, 100էն 400 Ֆրանք, կը ծախուին հայկական բոլոր գրատուներուն, ճաշարանները, Սէբ. Նահ. Միութեան կեդրոնին եւ մասնաճիւղերուն մօտ: Հարցուբերն տասը պիտի յատկացուի Սեբ. Նահանգ. Միութեան ներքաղթի Փոնտին: Սրահին ջեռմութիւնը ապահովուած է: Փնտռել յայտագիրը:

Ամենակարեւոր ռատիօ մը

ԼՈՒՏԵՐ ՖԻՆԼԻՃԵԱՆԻ

Աշխատանոցը բացուած է եւ կը սպասէ՛ նէ քի նորոգութեան եւ գեռեդումներու ամէն կարգի աշխատանք վարպետներու ձեռքով: Նորոգութիւն աղօրիքներու, արդուկներու եւ կազի վառարաններու: Բաղնիքի եւ խոհանոցի նորոգութիւն եւ ապակիներու գետեղում: Դիմել՝ Entreprise Générale Etablissement LODER, 25 Route de Villejuif L'Hay-les-Roses, դիմել նամակով: Autobus 186:

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ Սէն Լուի դասախօսութիւնը վաղը երեկոյեան ժամը 8ին, սովորական հաւաքատեղին: Կը խօսի ընկեր ՏԻԳ. ԹԱԴՈՑԵԱՆ:

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ Պուլվար Օսման մասնաճիւղին դասախօսութիւնը երեքշաբթի երեկոյեան ժամը 8ին, սովորական հաւաքատեղին: Կը խօսի ընկեր Ս. ՄԻԼՏՈՆԵԱՆ:

ՌՈՄԱՆ.—Հ.Ց.Դ. Նոր Սերունդի դասախօսական ժողովը այս չորեքշաբթի 28 Յունուար ընկեր Վարուժան Խուպիկեանի բնակարանը, սովորական ժամուն: Կը դասախօսէ ընկեր Ա. ՊՕՅԱՃԵԱՆ:

ՏԷՍԻՆԻ Հ. Ց. Դ. Նոր Սերունդի վիճաբանական ժողովը վաղը 26 Յունուար երեկոյեան ժամը 9ին Հ. Ց. Դ. Տան մէջ: Նիւթ՝ «Ինչպէ՞ս է ըլլալ մեր դիրքը մեր հակառակորդներուն քարոզութեան դէմ»:

ԼԻՈՆ.— Հ. Ց. Դ. Նոր Սերունդի «Սիամանթօ» խումբի ժողովը չորեքշաբթի երեկոյեան ժամը 8.30ին, դպրոցին սրահը, 78bis rue Rabelais: Կը խնդրուի բոլոր անդամներէն ճշդապահ ըլլալ:

Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Պանէլօ Քաչանի մասնաճիւղին դասախօսութիւնը վաղը, երկուշաբթի ժամը 8.30ին, Հրայր սրահին մէջ: Կը խօսի ընկեր ՀՐԱՆԴ ԱՊՈՆԱՑԵԱՆ:

ԱՑՍՕՐ, ԺԱՄԸ 14.30Ի Ն
ՄԻՒԹԻԻԱԼԻԹԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Մեծ պատրաստութեամբ եւ խնամքով Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆի մահուան 25ամեակին առթիւ:

Փարիզի հայկական երգչախումբին կողմէ Սէնֆոնիկ մեծ նուագախումբ (60 Հոգի):

Ղեկավարութեամբ ԱՐԱ. ՊԱՐԹԵՒԵԱՆի

ԱՆՈՒՇԸ

Անուշի դերը կը կատարէ Օր. ԱՆԺԵԼ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, Ա. Grand prix Wicard de la Ville de Marseille:

Ներկայացումը կը սկսի ճիշդ ժամուն: Նուագի պահուն դուռները փակ կը մնան:

ՇԱՒՈՒԻ է կօշկակարի (Bottier) խանութ մը լիսանով, եւ ջնարաքառէդ:

Մանրամասնութեանց համար դիմել Պ. Chukurianի, 56 rue Genève — Arles sur Rhône:

«Զանգէ» օրին 40°

Ամէնէն աճպարտը եւ ամէնուն փնտուածը

Լիդր 400 Ֆրանի

կրնաք անմիջապէս ընել ձեր

յանձնարարութիւնները

Ani ՆՊԱՐԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆՆԷ

D. NARGUIZIAN, 62 Rue Rabelais, Lyon

ՃԱՇԱՐԱՆ ԼԻԼԱ

Որ բոլորած է իր հաճամեակը եւ տիրացած արդար համբաւի մը,

պատրաստ է գոհացնելու իր ամէնէն դժուարահաճ յաճախորդները իր համադամ կերակուրներով ու բազմապիսի աղանդերներով

Հեռաձայն TRI 31 - 62

24, Rue St. Lazare, PARIS (9)

Իսկի Հայերու ժամադրավայրը

Café des Sports, 4 rue de la Défence Հեռ. Mic. 37-03

Հայրենակի՛ց, կեանքդ թարմացնելու համար կ'ուզե՞ս լաւ օղի խմել, դիմէ վերի հասցէին, ուր ընտիր աղանդերներով համեմուած լաւագոյն օղին պիտի հրամցուի քեզի:

ՄԻԱՑՆ ԱՍ ՉԷ

Ազատ սրահը ձեր տրամադրութեան տակ է, պայմանաւ որ 8 օր առաջ անձամբ, հեռախօսով լուր տաք, հարսանիքի, մկրտութեան, նշանտուքի եւ ամէն տեսակ հանդէսներու համար, կը հայթայթենք նոյնպէս պէտք եղած ըմպելիները, խաղճամիտ դիներով:

ՏԷՐ եւ ՏՈՕՔԷՆ ՍԱՐԳԻՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15.70 — C.C.P. Paris 1678-63

Mardi 27 Janvier 1948 Երեքշաբթի 27 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5250-ՆԴ. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԻՒ 859 — Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ — ԳԻՆ՝ 5 ՖՐ.

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Մ Ի Խ Ա Բ Է Ք

Պոսթընի «Քրիսչըն Սայընս Մոնիթըր»ի Մոսկուայի թղթակիցը նամակ մը հեռագրելով իր թերթին կը չեշտէ Միացեալ Նահանգներէն Հայաստան վերադարձող 15ի հայրենակիցներու Երեւանի մէջ գտած ջերմ ընդունելութիւնը եւ ի մէջ այլոց կը յիշէ երկու Հայերու անկապատ յայտարարութիւնները՝ Ամերիկայի մասին :

« Տասը տարի գործարանի մը մէջ աշխատեցայ եւ ենթարկուեցայ անսահման չահագործումի , ըսած է մէ ոմն կարապետ Գալուստեան :

Ուրիշ մը՝ Եղիշէ Սարգիսեան, յայտարարած է թէ 46 տարի Ամերիկա ապրած է եւ լման 32 տարի անգործ մնացած է ու իր ընտանիքը բաւարար հաց չէ ունեցած՝ ապրելու համար :

Այս երկու անձարները ներկայացուցիչներն են, անշուշտ, մնացեալներուն որոնք ամերիկեան ափերէ տակաւին չբաժնուած իրենց երախտագիտութիւնը կը յայտնէին հիւրընկալ երկրին, բայց Երեւան հասած - չհասած ուրիշ հէքեաթ կը պատմեն որովհետեւ «հիմա այլեւս գտած ենք մեր փնտռած ազատութիւնը » :

Մոսկուայի ձայնասփիւռն ալ, իր կարգին, քիչ մը աւելի գունաւորելով պատկերը,կ'աւելցնէ թէ «Միացեալ Նահանգներէն վերադարձող Հայերը զոհերն էին խորամանութեան եւ անգործութեան » :

Ջենք սպասեր որ այս երկրէն վերադարձող մեր հայրենակիցներն ալ տարբեր չարաչար երգեն ու չքննադատեն Ֆրանսան եւ իր ազատութիւնները՝ Երեւանի աչքին փուշ չդառնալու համար :

Մեզի համար քանի մը տղտմելիներու բարքանջանքը չէ որ կարեւոր է :

Նշանակալից է այն «դասը» զոր ներգաղթի մուենեակները կ'աւանդեն գացողներուն ու հետզհետէ արձանագրուողներուն՝ որպէսզի ստայօդ պատմութիւններով քնացնեն Երեւանը ու խաբեն Մոսկուան :

Առնուազն ապերախտութիւն է — եւ անբարեկրթութիւն — երբ մարդիկ, տասնեակ տարիներով կը վայելեն բարեկամ կառավարութեանց ընծայած բոլոր ազատութիւնները այս կամ այն երկրին մէջ, ու յետոյ, խորհրդային սահմանները չհաղիւ ներս մտած ու հաղիւ ճաշակած իրենց նոր քնակավայրին «ազատութիւն»ը, կը սկսին բամբասել ու ամբաստանել այդ երկիրները :

Անհատապարկէտ Հայը միայն պիտի համարձակէր բաղդատել, օրինակ, Ամերիկայի կամ Ֆրանսայի ազատ ու ժողովրդավար կարգերը՝ ներկայիս , Ռուսիոյ մէջ գոյութիւն ունեցող մեծնատիրական վարչաձեւին հետ :

Ներգաղթը կազմակերպողները վտանգաւոր քաղաքականութիւն կը հետապնդեն երբ կը փորձեն առասպելներով մոլորեցնել հայրենիք վերադարձող հայրենակիցը :

Ընդհակառակն իրենց պարտքը պիտի ըլլար մեր հայրենակիցներուն տալ իրական պատկերը մեր մանրանկար հայրենիքին :

— Գացէ՛ք որովհետեւ հայրենիքը պէտք ունի ձեր բազուկին ու մտքին. գացէք աշխատելու, քրտնելու եւ, ի հարկին, չատ մը անհամ զրկանքներու ենթարկուելու համար. բոլորովին տարբեր են մեր հայրենիքին նիւթական պայմանները. գացէք բայց չըլլայ որ այնտեղ փնտռէք այս ազատութիւնները. այնտեղ մեքենայի մը պտուտակն էք՝ առանց ուղեղի, առանց սեփական տեսակէտի ...

Իմաստակութիւն է երբ քնաբեր հէքեաթով կը համոզեն ու կը լոլոզեն ներգաղթող հայրենակիցը եւ կը համարձակին դրել թէ ներկայ Խորհրդային Միութիւնը աշխարհի « ամէնէն ազատ ու ժողովրդավար երկիրն է» :

Եթէ ներգաղթող հայրենակիցին հայրենասիրութիւնը անկեղծ է եւ անշահախնդիր, ճշմարտութիւնը իրեն պատմելով չէ որ ան պիտի հրաժարի չոգենաւ մտնելէ :

Վերջապէս ի՞նչ օգուտ կը սպասէ հայրենիքը այն ներգաղթողներէն որոնք չատ մը անհամ երեւոյթներու ականատես ըլլալէ ետք, պիտի հարցնեն թէ ինչու խաբեցին զիրենք Փարիզի, Նիւ Եորքի կամ Պահլէրի մէջ:

Եւ ինչո՞ւ ըսին իրենց թէ պիտի երթան աշխարհի ամէնէն ազատ երկիրը :

Մի՛ խաբէք եւ սուտ հէքեաթներ մի դնէք ներգաղթողին ոչ ուղեղին ոչ ալ բերնին մէջ :

Ժ.

Օ Ր Ը Օ Ր Ի Ն

ԱՌԱՆՑ ԽՈՐԱԳՐԻ

Ատենէ մը է վեր ճահիճը սկսած է չարժիլ :

Հայաստանը իրենց պապերուն պարտէզը կազմող ողբմելիները, կը քաշատեն հակառակորդ կարծուած կողմէն տեղի ունեցող տրեւէ ձեռնարկ : Ահա վերջին նորութիւնը :

«Յառաջ» դիտակից իր աղդային պարտականութեան եւ իբրեւ հայելի գաղութի կեանքին, պարբերաբար հրատարակեց անցեալ տարի, քաղելով պաշտօնաթերթէն, ֆրանսական հպատակութիւն ընդունող Հայերուն ցանկը : Եւ վէմլուկը ծայր տուաւ :

Նման ցանկեր նախապէս ալ հրատարակուեցան այս թերթին մէջ, երբ տակաւին հայրենադարձի խնդիր անդամ չկար :

Երբ մարդիկ իրենց ազատ կամքով հպատակութիւն են խնդրեր, երբ այդ խնդրանքը ընդունուեր ու պաշտօնաթերթի մէջ հրատարակուեր է, խղճամիտ խմբագրին պարտականութիւնն է, հաղորդել զայն չահադրգռուողներուն : «Յառաջ»ի մէջ անոնց անուններր հրատարակուելով հպատակութիւն ստացողներուն թիւը կ'աւելնա՞յ կամ կը պակսի՞ : Եւ ի՞նչ կերպով կը վնասէ ներգաղթին : Մնաց որ այդ ցանկերուն մէջ պակաս չեն «հանրայդիմականներու» անուններ եւս :

Տարիներ առաջ զանգուածային հպատակութեան ձեռնարկին դէմ երբ այս թերթին ու Դաշնակցութիւնը աղմուկ կը բարձրացնէին, մատնանշելով անոր առաւելութիւնները ու վտանգները, ամէնէն չատ իրենք էին որ ուժ կուտային այդ ձեռնարկին : Հովին ուղղութիւնը ո՞ւր սկսան չափել, տարիներու քունէն վերջ :

Յանկերու հրատարակութեան առթիւ «Յառաջ»ի ստացած բերանացի թէ դրաւոր ընդհակալութիւնները՝ դիւղական անկիւններու թէ կեդրոն քաղաքներու աշխատաւոր բազմութեանց կողմէ, ամենախօսուն ապացոյցներն են անոր ունեցած ժողովրդականութեան : Ամէն մարդու տրուած չէ օրը օրին պաշտօնաթերթ ստանալ եւ հետեւիլ պարունակութեան :

Սուտ չխօսիմ : «Յառաջ»ը դանդաղ ստացաւ այդ առթիւ : Այո : Կիներ եւ օրիորդներ էին անոնք, որ իրենց անուններր թերթին մէջ երեւնալուն համար թէեւ դոհ՝ բայց կը ջղանանային իրենց տարիքի յայտնութենէն : Եւ «Յառաջ» կը մկրատէր այդ մանրամասնութիւնը...

Հայաստանասէրնե՞րն ալ նման ախտէ մը կը տառապին արդեօք :

ԽԹԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ կառավարական բանակը առայժմ դադրեցուցած է իր գործողութիւնները Մակեդոնիոյմէջ ուր ապստամբները ունին դրեթէ հաւասար թիւով բանակ մը ինչպէս նաեւ աղատօրէն փոխադրութիւններ կատարելու ամէն դիւրութիւն :

ՓՐԱԿԱՑԻ ոստիկանութիւնը ձերբակալած է 15 անձեր —որոնց մէկ քանին զինուորականներ — ամբաստանած ըլլալով թէ լրտեսութիւն կը կատարէին արեւմտեան պետութեան մը հաշուոյն : Կ'ըսուի թէ ամբաստանեալները կարդ մը զինուորական գաղտնիքներ ստանալով՝ գերմանական գործակալութեան մը խողովակով հաղորդած էին խնդրոյ առարկայ պետութեան :

ԱՆԳԼԻԱ. բարեկամական դաշնագիր մը պիտի կնքէ Անգր-Յորդանանի հետ : Վարչապետ Թէվֆիք փաչա իր արտաքին նախարարին ընկերակցութեամբ Լոնտոն հասաւ կիրակի օր :

ՄԻՍՅԵԱԼ ԱԶԳԵՐՈՒ Պաղեստինի յանձնաժողովը պիտի առաջարկէ Ազահովութեան Խորհուրդին որ անմիջապէս քննէ Միջազգային բանակ մը Պաղեստին ուղարկելու ծրագիրը :

Պաղեստինի արիւնալի կռիւները կը չարունակուին : Մինչեւ հիմա սպաննուած են 957 հոգի :

ՊՈՒՏՍՓԼՅՇԹԻ կառավարութիւնը կը պահանջէ Զուիցերիոյ կառավարութենէն որ անմիջապէս ազատ արձակուի հունգարական տեղեկատու դիւանին ներկայացուցիչը որ ձերբակալուեցաւ անցեալ չաբթու՝ լրտեսական արարքներով ամբաստանուած ըլլալով : Հունգարիա կը սպասնայ մերժումի մը պարագային, խզել իր յարաբերութիւնները Զուիցերիոյ հետ :

ՊԱՐԵՆԱՒՈՐՈՒՄ.— Բաժնետէրերին թիւ 75 եւ 76 կտրոնները (չոքոլա) չեղեալ պիտի նկատուին յաւելիկայ փետրուար 10ին : Պանանի վաճառումը բոլորովին ազատ է այս չաբթուընէ սկսեալ :

Ֆրանկը արժեզրկուեցաւ

ՏՈԼԱՐԸ = 214 ՖՐԱՆԿ, ՍԹԵՐԼԻՆԸ = 864

Ինչպէս արդէն կը նախատեսուէր, ֆրանսական կառավարութիւնը կերակի օր, մասնաւոր հրամանագրով, զեղչեց թղթադրամին ներկայ արժէքը եւ հետեւեալ դիները նշանակեց տոլարին եւ սթերլինին համար.—

Մէկ տոլարը պիտի արժէ 214.392 փոխանակ 119.10ի :

Մէկ սթերլինը պիտի արժէ 864, փոխանակ 480ի :

Ուրեմն ֆրանքը կը կրէ 80 առ հարիւր անկում մը՝ Ֆրանսայի ինչպէս նաեւ Ալճերիոյ, Մարոքի եւ Թունուզի մէջ : Իսկ աւելի հեռաւոր դաղթավայրերու մէջ — Մատակասքար, արեւմտեան Ափրիկէ, եւայլն — տեղական դրամատուներէն չրջաբերութեան հանուած Հարիւր Ֆրանքը պիտի արժէ 170 Ֆրանսական Ֆրանք , իսկ տոլարը 126 եւ սթերլինը 398 Ֆրանք : Մադագասկարի դաղթավայրերուն մէջ — տոլարը 48.62 եւ սթերլինը 200 Ֆրանք :

Բացի տոլարէն եւ սթերլինէն, մնացեալ օտար դրամադրամներու արժէքները յաւելում չենք կրած :

Համաձայն նոր օրէնքին, այն բոլոր օտարականները որոնք օտար դրամադրամներ ունին, պիտի կրնան ազատօրէն ֆրանքով փոխանակել զանոնք, բայց պետդները պարտաւոր են համապատասխան արտօնութիւն ստանալ պատկան իշխանութենէն (օֆիս տէ Շանժ) : Առանց այդ արտօնութեան իրաւունք պիտի չունենան տոլար կամ սթերլին գնելու : Իսկ անոնք որ Ֆրանսական ապրանք կ'արտածեն օտար երկիրներ, պարտաւոր են իրենց ստացած տոլարներուն կամ սթերլիններուն կէսը տրամադրել վերոյիշեալ գրասենեակին օրինական դինով փոխանակելու համար, իսկ մնացեալ կէսը կրնան ծախել ազատ չուկայի մէջ :

Ֆրանսական կառավարութիւնը արժեզրկումի որոշումը տուաւ հակառակ Անգլիոյ եւ Ամերիկայի ինչպէս նաեւ Դրամներու Միջազգային հիմնարկութեան աղդքներուն : Անգլիոյ ելմտական չրջանակներուն մեծ մտահոգութիւն պատճառած է այս նոր կարգադրութիւնը որովհետեւ ֆրանքին անկումով դժուլի չափով պիտի նուազին Անգլիոյ արտածումները : Ամէնէն աւելի մտահոդիչ է ազատ չուկայի դրութիւնը : Ներածուած կենսական ապրանքներու փոխարժէքը պիտի վերճարուի պաշտօնական սակով, իսկ արտածումներու փոխարէն գանձուած տոլարներուն կամ սթերլիններուն միայն կէսը փոխանակելի է պաշտօնական սակով իսկ մնացեալ ազատօրէն վաճառելի «սեւ չուկայի» վրայ :

Առեւտեան խնդակցութեան ծրագիրը

ՄՈՍԿՈՒԱ ՁԱՓԱՁԱՆՑ ԴԺԳՈՀ Է

Մոսկուայի ինչպէս նաեւ դրացի երկիրներու թերթերը մէկ օր ուշ հրատարակած էին Պէվինի անցեալ հինգշաբթի օրուան ճառը որուն մէջ Անգլիոյ արտաքին նախարարը ակնարկութիւններ ըրած էր արեւմտեան խմբակցութիւն մը կազմելու մասին :

Մոսկուայի ձայնասփիւռը դիտել կուտայ որ այդ տեսակ խմբակցութեան մը ծրագիրը արդէն երկար ժամանակէ ի վեր կը մշակուէր : Պերլինի խորհրդային օրկանը կը գրէ թէ «Ամերիկա կը սպառնայ Եւրոպային ինչպէս, ժամանակին, Հիթլէրի աշխարհակալութիւնը » :

Մի եւ նոյն ատեն Պէվինի ծրագիրը հետզհետէ ձեւ պիտի առնէ եւ խմբակցութեան մէջ պիտի մտնեն 16 արեւմտեան պետութիւններ : Մրագրին յաջողութեան համար նախ եւ առաջ տնտեսական համաձայնութիւններ պիտի կնքուին :

★ Կիրակի օր Եուկոսլաւիոյ վարչապետ կարեւոր ժողովի հրաւիրած էր իր դեսպանները : Ցայսմիկ չէ տակաւին թէ ինչ որոշումներ տրուած են, բայց Լոնտոնի եւ Ուաշինկթընի քաղաքական չրջանակներուն մէջ կը տիրէ այն կարծիքը թէ «չատ մը անհաճոյ անակնկալներ կրնան պատահիլ շուտով» : Հաւանական կը նկատուի որ Պուլկարիա եւ Եուկոսլաւիա, Պալքանեան Ցանձնախումբին տակաւրէնէն օգտուելով, ճանչնան Մարկոսի ապստամբ «կառավարութիւնը» : Ցետոյ, Եուկոսլաւիա կրնայ փորձ մը կատարել ամրողջութեամբ գրաւելու համար Թրիէսթէի ազատ քաղաքը : Թերեւս, կ'ըսեն, այդ անախորժ դէպքերը կանխելու համար է որ Անգլիա եւ Ամերիկա կը խորհրդակցին որոշելու համար իրենց Միջերկրականեան ռազմավարութիւնը : Երկու Դաշնակիցները պիտի զօրացնեն Միջերկրականի իրենց պինուարական խարիսխները, օդակայաններ պիտի հաստատուին Հիւս. Ափրիկէի մէջ եւ, անհրաժեշտ պարագային, զինուորական նոր ուժեր պիտի դրկուին Ցունաստան :

(Նուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

Գրքեր և հրատարակություններ

Ա.

Երբեմն աչքի դիպվածով ընկնում էր տեղ-տեղ հայ մարդկանց նոր տարվա ընծայագրերի վրա, որ տարբեր ձևերով էին գրված։ Ոմանք ընդհանրապես գրում էին «Շնորհավոր նոր տարի», ուրիշներ ավելացնում էին «Ձեզ», «ձեր տունը» և այլն։ Ես ինքս էլ այդ օրերին ես էի գրում։ Բայց հետո սկսեցի մտածել, թե ինչո՞ւ ենք մենք այդպես գրում։ Ինչո՞ւ ենք մենք ասում «նոր տարի», երբ տարին նոր չէ, այլ հին է։ Ինչո՞ւ ենք մենք ասում «շնորհավոր», երբ ոչ ոք ոչ մեզ շնորհավորում է, ոչ էլ մենք ենք շնորհավորում։ Ինչո՞ւ ենք մենք ասում «ձեր տունը», երբ տունը մերը չէ, այլ տանտիրոջը։ Ինչո՞ւ ենք մենք ասում «ձեզ», երբ ոչ ոք մեզ չի լսում։ Ինչո՞ւ ենք մենք ասում «նոր տարի», երբ տարին նոր չէ։

Ես սկսեցի հարցնել ինձ, թե ինչո՞ւ ենք մենք այդպես գրում։ Ինչո՞ւ ենք մենք ասում «նոր տարի», երբ տարին նոր չէ։ Ինչո՞ւ ենք մենք ասում «շնորհավոր», երբ ոչ ոք մեզ չի

թականները 171 միջնամտութեան պարագայ ներկայացած է իշխանութեանց մօտ :

Միւնիոն տան Փարիզի եւ Մարսիլիոյ դրամենեակներուն մէջ զանազան տեղեկութիւններ եւ իրաւաբանական խորհուրդներ տրուած են, քանացի կամ դրաւոր, 1505 դաղթականի : Երկու դրասենեակները միասին ընդունած են 5390 հոգի : 575 նամակներ ստացուած եւ 1026 նամակներ ղրկուած են :

Անցնող տարուան ընթացքին 20 Հայկական Հանրային Միութեանց միջեւ բաժնուած է 1.024-308 ֆրանք, որ դոյացած է Նանսէնեան դրոշմաթուղթի հասոյթէն եւ Միջկառավարական Կոմիտէն ալ տուած է դաղթականներուն 475.000 ֆր. : Այս դումարներէն 500 հազար ֆրանք տրուած է իբր նպաստ Փարիզի Աղքատախնամի Ընկերութեան Աթիլիէ ծերանոցին համար, որ գնուած է 700.000 ֆրանքով Նանսէնեան դրոշմաթուղթի անցեալ տարուան հասոյթով : Միւս կողմէ, կարմիր Խաչը ստացաւ 100.000 ֆրանք իր դարմանատան համար բժշկական դործիքներ դնելու, առաւել 400.000 ֆրանք եւս որ անոր տըրուեցաւ անցեալ տարուան Նանսէնեան դրոշմաթուղթի հասոյթէն :

Դաղթականաց դրասենեակին միջնորդութեան չնորհիւ այս տարի եւս «Դաղթականներու Օգնութեան Ընկերային Սպասաւորութիւնը» Հայ Օգնութեան Մարմիններու տրամադրութեան տակ դրաւ կարեւոր քանակ մը նոր հագուստի ու բաժնուեցաւ կարիքաւոր դաղթականներու :

Դաղթականաց դրասենեակը անցեալ տարի քննութեան ձեռնարկեց իմանալու համար դործունէութիւնը այն 20 հայկական ընկերութեանց որոնք կը նպաստաւորուէին Նանսէնեան դրոշմաթուղթի հասոյթէն : Այս քննութիւնը ցոյց տուաւ որ այս հայ հանրային հաստատութիւնները կանոնաւոր կերպով մօտ 750 հոգիի նպաստ տուած էին եւ մօտ 1400 հոգիի ալ պարբերաբար : Անոնց ծախսած ընդհանուր դումարն էր 5.123.000 ֆր. :

1947ի ընթացքին, դրասենեակին ենթակայ անցեալած է Լիոնի, Վալանսի, Մարսիլիոյ եւ Նիսի հայկական դաղութներուն ծանօթանալու համար անոնց կացութեան եւ կարիքներուն ինչպէս նաեւ իմանալու համար թէ ինչ դործունէութիւն ունին հանրային այն մարմինները որոնց նպաստ կը յատկացուի Նանսէնեան դրոշմաթուղթի հասոյթէն :

Վարչական թուղթերու կամ զանազան վկայականներու ստացումը դիւրացնելու նպատակով, կեդրոնական վարչութիւնը ներկայացուցիչներ նշանակած է Լիոնի, Վալանսի եւ Նիսի մէջ : Այս քաղաքներուն մէջ գտնուող հայ ազդային միութիւնները յանձ առած են իրենց ներկայացած խնդրանքները յղել Փարիզի Կեդր. դրասենեակին :

Այս տարուան ընթացքին, մօտ 4000 հայ դաղթականներ եւ Ֆրանսական հպատակութիւնն ստացածները, Սուրիացիները, Լիբանանցիները եւ Իրանցիները, հայկական ծագումով, որոնք Ֆրանսա կը բնակէին, թողուցին այս երկիրը հաստատուելու համար Սովետական Հայաստանի մէջ :

ՍՏԱՑԱՆՔ

«ԱՏՐՈՒՇԱՆ» կենիա Վարդանեանի յիշատակին, հրատ. Փարիզ 1947 :

ՄԱՆՇԻ ՓԱՊՈՒՂԻՆ

Նոր չէ Մանչի տակ փապուղի մը քանալու հարցը զոր վերարծարծեցին անցեալ շաբթու Անգլիոյ եւ Ֆրանսայի երեսփոխանները : 150 տարուան հնութիւն մը ունի, եւ սակայն միշտ այ յետաձգուած է անտեսական, ելմտական եւ ռազմագիտական դժուարութիւններու հետեւանքով :

Այդ նպատակին համար վաթսուն — եօթանասուն տարի առաջ կազմուած անգլիական եւ ֆրանսական ընկերութիւնները տակաւին դոյութիւն ունին եւ կը սպասեն յարմար առիթին : Անոնք միտք յղնեցուցին եւ դրամ վատնեցին ծրագիրը իրականացնելու համար : Սկզբնաւորութիւն մըն ալ ունեցան, սկսելով Ծովուն տակ, Քալէի եւ Տուվրրի առջեւ մէյ մէկ մադն երկարութեամբ դետնուղի չինել : Թէեւ ֆրանսական եղերքի դետնուղին ծովուն տակ գացած է, սակայն անգլիականը կը դիմանայ տակաւին :

Սկսելէ առաջ, Ֆրանսացի եւ Անգլիացի ճարտարադէտներ ուզեցին հաստատել թէ արդեօք անյաղթելի դժուարութեանց պիտի չհանդիպէին, փապուղին չինութեան համար : Ճիշդ նեղուցին մէջ, ծովուն մակերեսէն 300 ոտքի չափ խորութեան մը վրայ կաւիճէ կրաքար մը կայ, զրեթէ անթափանց, թէեւ բաւականին կակուղ : Այս խաւը 200 ոտք թանձրութիւն ունի, դիւրութեամբ կարելի է երկու փապուղի չինել, մէկը միւսին վրայ : Ճամբու փապուղիի եւ երկաթուղիի փապուղիի չինութեան համար, Ֆրանսացի ճարտարդէտ Անտռէ Պատըվան պատերազմէն քանի մը տարի առաջ ծրագիրը մը ներկայացուց, անցեալ շաբթու Ֆրանսացի եւ Անգլիացի երեսփոխանութեան խօսակցութեան ներկայ եղաւ ան :

Բոլոր մասնագէտները համաձայն են որ մէկ կամ աւելի փապուղիի չինութիւնը արդի ճարտարագիտութեան համար ոչ մէկ դժուարութիւն կը ներկայացնէ : Ամէնէն լուրջ հարցը օդի նորոդութեան խնդիրն է : Բայց Պ. Պատըվան ունէր ծրագիր մը որով փապուղիին մէջէն օդը կը պարպուի եւ մաքուր օդով կը լեցուի չորս վայրկեանը անդամ մը : Առաջարկեց որ 720.000 լիտր ողն տրուի օդահան մեքենաներով : 150 տարի առաջ Մէթիւս կ'առաջարկէր մաքուր օդ ներմուծել ծխաններով՝ որոնք փապուղիէն դուրս պիտի ելլէին ծովու մակերեսի վրայ իւրաքանչիւր 100 եարտա հեռաւորութեան վրայ :

Մանչի փապուղիին այնքան հնութիւն ունեցող ծրագիրը եթէ դժուարութիւններու հանդիպեցաւ պատճառը, վերջին եօթանասնամեակին, պէտք է վերագրել զինուորական իշխանութեանց ընդդիմութեան — մասնաւորաբար Բրիտանական, որովհետեւ Ֆրանսացի պետերը նպաստաւոր նկատած են ռազմագիտական տեսակէտով : Անգլօ-Ֆրանսական, եւ անգլեւպերմանական մրցակցութեան տեսակէտով մինչեւ վերջին պատերազմները, բնական է որ զինուորական քննադատներու կարծիքը գերակշռէին : Մնդիր է թէ հիմա ալ միեւնոյն ուժը ունի՞ն : 1930ին Լորտ Ուօլսըլէյ կ'առարկէր թէ եթէ փապուղին չինուի «Անգլիան իբրեւ ազդ պիտի կորնար բնակչութիւ առանց ազդանշանի, նոյնիսկ եթէ Անգլիան խաղաղ պայմաններու մէջ ըլլար» :

Ժամանակի ընթացքին, բրիտանական զինուորական առարկութիւնները փապուղին չինութեան դէմ ժամանակավրէպ դարձաւ : Եւ արդարեւ արդէն ժամանակավրէպ եղաւ ոմբաձիգ օդանաւին երեւան ելլելովը :

Նշանակելի է որ մինչեւ իսկ ռազմագիտական առարկութիւններ չեղան վերջին վիճաբանութեանց ընթացքին : Ներկայութիւնը դարձաւ դըէխաւորաբար ծրագրին ելմտական, տնտեսական եւ արհեստագիտական խնդիրներուն չուրջ :

Եթէ նոյնիսկ բրիտանացի ներկայացուցիչները համաձայնին Ֆրանսական տեսակէտին հետ թէ փապուղին պէտք է չինուած ըլլար չատոնց ի վեր, անոնք պիտի դիմադրեան տակաւին բրիտանական նախապաշարումով : Եւ ամէն նախապաշարումի պէս, այս ալ աւելի չատ յուզական է քան տրամաբանական :

ՁԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ ՌՈՄԱՆԻ ՄԷՋ

Մեր երիտասարդները Ցունուար 17ին կազմակերպած էին ընկերահամակրական իրիկոյթ մը : Սրահը լեցուած էր կանուխէն, նոյն իսկ Լիոնէն, Տէսինէն, Վիէնէն եւ Վալանսէն ընկերներ ու բարեկամներ փութացեր էին քաջալերելու Նոր Սերունդի տղաքը :

Օրուան նախագահը ընկեր Աբրահամեան հակիրճ բառերով հանդէսը բացուած յայտարարեց : «Մշակ բանուորը» յաղթական ու խանդավառ թնդացուց սրահը :

Սեղանապետ ընտրուեցաւ Պ. Մ. Ձիմմէճեան որ չատ հաճելի կերպով վարեց իրիկոյթը ուր երգն ու պարը իրարու յաջորդեցին վինքնաբուխ եւ սրտագին :

Տէսինի Նոր Սերնդականներէն ընկեր Ա. Փափազեան իր մաքուր եւ դեղեցիկ հայերէնով խրախուսեց ընկերները, արժանանալով բուռն ծափերու, իսկ ընկերը Ա. Պօյաճեան օրուան պատշաճ բանախօսութեամբ մը բացատրեց նորահաս երիտասարդութեան պարտականութիւնները եւ անկնկալութիւնները որ ունինք իրենցմէ՝ ծառայելու համար իրենց կարմին մեր ժողովուրդին : Շեշտեց ի մասնաւորի Հ. Ց. Դաշնակցութեան Նոր Սերունդին ծագումը եւ կտրած ճամբան այսքան քիչ ժամանակի ընթացքին, ու մաղթեց կորով ու յարատեւութիւն յառաջդիմելու իրենց ընտրած դեղեցիկ ճամբուն վրայ :

Երեկոյթը մինչեւ ուշ ատեն չարունակուեցաւ նոյն ոգեւորութեամբ, ազդ. երգերով ու պարերով, հանդիսականներէն պահելով ջերմ մթնոլորտի մը մէջ դոհ ու խանդավառ :

Այս առթիւ եղան նուիրատուութիւններ զաղաններու կողմէ : Յ. Պօյաճեան

ՍՏԱՑԱՆՔ

GUIDE PRATIQUE DE LA NATURALISATION FRANÇAISE: Par Henri Mayeux et Jean H. Krailsheimer Preface de Marcel Pages. որ կը պարունակէ պայմանները, խնդրագրի պատճէններ, պահանջուած փաստաթուղթերը, մեծաչնորհի պարագաներ, եւայլն : Edition Réalité, 4 rue Cochin, Paris : Գին 150 ֆրանք, Franco 172 ֆրանք :

«ԳԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ

ԷՍԱ ԵԻ ՀԱՄԱՑ

(ԽՈՐՀՐԴԱՎԷՊ)

Բ. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԴԱՐՁ

Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

— Փիլիսոփայութիւնը կէտադրութիւն է : Մեկնակէտ, քննակէտ ու յենակէտ : Տիեզերք, եղեւոյթ, ճշմարտութիւն : Փիլիսոփայական կառաւանը ինկեր է ճանապարհ, տիեզերքին խորհրդաձաղ փչերը բռնած, բայց հազիւ թէ քանի մը քայլ առած, հաներ է իր մէջքէն երկար, հատու մկրատ մը ու բաժներ է զայն երկուքի — նիւթ եւ հոգի : Ուրիշ մը, աւելի քան ահաւոր ու վայրագ, հսկայ սուր մը մխեր է անոր կուշտին, փուեր է զայն դիապատ ու արիւնաթաթախ, դետին, յետոյ արիւնոտ թեւերը պարապութեան երկարած, աղաղակէր է յուսահատ,

— Դուն ոչինչ ես··· : Զունիս աչք, որ տեսնես, չունիս ականջ, որ լսես, չունիս ձեռք, որ օդնես : Զէութիւն, չգոյութիւն, նիրվանայ ··· :

Մինչդեռ տիեզերքը ոչինչէն ձերբազատ, ոտքերը անհունին մէջ մխրճած, դոյապատճառ իրականութիւն է : Նիւթ եւ հոգի կը կազմեն անոր բաղկանութիւնը : Նիւթը անբաժան, էախառն գոյացութիւններ : Նիւթը այնքան նման է եւ մօտ հոգիին, որչափ հոգին՝ նիւթին : Մին առնել եւ միւսը ձգել, անհեթեթ երկուութիւն է, որովհետեւ անոնք բնատարր, բնածին միութիւններ են : Ստեղծագործութիւնը՝ գեր - էակի մը, որ մի է : Այլապէս, անոնք, կատաղած գաղաններու պէս իրարու դէմ պիտի ելլէին, զիրար պիտի յօշոտէին, անլուր վայրագութեամբ : Քաոսէն ծնածը պիտի վերադառնար քաոսին :

Ոչ, ոչ··· : Ապացոյց՝ քնութեան երեւոյթներն ու կրկներեւոյթները — լոյս, թրթռացում, չարժում, կեանք ու մահ : Բայց ինչքան համաչափ, համընթաց թաւալում, օրինակուած չղթայի մը մէջ, որուն մի մասը թաղուած է անյայտին խորը : Վերցնել օղակներէն անտեսանելին, քրքրել, վերլուծել զայն, ու թաքուն օրէնքները մտահայեցութեան ենթարկել, դա դիտութիւն է :

Տիեզերքը ուսումնասիրելի, հետազօտելի մարմարիոնի զանգուած մըն է, որուն դիտութիւնը կուտայ ճեւ եւ արժէք : Գիտութիւնը չտեղծեր, այլ իրերու ներքին էութիւնը կ'առաջնորդէ դէպի լոյս աչխարհ : Ան դիւա չէ, ոչ ալ՝ հրաչք, այլ հնարք ու հանճար : Իսկ տգիտութիւնը հին Եգիպտացիներուն պատմական կատուն է, որուն վրայ նետ արձակելը խստիւ արդիլուած էր : Բայց Պարսիկները իրենց յառաջապահ զօրքերուն ճեռքը մէկ մէկ կատու տուած, նախապաշարեալ բանակին վրայ արշաւեցին ու յաղթեցին : Այո, կատուն առիւծին թաթերուն տակ՝ անզօրութիւն, իսկ առիւծը՝ բնութեան չղթայակապ օղակները նուաճող զօրութիւն :

Որոնումներու այս խորախորհուրդ կարաւանը մինչեւ ո՞ւր տանիլ : Ահ, մարդկային հոգին, դեռ երէն եւ առուներէն ջուր խմած, բայց դեռ ծարաւի, կը տենչայ հասնիլ այն մեծ աղբիւրին, որ ճշմարտութիւնն է : Ան ստեղծագործութեան թանձրածալ վարագոյրին ետին քաչուած, կը ճգնի արարիչը դտնել ու ճանչնալ : Բայց··· :

— Ո՞վ ստեղծեց այդ Արարիչը,

— Անշուչտ ուժ մը դերբնական,

— Այդ ո՞ւժը ···

— Ուրիշ մը,

— Այդ ուրի՞շը ···

— Ուրիշ ուրիշ մը :

Օ, յաւիտենականօրէն երկարաձիգ հարցականութիւններ··· Ո՞ւր կը տանիք զիս :

Երկուքէն մէկը : Այդ վնասուած վերջին օղակը, ինք ալ իր կարգին կամ ստեղծագործութիւն է եւ կամ··· : Ուրիշ ի՞նչ կրնայ ըլլալ, եթէ ոչ՝ անստեղծ գոյութիւն : Այո, մենք կ'իյնանք ճանապարհ, առաջին հարցումին իսկ այդ ի՞նչը ընդունած ու հաւատացած անոր : Դա Աստուած է, մի եւ անբաժանելի, սկիզբնասկիզբ միութիւն, որուն պաչտամունքը՝ ինքը կրօնք է :

Օ, այդ կրօնքը··· միեւնոյն խարխափին վրայ ուրեան աքանչելի տաճարներ եւ հրէչային յիմարացնող կառուցուած են :

Քրիստոնէութիւնը նման է անհիւթ տաճարի մը, որուն զեղակերտ որմերուն վրայ, հիմնադիրը գանկը հրաչագեղ նկարեր, լոյսի եւ յոյսի երկնաքանդակ ծաղիկներ : Բայց ոտքերը բոլորովին զեռնչ կարեր, նիւթին գոյութիւնը ուրացեր եւ իր հաւատացեալները մոլորեցուցեր է անհեթեթ վարդապետութեամբ : Աստուած մարմինը, փառաւորել հոգին միայն :

ՓԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՑՈՒՆՈՒԱՐ 24ԻՆ քաթեկամուքեան եւ փոխադարձ օգնութեան գաշնադիր մը ստորագրուեցաւ Ռումանիոյ եւ Հունգարիոյ միջեւ :

ԽՈՐՀՐԴԱՑԻՆ Լաթվիոյ ընտրութեանց մէջ քուէներուն 81.71 առ հարիւրը չհաց են ոչ-համայնավարները : Ընտրողներուն 99 առ հարիւրը քուէ տուած էր :

ԱՆԳԼԻԱՑի 12 ԳԻՏՈՒՆՆԵՐ մօտերս ժողով մը պիտի գումարեն որպէսզի ձեւեր գտնեն տոլարի խնայողութեան համար : Օրական մը պիտի ունենան հետեւեալ յանձնարարութիւնները կամ դիտողը.— բոլորովին նոր ուտելիք մը չատ աժան . նոր օճառ մը որուն մէջ բնաւ ճարպ չկայ . նոր տեսակ «բամպակ» մը որ բամպակ չէ բայց անոր չափ դիմացկուն . նոր «կաշի» մը որ կենդանական չէ, նոր տուներ որոնց համար աւտազ պիտի չվճարեն : Եւ ուրիշ չատ մը նորութիւններ՝ յանուն խնայողութեան :

ԻՐԱԳի ժերակոյտին նախագահը յայտարարեց որ իր պաշտօնէն հրաժարած կը նկատէ վարչապետը — որ ներկայիս Լոնտոն կը գտնուի — որովհետեւ ստորագրած է նոր գաշնագիր մը Անգլիոյ հետ :

ԼԵՀԱԿԱՆ պինուորական դատարանը մահուան դատապարտեց երեք Գերմանացիներ որոնք խժդժութիւններ կատարած էին Լեհաստանի մէջ : Հինգէն 15 տարուան բանտարկութեան դատապարտուեցան տասներեք ուրիշ չարագործ Գերմաններ :

Պ. ՀԱՐՐԻՏ ԼԱՍՔԻ, Անգլիոյ Աչխատաւորական կուսակցութեան յայտնի տեսաբանը, յայտարարեց թէ ինք կը հաւատայ որ Ռուսիա աչխարհակալ ձգտումներ չունի եւ կը ջանայ պարզապէս ապահովել իր սահմանները : Ամերիկան ատ միեւնոյն բանը կրած է՝ իր անկախ բլլալէն ի վեր, բաւ Լասքի : Չեմ հաւատար նաեւ որ Ռուսիա կ'ուզէ համայնավարութիւնը պարտադրել բոլոր ազգերուն, բայց «պիտի ուզէի ոչ մեր կուսակցութիւնը օրինակ առնէր համայնավարներու եռանդէն » :

ՎԱՏԻԿԱՆի պաշտօնական օրկանը Օսէրվատթորի Րօմանօ, խմբագրականով մը դիտել կուտայ որ եթէ Ռուսիա իսկապէս պատերազմ չուզեր, պէտք է օգտուի բանակցելու ներկայ պատեհութենէն :

ՀԱՄԱՁԱՅՆ Մոսկուայի « Փրաւտա »ին, Չինաստանի համայնավարները կռիւը կը շահին բոլոր ճակատներուն վրայ : Կառավարական ուժերը պաչտպանողականի վրայ են միչտ եւ աճեցման օժանդակութիւնը որեւէ օգուտ չունի : Մանչուրիոյ նահանգին 90 առ հարիւրը կը գտնուի համայնավարներուն ձեռքը : « Փրաւտա », կ'ընդունի տակայն որ կառավարութիւնը բաւական զօրաւոր է տակաւին ունի 7 միլիոն զինուոր՝ երկու միլիոնի դէմ :

ԱՖՆՅՔԻՆ կը տեղեկացնէն թէ Ալպանիա կինուռը կը համախմբէ հելլէնական սահմանադուխին վրայ, Քոնիցայի ճիշդ դիմացը, Էֆքսվիչի եւ Շքուրտիլի միջեւ : Ալպանիական արտաքին նախարարութեան պաշտօնատարներէն մէկը բաւ որ իր կառավարութիւնը «չի ճանչնար» պատքանեան յանձնաժողովին տեղեկագիրը որուն մէջ ամբաստանութիւններ կան Ալպանիոյ դէմ : Այդ յանձնաժողովը «գոյութիւն չունի, ապօրինի է եւ անհամապատասխան է Մ. Ազգերու Ուխտին, բ - ատ պաշտօնատարը :

ԳԵՐՄԱՆԻՈՑ դէմ պատերազմող 18 մանր պետութիւնները տասը միլիառ տոլարի պատերազմական հատուցում մը պիտի պահանջեն : Այս մասին խորհրդաժողով մը պիտի գումարուի Պրիւքսէլի մէջ : Պելկրատի կառավարութիւնը արդէն պատրաստած է ընդհանուր տեղեկագիր մը որ պիտի քննուի :

ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԵԱՆ արտաքին նախարարը Պ. Մոլոթով կիրակի օր Քիէվի մէջ Ուկրայնայի «անկախութեան» 13րդ տարեդարձին առթիւ ճառ մը խօսելով չեշտեց թէ Ռուսիա խաղաղասէր քաղաքականութիւն մը կը հետապնդէ : Մենք ուրի, նպատակ չունինք, ըսաւ Մոլոթով : Նիւ Եորքէն կը տեղեկացնեն թէ ըմբոստութիւն ծագած է Ուկրայնայի հարաւային նահանգներուն մէջ : Ըմբոստներուն թիւն է մօտաւորապէս կէս միլիոն : Միեւնոյն աղբիւրէն կը հաղորդուի որ չնորհագուրկ եղած է յայտնի տնտեսագէտ փրոֆ. Վարկա որ վերջերս գիրք մը հրատարակելով պաչտպանած է Ռուսիոյ եւ արեւմտեան երկիրներու գործակցութեան տեսակէտը եւ չէ մոռցած յիչեցնելու որ դրամատիրութիւնը տագնապի մէջ չէ :

ՀԱՄԱՁԱՅՆ Պերլինէն տարածած տեղեկութեանց ռուսական իչխանութիւնները սկսած են ամրացնել զբաղմանական եւ լեհական սահմանադուխը : Համաձայնութեան դաշինքին, այս վերջինը առժամեայ բնոյթ պիտի ունենար : Բայց 1945էն ի վեր տեղի ունեցող խորհրդաժողովնե - րուն մէջ, Մոսկուայի կառավարութիւնը ամէն անգամ դիտել տուած է որ ներկայ սահմանագիծը վերջնական է : Ուչադրաւ կը նկատուի որ ամբաստանութիւնները կը չինեն Ռուսերը բանակին ճարտարագէտներուն հակադութեան տակ : Գիծը կ'երկարի Շթէթինէն մինչեւ Պրէսլաու : Աչխատաւորները Լեհեր չեն, այլ Գերմանացիներ՝ ռուսական գօտիէն : Ներկայ ամբաստանութիւնները չատ օգտակար պիտի բլլան այն պարագային երբ Ռուսիա պատերազմի բռնուի Պալքաններուն եւ Փոքր Ասիոյ մէջ :

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

Ցերեկոյթ պարահանդէս

Ֆր. Կ. Մաչէ Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը, տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24, Hôtel Continentalի չքեղ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde :

Նուագախումբ ՖԼՐՆԱՆ ՈՒԻՑՕՆ : Գեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ :

Տարեկան շքեղ ցերեկոյթ պարահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան կարմիր Մաչի եւ Ողբախնամի տարեկան ցերեկոյթ պարահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր. կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիչեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէջ, 43 Bld. Raspail, Paris:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Պուլվար Օսմոյի Ֆ. Հ. Կ. Մաչը, Մանուկներու Օրը պիտի տօնէ Փետրուար 1ին, կիրակի կէս օրէ վերջ ժամը 3ին, տեղւոյն եկեղեցիին մէջ, կը հրաւիրուին թաղին բոլոր մանուկները իրենց ծնողքներով միասին ինչպէս նաեւ բարեկամ բոլոր կազմակերպութիւնները որ իրախուսեն մեր մանուկները : Մրգեղէնի ծրարներ պիտի բաժնուին մինչեւ տասը տարեկան մանուկներուն :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՔԵՂ ՑԵՐԵԿՈՑԹ

Կազմակերպուած Ֆրանսահայ Կապոյտ Մաչի Սէվրանի մասնաճիւղին կողմէ, կիրակի 29Փետր. 1948, ժամը 3էն 12, Casino des Etoiles, Մասխա սըրահին մէջ, 87 Ave. de Livry, à Sevran :

Գեղարուեստական հաճելի բաժին : Խմբերգ, ներկայացում եւ անակնկալներ, եւրոպական պարեր : Ճոխ պիւֆէ : Մուտք՝ 75 Ֆր.

Հաղ. միչտ. — Կառախումբ Gare du Nordէն ժամը 13.45էն եւ 14.15էն : Eglise de Pantinէն 147 թիւ օթօպուս, իչնալ Terminus :

«ՄՇԱԿՈՑԹԻ ՕՐ»Ը ՇԱՎԻԼԻ ՄԷՋ

Տեղւոյն «Րաֆֆի» երիտ. Միութեան կողմէ

15 Փետրուար, կիչերակի օր

ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ.— Պուլկարիոյ Պուրկաս քաղաքէն բնիկ Ռուսոսթոցի Թովմաս Գր. Թիւթիւնճեան կը փնտռէ իր հօրեղբայրը՝ Լեւոն Սարգիս Թիւթիւնճեանը, եւ կամ Ֆէսճեան, կնոջը ազգանունը Լուսինա, զաւակները՝ Անահիտ, Սարգիս եւ Ներսէս Թիւթիւնճեաններ եւ կամ Ֆէսճեաններ, որոնք 1922ին Կ. Պոլսէն անցած են Ֆրանսա եւ հաստատուած Փարիզ : Այժմ անոնց մասին ստոյգ լուր ունեցողներէն թախանձագին կը խնդրուի հաղորդել հետեւեալ հասցէին .— Թովմաս Գ. Թիւթիւնճեան : Ուլիցա «Ադամաս Սլավով» թիւ 14, Պուրկաս - Պուլկարիա : Կը խնդրուի արտատպել բոլոր հայ թերթերէն արտատպելդային :

17ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՑԵՐԵԿՈՑԹ

Կազմակերպուած Հայ Արիներու Միութեան Փարիզի չրջանի երէցներու, սկաուտներու եւ պայլիկներու կողմէ : Մասնակցութեամբ Փարիզի Հայ Արեւոյճներուն : Տեղի կ'ունենայ կիրակի 7 Մարտ 1948, կէսօրէ վերջ ժամը 2.30ին Salle de la Chimie, 28bis, rue St. Domonique, Paris (7), (métro Invalide կամ Solférino) :

Սկաուտական ճոխ յայտագիր, ներկայացումներ, հայկական պարեր եւ երգեր Արենոյճներուն կողմէ :

Մուտք 100 — 300 Ֆրանք :

ԾՐԱՆՔԵԻՀԱՑԿԱԿԱՆ Միութիւնը ծրագրած է սարքել Հայ եւ Ֆրանսական մչակոյթներուն նուիրուած նոր վաստատուն մը որ տեղի պիտի ունենայ Սորպոնի մեծ ամփիթատրոնին մէջ Ապրիլ 18ին, կիրակի կէսօրէ վերջ : Կը խնդրուի չհամչաճեւել :

Օր. ՎԱՐՍԵՆԻԿ ՄԻՆԱՍԵԱՆ
ԸՆԿԵՐ ԿԱՐԱՊԵՏ ՊՕՏՈՒՐԵԱՆ
Ամուսնացած
Պոլիս 10 Յունուար , 1948 Տէսին

ՅՈՒՇԱՏԵՏՍ

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ Պուլվար Օսմոյի մասնաճիւղին դասախօսութիւնը այս իրիկուն ժամը 8ին , սովորական հաւաքատեղին : կը խօսի ընկեր Ս. ՄԻԼՏՈՆԵԱՆ :

ՌՈՄԱՆ.—Հ.Ց.Դ. Նոր Սերունդի դասախօսական ժողովը վաղը չորեքչաբթի , ընկեր Վահրամ Խաչիկեանի բնակարանը, սովորական ժամուն : Կը դասախօսէ ընկեր Ա. ՊՕՑԱՃԵԱՆ :

ԼԻՈՆ.— Հ. Ց. Դ. Նոր Սերունդի «Սիամանթօ» խումբի ժողովը վաղը փրիկուն ժամը 8.30ին, դպրոցին սրահը, 78bis rue Rabelais : Կը խնդրուի բոլոր անդամներէն ճչդապահ ըլլալ :

ՏԱՐԵԿԱՆ ՇՔԵՂ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Լա Սիթթայլի Հ. Ց. Դ. Նոր Սերունդի «Հրայր» խումբի կողմէ :

Այս Շաբաթ իրիկուն, 31 Յունուար 1948, մինչեւ առաւօտ : Au Flot Bleuի չքեղ սրահին մէջ :

Նուագախումբ Սէն Լուի Ն. Ս. Ժազով :

Մուտքը 40 եւ 60 Ֆրանք :

«ՅԱՌԱՋ» կը նուիրէն.— Քավայեանէն Պ. Յակոբ Փափազեան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ իր մօրեղբօր Գ. Քիւլահեանի, Ափթ.

22 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ , ԿԻՐԱԿԻ ՕՐ ԺԱՄԸ 3ԷՆ ԿԷՍ ԳԻՇԵՐ , Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՌՈՍՏՈՄ ԽՈՒՄԲԻ ՀԱՆԴԷՍ ԽՆԶՈՑԲԸ

կը խնդրուի նկատի ունենալ թուականը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Փարիզի Հայոց եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերակցութեան բոլոր անդամները 1 Փետրուար 1948, կիրակի ժամը 2.30ին եկեղեցւոյ խորհրդարանին մէջ, օրակարգ ունենալով եկեղեցւոյս օրինական լուսաբեր Պ. Յակոբ Ճօրթուեանի քահանայական թեկնածուութեան հարցը :

18 Յունուար 1948ի ընդհ. ժողովը մեծամասնութեան չհանելուս, կանոնագրքի 16րդ յօդուածին համաձայն, այս անգամ ներկաներու թիւը պիտի նկատուի օրինաւոր :

ԿՕՇԻԿԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ ՄԸ

Արհեստին ծանօթ , մեծաքանակի վաճառորդներուն , մեծ տուներու , բազմաթիւ մանածագործներուն Prix-Uniquesներու , յաճախակի այցելու , կօշիկի փոքր ու մեծ առեւտրականներու , չրջուն վաճառորդներու հետ մօտէն չփում ունեցող մը

ԿՈՒԶԻ ԿՕՇԻԿԻ ԴՈՐԲԱՏԻՐԵՐՈՒ

եւ (կանանց , երախաներու եւ այրերու) կօշիկի վերաբերեալ ամէն կարգի նիւթերու համար ստանձնել ներկայացուցչութիւնը Փարիզ եւ չրջանակներուն համար :

Դիմել՝ **TALOPP HENRI**
16 Rue Montgolfier, Paris (3) , Հեռ. Turbigo 74-54

Իսիի Հայերու ժամադրավայրը

Café des Sports, 4 rue de la Défence Հեռ. Mic. 37-03

Հայրենակից, կեանքդ թարմացնելու համար կ'ուզե՞ս լաւ օրը խմել, դիմէ վերի հասցէին, ուր ընտիր աղանդերներով համեմուած լաւագոյն օղին պիտի հրամցուի քեզի :

ՄԻԱՑՆ ԱՍ ՉԷ

Ազատ սրահը ձեր տրամադրութեան տակ է , պայմանաւ որ 8 օր առաջ անձամբ, հեռախօսով լուր տաք, հարսանիքի , մկրտութեան, նչանառքի եւ ամէն տեսակ հանդէսներու համար, կը հայթայթենք նոյնպէս պէտք եղած ըմպելիները, խմիչքները, ճամիա դիներով :

Տէր եւ Տիկին ՍԱՐԳԻՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

ՃԱՇԱՐԱՆ ԼԻԼԼԷ

Որ բոլորած է իր հասճամեակը եւ սիրաչոյած արդար համբաւի մը,

պատրաստ է գոհացնելու իր ամէնէն դժուարահաճ յաճախորդները իր համադամ կերակուրներով ու բազմապիսի աղանդերներով

Հեռաձայն TRI 31 - 62

24, Rue St. Lazare, PARIS (9)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Mercredi 28 Janvier 1948 Չորեքշաբթի 28 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5251-Նոր շրան թիւ 860 Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ ԳԻՆ՝ 5 Ֆր.

ՆՇԱԼ ՐՆԿԱԾ...

Հետաքրքրական է, որ իրենց սանձարձակ կառավարութիւնը մեզի դէմ համայնավարներն ու իրենց ուղեկիցները այս անգամ կ'արտայայտեն՝ «Թուրք» եւ «Թրքական գործակալ» բառերը նետելով մեր հասցէին :

Առեն մը, Ստալինի եւ Հիթլէրի բարեկամութեան շրջանին, կ'աշխատէին մեզ վարկաբեկել՝ կոչելով մեզ «անգլիական գործակալներ » : Իսկ երբ Հիթլէր յարձակեցաւ Սովետական Ռուսիոյ վրայ, մեզ ալ մէկ օրէն միւսը համայնավար մամուլի մէջ դարձանք «Նացիները» կամ «Հիթլէրեան գործակալները»:

Այժմ ալ մենք «Թրքական գործակալ» ենք եղեր յանկարծ: Հարկաւ, այս զրպարտութիւնները կ'ընեն մեզ վարկաբեկելու դիտաւորութեամբ եւ այդ զրպարտութիւնները ալ կը փոխեն՝ նայած ժամանակին եւ պայմաններուն :

Սակայն, ո՞վ չի գիտեր, թէ համայնավար - ներու «դեղեցիկ» յատկութիւններէն մէկն ալ այն է, որ իրենց հակառակորդներու վրայ միշտ կ'աշխատին վարկեցնել իրենց իսկ գործած յանցանք - ները, այսինքն՝ անոնց կը վերագրեն այն, ինչ որ իրենք կ'ընեն կամ ըրած են :

Ընդդէմ Մոսկուայի գործակալները՝ հայանուն համայնավարները կամ «յառաջդիմականները» եղան նաեւ հիթլէրական գործակալները, երբ Ստալին բարեկամ էր Հիթլէրին (ապացոյց՝ «Լրաբեր»ի թիւերը 1939ի օգոստոս 23էն սկսած մինչեւ 1941ի յունիս 22) . եղան նաեւ քեմալական Թուրքիոյ գործակալները, երբ Խորհրդային կառավարութիւնը Թուրքիոյ Դաշնակիցն էր 1920էն սկսած մինչեւ վերջին պատերազմը :

Ապրիլեւ, Թրքական գործակալներ եղող հայանուն համայնավարներն էին, որ 1920ին սարքեցին մայիսեան ապստամբութիւնը Հայաստանի Հանրապետութեան դէմ եւ այդ ապստամբութեան միջոցով քայքայեցին հայկական բանակը :

Թուրքիոյ դաշնակից ռուս եւ հայ համայնավարներն էին, որ 1920ի սեպտեմբերին ղրկեցին քէմալական Թուրքերը արձակելու Հայաստանի Հանրապետութեան վրայ եւ անոնց հետ միասին վերջ տուին անոր անկախ գոյութեան՝ բաժնելով անոր հողերը իրենց միջեւ :

Թուրքիոյ դաշնակից ռուս եւ հայ համայնավարներն էին, որ 1923ին Լոզանի մէջ օգնեցին քէմալականներուն թաղելու Թրքահայ դատը: Թուրքերու ջերմ բարեկամ հայանուն համայնավար - ներն էին, որ տարիներ շարունակ իրենց մամուլի մէջ պաշտպանեցին Թուրք Յարդարարները եւ հայկական յարդերու մեղքը չանացին ձգել Դաշնակցութեան վրայ :

Նոյն Թուրքերու պաշտպան հայանուն համայնավարներն էին, որ երկար տարիներ բուռն պայքար մղեցին Նոյնիսկ Ալբիւեան Եղեռնի տարեդարձերու առթիւ կատարուած հոգեհանգիստներուն կամ պարզ յիշատակութիւններուն դէմ :

Եւ ահա այսօր այդ մարդիկը, մոռնալով Թրքական գործակալի իրենց շատ տխուր անցեալը, կը յանդգնին իրենց մամուլի էջերէն մեզ կոչելու Թրքական գործակալներ : Բարեբախտաբար, եթէ իրենք մոռցած են իրենց դեռ այնքան թարմ անցեալը, հայ ժողովուրդը մոռցած չէ եւ չի կրնար երբեք մոռնալ, մանաւանդ որ անոնք այսօր այ տակաւին Մոսկուայի գործակալներն են եւ վաղը, չնորհիւ Մոսկուայի, կրկին կրնան հարկադրուիլ Թրքական գործակալի ալ պաշտօն կատարել :

«ՀԱՅՐԵՆԻՔ»

ԵՐՈՒՍԱՂԷՄԷՆ կը տեղեկացնեն թէ բրիտանական իշխանութիւնները երկուշաբթի օր Հայ - ֆայլ մէջ գրաւեցին բնակարան մը որ պինուորական բանակատեղի մը վերածուած էր : Մեծ քանակութեամբ ռազմամթերք գրաւեցին եւ ձերբակալեցին 23 Արաբներ : Պիրշէպայի մէջ երեք Արաբներ սպաննուեցան : Երեք Հրեաներ վիրաւորուեցան երբ Արաբները օդը հանեցին երկու տուներ :

Երիտասարդ Եդիպտացիներու կուսակցութեան ղեկավարը, յայտարարեց որ մօտ օրէն Պաղեստին պիտի երթայ քննութիւններ կատարելու համար թէ «ուր կարելի է հաստատին ճակատ մը՝ Թէլ Աւիվի վրայ յարձակելու համար :

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐ Անգարայի մէջ յանկարծամահ եղաւ զօրավար Քեազիմ Գարապէքիր :

ՕՐԸ ՕՐԻՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՃՈՒՏԵՐԸ

Տեսարանը՝ Ֆրանսական վարժարանի մը առաջին դասարանը :

Վարժուհին կը հրամայէ.

— Գծեցէք Միացեալ Ազգերու դրօշակները..

Կէս ժամ վերջ աշակերտները կը ներկայացնեն իրենց գծագրութեան տետրակները :

Վարժուհին կը քաշէ մանչուկի մը ականջէն :

— Այս ի՞նչ է, ես քեզի ինչ ըսի, դուն գծեր ես... պատասխան տուր, չուտ ...

Մանչուկը կը կարմրի, կը ճերմկի եւ կը պատասխանէ .

— Օրիորդ, ես հայ եմ... ասիկա մեր եռադոյնն է, մնացածները ինծի՞ ինչ ...

×

Նորէն դասարանի մը մէջ է որ տեղի կ'ունենայ պատմութիւնը :

— Դուն ի՞նչ ես, կաթոլի՞կ ես թէ բողոքական ...

— Օրիորդ, ես ո՛չ կաթոլիկ եմ, ոչ բողոքական ... Հայ եմ եւ Դաշնակցական ...

★

Տասնըհինգ տարեկան չկայ մեր երրորդ հայորդին : Բաներ մը իմացեր է «դիմացի ճակատ»ին բամբասանքներուն մասին: Իմացեր է մանաւանդ որ Դաշնակցութիւնը ամենազօր է, ամենակալ եւ ամենատէր :

Ու ահաւասիկ պատրաստեր է զաւեշտ մը — հեռաճայնի պատմութիւն :

— Ալօ, ալօ, դուք ո՞վ էք .

— Այստեղ Թրումընի գրասենեակն է... դո՞ւք :

— Հոս Դաշնակցութեան կոմիտէն է... Նախագահին ըսէք որ հեռաճայնի գլուխը անցնի :

— Կարելի չէ :

— Ի՞նչպէս թէ կարելի չէ, կանչեցէք եւ չուտ... Ալօ, դո՞ւք էք Պ. Թրումընը, կը հրամայեմ որ սա...

— Շատ լաւ, ինչպէ՞ս կարելի է մերժել ..

— Ալօ՛, Պ էթլին կ'ուզեմ

— Զբաղած է ...

— Զբաղած մզրաղած չեմ հասկնար, կանչեցէք ...

— ...

— Ալօ՛, Պ. էթլի, այստեղ Դաշնակցութիւնն է... կը պահանջեմ որ ...

— Անմիջապէս... դուք երբ բան մը ուզեցիք որ մենք մերժենք ...

×

Այսպէս են Դաշնակցութեան ճուտերը — խենթացած, տուխմ, հայրենասէր ու մանաւանդ սրամիտ :

Իրենց հայրերը բամբասողներուն ականջը խօսի :

ՃԱՆԿ

ԿԻՊՐՈՍԷՆ կը գրեն մեզի.— Դեկտեմբեր 24-ին մեծ շուքով տեղի ունեցաւ յունական եկեղեցիի նորընտիր արքեպիսկոպոսին դահակալութեան հանդէսը: Հրաւիրեալներու կարգին կար նաեւ Կիպրոսի Առաջնորդը Ղեւոնդ եպ. Չէպէկեան որ ջերմ բառերով շնորհաւորեց արքեպիսկոպոսը եւ երկարօրէն բացատրեց հին Յունաստանի եւ Հայաստանի քաղաքական ու կրօնական սերտերը յարաբերութիւնները: Նորընտիր դահակալը պատասխանեց սիրալիր շեշտով եւ դնահատեց երկու ժողովուրդներու եղբայրակցութիւնը : Թարգմանի պաշտօն կատարած է ծանօթ պատմաբան Պ. Նուպար Մատուսեան: Տեղական թերթերը նկարագրելով հանդէսը, լայն տեղ տուած են մեր եպիսկոպոսին խօսքերուն :

ՁԵՒՈՍԼՈՎԱՔԻԱ այս տարի պիտի տօնէ Փրակայի համալսարանի 600դ տարեդարձը : Զեխոսլովաքիոյ խեղճ եւ ուսումնասէրն արքան Կարոլոս Դ. 1348ին հիմնած է առաջին համալսարանը: Նախապէս երկու բաժին ունէր մէկը չեխական, միւսը գերմանական : Յետոյ իրարմէ բաժնուեցան: Զանազան համալսարաններ ներկայացուցիչներ պիտի ղրկեն տօնին մասնակցիլ: Զեխիոյ Հայերը հրաւիրուած են մասնակցելու դարադարձի հանդիսութեան :

Ցրաւիրի արժեզրկումէն ետք

Վարչապետ Շուման երկուշաբթի օր խորհրդարանին ներկայացուց նոր օրինագիծ մը որ կը տրամադրէ արտօնել մեռած ոսկիի ազատ վաճառումը Ֆրանսայի կամ դաղթավայրերուն մէջ :

Այդ օրինագծին վաւերացումին հետ սերտօրէն կապ ունի, բնականաբար, թղթադրամին արժեզրկումին մասին տրուած որոշումը որ արդէն մեծ իրարանցում յառաջ բերած է ելմտական, ինչպէս նաեւ քաղաքական շրջանակներուն մէջ :

Երկու տեսակ Ֆրանք ունենալու կառավարական որոշումէն դժգոհ են ընկերվարականները որոնց խորհրդարանական խմբակցութիւնը երկուշաբթի օր բացառիկ նիստ մը դումարելով քննադատեց ներկայ օրինագիծը որ «ըստ կերպարական բնոյթ չունի եւ ցաւալի թիւրիմացութիւն մը ստեղծած է Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ» : Այդ թիւրիմացութիւնը , դիտել կուտան ընկերվարականները, կրնայ տխուր հակադրեցութիւն մը ունենալ արեւմտեան խմբակցութիւն մը կազմելու մասին Անգլիոյ արտաքին նախարարին կողմէ եղած անցեալ չաբթուան առաջարկին վերայ :

Խորհրդարանական խմբակցութեան երկրորդ ժողովին պիտի մասնակցին դահլիճին ընկերվարական անդամները որոնք, ի նպաստ քուէ տուած են ելմտական նախարարին նոր օրինագծին: Ամէն պարագայի, ոսկւոյ, հաւանական չէ որ ընկերվարականները շատ առաջ տանին իրենց ընդդիմութիւնը, այլապէս, եթէ մերժուին քուէարկել, հետեւանքը պիտի ըլլայ դահլիճին տապալումը եւ քաղաքական ծանրակշիռ տագնապ մը :

Ելմտական շրջանակներուն մէջ դիտել կը տրուի որ նոր օրինագծին յաջողութիւնը կախում ունի այն ընդունելութենէն որուն պիտի արժանանայ ան մանր դրամատիրական խաւերուն մէջ : Կառավարութիւնը կը սպասէ որ ժողովուրդը հըրապարակ հանէ եւ վաճառէ իր «մէկ կողմ դրած» ոսկիները: Ընկերվարականները կ'առաջարկեն որ այդ տեսակ վաճառումէ մը գոյացած չահը տառնայ պետական դանձը: Այս առթիւ տարակոյս կը յայտնուի որ գիւղացին կամ մանր առեւտրականը բաւականաչափ վստահութիւն ունենայ եւ «ձեռքէ հանէ» իր ոսկիները քանի որ , համաձայն ներկայ օրէնքին, ազատ է ոսկիին կամ տոլարին վաճառումը, բայց ամէն մարդու իրաւունք չէ տրոնած եւ պահելու :

Իրականին մէջ ոչ թէ երկու տեսակ Ֆրանք կայ հրապարակին վրայ, այլ չորս տեսակ.— Ա.— Այն Ֆրանքը զոր կարելի է օգտագործել կարգ մը կենսական նիւթերու ներածումին համար: Բ.— Այն Ֆրանքը որուն արժէքը ենթակայ է օտար դիպուածներու արժէքին : Գ.— Այն Ֆրանքը որ բորբոքին ազատ է եւ յատուկ է ոչ առեւտրական ներածումներու համար : Դ. — Այն Ֆրանքը որ գործածելի է պետութեան կողմէ, ներածուած ապրանքներու վճարումին համար :

Ֆրանքին ներկայ անկումը ամէնէն աւելի իրականացում պատճառած է Անգլիոյ մէջ : Ելմտական նախարարը , Սըր Սթէֆըրտ Քրիփս , երկու չաբթի օր խորհրդարանին ներկայանալով, քսաւ թէ Անգլիա երբեք նպատակ չունի Սթերլինը արժեզրկելու , բայց «ստիպուած ենք կարգ մը նախազգուշական քայլեր առնելու»: Նախարարը եկարօրէն բացատրեց թէ ինչ խորհրդակցութիւններ ունեցած էր Ֆրանսացի իր պաշտօնակիցին հետ: Բացատրեցինք Ֆրանս. կառավարութեան թէ մենք հակառակ չէինք որ Ֆրանքը արժեզրկուէր , բայց թելադրեցինք միաժամանակ որ «ազատ չուկայի» դրութեան մասին որոշում չտրուէր: Երբ մեր առաջարկը չընդունուեցաւ, թելադրեցինք որ գոնէ ազատ չուկան հաստատուէր միայն ելմտ. գործողութեանց համար : Դժբախտաբար չկրցանք համոզել դիրենք: Ֆրանսական որոշումին հետեւանքը ցաւալի է մեզի համար, բայց եւ այնպէս մենք մեր կարելին պիտի ընենք որ նեկայ տարակարծութիւնը որեւէ ձեւով չխանգարուի մեր երկու երկիրներու փոխ յարաբերութեանց վրայ: Վստահ ենք որ Ֆրանսական կառավարութիւնը եւս միջոցներ ձեռք պիտի առնէ ոսկեզօծ Ֆրանքին արժեզրկումը պատճառ մը չդառնայ որ սթերլինն ալ արժեզրկուի օտար չուկաներու վրայ»: Պատասխանելով Բրեսթոնի հարցապնդումին, Սըր Սթէֆըրտ ըսաւ որ նահապատութիւնը գործնական քայլեր պիտի առնէ Սթերլինին նեկայ դիրը պահելու համար :

★ Ֆրանքին արժեզրկումը ընդհանրապէս չաւ ընդունելութիւն գտած է այն երկիրներուն մէջ որոնք Ֆրանսական արտադրութիւններ կը գնեն: Միայն Ամերիկայի մէջ է որ վախ կը յայտնուի թէ արժեզրկումին հետեւանքները տխուր հակադրեցութիւն մը ունենան Եւրոպայի օգնութեան ծրագրին գործադրութեան վրայ :

★ Երկուշաբթի օր «ազատ չուկայ»ի մէջ տոլարը կ'արժէր 332 Ֆրանք, սթերլինը 850 Ֆր. : եւ Ֆրանսական նախկիններ 3700 Ֆրանք: Ահաւասիկ սակարանի մը ցեալ գիները.—100 հոլ. Ֆրերին 8100 Ֆր., 100 պելճ. Ֆրանք՝ 490 Ֆր., հա-

(Վերջը շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

Ամեն աշխատավոր պետք է լինի գրագետ

Ֆրունզեի անվ. ավիացիոն դպրոց

Դպրոցն ունի ինքնաթիռներ, շարժիչներ, ռադիոկայաններ, ինչպես նաև ուսումնական այլ պարագաներ, որոնք անհրաժեշտ են ապագա օդաչուների պատրաստման համար։

Դպրոցում սովորում են ինչպես ռուսներ, այնպես էլ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ։ Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին։

Ընդունվում են տղաներ 17 տարեկանից։ Ընդունելության համար անհրաժեշտ է ունենալ 7-ամյա կրթություն։ Ընդունելության ժամանակ հարկավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը։

1. Ինքնակենսագրություն։
2. Ծննդյան վկայական։
3. Կոմսոմոլի անդամատոմսի պատճենը։
4. Ուսումնական վկայական։
5. Բժշկական տեղեկանք։
6. Ռազմական գրքույկ։
7. Ընտանեկան դրության մասին տեղեկանք։
8. Ութ լուսանկար։

Ընդունելության ժամանակ հարկավոր է ունենալ նաև 300.000 դրամ, որպեսզի հնարավոր լինի ծածկել ճանապարհածախսը։

Դպրոցն ունի հարմարավետ հանրակացարան։ Ուսանողները ապահովվում են անվճար հագուստով, սնունդով, գրենական պիտույքներով։ Ուսանողները ստանում են նաև ամսական թոշակ։

Դպրոցն ունի մարզադաշտ, ուր ուսանողները զբաղվում են ֆիզկուլտուրայով։ Ամռանը ուսանողները ուղարկվում են հանգստյան տներ։

Ուսանողները ամեն տարի մեկնում են արձակուրդի։

Ավարտելուց հետո ուսանողները ստանում են ավիացիոն տեխնիկի որակավորում։

Դպրոցն ունի ինքնագործունեության կազմակերպություններ։ Ուսանողները ունեն իրենց ակումբը, որտեղ կազմակերպվում են զանազան խմբակներ։

Դպրոցն ունի նաև ֆոտոխմբակ։ Ուսանողները ունեն իրենց պատի թերթը, որտեղ արտացոլվում են նրանց կյանքի և ուսման մասին հարցերը։

Դպրոցն ունի նաև ռադիոխմբակ։ Ուսանողները ունեն իրենց ռադիոհաղորդումները։

Դպրոցն ունի նաև մոդելավորման խմբակ։ Ուսանողները ունեն իրենց մոդելները։

Դպրոցն ունի նաև ինքնաշարժային խմբակ։ Ուսանողները ունեն իրենց ինքնաշարժերը։

Դպրոցն ունի նաև ինքնաթիռային խմբակ։ Ուսանողները ունեն իրենց ինքնաթիռները։

Դպրոցն ունի նաև շարժիչային խմբակ։ Ուսանողները ունեն իրենց շարժիչները։

Դպրոցն ունի նաև ռադիոտեխնիկական խմբակ։ Ուսանողները ունեն իրենց ռադիոկայանները։

Դպրոցն ունի նաև ինքնաթիռաշինական խմբակ։ Ուսանողները ունեն իրենց ինքնաթիռները։

Դպրոցն ունի նաև շարժիչաշինական

տասնեակ ուրիշ մտաւորականները, որ մի ժամանակ երդուեալ հակառակորդներն էին Հ. Յ. Դաշնակցութեան: Ո՞ւր է Ս. Սընտրեանը, որ Ամերիկայէն անցաւ Հայաստան իր ոյժերը տրամադրելու հայրենիքի վերաշինութեան ու հայրենիքի մշակոյթին, եւ ո՞ւր Սիմոն Յակոբեանը, որ Գերմանիայէն անցաւ Հայաստան իբրեւ խմբագիր ու գրագէտ: Ձեր գոված ու փառաբանած բոլշեւիկեան վարչաձեւին ծանրութեան տակ էր, որ, անգամ մըանք, կորան մութ եւ խորհրդաւոր պայմաններու մէջ: Եւ ի՞րաւ որ «այսպիսի վարչաձեւ մը մեր ժամանակաշրջանի ճանչցած ամէնէն հրէշային երեւոյթն է»:

Քանի քանի անգամ տարադրութեան մէջ հարցումներ ուղղեցինք խորհրդային երկիրներու վերիչներուն մեր կորած ու անհետացած ընկերներուն մասին, սակայն միշտ անպատասխանի մնացինք, քար կախիծով է որ այսօր էլ պիտի հարցնենք ձեզ խորհրդային բժիժիմի երդուեալ պաշտպաններուդ, թէ ինչո՞ւ զնդակահարուեցին ու ի՞նչպէս կորան բոլշեւիկեան աքսորավայրին մէջ Դաշնակցականներ՝ Պօղոս Զուրաբ, Յորէն Համասիւռ եւ Սմբատ Խաչատրեան: Ի՞նչպէս նահատակուեցին եւ ի՞նչ պայմաններու մէջ մահացան հարիւրաւոր Դաշնակցական մտաւորականներ որոնց մէջն էլ՝ Ս. Մինասեան, Նիկոլ Սարգսեան, Վահան Յորէնի, Սահակ Թորոսեան, Արշակ Շերբինեան, Ներսէս Զաղաթեան, Ն. Յովսէփեան, Դ. Խուրշուտեան, Միքայէլ Արզումանեան, Պարոյր Ղարիպեան ընկերներէն Տ. Մուրատխանեան, Անահիտ Ղազարեան եւ այն հարիւրաւորները, որոնք բախտը ու պատիւը ունէին լինելու Հ. Դաշնակցութեան ընտանիքի մէջ:

Հարկ կա՞յ ըսելու թէ տպիտութեան եւ ստրկութեան դարերուն մէջ անգամ սովետական ահաւոր բժիժիմը ու վարչաձեւը անընդունելի եւ անտանելի պիտի ըլլար: Վարչաձեւ մը, որուն երկաթեայ ծանրութեան տակ ու ահ ու սարսափին մէջ, կ'ապրի մօտ երկու հարիւր միլիոն ժողովուրդ, որուն մէջ է մեր մինուճար փոքրիկ հայրենիքը: Զըսեղ թէ՞ Չիւկիւեանին եւ Թամիրեանի օրերը երանելի օրեր էին: Աչխարհի ներկայ քաղաքական ընդհանուր կացութիւնը եկաւ ցոյց տալու, որ Արեւմտեան երկիրներու ժողովրդապետութեան եւ ռուսական բոլշեւիկեան բռնապետութեան համագործակցութիւնը յանուն աշխարհի խաղաղութեան, միամտամոլ անհնարին է:

Արեւմտեան ժողովրդապետական բոլոր պետութիւններու կատարած խաղաղ փորձերը եկան ապացուցանելու աչխարհին, որ ռուսական բոլշեւիզմի ահաւոր վտանգը կարելի է միայն եւ միայն չեզոքացնել ոյժի քաղաքականութեամբ:

Խորհրդային Ռուսիոյ բոլոր մեծ ու փոքր ներկայացուցիչները, մէկը միւսով եւ մեր հայանուն քարոզիչները թէեւ միշտ գառնուկի մորթին մէջ, սակայն անոնք ամէն տեղ եւ ամէն գործի մէջ համերաշխութեան եւ անդորրութեան երդուեալ թշնամի հանդիսացան:

Այդպէս են հայ բոլշեւիկները գառնուկի մորթին մէջ հայ գաղութներու խաղաղութիւնը թունաւորելէն ներդաղթի անունին տակ, շահագործելին մեր ժողովուրդի հայրենասիրական անկեղծ զգացումները եւ պատակեցին բոլշեւիկեան ջաձցներ գաւանուին

«ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐ»Ը ՊՈՄՈՆԻ ՄԷՋ

Ֆր. կապոյտ Խաչի կեդր. վարչութիւնը իր բոլոր մասնաճիւղերով տարիներէ ի վեր է որ որդեգրած է, տօնել «Մանուկներու Օրը»:

Պոմոնի մասնաճիւղն ալ իր կարգին տօնեց զայն կիրակի 18 Յունուարին նորակառոյց դպրոց սրահին մէջ, ներկայութեամբ կոկիկ հասարակութեան մը: Որոշեալ ժամուն երբ վարագոյրը կը բացուի, բեմին մէկ ակիւնը կը նշմարուի կազմնդիր ծառը, զարդարուած փայլուն շղարշներով ու գոյնզգոյն փոքրիկ լապտերներով: Կապոյտ Խաչի դպրոցին պատկանող խումբ մը մանուկներ բեմին վրայ շարուած կը սպասեն ուսուցչուհի Տիկին Քիլբիքեճեանի նշանին, երբոնց չնորհը ցոյց տալու, դլուխնին բարձր, դէմքերնին զուարթ ու հպարտ կեցուածքով: Տիկին Քիլբիքեճեան հանդէսը բացուած կը յայտարարէ, աւելցնելով, «Ֆր. կապոյտ Խաչը այն կանացի կուռ կազմակերպութիւնն է, որ իր ուսերուն վրայ առած է հայ մանուկին դաստիարակութեան ծանր այլ սակայն քաղցր պարտականութիւնը, ան կը բաղձայ վառ պահել մանկան սրտին մէջ հայ ոգին, կը գուրգուրայ անոնց վրայ, որովհետեւ անոնք են մեր ազգի ապագայ սիւներն ու լուսատու փարոսները: Եթէ մեր առաջադրութեան մէջ նուազագոյն չափով իսկ յաջողինք փրկելով 10 հատ մանուկ ուծացման կլափէն, այդ մեզի եւ մեր ազգին համար չահ մըն է»: Ապա յայտագիրը գործադրութեան կը դրուի, Տիկին Ա. Տէօքմէճեանի ընկերակցութեամբ, փոքրիկները քանիցս երգեցին զանազան խմբերգներ: Շատ դեղեցիկ եւ հըբաշուրիչ էր եռագոյն ժապաւէններով խումբ մը մանուկներու ձօղի հիւսկը, երդախառն: Փոքրիկներու Ասատուրեանի համարձակ չարժուձեւերով արտասանութիւնը « Փանթալոնիս կոճակը » այնքան յաջող էր որ խլեց բուռն ծափեր ու բացագանչութիւններ: Հանդէսի տեւողութեան մուազով կ'ընկերանար Պ. Սիմոն Շիչմանեան: Թաղեցի կօչկակար եւ նպարավաճառ հայրենակիցներու կողմէ տրուած նուէրները անխտիր բաժնուեցան ներկայ բոլոր փոքրիկներուն: Այս առթիւ Պոմոնի Ֆր. Կ. Խաչի վարչութիւնը հրապարակաւ իր չնորհակալութիւնը կը յայտնէ այն բոլոր կօչկակար եւ նպարավաճառ հայրենակիցներուն ինչպէս նաեւ Պ. Պ. Մ. Շիչմանեանի եւ Ղազարեանի որոնք իրենց բարոյական եւ նիւթական օժանդակութիւնը բերին «Մանուկներու Օր»ուան տօնակատարութեան: — Յ. Նիկողոսեան

ԿԸ ՅՈՒՆՐՈՒԻ Հ. Յ. Դ., կապոյտ Խաչի եւ զանազան կազմակերպութեանց գաւառի կոմիտէներէն եւ մարմիններէն որ ժողովներու եւ հանդէսներու ազդերը խմբագրատուն հասցնեն թուականէն առնուազն երեք օր առաջ:

եաէն կեղծ քարոզչութեամբ եւ բոլշեւիկեան ծանօթ մեթոտներով հայ գաղթաշխարհի ներքին խաղաղ կեանքը:

Գոնէ այսուհետեւ մնանք արթուն եւ զգաստ:

Ն. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԱՆՈՒՇԸ

Կիրակի օր, Յովհաննէս Թումանեանի մահուան 25ամեայ տարելիցին առթիւ, Փարիզի մէջ բեմադրուեցաւ բանաստեղծին «Անուշ»ը՝ Պ. Ա. Պարթեւեանի ղեկավարութեամբ:

Անցեալ շաբթու աչխատակից մը այս սիւնակներուն մէջ խօսած էր «Անուշ»ի երաժչտութեան ինչպէս նաեւ ներկայ բեմադրութեան համար թափուած աչխատանքներուն մասին:

Աբտասահմանի մէջ հայկական օփերաներ չունինք դժբախտաբար, եւ ամէն անգամ երբ ուզենք մեր ժողովուրդին հրամցնել մօտչ մը մեր տոհմիկ բանահիւսութենէն, երգով ու պարով, կ'իյնանք «Անուշ»ին վրայ:

Իր գլխաւոր եղանակները ծանօթ են բոլորին իբրեւ առանձին երգեր եւ որովհետեւ մեր ձեռքը չունինք երաժչտեան ամբողջութիւնը, պոէման արժեցնելու համար, մեր երաժիչտները, հարկադրուած, յաւելումներ կը կատարեն իւրաքանչիւրը իր հասկացողութեամբ:

Ատոր համար է որ ամէն անգամ կը լսենք իրարմէ քիչ-շատ տարբեր Անուշներ: Այս անգամ եւս նուագախումբի բաժինը ճոխացած էր կարգ մը յաւելումներով:

Որպէսզի կարելի ըլլայ ըսել թէ Տիգրանեանի երաժչտութիւնը ինչ չահած կամ կորսնցուցած է այս փոփոխականներով, պէտք է լսած ըլլայինք զայն Հայաստանի մէջ ուր, անչուչտ, աւելի հարազատ դոյնով կը ներկայացուի ան:

Օր. Վարժապետեան որ ունի դեղեցիկ տեմպրուած ձայն մը, կրցաւ վարժ խաղարկութեամբ մը փրկել խաղին ամբողջութիւնը, Սարոյի հետ միասին (Պ. Մեհտէրեան) որուն հաճելի ձայնը կը վճռուուի միչտ:

Պիտի ուզենք որ Պ. Վ. Ալթունեան չչափազանցէր իր դիմախաղերը եւ չարժուձեւերը, եւ մանաւանդ «Անուշ»ի պատուախնդիր, խիստ ու անննդրող եղբայրը եւ մեղի խնայէր ղլուխը — տաբգած ու վրիժառու ոճրագործի մը տպաւորութիւնը: Այս դիտողութիւնը իրեն, քանի որ ինք սիրող մը չէ, այլ դերասան մը:

Դիտողութիւն մըն ալ նուագախումբին, ուր լարաւոր գործիքներու պակասը մեծապէս զգալի էր:

Յովհաննէսեան քոյրերու պարը սկսած է մեր հանդէսներուն դեղարուեստական արժէքը զգալի կերպով բարձրացնել: Այնքան նուրբ էին անոնք, մանաւանդ երգչի տեսարանին մէջ եւ յետոյ Րէժիսը առանձին, եւ վայելը էր բոլորին համար, կրկնակի տեսնել դիրենք: Աչքդար էին իրենց խլած բուռն ծափերը:

Ամբողջութեան մասին կարելի է ըսել որ յաջող ներկայացում մըն էր կիրակի օրուան «Անուչը», առանց չատ մանրամասնութեանց մէջ մտնելու: Սրահը խճողուած էր ըսելու աստիճան լեցուն էր իր մանր մունր անկարգութիւններով:

Այսպէսով էր որ Պ. Զոպանեան, ներկայացումէն առաջ իր խօսած ճառով ամբսելի մնաց դրեթէ: Յովհ. Թումանեան որպէս «Հայ Ազգին բանաստեղծը» այնքան մեծ տեղ ունի մեր սիրտերուն մէջ որ յարգանքի պակասի մը պէտք չէ վերագրել այս թերացումը:

Պ. Գամբէթեան աւելի բախտաւոր եղաւ ըսելի դարձնելով իր արտասանութիւնը Թումանեանէն «Հայրենիքիս»: , Թատերասէր

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ

ԷՍԱ ԵՒ ՀԱՄԱՍ

(ԽՈՐՀՐԴԱՎԷՊ)

Բ. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԴԱՐՁ

Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

Այո, Ցիսուս լոյս է եւ արեւ, միտք եւ հոգի, բայց պէտք է դետեղել զայն նիւթին մէջ, աստուածային չարժում տալով անոր: Ու դեռ Քրիստոնէութեան եռանկիւն տաճարը կը խոնարհի Աստուծոյ մը առջեւ, որ մարդացաւ, մարդու մը առջեւ, որ Աստուածացաւ: Շփոթութիւն, վէճ, հատուածականութիւն — Արիոսեան եւ հակաարիոսեան ...:

Ոչ, ոչ, ճչմարիտ կրօնապետութեան իրաւունքն է պաչտպանել ճչմարտութիւնը հրաչքին դէմ, անհեթեթը մերժել, աւելորդապաչտութիւնը վանել եւ հաւատքը մաքրագործել:

Ոչ ոքին ներելի չէ ըլլալ ցամքած սաղմ, եթաչտ քրտինքներու մէջ խաչած հունտ, այլ ըլլալ՝ աւոտք սերմ եւ սերմանող յղութիւն ... :

. . . . . .

Երբ խորհրդախոյզ Եսային, այդ օրը, ծալլեց յոդնած թեւերը իր ներաչխարհին, աչքերը բացուեցան նորահրաչ տեսիլքի մը առջեւ, իր խրճիթին խորէն:

Հեռաւոր, անկոխ անապատի մը վերեւ, երկինքը բացուած էր կախարդ զարադոյրի մը նման:

Մահիկը ամխնայ կը հնձէր բոլոր աստղերը կապոյտին, թաւիչլով զանոնք աւազուտքին դաշտը:

Անոր սրածայր, հատու մանդաղին քերանէն կախուած էր փրցուած լոյսի չերտ մը արեւէն:

Հարաւը, մխուած էր Արեւելքի կուչտին, նիզակաղէն:

Հիւսիսն ու հարաւը՝ դէմ դիմաց խոժոռած դէմ:

Անապատին բարբարոս ոդիները մոլեգնաբար կը հաւաքէին մէկիկ մէկիկ աստղերը հնձանին, փակցնելով զանոնք, իրենց կուրծքին, ճակտին եւ ուսերուն, տենդահար:

Անոնց արիւնոուչտ եաթաղաններուն տակ, երեք հարիւրէ աւելի չաստուածներ կը մահանային, օրհասական ոռնումներով:

Երկնաբաց կապոյտը, մատները չրթներուն, կը լռէր անմրմունջ:

Ան նման էր մեծ խմբանկարի մը անչարժ արձանացումին:

Լոյսերու սառած կատարին վրայ, բիւրաւոր, չուչանաթոյր թեւեր պարզուած էին անթիւ:

Կեդրոնին խորը կը բարձրանար կամարակապ բեմ մը լուսախարիսխ, որուն վրայ չարուած էին բոլոր մարգարէները նախկին, իրենց խորհրդանիչները բռնած:

Մովսէս: Դաւիթ: Սողոմոն: Նազովրեցի:

Աչքին կատարածը կը բացուէր ու կը գոցուէր անհանդարտ:

Ցայտնութեան դրքին խորհրդաւոր թուխմբը — 24×7 եւ 12×14, անկիւն մը կծկըտած՝ կը սրսփար:

Եչհովան կար ու չկար ...:

Այդ պահուն, անապատին ամկիւնէն, մէկը, անուրթին տակ մեծ գիրք մը սեղմած, արիւնլուայ, կը մտնէր երկինք:

×

Գիչերը կը չարժի իր սեւ մահիճին մէջ քնաթաթախ: Կ'երկարէ ձեռքերը վերմակէն դուրս, կը վերցնէ քրանաթաթախ գլուխը բարձին վրայէն, թուլցած չիղերը պրկելով: Կը պտտցնէ ուռած աչքերը չորս դին ու իր երկար սրունքներուն վրայ կանգնած, կ'ըսկսի քալել թափառախոյզ: Բայց պատ չկայ, որ բռնելով քալէ, ծառ չկայ, որուն պլրուի, լոյս չկայ, որ առկնորդէ զինք: Այն աստեն, զայրոյթէն ակռաները դեղնած, կը փուչ հոկայ, սեւ սաւան մը ամայնքի կրծքին ու կը սպասէ ...:

Անապատի զազանախումբը, դունչը երկարած, կը հոտոտէ սեւաշղարչ փոցքը, լիզելով անոր սեւ ծոպերը ու մոլեգին կատաղութեամբ, կը փորձէ ըզգաքել զայն, որմէ փրցուած մաս մը աստմներուն տակ, , երկինքին դէմ կ'ոռնայ ահեղակոչ:

Մութ գիչերը ամպերուն հետ գործի է լըծուած: Կը դարձնէ հրեղէն սուրը, կայծակնաթափ աղեղներ ու պղնձագոռ վահաններ: Երբեմըն կը լսուի զինաբանին որոտան ու ազմուկը դարբնոցին խորէն:

(14)

ըիւը դուից· Ֆրանք՝ 5000 Ֆրանք, հարիւր դահեկան քուրան՝ 4500 Ֆրանք, հարիւր իտալ· լիրէ՝ 62 Ֆրանք, մէկ եգիպտ· ոսկի 890 Ֆր· եւն:

★ **Փարիզի սակագրանը մօտ օրէն պիտի բանայ մասնաւոր դրասենեակ մը օտար Թղթադրամներու դնումին եւ վաճառումին համար :**

★ **Անգլիոյ պետական արժեթուղթերը ղրկելի անկում մը կրեցին Լոնտոնի սակարանին մէջ: Միւս կողմէ, յաւելում կրեցին ոսկիի հանքերու արժեթուղթերը :**

ՀԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՎԱՂԸ ՀԻՆԳՇԱԲԹի Լիւքէնպուրկի մէջ պիտի գումարուի բացառիկ խորհրդաժողով մը՝ Պելճիքայի, Հոլանտայի եւ Լիւքսէնպուրկի միջեւ քննելու համար Անգլիոյ արտաքին նախարարին կողմէ առաջարկուած արեւմտեան խմբակցութեան ծրագիրը :

Խորհրդաժողովին պիտի մասնակցին երեք պետութեանց վարչապետներն ու արտաքին նախարարները իւնչպէս նաեւ բազմաթիւ մասնագէտներ: Օրակարգի վրայ կան նաեւ շարք մը տնտեսական եւ եմտական խնդիրներ :

ՊԵԼՃԻՒԱՑի վարչապետը, Պ· Փոլ Սփաք, երկուշաբթի օր իր կուսակցութեան վարչական ժողովին ներկայանալով, յայտարարեց թէ սխալ պիտի ըլլար գահազրկել Լէոփոլտ Գ· թագաւորը եւ իրեն յաջորդ նշանակել օրինաւոր գահաժառանգը որ 18 տարեկան պիտի ըլլայ սեպտեմբերին եւ համաձայն սահմանադրութեան, ծերակուտական եւ ԵԹԷ վստահութիւն չունիք իմ վրաս, հրաժարեցուցէք զիս, ըսաւ Սփաք :

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ կառավարութիւնը յայտնած է արեւմտեան Դաշնակիցներուն թէ պատրաստ է 400 միլիոն տոլարի դեղձ մը կատարել Աւստրիոյ հատուցումներէն դիւրացնելու համար դաշնադրին պատրաստութեան աշխատանքները: Մոս կուա նախապէս կը պահանջէր 750էն 800 միլիոն տոլար, իսկ հիմա կը պահանջէ 200 միլիոն կանխիկ վճարում իւնչպէս նաեւ Յիւսէրտորֆի քարիւղի հանքերուն չահագործման եւ արտադրութեան երկու երրորդ բաժինը: Բայց խորհրդային կառավարութիւնը չէ հրաժարած՝ դաշնադրին կնքումէն առք Աւստրիոյ մէջ մնալիք ռուսական հարստութեանց արտահողային առանձնաշնորհներու պահանջէն: Անգլիոյ եւ Ամերիկայի քաղաքական շրջանակներուն մէջ այս ըսուր վերապահ ընդունելութիւն գտած է որովհետեւ տակաւին կը սիրէ այն համոզումը թէ Մոսկուա դիւանագիտական խաղ մըն է որ կը կատարէ՝ համակրութիւն չահելու համար արտաքսհմանի մէջ :

ՖՐԱՆՍԱԿԱՆ կառավարութիւնը միլիոնաներ ձեռք կ'առնէ մօտ առենին բանալու համար Փըրանքեւսպանիական սահմանադրութիւնը որ վրակուած կը մնայ 1946 Փետրուարէն ի վեր: Բանակցութիւններ կը կատարուին Փարիզի եւ Մատրիտի միջեւ :

ՄԵՐ ԵՐԿՈՒԱՆ ԹԻՒՈՎ հաղորդած էինք թէ, համաձայն Մոսկուայէն ստացած տեղեկութեանց, չնորհազուրկ եղած էր Ուկրայնացի տընտեսագէտ մը Սամոյլովիչ Վարկա : Անցեալ Սեպտեմբերին «Պոլշեւիկ» թերթը բուռն կերպով կը յարձակէր իր վրայ քննադատելով իր «Փոփոխութիւններ Դրամատիրական երկիրներու տնտեսութեան մէջ անունով հատորը» : Հիմա «Փրաւտա»ն ալ խոտօրէն կը քննադատէ Վարկայի տեսութիւնները որոնք անհերդաչնակ են Մարքսի եւ Լենինի վարդապետութեանց հետ: Տնտեսագէտը կը բացատրէ իր գրքին մէջ թէ դրամատիրական երկիրներու տնտեսական տադնապը տասը տարիէն առաջ չի կրնար սկսիլ: Այս տեսակէտը, անշուշտ, անհամապատասխան է Ռուսիոյ պաշտօնական կարծիքին որ ահաւոր տադնապ մը կը սպասէ չատ չուտով: Վարկա յայտնած է նաեւ այն միտքըթէ պետութիւնը կարեւոր դեր մը չի կրնար կատարել դրամատիրական տնտեսութեան մէջ: Այս կարծիքն ալ համաձայն չէ այն վարկածին թէ դրամատէրերն են որ կը վարեն պետութիւնը Ամերիկայի կամ Անգլիոյ մէջ :

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ կառավարութիւնը պահանջած է Դաշնակիցներէն որ իրեն յանձնուին Ֆօն Փափէնն ու Ֆօն Շիրախը որոնք պատասխանատու դեր կատարած էին 1938ին՝ դիւրացնելով Աւստրիոյ դրաւումը Հիթլէրի բանակներէն: ԵԹԷ ընթացք տրուի այս պահանջին, երկուքն ալ պիտի դատուին եւ հաւանաբար մահուան պիտի դատապարտուին :

ՄՈՍԿՈՒԱՑի «Փրաւտա»ն, խօսելով վերջերս երեւան հանուած «M» դաղտնի փաստաթուղթին մասին, կը դրէ թէ պատմութիւնը ամբողջութեամբ չինծու է եւ դրուած է խեղճուկրակ հեղինակի մը կողմէ ի պէտս բրիտանական դաղտնի սպասարկութեան »:

ՊԱՐԵՆԱՒՈՐՈՒՄ.— Կարգ՝ 100 կրամ E եւ A դասակարգերուն եւ 200 կրամ J դասակարգին համար՝ GH կտրօնով :

Ձեռակոյր պատահարներ

Ֆր· Կ· Ասչի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը, տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24, Hôtel Continentalի չքեղ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde :

Նուագախումբ ՖԷՐՆԱՆ ՊՈՒՅՕՆ : Գեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ :

Տարեկան շքեղ ձեռակոյր պատահանդէս

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան կարմիր Ասչի եւ Ողբալանամի տարեկան ձեռակոյր պատահանդէսը տեղի պիտի ունենայ 8 Փետր· կիրակի օր ժամը 15էն մինչեւ կէս գիշեր, Hôtel Lutétiaի չքեղ սրահներուն մէջ, 43 Bld. Raspail, Paris:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Պուլվար Օտտոյի Ֆ· Հ· Կ· Ասչը, Մանուկներու Օրը պիտի տօնէ Փետրուար 1ին, կիրակի կէս օրէ վերջ ժամը 3ին, տեղւոյն եկեղեցիին մէջ, կը հրաւիրուին թաղին բոլոր մանուկները իրենց ծնողքներով միասին իւնչպէս նաեւ բարեկամ բոլոր կազմակերպութիւնները որ խրախուսեն մեր մանուկները: Մրզեղէնի ծրարներ պիտի բաժնուին մինչեւ տասը տարեկան մանուկներուն :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՔԵՂ ՅԵՐԵԿՈՅԹ

Կազմակերպուած Ֆրանսահայ Կապոյտ Ասչի Սէվրանի մասնաճիւղին կողմէ, կիրակի 29Փետր· 1948, ժամը 3էն 12, Casino des Etoiles, Մատիս սրահին մէջ, 87 Ave. de Livry, à Sevran :

Գեղարուեստական հաճելի բաժին : Խմբերը, ներկայացում եւ անակնկալներ, եւրոպական պարեր : Ճոխ պիւֆէ : Մուտք՝ 75 Ֆր·

Հազ· միջոց.— կառախումբ Gare du Nordէն ժամը 13.45էն եւ 14.15էն : Eglise de Pantinէն 147 թիւ օթօպիւս, իջնել Terminus :

«ՄՇԱԿՈՅԹի ՕՐ»Ը ՇԱՒԻԼԻ ՄԷՋ

Տեղւոյն «Րաֆֆի» երիտ· Մխուքեան կողմէ 15 Փետրուար, կիչակի օր

ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ.— Պուլկարիոյ Պուրկազ քաղաքէն բնիկ Ռոտոսթոցի Թոմաս Գր· Թիւթիւնճեան կը փնտռէ իր հօրեղբայրը՝ Լեւոն Սարգիս Թիւթիւնճեանը, եւ կամ Ջէօճեան, կնոջը աշխումը Լուսինիա, պատկերը՝ Անննիա. Սարգիս եւ Ներսէս Թիւթիւնճեաններ եւ կամ Ջէօճեաններ, որոնք 1922ին Կ· Պոլսէն անցած են Ֆրանսա եւ հաստատուած Փարիզ: Այժմ անոնց մասին ստոյգ լուր ունեցողներէն թախանձագին կը խնդրուի հաղորդել հետեւեալ հասցէին .— Թոմաս Գ· Թիւթիւնճեան: Ուլիցա «Ադանաս Սլավով» թիւ 14, Պուրկազ - Պուլկարիա : Կը խնդրուի արտահամանի բոլոր հայ թերթերէն արտատպելդային:

17ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ

Կազմակերպուած Հայ Աբիներու Միութեան Փարիզի շրջանի երէցներու, սիատուներու եւ պայլիկներու կողմէ: Մասնակցութեամբ Փարիզի Հայ Աբեղոյներուն : Տեղի կ'ունենայ կիրակի 7 Մարտ 1948, կէսօրէ վերջ ժամը 2.30ին Salle de la Chimie, 28bis, rue St. Domonique, Paris (7), (métro Invalide կամ Solférino):

Սկաուտական ճոխ յայտադիր, ներկայացումներ, հայկական պարեր եւ երգեր Աբեղոյներուն կողմէ:

Մուտք 100 — 300 Ֆրանք :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ Սեբաստիոյ կէմէրկի շրջանի երէցներէն Պուրհան դիւղացի կարապետ Ծառուկեանը որ այս պատերազմէն առաջ կը գտնուէր Փարիզի շրջակաները: Տեղեկացնել իր հօրեղբօրորդուն Արշակ Ծառուկեանի, Dourgouti Gama. 53, Athenes — Grece:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ.— Իզմիրցի Մարի Քէպապճեան կը փնտռէ իր երկու եղբայրները Հայկ Քէպապճեան ոսկերիչ եւ Կիրակոս Քէպապճեան դերձակ, 1923ին կը գտնուէին Փարիզ: Ճանչցողներէն կը խնդրուի իմացնել Աթէնք «Ազատ Օր»ի , Վուլիս 20, Աթէնք :

ԾԱՒՈՒ Է կօշկակարի (Bottier) խանութ մը լիսանով, եւ քանակարանով :

Մանրամասնութեանց համար դիմել Պ· Chukurianի, 56 rue Genève — Arles sur Rhône :

ՅՈՒՇԱՏԵՏԻՐ

ՏԱՐՈՆ ՏՈՒՐՈՒԲԵԲԱՆԻ Հայր· Միութեան ընդհ· ժողովը տեղի կ'ունենայ այս կիրակի, ժամը 2.30ին, rue du Tage, No. 30, métro Maison Blanche: Կը խնդրուի բոլոր հայրենակիցներէն ներկայ գտնուիլ: Խիստ կարեւոր օրակարգ :

ՊԱՆԵԼՕ ՔԱՇԱՆԻ Հ· Ց· Դաշնակցութեան «Արծիւ» ենթակոմիտէի ընդհ· ժողովը, այս շաբաթ երեկոյ «Հրայր» սրահին մէջ, բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է: Օրակարգ՝ կոմիտէի ընտրութիւն եւ ուրիշ հարցեր :

ՎԻԵՆ.— Հ· Ց· Դ· Նոր Սերունդի ընդհ· անդամական ժողովը այս ուրբաթ իրիկուն ժամը 9ին, Ակումբին մէջ: Ներկայ ըլլալ անդամատետրով: Կարեւոր օրակարգ: Ներկայութիւնս պարտաւորիչ :

ԼԻՈՆ.— Հ· Ց· Դ· Նոր Սերունդի դասախոսութիւնը Զորեքշաբթի 4 Փետրուար, ժամը 8.30ին , դպրոցի սրահը 78bis rue Rabelais: Նիւթ՝ «Հայաստանի համայնավարացումը» : Դասախօս ընկեր Կ· ՄԱՆՈՒԿԵԱՆ: Սիրով կը հրաւիրուին եղբ ընկերները, կապոյտ Ասչուհիները եւ բոլոր Հայերը անխտիր :

ՏԷՍԻՆԷՆ Պ· Մանուկ Գրիգորեան ընկեր Կ· Պոտուրեանի ամուսնութեան առթիւ հազար Ֆր· կը նուիրէ Հ· Ց· Դ· Վեճերաններու Ֆոնտին եւ 500 Ֆրանք Կապոյտ Ասչի Տէսինի մասնաճիւղին:

ՏԱՐԵԿԱՆ ՇՔԵՂ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Լա Սիոթայի Հ· Ց· Դ· Նոր Սերունդի «Հրայր» խումբի կողմէ:

Այս Շաբաթ իրիկուն, 31 Յունուար 1948, մինչեւ առաւու: Au Flot Bleu չքեղ սրահին մէջ :

Նուագախումբ ՍԷՆ Լուի Ն· Ա· Ժազով:

Մուտքը 40 եւ 60 Ֆրանք :

ՇԱԻԻԼԷՆ Օնիկ եւ Մովսէս Տէմիրճեան եղբայրները, ընտանեկան պարագաներով չնորհակալութիւն կը յայտնեն բոլոր այն բարեկամներուն, ազգականներուն, բարեկամներուն եւ ընկերներուն, որոնք անձամբ, նամակով, ծաղկեպսակով եւ բարենպատակ նուիրատուութիւններով, ցաւակցութիւն յայտնեցին, իրենց մայրիկին, ԱՒԳԻ ՏԻԿԻՆ ԿԻՒԼԻՒՆԻԱ ՏԷՄԻՐՃԵԱՆի մահուան առթիւ :

22 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ , ԿԻՐԱԿԻ ՕՐ ԺԱՄԸ 3ԷՆ ԿԷՍ ԳԻՇԵՐ, Հ· Ց· ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՌՈՍՏՈՄ ԽՈՒՄԲԻ ՀԱՆԴԷՍ ԽՆՋՈՑԸ ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ՆԱԽԱՊ ՈՒՆԵՑԱԾ ԹՈՒԱԿԱՆԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Փարիզի Հայոց եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչութիւնը ընդհ· ժողովի կը հրաւիրէ ընկերակցութեան բոլոր անդամները 1 Փետրուար 1948, կիրակի ժամը 2.30ին եկեղեցւոյ խորհրդարանին մէջ, օրակարգ ունենալով եկեղեցւոյ օգնական լուսարար Պ· Յակոբ Ձօրքճեանի քահանայական թեկնածուութեան հարցը :

18 Յունուար 1948ի ընդհ· ժողովը մեծամասնութիւն չունեցաւ, կանոնադրի 16րդ յօդուածին համաձայն, այս անդամ ներկաներու թիւը պիտի նկատուի օրինաւոր :

ԿՕՇԻԿԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ ՄԸ

Աբհետան Ծանօթ, մեծ պատկառանակի վաճառորդներուն, մեծ տուներու, բազմաթիւ մասնաճիւղերու Prix-Uniquesներու, յաճախակի այցելու, կօշիկի վրայ ու մեծ առեւտրականներու, շրջուն վաճառորդներու հետ մօտէն չփում ունեցող մը

ԿԱՐՕՂ ԿՕՇԻԿԻ ԴԻՐՕՏԱՏԷՐԵՐՈՒ

եւ (կանանց , երախաներու եւ այրերու) կօշիկի վերարկեալ ամէն կարգի նիւթերու համար առաձնել ներկայացուցչութիւնը Փարիզ եւ շրջականերուն համար :

Դիմել՝ **TALOPP HENRI**

16 Rue Montgolfier, Paris (3), *Հեռ.* Turbigo 74-54

Հայերու ժամադրավայրը

Café des Sports, 4 rue de la Défence *Հեռ.* Mic. 37-03

Հայրենակից, կեանքդ թարմացնելու համար կ'ուզե՞ս լաւ օդի չամել, դիմէ վերի հասցէին, ուր ընտիր ազանդերով համեմուած լաւագոյն օղին պիտի հրամցուի քեզի :

ՄԻԱՑՆ ԱՍ ՉԷ

Ազատ սրահը ձեր տրամադրութեան տակ է , պայմանաւ որ 8 օր առաջ անձամբ, հեռախօսով լուր տաք, հարսանիքի, մկրտութեան, նշանառքի եւ այն տեսակ հանդէսներու համար, կը հայթայթենք նոյնպէս պէտք եղած ըմպելիները, խճճամիս ղինիով :

Տէր եւ Տիկին ՍԱՐԳԻՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Jeudi 29 Janvier 1948 Հինգշաբթի 29 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5252-Նոր շրջան թիւ 861 Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ ԳԻՆ՝ 5՝ ՓՐ.

Քաղաքական տագնապ Իթէ խորհրդարանը չվաւերացնէ նախագահի նոր օրէնքը

Ֆրանսական գահլիճը երեքշաբթի օր երկարաձգեց նիստ մը գումարեց եւ որոշեց Ֆրանքին արժեզրկումին վերաբերեալ նոր օրինագիծը խորհրդարանին յանձնել քուէարկութեան համար, հակառակ ընկերվար· կուսակցութեան ընդդիմութեան: Կառավարութեան ճակատագիրը սերտօրէն կապուած է այս օրինագծին, դիտել կը տրուի լաւատեղեակ շրջանակներու մէջ :

Վարչապետը վստահութեան քուէ պիտի չհանձնէ մինչեւ այդ տեսակ քայլը կրնայ 48 ժամուան յապաղումի մը պատճառ ըլլալ: Հաւանական կը թուի որ ընկերվարական խմբակցութիւնը չքեղչին պահուն իր քուէն տայ, բայց առաջարկէ կէտ մը անհրաժեշտ բարեփոխումներ : Կուսակցութեան ղեկավար շրջանակները դէմ են մեծաղ տակնին աղաւ վաճառումին ինչպէս նաեւ օտար թղթադրամներու աղաւ փոխանակութեան տրուհետեւ մինչ կողմէն, ներկայ որոշումը ընդունելութիւն չէ գտած Անդլիոյ մէջ «որուն հետ Ֆրանսա պարտաւոր է բարեկամական յարաբերութիւններ մշակել » եւ միւս կողմէն օրինագծին տրամադրութիւնները չափազանց «բարեացակամ» են :

Երեսփոխանական ժողովին ելմտական յանձնաժողովը 15ի դէմ 17 քուէով մերժեց Պ. Բընէ Մայէրի օրինագիծը : Ի նպաստ քուէ տուին MRPի անդամներն ու արմատականները, իսկ հակառակ քուէ տուին համայնավարներն ու ընկերվարականները :

Խորհրդարանը երեքշաբթի օր, երկու անգամ յետաձգեց օրինագծին քննութիւնը: Վարչապետը պիտի տանի որ ներկայ որոշումները տալու «տխրահռչակ էինք որովհետեւ Ֆրանսա բոլորովին ապահոված է իր օտար վարկերը»: Հետեւաբար, ըստ ան, օրինագիծը պէտք է անյապաղ քուէարկուի որպէսզի Ֆրանսա կարենայ վճարել իր արտաքին պարտքերը :

Ելմտական նախարարը բացատրեց որ օրինագիծը կարծուածին չափ ալ «բարեացակամ» չէ, քանի որ ամէն մարդ կրնայ իր ուզածին չափ ոսկի կամ օտար թղթադրամ վաճառել ազատ շուկայի վրայ, բայց ամէն մարդ չի կրնար ազատօրէն դնել տակին կամ թղթադրամը »:

Իրադէպ շրջանակներու մէջ կը տիրէ այն համոզումը թէ օրինագիծը վերջ ի վերջոյ կրնայ քուէարկուիլ, բայց «տագնապալի մթնոլորտ» մը անխուսափելի է :

★ «Պանք տը Ֆրանս»ը յայտարարեց որ ոսկի ներկայ պահեստները կը կազմեն.—

— Ոսկի՝ ձուլակտոր 237.000 Ֆրանք :

— Լատինական երկիրներու 20 Ֆրանքնոց ոսկի, 1368 Ֆրանք, 4ին ոսկիներ 684 Ֆրանք,

— Ամերիկեան 20 տոլարնոց 7100 Ֆր.:

— Ամերիկեան 10 տոլարնոց 3550 Ֆրանք:

— Անգլիական 20 շիլինոց 17726 Ֆրանք:

— Անգլիական 10 շիլինոց 8630 Ֆրանք :

★ Ֆրանքին արժեզրկումին առաջին հետեւանքներէն մէկը պիտի ըլլայ այն որ Ֆրանսական կառավարութիւնը Միջազգային Հիմնադրամին պիտի վճարէ 570 միլիոն տոլարի յաւելուածական գումար մը՝ իր նախորդ մթերքները հատատարկելու մակարդակի վրայ պահելու համար:

★ Անգլիոյ մէջ մտահոգութիւն կը պատճառէ նաեւ այն պարագան որ չատ մը Ամերիկացի զբօսաշրջիկներ, յատկապէս ամառ Ֆրանսա պիտի երթան՝ փոխանակ Անգլիոյ մէջ անցընելու իրենց արձակուրդը: Միւս կողմէ, սակայն, հաւանական չէ որ Անգլիոյ «տոլարով արտածումները» ոլորտի առաջիկայ ամիսներուն ընթացքին ճարահատ պիտի ուժեղանան Ֆրանսական փոքր արտարժութեան որովհետեւ ասոնք օտար չափանիշներու համաձայն չափազանց ցածր են :

Խռովութիւններ Իրագի մէջ

70 ՀՈԳԻ ՍՊԱՆՆՈՒԱԾ

ԴԱՀԼԻՃԸ ՀՐԱԺԱՐԵՑԱՒ

Ինչպէս արդէն կը նախատեսուէր, Պաղտատի կառավարութիւնը երեքշաբթի օր հրաժարեցաւ որովհետեւ խորհրդարանը բացարձակօրէն մերժեց վաւերացնել վերջերս Լոնտոնի մէջ կնքուած անգլեւիրագեան բարեկամական դաշնագիրը :

Քանի մը օրէ ի վեր տեղի ունեցող խառնակութիւնները աւելի եւս սաստկացան եւ արիւնալի ընդհարումներ պատահեցան երկրին գլխաւոր կեդրոններուն մէջ, յուցարար ամբոխին եւ ոստիկանական ուժերուն միջեւ :

Խռովութիւնները սկսան այն ատեն երբ վարչապետը, Սալիհ Ճապէը, յայտարարեց թէ հակառակ ամէն ընդդիմութեան, ինք պիտի չհրաժարիր: Եօթնամսուան հոգի սպանուեցան եւ 300 հոգի վիրաւորուեցան: Ոստիկանութիւնը սկսաւ զգացողներով եւ հրասայլերով յարձակելցուցաբարերուն վրայ որոնք բերերով ուսադնականերով կը դիմադրէին: Կվնեցն անգամ մասնակցեցան ցոյցերուն: Երկու նախարարներ յարձակումի ենթարկուեցան: Յուցարարները փորձեցին դահլիճին պաշտօնատունէն ներս մտնել, բայց ոստիկանութիւնը յաջողեցաւ արգիլել զիրենք: Ոստիկանական հսկողութեան տակ առնուած է վարչապետին բնակարանը :

Մնամակալը որ քանի մը օր առաջ, ցուցարարները հանդարտեցնելու համար, խոստացած էր թէ դաշնագիրը պիտի չվաւերացուի, երկար խորհրդակցութիւններ ունեցաւ վարչապետին եւ քաղաքական հոսանքներու ներկայացուցիչներուն հետ: Երեքշաբթի գիշեր, խնամակալը ձայնասփիւռ ճառով մը յանձնարարեց որ «ժողովուրդը աչակցի իշխանութենաց՝ երկրին անդորրութիւնը վերահաստատելու համար »:

★ Մնդրոյ առաջին դաշնագիրը կնքուեցաւ Փորթսմըտին (Անգլիա) մէջ յունուար 15ին: Համաձայն իր տրամադրութեանց, Անգլիա իրաւունք կը ստանար զինուորական ուժեր ղրկելու իրաղ այն պարագային երբ այս վերջինը յարձակումի ենթարկուէր երրորդ պետութեան մը կողմէ: Դաշնագրին ստորագրութենէն անմիջապէս ետքը տը խնամակալը յայտարարեց թէ «անհէր համապատասխաներ Իրագի քաղաքներուն եւ պիտի չվաւերացուէր »:

ՊԵԼԿՐԱՏԷՆ կը հաղորդեն թէ ալպանիական զինուորական դատարանը մահուան դատապարտած է եօթը հոգի որոնք գաղտնի ընկերակցութեանց անդամ ըլլալով, «ըրտեսութիւն կը կատարէին Անգլիոյ եւ Ամերիկայի աշխարհակալնեըուն հաշուոյն »:

ՎԻՐՋԻՆ քանի մը շաբաթներու ընթացքին Ֆրանսական իշխանութիւնները խիստ միջոցներ առած են սեւ շուկայի խանութպաններուն դէմ : Այսպէս, դատական հետապնդումի ենթարկուած են 70 հացագործներ որոնց 26ը բանտարկուած են: Գրաւուած են 700 հացի կտրօնները: Քանի հինգ ճաշարաններ փակուած են: Դատարան կանչուած են քառասունի չափ առեւտրականներ որոնք իրենց գիները բարձրացուցած էին ապօրինի կերպով: Եղեք ամսուան համար փակուած են 60 մսավաճառի խանութներ :

ԱՒՍՇԻՒԻՑԻՆ կը տեղեկացնեն թէ յառաջիկայ Յուլիս 14ն ետք, Գերմանիոյ ամերիկեան գօտիին վարչութիւնը զինուորական իշխանութենէն պիտի փոխանցուի արտաքին նախարարութեան :

ՊԵԼՃԻՔԱՑԻ մէջ մթի բաժնեչափի գրուածքները վերջ պիտի գտնէ յառաջիկայ կիրակի օրէն սկսեալ :

ՄՈՍԿՈՒԱՑԻՆ կը տեղեկացնեն թէ կասպից Ծովը հետզհետէ «կը քաշուի» մասնաւորաբար Հասան Կուլէ կոչուած ծոր թնութեան համայնապատկերն անգամ սկսած է որոշ փոփոխութիւններ կրել :

ԱՄԵՐԻԿԱՑԻ արտաքին փոխ նախարարը յայտարարեց երեքշաբթի օր թէ Իուսերը Գերմանիոյ իրենց գօտիէն Իուսիա կը փոխադրեն հակայ քանակութեամբ ուտեստեղէններ , մինչդեռ Ֆրանսացիները զանցառելի քանակութեամբ ուտելիք կ'առնեն իրենց գօտիէն :

ԳԱՊԻՏԱՆԻՆ ԴԷՊ

990 ՀՈԳԻ ՍՊԱՆՆՈՒԱԾ ԵՐԵՔ ԱՄՍՈՒՆ

Պաղեստինը հրէական եւ արաբական երկու անկախ պետութեանց վերածելու մասին Միացեալ Ազգերու կողմէ տրուած որոշումէն ի վեր, պատերազմին մէջ սպանուած են 990 հոգի :

Երեքշաբթի օր համեմատաբար «անդորրութիւնը կատարեալ » էր ամբողջ Պաղեստինի մէջ, թէեւ կարգ մը վայրերու մէջ մանր - մունչ ընդհարումներ պատահեցան :

Թէլ Աւիվ — Հայֆա ճամբուն վրայ Անգլիական դիւնուր մը եւ Հրեայ մեքենավար մը սպանուեցան երբ Արաբները հրացան պարպեցին բեռնատար կառքի մը վրայ: Երկու պայթումներ տեղի ունեցան Երուսաղէմի հրէական թաղամասին մէջ: Հրեաները կորած են Լիտայի երկաթուղիի դիծը եւ քանդած են կամուրջ մը՝ կեդրոնական

Վերջին շարունակութիւնը կարդալ Գ. էջ

ՄԵՐ ԽՕՍՔԸ

85.000 ՏՈԼԱՐ

Բարեգործականը իր Դեկտեմբեր 23ի զեկոյցով կը յայտարարէր թէ «Իրանէն կատարուելիք ներգաղթին յառաջիկայ գարնան յետաձգման հետեւանքով, բազմահազար Հայեր օգնութեան կարօտ վիճակի մը մէջ կը գտնուէին» :

Հետեւաբար կեդր. Վարչութիւնը, երկու անգամով 45.000 տոլար տրամադրած է կարօտեալներուն :

Դարձեալ, նոյն զեկոյցէն կը տեղեկանանք թէ Եգիպտոսի ներգաղթը «համաճարակին պատճառաւ յետաձգուած ըլլալով», Բարեգործականը 40.000 տոլարի վարկ մը յատկացուցած է « ժամանակաւոր կերպով հաստատուն կեանքի մը առաւելութիւններէն զրկուած մեր հայրենակիցներուն կարօտութիւնները» դարմանելու մտահոգութեամբ :

Տարակոյս չկայ որ այդ մեծաչուք կազմակերպութիւնը դադարներ պիտի յատկացնէ նաեւ ուրիշ վայրերու մէջ, ամխնդէ ի վեր, Ներգաղթի չոգենաւերուն սպասող քիչ-չատ թափառականներուն բազմութիւններուն տրոնք իրենց տունէն - տեղէն բաժնուեցան որովհետեւ խոստումներ չհայտնուած էին իրենց :

— Դուք պատրաստուեցէք, չոգենաւը եկաւ, չոգենաւը պիտի դայ, Երեւանի բարեխնամ կառավարութիւնը հարկ եղածը անօրինած է ձեզի համար ...

Տակաւին չենք գիտեր թէ Բարեգործականը ինչ դադարներ «մէկդի դրած է» դարմանելու համար Ռումանիոյ, Պուլկարիոյ, Սուրիոյ, Լիբանանի , նոյնիսկ Ֆրանսայի մէջ բեռ կապած մեր հայրենակիցներուն անբաղձալի վիճակը:

Բարեբախտաբար Ներգաղթի ամբողջ կազմակերպութիւնը վստահուած էր այն տարրերուն որոնք առաու - իրիկուն Դաշնակցութեան մեղքերը կը հոլովեն բոցավառ երեւակայութեամբ :

Հետեւաբար մենք պատասխանատու չենք այն անբաղձալի կացութեան որ ստեղծուեցաւ 1947ին:

Եթէ չենք սխալիր Ամերիկայի մէկ միլիոնը, Ֆրանսայի քսանըվեց միլիոնը կամ ուրիշ շրջաններու հազարները հանդանակուեցան փոխադրութեան ծախքերուն ի հաշիւ :

Բարեգործականը սկսած է նոր արշաւի մը՝ հաւաքելու համար մէկ միլիոն տոլար եւս՝ Ամերիկայի եւ մնացեալ դաղութներուն մէջ :

Մեզի համար տակաւին մութ է թէ արտասահմանեան Հայաստանը, այս անգամ, ինչ չափով պիտի իրականացնէ իր վրայ դրուած ակնկալութիւնները :

Բայց իրաւունք ունէ՞նք հարցնելու թէ ինչո՞ւ համար կը հանդանակուին այս դումարները :

Որպէսզի Երեւանի կառավարութիւնը իր մտքին վրա՞յ խաղցնէ մեր միլիոնաւոր հայրենակիցները, անոնց տունն ու տեղը ծախել տայ, իրենց ապրուստի միջոցներէն զրկէ եւ քարաւաններուն վրայ թափէ զանոնք :

Որպէսզի հանդանակուած դումարները յատկացուին ապիկար ու անճարակ չարժուձեւերով ստեղծուած ցաւալի կացութեան մը չարիքը դարմանելո՞ւ :

Բարեգործականի հանդանակութեանց մեծագոյն չափով կը մասնակցին մասնաւոր մեր հայրենակիցները, որպէսզի իրենց տասնոցներով հայրենիք վերադառնան արհեստաւորն ու մտաւորականը, բանուորն ու արուեստագէտը :

Բնականաբար նպաստ պիտի յատկացուի բոլոր անոնց որոնք միջոցը մնացած են ամխնդէ ի վեր՝ սխալ հաշիւներով եւ անհիմն հաւատիքներով :

Բայց ինչո՞ւ միջոցը մնային մեր հայրենակիցները: Ի՞նչ ծրագիր կը հետապնդէ Երեւանը՝ հանդանակութեան ձեռնարկելու իր անվերջ հրամաններով երբ, երեւոյթները ցոյց կուտան թէ, հանդանակուած դումարները իրենց բուն նպատակին չեն յատկացուիր :

Կ'ուզենք նկատել քաղաքակիրթ արտասահմանեան Հայաստանը որպէսզի այլեւս հնարաւորութիւն չունենանք միջ հաւաքելու տարբեր աղբիւրներ նպատակներու համար :

Ժ.

Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ իր շրջապատը

Ա.

Հ. Յ. Դաշնակցութիւնը իր մօտ վաթսուն փոթորկալից տարիների ընթացքին, յաճախ ունեցել է յաջողութեան, անյաջողութեան, փորձանքի եւ հալածանքի կարճ ու երկար պահեր: Եւ այդ յաջողութիւնների եւ յաջողութիւնների շրջանակերին է որ բնականաբար, տեղի են ունեցել զանազան մակընթացութիւններ եւ տեղատուութիւններ:

Մեր ազատագրական շարժումը, որ տարբերաբար օրէն եւ զանազան ծայր առաւ անցած դարու վերջերին, հետզհետէ ծաւալեցաւ եւ իր թափը աստիճանաբար արագացնելով, փոթորկեց հայկական լճացած աշխարհը: Անցած դարու վերջին տասնամեակին էր որ, տեղի ունեցան Կուկունեանի արշաւանքը, Բանկ Օթոմանի գրաւումը, Խանասորայ արշաւանքը, Թրքահայերի կոտորածները, Թալանն ու բռնաբարումները, սրբանց հակազդող ինքնապաշտպանութեան կռիւները, ահաբեկչութիւնները եւ քաղաքական ցոյցերը:

Առաջին տասնամեակի ազդային յեղափոխական պայքարի ընթացքին էր, որ հայ քաղաքական կուսակցութիւններից ամէնէն խոշոր դերը կատարեց Հ. Յ. Դաշնակցութիւնը, ինչպէս նաեւ հետագայ տասնամեակներին, չհետզհետէ հայ քաղաքական ամէնէն խոշոր կուսակցութեան արդար կոչումը:

Իննսունական թուականների վերջին փոթորկալից տասնամեակին յաջորդող քսաներորդ դարու առաջին տասնամեակին, հայ քաղաքական ազատագրական պայքարի պատմութիւնը հարստացաւ նորանոր խոշոր դրուագներով — հայդուկային արշաւանքներ դէպի երկիր եւ հերոսական կռիւները, Սասնոյ ապստամբութիւնը, Եըլտըզի մահափորձը եւ ամէնէն տեսակ յեղափոխական կազմակերպչական ձեռնարկներ:

Կովկասում հայ եկեղեցական կալուածների գրաւման առթիւ քաղաքական հսկայական ցոյցեր եւ ի վերջոյ փառաւոր յաղթանակ, հայ - թաթարական ընդհարումներէն հրաշալիօրէն կազմակերպուած դիմադրական կռիւները եղան:

Պարսկական յեղափոխական յաղթական շարժ - մանը Հ. Յ. Դ. բերած իր գործօն մասնակցութիւնը: Թուրքիայում սուլթանական բռնակալութեան տապալում եւ սահմանադրական շրջանին ազգային քաղաքական, մշակութային եւ ընկերային մարզերում արդիւնաւէտ ընդարձակ դործունէութիւն ...

Այս յաջորդեց ներկայ դարու երկրորդ տասնամեակը, Թրքահայերի համար ողեւորիչ իրաւունս տուեալներով եւ վայելուն հեռանկարներով: Դժբախտաբարաբայթեց առաջին մեծ պատերազմը եւ հայ քաղաքական աշխարհը ենթարկուեցաւհսկայ վերիվայրումների: Այդ երկրորդ տասնամեակի վերջաւորութիւնն էր, որ դարերով սպասուած մեր արեւը պիտի ծագէր առայժմ Ազարատեան աշխարհում: Սակայն մեր սեւ բախտից, դարեր չտեսնուած իրար բզքտող Ռուսն ու Թուրքը այս անգամ բարեկամացած, պիտի արշաւէին նորաստեղծ Հայաստանի հանրապետութեան վրայ եւ որպէս պատերազմական աւար, իրար մէջ բաժանէին:

Ներկայ դարու երրորդ տասնամեակի վաղորդայնին, Հայաստանի հանրապետութեան եւ Յունաց պատութեանց կրկնակ պատճառներով, հայ ժողովրդի մի խոշոր հաւաքածի համար սկսաւ տարագրութեան երկարամեայ մի նոր ժամանակաշրջան, որը իր մէջ առաւ նաեւ յաջորդ չորրորդ եւ հինգերորդ տասնամեակները:

Չենք կարող լրջօրէն հրապուրուել վերջերս երկու տարիների տեղի ունեցած տասնեակ հատոր «Հայաստանասէր»ների ներդաղթով, եւ ոչ էլ խորհրդային մունետիկների խաբուսիկ հաւաստիացումներով, քանի որ բոլորին ծանօթ է Թուրքիայի հանդէպ բոլշեւիկների վարած քաղաքականութիւնը, վրան աւելացրած Վիլինգթի յայտարարութիւնը կարսն ու Ախուհանը Վրաստանին կցելու մասին: Մեզ նոյնպէս քաջածանօթ են պատմական Հայաստանի հողամասի չորրորդ կատարուող թէ Ռուսների (սպիտակ թէ կարմիր) եւ թէ միւս մեծերի (միապետական, հանրապետական եւ կամ ընկերվարական) Հայկական Դատի համար անհնազանդ պայքարի հիմնական պատճառներն ու նպատակը:

Արդեօք ե՞րբ պիտի հրապարակ գայ համաշխարհային մի գերագոյն իշխանութիւն, որ անկողմնակալօրէն եւ անշահախնդրաբար բոլոր հալածուած ժողովուրդներին տեղատուրէ իրենց պատենական երկրի մէջ, դուրս վռնտելով բռնութեամբ օտար հողամասերին իշխած եկուոր տարբերին: Ես՝ այդ արդար եւ վեհ դատաստանին իրաւականացման հաւատացողներիցն եմ ...

Համխեան շրջանին Հ. Յ. Դ. որպէս յեղափոխական դաշնի կուսակցութիւն, իր դրօշակի տակ համախմբած էր ղխաւորապէս անձնուէր, գաղափարական փոքրաթիւ անհատներ, կազմած դաշնի փոքրիկ խմբեր: Բնականաբար տարբեր եղաւ սահմանադրութեան շրջանին, երբ գեղեցիկ հեռանկարներով խանդավառ Թրքահայ ժողովրդի մեծամասնութիւնը բոլորեց Հ. Յ. Դ.ի շուրջը: Այլեւս վախ չկար հալածուելու որպէս Դաշնակցական, թուրք կառավարութեան եւ մահմետական խուժանի կողմից: Դաշնակցական մանաւանդ հին գործիչները, ամէն տեղ շատ յարդի էին: Հ. Յ. Դ. լիկոլ կուսակցութիւն էր եւ օրուայ թուրք իշխանութեանը բարեկամ եւ աջակից:

Հազար Լինը հարիւրի սկզբնական տարիներին, շատերը խանդավառուած մեր հայդուկային կռիւներով եւ առահասարակ մեր յեղափոխական շարժումով, կովկասում խուռներամմտանութիւններ կուսակցական գաղտնի խմբեր, որոնց թիւը 1904-ին հասաւ ամենաբարձր աստիճանին եւ ապա հետզհետէ թուլացաւ Սասնոյ ապստամբութեան ձախողման, հայդուկային արշաւանքների կասեցման, լինչպէս նաեւ հայ - թաթարական ընդհարումներից յետոյ, ցարական կառավարութեան սկսած սաստիկ հալածանքին, առանձապէս մեր Դաշնակցական ընկերների դէմ:

Բայց եւ այնպէս, Կովկասահայ ժողովուրդի ճնշող մեծամասնութեան համակրութիւնը Հ. Յ. Դ. կողմն էր, ինչ որ ապացուցուեցաւ հետագային կատարուած բոլոր համաժողովրդական ազատ ընտրութիւններին: 1917 թ. ամառը, Ռուսական Սահմանադիր ժողովի հայ պատգամաւորների ընտրութեանը, օրինակ, հայ ժողովուրդի ջախջախիչ մեծամասնութիւնը իր քուէները տուաւ Հ. Յ. Դ. ցանկին: Ռուսական սահմանադիր ժողովի պատգամաւոր ընտրուեցին ընկերներ Ռոստոմ Զօրեան, Մ.Ք. Յովհաննիսեան (Վրանդեան), Համօ Օհանջանեան, Սիր. Տիգրանեան, Բժ. Յ. Զաւրեան, Կոստի Համբարձումեան, Աւ. Շահխաթունեան, Յով. Քաջազնունի եւ Կոբիւն Ղազազեան: Անդրկովկասի հայ ժողովրդի աւելի քան 95 առ 100ը իր քուէն տուաւ, հետեւաբար եւ վստահութիւնը յայտնեց Հ. Յ. Դ.:

Նոյնպէս ցայտուն եղաւ ընտրական պայքարի արդիւնքը 1919 թ. Յունիսին, երբ Հայաստանի հանրապետութեան անդրանիկ խորհրդարանի 80 պատգամաւորներից ընտրուեցին 72 Դաշնակցական, չորս Սոց. Յեղափոխական, մէկը Հայ Գիւղացի. Անկուսակցական միութիւնից, երկու թաթար եւ մէկ Եզդի քիւրա, որը մեզ համակիր էր: Հայ ժողովրդական (ռամկավար) կուսակցութիւնը, թէեւ գործօն մասնակցութիւն ունեցաւ նախնական ընտրապայքարին, հրապարակ գալով իր ընտրելիների ցանկով, բայց չետոյ խոհեմութիւնը համարեց չմասնակցել ընտրութիւններին:

Պարսկաստանում Հ. Յ. Դ. սկզբից ի վեր ունեցել է դրեթէ ազատ գործունէութիւն, իր կուսակցական խմբերով, վիճադրծարանով (Թաւրիզ), որտեղ կարգի բերուեցին Խանասորայ ապրանքի զէնքերը: Ատրպատականի երկրին սահմանամերձ վայրերի տեղացի եւ եկուոր ընկերները երկար տարիներ չարունակ, գործօն մասնակցութիւն են ունեցել դէպի երկիր կատղող ուժերը, զէնք եւ ռազմամթերք փոխադրելու աշխատանքին: Սակայն Հ. Յ. Դ. հմայքը չափազանց բարձրացաւ Պարսկաստանի բոլոր ժողովուրդների աչքին 1908—12 թուականների խարսկական յեղափոխական շարժմանը, Եփրեմի, Քեռիի, Խէչոյի եւ Նիկոլ Դումանի դեկավարութեամբ բազմաթիւ մեր քաջարի մարտիկներին տարած հերոսական յաղթանակների շնորհիւ:

Հայ դաղութների մէջ, Հ. Յ. Դ. օգտուելով ազատ պայմաններից, իւրայատուկ ընդարձակ գործունէութիւն է ունեցել, սերտօրէն կապուած մայր երկրի հետ: Որով մայր երկրի դէպքերից խորապէս ազդուելով, գաղութների մէջ յաճախակի տեղի են ունեցել մակընթացութեան եւ տեղատուութեան շարժումները:

Բնականաբար գաղութահայ մեր կուսակցական կեանքի վրայ եւս խոշոր չափով ազդեց, ասկից քառորդ դար առաջ տեղի ունեցած հարիւր հազարաւոր մեր հայրենակիցների նոր բռնագաղթը: Հին գաղութների մէջ տեղատուրուելով նոր տարագիր ընկերներն ու համակիրները, խթան հանդիսացան գաղութների մեջ ունեցած գործունէութիւնը վերնդլայնեցան, բազմանալուն եւ հարստանալուն մասուրով, դրամանութիւնով, ակումբներով եւ նորանոր օժանդակ կազմակերպութիւններով: Եւրոպական երկիրների մէջ, ոչ մի տարագիր ժողովուրդ, անդամ քանակով մեզանից աւելի սուուր, ինչպէս, օրինակ, Ռուսները, չունի Հ. Յ. Դ. պէս հրաշալիօրէն կազմակերպուած բազմամարդ քաղաքական կուսակցութիւն: Ռուսական դաղութները հարուստ են բազմատեսակ մշակութային կազմակերպութիւններով, բայց ոչ քաղաքական կուսակցութիւններով: Հռչակաւոր ռուսական Սոց. յեղափոխական խոշոր կուսակցութիւնից, ներկայիս տարագրութեան մէջ մնացել են մի քանի տասնեակ փայլուն անցեալ ունեցող տարեց մտաւորականներ, որոնք ապրում են իրենց կեանքի վերջին օրերը, երբեմն միայն քաղաքական ելոյթներ ունենալով:

(1) ԲԵՆՕ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՐԱ

★ Ս. Փրկիչ Ազգ. հիւանդանոցի մեծանուն հիմնադիր, Յարութիւն Ամիրա Պէզճեանի մահուան 118րդ տարեդարձին առթիւ մեծավայելուչ հանդիսութիւն տեղի ունեցած է Մայր Եկեղեցւոյն մէջ մասնաճեռնութեամբ Մայր Եկեղեցւոյ օժանդակ մասնախումբին: Քարոզած եւ պատարագ մատուցած են Հմայեակ Ծ. վրդ. Պախթիկեան եւ Մուշեղ Քհնյ. Քէօսէեան: Պատարագի երգեցողութիւնը կատարուած է Կոմիտաս. բազմաձայն եղանակով, Գողթան երգչախումբի կողմէ ղեկավարութեամբ Մաէսթրօ Լեկան Մանասի: Պատարագէն վերջ տեղի ունեցած է հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն դպրաց դասու երգչախումբի անդամներուն մասնակցութեամբ եւ առաջնորդութեամբ դպրապետ Պ. Յակոբ Գրալեանի, որ հագած է Գաղազ Ամիրայի չինել տուած եւ գործածած ոսկեթել բանուածքներով թանկագին չապիկը: Կէսօրին Ուտումնարանին մէջ հոդեճաշի սեղան մը տրուած է եկեղեցական դասուն, հրաւիրեալներու եւ դպիրներու պաղ միս, եղինձ, հրուշակ եւ դինի: Նորընտիր օժանդակին առենադպիր Վահէ Մանասեան կարդացած է տմփոփ տեղեկագիր մը, ուր յայտնած է թէ Հիւանդանոցի տարեկան 250 հազար ոսկիի պահանջին 50 հազարը կը հայթայթուի կալուածական վարձքերէ, իսկ մնացեալ 200 հազար ոսկիի բացը կը գոցուի զանազան նուիրատուութիւններով: Նոյն օրը տեղի ունեցած են երգեր եւ բանախօսութիւններ եւ մուէրներէ գոյացած է 2000 ոսկի Պ. Մանեան խոստացած է 2000 ոսկի ալ իր միջոցներով հայթայթել դնելու համար 2000 քիլօ օճառ:

Ժ.Թ. դարու մեծ բարերարն ու ազգային դէմքն եղած է ինչպէս եւ Օսմանեան պետութեան մեծազոյն օգտակար հայ պաշտօնատարը Յարութիւն Ամիրա Պէզճեան: Ան ծնած էր Ենի Գափու թաղը 1771ին եւ անդրանիկ որդին էր Կարսեցի Պէզճի Պօղոս աղայի: Առեւտրական ասպարէզին մէջ իր ցոյց տուած ընդունակութեամբ չուտով չահեցաւ խոհական եւ կենցաղագէտ անձի մտունը եւ հաստատեց մետաքսի տեխական վաճառատուն մը: Այդ շրջանի նշանաւոր Հայերէն Տիւզեան Յովհաննէս Զէլէպի Եւրոպայէն ներմուծած բեհեզի եւ մետաքսի մաքսր Օսմ. Տէրութենէն վարձած ըլլալով, Գաղազ Աբթինը այդ դործին վրայ հսկիչ եւ դործակալ կարգեց: Անոր համբաւը հետզհետէ զօրացաւ կառավարական շրջանակներու մէջ: Այդ միջոցին Օսմ. պետութիւնը ծանր խռովութեանց մատնուած էր: Սուլթան Սելիմ Գ. ձեռնարկած էր ներքին եւ դինուորական բարեկարգութեան: Անոր նպատակն էր բանակը վերակազմել եւրոպական նորագոյն ձեւով եւ վերջ տալ Եէնիչէրիներու առանձնաշնորհեալ դինուորական - նութեան: Անոնք առանց պատիժ կրելու վախի, սանձարձակօրէն ամէն չարիք կը գործէին մեծ տպռնապի մատնելով նաեւ հպատակ ոչ - մահմետական տարրերը:

Եէնիչէրիները Սուլթան Մուսթաֆայի դահը զօրացնելու եւ բոլոր ժողովուրդին վրայ սարսափ ձգելու համար, կ'որոշեն հպատակ Հայ, Յոյն, Հրեայ ժողովուրդներէն մէկմէկ նշանաւոր մարդ հրապարակաւ կտոր կտոր ընել:

Հայերէն կ'ըսուէն Նիկամ Ուստասը կոչուող հայազգի Յարութիւն Ամիրան, Հռոմէական Հայկէն Տիւզեան Յովհաննէս Զէլէպին: Այս քաջամտելի լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ մայրաքաղաքին մէջ եւ ժողովուրդը յուզեց: Սարսափի մատնուեցան մանաւանդ անմեղ մահապարտները եւ անոնց պարագաները: Երբ Յարութիւն Ամիրա լսեցաւ, յուզուեցաւ, ուժերը հաւաքեց եւ գնաց իր քեռայրին Յովհաննէս աղա Նուրեանի մօտ որ ծանօթ եւ բարեկամ էր Եէնիչէրիներուն պետերէն դաղանը համիմ Մուսթաֆայի: Երկուքը միասին գացին Մուսթաֆային, Ամիրան պարզեց արտասուալից աչքերով չորս մահապարտներուն անմեղութիւնը եւ խնդրեց ներել եւ չմահիլ անոնց անմեղ արիւնը: Գաղանճր Համիմ Մուսթաֆա, դաժան, անողորմ եւ եղեռնագործ մարդ էր: Պէզճեան մեծ նուէր եւ առատ ոսկի խոստացաւ մահավճիռը բեկանելու համար: Համիմ Մուսթաֆա ոսկիներու խոստումին չդիմացաւ եւ հաւանեցաւ որ ներուի մահապարտներուն: Պատեհին վճռագիրը եւ ժողովուրդին մէջ մունետիկի միջոցով յայտարարեցին թէ՝

— Այն չորս անձերը որոնք սպանելու պատրաստուած էինք ստուդեցինքոր մահուանարժանի ոչինչ գրած են, ոտով ի շնորհ Եէնիչէրի Օճագին, ինչ կուտանք որ անոնք ապրին:

Յովհաննէս Զէլէպի Տիւզեան լսելով այս ուրախաւէտ լուրը, իր մօտ կանչեց իր վեց զաւակները եւ բսաւ անոնց թէ ձեզի պէս այս երիտասարդ Յարութիւնն ալ իմ զաւակս է եւ ձեր եղբայրը: Սակայն Յովհաննէս Զէլէպիի մահէն վերջ, ուրիշներու չար նախանձը օր մը պղտորեց Տիւզեան հարազատներու միտքը եւ պատճառ դարձաւ ամենատխուր ազէտներու եւ Տիւզեանց կործանումին:

ՊԷԶՃԵԱՆ ԱՄԻՐԱ ԻՆՉՊԷՍ ՀԻՄՆԵՑ ԱԶԳ.

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ.— Նարլը Գափուի այժմեան Ս. Ցովհ. եկեղեցիին տակի նկուղն էր երբեմն հիւանդանոց եւ տաճարին ճիշդ դէմը կը պահուէին յիմարները: Անդամ մը Ցարութիւն Ամիրա պատարագին ներկայ էր, երբ «Առէք կերէք»ի նուիրական բառերը կ'արտասանէին, խելագարի մը հայհոյանքները կը խեղդէին պատարագամատոյց եկեղեցականին ձայնը: Բոլորին ուշադրութիւնը դարձնելով դէպի խեղճ, աւրնակելի անկիւնը ուր չղթաներու եւ փալախաններու տակ կը հեծէին խելագարները: Այս սրտապղձութիւնը այնպէս ազդեց Ամիրային ջիղերուն եւ այնպիսի սոկումով եւ արդահատութեամբ լեցուցանոր սիրտը որ պատարագը աւարտելուն, կանչեց Ամիրաները բացատրեց թէ պէտք է այլեւս փոխադրել հիւանդանոց մը չինելով: Որոշուեցաւ Եէտիգուլէի օգտուն մէկ վայրին մէջ չինել ընդարձակ հիւանդանոց: Ստեփանոս Աղաւնի պատրիարքին միջոցով կայսերական հրովարտակը ստացան, շուրջ 4 հազար կանդուն գետնի մը վրայ հանգստաւէտ եւ ընդարձակ փայտաչէն չէնքի մը կառուցման ձեռնարկեցին: Ս. Փրկչեան հիւանդանոցին ճարտարապետներն եղան Կարապետ Ամիրա Պալեան եւ քեռայրը Ցովհ. Ամիրա Սէրվէրեան, իսկ չինութեան հսկիչն էր Գրիգոր Օտեանի հայրը Եաղճի Պօղոս աղա: Ազգ. հիւանդանոցին չինութեան ծախսուած է 20 հազար օսմ. ղրուշ ոսկի որուն մեծ մասը տուած է Ցարութիւն Ամիրա: Նոյն միջոցին է որ Պոլսոյ Մէջլիսի ծաղած ըլլալով հիւանդանոցէն քիչ հեռու դէպի Մարմարայի ծովը չինուեցաւ Գաղղը Զէյմէի Ս. Ցակոբայ հիւանդանոցը որուն ծախսին մեծ մասը դարձեալ հոգաց Ցարութիւն Ամիրան եւ 10 հազար կանդուն հողը որուն վրայ չինուեցաւ չէնքը, նուիրեց արքունի ճարտարապետ Պօղոս Պէյ Տատեան:

Չար լեզուները մինչեւ Սուլթանին հասցուցին թէ Ամիրան ո՞ւրկէ կը չինէ այդքան եկեղեցիներ: Սուլթան Մահմուտ դիշեր մը յանկարծ եչէնի Գափու Ամիրայլին տունը կ'երթայ: Ցարութիւն Ամիրա կը ճաշէր իրեններուն հետ, դեռինը նստած: Կայսրը կը յուզուի տեսնելով որ իր հանճարեղ «Աբթին»ը պարզունակ սենեակի մը մէջ, կլոր սինիին չուրջ փայտէ դռալով լուրիա կ'ուտէ, մինչդեռ ան կրնար ոսկի կամ արծաթ դռալով ուտել: Սուլթան Մահմուտ իր մօտ կը կանչէ Ցարութիւն Ամիրան թէ ինչպէս կը չինէ այդքան եկեղեցիներ եւ դպրոցներ, «Քու բարձրադրյն հըրամանովդ ինծի չնորհուած Րումիլէ Ալթընը կը կարեմ եւ չահով Հնդկաստան կը ղրկեմ: Սուլթանը կը պատժէ զրպարտիչները եւ կ'ըսէ «Արթինին, դիտցածիդ պէս չարունակէ»:

1834ին մեռաւ Ցարութիւն Ամիրան առանց տեսնելու եւ վայելելու Ազգ. հիւանդանոցին հանդիսաւոր բացումը:

Պոլսոյ առողջապահական գործավար Ազգ. Հիւանդանոց այցելելով լսած է Տօքթ. Փէշտմալճեանի մանրամասն բացատրութիւնները: Գործավարը խիստ գոհ մնացած է հիւանդանոցին կարգապահութենէն եւ մաքրութենէն ու խնդրած է իր չնորհակալութիւնները յայտնել բժշկական մարմնին եւ պաշտօնէութեան: Տօքթ. Փէշթիմալճեան գործավարին յայտնած է թէ թոքախտի դէմ

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼԻ ԱԹՈՌԻՆ ՎՐԱՑ

Համայնավար «Լրաբեր»ը թոնդ է ելեր այս օրերս:

Եւ պատճառ ունի, որովհետեւ ամերիկեան ընդհանուր դատախազ Թոմ Քլարք «Լրաբեր»ի «Ցառաջդիմականները» զեեցեր է «մօտ լինուն կասկածելի կազմակերպութիւններու» ցանկին ճիշդ մէջտեղը:

Եւ «Լրաբեր» մտատանջուած է դիտնալու համար թէ այդ մօտ 90 կասկածելիներուն մէջ ո՞ր մէկին կը պատկանի ինքը եւ իր «Ցառաջդիմական» կոչուած Համայնավար Միութիւնը: Ամբողջատիրական՞, Ֆաշիստակա՞ն, կոմունիստակա՞ն, թէ՞ սըզըրսիվ (տապալիչ): Եւ «Լրաբեր» կը փութայ արդարացնելու ինքզինքը, առանց դիտնալու թէ ո՞ր ամբաստանութեան դէմ պէտք է ուղղէ իր սլաքները:

Ճակատագրի հինչ դառն, չչմեցուցիչ խաղեր:

Կը յիշե՞ք անցեալը: Ինչեր, ինչեր չըրին, այսօր ամբաստանելի աթոռին վրայ նստած «Ցառաջդիմական» կոչեցեալ Համայնավարները, մինչեւ օրն բախին արժանացնելու համար Հ. Ց. Դաշնակցութիւնը: Ինչ զրպարտութիւններ, ինչ մատնութիւններ, ինչ բարձրաձայն ճիչեր: Կը յիշե՞ք, թէ ինչպէս մեզ կոչեցին «ֆաշիստներ», «Հիթլերի զինակիցներ», «դաւաճաններ», «հակաամերիկեաններ»: Կը յիշե՞ք ինչպէս առաջ քշեցին իրենց տխրահռչակ Ճան Ոօյ Քաքլըրը, իր մեծածաւալ «ժուռնալ»ներով, իր զրպարտիչ յօդուածներով եւ իր զգուելի հեռարձակումներով՝ միանգամընդմիշտ պատին զամելու համար Հ. Ց. Դաշնակցութիւնը:

«Ամերիկեան բանակին մէջ կռուող Դաշնակներու զաւակ բոլոր զինուորները ֆաշիստներ են, Հիթլերի գործակալներն են, Ամերիկայի դաւաճաններ են: Բանակի հրամանատարութիւնը պէտք է քննութիւններ կատարէ անոնց մասին: Դաշնակները հայ ֆաշիստներն են, անոնք պէտք է քամընվուին, ինչպէս մենք պիտի քամընվէինք բոլոր թուռնատուր միքրոպները»:

Այսպէս գրեց «Լրաբեր»ին ձագուկը, անոր անդլիերէն բաժնին երիտասարդ խմբագիրը, այն օրերուն, երբ մենք կենաց եւ մահու պայքար կը մղէինք ահաւոր թշնամիին հետ, ու երբ մեր տղաքները իրենց կեանքերը կը զոհէին ու կը վտանգէին ի սէր Ամերիկեան հայրենիքին:

Մենք համբերեցինք այդ անտրակելի սրիկայութեան: Մենք համբերեցինք մատնութիւններուն ամենաղղուելիին: Եւ ինչ է արդիւնքը այսօր: Արդիւնքը այն է, որ Հ. Ց. Դաշնակցութիւնը տակաւին կը վայելէ, ինչպէս եւ պէտք է վայելէր, Ամերիկեան Արդարադատութեան բաժանմունքին կատարեալ վստահութիւնը, մինչդեռ անոր զրպարտիչները այսօր նստած են ամբաստանեալներու աթոռին վրայ, ու իրենց գլուխները պատէ պատ կը զարնեն՝ փաստելու համար թէ պայքարին կարենալ մասնակցելու համար կ'ուզէ 30—40 անկողին աւելցնել թոքախտաւորներու բաժնին մէջ: Գործավարը խոստացած է օժանդակել նման ձեռնարկ մը կատարուելու պարագային:

Ընդհանուր Դատախազը սխալած է եւ իրենք անվստահելիներ չեն:

Եւ «Լրաբեր» կը փորձէ ապատանել Սուրբ Հոգիին քաղաքներուն տակ՝ Սատանային նման Սուրբ Գիրքին մէջբերումներ ընելով: «Ցառաջդիմական Միութիւնը» «Մեծ Քրէնքլէն Տէլանօ Ռոզվէլթին փրկարար «Նիւ Տիլեան ծրագրին» ջատագովն է եղեր: «Լրաբեր» կ'երդնու «Մեծ Քրէնքլին Տէլանօ Ռոզվէլթ»ին անունովը:

Կասկած չունինք թէ Ընդհանուր դատախազը պիտի այս ամէնը: Ընդհանուր Դատախազը պիտի նաեւ թէ ինչպէս, 1939—41ի Հիթլէր Ստալինեան մեղրալուսնի օրերուն, մեր «Ցառաջդիմական» կոչուած շրջանակները «Մեծ Քրէնքլին Տէլանօ Ռոզվէլթը» որակեցին «պուրժուա կայսերապաշտ» մը, «Ուոլ Սթրիթի հետ գործակատարը», եւ «պատերազմասէր ամբոխավար» մը:

ՃԷՅՄՍ ՄԱՆՏԱԼԵԱՆ

ՎԱՂՈՒԱՆ ՄԱՐԴԸ

Գիտական յառաջդիմութեանց Բրիտանական Ընկերութիւնը, 1939էն ի վեր առաջին անգամ ձեռնարկած է վերջերս: Հոն, փրոֆէսօր Տէսմոնտ Պէրնալ, հետեւեալ ապշեցուցիչ յայտարարութիւնը ըրած է Անգլիոյ մտաւորական ընտանիքէն չորս հարիւր հոգիի ներկայութեան. «Մենք կրնանք ապրիլ, ու հաւանաբար կոչուած ենք աւելի լաւ ապրելու, ուտելով այն բանը, զոր կուվերուն կուտանք»:

Ներկաները սկսած են ծիծաղիլ: Փրոֆ. Բ. Պերնալ, լուրիւնը վերահաստատուելէ յետոյ, յարած է.

— Շատ լուրջ կը խօսիմ: Պիտի կրնանք խոտ ուտել սիրայօժար, մէկ երկու տարի յետոյ: Ընդհանրապէս այն կարծիքը կը տիրէ, թէ մեր դաշտերուն մէջ բուսած խոտերը ուտուերու յարմար չեն, մեր ներկայ սովորութիւններուն համաձայն: Իրը խոտակեր կը յիշուի անգլիացի նօտար մը, Ձէյմս Պրանտըն, որ 75 տարեկան եղած աւեն, 1942ին, կը բացատրէր՝ թէ իր մարզադիտիններուն խոտով շատ լաւ կը սնանէր:

Իրականին մէջ, խոտ կամ տերեւ կ'ուտենք չարունակ: Նոյնպէս՝ առաւօրէն փրթիէին կ'ուտենք, որ միշտ կը հայթայթուի պանիրին, կաթին, եղան, կովին ու հորթի մսին միջոցաւ:

Անգլիոյ մէջ, բազմաթիւ հետազօտութիւններ եղած են այդ ուղղութեամբ, մանաւանդ այն միջոցին, երբ Նացիները կր խորհէին պաշարել Մեծն Բրիտանիան: Դէպքերը արգելք եղած են Բրիտանացիներու սովահար ըլլալուն:

1916ին, գերման շատ համեղ հերիկ մը՝ կր պատրաստուէր խոտէն հանուած փրոթէինով: Ճաշոն գերիներու մէկ քէմփին մէջ, անգլիացի բժիշկները խորթած տը քարիւոն հանած են խոտէն: Ան, վիթամինէ ղրկուողներուն շատ օգտակար է:

Թէքնիք դժուարութիւնները չուտով պիտի հարթուին: Կր մնայ լուծել հոգեբանական խնդիրը: Ուտակերութեան վարժութիւնն է որ ամէնէն մեծ արգելքը պիտի ըլլայ: Մարդիկ միամտօրէն կը յամառին անպիտանալ, թէ խոտ է որ կուտեն, պիֆթէք ճաշակած աուենին:

ԷՍԱ ԵԻ ՀԱՄԱՑ

(ԽՈՐՀՐԴԱՎԷՊ)

Բ. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԴԱՐՁ

Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

Մենակեաց Եսային, իր խշտիկին վրայ երկարած, ինքն ալ իր կարդին, գործի է լծուեր իր խոհերուն հետ, աչքերը գոց, միտքը արթուն:

Թըփ, թըփ, թըփ ...

Ցանկարծ մէկը անցաւ գլխուն վրայէն, զգուշաւոր քայլերով: Հիւղակին ոստահիւս երդիքը համրեց ոտնաձայները — մէկ, երկու, երեք ... : Վախի աննախընթաց սարսուռ մը սկսաւ չրջագայիլ իր երակներուն մէջ: Ո՞վ կրնայ ըլլալ ... : Պատասխանը՝ դարձեալ ոտնաձայներ: Այս անգամ աւելի յստակ, ընդհատ ու բազմաքայլ: Պահ մը եաք, անոնք սահեցան խրճիթին պատերէն վար դղրտադողդղ ու աւազին վրայէն քալելով, նետուեցան մօտակայ ջրհորին մէջ:

Ցանկարծ, տոքի կանգնեցաւ, յօնքերը պռոտած, չրթները դողդողաց: Ո՞վ են ասոնք... Մա՞րդ թէ կենդանի, դեւե՞ր թէ սատանաներ, որոնց անունը առաջին անգամն ըլլալով կուգար իր չրթներուն: Իր բովանդակ մտորումներու ընթացքին, երբեք չէր անդրադարձած սատանաներու գոյութեան: Բայց, ահա, անոնցմէ մին՝ կրակէ աչքերով՝ փայլակնացայտ տուր մը չողացուց իր աչքին ու քաշուեցաւ խաւարի ետին: Ետեւէն՝ տրոտ, դոռում, չառաչ համասփիւռ: Պաղ քան մը, կաթեցաւ ճակատին վրայ, յետոյ ուրիշ մը՝ երեսին ու աչքերուն:

— Ոչինչ... անձրեւ է եղեր, ոչ դեւ, ոչ սատանայ... ինչ նախապաշարում, խօսեցաւ ինքնիրեն:

Դուրսը, անձրեւը կը տեղար յաղթաջուր, իսկական դեւերու եւ սատանաներու փորձանաւոր տեղատարափին նման: Իրեն այնպէս թուեցաւ, որ անոնք բաղմիր են խմբուիլն իր տարին վերեւ ու իրենց պաղ ձեռքերը, իր տենդայոյզ ափերուն մէջ դրած, կը տաքնան, կը քրքջան իր դէմ, սպառնալից՝ պահանջելով վաւերական պատմութիւնը իրենց ծագումին:

Ան դողդոջուն մատներով սկսաւ դարձնել դունատուր էջերն սատանայապատումին ու կարդալ:

Քրիստոնէական Տեսութիւն: Ամենակալն Աստուած միահեծան կ'իշխէր տիեզերքին: Ոսկեդղեն գահը՝ անմատոյց պարունակին մէջ: Անջրպետին պարապութիւնը՝ պատուանդան եւ անհատ բարձունքները՝ ամպհովանի: Անոր բացարձակ տիրապետութեան կը հպատակէր հրեղէն դասը — հրեշտակները, Սերովբէները, Քերովբէները սրբահոյլ:

Չարաղէտ օր մը, անոնց մէկ մասին մէջ ծրնաւ նախանձը: Աստուածանալ ... : Տիեզերքը բռնկեցաւ յեղափոխութեան եւ ապստամբութեան հուրէն, անարձագանգ ահաւորութեամբ: Ահեղ-մարտ, երկնամարտ, հրեշտակամարտ:

Անհունը տեղտեղ իր անսահման գօտին, կրճկուեցաւ, պզտիկցաւ, մինչեւ որ կրցաւ պաշտպել ապստամբ դասը իր անողոք օդականորումին մէջ: Այն աեն Ամենակալին հզօր թաթը գահավիժեց դասընկ, անդունդէ անդունդ ու միանգամ ընդմիշտ փակեց երկինքին դռները անոնց էմ: Բայց անոնց պետը՝ Սատան գոաւ նախամարդը եդեմին մէջ, ուր բեմադրեց մարդկային ահաւորագոյն ոճրամեան: Օձափոխութիւն, դիտութեան ծառ, մեղանչում եւ արտաքսում ... :

Հեթանոսական տեսութիւն: Այն հին, նախահին դարերուն, եղաւ աեն մը, ուր աշխարհը փոխեց իր դիմագիծը եւ եղաւ մեղաշխարհ: Աուաւօտը Աման էր հրէշտակերտ սուրբ մը երկար չեղրին, երեկոն՝ սպանդանոցի եզան մը արիւնոտ աչքին: Ցերեկն ու դիշերը չէին տարբերեր իրարմէ, որովհետեւ մարդիկ, օր ցերեկով, կը յափշտակէին կր սպաննէին, կր չնայիին անպատկառօրէն: Մարդկային ամօթն ու աստուածային երկիւղը խաչուած էին հեռաւոր բեւեռներու վրայ: Աղտոտութիւնը խաչուած էր մղոքին կաթսաներուն մէջ:

Աստուածային ցասումը երեք անգամ իջաւ երկիր: Սով. հրեղեղ, ջրհեղեղ: Բայց ի զուր...: Այն աեն Աստուած հրեշտակներու դունդ մը կանչեց եւ ըսաւ:

— Մենկենցէք երկիր, որուն ուղեկորոյս դեկը կը յանձնեմ ձեզի: Կատարեցէք մարդկութիւնը, աստուածօրէն: Բարին՝ չափ, արդարութիւնր՝ կշիռ:

Պաղեստինի արաբական գիւղերուն հաղորդակցութեան ճամբաները փակելու համար :

Գահիրէէն կը տեղեկացնեն թէ եգիպտական կառավարութիւնը երեսաղէմի Միւֆթիին յանձնած է մեծաքանակ հրացաններ՝ Պաղեստինի Արաբներուն համար : Իսկ եգիպտական կոմիտէ մը Միւֆթիին տրամադրութեան տակ դրած է 40 հազար ոսկիի գումար մը :

Արաբական Դաշնակցութեան վարչական խորհուրդը կարեւոր ժողով մը պիտի գումարէ Գահիրէի մէջ՝ փետրուար 7ին :

★ Հրէական գործակարութիւնը երեքշաբթի օր կոչ ըրաւ Պաղեստինի 15.000 երիտասարդներուն որ զինուորական մարզանքի սկսին փետրուար 15ին : Հականա զաղտնի ընկերակցութիւնը արդէն իր տրամադրութեան տակ ունէր 3500 «զինուորները» Դեկտեմբերի սկիզբը : Այդ թուականէն ասդին մօտաւորապէս 11500 հոգի եւս «զինուորագրուած» են : 2500 Հրեաներ իրենց նախկին զբաղումները լքելով, վարչական դասեր կ'առնեն՝ ապագայ հրէական պետութեան պաշտօնեայ ըլլալու համար :

Վերոյիշեալ 15.000ին մէջ կը մտնեն բոլոր 19էն 22 տարեկան երիտասարդները : Պատրաստուած է նաեւ ցանկը 17էն 25 տարեկան կիներու եւ իւրաքանչիւրին յանձնուած է կանանչ քարթ մը :

Տարեվերջ Յունաստանի մէջ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ ԿՈՒԶԵՆ ՀԵՌԱՆԱԼ

Համաձայն Աթէնքէն ստացուած տեղեկութեանց, ամերիկեան առաքելութեան անդամները չատերը կ'ուզեն Ամերիկա վերադառնալ մինչեւ Յունիս 30 : Առաքելութեան պետն ալ, Տուայթ Կրիպուըլա, յայտնակ չունի երկար մնալու : Երեք հարիւր հոգիանոց պաշտօնէութեան հարիւրին ինը երսունը դժգոհ է :

Ուռչինկթընի պատկան իշխանութիւնները չատ մտահոգ են եւ արդէն սկսած են նոր պաշտօնեաներ փնտռել :

Վերադառնալու վախաք յայտնողներու մեծամասնութիւնը չեն սիրած Յունաստանը կամ իրենց յանձնուած աշխատանքը : Դիտել կը տրուի որ հնդլէն իշխանութիւնները անձեռնհաս են դոծադրելու համար առաքելութեան յանձնարարութիւնները : Կարգ մը բարձրաստիճան պաշտօնատարներ կրած են այն տպաւորութիւնը թէ «Ամերիկա Յունաստանի պաշտպանութեան հոգը ստանձնած ըլլալով, անհաչիւ տոլարներ պիտի բերէ, ուրեմն ինչո՞ւ բարեկարգել երկրին անտեսութիւնը եւ ինչու չշարունակել ներկայ անտոյդ դոյավիճակը ...» :

Վերջին քանի մը շարաթները ամերիկեան ներկայացուցիչները հասկցուցած էին կառավարութեան որ աւելի լուրջ աշխատանք կատարէ՝ կացութիւնը դարմանելու համար :

★ Հնդլէն ապստամբներու ձայնասփիւռը կը տեղեկացնէ թէ իրենց բանակը գրաւած է Ամախէվ քաղաքը Բումէլիի մէջ եւ «թշնամին» արիւնալի կռիւներէ ետք, կորսնցուցած է 60 մեռեալ, 90 վիրաւորեալ եւ 150 դերի : Այս լուրը չէ հաստատուած Աթէնքէն : Կ'ըսուի թէ ապստամբները երկու սուզանաւ ունին :

Ֆրանսայէն

ՀԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԵՐԵՔՇԱԲԹԻ օր Ռուսիա եւ Լեհաստան 250 միլիոն տոլարի առեւտրական քառամեայ դաշնադիր մը ստորագրեցին : Խորհրդային Միութիւնը Լեհաստան պիտի ղրկէ երկաթ, քրոմ, մանկանէզ, բամպակ, քարիւղային արտադրութիւններ, ինքնաշարժեր, փոխարէն ստանալով հիւսուածեղէն, չաքար, հանքածուխ եւն. :

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՄԱՆՈՐԻ ՄԵԾ ՀԱՆԴԻՍ

Կազմակերպութեամբ Լիոնի Հայ Կրթական մարմնոյն, հովանաւորութեամբ Հայ Ազգ. Եկեղ. Միութեան : Այս չաբաթ իրիկուն ժամը 8.30ին, Էթիէն Տօլէի մեծ եւ չքեղ սրահին մէջ, 257bis, rue Boileau, Lyon :

Պիտի ըլլան՝ դպրոցական եւ մանկական հաճոյալի պարեր, խմբական երգեր, արտասանութիւններ, տրամախօսութիւններ եւ զանազան սիրուն անակնկալներ :

Մուտք՝ 30 եւ 50 Ֆրանք, հարիւր Ֆրանք (սահմանափակ թիւով) :

ՓՐ. Կ. ԽԱՉԻ ԼԻՈՆԻ մասնաճիւղին Սան Սատուհիներու հայերէնի դասընթացքը պիտի վերսկսի, այս կիրակի, 1 փետր. առաւօտ, ժամը 10էն 12 : 78bis, Rue Rabelais, հայ դպրոցի սրահը : Դասախօս Պ. Կարապետ Յովակիմեան : Կը խնդրուի մեր սանուհիներէն որ ճշդապահ ըլլան եւ ամէն կիրակի չարունակեն օգտուելու համար այս ազգօգուտ ձեռնարկէն :

Պատրաստուելիք

Փր. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսին, որ տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24, Hôtel Continental իշքեղ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde :

Նուագախումբ ՅԵՐՆԱՆ ՊՈՒՅՕՆ : Գեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Պուլվար Օտոյի Ֆ. Հ. Կ. Խաչը, Մանուկներու Օրը պիտի տօնէ Փետրուար 1ին, կիրակի կէս օրէ վերջ ժամը 3ին, տեղւոյն եկեղեցիին մէջ, կը հրաւիրուին թաղին բոլոր մանուկները իրենց ծնողքներով միասին ինչպէս նաեւ բարեկամ բոլոր կազմակերպութիւնները որ խրախուսեն մեր մանուկները : Մրգեղէնի ծրարներ պիտի բաժնուին մինչեւ տասը տարեկան մանուկներուն :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՐՋԱ ՅԵՐԵԿՈՅԹ

Կազմակերպուած Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Սէվրանի մասնաճիւղին կողմէ, կիրակի 29 Փետր. 1948, ժամը 3էն 12, Casino des Etoiles, Մասխս սրահին մէջ, 87 Ave. de Livry, à Sevran :

Գեղարուեստական հաճելի բաժին : Խմբերգ, ներկայացում եւ անակնկալներ, եւրոպական պարեր : Ճոխ պիւֆէ : Մուտք՝ 75 Ֆր.

Հաղ. միջոց.— Կառախումբ Gare du Nordէն ժամը 13.45էն եւ 14.15էն : Eglise de Pantinէն 147 թիւ օթօպուս, իջնել Terminus :

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՕՆՆԻԿ ՔԻՐԼԷԱՆ եւ զաւակները ինչպէս բոլոր պարագաները իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ կամ գրաւոր իրենց ցաւակցութիւնները յայտնեցին՝ Պ. ԱԲՐԱՀԱՄ ՊՕՌԱՃԵԱՆի մահուան առթիւ :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻՒ.— Պուլկարիոյ Պուրկազ քաղաքէն բնիկ Ռոստոմեցի Թոմաս Դր. Թիւթիւնճեան կը փնտռէ իր հօրեղբայրը՝ Լեւոն Սարգիս Թիւթիւնճեանը, եւ կամ Ֆէօտեան, կնոջը ազգանունը Լուսինիա, զաւակները՝ Աննիճա. Սարգիս եւ Ներսէս Թիւթիւնճեաններ եւ կամ Ֆէօտեաններ, որոնք 1922ին Կ. Պոլսէն անցած են Ֆրանսա եւ հաստատուած Փարիզ : Այժմ անոնց մասին ստոյգ լուր ունեցողներէն թախանձապէս կը խնդրուի հաղորդել հետեւեալ հասցէին .— Թոմաս Գ. Թիւթիւնճեան : Ուլիցա «Ադամաս Սլաւով» թիւ 14, Պուրկազ - Պուլկարիա : Կը խնդրուի արտասահմանի բոլոր հայ թերթերէն արտատպելդային :

17rդ տարեկան ցնծութիւն

Կազմակերպուած Հայ Աբիներու Միութեան Փարիզի շրջանի երէցներու, սկաուտներու եւ դայլիկներու կողմէ : Մասնակցութեամբ Փարիզի Հայ Աբեղոյններուն : Տեղի կ'ունենայ կիրակի 7 Մարտ 1948, կէսօրէ վերջ ժամը 2.30ին Salle de la Chimie, 28bis, rue St. Domonique, Paris (7), (métro Invalide կամ Solférino) :

Սկաուտական ճոխ յայտագիր, ներկայացումներ, հայկական պարեր եւ երգեր Արեւոյչներուն կողմէ :

Մուտք 100 — 300 Ֆրանք :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ Սերաստիոյ կէմէրլկի շրջանէն Պուրհան գիւղացի Կարապետ Ծառուկեանը որ այս պատերազմէն առաջ կը գտնուէր Փարիզի շրջակաները : Տեղեկացնել իր հօրեղբօրորդուհւոյն Աբշակ Ծառուկեանի, Dourgouti Gama. 53, Athenes — Grece :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ.— Իզմիրցի Մարի Քէպապճեան կը փնտռէ իր երկու եղբայրները Հայկ Քէպապճեան ոսկերիչ եւ Կիրակոս Քէպապճեան դերձակ, 1923ին կը գտնուէին Փարիզ : Ճանչցողներէն կը խնդրուի իմացնել Աթէնք «Ազատ Օր»ի, Վուլիս 20, Աթէնք :

Երգ ու դէմ
Կիրակի Սապպաթի

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

SALLE GAVEAU, կիրակի 29 Փետր. ժամը 14ին

Կը խնդրուի այս թուականը նկատի առնել :

ԾԱԾՈՒ Է կօշկակարի (Bottier) խանութ մը Լիոնտով, եւ քնակարանով : Մանրամասնութեանց համար դիմել Պ. Chukurianի, 56 rue Genève — Arles sur Rhône :

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

Օր. ՀՈՒՐԻԿ ՃԻՏԷՃԵԱՆ
ԸՆԿ. ԺԻՐԱՑՐ ԴԱՍԱՒՈՐԵԱՆ
Ծնունդ 24 Ամուսնացած Փարիզ

ՅՈՒՇԱՏԵՏ

ՏԱՐՕՆ ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆԻ Հայր. Միութեան ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ այս կիրակի, ժամը 2.30ին, rue du Tage, No. 30, métro Maison Blanche : Կը խնդրուի բոլոր հայրենակիցներէն ներկայ գտնուիլ : Խիստ կարեւոր օրակարգ :

ՊԱՆԵՍ ՔԱՇԱՆԻ Հ. Ց. Դաշնակցութեան «Արծիւ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը, այս չաբաթ երեկոյ «Հրայր» սրահին մէջ, բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է : Սրա – կարգ՝ կոմիտէի ընտրութիւն եւ ուրիշ հարցեր :

ՎԻՆԻ.— Հ. Ց. Դ. Նոր Սերունդի ընդհ. անդամական ժողովը այս ուրբաթ իրիկուն ժամը 9ին, Ակումբին մէջ : Ներկայ ըլլալ անդամատետրով : Կարեւոր օրակարգ : Ներկայութիւնս պարտաւորիչ :

ԼԻՈՆ.— Հ. Ց. Դ. Նոր Սերունդի դասախօսութիւնը Զորեքշաբթի 4 Փետրուար, ժամը 8.30ին, ըլլորոյի սրահը 78bis rue Rabelais : Նիւթ՝ «Հայաստանի համայնավարացումը» : Դասախօս ընկեր Կ. ՄԱՆՈՒԿԵԱՆ : Սիրով կը հրաւիրուին եւ իր ընկերները, կապոյտ Խաչուհիները եւ բոլոր Հայերը անխտիր :

ՄԱՐՍԷԼ ՓՐԱՏՈՑԻ Մայր եկեղեցիի Կրօն. Ընկերակցութեան տարեկան ընդհ. ժողովը տեղի պիտի ունենայ կիրակի օր, 1 Փետրուար 1948, ժամը 15էն, Պատ տիւ Կլոպի սրահին մէջ, 7 Պուլ. ս'Ամբէն : Կը խնդրուի բոլոր անդամներէն ներկայ գտնուիլ :

ՏԱՐԵԿԱՆ ՇՐՋԱ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Լա Սիոթայի Հ. Ց. Դ. Նոր Սերունդի «Հրայր» խումբի կողմէ :

Այս Շաբաթ իրիկուն, 31 Յունուար 1948, մինչեւ առաւօտ : Au Riot Bleu չքեղ սրահին մէջ :

Նուագախումբ Սէն Լուի Ն. Ս. Ժազով :

Մուտքը 40 եւ 60 Ֆրանք :

22 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ, ԿԻՐԱԿԻ ՕՐ ԺԱՄԸ 3ԷՆ ԿԷՍ ԳԻՇԵՐ, Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՒՈՍՏՈՒ ՄԻՒՄԲԻ ՀԱՆԳԷՍ ՄԱՆԿԱՑԻՔ ԿԸ խնդրուի նկատի ունենալ թիւաւորանը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Փարիզի Հայոց եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչութիւնը ընդ. ժողովի կը հրաւիրէ ընկերակցութեան բոլոր անդամները 1 Փետրուար 1948, կիրակի ժամը 2.30ին եկեղեցւոյ խորհրդարանին մէջ, օրակարգ ունենալով եկեղեցւոյ օգական լուսաբար Պ. Յակոբ Ճօրճեանի քահանայական թեկնածուութեան հարցը :

18 Յունուար 1948ի ընդհ. ժողովը մեծամասնութիւն չունեցաւ, կանոնագրի 10րդ յօդուածին համաձայն, այս անգամ ներկաներու թիւը պիտի նկատուի օրինաւոր :

Տէր եւ Տիկին Ա. Փափազեան, Տէր եւ Տիկին Ց. Լաթիֆեան եւ իրենց զաւակը, ինչպէս նաեւ Աշճեան ընտանիքը կը տեղեկացնեն ժահը, յեղ կարճատեւ հիւանդութեան, իրենց մօր, մեծ մօր եւ ազգականին՝

ՏԻԿԻՆ ԱՐՈՒՍԵԱԿ ՓԱՓԱԶԵԱՆԻ

որուն յուղարկաւորութեան արարողութիւնը տեղը ունեցաւ 24 Յունուար, Շաբաթ առաւօտ, Փարիզի Հայոց եկեղեցիին մէջ, ի ներկայութեան իր առանձնաբաժաւոր ազգականներուն : Հանգուցեալին մարմինը ամփոփուեցաւ Փէռ Լաշէզի գերեզմանատունը :

Նախ քան յուղարկաւորութիւնը մասնաւոր մահազդ ուղղակուած ըլլալով, կը խնդրուի ներկայս ընդունիլ իբր այդ :

ՄԱՐՍԷԼ, ԼԱ ՎԻՍԹ.—

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ԳԻՒԼՈՒՆԴԱՆԵԱՆ խումբի կազմութեան տարելիցին առթիւ երեկոյթ պատահանդէսը տեղի կ'ունենայ 21 Փետր. 1948, Շաբաթ իրիկունէ մինչեւ լոյս, երմիթաժէ սրահին մէջ (La Viste) :

Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն, նուագ : Առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացուի ՊԱՇՏՕՆՍ ՄՈՒՄԲԱ է : Կէս գիշերէն յետոյ եւրոպական պարեր Սէն Լուի նուագախումբի ուժգակցութեամբ :

Ապահովել տոմսերը Նոր Սերունդականներէ :

«ՄՇԱԿՈՑԹԻ ՕՐ»Ը ՇԱՒԻԼԻ ՄԷՋ

Տեղւոյն «Բաֆֆի» երիտ. Միութեան կողմէ

15 Փետրուար, կիրակի օր

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Vendredi 30 Janvier 1948 Ուրբաթ 30 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5253-ՆԴՐ ՀՐՈՂԱՆ ԹԻ 862 — ԽՄԲԱԳԻՐ՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ — ԳԻՆ՝ 5 ՖՐ.

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ՉԿԻ'ՅԾ, ԸՆԿԵՐՆԵՐ

Ֆրանսայի զանազան կեդրոններէն մեր ուշադրութիւնը կը հրաւիրեն խլրդայիւ աշխատանքի մը վրայ որուն լծուած են կարգ մը տխրահռչակ «ազգային»ներ՝ մոլորեցնելու համար մեր բարեմիտ հայրենակիցները ու մանաւանդ Դաշնակցութեան կորիւնները :

Մասի վրայ համբուրուղ քանի մը տղորմելի Հայաստանասէրներ, Ֆրանսայի լայնքին ու երկայնքին ման կուգան համայնավար քարոզներ կարդալու, եւ միտք ու սիրտ պղտորելու մտահոգութեամբ :

Ամէն տեղ են անոնք — Մարսէյլ, Լիոն, Վալանս, Սէնթ էթիէն, Տէսին Վիէն կամ ուրիշ ծանօթ ու աւծանօթ վայրեր :

Հրահանգ տտացած են, ի վերուստ, որպէսզի բարեկամութիւն եւ մտերմութիւն մշակեն մասնաւորաբար շարքային Դաշնակցականներու հետ եւ իրենց առուչ - լեզու քարոզներով, կուսակցութեան զեկավար շրջանակներուն դէմ հանեն մեր բարեմիտ ընկերները :

Ընդհանրապէս մեռտասաներորդ ժամուն «կարմրած» մուսետիկներ են այս եպերելի հակադաշնակցականները եւ ընդունակ՝ ամէն անպարկեշտ միջոցի դիմելու — նոյնիսկ նիւթական վարձատրութեան խոստումներ ընելու կուսակցական որոշ պատասխանատուութեան տէր ընկերներուն — որպէսզի զաղտնիք մը կորզեն ու հաղորդեն զայն առ որ անկ է :

Սեղանակից կ'ըլլան Դաշնակցականին ու միասին կը ճնկեն՝ յանուն ռազմավարութեան :

Եւ անշուշտ, յանուն հայրենիքի գերագոյն շահերուն ...

Երբ «գոհը» անծանօթ է իրենց ինքնութեան — եւ կենսագրականին — չեն յայտարարեր թէ որ կազմակերպութեան անդամ են եւ որ հոսանքին անուամբ կը խօսին :

Յաճախ, կը «բամբասեն» Երեւանն ու Մոսկուան եւ կը քննադատեն, օրինակ, ներգաղթի աշխատանքները, դիմացկուն վառահութիւնն ներշնչելու եւ բաներ մը լմնցնելու համար :

Այդ տողերուն մէջ կան այնպիսիներ որոնք չեն քաշուիր օգտագործելու տարիները առաջ, կուսակցական այն կամ այն հաւաքոյթին մէջ հաստատուած ծանօթութիւն մը :

Կը համարձակին նոյնիսկ, ի մէջ այլոց՝ հարցնելու թէ ինչ որոշումներ տրուած են կուսակցական ժողովներու մէջ :

Ուրիշներ, քիչ մը աւելի յանդուգն կամ նըւազ դիւանագէտ, չեն ծածկեր իրենց ինքնութիւնը եւ քաջաբար առաջարկներ կ'ընեն — նոյնիսկ կը սպառնան եթէ պէտք ըլլայ — մինչեւ յանուն Հայաստանասիրութեան :

Մենք շատ լաւ գիտենք թէ մեր շարքային թէ պատասխանատու ընկերները ինչ յեղափոխական դաստիարակութիւն ստացած են տրքան խոհեմ ու ղրջահայեաց են իրենց յարաբերութեանց մէջ :

Գիտենք որ որքան ուշիմ են, զգոնապահ ու կարգապահ, եւ սրճարաններու անկիւնները կամ բարեկամներու երդիքին տակ չէ որ կ'արտայայտուին օրուան հրատապ խնդիրներուն շուրջ :

Եւ սակայն, աւելորդ պիտի չըլլար յանձնարարել մեր Դաշնակցական ընկերներուն — եւ համակիրներուն — որ բացարձակօրէն հեռու մնան ծանօթ կազմակերպութեան մը այդ անճարակ առաքեալներէն, որեւէ մտերմութիւն չմշակեն անոնց հետ եւ մանաւանդ կուսակցական - քաղաքական ոչ մէկ նիւթի շուրջ վէճի չբռնուին անոնց հետ :

Ամէն Դաշնակցական պէտք է յիշէ որ անպարկեշտ ու անբարեխիղճ «Հայաստանասէր»ներ — այլ անուամբ համայնավար գործակալներ, իրենց թիկունքը տուած կարգ մը երեւելիներու, սարքած են իժարշաւ մը մեր կուսակցութեան դէմ :

Մեր պարտականութիւնը պիտի ըլլայ արհամարհել զիրենք, հսկել իրենց բառերուն ու շարժումներուն վրայ ու անխոով շարունակել մեր ճամբան :

Զգո՛յշ, ընկերներ :

Ցխուններուքը տարեկան Դաշնակցութիւնը տակաւին շատ պարտականութիւններ ունի կատարելիք :

Հակառակորդներու քսութիւններն ու սմսեղուկ եղոյթները չեն որ պիտի մթագնէին մեր պայծառատեսութիւնը :

Ճ.

ՕՐԸ ՕՐԻՆ

ԹՈՒՐՔԻՈՑ ՀԵՐԹԱԿԱՆ ՇՆՈՐՀՆԵՐԻՆ

Պոլսահայ թերթերէն կը տեղեկանանք, թէ թուրքերոյ ելմտական գործավարութիւնը իր 1948ի պիւտճէին մէջ հետեւեալ յատկացումները ըրած է :

« Վաղըվի ստորադաս պաշտօնեաներուն՝ 2.555.000 ոսկի, Պալաթի հրէական հիւանդանոցին՝ 15.000, Պալըքլըի յունաց հիւանդանոցին՝ 25 հազար, Հայոց հիւանդանոցին 15.000 ոսկի» :

Ծուզիչ է արդարեւ թուրք ելմտական գործավարութեան այս փափկա-կատ ուշադրութիւնը : Իշչպէս կը տեսնէք, «բարեխնամ կառավարութիւնը» այնքան հոգածու է մեր հիւանդներուն տանդէպ, որ բարեհաճեր է մէկ միլիոն ահատակ-ներու թղթոնէն առնել եւ մեր երեսին նետել տասնըհինգ հազար ԹղԹադրամ՝ իբրեւ հերթական շնորհ :

Առնելու եւ տալու դիտութիւնը Թուրքիա հասցուցած է ամենանրբին կատարելութեան : Մէկ կուտաւ, երբ ապահով է թէ հարիւր պիտի առնէ : Իայց ոչ իսկ տոկոսն է այս 15.000ը այն ահատման հարստութեան, որուն վրայ «քաղաքակրթուած» Թուրքիան իր թաթը դրաւ՝ քաղաքակրթութեան պատիւ բերող ձեւով մը :

Մեր հիւանդները պիտի կրնա՞ն ծամել այն պատառ մը հացը, զոր թուրք ելմտական գործավարութիւնը վեհանձն առատաձեռնութեամբ կը նետէ ահատասիկ անուց ակռային տակ : Կը թուի ինձի, թէ այդ պատառ հացը ծամելու առեն՝ Հայոց հիւանդանոցին աղէտուած քնակիչները պիտի ըսեն «երեք իմաստուն»ներուն պէս. «Մեր կերած հացը աղէկ հաց էր, բայց արիւնի համ ու հոտ ունէր » :

Թուրքերը իրենց գործը դիտցող մարդիկ են : Այսօր 15.000 կուտան իբրեւ նուէր, որպէսզի վաղը 150.000 առնեն իբրեւ «ոնեւտրութեան տուրք» : Կուտան 15.000ը, վասնզի վստահ են, որ վաղը պիտի գան իբրեւ տանտէր նստելու աղէին տանը մէջ, ինչպէս նստեցան բազմահազար ուրիշ տուներու մէջ, անուց տէրերը ղրկելով անյայտ հեռուները ...

Թուրքիոյ վայրիացող ձեռքը նուազ ծանր չէ, քան անոր հարուածող թաթը :

Պիտի չզարմանանք, եթէ Թուրք ելմտական գործավարութիւնը յատկացում մըն ալ ընէ Հայոց գերեզմանատան : Թուրքիոյ համար ընտանի վայրեր են հիւանդանոցները, մանաւանդ գերեզմանոցները, ուր մտնող Հայերը քաղցր յիշատակներ պահած են Թուրք ժողովուրդին ու կառավարութեանէն :

ՏԱՐԱԳԻՐ

ՕԴԱՆԱԻԱՅԻՆ արկած մը պատահեցաւ Քալիֆորնիոյ մէջ երբ խոշոր օդանաւ մը կրակ առնելով վար ինկաւ եւ փշրուեցաւ Ծրէզնոյի մօտերը : Մեռած են 32 հոգի, բոլորն ալ Մեքսիկացի աշխատաւորներ :

ՊՈՒԼԿԱՐԻՈՑ վարչապետը, Կէորկի Տիմիթրով, կը յայտարարէ թէ անցեալները Պալքանեան Դաշնակցութիւն մը պիտի կազմուի մօտ ատենէն : Մոսկուայի «Փրաւտան» խոտորէն կը քննադատէ այդ առաջարկը եւ հրապարակաւ կը յանդիմանէ վարչապետը որուն «յայտարարութիւնը հիմնովին հակառակ է, անցեալ հոկտեմբերին, կոմինֆորմի խորհրդաժողովին տուած որոշումներուն : Մենք չենք տեսներ արուեստական համագործակցութիւն մը. ընդհակառակն, կ'ուզենք որ իւրաքանչիւր երկիր պահէ իր անկախութիւնը՝ շարժման մէջ դնելով իր ժողովրդավար տարրերը, կը դրէ «Փրաւտա» : Լոնտոնի մէջ կը տիրէ այն կարծիքը թէ Մոսկուա համամիտ չէ Տիմիթրովի քաղաքականութեան տրուվհետեւ կ'ուզէ իրեն վերապահել սլաւական ժողովուրդները առաջնորդելու իրաւունքը : Եւեռոյ չուզեր որ Զեխոսլոաքիան եւ Լեհաստանը մաս կազմեն այդպիսի համագործակցութեան մը : «Փրաւտա»յի եզոյթը անդամ մը եւս կը հաստատէ այն տեսակէտը թէ մինչ Մոսկուան է որ տուն կուտայ համայնավարներու այս կամ այն քաղաքականութեան, դիտել կը տրուի Լոնտոնի մէջ :

ԵՐԵՔ ՀԱՅՐԻԿ ՎԱՉՃ ձախողներ ծովամոյն եղան երբ 400 թոնանոց չոգենաւ մը, ծխուն ականի մը զարնուելով, ընկղմեցաւ ներքին ծովու մը մէջ : Ազատուած են միայն 120 հոգի :

ԵԼՄՏԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԻՆԱԳԻԾ ԱՌԱՒԱՒԱՏԱՐ ՀԱՒԱՏԱԳՐԻՐ

Խորհրդարանի ընկերվարական խմբակցութիւնը չորեքշաբթի օր, երկար խորհրդակցութիւններէ ետք, յայտարարեց որ հակառակ է կառավարութեան նոր օրինագծին : Բայց կուսակցութեան ղեկավարները վարչապետին հետ տեսակցելէ ետք, որոշեցին ձեռնպահ չմնալ եւ մասնակցիլ քուէարկութեան նախարարական տագնապի մը առաջքը առնելու համար :

Մեր թերթը մամուլին յանձնուած պահուն տակաւին յայտնի չէր քուէարկութեան արդիւնքը :

Կառավարութիւնը յոյս ունի որ օրինագիծը «պիտի անցնի» չօշափելի մեծամասնութեամբ : Եթէ ընկերվարականները, վերջին պահուն, դարձեալ փոխեն իրենց քաղաքականութիւնը եւ չքուէարկեն ի նպաստ ոսկիի ազատ առեւտուրին, այն ատեն կառավարութիւնը պիտի հրաժարի եւ ելմտական նոր օրինագիծ չեղեալ պիտի նկատուի : Վարչապետը այս մասին որոշ ազդարարութիւն ըրած է խորհրդարանին :

Ջորեքշաբթի դիշերը ուշ ատեն, դահլիճը երբորդ անդամ ըլլալով ինիտ դումարեց՝ համաձայնութիւն դալու համար ընկերվարականներուն հետ, որոնք, ինչպէս ծանօթ է, դահլիճին կը մասնակցին հինդ նախարարներով : Հաւանական չէ որ կուսակցութեան ղեկավարները՝ կառավարութիւնը տապալելու աստիճան առաջ տանին իրենց պայքարը նոր առաջարկներուն դէմ :

Ընկերվարական շրջանակներուն մէջ միշտ կը տիրէ այն համոզումը թէ թղթադրամին արժեզրկումը ինչպէս նաեւ ոսկիին ազատ շուկան, վնասակար է միջին դասակարգին համար : Բայց եւ այնպէս, ոչ մէկ տրամադրութիւն կայ կուսակցութեան շարքերուն մէջ, համայնավարներուն կամ Կոլականներուն միանալու եւ Շումանի կառավարութիւնը տապալելով քաղաքական ծանր տագնապ մը ստեղծելու :

Եթէ, ծայրայեղ պարագային, կառավարութիւնը հրաժարի, հետեւանքը պիտի ըլլայ խորհրդարանին լուծումը : Նոր ընտրութիւններ պիտի կատարուին եւ ամենաանհաւանական չէ որ զօրավարը չհաղորդակցի ջախջախիչ մեծամասնութիւնը :

Ընկերվարականներու խորհրդարանական խմբակցութիւնը 35ի դէմ 46 քուէով որոշեց ձեռնպահ մնալ օրինագծին առաջին յօդուածին համար դէպ որ կը տրամադրէ քսանըհինգ առ հարիւր «տուդանքի» ենթարկել անոնք որ երեսուն պիտի հանեն իրենց մէկ կողմ դրած ոսկիներն ու օտար թղթադրամները : Ուրիշ խօսքով, երբ մէկը պետական դրամատուն ծախէ իր ոսկիները, այս վերջինը իրաւունք պիտի ունենայ 25 առ հարիւրը վար դնելու : Այս որոշումը ի զօրու պիտի մնայ մինչեւ յունիս 30, իսկ այդ թուականէն ետք, «տուդանք»ը պիտի դանձուի ամսական մէկ առ հարիւր համեմատութեամբ :

Խմբակցութիւնը բացարձակօրէն դէմ է նաեւ ոսկիի ազատ առեւտուրին (յօդուած 2) : Կրնայ ըլլալ որ այս մասին ձեռնպահ մնան փոխանակ հակառակ քուէ տալու :

Կառավարութիւնը յանձն առած է կարգ մը բարեփոխումներ մացնել իր առաջարկներուն մէջ, քաղաքական ծանրակչիռ տագնապէ մը խուսափելու համար :

★ Փարիզի բրլտանական շրջանակներուն մէջ կ'ըսուի թէ «բացարձակօրէն անհիմն են» այն պնդումները թէ անգլիական կառավարութիւնը — որ չափազանց դժգոհ է Ֆրանսական նոր օրինագիծէն — որոշած է վերաքննել իր հաւանութիւնը՝ Սարր տնտեսապէս Ֆրանսայի կցելու մասին տախակս տրուած որոշումին : Այս տեսակ վրկժխնդիր քաղաքականութիւն մը, Անգլիոյ կողմէ, բացարձակօրէն անհաւանական է, դիտել կը տրուի իրաւեկ շրջանակներէն : Միւս կողմէ, սակայն, բրիտանական կառավարութիւնը քայլեր պիտի առնէ որպէսզի սթեռլինը անկում չկրէ օտար չուկաներու մէջ :

★ Աշխատանքի Դաշնակցութիւնն ալ իր կարգին բանաձեւ անցուց ոսկիի ազատ առեւտուրի առաջարկին դէմ :

★ Օտար սակարաններուն մէջ Ֆրանքին արժեզրկումը կը նկատուի չատ «անստոյգ» : Նիւ Եորքի մէջ տոլարը կ'արժէ 300 Ֆրանք ինչպէս առաջ : Պելճիքա, առայժմ նպատակ չունի արժեզրկելու Պելկան : Հոլանտայն կը հերքուին այն տարածախութիւնները թէ կուտուտունը պիտի արժեզրկուի : Երկու երկիրներուն մէջ ալ, Ֆրանքին արժեզրկումը դժգոհութիւն պատճառած է քանի որ դրամի չափով պիտի նուազին իրենց արտադումները :

Ֆրանսական կառավարութիւնը կը հաւատայ, սակայն, որ եղած կարգադրութիւնը առժամեայ բնոյթ ունի եւ մօտ ատենէն հիմնական քայլեր պիտի առնուին Ֆրանքին կայունութեան համար :

★ Ամերիկայի արտաքին նախարարը յայտարարեց չորեքշաբթի օր թէ Ֆրանքին արժեզրկու-

(Մնացեալը տարուակուրեցին կարդալ Դ. էջ)

Հ. Թումանյանի եւ իր շրջապատը

Ս. Ի. ԱՐՏԱՀԱՆՅԱՆ

Ֆ.

Թումանյանի հետ ես առաջին անգամ հանդիպել եմ 1902 թվականի ամռանը Ալավերդիում։ Ես այդ ժամանակ ուսանող էի, նա՝ արդեն հայտնի գրող։ Ալավերդիում ամառանոց էր վարձել Ռոստոմի ընտանիքը, որի հետ ես ծանոթ էի։ Ռոստոմի տունը գտնվում էր Ալավերդու ձորի ամենագեղեցիկ տեղում, ձորի ստորին մասում։ Ռոստոմի տան մոտ էր նաև Թումանյանի ամառանոցը։ Ռոստոմի տանը ես հանդիպեցի Թումանյանի հետ։ Ռոստոմի տանը հավաքվել էին նաև Թումանյանի ընտանիքի անդամները։ Ես ինձ ներկայացրի Թումանյանին։ Նա ինձ ընդունեց շատ ջերմ։ Ես նրան ասացի, որ ես ուսանող եմ, ուզում եմ գրականությամբ զբաղվել, և խնդրեցի, որ ինձ ընդունի իր աշակերտության մեջ։ Թումանյանը ինձ ասաց, որ ինքը ոչ մի աշակերտ չունի, որ ինքն էլ ինքնուս է եղել, և որ ինձ խորհուրդ է տալիս ինքնուս մնալ։ Ես ասացի, որ ինքնուս եղել եմ, բայց ուզում եմ ինձ ավելի կատարելագործել։ Թումանյանը ինձ ասաց, որ ինքնուս մնալն ավելի լավ է։ Ես ասացի, որ ուզում եմ գրականությամբ զբաղվել, և խնդրեցի, որ ինձ խորհուրդ տա, թե ինչ կարդամ։ Թումանյանը ինձ ասաց, որ ինքը ոչ մի խորհուրդ չի տալիս, որ ես ինքս պետք է կարդամ այն, ինչ ինձ դուր է գալիս։ Ես ասացի, որ ինձ դուր է գալիս Ալեքսանդր Շիրվանզադեն։ Թումանյանը ինձ ասաց, որ Շիրվանզադեն լավ է, և որ ես պետք է կարդամ Շիրվանզադեն։

Ռոստոմի տանը ես հանդիպեցի նաև Թումանյանի ընտանիքի անդամներին։ Ես ծանոթացա Թումանյանի կնոջ՝ Օրդանի հետ։ Օրդանին ես առաջին անգամ տեսա Ալավերդիում։ Նա ինձ շատ հաճելի կին թվաց։ Ես ծանոթացա նաև Թումանյանի մեծ աղջկա՝ Նվարդի հետ։ Նվարդը այդ ժամանակ 12 տարեկան էր։ Նա ինձ շատ խելոք աղջիկ թվաց։ Ես ծանոթացա նաև Թումանյանի փոքր աղջկա՝ Անուշի հետ։ Անուշը այդ ժամանակ 5 տարեկան էր։ Նա ինձ շատ սիրուն աղջիկ թվաց։ Ես ծանոթացա նաև Թումանյանի կրտսեր որդու՝ Արտոյի հետ։ Արտոն այդ ժամանակ 3 տարեկան էր։ Նա ինձ շատ սիրուն տղա թվաց։

Ռոստոմի տանը ես հանդիպեցի նաև Թումանյանի քրոջ՝ Մարիամի հետ։ Մարիամը ինձ շատ խելոք կին թվաց։ Ես ծանոթացա նաև Թումանյանի մորաքրոջ՝ Մարիամ տատի հետ։ Մարիամ տատը ինձ շատ խելոք կին թվաց։

Ռոստոմի տանը ես հանդիպեցի

ՋԱՑՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

կեանքը Կրմնոպի սէջ

Ութը տասը օր առաջ կրմնոպլ այցելեց կաթ. պատուիրակ Սիւրմէեան Արք.։

Սրբազանը արդար դառնութեամբ ցաւ յայտնեց որ Կրմնոպլի պէս գաղութ մը՝ չունի իր սեփական եկեղեցին։

Երկու տարի առաջ, եկեղեցական նախորդ վարչութիւնը՝ ամէն ջանք թափեց ու կրցաւ մէկ սեղանի չուրջ հաւաքել, գաղութիս բոլոր հոսանքներու ներկայացուցիչները՝ որպէսզի ձեռք ձեռքի տուած կարենան չէնք մը գնել որ յարմարութիւն ունենայ եկեղեցիի եւ մանկ. տեսնը դպրոցի։

Եկեղեցական ազգային մխիթեան ծրագրին չուրջ, սկզբունքով համաձայնութիւն գոյացած էր արդէն, եւ կը մնար միայն յարմար չէնքի մը ընտրութիւնը։

Վերջին պահուն, սակայն, դառնութեան բան դէմ մարդիկ, որոնք անկախ, տրուած որոշումէն դային վարձեցին չէնք մը՝ (երէկ չէնք սխալիր 60 հազար Ֆրանք տուին որպէս մուտքի իրաւունք, եւ ահագին ալ ծախքեր ըրին նորոգութեան եւ կահաւորումի համար) որ այսօր, իրենք իսկ կ'ամչնան։

Բայց երէկ Կրմնոպլը առ այժմ եկեղեցի չունի, ունի սակայն իր սեփական դպրոցը, չնորհիւ հայ կիներու այն համեստ կազմակերպութեան՝ որուն հայրենիքին նուէր ըրած բաման՝ իր եղեսին նեաեւու անբարեկրթութիւնն ունեցան մարդիկ՝ որոնք քիչ մը հայերէն սորվելու համար, եթէ համեստ ըլլային, կրնային անպայման օգտուիլ Կ. Պոլսի հայերէնի դասընթացքներէն։

Շատ ափսոս, որ սրբազանը Կրմնոպլ չէր Յունուար 11ի կիրակին, տեսնելու համար, այն տգնաչան աշխատանքի ընդհանուր պատկերը՝ որ կը տարուի գաղութիս մէջ Կապոյտ Աչի Տիկիններու նախաձեռնութեամբ, հանդէպ անդունդի տոհմային դաստիարակութեան համար։

Մենք վստահ ենք, որ ներկայ ծնողքներէն աւելի՝ սրբազանը, պիտի ուրախանար, պիտի ոգեւորուէր, եւ իր օրհնութիւնը պիտի տար, այն աշխատասէր, յաճախ հասարակ գործաւորուհի, տիկիններուն, որոնք իրենց չունեցած դրամէն՝ դրամ եւ ժամանակէն՝ ժամանակ կը ստեղծեն, տղայոց հայրենիքէն հեռու, օտար ափերու վրայ, մեր փոքրիկները Հայ մնան եւ հայրենիքի սիրով մեծնան։ Եւ այս աշխատանքը՝ միայն այսօր չէ, միայն Կրմնոպլի ալ յատուկ չէ։ Քանասրիէ ի վեր, քիչ մը ամէն տեղ, Կ. Պոլսէն ունեցած է իր գործոցները։ Մեծ է թիւը անոնց որոնք գնահատած են իր գործը, եւ իրեն վստահած իրենց զաւակները։ Այսօր անոնք հայերէն կը խօսին ու կը կարդան եւ քիչ շատ ծանօթ են մեր ազգային պատմութեան։

×

Յունուար 11ին, Կ. Պոլսէհիները» եռուղեռի մէջ են։ Շարթէ մը ի վեր, յայտարարութիւններ եւ հրաւիրագիրներ ղրկուած են ամէն կողմ։ Նախորդ տարիներու խճողումին տեղի չտալու համար, իրենց ծննդեան, խնջոյք պարահանդէսին համար, վարձած են ամէնամեծ սրահներէն մէկը։

Ժամանակին առաջ, բոլոր աթոռները դրաւուած են արդէն եւ կարեւոր թիւ մը ոտքի վիճակի։ Շուարած է կարգադիր յանձնախումբը տեսնելով իրարու հետեւ հասնող բազմութիւնը։ Բարեբախտաբար, հայրենակիցներ որոնք եկած են ինքնաշարժով, սիրով յօժարեցան, երթալ նոր աթոռներ բերելու։ Ժամը 4ին ամէն ոք իր տեղն ունի, բացի Կ. Պոլսէհիներէն, որոնք իրենց տեղերը տուած են եկող հիւրերուն։

Հանդէսը բացուեցաւ ու բեմին վրայ են Կ. Պոլսի երեք դպրոցներու աշակերտութիւնը (8 — 15 տարեկաններ միայն) ու ամբողջ երկուքուկէս ժամ, օրուան փոքրիկ դերակատարները ծափերը խլեցին ներկաներէն — խմբերգ, երգախառն տրամախօսութիւն, արտասանութիւն իրարու յաջորդեցին։ Պարեցին սանուհիներու երկրորդ, եւ երրորդ խումբերը։

Փոքրիկ դերակատարներու կողմէ տրուած այս գեղարուեստական բաժինը, կրկնակի հաճոյք պատճառեց ծնողքներուն, որովհետեւ ձայնասփիւռի միջոցաւ լսելի եղաւ մանկական ամէնաթոյլ թոթովանքն իսկ։

Երեխաները, ուրախութեան բացագանչութիւններով եւ «Այսօր մեղի կաղանդ է կապոյտ Աչը մեզ պիտի կաղանդէ» խմբերգով է որ կ'ընդունին կաղանդ պապան, որ բեռնաւորուած է եւ նուէրներ ունի բոլորին համար։

Մանուկներու բաժնէն վերջ, ընդհանուր խանդավառութեան մէջ է որ կը չարունակուի երեկոյթը՝ երգ, կովկասեան պարեր բուռն ծափերով է որ կ'ողջունուին։ Սրահին մէջտեղ չուրջ պար են բռնած մեր երիտասարդ աղջիկները, ինչ դեղեցիկ պատկեր... որքան չնորհ ու համաչափութիւն կայ, իրենց չարժումներուն մէջ։

Արդարեւ ինչքան ամօթիած սկրտ, քնքուշ պատասխաններ քօղարկուած ձեւով կ'արտայայտեն մեր պարերգները եւ մեր աղջիկները՝ դիտեն իրենց քաջանչիւր բառի իմաստը տալ իրենց հեզաճկուն նազանքներով։

Մեր չուրջը կը նայինք, ինչ ոգեւորիչ երեւոյթ, որահր լեցուն է երիտասարդներով, եւ վսեմ որ երկու, երեք տարի առաջ, նոյն երիտասարդութիւնը՝ ուս կը թօթուէր, երբ հայկական հանդէսի մասին խօսք կ'ըլլար իրենց։ Այսօր, իրենք են որ սրահէն մեկնելէ առաջ կը հարցնեն մեղի, թէ ե՞րբ պիտի ունենանք յաջորդ հանդէսը։

Ճոխ է «պուֆէն», մեծ մասը պատրաստուած Աչուհիներու ձեռքով։ Կէս գիշերը չատոնց անցած է, եւ ներկաները դեռ չեն ուզեր մեկնիլ։ Յոգնած են մեր ընկերուհիները, բայց դոհ են եւ գաւարթ, որովհետեւ անգամ մը եւս ժողովուրդը սիրայօժար եկաւ եւ քաջալերեց գիրենք ոչ միայն բարոյապէս, այլ նաեւ նիւթապէս։

Հանդէսին արդիւնքը — 56 հազար մուտք։

Ահա այսպէս, ունենալով ողջմիտ հայ հասարակութեան նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը մեղի գօրաւիղ, մենք պիտի չարունակենք գործել։ Մեր կարգախօսն է — «Յօսքը՝ առանց գործի մեռած է» այս է մեր հասկցած հայրենասիրութիւնը։ Աչխատիլ ու տքնիլ թէեւ հայրենիքէն դուրս, բայց միշտ հայրենիքին համար եւ հայրենիքին հետ։ — Ա. Ս.

Յ. Գ.— Ֆրանսացի կենդրոնական կիներու օճաղատի հանդէսին, այս տարի եւս տարինք մեր մասնակցութիւնը։ Այս առթիւ, անգամ մը եւս, ոչ միայն բերանացի այլ նաեւ մամուլով մեր աղջնակներու ազգային տարազով պարերու մասին եղած գնահատանքի ջերմ արտայայտութիւններ։

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ Հ. Յ. Դ., Կապոյտ Աչի եւ գանադան կազմակերպութեանց դաւառի կոմիտէներէն եւ մարմիններէն որ ժողովներու եւ հանդէսներու ազգերը խմբագրատուն հասցնեն Թուականէն առնուազն երեք օր առաջ։

ՋԱՑՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

կեանքը Կրմնոպի սէջ

Ութը տասը օր առաջ կրմնոպլ այցելեց կաթ. պատուիրակ Սիւրմէեան Արք.։

Սրբազանը արդար դառնութեամբ ցաւ յայտնեց որ Կրմնոպլի պէս գաղութ մը՝ չունի իր սեփական եկեղեցին։

Երկու տարի առաջ, եկեղեցական նախորդ վարչութիւնը՝ ամէն ջանք թափեց ու կրցաւ մէկ սեղանի չուրջ հաւաքել, գաղութիս բոլոր հոսանքներու ներկայացուցիչները՝ որպէսզի ձեռք ձեռքի տուած կարենան չէնք մը գնել որ յարմարութիւն ունենայ եկեղեցիի եւ մանկ. տեսնը դպրոցի։

Եկեղեցական ազգային մխիթեան ծրագրին չուրջ, սկզբունքով համաձայնութիւն գոյացած էր արդէն, եւ կը մնար միայն յարմար չէնքի մը ընտրութիւնը։

Վերջին պահուն, սակայն, դառնութեան բան դէմ մարդիկ, որոնք անկախ, տրուած որոշումէն դային վարձեցին չէնք մը՝ (երէկ չէնք սխալիր 60 հազար Ֆրանք տուին որպէս մուտքի իրաւունք, եւ ահագին ալ ծախքեր ըրին նորոգութեան եւ կահաւորումի համար) որ այսօր, իրենք իսկ կ'ամչնան։

Բայց երէկ Կրմնոպլը առ այժմ եկեղեցի չունի, ունի սակայն իր սեփական դպրոցը, չնորհիւ հայ կիներու այն համեստ կազմակերպութեան՝ որուն հայրենիքին նուէր ըրած բաման՝ իր եղեսին նեաեւու անբարեկրթութիւնն ունեցան մարդիկ՝ որոնք քիչ մը հայերէն սորվելու համար, եթէ համեստ ըլլային, կրնային անպայման օգտուիլ Կ. Պոլսի հայերէնի դասընթացքներէն։

Շատ ափսոս, որ սրբազանը Կրմնոպլ չէր Յունուար 11ի կիրակին, տեսնելու համար, այն տգնաչան աշխատանքի ընդհանուր պատկերը՝ որ կը տարուի գաղութիս մէջ Կապոյտ Աչի Տիկիններու նախաձեռնութեամբ, հանդէսի տոհմային դաստիարակութեան համար։

Մենք վստահ ենք, որ ներկայ ծնողքներէն աւելի՝ սրբազանը, պիտի ուրախանար, պիտի ոգեւորուէր, եւ իր օրհնութիւնը պիտի տար, այն աշխատասէր, յաճախ հասարակ գործաւորուհի, տիկիններուն, որոնք իրենց չունեցած դրամէն՝ դրամ եւ ժամանակէն՝ ժամանակ կը ստեղծեն, տղայոց հայրենիքէն հեռու, օտար ափերու վրայ, մեր փոքրիկները Հայ մնան եւ հայրենիքի սիրով մեծնան։ Եւ այս աշխատանքը՝ միայն այսօր չէ, միայն Կրմնոպլի ալ յատուկ չէ։ Քանասրիէ ի վեր, քիչ մը ամէն տեղ, Կ. Պոլսէն ունեցած է իր գործոցները։ Մեծ է թիւը անոնց որոնք գնահատած են իր գործը, եւ իրեն վստահած իրենց զաւակները։ Այսօր անոնք հայերէն կը խօսին ու կը կարդան եւ քիչ շատ ծանօթ են մեր ազգային պատմութեան։

×

Յունուար 11ին, Կ. Պոլսէհիները» եռուղեռի մէջ են։ Շարթէ մը ի վեր, յայտարարութիւններ եւ հրաւիրագիրներ ղրկուած են ամէն կողմ։ Նախորդ տարիներու խճողումին տեղի չտալու համար, իրենց ծննդեան, խնջոյք պարահանդէսին համար, վարձած են ամէնամեծ սրահներէն մէկը։

Ժամանակին առաջ, բոլոր աթոռները դրաւուած են արդէն եւ կարեւոր թիւ մը ոտքի վիճակի։ Շուարած է կարգադիր յանձնախումբը տեսնելով իրարու հետեւ հասնող բազմութիւնը։ Բարեբախտաբար, հայրենակիցներ որոնք եկած են ինքնաշարժով, սիրով յօժարեցան, երթալ նոր աթոռներ բերելու։ Ժամը 4ին ամէն ոք իր տեղն ունի, բացի Կ. Պոլսէհիներէն, որոնք իրենց տեղերը տուած են եկող հիւրերուն։

Հանդէսը բացուեցաւ ու բեմին վրայ են Կ. Պոլսի երեք դպրոցներու աշակերտութիւնը (8 — 15 տարեկաններ միայն) ու ամբողջ երկուքուկէս ժամ, օրուան փոքրիկ դերակատարները ծափերը խլեցին ներկաներէն — խմբերգ, երգախառն տրամախօսութիւն, արտասանութիւն իրարու յաջորդեցին։ Պարեցին սանուհիներու երկրորդ, եւ երրորդ խումբերը։

Փոքրիկ դերակատարներու կողմէ տրուած այս գեղարուեստական բաժինը, կրկնակի հաճոյք պատճառեց ծնողքներուն, որովհետեւ ձայնասփիւռի միջոցաւ լսելի եղաւ մանկական ամէնաթոյլ թոթովանքն իսկ։

Երեխաները, ուրախութեան բացագանչութիւններով եւ «Այսօր մեղի կաղանդ է կապոյտ Աչը մեզ պիտի կաղանդէ» խմբերգով է որ կ'ընդունին կաղանդ պապան, որ բեռնաւորուած է եւ նուէրներ ունի բոլորին համար։

Մանուկներու բաժնէն վերջ, ընդհանուր խանդավառութեան մէջ է որ կը չարունակուի երեկոյթը՝ երգ, կովկասեան պարեր բուռն ծափերով է որ կ'ողջունուին։ Սրահին մէջտեղ չուրջ պար են բռնած մեր երիտասարդ աղջիկները, ինչ դեղեցիկ պատկեր... որքան չնորհ ու համաչափութիւն կայ, իրենց չարժումներուն մէջ։

Արդարեւ ինչքան ամօթիած սկրտ, քնքուշ պատասխաններ քօղարկուած ձեւով կ'արտայայտեն մեր պարերգները եւ մեր աղջիկները՝ դիտեն իրենց քաջանչիւր բառի իմաստը տալ իրենց հեզաճկուն նազանքներով։

Մեր չուրջը կը նայինք, ինչ ոգեւորիչ երեւոյթ, որահր լեցուն է երիտասարդներով, եւ վսեմ որ երկու, երեք տարի առաջ, նոյն երիտասարդութիւնը՝ ուս կը թօթուէր, երբ հայկական հանդէսի մասին խօսք կ'ըլլար իրենց։ Այսօր, իրենք են որ սրահէն մեկնելէ առաջ կը հարցնեն մեղի, թէ ե՞րբ պիտի ունենանք յաջորդ հանդէսը։

Ճոխ է «պուֆէն», մեծ մասը պատրաստուած Աչուհիներու ձեռքով։ Կէս գիշերը չատոնց անցած է, եւ ներկաները դեռ չեն ուզեր մեկնիլ։ Յոգնած են մեր ընկերուհիները, բայց դոհ են եւ գաւարթ, որովհետեւ անգամ մը եւս ժողովուրդը սիրայօժար եկաւ եւ քաջալերեց գիրենք ոչ միայն բարոյապէս, այլ նաեւ նիւթապէս։

Հանդէսին արդիւնքը — 56 հազար մուտք։

Ահա այսպէս, ունենալով ողջմիտ հայ հասարակութեան նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը մեղի գօրաւիղ, մենք պիտի չարունակենք գործել։ Մեր կարգախօսն է — «Յօսքը՝ առանց գործի մեռած է» այս է մեր հասկցած հայրենասիրութիւնը։ Աչխատիլ ու տքնիլ թէեւ հայրենիքէն դուրս, բայց միշտ հայրենիքին համար եւ հայրենիքին հետ։ — Ա. Ս.

Յ. Գ.— Ֆրանսացի կենդրոնական կիներու օճաղատի հանդէսին, այս տարի եւս տարինք մեր մասնակցութիւնը։ Այս առթիւ, անգամ մը եւս, ոչ միայն բերանացի այլ նաեւ մամուլով մեր աղջնակներու ազգային տարազով պարերու մասին եղած գնահատանքի ջերմ արտայայտութիւններ։

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ Հ. Յ. Դ., Կապոյտ Աչի եւ գանադան կազմակերպութեանց դաւառի կոմիտէներէն եւ մարմիններէն որ ժողովներու եւ հանդէսներու ազգերը խմբագրատուն հասցնեն Թուականէն առնուազն երեք օր առաջ։

«ՅԱՌԱՋԻ» ԹԵՐԹՕՆԸ

ԼՍԱ ԵՒ ՀԱՄԱՏ

(ԽՈՐՀՐԴԱՎԷՊ)

Բ. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԴՁՐՋ

Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

Բայց անոնք աչխարհի դեղեցկութիւններէն հրապուրուած, հեչտութեան ալիքներուն մէջ լողացին։ Աստղիկ, եւ Լիտա... Զուզուեցան իգանոյչներու հետ եւ եղան սատանաներ։

Երբ Եսայի վերջացուց սատանայապատումը, կարծեց տեսնել մութին մէջ մերկուհի մը որ կը պարէր կատաղօրէն, սատանաներու պուչերուն մէջ պատաւանդուած։ Տաք հոսանք մը փշաքաղեց իր մարմինը։ Խոտանքի կակուղ ասեղներ դպան իր թուլցած չիղերուն եւ դնդերներուն ծայրին։ Փակեց անմիջապէս աչքերը, այդ լուրջ պատկերին առջեւ ու մրմնջեց։

— *Դիչերը խաւար է, խաւարը դիչեր, սատանան մարդ է ու մարդը՝ սատանայ։*

Երբ աչքերը ծանրացան քնարեր դայնուեցան մը տակ ու եղջերը սկսաւ իր կախարդահնչ պարադայրը չարժել, բանալ ու գոցել, յանկարծ վարագոյրը չարժել, բանալ ու գոցել, յանկարծ հիւդակին դուռը կամաց մը բացուեցաւ, մէկը պատատոդի սպրդեցաւ ներս ու իր ձեռքերէն բռնած, քաչեց դուրս։ Զարմանալի բան... երբեք չընդդիմացաւ, ընդհակառակը, հլու եւ հնազանդ դառնուկի մը պէս հետեւեցաւ անոր։

Սկսան քալել միասին։

Քարոնի նաւակը կը սպասէր Նեղոսի ափին, թեւերը չարժելով։ Անցան ջրհորը աղօթաբուխ, վրանաքաղաքը, պահակատան վանքերը, ու վերջապէս հասան ճգնաւորին արշնամոյն քարայրը, ուր կը տիրէր մեռելային լռութիւն...։ Շրջապատ բռնած էր դիակի մը հոտը, որուն գարշահոտ ծանրութենէն, խաւարը չոքեր էր գետին, քիթերը բռնած։ Քանի մը քայլ՝ քարանձաւի սեմէն ներս... սարսռազդեցիկ պատկեր...։ Ճըգնաստրը՝ Գեռնամած, աղօթապիրքը ձեռքէն ինկած ու մահը ղրկած։

— *Թչուառական վիժուկ, բացագանչեց սրտմտած, կը կարծես մահը վայելել, երբ չես վայելած կեանքը...։*

Առաջնորդը թեւէն բռնած, հեռացուց անմիջապէս։

Սկիւթ, Հարոց վանք...։ Անհաճոյ ալիք մը սկսաւ վոթորիկներ ցանել դէմքին վրայ։ Աչքերը խոժոռեցան, քիթն ու բերանը ծռմռեց, նահանջի քայլեր առնել փորձեց ընդվզած։ Բայց ուչ էր...։ Առաջնորդը մէջքէն բանալիներու որցակ մը հաներ, դուռը բացեր ու ղինքը ներս հրեր էր արդէն։ Հիմա, դէմ յանդիման կը գտնուէր իրեն ծանօթ եկեղեցիին, ուր հեւալոյս կանթեղի մը ճոխտ բիբերը կը բացուէին ու կը գոցուէին։

Կեանքը երբեք այսքան չէր մօտեցուցած դինք, , տգիներու փսփսուքին ու անոնց Կապարեայ ճնշումին։ Այնպէս թուեցաւ իրեն, որ վտանգին ստուերը, չուքին չուքը երկունքի բռնուեր ըլլկեան լրագրողն բացատրում է՝

— « Անոնց ընտրութեան մէջ հիմնական հակրութիւններ չկան։ Թուրքերը ամէնէն պաղ մակրութիւններ չկան։ Թուրքերը ամէնէն անդադար բախտախաղ խաղացողներէն են անդութ պալքանեանհներու մէջ։

Այդ բոլորից յետոյ, իմաստուն լինելու կարիք չկայ եզրակացնելու համար, որ թուրք ամերիկեան բարեկամութիւնը Թուրքերի համար, միայն այնքան է հարկաւոր, որքան որ նրանք առ այժմ ստանում են ամերիկեան նիւթական օգնութիւնը։ Այդ օգնութեան դադարման դէպքում, կամ միջազգային կացութեան այլ կերպ դասաւորման ժամանակ, թուրք միջազգային հոմանուհին միշտ պատրաստ է նորից նետուելու մի ուրիչի գիրկը, նորից իր նոր փեսացուին երդուելու իր անկաչառ սիրոյ եւ յարատեւ հաւատարմութեան համար ...

Առածն ասում է՝

— Սապատաւորին միայն գերեզմանն է ուղղում ...

Ս. ԱՐԱՔՍ

մը որեւէ կերպով պիտի չազդէ Մարշըլի ծրագրին դործադրութեան վրայ :

★ *Զորեքշաբթի դիշեր ուշ ատեն, կառավարութիւնը մանուսւոր հրամանագրով որոշեց հրապարակէն քաշել 5000 ֆրանքնոց թղթադրամները որոնք պէտք է ներկայացուին դրամատուներուն՝ փոխանակութեան համար :*

ՎՐԻՊԱԿ.— Մեր երէկուան թիւին մէջ մէկ եւ կէս սթերլինները դին յայտարարուած էր 17726 եւ 8630 ֆրանք: Այս թուանշանները պէտք է ըլլան 1726 եւ 863 :

ՓՈՂ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՐԱԳի վարչապետը Սայիտ Սալիհ Ճապէր որ հրաժարեցաւ այս չաբթու անդլեւիրագետ դաշնագրին ստորագրութեան պատճառաւ, Պաղտատէն հեռացած է՝ անձնասէր ուղղութեամբ: Կ'ըսուի թէ գացած է իրեն բարեկամ ցեղախումբերու չրջանները: Պաղտատի մէջ մեծ դոհունակութիւն տեղծած է կառավարութեան հրաժարումը: 300 հազար հոգի տողանցք կը կատարէին մայրաքաղաքին պողոտաներուն վրայ չորեքշաբթի օր :

Լեհական գինուորական դատարանը սկսաւ դատել 12 լեհեր որոնք արբանեակներ կը նկատուին նախկին վարչապետ եւ գիւղացիական կուսակցութեան դեկավար Միխոլայչիկի որ, ինչպէս ծանօթ է, երկրէն հեռացաւ չաբաթներ առաջ, դաղտնի միջոցներով: Ամբաստանեալները մեղադրուած են թէ լրտեսութիւն կը կատարէին օտար պետութեան մը հաչուոյն :

Բրիտանական կառավարութիւնը կը յայտարարէ թէ բոլորովին անհիմն է լեհական կառավարութեան ամբաստանութիւնը թէ Սաքսոնիոյ (բրիտանական գօտի) առժամեայ կառավարիչը պատերազմական ոճրագործ մըն է: Բրիտանական իշխանութիւնները համոզուած են որ յիշեալը անմեղ է եւ դինքը վարչավայի կառավարութեան յանձնելու պէտք չկայ :

ԱՒԻՆԻԻՆ կը տեղեկացնէ թէ ատոմական թիւնը անակնկալ «այդելութիւն» մը տալով մայրաքաղաքին բոլոր դրամաճառներուն, դրաւեց համայնավար ամսաթերթի մը բոլոր օրինակները, ինչպէս նաեւ բազմաթիւ հատորներ որոնք համայնավար քարոզութեան կը ծառայէին :

Քանի Ամերիկացի պինուրականներ այս չաբթու «ճակատ» պիտի մեկնին՝ դործադուլեանց հետեւելու համար: Ապտամբները նոր ուժեր համախմբած են Քոնիցայի դիմացը :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ.— Հայոց Փարիզի եկեղեցին 1 Փետրուար 1948, Տէր եւ Տիկին Իւթիւճեանին - րու հոգեհանգստեան արարողութեան պիտի նախագահէ Ա.Բար. արք. Սիւրմէեան եւ պիտի մասնակցին Օր. Իրիս Պիւլպիւլեան եւ Պուքրէյի Օ - փերայէն Պ. Կ. Սապըլլեան :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇՐՋԱԳ ՅԵՐԵԿՈՅԹ

Նախաձեռնութեամբ՝ Սեբաստիոյ Նահանգային Միութեան, վաստակաւոր դերասան՝ ՏՐԴԱՏ ՆՇԱՆԵԱՆի, մասնակցութեամբ Փարիզի հայ բեմի լաւագոյն ուժերուն, 8 Փետրուար 1948, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Մաւսոլէյն Պէլճըլօի չքեղ թատրոնին մէջ, 28bis, rue St. Dominique, métro Invalides:

Առաջին անդամ ըլլալով կը ներկայացնէ հանճարեղ ողբերգու Վ. Շէյքսփիրի

ԱՐՓԱՅ ԼԻՐ

Պատմական տուամ 6 արար եւ 2 պատկեր, թարգմ. եւ բեմադրութիւն Տ. Նշանեանի :

Տոմսերու դիները, 100էն 400 ֆրանք, կը ծախուին հայկական բոլոր դրատուները, ճաշարանները, Սէբ. Նահ. Միութեան կեդրոնին եւ մանուճիւղերուն մօտ: Հարցնել տասը պիտի յատկացուի Սեբ. Նահանգ. Միութեան ներքազթի Ֆոնտին: Սրահին չերմութիւնը ապահովուած է: Փնտռել յայտագիրը :

ՄԱՐՍԷՅԼ , ԼԱ ՎԻՍԹ.—

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ԳԻՒԼԱՆԴԱՆԵԱՆ խումբի կազմութեան տարելիցին առթիւ երեկոյթ պարահանդէսը տեղի կ'ունենայ 21 Փետր. 1948, Շաբաթ իրիկունէ մինչեւ լոյս, էրմիթաժի սրահին մէջ (La Viste):

Բանախօսութիւն, երգ , արտասանութիւն , նուագ : Առաջին անդամ ըլլալով պիտի ներկայացուի ՊԱՇՏՕՆՆ ԽՈՒՄԲԱԼ է: Կէս դիշերին յատուկ եւրոպական պարեր Սէն Լուի նուագախումբին մասնակցութեամբ :

Ապահովել տոմսերը Նոր Սերունդականներէ :

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ֆր. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսին, որ տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24, Hôtel Continental իջեւեղ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde :

Նուագախումբ ՖԼՈՒՆԱՆ ՊՈՒԻԶՕՆ : Գեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Պուլվար Օսմոյի Ֆ. Հ. Կ. Խաչը, Մանուկներու Օրը պիտի տօնէ Փետրուար 1ին, կիրակի կէս օրէ վերջ ժամը 3ին, տեղւոյն եկեղեցիին մէջ, կը հրաւիրուին թաղին բոլոր մանուկները իրենց ծնողքներով միասին ինչպէս նաեւ բարեկամ բոլոր կազմակերպութիւնները որ խրախուսեն մեր մանուկները: Մրգեղէնի ծրարներ պիտի բաժնուին մինչեւ տասը տարեկան մանուկներուն :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՐՋԱԳ ՅԵՐԵԿՈՅԹ

Կազմակերպուած Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Սէվրանի մասնաճիւղին կողմէ, կիրակի 29 Փետր. 1948, ժամը 3էն 12, Casino des Etoiles, Մասիս սրահին մէջ, 87 Ave. de Livry, à Sevran :

Գեղարուեստական հաճելի բաժին : Խմբերգ , ներկայացում եւ անակնկալներ, եւրոպական պար: Ճոխ պիւֆէ : Մուտք՝ 75 Ֆր.

Հաղ. միջոց.— Կառախումբ Gare du Nordէն ժամը 13.45ին եւ 14.15ին : Eglise de Pantinէն 147 թիւ օթօպիւս, իջնել Terminus :

Ֆր. Կ. ԽԱՉի ԼԻՈՆի մասնաճիւղին Սան Սանուէհիներու հայերէնի դասընթացքը պիտի վերսկսի, այս կիրակի, 1 փետր. առաւօտ, ժամը 10էն 12 : 78bis, Rue Rabelais, հայ դպրոցի սրահը: Դասախօս Պ. Կարապետ Ճովակիմեան: Կը խնդրուի մեր սանուհիներէն որ ճշդապահ ըլլան եւ ամէն կիրակի չարունակեն օգտուելու համար այս ապրօղուտ ձեռնարկէն :

17ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ

Կազմակերպուած Հայ Արիներու Միութեան Փարիզի շրջանի երգչներու , սկաուտներու եւ դայլիկներու կողմէ : Մասնակցութեամբ Փարիզի Հայ Աւետեաչներուն : Տեղի կ'ունենայ կիրակի 7 Մարտ 1948, կէսօրէ վերջ ժամը 2.30ին Salle de la Chimie, 28bis, rue St. Domonique, Paris (7), (métro Invalide կամ Solférino):

Սկաուտական ճոխ յայտագիրը, ներկայացումներ, հայկական պարեր եւ երգեր Աբեղեանեանց կողմէ :

Մուտք 100 — 300 ֆրանք :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ.— Պուլկարիոյ Պուրկազ քաղաքէն բնիկ Ռոտոսթոցի Թոմմաս Գր. Թիւթիւնճեան կը փնտռէ իր հօրեղբայրը՝ Լեւոն Սարգիս Թիւթիւնճեանը, եւ կամ Ֆէոճեան, կնոջը ազգանունը Լուսինիա, զաւակները՝ Աննիճա, Սարգիս եւ Ներսէս Թիւթիւնճեաններ եւ կամ Ֆէոճեաններ, որոնք 1922ին Կ. Պոլսէն անցած են Ֆրանսա եւ հաստատուած Փարիզ: Այժմ անոնց մասին ստոյգ լուր ունեցողներէն թախանճագին կը խնդրուի հաղորդել հետեւեալ հասցէին .— Թոմմաս Գ. Թիւթիւնճեան : Ուլիցա «Ազատաս Սլավով» թիւ 14, Պուրկազ - Պուլկարիա : Կը խնդրուի արտասահմանի բոլոր հայ թերթերէն արտատպելցայն :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ Սեբաստիոյ ԿԵՄԷրԷկի չրջանէն Պուրհան դիւղացի Կարապետ Ծառուկեանը որ այս պատերազմէն առաջ կը գտնուէր Փարիզի չրջակաները: Տեղեկացնել իր հօրիղբօրորդւոյն Աբշակ Ծառուկեանի, Dourgouti Gama. 53, Athenes — Grece:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ.— Իսմիրցի Մարի Քէպապճեան կը փնտռէ իր երկու եղբայրները Հայկ Քէպապճեան ոսկերիչ եւ Կիրակոս Քէպապճեան դերձակ, 1923ին կը գտնուէին Փարիզ: Ճանչցողներէն կը խնդրուի յայտնել Աթէնք «Ազատ Օր»ի , Վուլիս 20, Աթէնք :

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ
ԿԻՐԱԿ ՍԱԳԶԼԵԱՆԻ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

SALLE GAVEAU, *կիրակի 29 Փետր. ժամը 14ին կը խնդրուի այս թուականը նկատի առնել :*

ԾԱՆՈՒ է կօշկակարի (Bottier) խանութ մը լիանովմ, եւ բնակարանով :

Մանրամասնութեանց համար դիմել Պ. Chukurianի, 56 rue Genève — Arles sur Rhône :

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՏԱՐՈՆ ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆի Հայր. Մխութեան ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ այս կիրակի, ժամը 2.30ին, rue du Tage, No. 30, métro Maison Blanche : Կը խնդրուի բոլոր հայրենակիցներէն ներկայ դտնուիլ : Խիստ կարեւոր օրակարգ :

ՊԱՆԵԷՕ ՔԱՇԱՆի Հ. Ց. Դաշնակցութեան «Ուրծիւ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը, այս չաբաթ երեկոյ «Հրայր» ակումբի մէջ, բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է: Օրակարգ՝ կոմիտէի ընտրութիւն եւ ուրիշ հարցեր :

ՎԻՆՆ.— Հ. Ց. Դ. Նոր Սերունդի ընդհ. անդամական ժողովը այս ուրբաթ իրիկուն ժամը 9ին, Ակումբին մէջ: Ներկայ ըլլալ անդամատետրով: Կարեւոր օրակարգ: Ներկայութիւնս պարտաւորիչ :

ԼԻՈՆ.— Հ. Ց. Դ. Նոր Սերունդի դասախոսութիւնը Զորեքշաբթի 4 Փետրուար, ժամը 8.30ին , դպրոցի սրահը 78bis rue Rabelais: Նիւթ՝ «Հայաստանի համայնավարացումը» : Դասախօս ընկեր Կ. ՄԱՆՈՒԿԵԱՆ: Սիրով կը հրաւիրուին եւրէյ ընկերները, կապոյտ Խաչուհիները եւ բոլոր Հայերը անխտիր :

ՄԱՐՍԷՅԼ ՓՐԱՏՈՑի Մայր եկեղեցիին կրօն. Ընկերակցութեան տարեկան ընդհ. ժողովը տեղի պիտի ունենայ կիրակի օր, 1 Փետրուար 1948, ժամը 15ին, Պառ տիւ Կլոպի սրահին մէջ, 7 Պուլ. ա'Ազէն: Կը խնդրուի բոլոր անդամները ներկայ դտնուիլ :

ՏԷՍՒՆԻ Հ. Ց. Դ. Նոր Սերունդի անդամական ընդհ. ժողովը այս երկուշաբթի, 2 Փետր. իրիկուան ժամը 9ին, Հ. Ց. Դ. Տան մէջ: Ներկայանալ անդամատետրով :

Հ. Ց. Դ. ՄԱՐՍԷՅԼԻ Նոր Սերունդի Շրջ. վարչութիւնը կը հրաւիրէ իր 12 խումբերը անդամական ժողովի, որ տեղի պիտի ունենայ իրենց համապատասխան եւ սովորական հաւաքատեղին հետեւեալ օրերը: Ներկայ պիտի ըլլայ Շրջ. վարչութեան ներկայացուցիչը: Շատ կարեւոր օրակարգ :

ՍԷՆ ԼՈՒԻ, Սիմամնթօ խումբ երկուշաբթի 2 Փետրուար :

ՊՈՒԼՎԱՐ ՕՏՏՕ, Խաչսեան երեքշաբթի 3 Փետրուար :

ՊՈՄՈՆ, Քրիստափոր, հինգշաբթի 5Փետր.: ՍԷՆԹ ԱՆԹՈՒԱՆ Գիւլխանդանեան, ուրբաթ 6 Փետրուար :

ՔԱՂԱՔ, Ռոստոմ, հինգշաբթի 5 Փետրուար : ՍԷՆԹ ԱՆՆ, Քեռի, չորեքշաբթի 4 Փետրուար: ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻՏ, հինգշաբթի 12 Փետրուար : ՍԷՆ ԺԷՐՄ, Աղբալեան, ուրբաթ 20 Փետր.: ԼԷ Ջ'ՕԼԻՎ, Օհանէջանեան, չորեքշաբթի 11 Փետրուար :

ԷՔՍ ԼԷ ՄԻԼ, Համազասպ, կիր. 8 Փետրուար: ԼԱ. ՍԻՈՒԹԱ, Հրաչ, կիրակի 8 Փետրուար: ԿԱՐՏԱՆ, կիրակի 15 Փետրուար :

ՏԱՐԵԿԱՆ ՇՐՋԱԳ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Լա Սիւթայի Հ. Ց. Դ. Նոր Սերունդի «Հրայր» խումբի կողմէ :

Այս Շաբաթ իրիկուն, 31 Յունուար 1948, մինչեւ առաւս: Au Flot Bleuի չքեղ սրահին մէջ :

Նուագախումբ Սէն Լուի Ն. Ս. Ժաղով:

Մուտքը 40 եւ 60 Ֆրանք :

22 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ , ԿԻՐԱԿԻ ՕՐ ԺԱՄԸ 3ԷՆ ԿԷՍ ԳԻՇԵՐ, Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՌՈՍՏՈՄ ԽՈՒՄԲԻ ՀԱՆԴԷՍ ԽՆԶՈՑԸ

Կը խնդրուի նկատի ունենալ թուականը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Փարիզի Հայոց եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերակցութեան բոլոր անդամները 1 Փետրուար 1948, կիրակի ժամը 2.30ին եկեղեցւոյ խորհրդարանին մէջ, օրակարգ ունենալով եկեղեցւոյ օրհնական լուսարար Պ. Յակոբ Ճօրթուեանի քահանայական թեկնածուութեան հարցը :

18 Յունուար 1948ի ընդհ. ժողովը մեծամասնութիւն չունեցաւ, կանոնագրի 16րդ յօդուածին համաձայն, այս անդամ ներկաներու թիւը պիտի նկատուի օրինաւոր :

ՃԱՇԱՐԱՆ ԼԻԼԼԱ

Որ բոլորած է իր բանամեակը եւ տիքաւոր մը,

Փառրատ է գոհացնելու իր ամէնէն դըժուարահաճ յաճախորդները իր համադամ կերակուրներով ու բազմապիսի աղանդերներով

Հեռաձայն TRI 31 - 62

24, Rue St. Lazare, PARIS (9)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH — Fondé en 1925 — R. C. Seine 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13e)

Տար. 1200, 6ամս. 650, Արտ. 15 տոլ. կամ 3 անգլ.

Tél.: GOB. 15-70 — C.C.P. Paris 1678-63

Samedi 31 Janvier 1948 Շաբաթ 31 Յունուար

Ի. ՏԱՐԻ — 20e Année N° 5254-Նոր շրջան թիւ 863 Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ ԳԻՆ՝ 5 Ֆր.

Ելեւտական նոր օրինագիծը խուճապ սկսաւ

5000ՆՈՑՆԵՐԸ ԱՒԱՑԻՄ ԱՆՕՐԻՆԱԾԵԼԻ

Հակառակ որ ելեւտական յանձնաժողովը մերժած էր կառավարութեան նոր օրինագիծը, երեւելոխանական ժողովը, ուրբաթ օր 288ի դէմ 320 ձայնով քուէարկեց զայն իր ամբողջութեամբ եւ սկսաւ մանրամասնօրէն քննութեան առնել անոր յօդուածները :

Քուէարկութենէն քանի մը ժամ առաջ վարչապետը՝ յոյս յայտնելով հանդերձ թէ կրնայ թերեւս ապահովել քուէներուն մեծամասնութիւնը, յայտարարած էր թէ պիտի հրաժարէր եթէ հրեսի. ժողովը ընդդիմութիւն ցոյց տար : Վերջին պահուն էր միայն որ Որհրդարանին MRP խմբակցութիւնը ինչպէս նաեւ ը-կերվարականները հաւանութիւն յայտնած էին քուէարկելու ի նպաստ նոր օրինագծին: 241ի դէմ 327 ձայնով մերժուեցաւ համայնավարներու բանաձեւը որ կ'առաջարկէր յետաձգել օրինագծին քննութիւնը:

5000 Ֆրանքնոց թղթադրամները հրապարակէն քաշելու կառավարական որոշումը մեծ իրարանցում պատճառեց հինգշաբթի օր: Այս անակնկալ որոշումը տրուած էր նախորդ գիշերը: Այս մասին հրատարակուած հրամանագիրը կը պարունակէ հետեւեալ հիմնական պայմանները.—

Ա.— Ցունուար 29էն սկսեալ Պանք տը Ֆրանսի կողմէ շրջաբերութեան հանուած 5000 Ֆրանքնոց թղթադրամները օրինական արժէք չունին :

Բ.— Մասնաւոր հրամանագիր մը պիտի ճշդէ այն պայմանները ու եղանակը որոնց հիման վրայ հրապարակէն պիտի քաշուին այդ թղթադրամները եւ իրենց փոխարժէքը պիտի վճարուի :

Գ.— Ջեղեալ կը համարուին այն գործառնութիւնները որոնց վճարումը կը կատարուի 5000-նոցներով :

Դ.— Հարիւր Ֆրանքէն հարիւր հազար Ֆրանքի տուգանքի կը դատապարտուին անոնք որ չեն յարգեր հրամանագրին պայմանները: Պետութիւնը, դատարանական հետապնդումով, կրնայ դրաւել այն թղթադրամները որոնք ապօրինի միջոցներով կը փոխանակուին :

Պանք տը Ֆրանսը շրջաբերութեան հանած է 330 միլիառ Ֆրանքի արժողութեամբ 5000 Ֆրանքնոց թղթադրամներ : Ուրիշ խօսքով, շրջաբերութեան հանուած 900 միլիառ Ֆրանքի թղթադրամներուն հարիւրին 37ը: Վերոյիշեալ գումարը 90 միլիառ աւելի է Ցուլիսի ընդհանուր գումարէն :

Դիտել կը տրուի որ կառավարութիւնը ստիպուած էր այս խիստ միջոցին դիմելու, կասեցնելու համար Ֆրանքին անկումը: Մեծ յոյս կայ որ դիներու բարձրացումը կանգ առնէ գոնէ առայժմ :

Կառավարութիւնը ոչ մէկ բացատրութիւն տուած է թէ ինչ միջոցաւ պիտի փոխանակէ այս թղթադրամները եւ իրաքանչիւր անհատ քանի հատ 5000նոց ունենալու իրաւունք պիտի տայ: Հաւանական կը նկատուի որ անոնք յատկացուին պարտատոմսի փոխառութեան մը որոնց արժեթուղթերը հրապարակ պիտի հանուին մօտ տասնէն : Դրամատոմներուն փակ պիտի մնան մինչեւ երկուշաբթի առտու:

Կառավարութեան ներկայ որոշումը մաս կը կազմէ ելեւտական ու տնտեսական այն ծրագրին որ խորհրդարանին ներկայացուեցաւ քանի մը շաբթ առաջ: Նախ կարգ մը բացառիկ տուրքեր հաստատուեցան եւ որոշուեցաւ կրճատել պետական ծախքերը յանուն խնայողութեան եւ թղթադրամին կայունութեան: Ցետոյ տեղի ունեցաւ Ֆրանքին արժեզրկումը՝ երկրին արտածումները զարկ տալու նպատակաւ եւ ազատ յայտարարուեցաւ ոսկիին վաճառումը :

Ընկերվարականները հակառակեցան ներկայ չաբթուան ակիզբը եւ երեք օր առաջ ստեղծուեցաւ տագնապալի կացութիւն մը որուն հետեւանքը կրնար ըլլալ նախարարական նոր տագնապ մը եթէ ընկերվարականները վերջին պահուն որոշ համաձայնութիւն մը չկնքէին վարչապետին հետ: Ինչպէս կը նկատուի երկրի, դժուարութիւն մը կրնար յառաջ բերել քաղաքական ծանրակշիռ կացութիւն մը եւ կուսակցական կատաղի պայքար մը՝ մէկ կողմէ ընկերվարականներուն եւ համայնավարներուն միւս կողմէ պահպանողականներուն եւ զօրավար տը Կոլի համախոհներուն միջեւ :

Այդ անստոյգ կացութեան մէջ էր ուրեմն որ կառավարութիւնը ընկերվարականներուն «սիրտը առնելու» համար յանկարծ որոշեց հրապարակէն քաշել 5000նոցները :

Պէտք է աւելցնել որ դրամատուները արտօնուած էին փոխելու իրենց 5000նոցները: Դրամատուներու մէջ ընթացիկ հաշիւ ունեցողները որեւէ կերպով չեն տուժեր ներկայ կարգադրութեամբ : Կառավարութեան դէմ ուղղուած նպատակները մէկն էր երեւան հանել սեւ շուկայով զբաղող առեւտրականները :

Երկու օրէ ի վեր չարաշահութիւններ տեղի կ'ունենան շուկայի մէջ: Շատեր կը փորձեն միամիտներէն 3500 Ֆրանքի փոխարէն գնել 5000նոցները: Ոսկիին գինը բարձրացած է :

Իրազեկ շրջանակներու մէջ դիտել կը տրուի որ Փարիզի պարենաւորումը դժուարութենէն պիտի բաւի քանի մը օր մինչեւ որ կառավարութիւնը վերջնական կերպով ճշդէ խնդրոյ առարկայ թղթադրամին ճակատագիրը: Գիւղացիները որոնք ընդհանրապէս չէքի մասին չատ քիչ զգայիր ունին, դրամ կը պահանջեն փոխանակ չէքի :

★ Վերջին պահուն կը լսենք որ դրամատուները բաց պիտի ըլլան այսօր ամբողջ օրը: Բայց 5000նոցները դրամատուն կրնայ յանձնուիլ միայն երկուշաբթիէն սկսեալ եւ փոխանակուիլ մանր թղթադրամներով: Իւրաքանչիւր անհատ կրնայ միայն երկու հատ ներկայացնել: Անոնք որ քանի հատէն աւելի ունին եւ չեն կրնար զոհացուցիչ պատճառաբանութիւն ցոյց տալ, պիտի ստանան պատասխանատուութեան արժեթուղթերը :

Մարշըլի ծրագրին գործադրութիւնը

Նախագահ Թրումըն հինգշաբթի օր մամուլի ներկայացուցիչներուն ունկնդրութիւն մը տալով յայտարարեց թէ կառավարութիւնը պիտի պնդէ որ Մարշըլի ծրագրով խորհրդարանին առաջարկուած 6800 միլիոն տոլարի վարկը ամբողջութեամբ քուէարկուի եւ ընթացք չտրուի Հանրապետականներուն այն բանաձեւին որ կ'առաջարկէ վերոյիշեալ գումարը զեղչել 4500 միլիոնի : Մեր նշանակած գումարը բացարձակօրէն անհրաժեշտ է ըսաւ Թրումըն, «որովհետեւ այդ միջոցով միայն կրնանք ապահովել խաղաղութիւնը»: Եթէ որեւէ զեղչ կատարուի, Եւրոպայի վերականգնումին օժանդակած պիտի չըլլանք , այլ պարզապէս նպաստ մը յատկացուցած պիտի ըլլանք Եւրոպական ազգերուն: «Մինչդեռ մեր գլխաւոր նպատակն է Եւրոպան ոտքի հանել յառաջիկայ քանի մը տարիներու ընթացքին: Նախագահը դարձեալ դիտել տուաւ որ Ամերիկա ի վիճակի է 17 միլիառ տոլար յատկացնելու «յանուն խաղաղութեան ամրապնդումին»: Թրումըն աւելցուց նաեւ որ «Թեթեւս պէտք չունենանք այդ գումարին ամբողջութեան եթէ կացութիւնը զգալի բարւոքում մը կրէ :

Թրումըն այս առթիւ անգամ մը եւս չեշտեց թէ ինք երեք Մեծերու հանդիպումին համաձայն կրնայ ըլլալ միայն այն պարագային երբ այդ հանդիպումը տեղի ունենայ Ուաշինկթընի մէջ:

Ներկայութը Մարշըլի ծրագրին քննութեան պիտի ձեռնարկէ մարտ 1ին :

ՊԱՐԵՆԱՒՈՐՈՒՄ.— Ջէք՝ Ցունուար 30էն մինչեւ Փետրուար 22, 150 կրամ J. A. M. V. դասերուն GA կտրօնով : Ասկ՝ 250 կրամ M եւ V դասերուն, SA կտրօնով :

ՄՈՍԿՈՒԱՅԻ կառավարութիւնը բողոքած է Ուաշինկթընի կառավարութեան թէ անպեւտմեդիկան համաձայնութիւն մը կնքուած է վերաբանալու համար Մելհաֆլի (Լիբիա) օդակայանը: Ուաշինկթընի քաղաքական շրջանակներուն մէջ դիտել կը տրուի որ երկու կառավարութիւնները բացարձակօրէն իրաւունք ունի նման քայլ մը առնելու քանի որ Իտալիոյ նախկին գաղթավայրերուն ճակատագիրը տակաւին ճշդուած չէ: Օդակայանը բացուած է տրպէզոնի Մերճաւոր Արեւելքի մէջ դործող ամերիկեան օդանաւերը դիւրութիւն ունենան քարիւղ առանալու: Այս խմաստով յուշագիր մը պիտի ներկայացուի խորհրդային կառավարութեան :

Հեղինակաւոր բանաւոր սիրելու հիմա ստացած է 100 միլիոն տոլար

Աթէնքէն կը տեղեկացնեն թէ ամերիկեան գինուորական առաքելութեան պետը յայտարարած է թէ հելլէնական բանակը մինչեւ հիմա Ամերիկայէն ստացած է աւելի քան հարիւր միլիոն տոլար եւ «ան հիմա ի վիճակի է գինուորական յաջող գործողութիւններ կատարելու»: Աթէնքի կիսապաշտօն շրջանակները, մինչեւ վերջերս, կը դանդաղէին թէ ապստամբները աւելի լայն միջոցներ ունին քան կառավարական բանակը :

Ամերիկացի գինուորականը բացատրած է թէ Ցունաստան այժմ կը ստանայ ամերիկեան թրքոդանօթները եւ գինդացիները: Վաթսուն միլիոն տոլարի արժողութեամբ գինուորական համազգեստներ եւ զանազան պիտոյքներ հայթայթուած են՝ պեղչուած գինով :

★ Ապստամբները սկսած են կատաղի յարձակումի ենթնալու եւ Քոնիցայի արեւմուտքէն: Ի-րինցմէ 500 հոգի յարձակած են Վէլվէտու գիւղին վրայ եւ կողոպտած են գիւղացիները՝ մեռաւին տանելով 48 այրեր եւ 26 կիներ :

ԱՒԱՆի ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՐԱԴԻ դահլիճը վերակազմուեցաւ Մուհամէտ էլ Սաորի վարչապետութեամբ: Շատ հաւանական է որ նոր կառավարութիւնը չեղեալ յայտարարէ Անգլիոյ հետ կնքուած դաշնագիրը: Ուսանողները ցոյց մը կատարեցին հինգշաբթի օր վարչապետարանին առջեւ եւ պահանջեցին որ դատարան հանուի նախորդ վարչապետը: Այս վերջինը Անդր Ցորդանան փախած է :

ՄԻԱՑԵԱԼ ԱԶԳԵՐՈՒ Հիւլէական ուժի յանձնախումբին հինգշաբթի նիստին մէջ, Որհրդարանին պատուիրակը Ամերիկ կրամիքօ դարձեալ պահանջեց որ հիւլէական զէնքերու գործածութիւնը արգիլուի՝ իբրեւ նախապայման միջազգային ուրիշ կարգադրութեանց :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ օդային նախարարը յայտարարեց թէ «օդանաւերու չինութեան մէջ չատ հետ կը մնանք Անգլիայէն եւ Որհ. Միութենէն եւ պատերազմի մը պարագային չատ վտանգաւոր կացութեան մը առջեւ պիտի գտնուինք»:

ԼԵՀԱԿԱՆ կառավարութիւնը կ'աղդարարէ պատերազմին պատճառաւ արտասահման մեկնողներուն որ եթէ յառաջիկայ 90 օրուան մէջ չվերադառնան պիտի զրկուին բոլոր իրաւունքներէն եւ իրենց ինչքերը պիտի գրաւուին :

ՌՈՒՄԱՆԻՈՑ գինուորական դատարանը երկարամեայ բանտարկութեան դատապարտեց Նախկին վարչապետ Մանիուլ 27 համակիրները :

ԱՄԵՐԻԿԵԱՆ կառավարութիւնը մօտ առենին պիտի վերահաստատէ միսի բաժնեչափին դրութիւնը որովհետեւ մթերքները զգալի չափով նուազած են :

ՑԱՑՏՆԻ դիտուն Ալպերթ Այնչթայն դիտական ամսագրի մը մէջ յօդուած մը տպագրելով, կ'ըսէ թէ Որհրդային Միութիւնը կղզիացման քաղաքականութեան մը հետեւելով ապետալի կացութիւն մը յառաջ պիտի բերէ թէ իրեն եւ թէ ամբողջ մարդկութեան համար: Ռուսերը պէտք չէ դրամատիրութեան վերադարձն ներկայ քաղաքական եւ ընկերային տագնապին ամբողջ պատասխանատուութիւնը, կը գրէ Այնչթայն: «Ընկերվարութիւնը չի կրնար լուծել բոլոր խնդիրները » :

ԳԵՐՄԱՆԻՈՑ ամերիկեան գօտիին ընդհանուր հրամանատարը յայտարարեց որ Անգլիոյ եւ Ամերիկա երբեք նպատակ չունին լուծելու իրենց գօտիներու միացեալ վարչութիւնը որքան տեն որ Զորս Մեծերը համաձայնութեան մը եկած չեն Գերմանիոյ մասին: Ինչպէս ծանօթ է, տասը օր առաջ Պերլինի Միջղաշնակցային Հակակշիռի Ցանձնաժողովին մէջ, Մոսկուայի պատուիրակը առաջարկած է վերջ տալ այդ վարչութեան: Պատասխանելով Ֆրանսայի առարկութեանց թէ ներկայ սիմթէմով գերմանական կառավարութիւն մը պիտի ստեղծուի, հրամանատարը դիտել տուաւ թէ ներկայիս այդ տեսակ ծրագիր չկայ :

ՄՈՍԿՈՒԱՅԻ «Թրուտ» թերթը կը պահանջէ որ գործարանները աւելի լաւ տեսակի ապրանք արտադրեն ժողովուրդին համար: Սրհեստակցականներու օրկանը դիտել կուտայ թէ կարգ մը գործարաններ եւ աշխատանոցներ կորնցուցած են իրենց պատասխանատուութեան զգացումը եւ հրապարակ կը հանեն ամէն տեսակ ապրանք սպասելով որ ժողովուրդը գնէ: Թերթը կ'աւելցնէ թէ չինուած են ժամացոյցներ որոնց ապակիները կոտրած են իսկ սլաքները անչարժութեան դատապարտուած: Հագուստներու կոճակները լաւ չըղկուած չըլլալով, գործածողին մատները կ'արիւնեն :

Որհրդային Հայաստանէն ստացուած է տե-

(Ուրիշներ շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

Ա.

Գիտական ընկերակցության, Հայագիտական թանգարանի և ռուդիմենտների ֆոնդի աշխատակիցներ Ա. Գալստյանը, Ա. Մուրադյանը, Ա. Մելիքյանը և Ա. Մելիքսեթյանը հրատարակել են «Հայկական ՍՍՀ ռուդիմենտների կատալոգ» 120 աստիճան օրինակով։ Կատալոգում ամփոփված են ՀՍՍՀ տարածքում հայտնաբերված ռուդիմենտների մասին գիտական նոր տվյալներ։ Ռուդիմենտները ապարների մեջ պահպանված կենդանական և բուսական օրգանիզմների հետքերն են։ Նրանք ուսումնասիրում են Երկրի պատմությունը, ապարների տարիքը, նրանց առաջացման պայմանները։ Ռուդիմենտների ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի նաև հանքային հումքի հայտնաբերման համար։

Կատալոգում տրված են ռուդիմենտների նկարագրությունները, ինչպես նաև նրանց հայտնաբերման վայրերի և ապարների տվյալները։ Կատալոգը կազմելիս հեղինակները հիմնվել են ինչպես սեփական, այնպես էլ ուրիշ գիտնականների հետազոտությունների վրա։ Կատալոգի վերջում տրված է ռուդիմենտների ցանկը։

Կատալոգը կարևոր ձեռնարկ է ոչ միայն հայ, այլև օտարերկրյա գիտնականների համար։ Այն կարող է օգտակար լինել նաև ուսանողների համար։

Ա. Գալստյանը, Ա. Մուրադյանը, Ա. Մելիքյանը և Ա. Մելիքսեթյանը հրատարակել են «Հայկական ՍՍՀ ռուդիմենտների կատալոգ» 120 աստիճան օրինակով։ Կատալոգում ամփոփված են ՀՍՍՀ տարածքում հայտնաբերված ռուդիմենտների մասին գիտական նոր տվյալներ։ Ռուդիմենտները ապարների մեջ պահպանված կենդանական և բուսական օրգանիզմների հետքերն են։ Նրանք ուսումնասիրում են Երկրի պատմությունը, ապարների տարիքը, նրանց առաջացման պայմանները։ Ռուդիմենտների ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի նաև հանքային հումքի հայտնաբերման համար։

Կատալոգում տրված են ռուդիմենտների նկարագրությունները, ինչպես նաև նրանց հայտնաբերման վայրերի և ապարների տվյալները։ Կատալոգը կազմելիս հեղինակները հիմնվել են ինչպես սեփական, այնպես էլ ուրիշ գիտնականների հետազոտությունների վրա։ Կատալոգի վերջում տրված է ռուդիմենտների ցանկը։

Կատալոգը կարևոր ձեռնարկ է ոչ միայն հայ, այլև օտարերկրյա գիտնականների համար։ Այն կարող է օգտակար լինել նաև ուսանողների համար։

Հրատ. են նշանակված ռեդակտոր Ա. Ղազարյանի, տեխ. խմբագիր Ա. Ղազարյանի, տեխ. խմբագիր Ա. Ղազարյանի, տեխ. խմբագի

պարբերականը, ուր տող մը չէք գտներ դուք Հայաստանի մէջ կատարուած եկեղեցական պաշտամունքներու մասին: Կաթողիկոսը իր կոնդակները բացառապէս կ'ուղղէ Սփիւռքի հայութեան: Որոշապէս կը տեսնուի, որ անոր վերէն իրաւունք տրուած էայդ ուղղութեամբ միայն գործելու, եւ, ընդհակառակն, իրաւազրկուած է՝ հոգեկան եւ կրօնական կապ ստեղծելու իր անմիջական շրջանակին մէջ ապրող հայութեան հետ :

Ուշադրութեամբ քննեցէք «էջմիածին» պարբերականի բովանդակութիւնը եւ պիտի ըմբռնէք, թէ ինչ սահմաններու մէջ դործելու արտօնուած է Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Այդ պարբերականին մէջ դուք չէք գտներ նաեւ արձագանգը Սփիւռքի հայութեան եկեղեցական ու մշակութային կեանքին: Կը գտնէք միայն արտասահմանի մէջ ի նպաստ Սովետներուն տեղի ունեցած «ելոյթ»ներուն արձագանգը: Դուք հոն կը գտնէք նոյնպէս արտասովոր մանր այնպիսի թերթերէ, որոնք արտասահմանի մէջ չեն իսկ կարդացուիր : Բայց ոչինչ կը տրուի հոն Երուսաղէմի, Անթիլիասի, Ամերիկայի, Եգիպտոսի կարեւոր թեմերու եկեղեցական ու ազգային կեանքէն: Շատ չատ «Հասկ»էն կամ «Սիոն»էն կ'արտատպուի բանասիրական յօդուած մը :

Հայաստանի եւ Սփիւռքի հայութեան կրօնական եկեղեցական կեանքի մասին հետաքրքրութիւն ցոյց չտուող էջմիածինը ուշադիր է, որպէսզի սովետական իշխանութեան հանդէպ Սփիւռքի համակրանքը ոչ միայն չթուլանայ, այլ եւ աճի :

Եգիպտոսի հին եւ կազմակերպուած գաղութին մէջ 28 տարիներէ ի վեր (1919էն ասդին) Հայաստանի Համրապետութեան տարեդարձ կը տօնուէր, եւ հայ վարժարանները փակ կը պահուէին: Անցեալ տարի էջմիածինի կաթողիկոսը, անտարակոյս սովետական իշխանութեան պահանջով, Եգիպտոսի Առաջնորդին դիտողական մը ղրկեց, որով կը պարտադրուէր գաղութին՝ տօնել Նոյեմբեր 29ը, Հայաստանի խորհրդայնացման տարեդարձը :

Այլեւս տարակոյսէ վեր է, որ սովետական իշխանութիւնները, էջմիածինի մէջ կաթողիկոս ընտրել տալով, ոչ թէ նահանջ մը ըրին մինչեւ այժմեայ հակակրօնական պայքարին մէջ, այլ ողջեցին էջմիածինի միջոցով Սփիւռքի հայութեան մէջ քաղաքական գործ կատարել :

Սփիւռքի ունեցած յուսախաբութեան երկրորդ կէտը մշակութային է :

Պատերազմի ընթացքին արտասահմանի եւ հայրենիքի միջեւ հաստատուեցաւ «մշակութային» կապ մը, գոնէ այդ նպատակով մարմին մը ստեղծուեցաւ, իսկ երեւանի մէջ ալ առանձին պարբերաթերթերէ մը սկսաւ հրատարակուիլ :

Սահմանափակ ազատութենէ մը օգտուելով, Հայաստանի գրողները սկսան հայրենասիրական գործեր արտադրել :

Բայց հազիւ պատերազմը վերջացած, Մոսկուա պահանջեց վերադարձ դէպի նախկին դիրքերը, նշանաբան ունենալով՝ «ձեւով ազգային, խորքով միջազգային» դրականութիւնը :
(Մնացեալը յաջորդով)

Գ. ԼԱԶԵԱՆ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսահայ թերթէ մը քաղենք «վաթան»ի հետեւեալ տողերը :—

Այսպէս զուիցերիական «Շվայցէրիշէ Ալկեմայնէ Ֆօլքսցայթունկ» թերթը 10 յունուարին իր առաջին էջին վրայ հրատարակած է Ֆէսաւոր եւ առանց Ֆէսի, երկու Թուրքերու նկարը, հետեւեալ խորագրին տակ.— «Թուրքերը կ'ուզեն դարձեալ Թուրք ըլլալ եւ կրկին Ֆէս կրել»: Այս նկարին հետ հրատարակուած յօդուածը զարմանք պատճառեց մեզի, որովհետեւ տեսանք թէ որքան վարպետ են տուտի եւ յերիւրանքի մէջ :

Յօդուածին նպատակն է այն տպաւորութիւնը դարձնել թէ այսօր Թուրքիոյ մէջ ոչինչ մնացած է Աթաթիւրքի յեղաշրջումներէն: Այդ առթիւ կ'ըսուի թէ ամէն տեղ անարդանքի, պոռնիկներու յաւուրկ վերաբերումի եւ յարձակման կ'ենթարկուին Թրքուհիները եւ թէ վերջերս մշակութային յետադիմութիւնը ծայր տուած է Թուրքիոյ մէջ ու հազիւ ազատած էր միջնադարեան խաւրակուռ բարբարոսութենէ :

Նկատելով որ ժողովուրդը կ'անարդէ անպէս անմօրուսները, երիտասարդ ուսուցիչները պատկառանք ազդելու համար կեղծ մօրուք եւ պատուհասի պարզ ապակիէ շինուած ակնոցներ կը գործածեն :

Յաղթականօրէն վերադարձած է Ֆէսը, զոր «անխիղճ յետադիմութեան կարմիր կափարիչ» որակած էր Աթաթիւրք: Իսթանպուլի եւ Անգարայի սրճարաններուն մէջ պրոյց կը չըլլի թէ կառավարութիւնը վերստին պիտի արտօնէ Ֆէսին գործածութիւնը: Հեղհեղուկ յայտնի կ'ըլլայ թէ վճռանդի մէջ է Աթաթիւրքի ժառանգութիւնը, եւ սպառնալիքի տակ կը գտնուի անոր հիմնած եւրոպականացման ու արդիականացման չարժումը: Վերաբացուած են Անգարայի այն բոլոր մզկիթները, որոնք փակուած էին Աթաթիւրքի հրամանով: Նոյնիսկ Իսմէթ Զանգարայի ազարանքին մէջ կայ մանուր դաղտնի եւ օրէնքէ դուրս մզկիթ մը :

1946ին դեմոկրատ կուսակցութիւն մը հիմնուեցաւ՝ Ամերիկացիներուն վրայ այն տպաւորութիւնը ձգելու համար թէ դեմոկրատ են Թուրքերը: Ձեւական է սակայն այս ընդդիմադրութիւնը եւ օրին մէկը բարձրէն եկած հրամանի մը վրայ հիմնովին պիտի քանդուի դեմոկրատ կուսակցութիւնը :

Ժողովուրդը այն աստիճան կը զայրանայ կառավարութիւնը քննադատող երեսփոխաններուն, որ քարերով կը յարձակի անոնց վրայ եւ «էչէկ օղլու էչէկ» (այս բառերը Թուրքերէնով հրատարակուած են) կ'որակէ զանոնք :

Ընդդիմադիրները այն աստիճան խախտած են Թուրք ժողովուրդին նուիրական զգացումները, որ ազդը կառավարութեան դիմելով պահանջած է սահմանէն վտարել ընդդիմադիրները: Թուրք ազդը խորապէս թաղուած է իր հին աւանդութիւններուն մէջ: Այդ պատճառով կառավարական ոչ մէկ հրահանգ կրնայ դիմագոհել զայն: Թուրքերուն համար երեւութական դիմակ մըն է արեւմտականութիւնը :

Ինչպէս որ կարելի չէ դեմոկրատութեամբ ժողովրդապետութիւնն ապահովել, նոյնպէս ճախողանքի դատապարտուած է Թուրքիոյ եւրոպականացման ձեռնարկը: Ասոր փոխարէն, ամերիկանացման փափաք մը ծայր տուաւ եւ երկրին մէջ ամերիկեան ֆիլմերը հսկայական քարոզութիւն կը կատարեն եւ ամերիկեան մշակոյթի կայսերապաշտութիւնը Թուրքիոյ մէջ կը մտնէ շնորհիւ պատկերազարդ հանդէսներու ,ամերիկեան չօթօլաներու, ամերիկեան ակուայի դեղերու եւ վրձիններու: Հիմա ալ Թրքական համադրեստը նմանցուցին ամերիկեան համազգեստին :

ԼԻՈՆ - ՏԷՍԻՆ Հ. Մ. Ը. Մ.Ի ՅԱՂԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կիրակի 25 Յունուարին, Լիոն - Տէսինի Հ. Մ. Ը. Մ.ը մեծ յաղթութիւն մը տարաւ U.S. Miribelի դէմ իր սեփական դաշտին վրայ: Այս յաղթութիւնը չատ մեծ նշանակութիւն ունի քանի որ U.S. Miribelը եղանակի սկիզբէն ի վեր բնաւ պարտուած չէր իր դաշտին վրայ :

Ուրեմն ժամը 1.30ին կը մեկնինք Miribel խաղացողներուն հետ, դանոնք խրախուսելով եւ խրբրատելով որ որքան կարելի է լաւ խաղարկութիւն ցոյց տան եւ պիտանի օգտուիլ ներկայացած առիթներէն: Ահա դաշտը, գեղինը կը փայլի, կը հասկնանք որ ցեխի մէջ է որ պիտի խաղան: Մօտակայ վայրերէն բաւական թիւով Հայեր եկած են Հ. Մ. Ը. Մ.ը քաջալերելու :

Ժամը ճիշդ 3ին խաղը սկսաւ, հակառակորդ խումբին յառաջապահները աւելի յարձակումով : Դաշտը թէ ցեխոտ, թէ փոքր եւ թէ զառիվեր էր: 20 վայրկեան յետոյ մեր յառաջապահները արդէն հակառակորդ բերդին մօտ են եւ սկսած ամրակոծել զայն, բայց հակառակորդ բերդապահը (սեւամորթ մը) չատ ճարպիկ է, հեռուէն իսկ քաշուած ամէն մէկ գնդակ իր ձեռքերուն մէջ են : Մօտ 15 վայրկեան խաղը անորոշ է, մեր յառաջապահները կը փոխեն իրենց խաղը եւ պզտիկ վտանգով կը մօտենան հակառակորդ բերդին եւ կը նշանակեն իրենց առաջին կէտը, ներկայ Հայերու ծափերու տեղատարափին տակ: Գնդակը հադիւ մէկ քառորդ եկած մեր պաշտպանողական գիծը ուժգին հարուածով մը գնդակը կը ղրկէ մեր յառաջապահներուն որոնք դարձեալ պզտիկ վտանգով կը նշանակեն երկրորդ կէտը:

Երկրորդ կիսախաղի սկիզբին հակառակորդ խումբը սկսաւ բուռն յարձակողական ,մեր պաշտպանողական գիծը դժուարին կացութեան մէջ դնելով, բայց մեր ճարպիկ բերդապահը գնդակը ետ կը մղէ, մեր յառաջապահները օգտուելով այդ առիթէն կը նշանակեն Գ. կէտը: Բայց կամաց կամաց դպալի կ'ըլլայ մեր տղոց յոգնութիւնը անվարժ ըլլալով ցեխի մէջ խաղալու, իսկ հակառակորդ խումբը աւելի վարժ ըլլալով իր դաշտին, բուռն յարձակումով մը յաջողեցաւ նորէն նշանակել յաջորդաբար երկու կէտեր եւ խաղը վերջացաւ Լիոն - Տէսինի Հ. Մ. Ը. Մ.ի յաղթութեամբ 3—2:

Քաջալերութեան արժանի են Հ. Մ. Ը. Մ.ի բոլոր խաղացողները, որոնք ցոյց տուին թէ լաւ խաղարկութիւն եւ թէ մարզիկի բարձր ոգի:

Ապրիլ հայ երիտասարդներ մեր ազգին արժանապատուութիւնը միշտ բարձր պահեցէք ձեր Հ. Մ. Ը. Մ.ի դրօշով:— Մարգիկ

ԷՍԱ ԵՒ ՀԱՄԱՏ

(ՀՈՐՀՐԴԱՎԷՊ)

Բ. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԱԴԱՐՁ

Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

— Դո՞ւն... ահաւասիկ մեր մէջ ու մեր կոչնականը պատուական, պատասխանեցին միաբերան, ժպտաչուրթ, ձեռքերնին փաղաքշօրէն իր ուսերուն վրայ դրած :

Այդ երկար հպումը այնքան ելեքտրականօրէն ցնցեցին զինք, որ իր մէջ բան մը փլաւ ու չմնուեցաւ: Իր վրայ զգաց հրաշքը հոգեփոխութեան ու մարմնափոխութեան: Իր ինքնութիւնը հաստատելու համար, ձեռքերը քսեց դէմքին :

Ինքն էր ու ինքն չէր: Ճակտին կնճիռները անհետացեր էին բոլորովին, այտերը թարմացեր, թաւամազերով յղկուեր, հայելիի մը վերածուեր էր, բիբերուն ծայրը լափող բոցեր կախուեր էին: Ցետոյ չօշափեց վերէն վար հնամաշ սեւերու մէջ փաթթուած մարմինը, որ հիմա, ծիրանափառ պատմուճանի մը պերճաշուք ծալքերուն տակ կը չողար սիրապանծ :

Ոչ, ոչ ... երկմտութիւնը թերահաւատութեան է տրուած: Հիմա, ինքը երբեմնի Եսայի վարդապետը չէր, վանականը՝ երբեք, մեռնակեսը՝ ամենեւին, փիլիսոփան՝ թերեւս... Ու զնաց սիրայօժար բազմիլ սեղանապետին դիմաց, աջին՝ իշանոյչներ եւ ձախին սատանաներ :

— Այս օրը պատմական յաղթամօն մըն է, սկսաւ բաժակաճառել սեղանապետը: Մարդոց ուրվիները երկար տարիներ անցան մեր առջեւէն անտարբեր, նոյնիսկ արհամարհոտ ու նախատալից: Անոնցմէ ոչ ոք չուզեց վերածել մեր զօրութիւնը: Ահա այն միակ հաւատացեալը, որ ի պատիւ մեր գերազօր զօրութեան, իր ուխտի մոմը վաճառեց մեր խմբանկարի պատուանդանին: Այս օրէն սկսեալ, ան մերն է, ու պիտի մնայ մեր յաւիտենական պաշտպանութեան տակ: Ուրեմն, խմենք, մեր նորեկ պատուանդանին կենացը, (ծափահարութիւններ) :

— Ինչ անուշ է ձեր գինին, ինչ համեղ՝ սիրտը կաքաւին եւ ինչ անապակ կաթը սիրամարգին, բացագանչեց Եսայի :

Իշանոյչները կը դարպասէին չարունակ :

Դուռը բացուեցաւ յանկարծ: Երկու չարաչուք սուսերներ կանդնեցան սեմին վրայ, ապշած ու ապուշցած: Վանահայրը եւ Սիմէոն վանականը: Ամօթի յուզումէն ղղադար, այնքան սուր ճիչ մը արձակելով, մեծաշառաչ փուսեցաւ գետին, որ ընդոստ արթնցաւ ... : Երազ էր :

×

Արեւը իր լուացուած ճառագայթները փռեր է աւազահատիկներու բիւրեղեայ կատարին: Մեղմօրօր զովութիւն մը կը հովիւէ զանոնք, թըրթռուն զանակները, երիզակներ եւ պսակներ հիւսելով անոնց մաքրածոր թեւերուն վրայ: Լոյսի թափառիկ հիւսկէններ կը դեզերին անձրեւաջիթ լողարաններու մէջ, ուսկից դուրս կ'ելլեն մաքրուած ու սանտրուած: Ամենամէկ հատ մը թափանցեր է խրճիթին ներս ու աչ ու ձախ դեզերելով , իր լուսաշարժ լեզուակներով կը ծծէ խոնաւութիւնը ջրաթաթախ հիւղակին :

Ամբողջովին ջուր, քրտինք, աղտ եւ աղտեղութիւն կը կաթկթեն եսայիի մարմինէն ու տուայտանք, լկանք եւ խարկանք՝ իր հոգիէն: Եպիկուրը անձրեւի է բանուեր եւ էջերը բացեր , տղմուտին վրայ: Պիւթագորը վար ինկեր է մաճենադարանէն, իսկ Սոկրատ, ջրաթաթախ բերանը բացած, կը խորհրդածէ մռայլօրէն, «մէկ բան դիտեմ, այն է թէ՝ բան մը չեմ դիտեր»:

Սրտաբեկ Եսային, փշրուած ամանի մը պէս, մոայլ ու գառնադէմ, եկաւ, նստեցաւ խրճիթի սեմին, գլուխը ափերուն մէջ, խորհուրդներու ճղակոտոր կառքի մը լծուած: Անապատի պզտիկ մուկ մը տեսնելով իր դէմ, տատիկներուն վրայ կանգնած: Արեւին տակ, ականջները չարժելով , քանի մը հատիկի չարժումներ դնեց ու իր հոդոցքը քաշուեցաւ :

— Ես այս դիշեր ապրեցայ բովանդակ չորը աշխարհին, սկսաւ մենախօսել Եսայի: Եղայ շրուած հայելի մը, Թունաւոր կարմիրը՝ կռնակիս: Եղաք հրաշալի դերասան , օձաշապիկներով պատմուճանուած: Մարմինս լեցուցի չար ոգիներու մեղաքարշ չունչով: Ձիշդ է... երազ էր ,բայց ցնցող երազներուն ուժն ու ազդեցութիւնը աւելի տեսական ու աղետալի են քան իրականութիւնը :

ղեկագիր մը համաձայն որուն դատարան հանուած են երեք գործարաններու վարիչները, որովհետեւ չատ վար տեսակի տղայոց արտադրած էին :

ՆՈՄԱԼԻ ԿՐԷՔՕ անունով Խաղալիքի մը որ ժամանակին անդամ եղած է Ֆրանսական օտար լէգէոնին, հինգշաբթի օր Միլանի մէջ վիրաւորեց Ֆրանսական վոխ - հիւպատոսը եւ սպաննեց իւրացի մը որ կը փորձէր զինքը ձերբակալել :

ՀՐԵԱՅ ահաբեկիչները հինգշաբթի օր Երուսաղէմի մէջ սպաննեցին երկու Անգլիացիներ : Բրիտանական զինուորներ 15 Հրեաներ ձերբակալեցին ամբաստանելով թէ զէնք կը կրէին առանց արտօնագրի :

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ կառավարութիւնը որոշած է ետ չառնել լորտերու ժողովը բարեկարգելու իր օրինագիծը որ բուռն ընդդիմութեան տեղիատուած է պահպանողական շրջանակներուն մէջ : Այս շաբթու խորհրդակցութիւններ կատարուեցան կառավարութեան եւ լորտերու ժողովին ներկայացուցիչներուն միջեւ, բայց անկարելի եղաւ հաշտարար եղանակով լուծել վէճը :

ԱՆԳԼԻԱ ամսական վեց միլիոն սթերլինի արժողութեամբ ինքնաշարժեր եւ բեռնատար կառքեր կ'արտադրէ :

ՏԱՆԸՄԱՐՔԱ եւ Ամերիկա բանակցութիւն - ներ կը վարեն Կրէնլանտայի մէջ ամերիկեան դիւանագիտական խարիսխ մը հաստատելու ծրագրին շուրջ :

ՐՈՄԱՆԻ մէջ (Մ.Իտալիա Ֆրանսա) անցեալ երեքշաբթի օր երկու տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ Պետրոս Քաֆթանճեան որ անցեալ Օգոստոսին կռիւի մը ընթացքին ծանրապէս վիրաւորած էր Արամ Ճօրճալեանը որմէ 4000 Ֆրանքի առնելիք մը ունէր : Այս վերջինը կը պատրաստուէր Հայաստան մեկնիլ : Պահանջատէրը յիշեալին մեկնումին պահուն կը հանդիպի իրեն եւ կը պահանջէ իր առնելիքը : Կռիւ կը ծագի եւ Քաֆթանճեան զմեղիով կը վիրաւորէ զայն : Վիրաւորեալը հիւանդանոց կը փոխադրուի ուր կը մեռնի ոչ թէ իր ստացած վէրքերուն պատճառով այլ թոքաբորբի հետեւանքով :

Թարգմանի պաշտօնը կը կատարէ Տիկին Օ. Ալէքսեան : Դատապարտեալը 10.000 Ֆր. ի հատուցում մը պիտի ընէ մեռեալին մօրը :

ՑԵՏԱԶԳՈՒԱԾ է.— Փետրուարի 15ի կիրակիին յիսուածգուած է Լիոնի Հայ կաթոլիկ մարմնոյն Ամանորի հանդէսը որ նախապէս տեղի պիտի ունենար այսօր :

Պ. ՁՕՊԱՆԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այսօր շաբաթ, 31 Յունուար, ժամը 5ին : Պ. ՁՕՊԱՆԵԱՆ Հայ Ուսանողական Տան մէջ (57 Bld. Jourdan) պիտի տայէ իր երկրորդ դասախոսութիւնը ԵՂԻՇԷ ՁԱՐԵՆՑ բանաստեղծի մասին :

Պ. ՊՕՌԱՆՃԵԱՆի մահուան տարեվերջ պսակի համար հաւաքուած դրամէն ետ ելլացած 3000 ֆրանքը, Պ. Թորոս Պէքմէզեանի ձեռամբ յատկացուած է 1500 ֆրանք Աղքատախնամին եւ 1500 ֆրանք Ֆր. Կապոյտ Խաչին : Ստանալ «Ցառաջ»էն :

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ.— Ֆր. Կապոյտ Խաչի Մարսէյլ քաղաքի մասնաճիւղին տարեկան հանդէսը՝ ՄԱՐՏ 8ին :

ԽՆՋՈՑՔ ԳԻՆԵՍԵՂԱՆ

Համախմբուիլը. Միութեան Մարսէյլի մասնաճիւղին կողմէ, 8 Փետրուար 1948, կիրակի կէս օրէ վերջ, ժամը 2.30ին, 67 rue Longue des Capucins : Գեղարուեստական ճոխ բաժին, երգ, մեներգ, նուագ, արտասանութիւն եւ զանազան անակնկալներ : Մուտքի 50 Ֆր :

ՄԱՐՍԷՅԼ, ԼԱ ՎԻՍԹ.—

Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ԳԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆ խումբի կազմութեան տարելիցին առթիւ երեկոյթ պարահանդէսը տեղի կ'ունենայ 21 Փետր. 1948, Շաբաթ իրիկուն մինչեւ լոյս, Էմմէթաժի սրահին մէջ (I.a Viste) :

Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն, նուագ : Առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացուի ՊԱՇՏՕՆՆ ԽՈՒՄԲԻ, Ի : Կէս գիշերէն յետոյ եւրոպական պարեր Սէն Լուի նուագախումբին մասնակցութեամբ :

Ապահովել տոմսերը Նոր Սերունդականներէ :

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԻ

Քայտնի դիւցազներգութիւնը, չարահիւսեց

Կ. ՍԱՍՈՒՆԻ

350 մեծադիր էջ, ընտիր տպագրութեամբ, գին՝ 500 Ֆրանք : Կը դտնուի Փարիզի Հայ գրավաճառներուն մօտ : Տպ. Պէյրութ, 1947:

ՊԱՏՐԱՍՏՈՒԵՑԼԻՔ

Ֆր. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսին, որ տեղի պիտի ունենայ 15 Փետրուարին ժամը 15էն 24,Hôtel Continentalի չքեղ սրահներուն մէջ, 2 rue Rouget de Lisle, métro Concorde :

Նուագախումբ ՖԼՈՐՆԱՆ ՊՈՒՅՕՆ : Գեղարուեստական խնամուած բաժին եւ ճոխ պիւֆէ :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Պուլվար Օտոյի Ֆ. Հ. Կ. Խաչը, Մանուկներու Օրը պիտի տօնէ Փետրուար 1ին, կիրակի կէս օրէ վերջ ժամը 3ին, տեղւոյն եկեղեցիին մէջ, կը հրաւիրուին Թաղին բոլոր մանուկները իրենց ծնողքներով միասին ինչպէս նաեւ բարեկամ բոլոր կազմակերպութիւնները որ խրախուսեն մեր մանուկները : Մրզեղէնի ծրարներ պիտի բաժնուին միայն տասը տարեկան մանուկներուն :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՐԵՂ ՑԵՐԵԿՈՑԹ

Կազմակերպուած Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Սէվրանի մասնաճիւղին կողմէ, կիրակի 29Փետր. 1948, ժամը 3էն 12, Casino des Etoiles, Մասխս սրահին մէջ, 87 Ave. de Livry, à Sevran :

Գեղարուեստական հաճելի բաժին : Խմբերգ, ներկայացում եւ անակնկալներ, եւրոպական պարեր : Ճոխ պիւֆէ : Մուտք՝ 75 Ֆր.

Հաղ. միջոց.— Կառախումբ Gare du Nordէն ժամը 13.45ին եւ 14.15էն : Eglise de Pantinէն 147 թիւ օթոպուս, իջնել Terminus :

Ֆր. Կ. Խաչի Լիոնի մասնաճիւղին Սան Սանուհիներու հայերէնի դասընթացքը պիտի վերսկսի, այս կիրակի, 1 փետր. առաւօտ, ժամը 10էն 12 : 78bis, Rue Rabelais, Հայ դպրոցի սրահը : Դասախօս Պ. Կարապետ Ծովակիմեան : Կը խնդրուի մեր սանուհիները որ ճշդապահ ըլլան եւ ամէն կիրակի չարունակեն օգտուելու համար այս ազդօգուտ ձեռնարկէն :

17ՅԴ ՏԱՐԵԿԱՆ ՑԵՐԵԿՈՑԹ

Կազմակերպուած Հայ Աբիւրներու Միութեան Փարիզի շրջանի երկցներու, սկաուտներու եւ դայլիկներու կողմէ : Մասնակցութեամբ Փարիզի Հայ Աբիւրոյճներուն : Տեղի կ'ունենայ կիրակի 7 Մարտ 1948, կէսօրէ վերջ ժամը 2.30ին Salle de la Chimie, 28bis, rue St. Domonique, Paris (7), (métro Invalide կամ Solférino) :

Սկաուտական ճոխ յայտագիր, ներկայացումներ, հայկական պարեր եւ երգեր Աբիւրոյճներուն կողմէ :

Մուտք 100 — 300 Ֆրանք :

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ ԿԻՐԱԿ ՍԱԳՋԼԵԱՆԻ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

SALLE GAVEAU, կիրակի 29 Փետր. ժամը 14ին

Կը խնդրուի այս թուականը նկատի առնել :

Կը ՓՆՏՌՈՒԻ Թիրայր Փիւսքիւլճեան, հօրը անունը Օննիկ, մօրը Նեվրիկ, եղբայրները Երուանդ եւ Մկրտիչ քոյրը Ռուզիկ, որոնք մինչեւ 1927ը կը գտնուէին Մարսիլիա : Տեղեկացնել Պոլսեցի Յարութիւն Գաւագլեանի, 10 rue des Minimes Grenoble :

Կը ՓՆՏՌՈՒԻ Սեբաստիոյ Կմէրկի չրջանէն Պուրհան դիւզացի Կարապետ Ծառուկեանը որ այս պատերազմէն առաջ կը գտնուէր Փարիզի չրջակայքը : Տեղեկացնել իր հօրեղբօրորդուն Աբրահամ Ծառուկեանի, Dourgouti Gama. 53, Athenes — Grece :

Կը ՓՆՏՌՈՒԻ.— Իզմիրցի Մարի Քէպապճեան կը փնտռէ իր երկու եղբայրները Հայկ Քէպապճեան ոսկերիչ եւ Կիրակոս Քէպապճեան դերձակ, 1923ին կը գտնուէին Փարիզ : Ծանչցողներէն կը խնդրուի իմացնել Աթէնք «Ազատ Օր»ի, Վուլիս 20, Աթէնք :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ.— Պ. Աստուր Ս. Ծովհաննէսեան սրտանց շնորհակալութիւն կը յայտնէ բժիշկ Տիկիրեանի որ յաջողութեամբ կատարած է գործողութիւն մը Տիկին Ծովհաննէսեանի վրայ : Շնորհակալութիւն կը յայտնէ նաեւ բոլոր այն բարեկամներուն որոնք հիւանդանոց այցելած են եւ արագ ապաքինում մաղթած են հիւանդին :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ.— Հայոց Փարիզի եկեղեցին 1 Փետրուար 1948, Տէր եւ Տիկին Իւթիւճեանեան Հոգեհանգստեան արարողութեան պիտի նախագահէ Ամ. առք. Սիւրմէեան եւ պիտի մասնակցին Օր. Իրմա Պիւլպիւլեան եւ Պուքրէյի Օ. փերայէն Պ. Կ. Սագըզեան :

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՏԱՐՕՆ ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆի Հայր. Միութեան ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ վաղը կիր., ժամը 2.30ին, rue du Tage, No. 30, métro Maison Blanche : Կը խնդրուի բոլոր հայրենակիցներէն ներկայ գտնուիլ : Խիստ կարեւոր օրակարգ :

ՊԱՆԵԼՕ ՔԱՇԱՆի Հ. Ց. Դաշնակցութեան «Ուրծիւ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը, այս չաբաթ երեկոյ «Հրայր» ակումբի մէջ, բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է : Օրակարգ՝ կոմիտէի ընտրութիւն եւ ուրիշ հարցեր :

ԼԻՈՆ.— Հ. Ց. Դ. Նոր Սերունդի դասախոսութիւնը Զորեքշաբթի 4 Փետրուար, ժամը 8.30ին, դպրոցի սրահը 78bis rue Rabelais : Նիւթ՝ «Հայաստանի համայնավարացումը» : Դասախօս ընկեր Կ. ՄԱՆՈՒԿԵԱՆ : Սիրով կը հրաւիրուին եւ ըստ ընկերները, Կապոյտ Խաչուհիները եւ բոլոր Հայերը անխտիր :

ՄԱՐՍԷՅԼ ՓՐԱՏՈՑԻ Մայր Եկեղեցիի Կրօն. Ընկերակցութեան տարեկան ընդհ. ժողովը տեղի պիտի ունենայ կիրակի օր, 1 Փետրուար 1948, ժամը 15ին, Պաւ տիւ Կլոպի սրահին մէջ, 7 Պուլ. տ'Ալֆէն : Կը խնդրուի բոլոր անդամներէն ներկայ գտնուիլ :

ՏԻՒՆիի Հ. Ց. Դ. Նոր Սերունդի անդամական ընդհ. ժողովը այս երկուշաբթի, 2 Փետր. իրիկուան ժամը 9ին, Հ. Ց. Դ. Տան մէջ : Ներկայանալ անդամատետրով :

Հ. Ց. Դ. ՄԱՐՍԷՅԼԻ Նոր Սերունդի Շրջ. վարչութիւնը կը հրաւիրէ իր 12 խումբերը անդամական ժողովի, որ տեղի պիտի ունենայ իրենց համապատասխան եւ սովորական հաւաքատեղին հետեւեալ օրերը : Նեկտայ պիտի ըլլայ Շրջ. վարչութեան ներկայացուցիչը : Շատ կարեւոր օրակարգ :

ՍԷՆ ԼՈՒ, Սիամանթօ խումբ երկուշաբթի 2 Փետրուար :

ՊՈՒԼՎԱՐ ՕՏՏՕ, Խաչխեան երեքշաբթի 3 Փետրուար :

ՊՈՄՄՆ, Քրիստափոր, հինգշաբթի 5Փետր. : ՍԷՆԹ ԱՆԹՈՒԱՆ Գիւլխանդանեան, տուրբաթ 6 Փետրուար :

ՔԱՂԱՔ, Ռոստոմ, հինգշաբթի 5 Փետրուար : ՍԷՆԹ ԱՆՆ, Քեւռ, չորեքշաբթի 4 Փետրուար : ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻՏ, հինգշաբթի 12 Փետրուար : ՍԷՆ ԺԷՐՄ, Աղբալեան, տուրբաթ 20 Փետր. : ԼԷ ՋՕԼԻՎ, Օհանջանեան, չորեքշաբթի 11 Փետրուար :

ԼԻՒՍ ԼԷ ՄԻԼ, Համազասպ, կիր. 8 Փետրուար : Լ.Ա. ՍԻՈՒԹԱ, Հրայր, կիրակի 8 Փետրուար : ԿԱՐՏԱՆ, կիրակի 15 Փետրուար :

Հ. Ց. Դ. ՌՈՄԱՆի ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴի վիճաբանական ժողովը տեղի պիտի ունենայ այս չորեքշաբթի 4 Փետրուար, ընկեր Վարուժան Խուպիկեանի բնակարանը, սովորական ժամուն : Կը դասախօսէ ընկեր Ա. Պօյաճեան :

ԹԻՑԱՍԵՂԱՆ.— Ի պատիւ դասախօսներուն ու ծնողքներուն Հ. Ց. Դ. Նոր Սերունդին Փարիզի մասնաճիւղին կողմէ, այս կիրակի 1 Փետրուար ժամը 3—8, 8 rue Danton, métro Odéon կամ St. Michel :

22 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ, ԿԻՐԱԿԻ ՕՐ ԺԱՄԸ 3ԷՆ ԿԷՍ ԴԻՇԵՐ, Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՌՈՍՏՈՄ ԽՈՒՄԲԻ ՀԱՆԴԷՍ ԽՆՋՈՑՔԸ

Կը խնդրուի նկատի ունենալ Թուականը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Փարիզի Հայոց եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերակցութեան բոլոր անդամները 1 Փետրուար 1948, կիրակի ժամը 2.30ին եկեղեցւոյ խորհրդարանին մէջ, օրակարգ ունենալով եկեղեցւոյս օրհնական լուսարար Պ. Յակոբ Ճօրճեանի քահանայական թեկնածուութեան հարցը :

18 Յունուար 1948ի ընդհ. ժողովը մեծամասնութիւն չունեցաւ, կանոնադրի 16րդ յօդուածին համաձայն, այս անգամ ներկաներու թիւը պիտի նկատուի օրինաւոր :

ՃԱՇԱՐԱՆ ԼԻԼԱ

Որ բոլորած է իր իսպառ մահակը եւ սիրա-

ցած արդար համբաւի մը,

Պատրաստ է դոհացնելու իր ամէնէն դժ-

ուարահաճ յաճախորդները իր համադամ

կերակուրներով ու բազմատիպ աղանդերներով

Հեռաձայն TRI 31 - 62

24, Rue St. Lazare, PARIS (9)

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13e
Le Gérant : A. NERCESSIAN